Նոր բառգիրք հայկազեան լեզուի
հատոր առաջին

ՆՈՐ

ԲԱՌԳԻՐՔ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ա—Կ

ՆՈՐ

ԲԱՌԳԻՐՔ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

ՅԱՇԱԿԵՐՏՈՒԹԵՆԷ ՄԵԾԻՆ ՄԽԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՀՕՐ

Հ. ԳԱԲՐԻԷԼԻ ԱՒԵՏԻՔԵԱՆ. Հ. ԽԱՉԱՏՐՈՅ ՍԻՒՐՄԷԼԵԱՆ.

Հ. ՄԿՐՏՉԻ ԱՒԳԵՐԵԱՆ

ՅՊԱՏՐԵԱԼ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՍՈՒՔԻԱՍԱՅ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՈՄԱԼԵԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ա—Կ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻՆ 1836 ՌՄՁԵ

ԱՌ ԲԱԶԱԳԱՓԱՅԼ ԻՇԽԱՆ

ՅԱԿՈԲ ԶԵԼԵՊԻ ՏԻԻՔ

ՄԽԻԹԱՐԵԱՆՍ ՈԻԽՏԻ

ՆՈԻԷՐ

Բարբառ վսեմական մերոյ նախահարց այս երկրորդ անգամ վերակենդանեալ 'ի լոյս, առ ո՛ նախ հասուցէ զիւրն շնորհակալիս բոլորապտուղ նուիրմամբ, եթէ ոչ առ Քեզ, ո՛ ազգասիրաց մերոյ աշխարհիս ընտիր Պարագլուխ, որ բազկաց վաստակելոց բազմամեայ տարժանմամբ 'ի սորին անվթար կատարումն գտար հզօր կազդուրիչ՝ Քոյին հմտութեամբդ և կիրթ ճաշակաւ, և երկասիրողացն քաջալեր դրուատեօք անթերի վարձահատոյց.

Հապա 'ի քաղցր ժպիտ և յախորժ հաճութիւն մեծի Իշխանիդ զուարճացի մատեանս, և այնպիսում հանդիպեացի շքեղ պայծառութեան, որպէս զի եթէ և ոսկի սա ումեք թուեսցի չև անխառն զտեալ 'ի հնութեանն ժանգոյ, սակայն 'ի դրոշմած արդարակշիռ և ներողամիտ Քոյին պերճութեան 'ի սորայս ճակատ՝ ըստ ճշգրիտ արժանեացն յարգեալ պատուեսցի. և ոչ միայն վաստակաւորացն 'ի սոյն բերկրեալ զուարթասցին բազմաշխատ ոգիք, այլ և առ յապա եկելոցն խրախուսեսցին աշխոյժք՝ ևս քան զևս արժանի Քումդ անմահական յիշատակի արձան զսա յօրինել.

ՆԱԽԱԴՐՈՒՆՔ

ԾՈՎ է ստուգապէս համատարած տիեզերածաւալ ընդ ոլորտս երկրի՝ յարածուփ երեքա-լեան, որպէս մարդկութիւնս ընդ արեգակամբ յամենայն ազգաց և 'ի լեզուաց յորձանակոհակ կուտա-կեալ, ըստ ասացելումն, Ջուրն՝ զոր տեսեր, ժողովուրդք են և բազմութիւնք և ազգք և լեզուք. սա-պէս ուրեմն ընդհատ է իմանալ զբարբառ նոցա՝ 'ի միաշուրթն լեզուէ Նախամարդոյն բաժանեալ 'ի բազում առուս իբրև 'ի մասունս մասունս մայր ծովու, ովկիանու ասեմ մեծի, ուրոյն սահմա-նօք գաւառագրական ։

Յորոց սակի անշուշտ ընդ գլխաւորս՝ որ Մայր անուանեցան Լեզուք, զառաջինն ունի տեղի Հայ-կական մեր բարբառ, որպէս մեծերիմ և կարևոր ընտանութեամբ յառաջագայեալ 'ի լեզուէ մեծի նահապետին Նոյի յԱրարատեան աշխարհ մեր դադարելոյ աշխարհակեցոյց տապանաւն իւրով հան-գերձ ցվախճան իւր ։ Եւ այն իսկ է պատճառն անժխտելի, զի յամենայն գուցես լեզուս ազգաց և ազանց սփիւռ տարածեալս յետ վաղափուլ աշտարակին մինչև ցօրս ցայս նշմարին հետք հայերէնա-բարբառք ։ Զոր և հարկ համարեցաք հետաքննել մասամբ 'ի զանազան բառս յընթացս գործոյս, լծորդս յոլորջելով իւրեաց զըստ խմբք մերձաւորս հնչմամբ. մինչև յակամայից բերիլ մեզ ուրեք ուրեք և 'ի զննել զբառս այլոց ազգաց համեմատութեամբ մերոցս՝ առ ստուգագէտ իմացուած սո-ցին և նոցին ։

Այլ եթէ դժոխերասան վկայեաց գիր զլեզու մարդկան խառնախօս և դիւրասահ 'ի բարոյից կար-գի, ոչ դիւրամըքելի գտանեմք և զյախուռն ընթացս նորին 'ի կարգաւոր բանից յօրինուածս՝ օրի-նօք ընտիր շարագրաց և քերթածաց ։ Սմին իրի և առ ամփոփել զամենայն զհանգամանս միոյ միոյ 'ի լեզուաց՝ 'ի քիրտն մեծ մտին և մտանեն քաջ լեզուագէտք 'ի դարս դարս. այլ ոչ երբէք ձեռն-հաս գտանին ամբողջ բովանդակել ։ Քաջ խելամուտ լինին այսմ խուզարկուք բառարանաց իւ-րաքանչիւր լեզուի. զոր և վասն հայկականիս 'ի միտ առնու խորամիտ վերծանողն մեր. այլ տացուք և մեք դոյզն ինչ ճաշակս 'ի Նախերգանի աստ ըստ առաջիկայ կարգիս ։

Ա. ՅԻՇԱՏԱԿ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԱԽԿԻՆ ԲԱՌԱՐԱՆԻՆ ԱՅՆ Է ՄԵԾՆ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅՀԱՅՐ ։

Ո՛ առաջին խրատամբք 'ի նախերգանիս ունիցի տեղի՝ գովարժանաւոր՝ առաջին մեծ բառարանի հայկազեան լեզուիս յօրինելոյ յերանաշնորհ Մխիթարայ Աբբահօրէ մերմէ Սեբաստացւոյ՝ գործակցութք ոմանց ոմանց 'ի ձեռասուն և 'ի բանիբուն աշակերտաց իւրոց. յորս բազմավաստակ Ճգնօղ հանգիստացաւ յառաջագ հասակի Հ. Մկրտիչ վարդապետն Անանեան կոստանդնուպօլսեցի։ Արդարժան է աստանօր նշանակել զձեռագրին աստուածն գրոշմեալ 'ի յառաջաբանի անդ մեծի այնր երկասիրութէ նախահօր մերոյ. «Թէ զինչ է կազմել զբառագիրք՝ ոչ ոք գիտէ, բայց միայն նա՝ որ յօրինեալ իցէ երբէք զնոյն։ Եւ այս՝ ևս քան զևս ծանրանայ մարդոյ, եթէ ոչ ունիցի առընթեր զբառարանս ինչ, կամ ոչ ոք իցէ յառաջեալ քան զնա 'ի յօրինել զնոյն ըստ կարգի, այլ ինքնին 'ի բնուստ նորոգ կազմիցէ. որպէս մեզ յայսմ աշխատասիրութեանս դիպեցաւ... Սկսեալ յամի տեառն 1727. հասաք 'ի տառն Ե, և 'ի գլխոյն մեր մեծամեծ զբաղմանց՝ խափանեցաք մինչև ցամն 1742. և ապա վերստին բուռն հարեալ՝ հասուցաք յաւարտ գործակցութք աշակերտաց մերոց, յամի տեառն 1745»։ Եւ ահա յետ այնորիկ մեռ 'ի կատարումն տպագրութեն՝ զկնի պատրաստելոյ և զնիւթ յառաջաբանութեն՝ եհաս 'ի վերայ երջանիկ փոխումն նորա յաշխարհէս յամի տեառն 1749. յապր. 27։ Յիշատակ արդարոյն օրհնութք։

Այս ուրեմն գլուխ գովութեն այդր պանծալի գործոյ մեծի այն է, զի և՛ առաջին էր 'ի Թորգոմեան ազն. և՛ կատարեալ յիւրում կարգի, ճոխութք բառից ըստ տանելոյ ժամանակին, անվթար մեկնութք, կարգաւոր և յստակ ոճով, և յայտարարութք տեղեաց հին մատենագրաց առ ձեռն եղելոց. և պարզաբար՝ այնպիսի հանգամանօք, որ զուգահաւասար պատւ եւրոպեան ընտիր բառարանաց ցայն վայր երևելոց, և իւիք իւիք յաղթօղ՝ քան թէ յաղթեալ։

Յետ հանգիստանալոյ այսր գործոյ՝ որ էր հատոր առաջին, և կոչէր Մեծ կամ Գրաբառ Բառգիրք՝ որպէս տիրապէս աշխատասիրութի մեծին Մխիթարայ, ապա ըստ խոստանալոյ նորա և ըստ յանձնելոյ աշակերտաց իւրոց վաստակակից եղելոց՝ 'ի լոյս ածաւ և 'ի սոցունց հատորն երկրորդ. սկսեալ առ կենդանութք Տեառն Մխիթարայ, և հետզհետէ յառաջ խաղացեալ յաւուրս արժանաժառանգ յաջորդի նորա Ստեփաննոսի Աբբայի Մելքոնեան։ Արդ յերկրորդ հատորի անդ՝ Միայորդաց բառգիրքն է առաւել երկասիրութի Հ. Սիմոն վարդապետի կոստանդնուպօլսեցւոյ. իսկ Յատուկ անուանցն կրկին, մին Ածաշնչի՝ երկ Հ. Զաքարիայ վարդապետի ակնեցւոյ, և միւսն՝ Արտաքին պատմութեց՝ քերան Հ. Իգնատիոս վարդապետի խաչատրեան կոստանդնուպօլսեցւոյ։ Նոցին է գործ միաբան այլովք գործակցօք և 'ի Գրաբառէ յաշխարհաբառն. իսկ յԱշխարհաբառէ 'ի գրաբառն՝ գործ տարժանելի և ճոխ՝ է առաւել աշխատասիրութի նախանշանակեալ Հ. Մկրտչի Անանեան. որում 'ի պատանեկութե ձեռնտու գտաւ և Հ. Ստեփան Ագոնեան՝ զմիւռնացի, քաջն 'ի բազմալեզու հմտութե։ Զբովանդակ զերկրորդ հատորին ևս զյարգ զոյգ ընդ առաջնոյն լնով ծանեաւ ազգն ողջոյն, և որ քան զօր զարգացաւ 'ի հարազատ հայկաբանութե, և յազգի ազգի մակացութիս, որոց նախաշաւիղ առաջնորդ է բառգիրքն։

Բ. ՅՕՐԻՆՈՒԱԾ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆԻՍ

Ոչ անյայտ, այլ յայտնի մարգարէութք նշանակեալ էր 'ի յառաջաբանի Նախկին բառարանին՝ կազմութի երկրորդիս այս այսպէս. «Եթէ տեառն կամք իցեն, զկնի հաստնելոյ և այլոց բազմազան մատենից հայկազանց՝ ընծայեսցի քեզ այլ բառարան ինչ առաւել ճոխ, և ընդհանրական ; և բազմալեզուեան»։ Դիւրաւ և աջողակի գուշակէին զայս հարքն մեր ընդ հօրն հասարակաց. զի 'ի միոյ կողմանէ հաւաստի համարէին՝ թէ ոչ յետ բազում ամաց սպառէ ազգն ծարաւեալ զթիւ տպագրուեն առաջնոյն. և 'ի միւս կողմանէ տեսանէին 'ի փորձոյ, զի ամ ըստ ամէ 'ի վեր երևէին հին մատեանք ազգիս յանկարծելի վայրաց. յորոց ելանէին նորանոր բառք և ոճք նախնեաց արժանիք նորոգ յաւելուածով պերճ և պանծալի ընծայելոյ զազգային բառագիրս։ Նովին յուսով և մեք գեղեցիկ յանդգնութք գուշակեմք վասն մերոց աշակերտաց և աշակերտելոց նոցունց, թէ՝ և նոքա այլ բառարան յօրինեսցեն ըստ ժամանակին տեղամբ՝ ևս ճոխագոյն և կատարելագոյն ։ Քամ է յայժմուս զաշխատասիրողս առաջիկայ նոր բառարանիս յանուանէ նշանակել։

Ըստ անգուլ խրախուսանաց երեցունց անընդհատ յաջորդացաթոռոյ մեծին Մխիթարայ, Ստեփաննոսի ասեմ Մելքոնեան, Ստեփաննոսի Ագոնց, և Սուքիասայ Սոմալեան, բուռն հարին Աստուծով 'ի յառաջատութի նոր բառարանիս՝ երեքին անխոնջ երկասիրօղք, Հ. Գաբրիէլ վարդապետ Աւետիքեան կոստանդնուպօլսի, Հ. Խաչատուր վարդապետ Սիւրմէլեան կոստանդնուպօլսեցի, և Հ. Մկրտիչ վարդապետ Աւգերեան անկիւրացի. սկիզբն արարեալ յամի տեառն իրր 1784, և աւարտակիտեալ 'ի 1834. յընթացս ամբողջ յոբելինի յիսնամեան ժամանակի. մերթ ընդ մերթ ընդհատութք յերեսաց այլևայլ կարևոր գործոց գրաւորաց և բանեղինաց, ևս և բազմավրդով յեղափոխութեանց դարէ 'ի դար ընդ ամենայն տիեզերս. որով և գործս ըզգեցաւ զբազմօրինակ կերպարանափոխութի։

Յերկարէր գործն 'ի սկզբան անդ՝ առ 'ի կարօղ լինելոյ վերծանել և քաղել զբառս կարևորս 'ի նորագիւտ մատենից. և զի 'ի սկզբան անդ լոկ զանուանս և զտեղիս մատենագրաց կամէին նշանագրել ըստ ոճոյ Նախկին բառարանին, ապա 'ի յորդորելոյ բանասիրաց ներքոյ և արտաքոյ՝ լաւ ևս գատեալ եղև վերագիր տանել յանձախութք զբուն իսկ վկայութիս նախնեաց փոխանակ առ 'ի մէնջ երկար բացատրութեց. որով և ընդ կրկին գովելի և ծանր աշխատութե կրկին մեծացաւ բառարանն. և այսպիսի օրինօք կարծեալ եղև՝ որպէս այն թէ յաւարտ հասեալ իցէ նորս բառարան։

Եւ ահա յետ այնորիկ գային հասանէին 'ի ձեռս մեր այլ մատեանք՝ գանձարանք լեզուիս հայոց անակնկալելիք. որպէս Քրոնիկոն Եւսեբի՝ յետ եկեղեցական պատմութեն, Փիլոն եբրայեցի, Դիոնեսիոս արիսպագացի ըստ վաղեմի թարգմանութեն՝ յորմէ կազմակերպեալ էր նորին, և մանաւանդ ոսկեմատեանք Յովհաննու Ոսկեբերանի 'ի մեկնութին Մատթէի, և յորդորակք նորա 'ի թուղթսն պօղոսի՝ հարազատ երկք սոյ թարգմանչաց մերոց. և բնագիր Ճառք Յհ. Մանդակունւոյ, Յհ. Իմաստասիրի, Յհ. Սարկաւագ վարդապետի. որպէս և Ղևոնդ երէց, Թովմա արծրունի, այլովքն հանդերձ։ Թող զի յաւելան զանազան օրինակք գրոց նոյն մատենագրաց արդէն ստացելոց. զորս ըստ կարի պէտք եղեն բաղդատել առ 'ի գիւտ ըստուգագոյն ընթերցուածոյ. և ապա սփռել զայն ամենայն ճոխութե 'ի վերայ նախապատրաստեալ գործոյն. մինչև տիրապէս համարել ասել՝ թէ արդ չսա է, բուռն հարցուք 'ի տպագրութի. զի եղեալ էր դիւրագիր օրինակ մեր երկոտասան հատոր երևելի, որ կիսոյ չափ գոգցես ունէր լինել տիպն 'ի հինգ կամ վեց հատորս 'ի ձև առաջնոյն։ Բայց ո՞ կարէր ծախս տանել այսպիսում գործոյ. զի թէպէտ ոմանք 'ի բարերարաց ազգայնոց յօժարէին ձեռն տալ մասին, բայց բոլորին ուժել իշխէր և ոչ ոք։ Այսպէս այս խորհուրդ յաղթէր առ ժամն. կարծեալ զվկայութիս՝ գրեա թէ առ հասարակ, կամ ծաղկաքաղ սե. թ նշանակել, թօթափել զբազմալեզու կատարելութի, և անդրէն միւսանգամ գրեթէ զոճն պահել նախկին բառարանին։ Եւ յայս ևս փորձ մնեցան աշխատասէրքն ոչ սակաւ ժամանակ՝ իբրև 'ի նոր ձուլումն գործոյն, բայց լքեալ արտև, զի ամենայն աշխատութի իւրեանց յերկիր անկանէր, և ոչինչ երևելի բարգաւաճանք լինէին նախկին բառարանի։ Եւ ահա յետ անսիրտ ուղևորութեանս նորոյ՝ 'ի խոր ծերութե ևս հասեալ երկուց յաշխատողաց, անկան որպէս թէ զձեռնապարհայն, և օրհնաւին 'ի վերայ

հասելոյ՝ երկուքին եւ զուԹանանինիւք անցեալ՝ փոխեցան առ նա։

Ի լինել այսմ այսպէս՝ նորանոր քաղցալերք 'ի վերայ յորդէին երբեմն, որ փոխանակմանիւք ուրեմն էր, յետ և յառաջնորդէն և 'ի համօրէն միաբանից զօրանալ և պատակել զգործն անդադար խնդրեալ 'ի բաղանդակ ազգէս, զիարդ և իցէ օրինակաւ ընդ միջին իմն շաւիղ ուղղորդելով երկայնուԹեան և համառօտուԹեան գործոյն։ Եւ այսպէս յետ կրկին և երեքկին փոխելոյ՝ կարկատելոյ և նորոգելոյ զգործն, որպէս ընդ համառօտած ծոյլ վերատին նաւարկելով եւ 'ի գլուխ երկասիրուԹեան յանգեցան, և ամփոփեցին եղև տպագրուԹեան՝ հանդերձ երբեք երբեք գալ և գազար առնելով. զի ծանր էին ծախքն՝ ոչինչ ընդհատ յաջողուԹեան։

Ցանկացաք այսր յառաջինն նախ քան զմերոյին ըրուածն գործոյս՝ քաղելոյ 'ի սմանէ զեւր յաջողական աշխատուԹեան Հ. Մանուէլ վարդապետին մեր Ջախջախեան. այն է լիակատար բառարանն 'ի հայ խառնակեան։ Այսքան այսքան։

Գ. ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳՈՐԾՈՅՍ

Բազմապատիկ բանից մեզ պէտք էին 'ի խելամտութիւն առնել զհամառօտ ընԹերցմանս նոր բառարանիս, Թէ առ 'ի մէ՞ զայս ինչ այսպէս, և զայն ինչ այնպէս կարգեալ իցէ մեր յընԹացս ողջոյն. այլ քանզի ընդհանրական բանք կարևորք ճառապար ծանուցեալ կան 'ի յառաջաբանի առաջին բառագրքոց, որք 'ի դէպ գան և երկրորդիս, չկրկնեսցուք աստ զբանս մեր. Թող զի բանասէրք հայկելով սեԹ 'ի գործն ինքնին խմբադասիրեն քաղուել ինչ՝ զոր մեզս ունէաք։ Այլ զի մի' անպատճառ առաջադրուԹեանք խորհրդոց և յայս խնդրոց լինիցին առ ոմանս վերծանողս մեր, քանզի մի կապեր ակնկալուԹիւն յանձնելոյ կամեցաւ մեզ, զի համառօտեսցուք զպատճառս բանափիրոց։

Նախատարբ յառաջին եղեալ է գործոյս բովանդակել 'ի ծոց իւր զամենայն մեզ ծանուցեալ պէտուԹիւն հայկաբանական լեզուիս՝ եԹէ նիւԹապէս, եԹէ ասկականապէս, այսինքն ըստ տառից, ըստ փոփոխուԹեանց, ըստ բառից, և ըստ իմաստից։ Ըստ տառից և ըստ վանկից միով նշանակեալք, եԹէ կայցէ խնդիր ինչ նշանաւոր ընդ հին և ընդ նոր գրչուԹիւն. որպէս առաւելապէս 'ի տառսն Բ, Գ, Դ, Ձ, տարբերուԹեր տառիցս Ր, Ն, ևն. որպէս և Ի, Ո, Օ. որպէս և 'ի սկզբն իւրաքանչիւր գրոյ։

Առաւել յամենայն 'ի բառս առանձին զարտուղուԹիւս ըստ պէտուԹեան, կամ համեմատ, կամ ըստ պարագայութեան, ևն. ԹԷ և այլազգ զանազանու՝ քան զոր գուդ զիտեսցէք, կամ ընԹերցեալ էր քո յայլեւայլ տպագիրս և 'ի ձեռագիրս. զի կանոն լեզուի է միաբան միոյութեն նախնեաց, և ոչ այլազգութիւն կարծեացք յետնոց, կամ խանգարումն և փոփոխութեան, որ ակամայ՝ և որ կամաւոր։

Եւս առաւել իմաստ կամ նշանակուԹիւն բառից ճշգրեցաւ 'ի մէնջ ամենայն զգուշուԹեամբ ըստ համեմատուԹեան հարազատ ոճոյ նախնեաց, և ըստ ըստ հին ԹարգմանուԹեանց նոցա։ Քանզի ոչ սակաւ բառք 'ի յետին գալոյ յայլ միտս առեալ լինէին. և մեր խակ զգուշանէին յայլեայլ տեղեաց մեր զնոյն բառ ըստ յետնոց էր 'ի կիր արկեալ. այլ ոչինչ անաԹ համարեցաք նախ ուսանել զուգիղն, և ապա այլոց ուսուցանել յայս գործ. վասն զի իրաւամբք յաղԹեաց և յաղԹեսցէ յաղԹեսցէ և անպէր կանոն առաջնոց։

Ի հատուածուԹիւն կայցէ ոչ յաւելորդս յաճախեալք զմկրտուԹիւնս, և զհամեմատուԹիւն յունական բառից ըստ հմտուԹեան նախնեաց մերոց, և անդրէն ծանուցանելոք զխալալանս հին գրչաց անդամ։ Զայս գոլ խմբագրելիք՝ որ միանգամ 'ի կիրս գնէ բաղդատուԹիւն զհայկական մատեանս պէտքէս ընդ միմեանս, զգրչագիր հին և նոր, տպագիր և ձեռագիր, որպէս և զայլ ամենայն գիրս Թարգմանեալս ընդ յունական բնագիրս։ Մինչև զայն եւ աչօք բացօք առնել. զոր ամենայն բառագիտիցք լինէին խառնակեան, Թէ ոչ ոք քաջիկ իմանայ զխակուԹիւն բնիկ լեզուին իւրոյ, եԹէ չիցէ խելամուտ՝

զէ՛Թ փոքր 'ի շատէ՝ և այլոց լեզուաց, մանաւանդ առինչուԹեան երևելոց, որպիսի են 'ի պէտս մեր պարսկականն և մարն՝ սահմանակիցք յարևելից կողմանէ, ասորիք այլուլքն հանդերձ 'ի հարաւոյ կուսէ. եւ առաւել յունականն յարևմտից կողմանէ. յոր քաջավերԹ նախնիք մեր՝ 'ի փոխ առին անտի զազգի ազգի ոճս բանից և բաղադրուԹեան բառից կամս և 'ի հարկէ. այլ և ոմանք խառնահեղձեցան յիմաստասիրական ձայնս, զորս այլք վայելչական հայկաբանուԹբ յերիուրեցին։ Եւ 'ի սա գիրս անդամ, ուր գեղեցիկ պահի լեզու հայկաբեան քաղցր և համեղ, հանդիպին ուրեք ուրեք այնպիսի բառք և ձևք բանից, զորս այլազգ իմացան հայերէն եԹէ վերծանողք՝ Թէև կարի իմաստունք՝ առանց համեմատուԹեան երբայական և յոյն բնագրին, կամ ԹարգմանուԹեան եօԹանասնից։ Զամենայնի զօրինակս նշմարես 'ի կարգի խուռն և հոծ վկայուԹեանց բառարանիս նորոյ. որով ուղղագրի և ինչ ինչ ակամայ վրիպակ հնոյն։

Բազմապատրաստ է մասամբ իմն՝ բառագիրք մեր այս. ոչ առ 'ի չերջանկուԹեանն անխտիր զձայնս զանազան լեզուաց հանդէպ իւրաքանչիւր բառի, այլ առ 'ի առալ ըստ անկ'ու այն զիմաստս հայկական բառից անփորձ՝ ըստ հետոց հնուԹեան. վասն որոյ բաց յարևելեան գիւղաջհաս բառից՝ յիշեցաք սակաւ և զպարսկականս, զասորականս, զեբրայականս, ևն. և առաւել յաճախեցաք զյունականն՝ համեմատուԹբ լատինականի, ոչ ըստ յետնոցն ոճոյ, այլ ըստ վարժմի ԹարգմանուԹեան նախնեաց մերոց, ցորչափ կարևոր դատեալ եղև, զի ուսցին և յետինք Թարգման լինել հարազատ հայկաբանուԹեամբ։

Զանազանութիւն պէսպէս նշանակուԹեանց և իմաստից մի և նոյն բառի՝ կրկնակի նշանակեցաւ 'ի մէնջ. մի 'ի նոր տողէ սկսանելով զայս և զայն առուՄն՝ մանաւանդ յորժամ տիրապէս որոշեալ բառից յունաց 'ի դէպ գային ըստ ԹարգմանուԹեանց առաջնոց։ Եւ միւս եւ՝ 'ի նախկին ընդարձակ նշանակուԹեան դնելով և զզանազանուԹի բացատրուԹեանց նշանակեալ գլխաւորիւք. ուր է զի նոյնպէս մի բառ էր և այլոց ազգաց ընդարձակ առմամբ, որպէս 'ի մեզ. և կամ այլևայլ բառք էին առ այլս, բայց որպէս փաղանունք՝ որք 'ի նոյն իմաստ հայէին։ Աւելի քան զայս ճապաղել զբացատրուԹիւս պատճառ լինէր կրկին և երեքկին մեծուԹե բառարանիս. զոր չտանէր ժամանակս։

ՊէսպիսուԹի հնագիր մատենից գլխովին, Թող զնորագիրս (յորս ոմանք զուգակշռին ընդ հնագոյնս վաւերական օրինակօք իւրեանց), և կասկած մեր 'ի վերայ ազգէս՝ մանաւանդ Թէ գիտնաւոր կարծեցեալ գրչաց իմաստակաց, հանդերձ զանազանուԹբ հին և նոր տպագրուԹեց՝ որ յայլոց, և որ 'ի մէնջ, ոչինչ զմեզ զարմացոյց. բայց աշխատուԹի յոյժ հատոյց։ Քանզի անդարմանելի է պէսպիսուԹի սխալագիր գրչաց. մինչև յանհնարս մտանել ամենայն իմաստուն մտաց, Թէ զո՞րն ընտրեսցէ. միայն 'ի գլխաւոր գիրս միշտ 'ի կիր արկեալս գիւրին է ընտրել զավարական ընԹերցուածս. զոր օրինակ է սա գիրքն, շարականն ևն, որպէս և 'ի գրեալս 'ի հին և յարԹուն գրչաց։ Վասն որոյ իրաւամբք պատուիրէ Շնորհալին 'ի նախերգանս Հաւատով խոստովանիմին. «Աղաչեմ զքեզ 'ի գիրս՝ ուղիղ գիտողացն տացեն գրել, զի ուղղորդ լինիցի»։

Նախկին գիտումն մեր այն էր, զի զընտիր բառս եԹէ յօդեսցուք 'ի մի մարմին գործոյս, զխորԹսն և զօտարոտի դատեալս հաւաքելով ուրոյն իբրև 'ի յաւելուածս։ Բայց յետոյ հարկեցաք 'ի խնդրոյ այլոց զամենայն բառ դնել յոր և է մասեան՝ պատուասել 'ի կարգիս. միայն այնմ ուշ կալաք, զի մի՛ դիցի բառ ինչ առանց վկայուԹե կամ առանց նշանակելոյ զմատենագիրն. զի ստիպմե ինքնին կշռի յարգ միոյ միոյ 'ի բառից անտի 'ի յարգուԷ կամ յանարգուԷ մատենին, 'ի հնուԹԷ և 'ի նորուԹԷ. զորմէ ճոխագոյն լիցի 'ի մտոյ քան 'ի կարգի մատենից՝ մատենագրքն հանդերձ։ Այսպ ուրեմն ոչ ամենայն բառ եդեալ 'ի մէնջ 'ի բառարանիս ունի զանձն 'ի կիր արկանելոյ ում և իցէ յոր և է բանս, այլ ուղղի 'ի նպատակ իմանալոյ եԹէ։ Այս էր և տեսլն Հ. Մկրտչի Անանեան յառաջաբանին որ յաւարտ յառաջաբանի երկրորդ հատորին. «Ոչ ինչ գրեի վասն կարգի, այլ ինչ գրեի՝ զի է յարգի»։

Դուն գործեցաւ և 'ի բացատրութիւն մեր չվարել զբառս յետին դարուց, այլ անմարթ էր զամենայն ինչ այսպէս խորել. զի իւրաքանչիւր դարք հարկաւորին յուսումնական կարգի զհետ երթալ գաղղիական ոճոյ. վասն որոյ լաւ համարեցաք վարել զառ մեզ ատվորական ձայնս յակամայ կամս. որպիսի են Ածական (ըստ Նախնեաց Մակագրական կամ մակդիր՝ իմն ոճով յունաց), և Գոյական (իբր գոյացական, որ առ Նախնիս՝ խակ ասի). որպէս և Զայնականական կամ կրաւորաձայն (վասն չէզոքական բայից յանգելոց 'ի իմ), են. զի զայսպիսիս հարկ ժամանակին անմեղադիր առնէ :

Ոչ կարացաք, և ոչ իսկ կամեցաք հետեւող լինել սովորութեան ոմանց ոմանց 'ի գրչաց, ոյք կարծեն զտառ ինչ կամ զվանկ, երբ կրկնեալ իցէ 'ի կարգի բանին, անշուշտ տալով իմանալ ընթերցողաց՝ թէ երկարեալ կամ կրկնեալ անդ զձայնն. զոր օրինակ գրեն, "Դնի նոր գերեզմանի : Մատուցանեմ քեզ : Անկանիդ : Ցուցէ, կեցէք : Հովութի, թթութի են. ոյք վերծանելի են, "Դնի 'ի նոր գերեզմանի. մատուցանեմք քեզ. անկան անդ. ցուցցէ, կեցցէք. հովուութի, թթուութի, են : Զայսպիսիս ըստ տեղւոյն ծանուցաք յընթացս գործոյս, կամ փակագծիւ յաւելլաք զպակասեալ տառն. ապա եթէ առաջիկայ բանն չհայէր յայն բառ, զսովորական հնչումն եդաք : Զայլ տեղեկութիւս կարևորս պահեմք նշանակել 'ի կարգի իւրաքանչիւր բառից :

Դ. ՀԱՆՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԲՈՒՆ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Որ միանգամ չիցէ քաջավարժ 'ի հարազատ բարբառ գրաւոր լեզուի մերոյ, և անխտիր յարգ ընծայեսցէ ամենայն բառից ծովացելոց 'ի բառարանիս, այնպիսին անձամբ զանձն խորատոյզ առնէ յանդունդս յայս. ուսանել ուսանի ինչ ոչ, և մոլորի 'ի շաւիղս յետին ապիրատութեան. վասն որոյ առէպ յուշ արարաք յընթացս բառարանիս, թէ այս բառ է անյայտ կամ անստոյգ. այս ինչ բաղադրութիւն կամ բարդութիւն է պխտակ. այն ոճ է եբրայական, այս հելլենական, միւսն լատինական են : Արդ առ ընդհանուր հմտութիւն ուսումնասիրաց կանխեմք յուշ առնել յայսմ վայրի զքանի մի օրինակս :

Եբրայական ձեք բանից՝ ճարտար իմաստութեամբ այց թարգմանչաց մերոց այնպէս են յեղեալ 'ի հայ բարբառ, որպէս այն թէ հայերէնաբարբառ իցէ նախամարգարէն մովսէս, համարձակախօսն եսայի, այլովքն հանդերձ : Իսկ եթէ դուն ուրեք պահեալ իցեն և բուն եբրայական բառք կամ ոճք, զայդ այդպէս տեսեալ մերոյն և յեօթանասնից թարգմանութենէն յունական, խորհրդով թողեալ է նոցա այնպէս : Թող զի և ինչ ինչ է հետեւողութիւն այլոց ընթերցուածոց, կամ միացուած է կանխագոյն թարգմանութեան յասորի օրինակէ. ո՛ւր թողից զայն՝ զի 'ի գիրս սողոմոնի պէսպէս են և հայերէն ընթերցուածք ըստ պէսպիսութեան յունին և ասորւոյն :

Հայացեալ համարին և յոլով ոճք յունականք, զորս սովորութիւն քաղցրացոյց. չասեմ թէ ոմանց հաճոյ թուեցաւ խրթնաբանութեամբ հելլենաբանել, քան ըստ յատկութեան հարազատ լեզուիս պարզախօս լինել. այլ է թէ 'ի պէտս մթին քերթուածոց ինչ ինչ պատկանեցի ըստ տեղւոյն : Զոր օրինակ. տալ է 'ի բուն հայկաբանութեան՝ առնել, Վ[illegible]ն օղղէլ, Վ[illegible]ն գնալ, Փոխանակ առնել են. զի առ յոյնս չէք դերբայ, կամ հոլովական աներևոյթ բայի. վասն որոյ հարկաւ այսպէս շարագրեն՝ հոլովական յօդիւ հանդերձ. իսկ հայկական ուղղախօսութեան է, Վ[illegible]ն օղղելոյ, փոխանակ առնելոյ են :

Ոճ է և յն. լտ. Դու ղնա, Լինել ղնա, Որպէս ղի լինել, Որպէս Բէ առնել, են. իսկ հայերէնախօսն ասէ, Գուլնա, Լինել ինչ. Որպէս ղի լինիցի, Որպէս Բէ արիցէ են :

Կրկին հայցականն և՛ս ոճ յն. և լտ. դուն ուրեք վարելի. զոր օրինակ. Ո[illegible]յց ղնա ղինաոփուԲէ. Դու ղն առնել ղնէ, են. փոխանակ ասելոյ՝ Ո[illegible]յց նմա ղինաոփուԲէ. Դու որդւոց առնել ղնէ, կմ՞ [illegible] հանձարիս ղանձն[illegible] են :

Չէ պարտ յանձախել և զյունական ընդունելութիւս կամ ըղգերբայս առանց նախադրութեան. զոր օրինակ, Աս[illegible]էլ այսպէս եղելոյ կմ եղելոց կմ լինելոյ. որ ըստ հայումս ասի, Ցեփ այսորիկ, Իբրև այս այսպէս եղև են : կամ Դրանցն փակելոց. Վ[illegible]ն Բ[illegible]ելոյ. որ ըստ լտ. և հյ. ասի, Դրօքն փակելովք. Վ[illegible]ն Բ[illegible]ելով. են : կամ 'իսկ նոցա խլացելոց և կուրացելոց 'ի ճշմարտութենէն՝ նախանձելին. Այսինքն խլացեալ և կուրացեալ : Զայլ ևս խտիրս գացես լիագոյն զննեալ յընթացս գործոյս :

Ե. ԽՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԻՑ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ, ՑՈՐՈՑ ՔԱՂԵՑԱՆ ԲԱՌՔ ԲԱՌԱՐԱՆԻՍ

Որպէս են տիրապէս մարմին և հոգի ամենայն բառագրոց, վաւերական առեմ մատենագրութիւնք, անգին աւանդք նախնեաց, գանձարանք հարազատ լեզուախօսութեան 'ի դարս դարս. ամին իրի ամենայն փոյթ մեր և ընթերցասիրաց մերոց ունի 'ի մատեանս ապատան լինել և 'ի մատենագիրս ազգիս, և յաղթօղ լինել մասաց բոլորից լաւութեան մատենին և մատենագրին : Ազգային մատեանք. այսինքն գրչագիր գրեանք, զորս առմիօրէն Ձեռագիրս անուանեմք, է որ մագաղաթեայ, և է որ թղթեայ, իմն անխտիր՝ երկաթագիր, բոլորագիր, նոտրագիր, ընդ մեծ և ընդ փոքր՝ ընդ հին և ընդ նոր՝ ոչ պակաս քան զհազար հաշուին 'ի գրատան մերում. և զի ոմանց 'ի նոցանէ են կրկին և երեքկին օրինակք, վասն որոյ սակաւաթիւ են յոյժ մատենագիրք քան զմատեանս. այսինքն այնչափ՝ որչափ գտանես յանուանէ 'ի կարգիս : Թող զօրինակս տպագրեալս յայլևայլ տեղիս և առ մեզ :

Լաւութեան մատենին ճանաչի 'ի հնութենէ և յանսխալ գրչութենէ և 'ի հաւատարմութենէ գրչաց. զորոց զընտրութիւն առնել նոցա է անկ, որ 'ի գիրս թարթափին միշտ : Իսկ լաւութիւն մատենագրին յառաջինկայս նկատի 'ի մէնջ ըստ ոճոյ հնութեան և ըստ գեղեցիկ հայկաբանութեան. ապա թէ ոչ՝ մարթի և Նա ոք անմասն լինել 'ի կարևոր լեզուագիտութենէ, և անհարթ շարագրածս առնել. թող զի կան և այք անգէտք գայրութեան, և գրագէտք անճիք :

Զայս յայն սակս նշանակեմք՝ թէպէտ զինչ ինչ յայսմին մատենագրաց, զի գտանին միամիտք և տխմարք՝ որք զամենայն գիրս միօրինակ լաւ վարկանին. և զոր և է մատենագիր՝ իմաստուն, և Նա առ զնեն : Իսկ լաւութիւն բառարանիս կախեալ է զհաւաքմանէ հարազատ բառից և բանից ըստ բուն հայկաբանութեան յերիցելոց. այլ թէ մատենագիրն գովելի կամ պարսաւելի ոք իցէ, զայն ինչ ոչ հոգայ առ ժամս : Այլ զգօն և զպարսաւ ոճոյ և ոգւոյ առն առն իմասցիս 'ի գրուածոց միոյ միոյ 'ի նոցանէ : Ապա կարի իմաստութեամբ գրեաց հանճարաւոր մեկնիչն հայկեայ Գէորգ վարդապետ՝ 'ի վերայ բնաբանիս. "Եւ զհանճարեղ ուսկնդիր. Ընտրեք են, ասէ, և այս՝ հոգևորք և ծածատուքք. զի որ ունի զընտրութիւն հոգւոյ, կարէ իմանալ՝ ո՛ ոք հոգւով այ խօսի, և ո՛ բեհեզեբուղաւ. զի յոլով բանք են վարդապետաց բազմաց, որ զբարւոյ ունին զգեստ. այլ անհանճարք և առանց քննութեան յափշտակին, և շատ մեռանին. իսկ իմաստունն լաօղն իբրև հմուտ սեղանաւոր զօգտակարն ընդունի, և զանօգուտն խառնէ իբրև զպիղծ գահեկան, լսելով պօղոսի, թէ զամենայն ինչ փորձեցէք, և զբարին ընկալարուք. և 'ի չարաց 'ի բաց կացէք" :

Ուստի ունի ամենայն ոք 'ի միտ առնուլ, թէ որպէս 'ի բանս հաւատոյ և վարուց ընտրել պարտ է ընդ մատենագիր ողջամիտ և ընդ մոլար, նոյնպէս 'ի լեզուագիտութեան մասին ընտրութեան պէտք են ընդ մատենագիր գրագէտ և ընդ հետեւակ, ընդ բառս և ընդ ոճս առաջնոց և միջնոց և յետնոց :

Ինքնին իսկ յայտնի լինի ասացեալս և 'ի վկայութեանց եդելոց առընթեր իւրաքանչիւր բառից՝ պիտանեաց և անպիտանից. որք առնուն զյարգ իւրեանց 'ի մատենագրաց վարողաց զայն՝ բազմաց կմ սակաւուց յայլևայլ դարս : Յայտնի է և այն, զի թէ յարգի իցէ և եթէ անարգ վկայն, յորժամ մի միայն է վկայութիւն՝ նշան է, թէ

առ այժմ զայն ևեթ վկայութիւն գտանել է մեր. զի թէ գտանէաք այլ ևս, 'ի վերայ բերէաք 'ի ստուգութիւն նոյն բառի պիտանեաց կամ անգիտան կարծեցելոց :

Հանրական հմտութիւն գիտելի է ամենեցուն, զի ընտիր հայկաբանութիւն փայլէ յամի դարու սրբոց թարգմանչաց մերոց, որպէս 'ի շարագրութիւնս նոցա, ըստ նմին և 'ի գիրս թարգմանեալս 'ի նոցանէ : Եւ այս խոկ է առանձին պարգև այս մերումս ազգի, զի և Սբ գիրն է զանչելի թարգմանութիւն նոցա անախտ, քաղցր և առաւել քաղցր. Ցեա այնուհետև, այսինքն 'ի հինգերորդ դարէ մինչև յեր-կոտասանն, եղեն և ոչ սակաւ հայկաբանք, բայց և ոմանք օտարաբանք. իսկ յերեքտասաներորդէ մինչև չուեթուտասներորդն՝ յոյժ սակաւ եղեն ճշգրիտ հայկաբանք, և յոլովք յաւէտ ռամկաբանք, և խանգարիչք լեզուիս. մինչև յետ 'ի լոյս ընծայելոյ առաջին բառարանի սկսաւ կենդանանալ նախկին հայկաբանութիւն. զորոյ ընթարգաւաճանս ակն ունի տեսանել երկրորդս բառարան. միայն թէ Տէք վարինն սովաւ. գիտասցեն ընտրութիւն առնել ըստ նախագրելոցս : Զայս ամենայն լաւ ևս իմասցիս յաջորդ ցուցակաւս :

Զ. ՑՈՒՑԱԿ ՄԱՏԵՆԻՑ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ, ԸՍՏ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԵԱՆՑ՝ ԶՈՐ ՎԱՐԵՄՔ ՑԸՆԹԱՑՍ ԳՈՐԾՈՅՍ

Ծծաղունչ նշ գրոց՝ հին և նոր կտակարանաց նշանակս գիւ-րաւ 'ի մէջ առնու ամփոփութիւն ամենայն ոք. զի յայտնի են՝ թէ 'ի գնել մեր Ծն. Ել. Դւ. Ցեղ. ա. Բգ. ևն. կամ Սղ. Առակ. կամ Եւ. Եզեկ ևն. որպէս և Մտթ. Մրկ. Հռ. ևն, զոր մասն նշ գրոց պիտի խնդրել: Ցորամ կարգի երբ գտանես եդեալ, Սիրաք. կամ Սէր. խնձ անխտիր զկրկին օրինակս թարգմանութեանց. յորոց մին է քաղուածոյ և անշուք ոճով բաղադրեալ. զոր կոչեմք նոր՝ թէպէտև 'ի վաղնջուց այնպէս յարմարեալ. և միւսն է՛ հին է՛ ընտիր՝ համեմատ յոյն բնագրի, յետ սպագրութեանն ածաչնչի հասեալ 'ի մեր ձեռս : Ցոյանի տեսանես և զայս իմաստուն ընթերցողդ, զի ուր սակաւ ուրեք գտանի բառ ինչ 'ի նշ գիրս, զբանն ողջոյն եդաք՝ համագեամ նշանակօք գլխոյ և համարոյ. իսկ յորժամ յաճախեալ լիցէ առէք նոյն բառ այլևայլ ոճով, առանց այլոյ ծանօթութեան քաղէմք զայլևայլ բանս գրոց : Մնայ առնել զայլոց մատենից մի առ մի :

Այլոցն ըստ նախաձռնեալ՝ նախապատիւ են 'ի կարգի մատենագրոց 'ի դէտս բառարանի հեղինակք լեզուի հնագոյնք ժամանակաւ. վասն որոյ պէտք էին ստանօր զայնպիսիս նախակարգել, և ապայնեալս զարուք և զատորինս ոճովՙ այլ զի յընթացս գործոյս խառնիշանկելով անուանք նոցա գիւրագիւտ լինիցին խնդրելեաց, յայսմ վայրի շարագրեսցուք զնոսա 'ի կարգ այբուբենի օրինակ զայս :

Աեղ. Ակի : Արարուածոյ մահիկոնէից եպիսկոպոսի յելս Է դարու, պատմութիւն ժողովոյն եփեսոսի պարզ և վայելուչ հայկաբանութը. և հատուած բանից նորին ընդ վաչագանայ աղուանից արքայի :

Աֆօֆ : Այն է Ագաթանգեղոս ատենադպիր սրբոյն տրդատայ 'ի Դ դարու. պատմութիւն վարուց և գործոց նորին, և առաւել սրբոյ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչի, քաղցրանօթ աղգիւս համօրէն, Ըմոզ քարոզութեամբ վերաձայնեալ 'ի խորհնոցուոյն և յորոց զկնի : Բովանդակ գրութիւն է վսեմ և հարազատ հայկաբան : Կայ և սրբագրութի գործոյն յայլոց և 'ի մէնջ : Գտանի մեծաւ մասամբ և յանունէն թարգմանեալ յառաջ բերեալ 'ի Մետափրաստէ, և պարզեալ 'ի Բոլլանդեան վարս սրբոց յն. և լտ. Տեսանի 'ի կանոնագիրս հատուած մի բանից յաղագս կոչման յանուն ազաթանգեղոսի՝ ոչինչ օտար յոճոյ նորա : Տե՛ս զկնի և Թղթ. դաւ.

Աթ. ա. բ. գ. ևն : Աճառանական ճառք սրբյն աթանասի՝ աղեքսանդրու հայրապետի 'ի Դ դարու, հին և ընտիր թարգմանութը, որպէս և մասանն է հին և ճարտար գրչութը : Ոչ պակասին յընթացս և յեղենական ոճք :

Աթ. ափ : Վարք սրբյ հօրն մերոյ անտոնի ապաղայի՝ ըստ հին թարգմանութեան՝ համառօտեալ 'ի ճառընտիրս :

Աթ. հկ. եւ. խոս. 'ի օրէէ. ևն : Ճառ 'ի համբարձումն քրի կմ 'ի վերջաւորն և 'ի խաչն, 'ի կոյսն և 'ի սուեփաննոս. թարգմանութի միջինկմ անհարթ, կայ և համդանաւ նշ նոր թարգմանութը 'ի լատինէ :

Հյ. օփ. և կնդղ : Գորգախօս գրուած ինչ 'ի վերայ պէսպէս իրաց՝ հարցմամբ և պատասխանեօք, իբրու ընդ աթանաս և ընդ կիւրեղ եղեալ.

Ախոալ, կամ Ալեսոփ : Անպէտ գրութիւն անպիտան ոճով 'ի վերայ բաժնից և միճակաց ըստ գուշակական աստղահմայութեանց. սոսն բնախօսութեանց, և որոց 'ի նոյին սակի են : Օրինակք այսպիսեացս ոչ երբէք զկնի նման միմեանց՝ համգոյն բանից սուտ վկայից :

Ալէքս. Տ. Գրմ. ալեքս :

Անժ. եփեզ : Անանիայի վարդապետի նարեկացւոյ՝ հօրեղբոր մօր սրբյն գրիգորի նարեկացւոյ. ճառ 'ի վերայ եկեղեցւոյ՝ պերճ և փառաւոր ոճով, համգէրձ անսովոր բարդութը բառից. ուզղեալ ընդգէմ թոնդրակեցւոց :

Անճ. ղղ. կամ ձհ. և 'ի չհ. ձ. և 'ի յաղ. և 'ի պէտք : Անանիայի շիրակացւոյ (շիրակացւոյ կարծեցեալ յոմանց) խրատ առ քահանայս, և վասն խոնարհութեան, և յորդորական բան վասն զղջման և ապաշխարութեան՝ պարզ և վայելուչ ոճով: Եւ անանիայի ուղուցին վարդապետի բանք 'ի յովհաննէս միրաեփ, 'ի պէտորոս առաքեալ, և 'ի յոհանն ևն, լաւ ևս ոճով:

Անան. չիր. Տ. Շիր :

Անան. սանահն. Տ. Սանահն :

Անբեղասր : Անթիպատրոսի բոստրացւոց եպիսկոպոսի քանի մի ճառք թարգմանեալ միջակ ոճով 'ի կարգի ճառընտրաց: Այլ զայսպիսի մատենագիրս յոլովակի նշանակեմք ընդ տառիւքս, Ճ. կմ ՃՃ:

Անյ. կամ Անյաղթ. բոլլ: Սրբյն դաւթի անյաղթ փիլիսոփայի հարքացւոյ կամ ներգինացւոյ, յաշակերտութէ սրբց թարգմանչաց, ճառ պանծալի և վսեմ 'ի նշ խաչն, որոյ սկիզբն է Բարձրացուցէք. ուր կան և հետք հելլենաբանութե : Տե՛ս և Գէօփ :

Անյ. հդ. իմ: Հարցուածով պիտառութի ընտիր և իմաստասիրական՝ ճշգրիտ հայկաբանութբ վսեմագունիւ. որ յաւուրս տպագրութե գործոյս եհաս 'ի ձեռս մեր. վասն որոյ 'ի Խ տառէ և անդր կոչի 'ի վկայութի. յաւելցի զկնի ինչ ինչ և 'ի միացորդս :

Անյ. պորփ. կամ սփորոգ. կամ պերիարմ. կամ վերլծ. արիստ : Լուծմունք հինգ ձայնից պորփիւրի, և ստորոգութեանց, և պերիարմենիասի, և վերլուծական գրոց արիստոտէլի, առաւել հելլենաբանութբ և խրթին ոճով : Ի սոսին վերածին և առածք հինգ վասն սահմանի, և բաժանման, և նկատումն արիստոտէլի : Տե՛ս և Սահմ. և Քեր : Կան և քանի մի գրուածք դաւթի բագրևանդացւոյ. որում մարթ է ընծայել և ինչ ինչ 'ի հատուածոց բանից՝ որք կրեն զանուն դաւթի անյաղթի :

Աշխ. Նշանակս է անծանօթ առ մեզ, զի այսպէս գնի 'ի հատուածս բառարանի սուեփաննոսի լեհացւոյ :

Առաքել պատմ : Վասն քանի մի ևեթ կարևոր թուեցեալ բառից յառաջ բերեալ զկնի գարու պատմագրութի առաքել վարդապետի դավրեժցոյ. զորոյ զշարագրութիւն թէ չէր խանգարեալ ապօղն Ոսկան վարդապետ, առաւել գովելի լինէր :

Առաքին. կամ Մօղ: Եւ յայս գրոցս Առաքինութեանց և մոլութեանց. որ է 'ի լատինէ թարգմանութի յակոբայ ջահկեցւոյ՝ տաներլի ոճով, նշանակեցաք զբառս ինչ ըստ իմիք պիտանիս :

Առ որս. ա. բ. գ. ևն : Գիրք ճառից սրբյն գրիգորի ածաբանի նազիանզացւոյ. ուր քանզի նախկին ճառ գնի 'ի մեզ այն՝ որոյ սկիզբն է, «Առ որս բանիւ են պաճուճեալ՝ բանքս», անուն մատենին կոչի առ հայս՝ Առ որս գիրք ածաբանի: Է թարգմանութի հին՝ կէս մի հայկաբան, և կէս մի հելլենախօս. թող զսկզբանս վիպասա գրչաց, որոց չէր ինչ գիւրըմբռնելի ճարտար ճառաբանութե այնպիսւո Տե՛ս և Ածաբ :

Ասող. ա. յ. կմ բ. և գ : Պատմութի ստեփաննոսի վարդապետի տարօնեցւոյ՝ մականուն Ասողիկ կմ Ասողնիկ 'ի սկիզբն ԺԱ դարու, յերիս բաժանեալ գիրս. միջակ ոճով, ուրեք հարթ, ուրեք անհարթ:

Ածաբ. ծն. պրփ. պատէ. նոր կիր. պէնտէկ. խչ. ծնունդ. կէղր. հուրէփ. ազդ. և ծղ. ևն : Տօնական ճառք և բեմբասացութիւնք գրիգորի ածաբանի, գրեալք ուրոյն, կամ ամփոփեալք 'ի ճառընտիրս. որպէս 'ի ծնունդ և 'ի մկրտութիւն տեառն, 'ի պասեքն կամ 'ի պասքայն, 'ի նոր կիրակէն, 'ի պենտեկոստէն, 'ի խաչն, և 'ի մակաբայեցիս. և 'ի կիպրիանոս. և յաղագս կարկտի, և աղքատսիրութե. որպէս և մեկնութի 'ի ժողովողն, գործ առաջին թարգմանչաց՝ քաջ հայկաբան՝ խառն ընդ հելլենախօսութե :

Ածաղգ. ա. գ. ևն: Երիքասան թուղթք սրբյն իգնատիոսի ածազգեաց հայրապետին անտիոքայ, տպագրեալ 'ի կոստանդնուպօլիս յամի 1783. համեմատութեամբ՝ որպէս ասի՝ հին ձեռագրաց, բայց ուրեք ուրեք այլայլութբ հոլովից և խոնարհմանց ըստ յետնոյն կերպի: Է հին թարգմանութի նախնեաց՝ պարզ և ընտիր, համառակօրէն բառ առ բառ ձայնակից ընտիր օրինակաց յոյն բնագրի :

Ածոփոլ. նաւաչափ. կմ Ղրփ : Ճառ արիստակիսի ուրումն վարդապետի (եթէ չիցէ լաստիվերտցին) 'ի մկրտութիւն տեառն և 'ի

փորձութեն անապատի, կամ յութօրեայ նաւակատիս զկնի յայտնութեն՝ վայելուչ և կարգաւոր ոճով։

Աւետոփ. լուսփ. Տ. Լուսփ։

Աւետոփ. Գրչ. կամ Գրչ. ոբետոփ։ Արհեստ գրչութեն արիստակեայ ուրումն՝ 'ի պէտս ուղղագրութե տառից և բառից, իբրև մասն քերականութեան, յիշատակեալ և յերզնկացւոյն՝ որպէս երիցագոյն քան զինքն ժամանակաւ։

Աւետ. Ե. կամ ատտփ. կամ ոփորոգ. ԵՆ։ Գործք արիստոտէլի փիլիսոփայի ստագիրացւոյ, Թարգմանեալք 'ի գաւԹէ անյայտ Թէ, կամ մասամբ յառաջնոյն քան զնա։ Երկոքին Թուղթքն առ մեծն աղեքսանդր՝ վասն Աշխարհի, և վասն Առաքինութեց, են ըստ բաւականին հայկաբան և ընտիր. իսկ ստորոգութիւնքն, պերիարմենիասն, և որ 'ի սոցին սակի, են անպէտ և անշուք հելլենաբանութեն նիւԹական։

Աւծր. Ե. Բ. ԵՆ։ Թովմայի վարդապետի արծրունւոյ 'ի Ժ դարու, պատմութեն 'ի հինգ գիրս, միջակ և վայելչական ոճով, հանգերձ պատուատութեն խրթին բառից և ձևոց բանից. (Թող զխաւլագրութիս գրչաց։) Վերջին գլուխ չորրորդ գրոցն, և հինգերորդ գիրքն ողջոյն, է երկրորդումն նախագրեալ անցից այլով ոճով. իսկ վերջին գլուխ հինգերորդին է յաւելուած այլոյ ուրուք։

Աւշ. կամ Աւշար։ Գրիգորիսի արշարունեաց կամ աշարունեաց եպիսկոպոսի 'ի Է դարու, մեկնութեն ընթերցուածոց, մանաւանդ Ճրագալուցի ծննդեան, և յարութեն, ընտիր և ճարտարախօս հայկաբանութբ։

Բաբէլ. յհ. Ձ։ Բաբիլոյ աղեքսանդրու հայրապետի ճառ պանծալի 'ի գլխատումն յովհաննու մկրտչի՝ վայելուչ Թարգմանութբ, յաւուրս տպագրութեն գործոյս հասեալ 'ի մեր ձեռս։

Բրս. հց. կամ ճգն. կրօն. կանոն։ Սբյն բարսղի մեծի կեսարացւոյ գիրք հարցողաց, և ճգնողականաց. և սահմանք և կանոնք կրօնաւորականք, Թարգմանութիւն նախնեաց՝ ըստ վայելչութեան գործոցն։

Բրս. պհ։ Ճառ գեղեցիկ 'ի մեծ պահս, ուրոյն յայլոց բանից 'ի վերայ պահոց։

Բրս. աղ. կամ Եղբ. կամ ապաշխ. կամ գոհ. ողորմ. կամ արբեց. վաշխ. նախ. չար. ընչեղ. կամ 'ի գործ. յաղէփ. և ծն. փեստ ընդ առաջ. և այլն։ Այն են մեկնութիք այլևայլ սաղմոսաց. պէսպէս Թուղթք. ճառք ապաշխարութե, գոհութե, ողորմութեան և աղօթից. ճառք ընդդէմ արբեցողաց, վաշխից, նախանձու, չարեաց, ընչեղաց. և 'ի գործս վկայն, և 'ի յուղիտայ, և այլ ճառք 'ի տօնս տէրունականս ըստ ճառընտրաց։

Բրս. հոյեմ. կամ յ'եւԹնակն. փարող. աղ. և այլն։ Ճառ 'ի վերայ բանին մովսեսի, Հայեաց յանձն քո, կամ զգոյշ լեր անձին քում. և 'ի սկիզբն աւետարանին յովհաննու. և գանձք կամ աղօԹք 'ի կարգի հին մաշտոցաց կամ ճաշոցաց։ Այս ամենայն ընդհանրապէս են Թարգմանութիք նախնեաց 'ի Ե դարու. բայց կան և 'ի նոսա ինչ ինչ Թարգմանեալ 'ի Զ և 'ի Է դարս տարապայման հելլենաբանութբ. զոր յայտ առնեն վկայութիքն յառաջ բերեալք ըստ բառից. Տես և Վեցօր։

Բարս. կամ Բրս. Մրկ։ Բարսղի բանիբուն վարդապետի 'ի վանաց մաշկևորի՝ կամ մաշկուորցի, մեկնութեն աւետարանի սբյն մարկոսի, աւարտեալ 'ի Թուին ՉՀԴ. 1325. գործ Թերի՝ պակասաւոր յառաջին գլխոց մինչև 'ի Թ, ուստի սկսանի երկրորդ հատոր գործոյն յերեսին օրինակս մեր։ Ոճն պարզ և ստորին ըստ ԺԴ և ԺԴ դարուց, այլ ուրեք հեռաւոր հնախօսութեն. մանաւանդ ըստ միում օրինակի, յորում կան յաւելուածով ձևք բանից քաղաքավայելուչք։ Ուստի յայտ է Թէ գրչագրաց յուլութին կամ անհաւատարմութեն այլափոխեալ է զգործն։

Բենէկ։ Ազօթամատոյց գիրք Բենիկ անուն վարդապետի 'ի միջին դարս, ստորնագոյն ոճով, այլ խրթնագոյն բառիւք և բարդութբք, իբր հետևողութբ հնութեց, մանաւանդ հատուածոց նարեկի։ Վարդան ծերունին առ ժամանակօք շնորհալւոյն 'ի խրատս իւր բերէ 'ի վկայութեն զբան վարդապետի ուրումն, զոր կոչէ Բենէ։

Բժշկր։ Բժշկարանք պէսպէս գտանին՝ նմանք և աննմանք իրերաց. Թարգմանաբար հաւաքեալք յամենայն ազգաց՝ խառն և ռամկական ոճով։ Առաւել քաջածանօԹ է գործ Ամիրտովլաթայ ամասիացւոյ բժշկապետի հայոց 'ի ԺԵ դարու։ Յայտնի գրուեց ոչ այնչափ վկայութիս առաք բանի, որչափ բառի, որ երբեմն հայկական, Թէ և իցէ ռամկական կամ գաւառական, որպէս պիտանացու յոյժ ըստ տեղւոյն։ Տես և Մխ. բժշ։

Բուզ. Փ. Ը. Դ. Է. Զ։ Փաւստոսի Բիւզանդայ, կամ Փաւստոսի բուզանդացւոյ յունի՝ եպիսկոպոս եղելոյ 'ի վերին հայս նախ քան զկաթողիկոսութեն մեծին սահակայ, պատմութեն հայոց՝ սկսեալ յերրորդ դպրութեն մինչև 'ի վեցերորդ. կրկնաբան և լի անհեթեթ հանգամանօք՝ ոչինչ ընդհատ յառասպելաց. Թշնամանօք հանգերձ և աղգիս. զոր զարմացմամբ իմն յիշէ և փարպեցին։ Թարգմանութեն է քաջ հայկաբան. մինչ զի բառքն են գովելի քան ըղձանն. և աներկբայ աշխատասիրութի է առաջին Թարգմանչաց կարգելոց 'ի սբյն սահակայ և 'ի մեսրոպայ. և ըստ իմաստ բանի՝ երկասիրութի կորեանն. որ և զհատուածս բուզանդայ 'ի կիր արկանէ՝ յարմարելով 'ի վարս սբյն մեսրոպայ զգրեալն 'ի բուզանդայ յաղագս սբյն յակոբայ մծբնացւոյ, որպէս և 'ի բանից ագաթանգեղոսի զգործս ինչ սբ լուսաւորչին։ Կան և 'ի գիրս յունաց՝ մանաւանդ առ պրոկոպիոսի հատուածք ընԹացից բուզանդայ, եւ և յառաջին դպրութեց նորին՝ ընդ անուամբ Պատմութեն հայոց՝ նոյնպէս առասպելայօդ. մինչև 'ի կարծիս անկանել մեզ, Թէ առ նա ակնարկիցէ աւելի խորենացւոյն. Բ. 21. Թէ «Անոճ իմն յաղագս հայկայ և նմանեացն կակազէ». և Թերևս վասն այսորիկ 'ի բաց Թողեալ լքեալ իցեն երեքին առաջին դպրութիք նորա, և միայն յետինքն իցեն Թարգմանեալ՝ որ հային յաւուրս քրիստոնէութե. ուր ժամանակագրութեն առաւել ստոյգ երևի։

Բս. հին. Տ. Հին բս։

Բս. սրբէ. ճհ. Տ. Սրբէ. ճհ։

Գագիկ առ ռոմանոս։ Այն է Թուղթ գագկայ առաջնոյ արքայի արծրունեաց՝ գրեալ առ ռոմանոս կայսր յունաց, ըստ յառաջ բերելոյ մատթէոսի ուռհայեցւոյ։

Գաղիան։ Հաւաքումն բառք բժշկարանին գաղիանոսի կամ գաղենոսի մեծանուն բժշկապետի, 'ի յունականէ հայկական տառադարձութբ գրելոյ՝ Թարգմանեալ և մեկնեալ 'ի հայ բարբառ։ Հին և ընտիր Թարգմանութեն, այլ յանհմտութե գրչաց բազում ուրեք անիմանալի գտանի կամ յն. ձայնն, և կամ հայերէնն. և ամենայն օրինակք անհամաձայնք իրերաց. նմին իրի և Սրբէ. ճհ. յոլովակի այլազգ ընթեռնու, և մեկնէ ըստ կամի։

Գանձրն. կամ Գնձ։ Հաւաքումն եկեղեցական երգոց՝ որ գանձք կամ քարոզք կոչին. յորս պանծալի են յօրինուածք նարեկացւոյն և շնորհալւոյն, և քանի մի վարդապետաց՝ զորս յանուանէ նշանակեմք ըստ տեղւոյն. իսկ մնացեալքն են գործ զանազանից 'ի յետին դարս՝ ցուրտ ոճով և անշուք բառիւք ռամկականօք գլխովին։ Միայն քանի մի ընտիր գանձք կան խաչատուր վարդապետի տարօնացւոյ առաջնորդին հաղարծնի. որոյ է և խորհուրդ խորինն 'ի մուտս պատարագի ամենավայելուչ. իսկ կեչառեցւոյն խաչատրոյ գանձք են անհարթք որպէս զայլոցն։

Գեննադ։ Գեննադայ պատրիարքին յունաց 'ի կոստանդնուպօլիս 'ի հինգերորդ դարու՝ ճառ 'ի նինուէացիս, և այլն, միջակ ոճով և Թարգմանութբ։

Գերմ. Եղբ։ Թուղթ սբյն գերմանոսի պատրիարքին յունաց 'ի կոստանդնուպօլիս 'ի Ը դարու՝ լի իմաստութբ և խաղաղասէր մտօք առ հայս. զոր ասի Թարգմանեալ բերողն ստեփաննոս սիւնեցի, այլ ոչ այնչափ յստակ ոճով՝ խառն ընդ հելլենաբանութեն։

Գէորգ Գրչ։ Արհեստ գրչութեն գէորգեայ վարդապետի՝ զոյգ ընդ գրչութեն արիստակեայ՝ յիշատակեալ և 'ի Քեր. Երզն։ Տես և 'ի յաջորդ անուանն։

Գէ. Ես։ Գէորգեայ բանիբուն և իմաստալից վարդապետի մեկնութեն մարգարէութեն եսայեայ, քաղեալ 'ի բանից ոսկեբերանի, եփրեմի, կիւրղի, և սարգսի, զորս յանուանէ նշանակէ, պատուաստելով ինչ ինչ և յայլոց հարց, գեղեցկայարմար հիւսուածով։ Ճարտար գրչութեն հին մատենին է 'ի Թուին ՉԽԱ. 1292. յաւուրս արքային հայոց հեթմոյ երկրորդի. և այն օրինակեալ յայլմէ ընտիր օրինակէ. որով ժամանակ գէորգեայ անկանի և նա յառաջին լինել. վասն որոյ անգիւտելի մնայ աւելն 'ի վերնագրի. «Հրամանաւ տեառն հայոց հեթմոյ». արդեօք իշխան իցէ կամ Թագաւոր հեթումս այս, և կամ առաջնորդ ոք։ Եւ զի լաւագոյն կարծեցեալ օրինակ ծծաշնչին մերոյ՝ գրեալն 'ի յովհաննէ դրչէ 'ի Թուին ՉԿԶ. ուր գաղափարեալ յընտիր օրինակէ գէորգեայ վարդապետի ուրումն երևելւոյ, մարթ է առել. Թէ մեկնիչն գէորգ է նոյն ընդ նախանշանակեալ գէորգեայ՝ համադունի յարհեստ գրչութեն։ Եւ տեսանեմք իսկ, զի մատեանք մեր ընտիրք գրեալք 'ի ԺԴ դարու առ ժամանակօք երկուց հեթմոց անուն Թագաւորաց՝ են ճարտար գրչութիք բոլորագիր՝ աղօղագիր և գեղեցկագիր։ Այսչափ ինչ առ այժմ շատ լիցի։

Գխտ. Եղբ. առ Վաչէ։ Թուղթ երանելւոյն Գիւտայ (որպէս կարծի՝ յառաջ քան զկաթողիկոսութի յեպիսկոպոսութե իւրում) առ վաչէ աղուանից արքայ հրաժարեալ յաշխարհէ 'ի միայնութի, վայելչապանծ բանիւք և բառիւք շարագրեալ. որ կայ 'ի կարգի պատմութեն մովսէսի կաղանկատուացւոյ. այլ կարօտիմք հին և անսխալ օրինակի։

Կայ և խրթին գիր համառօտ առ գաւիթ անյաղթ՝ որպէս իմն. գիր վասն ճառի սբյ խաչին, և պատասխանի նորին 'ի գաւԹայ. և սոցա ես լաւագոյն օրինակ խնդրելի։

Գր. Եբեց. Տ. Ոտոհ։

Գր. լուս. Տ. Յճխ։

Գր. հր։ Այն է հրահանգք հաւատոյ և բարի վարուց՝ միջակ և

ընտիր ոճով և գեղեցիկ կարգաւորութեամբ. զոր իրաւամբք առանց գտանի 'ի կարգ նորին, և այլք տարտամ թողուն զնմանութիւնն, և ոճիչ անյարմար գտանին գրեթէ ոչ և ապացեալ. մանաւանդ զի յըն- տոխ զանազանութիւն անուանց առաքինութեանց և մոլութեանց յայտ առնէ զնմանողականն թարթափելով և 'ի գիրս այլոց ազգաց: Բայց յարդ անուանն վերոյ՝ առաւել նարեկացւոյն է անկ գործս: գործ էր գտանել, թէ ո՞ իցէ և յորում ժամանակի վարդան գի- տնոգարին, որ եղև խնդրող գեղեցիկ վարդապետութեանս :

Գր. նարէկ. Տ. Նար:

Գր. փղ. Եղբ. ԵՆ: Գրիգորի կաթողիկոսի՝ մականուանեալ Տղայ բոլորովին, եղբօրորդւոյ և յաջորդի Շնորհալւոյն, թուղթք առ կայսր և առ պատրիարգ յունաց ժողովական 'ի Հռոմկլայէ, համ- ձարեղ բանիւք և վայելուչ յօրինուածով: Իսկ թուղթք նորա առ հայրապետս՝ մանաւանդ առ առաքելոյն՝ են ոգւով լի, և ճար- տար ոճով յաղթահարիչ ամենայն մտացն. խնդրելին և սոցա ըն- տիր օրինակք :

Գր. փղ. էֆմ: Ողբանուագ ողբ 'ի վերայ առմանն Երուսաղէմի 'ի Սալահատինայ յաւուրս իւր յամի 1187. ոտնգ. պարզ՝ և ըստ իմիք առակական ոճով, այլ բնական յոյժ, և շարժիչ սրտից :

Գր. մոյլ. Տ. Մովսէս:

Գր. օծխա. Տ. Ակնա:

Գր. օծմն: Ճառք զանազանք սորին գրիգորի սքանչելագործի Նէոկեսարու եպիսկոպոսի յերրորդ դարու, գտեալք 'ի ճառըն- տիրս: Վաւերական է առ ամենայն նախնիս և վարդապետութիւն նորա սխրալի՝ տիրապես ծածկանութեամբ, զոր ուսաւ 'ի սորին յով- հաննէ աւետարանչէ յաջորդ նորին ածածնի 'ի տեսլեան: Հետք նոյն վարդապետութեան կան և 'ի բանս սորա լուսաւորչին մերոյ, և ածծին բարոյի:

Գրլ. օրհնոլ. և Գէ. Տ. Արիստակ. Գրլ. Ն. Գէորգ:

Գործոյ: Սորին յովհաննու գամաղացւոյ՝ հզօր վարդապետի յու- նաց 'ի Է դարու, ցնի հարց առաջնոց, գործ իմաստասիրական և ածաբանական, թարգմանեալ մասամբ 'ի ձեռն սիմէոնի ու- րուածի քահանայի 'ի վրաց լեզուէ 'ի հայ բարբառ, անհարթ ոճով. օրինակն իսկ մեր գրեալ 'ի թուին ՀԾ. ՌՃԾԵ, չարժէ ինչ, բայց առ- ձի գաղափարեալ 'ի հին օրինակէ գրելոյ 'ի թուին ՉԿԶ: Կայ և լի իմաստասիրական մասն գործոյ գամասկացւոյ՝ լաւ ևս թարգ- մանեալ 'ի յունէ 'ի հայ 'ի ձեռն բագարատայ մամիկոնեան. այլ- քաղուածով համառօտեալ: Ցերկոցունց օրինակաց իսկ սակաւ բարք եղին մեզ պիտոյ:

Դասիֆ ածոյք. Տ. Ածյ. և Մահմ. և Քեր:

Դիոն. երթ. կամ էջեղ. կամ ածոյ. և այլն. և Եղբ: Սորին դիո- նեսիոսի արիսպագացւոյ յաթենայ, աշակերտի սուրբ պօղոսի, և ածծին յաւելեալ, ածեղէն գուցես ոգւով վառելոյ 'ի տարփումն հոգւոյ, և մերձելոյ յոտն աթենական, խորհուրդ գիրք յաղագս երկնային քահանայապետութեանց՝ այսինքն դասակարգութեան հրեշ- տակաց, և յաղագս եկեղեցական քահանայապետութեան, այսինքն բոլորակ լրման կարգաց եկեղեցւոյ, և յաղագս ածային ա- նուանց, նմա ստորադրելոց մեզ, և խորհրդական ածաբանութեան՝ ըստ յայտնութեան եղելոյ առ մարգարէս և առ առաքեալս 'ի ձեռն կենաց հոգւոյն նորա. ընդ և թուղթք առ զանազանս: Թարգմանութեան ստեփաննոսի սիւնեցւոյ՝ պահեսմբ հելլէնաբանութեան. յորմէ բա- զում բառս քաղեցաք համեմատութեամբ յոյն բնագրի առ գիտութիւն ընթերցողաց: Իսկ նոր թարգմանութեան ստեփաննոսի լեհացւոյ 'ի լատինէ՝ հետևողութիւն և հին թարգմանութեան ըստ տեղւոյն՝ չեղև ինչ մեզ օգուտ: Այլ թուղթն դիոնեսիոսի առ տիտոս վասն փոխման կուսին՝ որ կայ 'ի ՃՃ. է հնագոյն թարգմանութեան նախ- նեաց. զորս և գտաք 'ի ևիր արկանէ շարական խորենացւոյն յատուկին որ փոխման կուսին, որպէս և թուղթ խորենացւոյն առ սահակ :

Դիոն. երոլ. Տ. Դիոլ. ՓԷր:

Եւէկլ: Եղանելոյն եփրեմ կամ եղնակայ կողբացւոյ՝ գլխա- ւոր 'ի մէջ առաջին թարգմանչաց. գիրք յեղծումն հին աղանդոց հելլենացւոց, և գենի պարսից, և մոլորութեան մանիքեցւոց, բուն և պարզապէս հայկաբանութեամբ. եւեմ ըստ ձեռագիր օրինակի՝ որ և 'ի Սէլ տպագրեցաւ. ուր նախկին տպագրութեան զմիւռոնիայ էր այ- խակ ըստ նոր ոճոյ յետնոց յոյժ սակաւ տեղիս: Ցիշեին և այլ ԵՂ- ՆԱ անուամբ վարդապետք կամ երեցք 'ի յաջորդ դարս :

Եփր. ա. Է=Է: Սորին եփրեմի կամ եփրեմայ ասորւոյ՝ վարդապետի աշա- կերտութեան եկեղեցւոյ՝ մեկնութիւն մեկնութեան պատմագրութեան նահապետ- ութեան սուրբ հարց և զգենլեանց՝ ընտիր և պատմածոյ ոճով, և գիտնաւոր կարգաւորութեամբ քան զամենայն պատ- մութեան մեր, գրեթէ եւեթ պատմաւոր սահմանութեամբ պատմական և պատմական բանից վարելոց 'ի ժամանակին: Բազում օրի- նակ են գործոյս՝ գրչագիր և տպագիր՝ իւիք իւիք տարբերութեամբ. ընթերցուածն և ևս յայտնեցաւ ըստ ժամանակին 'ի հնագիր

մատենից :

Եղէշ. մանչ. կամ իւր: Խրատ միանձանց՝ սքանչելի յօրինուա- ծով և ոգւով: (Տես զնիլ և Եղէշ. երկց:)

Եղէշ. յէս. տփ. Ն. տոտփ. և ծն: Մեկնութիւն յեսուայ և դա- տաւորաց՝ ուրեք ուրեք ըստ բառիցն անգամ համաձայն ընդ եփ- րեմայ. և Ճառ յառաքելայն: Կան և հատուածք մեկնութեան սրա- բանից. այսինքն գրոցն ծննդոց, 'ի գիրս այլոց մատենագրաց. անձ- կալի է զամբողջ գործն տեսանել:

Եղէշ. հայր մեր: Մեկնութիւն տէրունական աղօթից՝ գեղեցիկ և վայելուչ բանիւ:

Եղէշ. հոգ: Ճառ իմաստասիրաբար վասն հոգւոց մարդկան՝ խո- րին մտօք, և գեղեցիկ հայկաբանութեամբ. որ անկաւ 'ի ձեռս մեր յետ թացս տպագրութեան խ գրոյ:

Եղէշ. մարմ. ււր. խաչէլ. Եղմ. և ննջ: Զանազան ճառք ըն- տիրք 'ի խորհուրդ մտանութեան տեառն, և չարչարանաց. և խաչե- լութեան, և թաղման՝ զոյգ ընդ յարութեան. որպէս և 'ի ննջեցեալս: Կան և կանոնք ինչ նորա 'ի կարգի կանոնագրաց. ուստի և հաստա- տի առաւել եպիսկոպոսութիւն սորին. կարծեցեալ նոյն ընդ եղիշէի ամատունեաց եպիսկոպոսի՝ յիշատակելոյ 'ի պատմութեան իւրում:

Եղէշ. Ե: Հատուած մեկնութեան 'ի բան եսայեայ, օտար յոճոյ սորին եղիշէի:

Եղէշ. Էրէց: Համառօտ նկարագրութիւն թաբորական լերին, և միայնակեցաց տեղւոյն՝ իբրև ուխտագնացութեամբ տեղեկացեալ: Օ- րինակն էր անհարթ գրչի. ապա թէ ոչ՝ ոճն չէ շատ հեռի 'ի ճառէ միանձանց. թողից առել և զքանի մի հատուածս իրատականս պար- զախօսութեամբ յանուն եղիշէի քահանայի. որպէս և արծրունին պար- զապէս նա քահանայ կոչէ զնմին եղիշէ պատմագիր:

Եզնկ. Բարօյ. և ող. և Եղմ. յար. ԵՆ: Սորին եպիսկոպոսի կողբա- ցւոյ՝ համառօտեալ թարգմանութիւն գրոյն, որ յաղագս բարոյից կենդանեաց և ականց պատուականաց, պէսպէս այլայլութեամբ 'ի զա- նազան գրչաց. վասն որոյ կարօտիմք լաւագոյն և հնագոյն օրինակի: Կան և հատուածք 'ի մեկնութենէ սաղմոսաց: Կայ և ճառ նորին 'ի սբ խաչն, և 'ի թաղումն տեառն և 'ի յարութիւն նն 'ի ճառընտիրս: Գտանին և յիշատակք բազմապատիկ գործոց նորա առ մատենագիրս մեր. այլ բուն գործքն չհասին դեռ 'ի ձեռս մեր:

Եզնկ. ծն: Մեկնութիւն գրոցն ծննդոց, և աւետարանի մինչև 'ի սկիզբն քարոզութեան քսի. հին և ընտիր թարգմանութիւն, այլ գործ խառն 'ի Ճշմարտութենէ, և յառասպելապատում աւանդից հրէից. թող և զյաւելուածս քանի մի բանից 'ի վերջին գլուխս և յըն- թացս 'ի ձեռն ուրումն 'ի հայոց վարդապետաց յզկնի դարու: Այս մատեան եհաս 'ի մեր ձեռս մօտ յաւարտ տպագրութեան գործոյս:

Եւ. նէկզի. Տ. Նէ:

Երաշտան: Անհեթեթ և յիմարական գործ՝ թարգմանեալ յոճ ռամկական յայլոց ազգաց 'ի ոճա թուին հյ. 'ի ժԶ դարու. ուս- տի հարկեցաք նշանակել զքանի մի բառս:

Երզն. մփթ: Յովհաննու երզնկացւոյ կամ եզնկայեցւոյ, որ և ծործորեցի՝ և պլուզ վարդապետ կոչի, 'ի սկիզբն ժԴ դարու, ըն- թացումն մեկնութեան մատթէոսի սկսելոյ 'ի շնորհալւոյն, պարզ և բա- նիբուն ոճով. հետևողութեամբ ոսկեբերանի, և այլոց հարց:

Երզն. ծ. խորան: Խորհրդաւոր բացատրութիւն նկարու կենդա- նեաց՝ որ կայ 'ի սկիզբն ձեռագիր աւետարանի, որպէս նախադրութիւն եւսեբի և համեմատութեան գլխոց չորից աւետարանչաց: Եւ այս ևս գործ է 'ի համարի մեկնութեան մատթէի:

Երզն. քեր: Մեկնութիւն քերականութեան՝ կրկին. համառօտն՝ որ ոչ շատ զանազանի 'ի բանից նշիւցւոյն. որ թուի հետևող երզնկա- ցւոյն. և ընդարձակն՝ գործ բազմավաստակ, հետևողութեամբ և քա- ղուածով բազում մատենագրաց, մանաւանդ դաւթի անյաղթի, մովսէսի քերթողի, ստեփաննոսի սիւնեցւոյ, համամայ, մագիս- տրոսի, ԵՆ:

Երզն. երկն. Ն. ոփ. երկն: Ճառ բացատրութեան յաղագս երկնային մարմնոց և շարժմանց նոցա: Նոյն և տոմարաւոր ընդարձակ 'ի վե- րայ երկնային զարդուց:

Երզն. լուս: Գովեստ սբ լուսաւորչին, որպէս և որդւոց և թո- ռանց նորա, տպագրեալ ընդ Յաճախապատում գիրս սորին գրի- գորի: Ցայտնի են և շարականք երզնկացւոյն, որպէս և երգ 'ի Ջըր- օրհնէս: Գտանի և 'ի տաղարանի միում տաղ յովհաննու Ճլուզ վարդապետի 'ի սբ գր. լուս:

Երզն. խրատ: Խրատական վարդապետութիւն 'ի պէտս քահանայից և ժողովրդոց՝ հետևողութեամբ ոճոյ վարդան վարդապետի. որպէս և շարականն Այսօր զուարճացեալ՝ պահէ զբազում բառս վարդա- նայ 'ի գովեստ լուսաւորչին: Ցամենայն գործս երզնկացւոյն՝ ընդ պարզութեան կայ և հմտութիւն ամենայն հնութեանց. մինչ զի յետ նորա ոչ ոք գտաւ նման նմա:

Եւագր. ա. Է. ԵՆ: Գիրք եւագրի Պոնտացւոյ պանտացւոյ՝ աշա- կերտելոյ մեծին բարսղի. խորհրդաւոր տածումն տեսական և գործ-

նական կենաց։ Հին Թարգմանութեն՝ յարմար Նիւթոյն։ Ցընթացս գործոյն կան և քանի մի ճառք՝ որք գտանին 'ի յն․ և լտ․ տպագրութե գործոց սբյն Նեղոսի․ այլ զինացեալ բանից Եւագրի ոչ տեսաք զբնագիրս։

Եւթաղ․ Հատուած մի բանից՝ կոչեցեալ Աղերս Եւթաղի, Իմաստուն տեսութբ յաղագս Նբ գրոց։ Սորա իցեն Թերևս և յառաջաբանք Թղթոցն պօղոսի ըստ վկայելոյ Շիրակացւոյն 'ի քրոնիկոնի։

Եւկլիդ․ Եւկլիդեայ կամ Եւկղիտեայ երկրաչափի հռչակաւորի 'ի հնութե յունաց՝ համառօտ գիրք յաղագս Տարերաց երկրաչափութե։ Թարգմանութեն եւեթ լինել գրիգորի Մագիստրոսի՝ ըստ խոստաբանութե Նորա։ Հարթ է ոճն, այլ ուրեք ուրեք և անհարթ տեսանի՝ առաւել յանհմտութե գրչաց։

Եւս․ կմ Եւսեբ․ պտմ․ Եւսեբի պամփիլեայ կեսարացւոյ՝ այսինքն եպիսկոպոսի կեսարիոյ պաղեստինու 'ի դ դարու, հայր եկեղեցական պատմութե և ժամանակագրութե իրաւամբք վերաձայնելոյ, պատմագրութե վիճակի եկեղեցւոյն քսի մինչև յաւուրս իւր․ Թարգմանեալ հրամանաւ սբյն մեսրոպայ յառաջին աշակերտաց Նորին՝ ըստ վկայելոյ խորենացւոյն․ իմն ոչ 'ի յոյն բնագրէ, այլ յասորի օրինակէ առ ձեռն եղելոյ, որպէս յայտ է յոճոյն և 'ի բազում Նշանակաց։ Երկու օրինակք են առ մեզ, այլ ոչ հնագիր, և ոչ ամբողջ, զոր ժամանակն լրացուցէ։

Եւս․ քր․ Քրոնիկոն Նորին Եւսեբի, պանծալի Թարգմանութիւն 'ի յոյն բնագրէ՝ քաջ հայկաբանութբ 'ի ձեռն հելլենագէտ ճարտար անձին 'ի դասէ աշակերտաց սբյն սահակայ և մեսրոպայ՝ կամ յառաջ քան զխորենացին, և կամ 'ի ձեռն Նորա․ զի հետք հայերէն գործոյս կան 'ի գրութիս Նորա։ Զօրինակ քրոնիկոնիս ըստ ա և բ մասանց, յորոց առաջինն է պատմական՝ ամենայն յիշատակօք հնութեց լի, և երկրորդն՝ կանոն ժամանակական աղիւսակօք, առաք յանախեղծ օրինակէ գրելոյ յաւուրս գրիգորի կաթողիկոսի՝ եղբօր, կամ եղբօրորդւոյ շնորհալւոյն․ վասն որոյ եթէ հանդիպեսցի ոք տարբեր օրինակաց կամ հատուածոց գործոյս, մի դիւրաւ հաւատս ընծայեսցէ անհաւատարիմ գրչաց․ զորոց անձամբ զփորձ առաք յոլովակի։ Ի հարազատ քրոնիկոնէս քաղեալ է և գործ սամուէլի երիցու։

Եւս․ առէգար․ Նորին Եւսեբեայ առ կարպիանոս՝ Նախադրութե կամ համաբարբառք չորից աւետարանչաց։

Եփր․ ծն․ ել․ ևն․ մինչև ա և բ․ ծ․ Սբյն աբբայ եփրեմի՝ խորին կամ խուլին այսինքն վերծանողի ասորւոյ 'ի դ դարու՝ աշակերտին սբյն յակոբայ մծբնացւոյ մեկնութե ածաշունչ գրոց, հին Թարգմանութբ, ուր յաճախեալ է ոճ ասորի խառն ընդ հայկաբանութե։

Եփր․ համաբ․ Մեկնութե չորից աւետարանաց միանգամայն՝ յաբագրութբ գլխաւոր բանից չորեցունց, և այն՝ Նովին ոճով Թարգմանութե։

Եփր․ առէգար․ Դարձեալ մեկնութե այլևայլ բանից աւետարանի, զանազան վերնագրովք, որպէս տեսանես 'ի Նոր տպսն մեր յամս յայսոսիկ։

Եփր․ հռ․ կոր․ գաղ․ ևն․ Մեկնութե չորեքտասան Թղթոյն պօղոսի, յորում կայ և գ․ կորն․ ծանուցեալ առ արեւելեայս եւեթ։

Եփր․ 'ի ծն․ փրկ․ և խորհրդ գալստ․ ծննդ․ տյառնընդ․ խչ․ եղծ․ յար․ հոգւս և եղ․ Նինուէ․ յհ․ Դ․ սրբեյ․ ապաշխ․ պհ․ և այլն։ Զանազանեալ ճառք 'ի տօնս տէրունականս, 'ի սբս, և 'ի յորդոր ապաշխարութե և պահոց։ Տես և Մնր։

Եփր․ աղ․ Աղօթք պէսպէս, որ գտանին 'ի գրչագիր և 'ի տպագրեալ օրինակս։ Այս ամենայն հասարակօրէն յասորի լեզուէ են Թարգմանեալ․ բայց քանզի և յոլով գործք սբյն գտանին և յունարէն, գուցէ և ինչ ինչ 'ի հայումս առաւել մօտ իցէ 'ի յունականն։

Եփր․ վ․ օրհնէ․ Հատուած 'ի պատմութէ հալածանաց և արքեղեան վկայից՝ ընտիր ոճով և Թարգմանութբ։

Եօթնագր․ Եօթնագրեանք կամ համարողական արհեստ տառացեալ՝ հատուկ գրուած մասանց և անդամոց 'ի պէտս տօմարաց և իմաստակաց, այլևայլ օրինակաւ կցկցեալ 'ի զանազան գըրչաց․ ուստի յակամայս Նշանակեցաք զքանի մի բառս։

Զքր․ ծործոր․ Զաքարիայի եպիսկոպոսի ծործորեցւոյ 'ի սկիզբն ժդ դարու՝ Թուղթ առ յովհաննէս որբէլեան սիւնեաց եպիսկոպոս՝ պարզ և ճարտար ոճով վասն պէսպէս խնդրոց յուզելոց 'ի ժամանակին 'ի վերայ կրօնից և սովորութեց։

Զքր․ կթ․ Երանելւոյն զաքարիայի հայոց կաթողիկոսի 'ի Թ դարու՝ բազմադիմի ճառք 'ի վերայ տէրունական տօնից, և մեկնողականք Նբ գրոց․ յորս կան խորին հմտութիք հնութեց։ Ոճն է փառացի և բառաշատ, այլ դիւրիմաց։ Բանք սորա գտանին սփիւռ 'ի կարգս այլևայլ ճառընտրաց․ ցանկալի էր առանձին մատեան գտանել [illegible], ուր բովանդակեալ իցէ ամենայն երկասիրութի մեծանուն անձին։ Սորին գահերիցութբ եղև ժողովս շիրակվանայ․ ուր գտանին և Թղթակցութիք ընդ յոյնս։

Զենոբ․ Զենոբայ ասորւոյ Գլակ մականուանելոյ, աշակերտի սբյն գրիգորի լուսաւորչին, և Նախկին առաջնորդի իննակնեան գլակայ վանաց 'ի Նբ կարապետ տարօնոյ, համառօտ պատմութի ժամանակի լուսաւորչին, հայերէն կմ ասորերէն՝ գրութի կմ Թարգմանութի, պարզ ոճով․ որոյ և օրինակք են այլայլախառն․ Նմին իւր հնագոյն մատեան է խնդրելի։ Եւ քանզի 'ի տպսն հին՝ յաւելեալ էր և պատմութի տարօնոյ 'ի յովհաննէ մամիկոնեանէ, վասն որոյ յընթացս բառարանիս է՝ զի Զենոբ անուամբ կոչի բոլորն, և է զի Մամկ․ Նշանակի որոշակի։

Թէոդոր․ խչ․ Թէոդորոսի քռթենաւորի՝ խստակրօն միայնակեցի և քաջ գիտնաւոր փիլիսոփայի՝ վարդապետին յովհաննու իմաստասիրի 'ի է դարու, ճառ 'ի Նբ խաչն՝ վսեմ և հելլենաբան, առաւել խրթնացեալ յանգրագէտ գրչաց։

Թէոդոր․ կոու․ Ներբողեան 'ի Նբ կոյս ածածինն՝ Նովին ոճով, և առաւել բարդութբ բառից, եթէ գրչութեն իցէ սորայ։

Թէոդոր․ մայրագ․ Վսեմական ճառ վայելչապանծ ընդդէմ մոլորութեց յովհաննու մայրագոմեցւոյ և համախոհից Նորա՝ ոճով Նախնի հարց հզօրաց․ այլ ոչ ազատ 'ի սխալանաց գրչաց։

Թէոփիլ․ պհ․ կմ Խ Դ․ Ճառք երկու՝ 'ի վերայ պահոց, և 'ի քառասուն մանկունս սեբաստիոյ, յօրինուածք հին մատենագրի, որ Թէոյ յերկրայս՝ հայազգի իցէ, եթէ յունազգի․ և այն յորում դարու․ զի ոճն է խառն 'ի հայկաբանութէ և 'ի հելլենաբանութէ։ Թող զի և առ յոյնս այլևայլ մատենագիրք յիշին Թէոփիլոս անուամբ․ յորս երևելի է աշակերտն ոսկեբերանի․ և ճարտար հիւսուած բանից Նորա յառաջ բերեալ 'ի հայերէն շղթայն մեկնութե ծննդոց, որ յաւուրս տպագրութե գործոյս եհաս 'ի մեր ձեռս։

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. գ. Κόπος, μόχθος, πόνος, κακοπάθεια. Labor, fatigatio, dolor. որ և ԱՇԽԱՏԱՆՔ. Աշխատիլն. վաստակ. ջան. ճիգն. երկ. տառապանք. նեղութիւն. խոնջութիւն, վիշտ. ցաւ. ալէկոծ. էջէյ, ճաֆա, զահմէթ, էօրէյինլէք, էզիյէթ, թէրէք, մէշագ. *Ոչ եթէ յերկրէ ելանիցէ աշխատութիւն, այլ մարդ աշխատութեամբ ծնանի: Ընդէ՞ր ցուցեր ինձ աշխատութիւնս և վաստակս: Պատմեաց զամենայն աշխատութիւն՝ որ եղև նոցա 'ի ճանապարհի: Աշխատութիւն հատուցանել մարդկան, կամ անասնոց. ևն: *Բազում աշխատութեամբ 'ի ակնունս ցուցանէր: Արկանել զանձն յաշխատութիւն հոգւոյ: Կալեալ է զմեզ բազում անգամ յաշխատութեան (այսինքն աշխատ արարեալ): Սաստիկ աշխատութեամբ հաստատեցուցեալ: Հանգոյց զաշխատութիւն. Փարպ: *Մի ունայնասցի վաստակն աշխատութեան փրկականաց կոչից. Նար. կէ:

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. իբր Թանձրացեալ, գործ աշխատութեան յառաջ բերեալ. աշխատած բան. էր, էսէր, էջէյ. *Ի յոյն լե. զու զիւր աշխատութեանն (գրուած) ժողովեաց: Յխոկզբան մերոյ աշխատութեանս. Խոր. ա. 1. և 4: *Ի գաղտակերպաց և 'ի բազում աշխատութեանց ունայնացեալ. Մագ. իզ:

ԱՇԽԱՐ. գ. որ և ԱՇԽԱՐԱՆՔ. (լծ. թ. հայֆըրըլ.) ὀδυρμός, ὀδύνη, θρῆνος. Lamentatio. կոծ. ողբ. լալիւն. ճիչ. կական. սուգ. ցաւ. ողբ լաց, վայնասուն. ֆէրեատ, ֆիղան, սիւթէմ. *Աշխարեցին աշխար իբրև 'ի վերայ անդրանկան. Զաք. ժբ. 10: *Դառնացաւ 'ի վերայ նորա տառապեցուցանել զաշխարն. Նէոն. կաղմ. իէ: *Ինձ կրկին աշխար: Բազմացուցից ինձ աշխար: Սիրելւոյ աշխար: Աշխար աշխարհի. Նար. իէ. լդ. ծզ. կա: *Բարձին զանձնանս, և արարին աշխար մեծ 'ի վերայ նորա. Տօնակ:

ԱՇԽԱՐ ԴՆԵԼ. Աշխարել. կոծ դնել. սուգ առնուլ. նէֆա ֆըլմագ. *Աշխար եդեալ լացին ամենայն տունն աշխարհաց: Եդին աշխար մեծապէս, և լացին զնոսա. Բռաղ. գ. 11: է. 43:

ԱՇԽԱՐԱԿԱՆ, ի, աց. ա. Γοερός. Lugubris, funebris. Աշխարելի. և նշանակ աշխարանաց. *Աշխարհականն՝ աշխարական տուի. և աշխարն՝ ողբոյ և աղէտի անունն է. զի աշխարելի է աշխարհականն. Տօնակ: *Ո՞յք են ամենեցուն ձայնք, և ո՞յք ողբերգականք, ուաղականք, աշխարականք. Երղն. ժէր:

ԱՇԽԱՐԱՀԵԾ. ա. Որ իցէ աշխար և հեծութիւն. ցաւալից. դառնաղէտ. *Զհոգս աշխարահեծս. Ագաթ: Կորիւն: *Աշխարահեծ երկունք տարածեցան 'ի վերայ ամենայն երկրի. Լաստ. ժէ:

ԱՇԽԱՐԱՆ, ի. գ. Աշխարանք, կամ հանդէս և տեղի աշխարանաց. *Զգեստ արձակեալ 'ի մէջ աշխարանին կոծէր. Բռաղ. գ. 15:

ԱՇԽԱՐԱՆՈՒԱԳ. ա. Ուռնօղ զնուագ կամ զեղանակ աշխարանաց. ողբերգական. ողօրմօղ. *Յորդորեցից զեղանակաւորս յաշխարանուագ ձայնս. Գիտ:

ԱՇԽԱՐԱՆՔ, նաց. Տ. ԱՇԽԱՐ. *Սուգ և աշխարանս առնուն: Ողբ և աշխարանք փոխանակ երգոց: Զհարսանական զերդս արարեր ողբս աշխարանաց. Փիլ: *Լալիւն և ողբումն և աշխարանք. Ոսկ. եփ: *Արգարև ողբոց և մեծամեծաց արժանի է աշխարանաց գործն. Սարգ. ժհ: *Զաշխարանս մերձաւորացն. Եղիշ. է: *Զճչիւն աշխարանաց բարձրացուցանէլով: Սգովք և աշխարանօք. Մանդ. է: *Աշխարանս ահկնայն. Յհ. կբ: *Եւ այն աշխարանաց բանք. Տօնակ: *Ցիշեա, յորժամ աշխարանքն կայցեն, և անցաւորքս երթիցեն. Մաղ:

ԱՇԽԱՐԱԳԷՍ. մ. Γοερῶς. Flebiliter. Ողբական և ողորմ եղանակաւ. լալով կամ լաց շուրթէլօ հէրաւ. *Զխանգաղատական (վերծանել) Թուղթ և աշխարագէս. Թր. ժէր:

ԱՇԽԱՐԱՒՈՐ, ի, աց. ա. Աշխարող. լալական: ՃՃ:

ԱՇԽԱՐԵՄ, եցի. ն. Θρηνέω. Lamentor, plango. կոծել. ողբալ. աշխար դնել. սգալ. լալ, լաց ընէլ. աղլամագ, հայգըրմագ. *Կանանց՝ որ կոծէին և աշխարէին զնա: Աշխարեցին աշխար. Ղկ. իգ. 27: Զաք. ժբ. 10: *Աշխարել զԹագաւորն, կամ զիշխան. զԹշուառութիւնս, զհոգացեալ տապան, զանխնամ՝ որ գինեցուցին. Ագաթ: Եղիշ: Լմբ. ապ: Նար. իէ. և իբ. իթ: *Աշխարող կանայք: *Մի զմեռեալսն, այլ զկենդանիսն աշխարեսջիք: Կոյրք զանկատար յոյս աշխարէին, և պատանեակք զանուսն հասակն. Փիլ. յովբ: *Աշխարէ զանմտութիւն նոցա: Տես զիարդ աշխարէ զերուսաղէմ... ոչ վասն իւրոյ ինչ չարչարանաց, այլ վասն նոցա գործոցն աշխարէ. Ոսկ. եւ: *Միքն աշխարէին զյանցաւորն՝ քան թէ զանիծանէին. Ոսկ. մ. բ. 23:

ԱՇԽԱՐԵԼ. իբր ածական Աշխարհաբար, կամ տարշանալ. *Սյս աշխարէր զաւազակացն... մեծապէս աղաղակելով զղջմամբ զառանցեալսն. Բռաղ. գ. 54:

ԱՇԽԱՐԵԼԻ. Ողբալի. լալալի. եղկելի. լալոյ արժանի. լալու. *Եղկելիք և աշխարելիք. Յհ. կբ: *Երբեմն ամենի, և այժմ աշխարելի: Աշխարելի կերպարան. Նար. կէ. կգ:

ԱՇԽԱՐՀ, ի, աց. գ. Κόσμος, οἰκουμένη. Mundus, orbis. Տիեզերք. երկինք և երկիր միանգամայն՝ հանդերձ բնակչօքն. և իբր զանազանեալ՝ ՎԵՐԻՆ կամ ԻՄԱՆԱԼԻ կամ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԱՇԽԱՐՀ կոչի երկինքն, և ՍՏՈՐԻՆ կամ ԶԳԱԼԻ ԱՇԽԱՐՀ՝ երկիրս, որ բաղկանայ 'ի ցամաքէ և 'ի ծովէ. աշխարհ. տիւնեա, ալէմ, ճիհան. (Աշխարհ, լծ. Ճ ա. թ. աշխէր, յայտնի, կամ որպէս հյ. աշքաւ, (տեսանելի, երևելի) հանդոյ աչաց, կամ աղբեր. ակէր:) Յար-

մարաբար ասի. *Աշխարհ կոչի աշխար և աուգ, և արամունք հովիտ. Տօնաց: *Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ զնա ոչ ծանեաւ: Զպատրաստեալն 'ի սկզբանէ աշխարհի: Գիտել զհաստատութիւն աշխարհի: Հաստատեաց զաշխարհ: Զամենայն Թագաւորութիւնս աշխարհի: Սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ: Որք զաշխարհ խռովեցին: Դատել զաշխարհս արդարութեամբ: Հանդերձելոյ աշխարհին: Զհանդերձեալ աշխարհ: Բազմութիւն իմաստնոց՝ փրկութիւն աշխարհաց: Դու ես Ճշմարտիւ՝ փրկիչ աշխարհաց (յն. աշխարհի): Գառն այ՝ որ բառնայ զմեղս աշխարհի: Մի յայսմ աշխարհի, և մի 'ի հանդերձելումն. ևն: *Ոչ այս աշխարհս. և ոչ այն աշխարհ. Ագաթ: *Աշխարհ է բաղկացուած յերկնէ և յերկրէ, և որ 'ի մէջ սոցունց պարունակեալ են զմիմեանց բնութիւնք. Արիստ. Ա: *Իմանալեաց, կամ իմանալի աշխարհ: Աշխարհն կենդանեաց. Շար: Յհ. կբ. ևն:

ԱՇԽԱՐՀ. Χώρα, γαῖα, γῆ, πατρίς. Provincia, regio, terra, patria. Երևելի մասն աշխարհի. գաւառ, նահանգ, Թագաւորութիւն, ազգ. երկիր հայրենի, կողմն մի տէրութեան. Վիլայէթ, Մէմլէքէթ, Էյալէթ, փիյար, Բօէրագ, ոէմէ, վաթան. *Յամենայն ծագաց աշխարհաց: Ընդ ամենայն աշխարհս. Գ. Բգ. ծէ. 35: ծէ. 11: *Զաշխարհն՝ որ 'ի վեր է քան զբաբելոն. Եզ. Ժ. 6: *Յորմէ՞ աշխարհէ ես. Յովն. Ա. 8: *Դարձցուք իւրաքանչիւր յաշխարհ իւր. Երեմ. Խզ. 16: *Ի վերայ օրինացն և աշխարհին իւրեանց. Ե. Մ. Է. 21: *Գնացին յաշխարհն իւրեանց: Եկն յայնկոյս ծովուն յաշխարհն գերգեսացւոց: Զի մի տարաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն (զայն): Տրաքոնացւոց աշխարհին: Որ հայէր ընդ հարաւակողմն, և ընդ աշխարհն. ևն: *Աշխարհաւ պարթև. Խոր. Բ. 88: *Եղեն փրկանք անծանօթ աշխարհին. Շար: *Արարատեան աշխարհ: Աշխարհ սիւնեաց, մեծին հայոց. փոքուն հայոց. ևն. Խոր. ևն: *Յիւրեանց բուն աշխարհէն: Ի բուն աշխարհն փախչէր. Ագաթ: *Աշխարհին պաղեստինեայց: Ի պաղեստինեայց աշխարհէ աստի. Կոչ. ծէ. (յն. եպարքոսութեան. իբր Թ. քօղուէշ, գօփըլըշ, ըէլա:)

ԱՇԽԱՐՀ. որպէս Մարդիկ. բազմութիւն ամբոխին. ռամիկ. բնակիչք աշխարհաց. փէնէ ալէմ, խալգ. *Աշխարհ ամենայն զկնի նորա գնաց: Աշխարհ 'ի չարի կայ. ևն: *Աշխարհ աստ զժողովուրդն կոչէ. նա սովորութիւն իսկ է գրոց. երբեմն զարարածս աշխարհ անուանել, և երբեմն զայնոսիկ՝ որք չարութեամբ կեան. Ոսկ. յհ. Ա. 20: *Ի գալ և 'ի գոհել անդր աշխարհի: Աշխարհ՝ կոչեաց զնա կոստանդինուպօլիս. Խոր. Բ. 37. 85: *Աշխարհաւ փութային 'ի վերայ յարուցին. Եղիշ. Է: *Պատգամաւորութիւն երկուքին աշխարհքն առ միմեանս առնէին. Փարպ: *Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ՝ սխրակից լերուք. Ժմ:

ԱՇԽԱՐՀ. Ունայնութիւն աշխարհի, սէր երկրաւորաց. և աշխարհասէր մարդիկ. Ֆանի փէնէ, տիւնեա. *Դուք յաշխարհէ աստի էք, ես չեմ յայսմ աշխարհէ: Զհոգին Ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել: Չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ. վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ: Մի սիրէք զաշխարհ, և մի որ ինչ յաշխարհի է: Աշխարհ ինձ 'ի խաչ ելեալ է, և ես աշխարհի. ևն:

ԱՇԽԱՐՀ. Քաղաքավարութիւն յաշխարհի աստ. կենցաղ. աստի կեանք. վարք և ընթացք մարդկան. Bios. Vita. դիւ փէնէ. *Ի հոգս և 'ի մեծութիւն և 'ի ցանկութիւնս աշխարհիս զբաղեալ: Ընդ կեանս աշխարհիս պատատի. ևն: *Միայն սփոփեալ այ վաւեռ զքեզ, և այլ մի երկնչիր յունայնութենէ աշխարհիս: Յորժամ եղև ժամանակ, մեծին 'ի յառաջադաս զնոսա ըստ օրինի աշխարհիս. Վրք հց. ծէ: *Զիս՝ որ 'ի նաւի աշխարհիս ալէկոծեալ մեղք իմ: Աշխարհս է ծով, և ես ծփիմ. Ժմ: Գնձ:

ԱՇԽԱՐՀ, կոչի նմանութեամբ՝ Մարդն. *Ասացին (արտաքինք), թէ փոքրիկ աշխարհ է մարդն. Նիւս. կազմ: *Ի մարդումս իբր 'ի փոքր աշխարհումս ըստ զիմոկրիտեայ այսպէսքիկ տեսանին. Սահմ. Ժ: *Ոչ միայն վասն երևելի աշխարհիս է պատմութիւնս, այլ և յաղագս մերոյ փոքու աշխարհիս ըստ իմաստնոցն կոչման. Լմբ. սղ: *Ո՞րչափ ես առաւել առ բանաւոր աշխարհս մարդ. (խնամ ածէ այծ). Եղիշ. Ե:

ԱՇԽԱՐՀ ասի ըստ յն. ոճոյ և Յոլովութիւն կամ կուտակութիւն իրաց. աշխէրէթ ճահէ, ղափաշխա. *Փոքր արդեօք ամենայն աշխարհ ստացուածոց երևեալ լինէր առ քո առաքինութիւնդ զուգակշիռ. Նիւս. կազմ:

ԸՍՏ ԱՇԽԱՐՀ ՀԱՆԵԼ. Ἐξορία. Exilium. Աքսոր. արտասահմանութիւն: Եւս. քր. Ե:

ՅԱՇԽԱՐՀԷ ՍԼԱՆԵԼ, ՓՈԽԻԼ. Տ. ՍԼԱՆԵԼ, ՓՈԽԻԼ:

ԱՇԽԱՐՀԱԲԱԺԻՆ. ա. Որ ինչ հասի 'ի բաժանումն ազգաց յաշխարհի. *Ազգացն բաժանմունք յառաջ խաղան ըստ ցեղից 'ի կարգ անկեալ աշխարհաբաժինն ցեղակարգութեամբ. Արծր. Ա. 1:

ԱՇԽԱՐՀԱԲԱՆԱԿ (կմ ԱՇԽԱՐՀԱԲՆԱԿ). ա. Բանակ զօրաց բնիկ աշխարհին. գունդն արքունի. *Առեալ ոմն զբի-գործ զաշխարհաբանակ զօրացն, (կմ զաշխարհաբնակ զօրսն). Ագաթ: Ճ. Բ:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ. մ. Δημοχοπιχῶς. Ad popularem vel vulgi gratiam. Ըստ աշխարհի. ըստ հաճոյս ռամկին. աշխարհասէր և փառասէր մտօք. *Տօնեցուք մի աշխարհաբար, այլ գերաշխարհիկ: Ոչ աշխարհաբար տօնել, այլ ածապէս. Ճճ: Լծ. Խծ: *Ոչ առ 'ի ցոյց բազմաց, և աշխարհաբար՝ զխոնարհութիւնն հրահանգեալ. Բրս. հց. ծէ:

ԱՇԽԱՐՀԱԲՆԱԿ, ի, աց. ա. գ. Բնակիչ աշխարհին, գաւառին. Էրլիզի. փէզւօյի. Եէրլի, Եհլի. *Ժողովեցան բազմութիւն մանկտւոյ զՃիւաղարարոյ զաշխարհաբնակն: Անասնաբարոյ աշխարհաբնակքն. Ագաթ: *Աշխարհաբնակք մարդկան, որ ժողովեալ էին. Բուզ. Գ. 15:

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ, գրի, րաւ. գ. Ἀπόγραφη. Descriptio. λαογραφία, vulgi descriptio. կմ բայիւ. Ἀπογράφω, ομαι. Describo, or. Գրութիւն և Գրուած համաշխարհական 'ի դիւան արքունի. քննութիւն համարոյ մարդկան անցեալ 'ի գիր. Գօյք, Թէֆթէրի. Թէհրիր, Թիւթիւգ, փէֆթէր. *Աշխարհագիր առնել Զ ամենայն տիեզերս: Այս առաջին աշխարհագիր եղև: Յաւուրս աշխարհագրին: Այս յաշխարհագրի անդ գտաւ: Զամենայն ազգն հրէից յաշխարհագիր (ռամկին) խառնել 'ի կարգս հարկի ծառայութեան: Զիւրաքանչիւր ինչս և զստացուածս յաշխարհագրին (կամ յաշխարհագրէն) զամենայն ժողովեցին. Ղկ. Բ. 2: Գծ. Ե. 37: Ա. Ռ. Իզ. 31: Ջ. Դ. Բ. 14: Ե. 15: *Յաշխարհագրէն պատուական, որով յերկինս գրեցար. Ածաբ. ծն: *Ոչ ժամանէ այլ առնել աշխարհագիր. Խոր. Գ. 51: *Աշխարհագիր առնել ամենայն երկրին հայոց: Ընդ նովին աշխարհագրով արկ. Եղիշ. Բ: *Օգոստոս կայսրն աշխարհագրաւն. Շ. նմբ:

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ. ա. Գրող զաշխարհէ կամ զպատմութենէ աշխարհի (մատեան կամ մատենագիր). *Զայն աշխարհագիր մատեանքն յառաջագոյն քարոզեցին. Պէտք. սիոն: *Զնոյն գործ զաշխարհագրին գործէին. Ճճ: Իսկ ըստ յն. Κοσμογράφος. Qui mundum describit, և κοσμογραφία, descriptio mundi, յայտ առնէ զմատենագրութիւն գրեց երկնի և երկրի. որպէս և γεωγράφος, γεωγραφία. geographus, geographia, զմատենագրութիւն գրեց երկրի եւեթ՝ ընդ ցամաք և ընդ ծով. զորոց տես 'ի բառն ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ:

ԱՇԽԱՐՀԱԳՈՅԺ ԱՌՆԵԼ. Καταδήλον ποιέω, ἀνακηρύζω. Celebro, divulgo. Θριαμβεύω. Triumpho. Հրապարակել և լսելի առնել ընդ աշխարհս. յայտնի առնել. հռչակել. քարոզել. և Զաղել 'ի հանդէս յաղթանակի. *Թէպէտ և մարմինն 'ի ծածուկ ուրեք իցէ, բարբառովք ամենեցուն աշխարհագոյժ առնեն: Ոչ առնուլ յանձն Թաքուցանել, այլ աշխարհագոյժ առնէ զերախտիս երախտաւորին. Ոսկ. մ. Ա. 19. 25: *Աշխարհագոյժ առնէ նա խափանմունութիւն զանհնարանելի տարերցն հուր յամպարշտաց գատաստանի ընկղմնեցելոց. Փիլ. Նխ. Ա: *Յուցցես, եթէ զմեղսն արդարև առեցեր, նշաւակելով զնոսա, և աշխարհագոյժ առնելով իբրև զարժանաւորս Թշնամանաց. Ածաբ. Պէտ:

ԱՇԽԱՐՀԱԳՈՉ. ա. Որ գոչէ կամ լսելի առնէ ընդ աշխարհ. *Գոչէին միախումբ աշխարհագոչ փողովք. Խոր. Հրտր:

ԱՇԽԱՐՀԱԳՈՎՈՒԹԻՒՆ. գ. Գովութիւն լսելի յամենայն աշխարհէ կամ ընդ ամենայն աշխարհ. համբաւ կամ անուն բարի. բարեհամբաւութիւն. հռչակ գովութեան. *Զաշխարհագովութեանցն առացեն զպսակս: Զյաղթութեանցն աշխարհագովութիւն առնել: Միշտ զաշխարհագովութեանցն առնէին միջամտեալս: Աշխարհագովութեամբ յաւէտ բարգաւաճեալ. Պիտ. ոփէք:

ԱՇԽԱՐՀԱԳՈՐԾ. ի. գ. ա. Κοσμοποιός. Mundi conditor, creator. Արարիչ աշխարհի. որ և աշխարհաստեղծ. աշխարհարար. *Զաշխարհագործն, զայսչափ աշխարհ ստանալով, ոչ իմացաք. Փիլ. յոբ: *Բաշխէր ամենեցուն զտր մարմինն, զարարիչն և զաշխարհագործն ամենայն արարածոց. Ագաթ: *Զաշխարհագործն ամենայն աշխարհի: Աշխարհագործ մարմնով և արեամբն յիւրքն. Ճ. Ա:

Եւ Որ ինչ եղեալ է յաշխարհի. եղականք համօրէն. *Ի վերայ աշխարհագործ արարածոց. Վեցօր. ող. ճզ. (յն. յօրինակն ինչ, 'ի վերայ աշխարհիս բաղկացութեն):

ԱՇԽԱՐՀԱԳՈՐԾԵԼ. Κοσμοποιέω. Mundum condo. Ստեղծանել զաշխարհ. *Իբրև 'ի ձեռն հայելւոյ աչօք տեսանէ միտք զած՝ և առնելով և աշխարհագործելով, բոլորեցուն այցելու լինելով: Այն առաջագրութեան՝ զոր ընկալաւ աշխարհագործելով, անշէջ յաւերժ մնացէ. Փիլ. Ժ. Բան. Ն. ըն. Բ. 12:

ԱՇԽԱՐՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. գ. Κοσμοποιΐα, κοσμουργία. Mundi fabricatio. Արարչութիւն կամ ստեղծումն աշխարհի (իբր Ն. Ա.)։ որ և Աշխարհաստեղծութիւն. *Մովսէսեան հինգ գրեանքն զաշխարհագործութեան պատմեն, են. Եւս. քր. ա։ *Ամենայն երեւելեացս աշխարհագործութիւն անճառելութեամբ այ առաջի առ. կայի. Դիոն. երկն. ը։ *(Տուընկք) ի սկզբան աշխարհագործութեան հզօրագոյն ունին զներգործութիւնն. Նիւս։ *Անեղծ աշխարհագործութեան. Նար. կփ։ *Եդոյց զաշխարհագործութիւնն այ. Լմբ. սղ։ *Աստուածային գիրք մարգարէիցն պատմեն վասն այ, և աշխարհագործութեանց. ՃՃ։

ԱՇԽԱՐՀԱԳՈՐԾԵԱԼ. ա. Աշխարհագործ արարեալ. աշխարհագործած. հանգուցեալ. *Որ ի նախախնամութենէ՝ աշխարհագործեալն շարժմունք. Փիլ. նխ. ա։

ԱՇԽԱՐՀԱԳՈՒՄԱՐ. Գումարեալ ի լրութէ աշխարհի կամ գաւառի. համաշխարհական. *Ի մէջ ամբարտակական աշխարհագումար քաղաք հրապարակին. Մարաշ։ *Աշխարհագումար ատեան, կամ ամբոխ, կամ ժողովք. Գէ։ Մեռ. Երեւ։ Հ. ԽԱ։

ԱՇԽԱՐՀԱԳՈՒՆԴ. գ. Գնդաձև մարմին լուսատու աշխարհի, կամ ի ձև աշխարհի. *Լինել լուսաւորացն ձուաձագայթմանց՝ աշխարհագունդք. Ագաթ։

ԱՇԽԱՐՀԱԳՐԵԼ, եւ. ն. Ἀπογράφω, ομαι. Describo, or. Առնել աշխարհագիր. և մտանել յաշխարհագիր. անցուցանել և անցանել ի գիւան արքունի. Գայփ էբձէ՝ ալփգ. *Օրէն էր՝ որ հրամայէր զիւրաքանչիւր ի յիւրն աշխարհագրել հայրենիս։ Եւ և յոռեկի աշխարհագրել զոյգ մարմնոյ։ Գալ ի բեթղեհէմ, իբրու թէ աշխարհագրել. Ոսկ. ծն։ *Ոչ էր հրաւ ընդ ամենայն աշխարհագրել բարձրագոյն զմեզ աշխարհի. ոչ էր պատշաճ ընդ ծառայս աշխարհագրել ամենեցունց տն և գլխոյ. ՃՃ։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. գ. Ἀπόγραφη. Descriptio. որպէս նոյն ընդ Աշխարհագիր. *Ի լինել աշխարհագրութեան առ օգոստոսիւ։ Յառաջ քան զտէրունական ծնունդն անօրէնութեամբ իմն եղև աշխարհագրութիւն. ՃՃ։ *Վասն նորա աշխարհագրութեանն գոլ յերկինս գրեցաւ։ Աշխարհագրութեան աւետարանին, յորում ծնաւ քս, խորհուրդ է յերկինս գրելոյ զմարդիկ. Լծ. ոծոփ։ Կոմըլ։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. Κοσμογραφία, Γεωγραφία. Cosmographia, և Geographia. Իբրու Տիեզերագրութիւն, կամ Երկրագրութիւն, որ ճառէ զչափս աշխարհի, մասնաւանդ երկրի, և զքաղաքականն և զհնագաւառաց նորա. հէյէէթի ֆիւնէու, Եօղրաֆի պիլըմ, րէսմի էրզ. *Վասն աշխարհագրութեանց, և քաղաքականաց աշխարհաց ճառեր։ Զաշխարհագրութեան յարմարեցին ի ճանապարհորդութէ, և ի նաւարկութէ, և սուրբերգին յերկրաչափութենէ. Խոր. ա. 5. և ծ։

ԱՇԽԱՐՀԱԴԱՏ. ա. Ցամենայն աշխարհի դատաւոր, դատողի, կամ դատաստանարարն. *Աշխարհադատ չարագլուխ բազմամեղ եղկելիս. Բենի։

ԱՇԽԱՐՀԱԴԵՂ. ա. Դիզեալ լուսաշարժ մեծութի աշխարհի. ալիթէ լաէ դէ. *Հրդեհեալ զերկրաթակարծր աշխարհադեղ զանթիւ քող խաւարի մեղաց իմոց։ Զաշխարհադեղ փուշս չարեաց։ Զիմ-աւ աշխարհադեղ չարեացս. Բենի։

ԱՇԽԱՐՀԱԴԻՏԵՄ, եցի. ն. Χωραβατέω. Regionem obambulo. Դիտել շրջագայութբ զաշխարհ, զերկիր, զգաւառ. էրհիր գէզմէք՝ ույէ ճոյլնէք. *Պատուիրեաց յեսու արանցն երթելոց աշխարհադիտել զերկիրն, և ասէ. անցէք գնացէք, և աշխարհադիտեցէք զերկիրն. Յես. ժը. 8։

ԱՇԽԱՐՀԱԶԱՐԴ. ա. Որ ինչ զարդ ի զարդ աշխարհի, կամ ի զարդարել զաշխարհ. *Ցիսկզբան աշխարհազարդն կարգմամբ. Անան. եկեղ։

ԱՇԽԱՐՀԱԶԲՕՍ. ա. Որ ինչ կրէ յիւրեան զբօսանս աշխարհի, այսինքն զբաղանս, պատապաղմունս, ալէկոծութիւս, ծովփըս. *Աշխարհազբօս զբաղանք. Փարպ։ *Հրաժարեր յամենայն աշխարհազբօս կենցաղոյս. ՃՃ։ *Ոչ աշխարհազբօս ինչ գատարկութ գործ. Ոսկ։

ԱՇԽԱՐՀԱԶՕՐ. ա. Ուր խմբեալ իցեն զօրք աշխարհին. աշխարհաբանակ. աշխարհագումար. *Ուր առնէր գմբգոր զմիաբանութիւն աշխարհազօր բազմութեան. Բուզ. գ. 14։

ԱՇԽԱՐՀԱԹԱՂ. ի. գ. Կարգ թաղման աշխարհիկ անձին. Մաշտ։

ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ. ա. Ժողովեալ յամենայն աշխարհէ, կամ ի տեղեաց տեղեաց. համաշխարհական. տիեզերաժողով. աշխարհագումար. յոգնախումբ. հանդիսական. *Յաշխարհաժողով ատեանն բոլոր տիեզերաց. Յհ. իմ. էլ։ Գնչ։ *Ի բազմամբոխ աշխարհաժողով հրապարակաց մէջ. Ագաթ։ *Մարգէր զնահատակն մեծ ի հանդէս կատարման յաշխարհաժողով մարտն. Խոր. հռեփ։ *Արարին տօն աշխարհաժողով. Վրք հց. ծը։

ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ. } ժողով
ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎՈՒՐԴՔ. } համաշխարհական. բազմութի աշխարհին. *Այլև ի յաշխարհաժողովութեան անգր եթէ ոք հասանիցէ. Եւագ. +էր։ (որ առ Մօգէոսր. գրի, ի նաշխահոժահուն անդ։) *Աշխարհաժողովուրդք. Բուզ. գ. 6. կմ Աշխարհաժողով ժողովուրդք. Ճ. Բ։

ԱՇԽԱՐՀԱԼԱՑ. ա. մ. Իբր Աշխարհահալած. հալածեալ կամ հալածելով յաշխարհէ անտի. *Աշխարհալած արդարոյ իմերանց մերժեցին. Կորիւն։

ԱՇԽԱՐՀԱԼԻՐ. } ա. Որով լցեալ
ԱՇԽԱՐՀԱԼԻՑ. } աշխարհս լի է իւրով. լցուցիչ երեսաց երկրի. աշխարհալէցնող. *Աշխարհալիր ատեան ատեակաւ. Նար. լձ։ *Վասն աշխարհալից նահատակտացն (ծննդովք իւրեանց). Արծր. ա. 1։

ԱՇԽԱՐՀԱԼՈՅՍ. ա. Որ լոյս տայ աշխարհի, կմ մարգկան առհասարակ. տիեզերալոյս. ալէմ էֆրուզ. *Առաջ աշխարհալոյս. Եւագ. լուս։ *Աշխարհալոյս պայծառ արուսեակ. Գնչ։ *Աշխարհալոյս վարդապետութի. Լմբ. պտրգ։

ԱՇԽԱՐՀԱԼՈՒՐ. ա. Լսելի ընդ ամենայն աշխարհ. հռչակեալ առ ամենեսին. տիեզերալուր. համբաւեալ. ալէմէ մէշհուր. *Հոյակապ և աշխարհալուր ի զարմանս համբաւոյ. Զքր. կթ։ *Աշխարհալուր բողոքիչ. Նար. ՅԵ։ *Եւ եղև կործանումն նորա աշխարհալուր. Լաստ. ԺԵ։ *Հրապարակաւ և աշխարհալուր նշանաքն. Նանայ։ *Աշխարհալուր թագաւորք. ՃՃ։ *Աշխարհալուր առնել ամենայն առարածոց. Ոսկ. Նոր կէր. յն. հրապարակեմ. δημοσιεύω, publico.

ԱՇԽԱՐՀԱԽՆԱՄ. ա. Որ խնամէ զաշխարհ. կամ խնամ ունի ի վերայ աշխարհին. աշխարհաշէն. *Աշխարհախնամ հոգածութբ յարդարել զփորձ աշխարհի. Արծր. ա. 15։

ԱՇԽԱՐՀԱԽՈՐՀ. ա. Եղեալն համաշխարհական խորհրդով. *Ամենեցուն միաբանութբ եպիսկոպոսացն և թագաւորին և աշխարհախորհ ժողովք հաւանութբ ի միասին արձակեցան և գնացին. Բուզ. Ե. 4։

ԱՇԽԱՐՀԱԽՈՒՄԲ. Տ. ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ. *Աշխարհախումբ բազմութիւն. Ագաթ։ Բուզ։ Ղևոնդ։ *Աշխարհախումբ ժողով. Զենոբ։ *Տօն աշխարհախումբ կարգեցաւ. Խոր. բ. 63։ *Ի նմին աշխարհախումբ ատենի. Նար. խէ։ *Աշխարհախումբ ժողովրդեան շինեցին զնոյն կաթողիկէ. Տօնակ։

ԱՇԽԱՐՀԱԽՈՒՄԲ. գ. Խմբումն աշխարհաց ի մեծ պատերազմ. *Աշխարհախումբ առնի։ Եւ թէ աշխարհախումբ առնիցի յերկիր թշնամեաց. Կանոն։

ԱՇԽԱՐՀԱԾԻՆ, ծնի, իւ. } ա. Ի նմին
ԱՇԽԱՐՀԱԾՆՈՒՆԴ. } աշխարհի ծնեալ. բնիկ. սեպհական. համաշխարհիկ. Էրլիզի, փէղզի. Էէրլի. *Աշխարհածնիւն հայրենեացն սեպհական ոգի գոլեալ. Կորիւն։ *Տրդատ, որ աշխարհածնունդ հայրենեաց որդի գոանէր. Ագաթ։

ԱՇԽԱՐՀԱԾՈՎ, ու կմ ի, վէ. գ. Ովկիանոս, որ պատէ զաշխարհ համօրէն. *Են և այլ բազում ծովակք, որք ոչ են յաշխարհածովէ. Շիր։

ԱՇԽԱՐՀԱԾՈՒՀԻ, հւոյ. գ. Թագուհի ածող՝ այսինքն առաջնորդ աշխարհի. սուլթան. *Գեղանին տիգրանուհի, ողջամիտ աշխարհածուհի. Անյաղթ. ի +էր. ծագ. և Երգ։

ԱՇԽԱՐՀԱԾՈՒՓ. ա. Որ առնէ կմ կրէ զծուփս աշխարհի. աշխարհազբօս. *Եւ զիս պահեա ի հեղեղէ՝ յաշխարհածուփ ալեաց չարին. Յհ. օրբ։ *Աշխարհածուփ խռովութիւնք, զբօսանք, հոյզք, վարք. Գէղ։ Փարպ։ Շ. ամ լոր։ Զքր. կթ։

ԱՇԽԱՐՀԱԿԱԼ, ի, աց. ա. գ. Τὸν κόσμον ἔπεχων. Mundum obtinens. Որ կալեալ ունի զաշխարհ համօրէն՝ տիրաբար. *Աշխարհակալն մծ. Արիստ. ե։

ԱՇԽԱՐՀԱԿԱԼ. Κοσμοκράτορ. Mundi imperium obtinens. Ինքնակալ. տիեզերակալ, և բռնակալ. Ճիհանկիր. *Ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութե. Եփես. զ. 12։ *Թէպէտ նոյն ինքն գժոխք շարժեսցին, թէպէտ աշխարհակալք խաւարիս. Ան. բ։ *Իւրոցն եւ քաջալերս իւրով յաղթութեամբ յաղթել աշխարհակալ յաղթողին. Սկևռ. յեսայ։ *Աշխարհակալ է ծնունդդ։ Աշխարհակալ ալեքսանդր։ Ամենայն շինուածի աշխարհակալ գլխոյ. Գոմ. ալէ։ *Ամենակալ մծ մարգարէ, և եմուտ ի գիր աշխարհակալ թագաւորի. Տօնակ։ *Փառաւորեալք ի յերկրի ձոխութբ աշխարհակալք։ Զօրեղ բարբարոսական աշխարհակալացն. Գէղ։ *Որ իշխանաց աշխարհակալս էին ընտրեալք. Յհ. կբ։ *Զեռացն աշխարհակալաց. Նար. խլ։ *Աշխարհակալ իշխանութ. Լմբ. սղ։ *Աշխարհակալ սպարապետութբ իւրով. Մաղ. խոյ։

ԱՇԽԱՐՀԱԿԱԼ. Τοπάρχης. Loci praefectus, toparcha. Կուսակալ, կողմնապետ. իշխան մասնաւոր աշխարհի. ֆալըւ. *Միում յաշխարհակալաց ծառայից տեառն իմոյ. Ես. լզ. 9։ Դնդ. ա. Դ. ժբ. 5. *Գրեաց յամենաթաւն առ աշխարհակալս, իշխանս, առ կուսակալս նոցա»։ յն. լոկ, տեղապահաց (որ թարգմանի, ցիրտեցան)։ *Նախարարքն աշխարհակալքն կայցեն առ

արքայի։ Մարզպան և աշխարհական աշխարհին ած. Բուզ. Գ. 8։ Ե. 38։

ԱՇԽԱՐՀԱԳԱԼ. ա. որպէս Համատարած. որ պատեալ ունի զաշխարհ. աշխարհամած. *Աշխարհագալ ծով. Վեցօր. Ը։ *Համապարփակ մթութեան աշխարհագալն միգի. Նար. 45։

ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ. գ. Իշխանականութիւն. տիեզերակալութիւն. թագաւորութիւն. *Թագաւորք յունաց աշխարհակալութեամբ, են։ Կամելով զինքն միայն աշխարհակալութեան յուցանել սկիզբն։ Աշխարհակալութին առաքեալանի. Խոր. Ա. 1. 13. 20։

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ. ի. աց. ա. Οἰκουμενικός. Totius mundi, orbis. Տիեզերական. և համաշխարհական. որ ինչ հայի առ համօրէն աշխարհ. որպէս և առ աշխարհ կամ ազգ մի ողջոյն. *Յն զաշխարհական զմեղսն եկն է առ. յանձն իւր, և մեռաւ. Կոչ. Գ։ *Ի միաանգամ գալըստեանն, և յաշխարհականն ատենին. Շար։ *Յաշխարհականին աւուր, յորում որոյ ոչ է ի ձեռն մահու փրկութիւն. Մեկն. ղուկ։ *Յաշխարհական ի Ճակատամարտին. Ժմ։ *Աշխարհական ամբոխի. Կորիւն։ *Խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին՝ կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն. Բուզ. Դ. 4։ *Մեծի վրթանիսի, և ամենայն աշխարհականաց քոց խնդալ»։ այսինքն ընդհանուր հայոց աշխարհին. Խոր. Գ. 5։

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ. Κοσμικός. Mundanus, mundi. βιωτικός, saecularis. Սորին աշխարհիս. աշխարհային. երկրաւոր. նիւթական. մարմնական. մարդկային. արտաքին. մարմնաւոր. կենցաղական. քաղաքական. և Աշխարհահամբաւական. փխ. ԷԷՆԻ, ԹԷՕՂԻ. *Զաշխարհական արարութիւն. Եփր. Բ. 1։ *Հոգսովք աշխարհականօք. Ղկ. իա. 34։ *Վերջացեալ զաշխարհական տարերս. Գղ. ուԷ+ո։ *Տարրն աշխարհական. և են տարերք չորք. Նիւս. բն։ *Զարեգակն՝ զաշխարհական հայելին. Պիտ։ *Դուք յաշխարհէս աստի էք, ես չեմ յայսմ աշխարհէս. զաշխարհական մտածութիւն և զմարմնականս ասէ։ Յաշխարհական իսկ օրինակ եկն. և զինչ ասէ. կին յորժամ ծնանիցի, են։ Կերակուրք, լուացմունք, և զինչ և իցեն գործք աշխարհականք. Ոսկ. յհ. Բ. 7. 33։ և Ա. 17։ *Յաշխարհական զբօսանաց. Ագաթ։ *Յաշխարհական սահեցմանց. Ժմ։ *Աշխարհական ալէկոծութիւն, կամ գործք. Պիտ։ *Աշխարհական պայման. Նար. ծդ։ *Աշխարհական զբօսանք երկրաւոր իմաստութեան. Ագաթ։ *Դատաստանաց, և աշխարհական կարգաց. Խոր. Գ. 65։

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ. Λαϊκός. Laicus, saecularis. Աշխարհիկ ոք, ժողովրդական, ռամիկ. անուանեցեալ և Աշխարհաւոր. փխ. ԷԷՆԻ, ԼԷՕՈՂԻ. *Զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագս, զդպիրս, զկրօնաւորս, և զայլ ամենայն աշխարհականս. Կոչ. ծԳ։ *Կուսին, և աշխարհականին. Լմբ. ող։ *Քահանայք՝ դաւիթ ի կրօնաւորական կարգէ, և սարգիս յաշխարհական. Յհ. կթ։ *Ժողով արարեալ եպիսկոպոսաց, և համօրէն աշխարհականօք. Խոր. Գ. 20։ *Աշխարհականն են, մի՛ զպատիւ քահանայական արհամարհեր. Մանդ. ժ։ *Ուխտաւոր, և աշխարհական. Յհ. կմ. ոփ։ *Ընդ դաւանիկս աշխարհականաց կեալ. Վրք հց. Է։ *Աշխարհականաց բանք են այդ, և մարդոյ՝ որ ընդ երկիր բնակեալ իցեն. Ոսկ. Մ. Բ. 15։ *Ոչ զայս ասիցէ, թէ պատուիրէր նա, այլ որքանցայ և անձոյժ և աշխարհական. Ոսկ. Եբր։

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ. Δημώδης. Vulgaris. Ռամկական. աշխարհիկ. աշխարհաբառ. զռամկի. *Հասարակն՝ յանգիմանութեն անյայտ իրաց. յանգիմանութիւն այն է, որ աշխարհական բառով գեղեցկագէմ ասեն. որպէս հայելի ասաց, նոյնօրինակ հասարակ մտաց. Ոսկէփոր։

ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑԵԱԼ. Մտեալ ի կարգ աշխարհի. անուանեցեալ (այր կամ կին). խորտկեալ, փոխարկեալ. փխ. ՀԸՐՋԷՆ, ԷՀԼԷՆՋԷ, ԷՀԼԻ. *Լինիցիմ առն աշխարհականացեալ. Հոռոմ. Ա. 12. (յն. կողմնիկ, լինել առն)։

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՕՐԷՆ. մ. Իբրև աշխարհականք. *Մի աշխարհականօրէն ընթանայցի զգիշերն ամենայն. Կանոն։

ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ. ա. Որ ինչ իցէ ըստ կարգի աշխարհիս. երկրաւոր. արտաքին. *Յունական աշխարհակարգ դպրութեան էր տեղեակ. Ճ. Բ։

ԱՇԽԱՐՀԱԿԱՑ. ա. Որ ինչ է ըստ կացից աշխարհիս. կենցաղական. *Համօրէն եղեալ աշխարհակաց կարգաց. Կորիւն։

ԱՇԽԱՐՀԱԿԵԱՑ. ա. Որով իւիք լինի կեալ ըստ աշխարհի. աշխարհիկ. յաշխարհական վիճակի. *Որ յաշխարհակեաց կեանս էր. Ագաթ։ *Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս. Բուզ. Դ. 3։

ԱՇԽԱՐՀԱԿԵՐ. ա. Կերող աշխարհի. ապականիչ. գիշատիչ. արեանարբու. փխ. ԴՈՒՆԻԱ ԵԱՔՕՂ. *Բազմացան աշխարհակերք գայլք. Յհ. կթ։ *Անգղք աշխարհակերք. Բուզ. Գ. 3։

ԱՇԽԱՐՀԱԿԵՐՊ. ա. Որ ունի զկերպ կամ զձև աշխարհի, և աշխարհականի. *Ձիւր զաշխարհակերպ ձորձն մեկուսի թաքուցեալ ունէր. Վրք հց. ԻԲ։

ԱՇԽԱՐՀԱԿԵՑՈՅՑ. ա. Կեցուցիչ աշխարհի. փրկարար. կենարար. փխ. ԴՈՒՆԷՅԻ ԴԻՐԻՕՂ, ԽԱԼԸՍՕՂ. *Աշխարհակեցոյց գալուստ քո, կամ արեան ծորումն, կամ չարչարանք, կամ փայտս սրբ. Զքր. ԿԲ։ *Աշխարհակեցոյց մահն քո. Համամ. առկ։ *Աշխարհակեցոյց աւետարան. Ագաթ։ *Աշխարհակեցոյց խաչ. Գրգ։ *Աշխարհակեցոյց բազկատարածութեն խաչի, են. Շար։ *Աշխարհակեցոյց անձամբ խոնարհութեամբ ներգործեցեր. Գնձ։ *Սոփերս աշխարհակեցոյց. Նար. ծդ։

ԱՇԽԱՐՀԱԿԻՐ. ա. Որ կրէ զաշխարհ. Աշխարհակալ՝ ըստ յն ոչ. *Աշխարհակիր բանին բազկաց. Շար։

ԱՇԽԱՐՀԱԿԻՐ. Որ ինչ կրի յաշխարհի աստ, կամ ըստ աշխարհի լինի. աշխարհական. աշխարհային. երկրաւոր. կենցաղական. *Նաւեալք ընդ մրրկեալ աշխարհակիր մեղացն՝ ի վերայ խորոցն սահեցան։ Ըստ աշխարհակիր կարգացն առաքինեալ. Ագաթ։ *Աշխարհակիր կեանք, կամ մեծութիւն, զբօսանք, ցանկութիւն. Սի-օխան։ Ճ. Ա։ Կորիւն։ Սարգ. Բ. դ. Ա։

ԱՇԽԱՐՀԱԿՇԻՌ. ա. Որ զուգակշիռ գոյանի ընդ աշխարհի. տիեզերաչափ. փխ. աշխարհի չափ. *Աշխարհակշիռ ախտք, կամ ծանրութիւն, կամ ալիք յանցանաց. Բէնէ. ոփէղ։

ԱՇԽԱՐՀԱԿՈՅՏ. ա. Աշխարհաժողով. համագումար. *Աշխարհակոյտ ամբոխ. Ագաթ։ *Զամենայն աշխարհակոյտ խառնիճաղանճս տեսեալ իւրոյ։ Աշխարհակոյտ մարդկան. Յհ. կթ։

ԱՇԽԱՐՀԱԿՈՑՑ. Համատարած. ընդարձակատարած. *Յատարախի անդ յընդարձակ տեղւոջ յաշխարհակոյս վայրի. Գ. Դ. Ը. 9։ *Աստուածական սփռէր ի վերայ աշխարհակոյս շինուցն սրտայ. Յհ. կթ։

ԱՇԽԱՐՀԱԿՈՐԾԱՆ. ա. Κοσμόλεθρος. Mundo exitialis. Կործանիչ աշխարհի, կամ աշխարհաց. աշխարհաւեր. մահաբեր, ապականիչ հասարակաց. *Աշխարհակործան ջրհեղեղն տապանակութեամբ ի վերայ ածել. Պիտ։ *Այս աշխարհակործան բարկութիւն յանկարծակի գիտացեալ. Լմբ. աժղ։ *Աշխարհակործան յայտնութեան, կամ առանձնութեան, ժամանակ, ախտ. Զքր. ԿԲ։ Յհ. ԿԲ։ Շ. ոփէն. Սիմոն. ող։

ԱՇԽԱՐՀԱԿՈՐՈՅՍ, բռի, աց. ա. Կորուսիչ աշխարհի. աշխարհակործան. *Յաշխարհակորոյս յաւնէ անտի. Բուզ. Գ. 20։ *Ընդ խօսս աշխարհակորուսիչ այդորիկ։ Արանց վատախորհրդից և աշխարհակորուսաց։ Աշխարհակորոյս արանցն. Փարպ։ *Տիեզերապատիր աշխարհակորոյս խաբէութեան պատրանօք. Տօնակ։

ԱՇԽԱՐՀԱԿՈՒԼ. ա. Որ կլանէ զաշխարհ, կամ զմարդիկ աշխարհիս. փխ. ԴՈՒՆԻԱ ՅՈՒԹՕՂ. *Աշխարհակուլ մահ, կամ որովայն, կամ վիշապ. Ագաթ։ Շ. Եդբ։ Մարթ։ *Մի՛ բանար ընդդէմ իմ զաշխարհակուլ զզերան դեհենին։ Կապեցեր սանձեցեր զամենի բնութիւն աշխարհակուլ ծովուն առաջով. Բէնէլ։

ԱՇԽԱՐՀԱԿՑՈՒԹԻՒՆ. գ. Գաւառակիցն կամ քաղաքակիցն գոլ. փխ. ... *Աշխարհակցութեան բնութեն չեն կցեալ ընդ իս. Փարպ։

ԱՇԽԱՐՀԱՀԱՄԱՐ, ի. ա. (գրի կարճելով կամ վրիպակաւ և ԱՇԽԱՐՀԱՄԱՐ). Οἰκόνομος, γραμματὴς τοῦ λαοῦ. Oeconomus, scriba populi. Որ առնու գրով զհամար մարդկան աշխարհի. կոնսուս, գանձ ժողովրդեան. փխ. ... *Գրեցաւ, որպէս էր հրաման աշխարհահամար դպրացն։ Կացուցանէր զաշխարհահամար դպիրսն։ Եկին մատուցին աշխարհահամար դպիրքն. Եսթ. Գ. 9։ Ա. Դ. Ե. 42։ Գ. Դ. Ը. 14։ *Մովսէս աշխարհահամար աշխարհապատում. Ագաթ։

ԱՇԽԱՐՀԱՀԱՄԱՐ. և ԱՇԽԱՐՀԱՀԱՄԱՐԳԻՐ. գ. Ἀπογραφή. Descriptio. որպէս Աշխարհագիր. առնուլն զհամար. և Մատեան ի համար արքունի գրեանի. փխ. ... *Յաշխարհահամար խառնէին. Գ. Դ. Է. 27։ *Աշխարհահամար գրեան զաղգատոհմն ամենայն յանուանէ գրել։ Առնել գիր զաշխարհահամար հրէից. Գ. Դ. Ը. 10. 14։

ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՑ. ա. Որ հայի ի վերայ աշխարհիս կամ երկրի ողջոյն. *(Արեգակն) աշխարհահայեաց տարր. Լմբ. Ժէ։

ԱՇԽԱՐՀԱՀԱՅՐ. գ. Հայր աշխարհի. նախահայր. յաջորդ նախահօր ընտրեալ. *Յետ ստատիցն անցելոց՝ զայլն արդար (զնոյ) աշխարհահայր երկրորդ յաւխտենագիր ուխտիւն կացուցեալ. Ագաթ։ *Էին աղամայ և այլ ուստերք բազումք, այլ ոչ արժանաւորեան պայազատութեն աշխարհահայր (կամ աշխարհահայր) լինելոյ. Արծր. Ա. 1։

ԱՇԽԱՐՀԱՀՈԳ. գ. Որ հոգայ վասն աշխարհի. և Որ ինչ հայի ի խնամս աշխարհին կամ ազգին. *Ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն. Կորիւն։

ԱՇԽԱՐՀԱՀՈԳՈՒԹԻՒՆ. գ. Հոգ և խնամ ի վերայ աշխարհին. *Զաշխարհահոգութիւն, զքաջութիւն, են. Փարպ։

ԱՇԽԱՐՀԱՄԱԾ. ա. Մածեալ զաշխարհաւ, պատեալ, տարածեալ շուրջ զնովաւ. *Որ զաշխարհամած խաւարն 'ի սպիտակն 'ի լոյս փոխեցեր. Շար.:

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՆ. ա. Մատնիչ աշխարհի իւրոյ կամ ազգի. *Ցաշխարհամատն ազգէ՝ աշխարհի փրկիչ զօրացեալ. Երզն. լուս.:

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՈՒՌՆ, առան կամ տրան. գ. Βασιλική. Basilica. (այսինքն արքունի տաճար.) Մատուռն կամ եկեղեցի երևելի, յոր ընթանայ ամենայն աշխարհ. որպիսի էր առաջին կաթողիկէն հիմնարկեալ յառաքելոց՝ կից վերնատանն սիոնի. յորմէ և ամենայն առաք. եկեղեցիք կամ թագաւորական մատուռնք կոչին Աշխարհամատուռն. *Աշխարհախումբ ժողովարան շինեցին զտուրքն կաթողիկէ. զոր և աշխարհամատուռն անուանեցին, այսինքն համընդհանուր հաւատացելոց: Պատճառ աշխարհամատուռնն: Աշխարհամատուռն կնքեալ է. Տօնակ: Տօնացոյց: Շար.:

Այլ և իբր մակդիր. *Խորան լուսոյ աշխարհամատրեան. Գնձ.:

ԱՇԽԱՐՀԱՄԱՐ. Տ. ԱՇԽԱՐՀԱՀԱՄԱՐ, (որ է ուղիղ և ամբողջ գրութիւն:)

ԱՇԽԱՐՀԱՄԱՐԴ. մարդք. գ. Մարդիկ աշխարհի. արտաքինք. *Զի՞ կայ մեր և դատել զաշխարհամարդս. զներքինսն դատեցարուք. Եփր. ա. կոր.:

ԱՇԽԱՐՀԱՄԷՋ. միջի, մէջք. գ. ա. Միջին վայր աշխարհի, երկրի, քաղաքի. հրապարակ. հրապարակական. *Ի ներքս յաշխարհամէջս (կամ յաշխարհամէջ կամ յաշխարհամիջի) անդր արշաւելոյ. յն. տիրել գաւառին. Ա. Մ. ծՊ. 2: *Նուաւ՝ որ յաշխարհամիջի է. Շիր: *Ցաշխարհամէջս և 'ի ժողովրդարանակս համարձակեցան յարձակել աւելիս. Ցհ. իմ. գաւ.:

ԱՇԽԱՐՀԱՄՈԼ, ի, աց. ա. Մոլեալ զբաղեալ 'ի սէր աշխարհիս. *Փախիցուք յաշխարհամոլէն և յաշխարհականէն. Ոսկ. ա. եփ.:

ԱՇԽԱՐՀԱՄՈՒՏ. ա. Ցոր աշխարհ ամենայն կամ բազմութիւն մարդկան մտանէ. (այն է արքունի դուռն, արքունիք.) դրան հիւմայիւն, գափու, փէրի փէնչէր. *Աշխարհամուտ դուռն. Ագաթ: Կորիւն: Խոր. գ. 57:

ԱՇԽԱՐՀԱՅԻՆ, յնոյ, ոց. ա. Աշխարհական. իբր կենցաղական, երկրաւոր, մարմնաւոր. աստուածական. աշխարհի. տիւնեաւի. տիւնեէվի. *Ոչ ինչ յաշխարհային նմանեաց զարդար ստանալ. յն. յաշխարհի նմանեաց. Փիլ. ձ. բան: *Հրամանս առաք 'ի բաց կալ յաշխարհայնոցս. Ոսկ. յհ. ա. կ2: *Իմաստութիւն աշխարհայնով. Շ. հրեշտ:

ԱՇԽԱՐՀԱՅԻՆ. Աշխարհեան ոք. ժողովրդական, ռայիկ. տիւնեաւի մարդ, աշխարհական. *Զաշխարհայնոցն գնացէք օրէնս. Շ. ընդհանր:

ԱՇԽԱՐՀԱՅԻՆ. Բնակիչ աշխարհի. էրլիսի, կամ դաշրալի. *Զհեռաւոր աշխարհայինն (այսինքն զօտարականսն) 'ի փառս բարձրութեան կարգեցին. Նար. խչ:

ԱՇԽԱՐՀԱՅՈՐԴՈՐ. ա. Բոլոր աշխարհին այնորիկ յորդութեամբ կամ յորդորաւոք. համագումար. միաբան. *Ժողովեալ աւետարանական աշխարհայորդոր բազմութեան հասարակեցին 'ի տեղւոջն. Փարպ:

ԱՇԽԱՐՀԱՑՔ, ացց. գ. Աշխարհաձևք. զանազան կողմանք. *Կարծիս այս(ծածք) յարձակեալ 'ի յաշխարհացս. Պիտ:

ԱՇԽԱՐՀԱՆԱԶ. ա. Նազելի և արգոյ յաչս ամենայն աշխարհի. [illegible]. *Աշխարհանազ երևեալ. Ագաթ:

ԱՇԽԱՐՀԱՆՈՐՈԳ. ա. Նորոգիչ աշխարհի, կամ ազգի մարդկան. *Աշխարհանորոգ անօրէնութիւն, կամ փրկութիւն, կամ հոգի. Գր. հր: Սկևռ. էս. և ալոն:

ԱՇԽԱՐՀԱՇԱՐԺ. ա. Κοσμοκινητής. Mundi motor, turbator. Շարժիչ և գրգռիչ աշխարհի (հրաբուղխ վայրք). *Լուսոյ աղբերս աշխարհաշարժս բղխէ. Պետր:

ԱՇԽԱՐՀԱՇԷՆ. ա. Շինութիւն գործող աշխարհի. խնամակալ հայրենի երկրի. աշխարհէ՝ էջիէրէ չէն պահող. *Այր քաջայր և աշխարհաշէն: Լաւածանօթս և աշխարհաշէնս. Փարպ: *Աշխարհաշէնն խաղաղ. Բուզ. գ. 11: *Աշխարհաշէն ըստ մերոյն արքայից. Մագ. ծՊ: *Որ եղև այր աշխարհաշէն, առատաձեռն և բարերար գործ. Յհնսփ:

Եւ իբր Աշխարհաշինական. կենցաղօգուտ. *Աշխարհաշէն հոգաբարձութիւն: Ըստ աշխարհաշէն խնամակալութեան. Արծր. ա. 11: *Կայր նշկահանեալ մի գեղապանծ (լուսինն), աշխարհաշէն փառն (յարեգակնէ) եկեալ. 'ի յեփողէն խորշէ խառնած, և 'ի նմանէ դարձեալ լցեալ. Շ. յաղաղս:

ԱՇԽԱՐՀԱՇԷՆ. զայս ասի՝ իբր Արարիչ աշխարհի. արարչագործ. *Երկնակազմն և աշխարհաշէն ձեռամբն բեւեռեալ զամենատեսն յերկեղն իւր և 'ի սէր. Տօնակ:

ԱՇԽԱՐՀԱՇԻՆՈՒԹԻՒՆ. գ. Շինութիւն և բարեկարգութիւն աշխարհի, երկրի. *Կեանք աշխարհաշինութեան. և արդար դատողութեան երևեալ. Փարպ:

ԱՇԽԱՐՀԱՊԱՀ, ի, աց. ա. Κοσμοφύλαξ. Mundi custos. Պահապան աշխարհի. *Աշխարհապահ հրեշտակքն, կամ հրեշտակաց. Ածաբ. ծղ: Նախատր. ծղ: Ճ. Թ:

ԱՇԽԱՐՀԱՊԱՂԱՏ. ա. Ուր իցէ պաղատանք 'ի կողմանէ աշխարհին կամ բազմութեան. *Մատուցանէին զաշխարհապաղատ պատարագսն առաջի թագաւորին. Բուզ. գ. 21:

ԱՇԽԱՐՀԱՊԱՏՈՒՄ. ա. Պատմող զաշխարհէ (գրողն, և գիրքն). *Մովսէս աշխարհապատումն: Զաշխարհապատումն գիրսն մովսէսի. Ագաթ: *Որ զաշխարհապատումն գիրսն շարադրեաց: Ըստ աշխարհապատումն բանին. Լմբ. է. ծշ:

ԱՇԽԱՐՀԱՊԱՐՈՒՆԱԿ. ա. Որ զամենայն պարունակէ պատելով. այն է ծով. *Աշխարհապարունակ ովկիանոսի. Նար. խչ:

ԱՇԽԱՐՀԱՊԷՍ. մ. Աշխարհօրէն. մարմնապէս. համբաւապէս ըստ աշխարհի. յն. Πανηγυρικῶς. Ut in publicis festis. *Տօնեցուք մի աշխարհապէս, այլ [illegible]բար. Ածաբ. ծն: Սեբեր:

ԱՇԽԱՐՀԱՊՈՂՈՏԱՅ, ի,ից. ա. գ. Λεωφόρος ὁδός. Populum ferens, via publica, via regia. որ և ասի ԱՄԲՈԽԱԲԵՐ. Կուռ պողոտայ՝ ընդ որ աշխարհ անցանէ. ճանապարհ արքունի. արահետ. ճամփան, ուլու եօլ, փէկլան եօլու. *Որք գնան ընդ ցամաքն և ընդ աշխարհապողոտայն (ճանապարհ) անվտանգ գնասցեն վարքն: Ընդ ընդ արձակ աշխարհապողոտայ 'ի դուրս ելեալ: Ցաշխարհապողոտայ ճանապարհ. Փիլ: *Ցուցեալ զաշխարհապողոտայն, զի գնասցեն ընդ այն զօրքն. Ճ. Բ:

ԱՇԽԱՐՀԱՍԷՐ, սիրի, րաց. ա. Φιλόκοσμος. Qui amat mundum, i. e. res mundanas et terrenas. Որ սիրէ զաշխարհ և զաշխարհայինն իրս. փիւնեա ֆէրէսի, ճեհաղի. *Ցորս ուրախանան աշխարհասէրք. Ցձե. Ի: *Ոչ ըստ աշխարհասիրացն ումանց ծախելով յանարժանս. Պիտ: *Անձուկ և ճանապարհն այն աշխարհասիրաց. Խոր: *Զքաղցրահամ կերակուրս՝ աշխարհասիրաց թողին. Լամբ. Հ: *Աշխարհասէրք գոլով հեղձուցին զհաւատոց բանն. Կիւրղ. ղկ:

Եւ իբր Աշխարհասիրական. *Աշխարհասէր պատրանք. Ցձե. Ի:

ԱՇԽԱՐՀԱՍԷՐ. իբր Հայրենասէր. *Որպէս աշխարհասէրք (կամ աշխարհատեսք) ստատարք եկեալ չինութ. Պիտ:

ԱՇԽԱՐՀԱՍԷՐ. Սիրելի աշխարհի. հաճոյական մարդկան. *Ոչ ըստ տեղւոյ գոլով աշխարհասէր զարմանալի շարաբանութեան. Երզն. քեր:

ԱՇԽԱՐՀԱՍԻՐՈՒԹԻՒՆ. գ. Սէր աշխարհի և աշխարհայնոց. *Մի՛ աշխարհասիրութիւն հրաժարեք 'ի կուսմանէն. Սարգ. ա. պ. ա: *Հրաժարել յաշխարհասիրութենէ. Նանայ: *Ոչ բաժանել յածախութէ և յաշխարհասիրութէ. Երզն. մտթ:

ԱՇԽԱՐՀԱՍՏԵՂԾ, ի. ա. Κοσμοποιός. Mundi factor, autor. Տ. ԱՇԽԱՐՀԱԳՈՐԾ. *Աշխարհաստեղծն՝ ինքն արդարոյ երևի. Փիլ. գ. Ա: *Բազում արարիչս և աշխարհաստեղծս 'ի ներքս մուծանեն. Կոչ. ծա: *Զաշխարհաստեղծ բերանոյդ. Նար. ճէ: *Տարածեաց և անէր զաշխարհաստեղծ բազուկն իւր 'ի վերայ խաչին: Սկզբնածինն այն խաւար զգալի 'ի հրամանէն աշխարհաստեղծ տեառն առեալ հալածեցաւ. Սկևռ. յեսայ. և 'ի յոր:

ԱՇԽԱՐՀԱՎԱՐ. ա. Այն ինչ իբր՝ որովք լինի քաղաքավարել յաշխարհի. աշխարհային. քաղաքական. աշխարհական. մարդկային. *Զաշխարհավար կանոն անյեղ և հաստատուն պահեսցէ. Պիտ: *Վաղ և առաւօտ զաշխարհավար զկեանս ասէ, որ կրիւք և գործովք յաւուր բովանդակի զխախճանաւորացն եւ սահմանէ. Համամ. առկ: *Այլ է առաքելոցն պատուէր, և այլ մարդկան՝ որ աշխարհավար կենօք կենցաղավարեցին. Իգն: *Կարգ սահմանի աշխարհավար ճանապարհին գիրք է: Հնազանդութիւն յաշխարհավար օրէնս՝ որոց և իշխեն. Լմբ. ոչ: Շ. ա. պ. չ:

ԱՇԽԱՐՀԱՎԱՐ ԼԻՆԻՄ.}
ԱՇԽԱՐՀԱՎԱՐԻՄ, եալ.} Քաղաքավարիլ յաշխարհի օրինօք, կամ ըստ օրինաց աշխարհի. կեալ յաշխարհի. կամ մնալ 'ի կարգ աշխարհի. *Փոյթ յանձին եգեալ է աշխարհավար լինել ազգին, ընկալեալ զմեծագաղաքս զայս յաշխարհ, ան. Փիլ. էն: *Որ աստ աշխարհավարեալ ամուսնացաւ. Խոր. Է. 77:

ԱՇԽԱՐՀԱՎԱՐՈՒԹԻՒՆ. գ. Քաղաքավարիլն յաշխարհի. կեանք աշխարհի կամ աշխարհականի. կենցաղ բարեկեցիկ. *Ընդ նոյն ինքն իրս աշխարհավարութեան անցանելով. Պիտ: *Արհամարհեաց զվայրս աշխարհիս, և որ 'ի սմա զբօսանք աշխարհավարութեան են. Ճ. Ա: *Ցիւր ճանապարհն ամփոփ լինելոյ, աշխարհականն յաշխարհավարութեան, ամուսնացելոյն յամուսնութեան: Թէ իշխան է, թէ ընդ իշխանութեամբ, թէ 'ի կարգ աշակերտութեան, թէ յաշխարհավարութեան: Արհամարհելով զօրէնսն՝ և աշխարհավարութեան ոչ յաջողի նոցա. Լմբ. ոչ. և առակ: *Ցաղագս բժշկական արհեստից, որ վասն մարդկան առաջնորդ, և ապա յաղագս աշխարհավարութեան պիտոյից մանն. Վրդն. ծէ:

ԱՇԽԱՐՀԱՅԱԾ. Տ. ԱՇԽԱՐՀԱԽՆԱՄ. *Աշխարհատած դեհկանուն. Բուզ. Գ. 2:

ԱՇԽԱՐՀԱՏԱՆՋ. ա. Որ ինչ է յաշխարհի տանջող. աշխարհածուփ. *Յաշխարհատանջ հոգոց և կարեաց ապրեալ. Փարպ:

ԱՇԽԱՐՀԱՏԱՐԱԾ. ա. Տարածեալ ընդ աշխարհ համօրէն, ընդ ամենայն երկիր. *Թագուցանէ զաշխարհատարած ճառագայթս իւր. Ագաթ: Եւ Խոր. հարց: *Խաւար աշխարհատարած. Նար. գանձ եաց: *Կոչակք ամեհի ձայնուն աշխարհատարած. Բենիկ:

ԱՇԽԱՐՀԱՏԵՍԱՑ. ա. Ատեցող աշխարհի: ՃՃ:

ԱՇԽԱՐՀԱՏԵՍ. ա. Տեսուչ և գործանիչ աշխարհի. *Աշխարհատես խնամակալութի. Բուզ. Գ. 2:

ԱՇԽԱՐՀԱՏԵՍ. ա. Δημοσιακός. Publicus. և բայիւ, δημοσιεύω, publico. Տեսանելի առաջի ամենայն աշխարհի. ակներև ամենեցուն. ուր է հանդէս համաշխարհական հանդիսացեալ. *Աշխարհատես հրապարակ (ահեղ ատենին). Մանդ. ժ. Ե: *Արգելք ոչ հասանել հանդիպել աշխարհատես հրապարակին. Բրս. աղաչ: *Լսել 'ի նմանէ զքաղցրալուր բարբառն երանութ՝ առաջի աշխարհատես հրապարակին. Եփր. խաչ: *Զիւրոյ սխալմանն զկերպ աշխարհատես ցուցանէ. Խոր: *Աշխարհատես առնէ զնշանն. Նանայ: "Այժմ լուսելեայն եկն, և աւա բազում աշխարհատես յայտնութ. Ոսկ. մ. Բ. 28. յն. մի բառ, δημοσιεύσεως, publice, palam. որ առ Երզն. մտթ. գրի. "Այժմ լուսելեայն, և յայնժամ աշխարհատեսակ յայտնութ":

ԱՇԽԱՐՀԱՏԵՍԻԼ. Տ. 'ի բառս ԱՇԽԱՐՀԱՏԵՍ բառ ի նշ:

ԱՇԽԱՐՀԱՏԵՑՈՒԹԻՒՆ. գ. Ատելն զաշխարհ. *խոնարհութի. անախտակալութի. աշխարհատեցութի. Մարաբ:

ԱՇԽԱՐՀԱՏԻՐ, տեառն. գ. Տէր աշխարհի. Թագաւոր. իշխան. *Աշխարհատեարք անկանէին ընդ միմեանս: Գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն. Բուզ. Գ. 4. 10:

ԱՇԽԱՐՀԱՏԻԿԻՆ, տիկնոջ. գ. Տիկին աշխարհի. Թագուհի. *Շուշանիկ աշխարհատիկինն աղուանից: Դեսպակ աշխարհատիկնոջն. Ճ. Գ:

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ, ի. գ. ա. Κοσμοποιός. Mundi creator, opifex. Արարիչ աշխարհի. որ և ԱՇԽԱՐՀԱՍՏԵՂԾ, ԱՇԽԱՐՀԱԳՈՐԾ. *Աշխարհարարն յորժամ զկրելի էութիւն ոկսաւ կարգել: Աշխարհարարն իբրաւացոյց, ևն: *Զաշխարհիս զգործս փոխանակ աշխարհարարին իւր պատուել. Փիլ: *Էջ աստ, զի յետս կացուցէ զմարդիկ յաշխարհարարէ անտի. Կոչ. Ի. Յ: *Աշխարհս և աշխարհարարն յուխտաւոր մանկանն աղաւորեալ կերպարանեցաւ. Եղիշ. տպ: *Ա՛ռ 'ի միասնգամ զաշխարհարար գթութիւն զոէր և զանուանս ապրեցուցանելոյ. Կիւրղ. ծն:

Իսկ Պղտ. ողբոց. *Արիստոտելէս զիս ուսուցանէր յաշխարհարար ներտեսութեանն». խմ, 'ի գիրսն որ յաղագս աշխարհի:

ԱՇԽԱՐՀԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ. Տ. ԱՇԽԱՐՀԱՐԱՐՈՒԹԻՒՆ. *Յաշխարհարարողութեն խմանանք զամենայնն բարի ստեղծեալ. Մագ. Ի:

ԱՇԽԱՐՀԱՐԱՐՈՒԹԻՒՆ. գ. Κοσμοποιΐα. Mundi creatio, opificium. Արարչութի աշխարհի. արարչագործութի. ստեղծումն աշխարհի. աշխարհ ստեղծնիլը. աշխարհ ստեղծուիլը. *Աշխարհարարութիւն կարգեալ յօրինեալ է (ըստ գրոցն ծննդոց): Զաշխարհարարութեն հաշուեալ ասէ, այս գիր արարածոյ: Յաշխարհարարութենէն ասէ, թէ մինչեւ 'ի գեմս նորա. ևն. Փիլ: *Զոր և յաշխարհարարութեն գիրսն գրեաց Մովսէս: Մեծն Մովսէս երրայեցւոցն շարագրող, և աշխարհարարութե մարգարէ. Կիւրղ. հանգ: Ածծր. ա. 1: *Կարգաւ մի ըստ միոջէ զաշխարհարարութեն պատմէր գործ: Ըստ աշխարհարարութեն սահմ կարգի. Պիտ: *Նախ քան զաշխարհարարութիւն քնիւ նկարեաց հայր զհրաշափրեալսն 'ի ժառանգութի. Ոսկ. Եփես:

ԱՇԽԱՐՀԱՐՁԱԿ. Տ. ԱՇԽԱՐՀԱՍԱՐԱԾ. *Զաշխարհարձակ ճառագայթալոյս փայլումն. Խոր. հարց:

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ, ցուցի, ից. գ. Ցոյց և ցուցակ աշխարհի. տեսարան տեղեաց դրագրեալ իւրեք օրինակաւ. *Տուեալ նմա ածագիծ տախտակ՝ հրամայեաց այնու գրել զաշխարհարարութիւն, և զօրինակն երկրի. և սկիզբն աշխարհացուցին զատուածնակն հրամայեաց գործել յօրինակ վերնոյ աշխարհին. Տօնակ:

ԱՇԽԱՐՀԱՒԱՆԴ, դք, դից. ա. գ. գրի և ԱՇԽԱՐԱՒԱՆԴ. Καπηλεῖον. Caupona, popina. σκηνή, tabernaculum, taberna, contubernium. կապելայ. կապելանոց. պանդոկի. տուն և կրպակ գինեվաճառաց և գուսանաց. իբր աշխարհի հասարակաց կամ աշխարհականաց իջևան. Մէյխանէ, խանմխանէ, խամարխանէ. *Յաշխարհաւանդս կապելաղանոցն և 'ի կրպակս անխտիր մտանիցեն: Զինչ օգուտ իցէ բազում սակի յանձին կրել յաշխարհաւանդս... 'ի գուսանաց վանս: Որ բազում ատգին վաճառականութեն կրպակաց նման է, և շահքն անիրաւութեն հանգոյն աշխարհաւանդից. Ոսկ. Բ. փիլ. ա: Եւ եբր. իԸ: Եւ մ. Գ. 8:

ԱՇԽԱՐՀԱՒԱՆԴԻԿ. գ. որ գրի և ԱՇԽԱՐԱՒԱՆԴԻԿ. Κάπηλος. Caupo. Պանդոկապետ. գուսանապետ. Մէյխանէճի. *Զագահն 'ի մէջ ածցուք, և զաշխարհաւանդիկս, և զարձեալ զգինեվաճառան ամենայնից հանդիսականացն: Զբազումս 'ի նոցանէ զատանիցես խահակերս, և իշավարս, և աշխարհաւանդիկս. Ոսկ. մ. Բ. 13: Գ. 5: *Իբր զատուկս ամանս կամ զաշխարհաւանդիկս կնիքոք շրջիմք, և 'ի դրունս իշխանաց յածախեմք. Սարգ. յհ. Է:

ԱՇԽԱՐՀԱՒԵՐ. ա. Աշխարհակործան. աշխարհ աւրօղ. քանդօղ. *Իշխանք աշխարհաւերք. Խոր. Գ. 68: *Տիրակորոյսք և աշխարհաւերք. Ածծր. Գ. 2: *Ազգ աշխարհաւերք ժանդագործք բրմագոյն. Բուզ. Գ. 3: *Խորհուրդս ապականագործս, աշխարհաւերս: Վա՜յ աշխարհաւեր խորհրդոյն. Ածծր. Գ. 7: Լաստ. ծԷ: *Աշխարհաւեր կործանութեն. Յհ. կԲ: *Այս ամենայն յաշխարհաւեր տարուղս գործեցաւ. Լաստ. Ի:

ԱՇԽԱՐՀԱՓԱՅԼ. ա. Որ փայլէ կամ լուսաւոր լինի ընդ ամենայն աշխարհ. *(խաչն երևեալ) յարևելակողմ կողմանէ՝ աշխարհափայլ ծագմամբ. Տօնակ: Երզն. լուս:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱՑԻ, ցւոյ, ցեաց. ա. Քաղաքացի աշխարհիս. բնակեալ յաշխարհի. *Կամեցուցանել զառաքինին միանգամայն և աշխարհաքաղաքացի, և հանդիսապետի ամենայն աշխարհիս: Աշխարհաքաղաքացիս մարդ, որ իբր փոքր աշխարհ 'ի մեծ աշխարհի եղեալ. Փիլ. լն. Գ. 3ղ: Եւ նխ. ա:

ԱՇԽԱՐՀԱՔԱՐՈԶ. ա. Քարոզեալ հռչակեալ ընդ ամենայն աշխարհ. տիեզերահռչակ. *Աշխարհաքարոզ զնորա աւրողութեան աւետարանաւն արար. Խոր:

ԱՇԽԱՐՀԵՑԻ, ցւոյ, ցեաց. ա. Որ է յայն ինչ աշխարհէ կամ յերկրէ. Էրլիւ. *Մոգամոն՝ որ սեպուհի ճանաչի, և կա հան՝ վերբին աշխարհեցին. Ածծր. Գ. 10:

ԱՇԽԱՐՀԻԿ. ա. գ. Աշխարհական ոգ. միաձակեալն յաշխարհական կարգի. փոխ. էէվ. *Զոր քան զյանցաւոր աշխարհիկ զատապարտիք: Աշխարհիկքն եառուն ըղբաժինս իւրեանց: Մարդ աշխարհիկ. Վրք հց. Բ. Գ: *Որդեակ աշխարհիկ, առ ոչ գու քան (հոգևոր). Վրք հց. Յ: Տես և ԱՁԳԱՇԽԱՐՀԻԿ:

ԱՇԽԱՐՀՕՐԷՆ. մ. ա. Βιωτικῶς. Ad vitae rationem, և Ad normam populi, vulgariter. Ըստ կարգի աշխարհիս, կենցաղոյս, աշխարհականաց. կենցաղականն և քաղաքականն. [illegible]. *Ի զգեստս մի աշխարհօրէն բերել. Շ. ընդհ: *Զկատակերգութիւն (վերծանել) աշխարհօրէն. Թր. քեր: *Ըստ աշխարհօրէն կարգաց խնամանաւ առնեմք. Խոր. ա. 2:

ԱՇԽԱՐՀՕՐԷՆ. Բոլոր աշխարհաւ. համաշխարհական. Δημόσιος. Publicus. *Միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ում պարտ իցէ՝ զհայրապետութեն կաթողիկոսութեն ունել: Միաբան համօրէն աշխարհօրէն ժողովեցին առ ներսէս կաթողիկոսն հայոց. Բուզ. Գ. 17. 51: *Յաշխարհօրէն պատերազմին ախոյեանն եկեղեցւոյ. Շար:

ԱՇԽԱՐՈՒՄՆ, րման. Տես ԱՇԽԱՐ. Ὀδυρμός. Lamentatio, ploratus. *Լալումն և աշխարումն. Մտթ. Բ. 18: *Աշխարումն գուժից. Յհ. կԲ: Իսկ Երեմ. ծԴ. 5. *Յաշխարումն նոցա մի մտանիցես». յն. θίασος, հաւաքումն, ակումբ. որպէս թէ աշխարհումն կամ աշխարհաժողով բազմութեն 'ի խնջոյս կամ 'ի լալիւն. որպէս և յարի զկնի. *և 'ի կոծ նոցա մի երթիցես». ևն:

ԱՇԽԵՏ. ա. Πυῤῥός. Rufus, ruber. վառեցրէն՝ ախէթ. Կարմիր գեղձագոյն, հրագոյն, բոցագոյն՝ որպէս ծիրան, նարինջ. [illegible]. *Հեծեալ յաշխետ ձի: Ձիք աշխետք. Զաք. Ա. 8: Զ. 2: *Աշխետ գոյն կարմիրկերպ. Լծ. պէր:

ԱՇԽՈՅԺ, խուժի, ից. ա. որպէս թէ Հրայլին և ուժեղ. գրի և ԱԺԽՈՅԺ. Ամուրգ. հուժկու. սաստիկ. բուռն. զօրեղ. [illegible]. *Տեսեալ զախոյեանսն զայն վիթխարի և աշխոյժ. Յհ. Իմ. պատ: *Աշխոյժ պնդութի, կամ ժրութի, կամ զօրաւոր. Պիտ: *Աշխոյժ ժամանակի բնանութեն: Տրամախոհեալ յոյժ աշխոյժ խուզմամբ. Մագ. ծԳ. կԷ: ('Ի հին բառգիրս և "Աշխոյժուհի, Թագուհի".)

ԱՇԽՈՅԺՈՒԹԻՒՆ, կամ ԱՇԽՈՒԺՈՒԹԻՒՆ. գ. Արութի. արիութիւն. [illegible]. *Քամահեաց զհաստատուն, ոչ գիտացեալ զհոգևորն աշխուժութի. Պղտ. ողբոց:

ԱՇՄ. գ. Անուն պատուական քարի. Թերևս ադի. [illegible]. *Ի քարէ պատուականէ, որոյ անունն է աշմ. Մաս. Բն:

ԱՇՆԱՅԻՆ, յնոյ. Տ. ԱՇՆԱՆԱՅԻՆ:

ԱՇՆԱՅՆԻ, նւոյ. Տ. ԱՇՆԱՆԻ:

ԱՇՆԱՆԱԲԵԿ ԼԻՆԵԼ. Բեկանիլ կամ խանգարիլ և տապականիլ յաշնան, յեղանակ աշնան. *Դեղձանաւորս աշնանաբեկ լինել՝ Թափեալ 'ի տատանմանէ. Ոսկ. լուս:

ԱՇՆԱՆԱՅԻՆ, յնոյ, ոյ. ա. որ և ԱՇՆԱՅԻՆ. Μετοπωρινός. Autumnalis. Սեպհական ժամանակի աշնան. *Զբուռն տապոյն զուգորութեան, զգարնանայինն և զաշնանայինն: Զաշնանայինն՝ փոփոխական ժողովելոյ ամենայն պտղոյ: Յաշնանայինն հաստատութեան: Աշնանայնոյն (կամ աշնանոյն) զուգորութեան: Գարնանայնոյն, և աշնանայնոյն: Տերևաթափ լինելն և ցամաքելն տունկք աշնանայնովն և ձմերայնովն. Փիլ: *Աշնանայինն զուգաւորութեան: Գարնանայինն քան զաշնանայինն գերազանցէ ժամանակ. Պիտ:

ԱՇՆԱՆԱՅՔ. Դնի որպէս ԱՇՆԱՆԱՅԻՆՔ. *Ծառք աշնանայինք. Եւ ընդ էր աշնանայինք. վասն զի ոչ ամառնանից օրհնութիւն ժամանակին ընծայեն զպտուղս. Եփր. յակէփոր:

ԱՇՆԱՆԱՅՈՒՆԿ. գ. ածկ. աշնփառնկ. Ծառ անկեալ յասուրս աշնանայնոյ. Վրդն. ծէ: (Որպէս և ԱՇՆԱՅԱՆ ասի ածկ. Սոփորական գարեանն, որ ցանի յաշնան):

ԱՇՆԱՆԻ, նւոյ. որ և ԱՇՆԱՅՆԻ. ա. գ. ն. Աշնանային. Եղանակ աշնան. և Ի ժամանակի աշնան. կիւղ, կիւղ էյէամը, կիւղին. *Յաւուրս աշնանայնոյ չուէր գլխոյ. Յհ. կբ: *Եթէ յամառայնոյ իցէ, եթէ յաշնանոյ իցէ. Կոչ. ծդ: *Ոմանք գարնայնի, և ոմանք աշնայնի լուսոյ զուգաւորութեանց (բերելն). Փիլ. Լիւս:

ԱՇՈՒՆ, աշնան. գ. Ὀπώρα. Autumnus. Եղանակ տարւոյ ընդ մէջ ամարան և ձմերան, 'ի 21 օրէ սեպտ. ց21 դեկտ. աշնանք. կիւղ, խիղան, պէյզ բիղան. *Առնան յաշուն (զպտուղ), և աշունն 'ի ձմեռն. Յհ. իբ: *Յաշունն կամ 'ի գարունն. Ագաթ: *Յառաջ քան զաշունն 'ի ջերմին առեալ 'ի ձմերայ երթալոյ. Եղնիկ: *Աշուն ձմեռնացեալ. Խոր. Գ. 68: *Յաշնան յեղանակի: Ի լինել աշնան. Մխ. առակ: *Աշունն յաւէտ գեղեցկութեան գարնանն, և ոչ գարունն զաշնան պտղաբերութեան. Տօնակ:

ԱՇՏ, կամ ԱՇԴ, ի, ից. Տ. ՅԱՇՏ. (որպէս զոհ հաշտութեան.) *Կանգնել յաշտից սեղան. Խոր. Բ. 13: Տես և ԱՇՏԻՇԱՏ Թռ. յոփ. ան:

ԱՇՏ. Որպէս ըծ. ընդ հյ. Ոշտ, ստոր. սատարել. Նստել. և Թ. Իւսթ. այսինքն 'ի վերայ, 'ի վեր. և յն. լտ. Խոքանչ, աստ, աստ. Խոքանքն. այսինքն յոտին կալ, կամ նստեալ կալ, է ապուշտ յաւելեալ բառից. ուստի և ԱՍՏԻԿԱՆ (վերակացու):

ԱՇՏԱՆԱԿ, ի, աց. գ. Λυχνία. Candelabrum. Ճրագակալ. ճրագարան. բազմակալ: յորոյ վերայ հաստատեալ և նստեալ կայ ճրագն կամ մոմեղէնն կամ զանազան լուցեալ. շամտան, շէմտան, չիրաղլըգ. *Արարցես աշտանակ յոսկւոյ սրբոյ: Սեղանն և աշտանակ. Ել. ԻԵ. 31: Դ. Թգ. Դ. 10: *Ի մէջ եօթն աշտանակացն ոսկւոյ. Յայտ. Ա. 1: *Ի վերայ ոսկւոյ աշտանակաց: Լապտերք վառելովք, և աշտանակք բորբոքելովք. Ագաթ: *Իբր զճրագ բորբոքեալ 'ի յաշտանակին մաքրութեան հաւատոյ. Նար. խզ:

ԱՇՏԱՆԱԿԱԶԱՐԴ. ա. Աշտանակօք զարդարեալ. *Աշտանակազարդ լուսաւորք. Մաշ. էջէղ:

ԱՇՏԱՆԱԿԱԿԻՐ. ա. Որ կրէ՝ այսինքն կայ 'ի վերայ աշտանակի. *Աշտանակակիր ճրագ. Նար. մծբ:

ԱՇՏԱՆԱԿԱՄԱԶ. ա. Որոյ մազքն են անկեալ 'ի վեր. ցից ցից փնկլուած. *Դէք խոզանեալք և աշտանակամազք. Ոսկ. Եփ:

ԱՇՏԱՆԱԿԵՄ, եցի. չ. Ἐφάλλομαι. Insilio. Ἐπιβαίνω. Conscendo. Ոստնուլ և նստել 'ի վերայ. հեծանել յերիվար. հեծնիլ. պինտէ, օխուզը օլմագ, պէր նիշանէն. *Կամակար 'ի ձի աշտանակէր. Պրպ. աղէքս: *Ի մանկութեան կամակար աշտանակեալ: Զմիոյ ուրուք զձին կալեալ՝ արիաբար աշտանակէր. Խոր. Բ. 76. 79: *Յերիվարս ահիպարանցս աշտանակեալք: Հաղիւ յայլ ձի աշտանակեալ փախչէր. Յհ. կբ: *Մարտակ 'ի կուշտ աշտանակեալ. Ճ. Վկ:

ԱՇՏԱՐԱԿ, ի, աց. գ. Πύργος. Turris. Ամբարտակ. բուրգն. գլխաւորց. մարտկոց. մահարձան. ամրութիւն պարսպաց, և տեղի պահապանաց 'ի բարձր վայրի. գուլլէ, պուրճ. *Շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ: Աշտարակ մի էր հզօր 'ի մէջ քաղաքին, և փախեան անդր ամենայն արք և կանայք: Ի վերայ ամենայն աշտարակաց բարձրացելոց: Կանգնեցից զաշտարակս քո յաւուրս: Զաշտարակս բերդին հրձիգ առնելին: Աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն. ևն: Իսկ Ա. Մկ. Զ. 51, *Կանգնէին մանգղիոնս ... Նետաձիգ աշտարակս, և աշտարակս պարսպաւորաց». յն. մեքենայս 'ի ձգել նետս և պարս: Այլ Ղկ. ԻԱ. 5, *Գեղեցիկ վիմօք, և աշտարակօք զարդարեալ է». յն. ἀνάθημα, վերադիր, որ Թարգմանի նուէր նուէր, իբր յիշատակ ձօնեալ: *Աշտարակն՝ քաղաքին է ամրութիւն, և թշնամեացն ահաւորութիւն. Լմբ. սղ: *Որ զհիմնարկեալն աշտարակին (բաբելոնի). Շար. ևն:

Նմանութեամբ ասի. *Աշտարակ խաչի, կամ կենդանատու փայտի. Նար. ԻԶ. և խչ: *Մի յայնցանէ աշխարհացն հասեալ յաշխարհն՝ եւ եկաց 'ի վերայ աշտարակին», այսինքն 'ի բարձր տեղի իբր յամպոյն. Ճ. Բար: *Յոր աշտարակք կենդանականք՝ երկրատեսականն. Ճ. ԻՄ Եղով:

ԱՇՏԱՐԱԿԱԳՈՐԾ, ի, աց. ա. Շինող աշտարակի ('ի բաբելոն, ևն). *Աշտարակագործ կորուսիչ պաշտամանցն. Ագաթ:

ԱՇՏԱՐԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. գ. Πυργοποιΐα. Turris opificium. որ և ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ. Շինութիւն աշտարակի ('ի բաբելոն). *Եւ զաշտարակագործութեան և բազմամէտն յիշէ: Աշտարակագործութիւնն կարծեցաւ. ևն. Եւս. քր. Ա: *Յայնժամ 'ի յաւուրս, որ էր մի յառաջնորդաց աշտարակագործութեան: Զամենայն եղեալս յաշտարակագործութենէն մինչև առ մեզ: Ի ժամանակի աշտարակագործութեան մի լեզու 'ի բազումս բաժանեցաւ. Եղնիկ: Խոր. Ա. 6: Ոսկ. Ա. կոր:

ԱՇՏԱՐԱԿԱՁԵՒ. ա. Որ ինչ է 'ի ձև աշտարակի, կամ աշտարակօք զարդարեալ. *Խորամանկեցաւ ցանկն աշտարակաձև այգւոյն. Մծբ. ծէ:

ԱՇՏԱՐԱԿԱՇԷՆ. Տես ԱՇՏԱՐԱԿԱԳՈՐԾ. *Աշտարակաշէնքն համարեսցին զծախս աշտարակին. Մծբ. ծէ:

ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՂ, ի. Տ. ԱՇՏԱՐԱԿԱԳՈՐԾ. *Միւսոյ աշտարակաշինողք. Մագ. ծէ:

ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ. Տ. ԱՇՏԱՐԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. *Յառաջ քան զաշտարակաշինութիւնն: Նման զամբարտաւան խորհուրդ աշտարակաշինութեան. Խոր. Ա. 5. և 8: *Յանցանելն ընդ ծանր կարգիր՝ մոռացան զեղխլացեալ լեզուն, որպէս յաշտարակաշինութեան. Տօնակ:

ԱՇՏԱՐԱԿԱՔԱՐԿՈՒԹ. գ. (եթէ չիցէ գրելի, ԱՇՏԱՐԱԿԱՔԱՐԿՈԹՈՂ, կամ ԱՇՏԱՐԱԿՍ ՔԱՐԿՈԹՈՂՍ). Ամբարտակ քարեղէն. որպէս դնի 'ի յն. Ἀνάλημμα λιθίνον. *Յարքունիսն աշտարակաքարկութս բարձրաբերձս հանդերձ մահարձանօք շինեալ յօրինէր. Եւս. քր. Ա:

ԱՇՏԱՐԱԿԵԱՑ. ա. Իբր Աշտարակաւոր. ունող զաշտարակս. ամրացեալ աշտարակօք. *Կործանեաց զպարիսպս աշտարակեայս տաճարաց նորա. Ողբ. Բ. 7. (յն. զպարիսպ շինուածոց նորա, կամ աշտարակաց նորա):

ԱՇՏԱՐԱԿԵԱԼ. Աշտարակօք կամ որպէս զաշտարակ ամրացեալ. *Հաւատս եկեղեցւոյ, որով աշտարակեալ գոյ և պարսպեալ. Լմբ. սղ: *Երեքպարսպեան քաղաք է՝ ամենայն արուեստ և քաջութեամբ աշտարակեալ. Եւագր. Ծ:

ԱՇՏԷԱՅ, տէի, եաց. գ. որ և ԱՇՏԷ, ի, եաց. ասի և ԱՇՏԷՆ, իցն ածկ. (ըծ. ըռ. հօստա. թ. խըշդ.) Βολίς, δοράτιον. Hasta, hastile, jaculum. Նիզակ. սուրն. տէգ. գեղարդն փոքր ձգելի 'ի բացեայ. գօտանիզա, սինէկէ, հարպա. *Ամենայն աշտեայք զօրուորաց (կամ նետք սպառազինաց). Երգ. Դ. 4: Նիսս. երգ: *Առեալ վահանս և աշտեայս. Ա. Մն. ԺԲ. 8: *Զզէնսն, զվահանսն, և զաշտեայս: Աշտէիւք զօրաւորացն. Նիսս. երգ: *Հեռի զաշտէսն արձակեալ: Աշտէիւ հարեալ սատակեաց. Խոր. Բ. 5: *Բարձեալ աշտեայս հանապազակիրս 'ի պատրաստութեան գաղանացն՝ որ 'ի մայրին: Եհար միով աշտէիւն ընդ միջոց թիկանցն: Եւ են ըստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս. Արծր. Բ. 7: *Աշտէին նիզակաւ 'ի մահ սատակէ. Նար. հա: *Ի գիրկս մարցն աշտէիւք խոցեալ. Լաստ. Բ: *Լայն աշտէնն, որ մխեցաւ 'ի կողն. Լծ. նար:

ԱՇՏԷՆԱՒՈՐ, ի, աց. Տ. ՆԻԶԱԿԱՒՈՐ: ՃՃ:

ԱՇՏԻՃԱԳՈՅՆ. ա. Առաւել կամ յոյժ աշտաւճ. չորագոյն. *Աշտիճագոյն, և ոչ զանոզորդ բուսան. Եւագր. Է:

ԱՇՏԻՃԱՆ. Տ. ԱՍՏԻՃԱՆ:

ԱՇՏԻՃԱՆԵԼ. Տ. ԱՍՏԻՃԱՆԵԼ:

ԱՇՏՈՒՃ, աճոյ, ով. ա. որ և ԱՍՏՈՒՃ. Ξηρός. Siccus. Չոր կամ չորաբեկ (հաց լոկ). (ըծ. յն. ... , անցարեան, անկերակուր. և թռ. ..., չոր ցամաք.) Գուրու. *Դու աղցի աղցի պղպեղուճանս ուտես, և նա և ոչ հաց աշտուճ. Ոսկ. մ. Բ. 23: *Լոկ աշտուճ հացիւ մխիթարել զանձինս. Կանոն: *Թէ և աշտաճով, զանձն երանելի համարի. Եւագր. Է: *Թէպէտև կերակրեաց, այլ աշտուճ հացիւ և ձկամբք. Ոսկ. Եփ: *Որք ջուր անգամ, և աշտուճ հաց ոչ գտանէին յագ. Ոսկ. աղ: և Վրք հց. Իա:

Իսկ 'ի բառս գաղիանոսի Սահակ. լեհ. ընթերցեալ ԱՇՏԻԿ՝ մեկնէ Զաւար. դուռ_ ղուր:

ԱՉԱԲԱՑ, բացք. ա. ն. Որոյ աչք են բաց. և Աչօք բացօք. *Աչաբաց հայեցեալ փոփոխական կաղապարելոյ. Փիլ. Եւ: *Հրեշտակքն աչաբացք և մտաւորք ... Վրդն. ցհ:

ԱՉԱԳԱՄ. ա. Խանդարեալ կամ ցա_

ւոգոր աչօք․ կուրացեալ․ *Եւ որք մնայցենն՝ աչագարք լինիցին․ զի այն է նուազել աչացն․ Կիւրղ․ ԲԳ։

ԱՉԱԳԵՂ, ոյ․ գ․ Աչօք գեղեցիկ․ աղուորալուկ․ *Հաւանեալս բանից աչագեղոյ դստերս ալանայ․ Խոր․ Բ․ 47։

ԱՉԱԼՈՒՐՋ․ ա․ Լուրջ և անխէթ աչօք․ համարձակահայեաց․ վստահ․ աներկեան․ արթուն զուարթուն․ զուարթ, և համարձակ․ պարկեշտ․ ճէրրէօթ․ *Գալ այսր համարձակութեամբ սրտիւ, և աչալուրջ երեսօք։ Այնպէս արժանի լիցուք կալ յաշխարհէս, զի և անդ ես աչալուրջ առ միմեանս բնակիցեմք։ Աչալուրջ համարձակութեամբ տեսանել զանէրն կարասցուք․ Սոկ․ Եփես․ Գ․ Բ։ Ն․ յհ․ ա․ 11։ յորս միշտ յն․ է լոկ, համարձակութեամբ կամ վստահութեամբ. Μετὰ παῤῥησίας, կամ ἀδείας. Cum fiducia. *Աչալուրջ ըմբռնութեամբ։ Աչալուրջ իմն և սիրալի օգնականութեամբ․ Մագ․ ԽԵ․ ԼԵ։ *Աչալուրջ երեսօք զբոլոր նորա կատարեալ զհայցուածս․ Յհ․ ԿԲ։

Իսկ Խոր․ Բ․ 39․ *Ընդ այգանալ աչալրջիցն, կամ աչալրջոցն ››․ իմա կամ ընթերցիր ըստ այլ ձ․ ԱՀԱԼՐՋՈՑՆ, որ է արշալուրչ, արշալոյս։

ԱՉԱԼՐՋՈՒԹԻՒՆ․ գ․ Παῤῥησία. Fiducia, confidentia. Աչալուրջ համարձակութիւն․ վստահութիւն․ պարզերեսութիւն․ աներկեանութիւն․ ճէրրէօթլիւլիք․ *Աչալրջութեամբ զքեզ տեսանել կարասցուք։ Վայելել աչալրջութեամբ զպատրաստեալ բարիսն սիրելեաց իւրոց։ Մեծաւ աչալրջութեամբ առ նոյն կայիր․ ևն․ Ոսկ․ յհ․ ա․ ոփէ։ *Համարձակ աչալրջութեամբ ասա (յն․ համարձակեա՛յ, ասելով)․ Կոչ․ ԾԳ։ *Վստահացեալ յայգուոջ անդր, զի պահպանեսցեն զաւելին աչալրջութեամբ․ Մծբ․ ԾԲ։ *Ունիք դուք յաչալրջութենէ անտի, յորում էին իսկ մեծացեալ նոքա․ Ոսկ․ Բ․ կոր։ *Պարծանօք և աչալրջութեամբ կաս առ նմա։ Աչալրջութեամբ կացցուք առաջի ահաւոր բեմին․ Արգ․ յէ․ Դ․ Ն․ ա․ պ․ Ճ։

Իսկ Կոչ․ ԾԳ․ 39․ *Ի վերայ ճակատոյդ մեծաւ աչալրջութեամբ եդեալ լիցի ››․ թերևս խորհրդով գրի ՚ի ձ․ և տպ․ Չ տառիւ, վասն զի և ՚ի յոյնն ասի, համարձակութեամբ՝ մատամբք։

ԱՉԱԽԻԼ․ ա․ Որ խլէ կամ տանջէ զաչս․ այլ՝ ձեռող՝ խլող․ *Աչախիլ խաւարաւ զամենեսին զմեզ ծածկեաց․ Յհ․ ԿԲ։

ԱՉԱԿԱՔԱՐ․ ա․ Որոյ աչք կոյքուեն կամ խաղան՝ զվայրօք յածեալ․ նաղարդող․ *Աչակաքաւ գլմօք․ Սիոփ։

ԱՉԱՂԱՄՏՈՒԹԻՒՆ․ գ․ Բառ անյայտ․ զոր իմա կամ ընթերցիր ըստ յն․ Աչաղամիտութիւն․ կամ Արագաշարագ շրջելութիւն, յեղյեղութիւն․ Ὀξυῤῥόπως. Celeriter vel acriter huc illuc inclinando. *Մարդկան իրք ամենայն երբեմն պատաբաղդին, և երբեմն խաղաղական, աչաղամտութեամբ․ իրացն ՚ի բարեաց կարծեցելոց ՚ի խատտղանեալ չարին փոփոխեցելոյ․ Աճոբ․ ԾՂ։

ԱՉԱՂԱՆՔ․ Տ․ ՅԱՉԱՂԱՆՔ․ *Աչաղանք և հարցուկք և ձեռնածուք․ Կանոն։

ԱՉԱՄԷՋՔ․ գ․ Միջոյն ընդ մէջ երկուց աչաց․ ճակատ կենդանեաց․ *(Գտաւթ) հարեալ այնուհետև կշռաւկն ընդ աչամէջսն անցուցանէր․ Պիտ։ *Հարեալ զնա ուրագովն ՚ի յաչամէջսն․ Ուռհ։

ԱՌԱՆՑԱՆԵՄ. Ἐξίσταμαι, ληρέω, ληραίνω. Mente excedo, deliro, nugor, ineptio. Արտաքոյ ելանել անձին կամ քան զչափն անձին, զառանցանել. բանդագուշել. աղճատել. ցնորիլ. շաղփաղփել. [illegible] *Եթէ առանցաք լինիչ, այն այ է. Բ. կոր. Ե. 11: *Քանիցս ասէք զնոյն ասեմ, եւ թուիմ թէ առանցեալ լինիչ իցեմ. Ոսկ. Եփես. ԻԱ: *Առանց առանցանելոյ բարբաջելոյ զգաստութ կերակրիմք: Ցորժամ առանցանիցէ եւ բարբաջիցէ եւ խելագարիցէ անձնս: Ցառողջամիտ խորհրդոց առանցեալ. Փիլ. այլաբ. Եւ Նխ. ա: *(Արբեցութիւն առնէ) շատխօս զհանդարտաբանն, առանցեալ՝ զիմաստունն. Խոսր: *Մարգարէդ առանցեալ է, ոչ գիտէ զինչ խօսի. Ոսկ. Եա: *Տղայս առանցելոյն բանից յեռուս. ԾԾ:

ԱՌԱՆՑԱՆՔ, նաց. գ. } Λῆρος. Delirium, nugae.
ԱՌԱՆՑԵԼՈՒԹԻՒՆ. }

Զառանցանք. բանդագուշանք. ցնորումն. բաշխաղանք. [illegible] *Առանցանք (կամ զառանցանք) են այն, եւ առասպելք անզօրք. Պարապմ. ՃԷ: *Արբեցութիւն եւ առանցելութիւն պատճառք. Փիլ. Եւ. Է. 15:

ԱՌԱՆՑԻԿ. ա. Առանցեալ. զառանցական. առասպելայօդ. *Եգիպտացւոց բազում ինչ առանցիկ ճառք պատմին. Եւս. քր. ա:

ԱՌԱՆՑՈՒԹԻՒՆ. գ. Ἐξοχή. Prominentia. Զանցումն. արտաւորութիւն զանցք. վերելք քան զառընթեր մասունս. ցցումն. *Իբրեւ թեփոյ իմն առանցութ, որ մերձ 'ի պարանոցն է խաղճախուղն, զձայն առարգելեալ. Նիւս. կազմ. Ծ:

ԱՌԱՆՑՔ, ցից, ցիւք. գ. Ἀπόλυπον. Relictum spatium. Անցք. զանցք. գատարկ եւ գողեալ միջոց անցից. տեղի թողեալ. խորշ ելից 'ի մէջ շինուածոց. պատրաստ Բողոծն. որոշել. *Ըստ առանցից կողմանց որմոցն առ 'ի վերին կողմն, որոց ելանիցեն 'ի վերնայարկսն: Առանցք 'ի մէջ կողմանց տանն: Առանցիւքն եւ խորշիւքն ընդդէմ հիւսիսոյ. Եզեկ. խա. 7. 9. 11. 12: խբ. 1: *Շինեաց աշտարակս, եւ առանցս գողաւոր խորշիւք. Խոր. Գ. 59: Առող. Բ. 1:

ԱՌԱՆՑՔ. Ἐξέχον, ἐκεχόμενον, προσέχον. Eminentia, prominentiae gradatae, junctura. Ագոյցք. զօգք. եւ որպէս Առանցութիւն. վերելք, ցցուածք. [illegible] *Խորշք 'ի մէջ առանցիցն, եւ 'ի վերայ խորշից նոցա 'ի մէջ առանցիցն առիւծք եւ եզինք եւ քերոբէք. եւ 'ի վերայ առանցիցն նոյնպէս. Գ. Թգ. Է. 28. 29: *Զօրէն զաւազանաց իմն առանցիւք, եւ բաղմօրինակ ըստ ձեւոյն մանուածովք. Նիւս. կազմ. ԼԲ:

ԱՌԱՆՑՔ. Μοχλός, ἄξον. Vectis, axis. Նիգ. ձող. լծակն. [illegible] *Զլարսն, եւ զամենայն ըղկոճ նորա, եւ զառանցսն, եւ զպախարակս նորա. Ել. ԼԶ. 32: *Զորք անիւք պղնձիք, եւ առանցք պղնձիք. Գ. Թգ. Է. 30:

ԱՌԱՇՈՂ կամ ԱՌ ԱՇՈՂ. ա. մ. Արեւահայեաց. լուսաւոր. եւ ջերմին՝ այսինքն տօթին, հօլ. որպէս շողիւ. *Ունէր առաշող խուղ: Ի տեղւոջ մօտաւորն եւ յառաշողոջ: Արկին [illegible] առ աշող, իսկ յայլում յանկեան ինքեանց. Վրք հց. Յ: Տես եւ ԱՌՈՇՈՂԻ:

ԱՌ ԱՉՍ. ԱՌ ԱՉՕՔ. Տ. ԱՉՔ:

ԱՌԱՉԱՍԵՐԵՒՈՒԹԻՒՆ. գ. Իբր Մակերեւութիւն. Ἐπιφανεία. Superficies. Որ եւ Վեր 'ի վերոյ երեւոյթ. մակերեւոյթ. արտաքին երեւք իրաց՝ երեւեալ աչաց. *Այսպէս նոցա զընդունական զգայութեանցն շուրջ[illegible]նացոյց զմարմինն, գծաւորակիր եւ հզօրագոյն, առ աչս երեւումն ընկալեալ. Նիւս. կազմ. ԼԲ:

ԱՌԱՉԱՍԵՐԵՒՈՒԹԻՒՆ. Առ աչօք երեւութանալն. Φάντασμα. Vana species. *Մինչ զի առ աչս երեւեալ կարծիս արկանել. Ցհ. ԽՄ. Երկ:

ԱՌԱՉՕՔՈՒԹԻՒՆ. գ. Իբր նոյն ընդ վ. Առ աչօք երեւումն. լոկ երեւոյթ. [illegible] *Ոչ առաչօքութ եղեալ այս, այլ ճշմարտութ. Ան. 'ի պարապմ:

ԱՌԱՊԱԳԱՅ, ի, եց. ա. գ. Որ առ յապա գայ. ապագայ. *Ամենայն խորհուրդք անցելոց եւ առապագայից 'ի քո ամբարեալ կային. Լծ. կոչ:

ԱՌԱՊԱՐ, ի, աց. ա. գ. Τραχύς. Asper. ἀκρότομος, praeruptus, rupes. Տեղի երիգուտ՝ քարուտ՝ ապառաժուտ, դըժուարուտ. խիստ. անկոխ. անհարթ, եւ խորտաբորտ. [illegible] որ եւ յերբ. եւ ըստ ոմանց 'ի յն. գրի, [illegible] (գուցէ որպէս զկողմանս ապառաժ արաբիոյ). Տես եւ ԱՌԻՐ, կամ ԱՌԱՌԻՐ. *Եդին նմա կայանս զառապարս: Հասեալ 'ի վերայ առապար լերին. Ցոբ. ԼԸ. 6: ԽԱ. 15: *Իբրեւ զի առապար է յոյժ անխորանից. Սեբ. Ը. 21: *Առապարքն 'ի գաշտս, կամ 'ի հարթ ճանապարհս. Եւ. Խ. 4: Ղկ. Գ. 5: *Բանջար կուտակեալ ... յառապարէն քաղեալ. Պաւ. ալեք: *Մօրից թափ-

առաւել չըջէր, և առաստաղաց։ Ջօշակաւն առաստաղաւն. Խոր. Բ. 21։ Գ. 9։ *Առաստաղ գմբեթայ. Եղիշ. Է։ *Իսկ զերկզառ փայտ առաստաղաց։ Առաստաղ գաշտաւանայր. Ցհ. ԽԲ։ *Ցառաստաղ տեղիս անկանէին. Լաստ. ԾՌ։

Իսկ Փիլ. ԼԲ. Ծ. 111. *Գլխովայքն Իւր ծառքեղեալք յառաստաղին». այլ ձ. առ յապաղի. (որպէս թէ արմատ բառիս իցէ ԱԳԱՐ. որ և լինի արմատ ԱԳԱՐԱԿ ձայնին)։

ԱՌԱՍՏԱՂԱՁՈՐ. ա. Ուր իցէ ձոր 'ի մէջ առաստաղաց, կամ իցեն առաստաղք 'ի ձորս անդ. *Հասանէին 'ի տեղի մի քարուտ առաստաղաձոր. Փարպ։

ԱՌԱՍՏԱՂԱՏԵՐ, տերի, րաց. ա. Որ տիրէ զառաստաղ կմ՛ զապառաժուտ վայրս. *Առաստաղատէր կայքուացն. Փարպ։

ԱՌԱՍՏԱՂԻՆ. ա. Որ լինի յառաստաղ տեղիս. *Կէտքն ('ի ծառոց) անգործք, Էլվայրանայինք, առաստաղինք. Վեցօր. Է։

ԱՌԱՋ, ոյ, առաջք, զառաջս, յառաջ, յառաջս. գ. τὸ Ἔμπροσθεν, ἔναντι, προτέρον. Quod ante est, coram, anterior. Ἀρχή. Initium, principium. Կողմըն՝ որ է առաջի աչաց. հանդէպ երեսաց. նախկին երեսաւ՝ կամ յառաջեալն վայր. սկիզբն ընթացից և տեղւոյ և իրաց. առաջէ. էօն. իլէրի, իւ. օնիւնէ. ձիօղ. ուֆի, գուշլուքձ. *Առաջ նորա հուր ծախիչ։ Զառաջ նորա, և զվերջ նորա. Յովէլ. Բ. 3. 20։ *Այն առաջն է . . . այն վերջն է. Եզ. Ի. 15։ կամ *Ընթացեալ յառաջս։ Յառաջոյ քումմէ։ Յերկաթն առաջս տախտակին։ Անտի բաժանի 'ի չորս առաջս։ Ի միջէ աշխարհէ ելցեն երիւր առաջք։ Յոր կողմն հայէր մի առաջն, զհետ նորա երթային։ Մտին 'ի գործն զսկզբնաւ չորք առաջք. Ան։ *Ամենայն ուրեք սկիզբն և առաջքն գծաւորինք են. Ոսկ. եբր. Ի։ *Աշխարհարողաց առաջնոյ. այսինքն առաջնորդն. Ոսկ. լուս։ Ի վերջէ յառաջին տանելի է մեզ պատմութեան. Լաստ. Ծ։ *Մարկիոն եդեալ երկու առաջս՝ ուսուցանէ զբարւոյ և զչարաչարոյ. Եղնիկ։ *Ի նմանէ (յիմաստասիրութենէ) առնուն առաջս և կատարումն ամենայն արհեստք և մակացութիւնք. Սահմ. Է։

ԶԱՌԱՋՍ ՈՒՆԵԼ. Զառաջոյ կողմն ըմբռնել, և արգելուլ զընթացս եկելոյն. առաջըր ալմաք. խաքաներ. էօնիւնիւ ալմագ, փէնի՛ էթմէք. *Եւ գուք զառաջս ոչ կարէիցէք ունել։ Եւ չմնաց բանական հանդերձ զառաջս ունէր նորա. Դ. Թ. 27։ ԺԳ. 20։ *Անմտագոյն է զամենայն բոց տարածեալ. վասն այսորիկ արգ. արգ. ... ունել զառաջն. ... Ոսկ. յհ. Ա. 3։

Մերթ՝ Յառաջոյ երթալ. առջնէն երթալ, բերանը կոյնիլ. *Տեսիլ ահաւոր ...՝ բարձր և ահեղ, որ զառաջն ունէր 'ի վերուստ։ Այրս՝ որ զառաջն ունիր զլուսոյն. Ագաթ։

ԸՆԴ ԱՌԱՋ. ՅԱՌԱՋ. ՅԱՌԱՋՈՅ. Տես 'ի տառն Ը, և Յ։

ԱՌԱՋԱԲԱՆ. Տ. ՅԱՌԱՋԱԲԱՆ։

ԱՌԱՋԱԲԵՐԱԿԱՆ. Տ. ՅԱՌԱՋԱԲԵՐԱԿԱՆ։

ԱՌԱՋԱԳՆԱՑ. Տ. ՅԱՌԱՋԱԳՆԱՑ։

ԱՌԱՋԱԴԻՐ, դրի, րաց. ա. Առաջի եդեալ. առաջիկայ. Տես և ՅԱՌԱՋԱԴԻՐ։ *Բառախնդրաբար ուսեալ զառաջադիր (կմ՛ առաջադրեալ) խորհուրդս. Լմբ. պտրգ։

ԱՌԱՋԱԴԻՐ. Προτακτικός. Praepositivus. Յառաջոյ եդեալ, Նախադաս. *Առաջադիր հնչիւնաւոր. Թր. քեր. որ են ը յառաջադրեալ լեզուի յունաց α, ε, η, ο, ω, եղեալք յառաջ քան զայլ ձայնաւոր առ 'ի կատարել զմի վանկ երկբարբառ. որոց փոխան ոչ 'ի դէպ դնի 'ի հյ. ա, ե, է, ի, ը, ո. այլ դնելի են, ա, և, ի, ո, եւթ. յորոց կազմին երկբարբառք, այ, աւ, եա, եւ, իւ, ոյ, ու։

ԱՌԱՋԱԴԻՐ. գ. Πρόθεσις. Propositio. Առաջադրութիւն, այսինքն առաջադրեալ նըւէր. *Ցիրաւի յանձայնն պատարագաց արենէն նուիրի 'ի վերայ առաջադրացն խորաքանչիւր ուրուք արժանի առնէ զնոսա. Փիլ. Եւ. Ա. 12։

ԱՌԱՋԱԴՐԵՄ, եցի. ն. Առաջի դընել, իբր յայտ առնել. հրապարակել. իսկ ԱՌԱՋԱԴՐԵԱԼ, իբր Առաջիկայ. Տես և ՅԱՌԱՋԱԴՐԵԼ. *Զհրամանն առաջի դընել հրամայեցին, և առաջադրեցաւ 'ի տաճարին. Ճ. Ա։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ. գ. Πρόθεσις. Propositio. Առաջի դրումն կամ մատուցումն նուիրաց, և նուիրեալն ընծայ. որ և ԱՌԱՋԱԻՈՐԹ. *Ի վերայ հացին առաջադրութեան։ Ծախել առաջի նորա խունկս և առաջադրութիւնս։ Սեղան առաջադրութեան. Ա. Ն. Լ. 32։ Բ. Ն. Բ. 4։ ԻԼ. 18։ *Ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս. Պտրգ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ. իբր Ցառաջադրութեան. գլխաւորութիւն. գլխեալ ինչ. Նպատակ. *Թերևս հասեալ առաջադրութեան, յոր Թևակոխեացն անիրաւութ. Փիլ. ԼԲ. Բ. 71։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ. Իրք առաջի եդեալք, կամ կարգաւորութիւն նոցին. *Եւ է տեսանել յամենեցունցն ընթրիս զերեկոյն բազմութի, և զնոցուն գլխոց կարգամանց զառաջադրութիւն. Փարպ։ *Իւղոյն բարեբաշխի բացատրութեամբ 'ի մասունս եօթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց. Նար. ԴԳ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ. Առաջարկութիւն, յորդոր. և Բան առաջարկեալ. *Եկն երբեմն հայրն մակարիոս 'ի լեառն նիտրիոյ առաջադրութեամբ աբբայ պամբոսի. Վրք հց. ԺԲ։ *Մանաւանդ զի առաջադրութիւնս ոչ եթէ վարդապետութիւն է, այլ օրինադրութի. Լմբ. պտրգ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ. Ցառաջոյ դրումն. Նախադասութիւն. *Նախադրութեան առաջադրութեան առն. Թր. քեր։ Տես և ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ։

ԱՌԱՋԱԽԱՂԱՑ. Տ. ՅԱՌԱՋԱԽԱՂԱՑ։

ԱՌԱՋԱԽՕՍ. ա. Առաջնորդ խօսելոյ 'ի հարցմունս. որ և ասի ԱՌԻԹ. *Ապաւինութեան կեանք աշխարհիս, ցանկութեան առաջնորդ, ամուսնութեան առաջախօս. ՃՃ։

ԱՌԱՋԱԾԻՆ. ա. գ. Առաջնածին. անդրանիկ. *Ցեան են ոմանք, որ անմարմին զօրութիւնք ասին, յիրաւի գոլ առաջածինք. Փիլ. ԼԲ։

ԱՌԱՋԱԿԱՑ, ի, ից. ա. գ. Որպէս Առաջակաց. յանդիմանակաց. մերձակաց. կամ առաջին յառաջի կացելոց. որպէս գլխաւոր պաշտօնեայ, խորհրդական, ատենակալ, վերակացու, անտես. *Ըղձականացն և գուշակելոցն մերձաւորք և առաջակայք. Նար. ատա։ *Հանձին Թուէր բանին առաջի Թագաւորին, և ամենայն մեծամեծացն, մանաւանդ որ էին առաջակայք օրինացն. Եղիշ. Բ։

Եւ Առաջակողմն. առաջք. երեսք. *Թևոցն սլացմամբ զառաջակայս բոցեղէն դիմացն ծածկելով. Անան. եկեղ։

Մանաւանդ իբր Առաջիկայ. Παρών, ὑπάρχων, ὑποκείμενος. Presens, subjectus. Ներկայ. առաջի արկեալ. ենթակայ. և հանդերձեալ, որ առաջի կայ առ 'ի լինել. *Զօրս առաջակայ։ Զգիշերս առաջակայ. ԺՏ։ *Ցառաջակայ պահու գիշերոյն. Հ. Ց. յոհնիս. Է։ *Ապա անց յառաջակայսն, և 'ի լինելոցն նշմարեցուցանէ. Ագաթ։ *Ցառաջակայ ժամանակն առնէ ապատան։ Որ յառաջակայ ամեն լինելոց է. Լմբ. աղ։ *Զգործեալ յանցանան չնորհեսամս ապաշխարել, և յառաջակայիցն պահեա. Մաշտ։ *Այս սովորութիւն է մեզ, զեղեալ բարին տալ, և զառաջակայն 'ի նմանէ խնդրել. Ը. Ա. Գ։ *Ցառաջակայ խորհրդոյս մեծութե ոչ ունելով նիւթ բացատրութեն՝ յանհասութիւն ապաւինիլ. Սկեւռ. Եա։ *Ի կաւեղէն յառաջակայ յօրինեալ պատշաճագոյն զպատկերին գործելցէ. Ոսկ. Մտթ. Բ։

ԱՌԱՋԱԿԱՑ, ի, աց. ա. գ. Ἐμπρόσθιος, προεστηκώς, προστάτης. Anterior, praepositus, praefectus. Նոյն ընդ ԱՌԱՋԱԿԱՑ, ըստ ա նշ. *Խոյ հօտից հեղինակ, և 'ի վայրենի ջոկիրս մի իմն 'ի Թագաւորականացն առաջակաց եղեալ. Փիլ. ԼԲ։ *Հաւատարիմ է առաջակացն այսր մեծի և հրաշափառագունի տան ոյ. Սարգ. ԺՀ։

ԱՌԱՋԱԿԱՑ. Հանդիպակաց, ընդդիմակաց. *Թէ ոչ բաժինք զառաջակաց կինք քաղցրութեան. Լմբ. աղ։ Տես և ՅԱՌԱՋԱԿԱՑ։

ԱՌԱՋԱԿԱՑՈՒԹԻՒՆ. գ. Πρόθεσις. Praepositio, և propositio. Առաջակացն գոլ. գլխաւորութիւն. վերակացութիւն. *Ի պարս մեղուաց յաներկբայս կացեալ լինին Թագաւոր. որ խնամութիւն առաջակացութեան ընկալեալ, երկնչին 'ի նմանէ. Փիլ. ԼԲ։

Եւ իբր Առաջարկութիւն. Նախադասութիւն տրամաբանական. *Կարեւորապէս հետեւի առաջակացութեան եզրակացութիւն. Անյ. պորփ։

ԱՌԱՋԱՀԱՍ. ԱՌԱՋԱՀԱՍՈՒԹԻՒՆ. Տ. ՅԱՌԱՋԱՀԱՍ։

ԱՌԱՋԱՁԱՅՆ. Տ. ՅԱՌԱՋԱՁԱՅՆ։

ԱՌԱՋԱՁԻԳ. ա. Προμήκεις. In longum productus. Ցառաջ կողս ձգեալ երկայնեալ. *Առաջաձիգ և պէսպէս ընկալան զգլուխս . . և չորքոտանի սեռն սոցա. Պղատ. օրին։

ԱՌԱՋԱՄԱՍՆ, մնութի. Տ. ՅԱՌԱՋԱՄԱՍՆ. ԼՆ։

ԱՌԱՋԱՆԻՒԹ. կմ՛ ՅԱՌԱՋԱՆԻՒԹ. գ. Առաջին նիւթք և սկզբունք. *Ցովսեպոս, որ նա էառ մեզ զառաջանիւթ պատմութեանց այսր ամենայնի գրութեան. (յն. օգնեաց). Եւս. պտմ. Գ. 9։

ԱՌԱՋԱՊԱՀ, ի, աց կամ ից. ա. գ. որ և ՅԱՌԱՋԱՊԱՀ. Πρόφυλαξ, ὑπασπιστής, πρωρεύς, πρότερος. Prior, excubitor. ԼՆ. Պահող զառաջս բանակին. յառաջամարտիկ. չարխաճի. *Առաջապահք երթիցուք որդւոցն իսրայէլի». յն. առաջինք. Թուոց. ԼԲ. 17։ *Առաջապահօք, վերջապահօք. Եղիշ. Գ։ Արշ. ԻԸ։ *Ոչ առաջապահս կամ վերջապահս. Ոսկ. Մ. Ա. 6։ *Սեպուհն մամիկոնէից առաջապահ էր այն օր. Փարպ։ *Կորեալ զառաջն առաջապահիցն՝ էանց 'ի գլուխ բլրին. Մովս։ *Սկիւթացիս, որովք յառաջապահաց պէտս վարեցաւ. Պտմ. աղէք։

Որպէս և Պահապան բանակի, ամրոցի,

նաւու. և Գիշերապահ զօր. և Յառաջընթացն յոր և է կարգի. *Առաջապահքն առաջի վահանակիր տայյին՝ յայսկոյս յայնկոյս երթային գային. Յհ. կԲ: *Կացուցէք պահապանս, զարթուցէք զառաջապահս. Երեմ. ծա. 12: *Փութացին 'ի պարիսպս, և պատրաստեցին զառաջապահս իւրեանց. Դատաւ. Բ. 5: *(Ի նաւի) առաջապահք, և ուղղիչք. Ոսկ. մ. Բ. 24: *Առաջապահք նաւաց յափն ծովու կացցեն. Եղիշ. ԻԷ. 29: *Տեսիլ ահաւոր մարդոյ առաջապահ յառաջեալ. Ագաթ: *Տես, փոխանակ տապաստորաց որպիսի առաջապահք երթան. Ոսկ. Եա: *Առաջապահ անցանէր առաջի թագաւորին պապայ. Բուզ. Ե. 1:

ԱՌԱՋԱՊԱՀԵՍՏ. Նոյն ընդ վ. Տես և ՅԱՌԱՋԱՊԱՀԵՍՏ. *Առաջապահեստ ճանապարհորդութեէն արարեալ (այսինքն եղեալ) մերձաւորուհ, վահան, եւն. Արծր. ա. 15: *(Խաչն) քնասէր զօրաց առաջապահեստ. Անյաղթ. Բարձր:

ԱՌԱՋԱՊՏՈՒՂՔ. գ. որ և Նախակատարք (ըստ յն). Προτέλεια. Primordium, primitiae, եւն. Նախկին բերք և ընծայք հասուն հասակի. արբուն. և Օժիտ. և Երախայրիք. *Այսոքիկ են ծածախին առաջապտուղք նախակատարք. Փիլ. Իմաստն:

ԱՌԱՋԱՄԱՅՈՒԹԻՒՆ. Տ. ՅԱՌԱՋԱՄԱՅՈՒԹԻՒՆ:

ԱՌԱՋԱՄՈՒՆ. Տ. ԶԱՌԱՋԱՄՈՒՆ:

ԱՌԱՋԱՍՏԵՂԾ, կամ ՅԱՌԱՋԱՍՏԵՂԾ. Տես ՆԱԽԱՍՏԵՂԾ. *Զանազանեալ յառաջաստեղծէ 'ի հողածնէն. Փիլ. Եղ:

ԱՌԱՋԱՏԱՐՓ. ա. Նախկին տարփացօղ, ցանկացօղ (պալլոյ, որպէս եւայ). Թէոդոր. Մայրագ:

ԱՌԱՋԱՏԵՍՈՒԹԻՒՆ. Տ. ՅԱՌԱՋԱՏԵՍՈՒԹԻՒՆ:

ԱՌԱՋԱՏԵԼ. Տ. ՅԱՌԱՋԱՏԵԼ:

ԱՌԱՋԱՏՈՒԹԻՒՆ. Տ. ՅԱՌԱՋԱՏՈՒԹԻՒՆ:

ԱՌԱՋԱՐԿ. գ. Իբր Յառաջ արկանօղ (զանձն իւր կամ զբան). առաջնորդ. *Սիմոն (մոգ) առաջարկ գտանի մանիքեցւոցն: Առաջարկ քնի բանին. Ճ. Ա:

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ, ելոյ. ա. Առաջի եդեալ. առաջիկայ. և Դրուեալ. *Ուշինչ թոյլ տուեալ լինէին 'ի բանիցն առաջարկելոցն: Ըստ առաջարկելոյ իրացն. Փարպ: *Որպէս և առաջարկեալս այր: Զի ըստ կամաց առաջարկեալն յաջողեսցի. Պիտ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. գ. Πρόβλημα, πρόθεσις. Propositio. Առաջի արկանելն, կամ դնելն, կամ բերելն. *Հոգաբարձացն առաջարկութե զցոյցս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար. Նար. կՀ: *Գոհութիւն քեզ, և խաղաղութեան բանից առաջարկութե. Լմբ. աղ:

Դիտաւորութիւն. եդեալն 'ի մտի. եդեալն առաջի առ առնել, կամ առ ընթրութե կամ 'ի հաստատութեն. Նիւսէս. *Զիւր առաջարկութե ոչ է մոռացեալ աբարչին. Փիլ. լին. Բ. 16: *Զառաջարկութիւնն փորձեցաւ գործով կատարել: Զի զչար կամացն առաջարկութե գիւրաւ կարացէ կատարել. Պիտ: *Կարի լաւ և պիտանացու է առաջարկութիւս այս (կուսութեան). Իգն: *Զկոտել առ թագաւորդ հռոմոց, և առաջարկութե կաթողիկոսի պահանջել. Ժող. հռոմկ: (որ բերի և 'ի յաջորդ նշ):

Յառաջ տանելն. յառաջատութե. ձեռնարկուածն և կատարուածն. գործադրութե. յառաջադիմութե. *Առաջարկութե գործոյ կամ գործոց, կամ իրաց. Եղիշ. Գ. Է: *Խորհրդոյն և իրաց, կամ կանոնին առաջարկութե. Փարպ: *Զբոլոր անօրէնութեցն կատարել զառաջարկութեն: Կամացն միայն պէտք են յօժարութե առ 'ի յառաջարկութե գործոյն գալ. Պիտ: *Շնորհօք նորին ամենայն որ զընթացս առաջարկութե ըստ բարւոյ մասին աւարտէ. Խոսր:

Կամ Գործ. գործառնութե. բուռն հարեալ ինչ առաջիկայ. *Առաջարկութիւն իմ ոչ է մեկնութե. Կանոն: *Զայժմուս տեսանելեաց զառաջարկութե պնդանչելի: Կարող է զառաջարկութիւս անօրինել 'ի բարի. Լմբ. սղ. և պտրգ: *Ի բոլոր անօրինական առաջարկութիւս. այսինքն 'ի անտեսական արարս. Մագ. խէ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. Πρόβλημα, πρότασις. Propositio, quaestio, objectio, enunciatio. Առարկուած. խնդիր. ձեռնարկուն. սկիզբն. առած. առեղծուած. գուշակ. *Առաջարկութե բերէ 'ի փորձ. եթէ ամենայն 'ի բարւոյ է, ուստի է չար, և ուստի եղեն հրեշտակք գեղք. Մագ. 'ի տխն: *Առաջարկութիւն քննամարտից: Լեզուագարի յաւէտ ձեր առաջարկութիւնք. Կիւրղ. գանձ. ուր և սակայ դրի՝ Յառաջարկուն: *Սուտ արգելոք է առաջարկութիւն, որ ասէ. Նիւս. բն. ՃԶ:

Կամ ըստ տրամաբանից՝ Նախադասութիւն, յորմէ լինի հանել զեզրակացուն. *Կարծիք հանդերձ պատճառաւ՝ եզրակացութի է առաջարկութեց. որդոն, հոգին՝ ինքնաշարժ, ինքնաշարժն՝ մշտաշարժ. մշտաշարժն անմահ է. ահա եզրակացութի առաջարկութեց. այսինքն հոգի՝ անմահ. Սահմ. ծԳ:

Առաջի դրութե. արտադրուն արտաքսմամբ. Πρόβολη. Projectio. *Բան՝ ոչ յառաջբերական, և ոչ խոհական, ոչ հաստուածն յանախտ բնութէն, և ոչ առաջարկութե, այլ որդի ինքնակատար. Ար. Զ:

Արկանելիք զառաջեաւ. սփածանելի, ծածկոյթ. *(Նախատեղծք) առանց ծածկութե և առաջարկութե. Աճառ. ծե:

ԱՌԱՋԱՐԿՈՒՄՆ, կման. Նոյն ընդ վ. ըստ ա և Զ նշ. *Վասն նմին իրի իսկ, և աճեցուցանելոյ զառաջարկումն՝ բերս ինչ ասէ. Ոսկ. յհ. Բ. 28:

ԱՌԱՋԱՒՈՐ, ի, աց. ա. գ. Πρῶτος. Primus. Ունօղ զառաջնութե. առաջին. նախկին. Իմ. *Յաւուրս հնձոց յառաջաւոր՝ 'ի սկզբան հնձոց գարեաց. Բ. Թգ. ԻԱ. 9:

ԱՌԱՋԱՒՈՐ. 'Απαρχὴ, πρωτογέννημα. Primitiae. Առաջնապտուղ. երախայրիք. նուէրք. Բուրգանդա. *Զառաջաւորս ցորենոյ բերցուք առ քահանայսն: Զառաջինս ղևտացւոցն, և զառաջաւորս քահանայիցն. Նեեմ. Ժ. 37: ԺԲ. 5: Տես և ԶԱՌԱՋԱՒՈՐ:

ԱՌԱՋԱՒՈՐ. Προκείμενος. Propositus. Եդեալն առաջի. *Եդիցին 'ի հաց յիշատակի առաջաւոր տեառն: Ի վերայ առաջաւորի սեղանոյն (այսինքն սեղանոյ եդելոյ առաջի տեառն). Ղեւ. ԻԴ. 7: Թուոց. Դ. 7: Տես և ԶԱՌԱՋԱՒՈՐ:

Կմ Առաջակաց. գլխաւոր. *Առաջաւորք և պատուականք 'ի գրան արքունի: Որ պատուական էր և առաջաւոր էր 'ի պաղատ նորա. Ճ. Ա:

Կամ Յառաջընթաց. տարհանդակ. *Առաջաւոր և կարապետ թագաւորի ընդգալստեան թագաւորի նշանակէ. Կանոն:

Սովորն նմանութեամբ ասի ԱՌԱՋԱՒՈՐ ՊԱՀՔ՝ կամ ՊԱՀՔ ԱՌԱՋԱՒՈՐԱՑ, իբր կանխեալ քան զաղուհացս, կամ քան զկիրակէ Նինուէացւոց, և քան զամենայն տարւոյ. կամ Առաջին պահք 'ի հայս առ լուսաւորչիւ եւն. *Կոչին առաջաւորք, զի յառաջաւոր է տէրունական պահոցն: Առաջաւորացն պահս զգալուստ թագաւորական պահոցն նշանակէ. Եփր. քրզ: *Այս առաջին պահք եղեւ յաւուրս սրբոյն գրիգորի... զոր և առաջաւորք կոչեմք. Զենոբ: *Առաջաւոր պահոցն կատարուածն. Կանոն: *Նախ՝ զառաջաւոր պահքն կարգէ 'ի մաքրութե հինգ զգայութեց նոցա. Տօնոյ: Ճառագրոյն, Շ. Բղբ: և Կոմիտ:

ԱՌԱՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ. գ. Πρόθεσις. Propositio. 'Απαρχὴ. Primitiae. Առաջի դրութե. իբր նուէր. և Առաջին պտուղ նուիրեալ: Տես և ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ, և ԶԱՌԱՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ. *Եւ 'ի վերայ նորա զհացն առաջաւորութե. Բ. Մն. Գ. 19: *Տուք ցնոսա զարծաթ և զոսկի և զսպաս առաջաւորութեն տանն այ. Բ. Եզր. Ը. 25:

Եւ Ἡγεμονία. Ducatus, imperium. Առաջնորդութե. պետութե. *Պանծալի անուամբք իշխանութե և առաջաւորութե ծածկելով զաւազակութիւն. Փիլ. Ժ. բան:

ԱՌԱՋԵԱՑՔ, կմ ԶԱՌԱՋԵԱՑՔ, ջէից. Նոյն ընդ վ. ըստ ա նշ. *Զհաց զառաջէից, և զզոհս. Նեեմ. Ժ. 33. յն. հաց երեսաց:

ԱՌԱՋԵԱՒ. մ. Տ. ԶԱՌԱՋԵԱՒ, և ԱՌԱՋԻ. առաջն, դիմաց. *Ածել առաջեաւ. Փարպ:

ԱՌԱՋԵՄ, եցի. Տ. ՅԱՌԱՋԵԼ. Προλαμβάνω. Praevenio, praesumo. *Ես քրխասանեալ եմ, և զայս առնէին անհնարին՝ ընդ առաջելոցն զինքն կապակցելով. Բրս. խ ղ:

ԱՌԱՋԵՒ. ԶԱՌԱՋԵՒ. Նոյն ընդ ԱՌԱՋԵԱՒ, ԶԱՌԱՋԵԱՒ. *Եւ ածել զարշակ արքայ հայոց զառաջեւ իւրով. Բուզ. Գ. 54:

ԱՌԱՋԵՒՔ, ջևս. գ. Եդեալքն առաջեաւ կմ զառաջեաւ. առջևինները. *Յորժամ լինիցի ծագումն (արևու), զառաջևն խանձելով. Շիր:

ԶԱՌԱՋԵՕՔ ԱՆԿԱՆԻՄ. իբր Ընդ առաջ ելանել և պատահել. *Ապա զառաջեօք անկանէր վասակ իւրով հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն ամենայն պարսից. Բուզ. Դ. 39:

ԱՌԱՋԸՆԹԱՑ. Տ. ՅԱՌԱՋԸՆԹԱՑ:

ԱՌԱՋԻ. ա. իբր ամկ. Առջի. Տ. ԱՌԱՋԻՆ. Իմ. ԿՋԷԻՔ. *Առաջի կերակուր: Առաջի մեղք որկրամոլութեն եղև. Շ. Բղբ: *Յառաջի պահու գիշերոյն: Գիտէր զառաջի խոստմանն զյապաղումն. Ճ. Ա. և Գ: *Չիք ինչ հաղորդումն առաջի ճառին ընդ այժմուս. Սեբեր. Է: *Նախերէին իւրեանց առաջի թագաւորին. Բուզ. Ե. 51:

ԱՌԱՋԻ. նախդր. ա. խ. Ἐνώπιον, ἔμπροσθεν, ἔναντι, κατενώπιον. Coram, ante, in conspectu, եւն. Յանդիման տեսաց. հանդէպ երեսաց. զառաջեաւ. առաջևը, առջևը. դիմաց. էմինպեկ, գարշըսընտա. և էօնինտէ, հուզուրունտա. *Մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ: Ահա երկիրս ամենայն առաջի քո է: Տուք զի նէն պատասխանի առաջի տեառն և առաջի օծելոյ նորա: Առաջի ձեր գնացայ: Բերին առաջի նորա: Տանել առաջի թա-

դասուցաց։ Մատուցանել առաջի նորա. ևն։ կամ *Քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի. Գծ. ԻԶ. 2։ *Իմ խոկ առաջի ընթերցան. Եղիշ. Ա։ *Սակաւուց առաջի։ Սրբոյդ առաջի։ Մաքուր հաւատոց ձեր առաջի. Պիտ։ Նար։ Լմբ։ *Անհաւատիցն արկանել առաջի. Խոր. Գ. 65։

ԱՌԱՋԻ. իբր Յառաջոյ. յառաջ քան. առջևէն, առաջուց. էօնինտէն, էվվէլ. *Ես երթայց առաջի քո։ Եւ ինքն եկեսցէ առաջի նորա հոգւով և զօրութբ եղիայի։ Առաքեաց զնոսա առաջի իւր։ Առաջի իմ եղև։ Առաքեալ եմ առաջի նորա. ևն։ *Ընթանայ անմարմնոցդ առաջի. Լմբ. ևմ։ *Մեռան առաջի իւր, և ինքն զկնի նոցա. Մխ. դտ։

ԱՌԱՋԻ. Ընդդէմ. հակառակ. դէմը, դիմացը. գարշը. *Առաջի ամենակալին ընդվզեցաւ. Յոբ. ԺԵ. 25։ *Մեր և ձեր առաջի ոչ կարեն կալ. Փարպ։

ԱՌԱՋԻ. որպէս Յոյժ. (զի և առաջ, առաջի՝ ծաղեն 'ի բառէս աչք. աչն.) *Որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի այ։ Խիստ թուեցաւ բանն առաջի աբրահամու։ Բարձրանայր փառօք գունդն խորայէլեան առաջի թագաւորին և առաջի ամենայն զօրաց նորա. և այլն։

ԱՌԱՋԻ. մ. նոյն ընդ վ. ըստ ամենայն առման. որպէս թէ խնդիրն կայցէ զօրութբ. առջևը, առաջը, առջևէն, առաջ, դէմացը, դիմացէն. ևն. *Զքոյին խոկ զոգիդ ունելով հանապազ մեռանել առաջիդ. Փարպ։ *Առաջի՝ պղնձիս հարկանելով փողս. Խոր. Բ. 57։ *Երթիցուք, եւ առաջի, և դու զկնի. Վրք հց. ԻԶ։ *Ժողովուրդն՝ որ առաջին և զկնի երթային։ Եկեալ առաջի՝ մատուցանէին քացախ։ Բերել՝ կամ ածել՝ կամ մատուցանել կմ ընծայել առաջի. ևն։ *Ոչ պայծառ վառմամբ գնան առաջի. Նար. ՀԸ։ *Կարապետ առաջի արձակեալ զյովհաննէս. Ագաթ։ *Երթայր յն առաջի քան զնոսա. Մրկ. Ժ. 32։

ԱՌԱՋԻ ԱՌՆԵԼ, կամ ԴՆԵԼ. Յանդիման առնել. յայտնել. մատուցանել։ Առակ. Ա. 23։ Խոր. Ա. 8։ Պիտ. Է։ Ագաթ։ Կորիւն։ Զենոբ։

ԱՌԱՋԻ ԱԾԵԼ. իբր Յանդիման աչաց մտաց կամ զմտաւ ածել. *Ախտահեան առաջի ածեալ զոչ կարող կատարել և կալ ընդդէմ նոցա պատերազմաւ. Յհ. կը։

ԱՌԱՋԻ ԴՆԵԼ. Ի մէջ կամ յաչս դնել. 'ի մէտ բերել. դիտել. յանձն առնուլ. և Բուռն հարկանել. 'ի գործ արկանել. *Եդին զուխտն առաջի, և գաչլինս կռեցին. Բ. Մ. ԾԶ. 21։ *Դիք առաջի զանուն քաղութն. Եղիշ. Զ։ *Զմեռանելն եղաք առաջի։ Զիւր առաջի եդեալ զհայրհօրդն կատարել. Փարպ։ *Զի յայն՝ զոր առաջի եդ, հատանել կարասցէ. Եզնիկ։ *Մխեալ ընդ հօր զառաջի եդեալն գործեցէ. Ագաթ։ *Զամբարականն առաջի եդեալ ըղըթս և զաղնութիւնս. Կորիւն։ *Հարկանել զառաջի եդեալ ինչ կէտ. Պիտ։ Ուստի ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ, ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ։

ԱՌԱՋԻ ԱՐԿԱՆԵԼ. Բուռն հարկանել. 'ի գործ դնել. դիտել։ Կր. Առաջի դնել. իբր նպատակ առաջի կալ. *Զիւր արուեստն առաջի արկեալ խրատէր։ Վասն կրօնն առաջի արկելոց. Կորիւն։ *Զի մի խափան ինչ առաջի արկելոց իւրոց գործոյն լինիցին. Խոր. Գ. 18։ Ուստի ԱՌԱՋԱՐԿԵԼ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ։

ԱՌԱՋԻ ԿԱԼ. իբր Ընդդէմ կալ. ատկալ. *Ոչինչ բնաւ տեսեալ կալ առաջի։ Վասնզի՝ որում ոչ ոք կարէ կալ առաջի։ Ոչ եթէ գիտէաք, եթէ մեք արդեօք առաջի ինչ կարեմք կալ։ Որում կարեաց և մանգի ոչ մեր նախնիքն և ոչ մեք առաջի չկարացաք կալ. Փարպ։

Անտանելի է ասել, Ոսկ. յհ. Ա. 38. *Թուէր լողացն՝ առաջի կալ զատացեալն ". այսինքն հակառակ գոլ, հակառակ խօսել։

ԱՌԱՋԻ ԿԱՅ. դիմաց. Πρόκειται, παράκειται. Praejacet, adjacet, adest. Կայ յանդիման. իբրու ներկայ գտանի, զի 'ի մտաց կմ մերձ լինել տեսանի. ավընթերը և պատրաստ կայ. 'ի վերայ կայ. հանդերձեալ է. Տես հռ. Է. 18. 21։ Բ. կոր. Է. 12։ Եբր. ԺԲ. 1. և 2։ Յուդ. 7։ Իմ. Բ. Ղ. Դ. 16. *Այլ զայս ամենայն՝ ժամանակդ, որ առաջի կայ, յայտնապէս պատմեսցէ ". յն. ժամանակդ հետևորդ։ *Որ առաջիս կայ խրատ։ Այլ այժմ որ առաջի կայ մեզ առաքինութիւն ձիթենւոյս. Պիտ։ *Թերևս չարիք ինչ մեծամեծք առաջի մարդոյն կայցեն. Եզնիկ, *Զայլ բազում գործս, զոր ասել կայ մեզ առաջի. Խոր. Բ. 45։ *Որում ծնանել առաջի կայցէ. Յհ. իմ. ափ։ *Ի մերձակայն եւեթ հայել, և որ յետ այնորիկ առաջի կայ միտն կորուսեալն՝ ոչ տեսանել. Իգն։ *Մարմին աերունական և արիւն փրկչական կայ առաջի. Պորփ. այսինքն 'ի մտաց հանդերձեալ է լինել։

ԱՌԱՋԻԱԿԱՑ. ա. Իբր Առաջակաց, յանդիմանակաց. *Պատիւ հրեշտակաց՝ առաջիակաց կայանք. պատիւ միածնին՝ նստելն ընդ աջմէ հօր. Սեբեր. Ա։

ԱՌԱՋԻԿԱՅ, ի, իւ. ա. Προκείμενος, παρών. Propositus, praesens. որ ասի և ԱՌԱՋԱԿԱՑ. Առաջի եդեալն. մերձակայ, և ներկայ. և Ապագայ. այն ինչ՝ զոր ունի ոք տեսանել, կամ առնել, կամ ասել. առջևի, առջևը եղածը, առջևը կեցածը՝ եղածը, ըլլալիքը, բռնելիքը. Որպէս Մօտաւոր. ներկայ. զոր օրինակ. *Զառաջիկայ զձորն լնուլին. Լաստ. ԺԱ։ *Յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ զմուտն առնել. Խոր. Գ. 26։ *Առաջիկայ տեսութիւն։ Յառաջիկայում սահմանում։ Սահմ. Ա. Գ։ *Հաւ առնելով առաջիկայիցս իմոց բանից. Խոր. Ա. 5։ *Առաջիկայս գործ։ Ե՛ւս մեհագոյն և առաջիկայիցս ձանաչել. Պիտ։ *Զգիտաւորութիւն իրին առաջիկայի բազում անգամ 'ի մակագրութէ բանին դիւրածանօթ այպէս կարէ ոք 'ի միտ առնուլ համառօտագոյն. Սարկ. մարդեղ։

Մանաւանդ՝ որպէս Ապագայ. հանդերձեալ. *Անցելոց, և առաջիկայից. Աւր. ԻԵ։ *Անցելոյն, և այժմուս, և յառաջիկայէն փրկեսցէ. Ժմ։ *Հասանէ նմա առաջիկայից յայտնութեն։ Յաղագս առաջիկայից հոգալ. Խոր. Ա. 24. 28։ *Դադարէ յառաջիկայ մեզացն՝ զոր գործելոյն էր. Մանդ. Է. (ուր և ներկայութեն 'ի մէջ բերի։) *Յուսով առաջիկայ մեծագոյն շահիցն մխիթարել. Պիտ։ *Փարատել զառաջիկայն՝ որ գալոց է գայթագղութի. Յհ. կը։ *Վասն առաջիկայ խոստմանցն՝ որ 'ի թագաւորէն ակն ունէին. Լաստ. Ա։ *Վասն զի ակնկալութբ սպասեմք առնուլ զառաջիկայն, հանդերձեալ կոչեմք. Խոսր։

ՅԱՌԱՋԻԿԱՅՍ, կամ ՅԱՌԱՋԻԿԱՅՆ. մ. Յառաջիկայ ժամանակս. առյապայ. այսուհետև. ասկից ետև, ետևէն, ետքը. ընմէկէն ամենայն. *Ունիմք ուսանել և գիտել յառաջիկայսդ. Սահմ. Ե։ *Կատարածիմ յառաջիկայսն, մի դուցէ ևն։ Կարկածէր երկիւղիւ առ 'ի յառաջիկայսն. Փարպ։ *Հատուցից յառաջիկայսն։ Յես առաջիկայսն գանձել. Պիտ։ *Շնորհակալ լեր, զի պահեցար. և աղաչեա, զի յառաջիկայսն պահիցիս։ Որ վասն անցելոցն խաղաղութեանց շնորհակալ լինի, կ՛ յառաջիկայն պահպանութեն գտանէ. Խոսր։

ԱՌԱՋԻԿՈՂՄԱՆԵՔ. ա. Որ ինչ ենն յառաջոյ կողմանէ. առջևինները. *Գօտի ածեալք 'ի վեր կոյս ղհանդերձն ժողովեալ, զառաջիկողմանէսն խոնարհագոյն քան զբարձսն 'ի ներքոյ ծնկին. Փիլ. փեսայն։

ԱՌԱՋԻ ՀԵՂՈՒԿ. ա. Προχέυμενος. Fusilis. Հեղեալ առաջի. *Կրկին ուրեմն կերակուր գնէ առաջի ածայինն իմաստութի. զմինն հաստատուն և յարամնայ, խոկ զմիւսն խոնաւուտ և առաջիհեղուկ. Դիոն. Եղբ. Ի։

ԱՌԱՋԻՆ, ջնոյ, ջնմէ, ով, ոց, կամ ջինց, ովք. ա. (որպէս նախ երևեալ աչաց.) Πρώτος, πρότερος. Primus, prior. Նախկին. մին. առաջներորդն. սկզբնական. վերագոյն. իշխանական. կանխագոյն. հնագոյն. վաղեմի. առջի, առջինը. իւ, էվվէլի, պիրինճի, իիր. *Առաջին եղեցի ձեզ յամիս տարւոյ։ Յամենայնի առաջնում։ Յօրէ յառաջնմէ։ Յառաջնմէ օրէ։ Կարգն առաջին. կարգն երկրորդ։ Իբրև զառաջինն։ Ես եմ առաջին, և ես նոյն եմ առ յապա։ Եղիցին առաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք։ Յազգացն առաջնոց։ Զաւուրսն զառաջինս։ Զբանն առաջին. ևն։ *Յաղագս երիցն ասելի է, 'ի յառաջնմէն սկիզբն առնել։ Յառաջնմէն մինչև ցհուսկ յետինն. Փիլ. խմաւփն։ Եւս. քր. Ա. 8։ *Յառաջնմէն մաքրեսցի ծննդենէն. Ածաբ. պէնփ։ *Ի զարմից առաջին թագաւորացն. Խոր։ *Ըստ առաջնում կարգին. Եղիշ։ *Առաջնովք հայրապետօքն. Պիտ։ *Յառաջնոցն քան զիս 'ի մատենագրաց. Յհ. կը։ *Ած զքահանայապետն հրէից զառաջին ժամանակաւ. Բուզ. Դ. 55։

ԱՌԱՋԻՆ, իբր Անդրանիկ յեղբարս. և Երախայրիք 'ի խայրիս. առջինէկ. *Զառաջին որդին։ Սորա առաջին՝ արմատ. Խոր. Բ. 7. և Ա. 10։ *Առաջնոց արմատոց. յառաջնոց արդեանց. առաջինք արմատոց. զառաջինս պտղոց։ Ոչ ասաց առաջին արգեանց երկրէն. ևն։

ԱՌԱՋԻՆ. Գլխաւոր. պատուաւոր. գլուխ յոր և է կարգի. *Առաջին յերիցն։ Քահանայն առաջին։ Մի յառաջին իշխանացն։ Ընդ առաջին բարեկամսն։ Զառաջին ուրելի աւագաց իւրոց։ Որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել. ևն։ *Եկն քն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց առաջինն ես եմ. Վրք հց. Ա. Յ։

ԱՌԱՋԻՆ. Լաւագոյն. ազնուագոյն. *Հանդերձ առաջին ամենայն իւղովք. Երգ. Դ. 14։ *Առաջին իւրոյ գանձուն համարելով. Խոր. Ա. 8։ *Իմաստասիրութի ընդ առաջինսն ունի զգոյութի. Սահմ. Է։ *Զօրովայն և զանափառութի և զոր ինչ աւտանոր խայտառակութիւնք են՝ ընդ առաջինսն դնեն. Նիւս. Բնութ։

ԱՌԱՋԻՆ. Յառաջոյ կուսէ եղեալն. *Առաջին կողմն նաւին խրեալ՝ անշարժ մնայր։ Նրկայնութեն առաջին... յառաջոյ կողմանէ. Գծ. ԻԷ. 41։ Ե. Թ. Գ. 4։

ԱՌԱՋԻՆՔ. գ. Πρόγονοι. Majores.

Նախնիք. հարք և հաւք. Տէր առաջիններըն. ոմնալոր, խոլոփ. *Զանխմտատասէր բարս առաջնոցն մերոց: Ցուցանել զառաջինսն մեր, և զբուն հին նախնիս. Խոր. ա. 2. և 8: *Առաջինքն մեր. եւն. Յհ. կմ. ոփ: *Սկսաւ յուշ առնել զմիոյ միոյ զառաջնոցն քաջութիւն. Բ. Մ. Է. 19:

ԱՌԱՋԻՆ. մ. որ և ՅԱՌԱՋՆՈՒՄ, ՅԱՌԱՋԻՆՍՆ, ԸՆԴ ԱՌԱՋԻՆՍՆ. եւն. Πρότερον. Prius, primum. Իբր Յառաջ. յառաջագոյն. զառաջինն, եւն. *Մինչ առաջինն քան զմարդիկ ծնեալ իցես. Յոբ. ժէ. 7: *Եւ անդ էր յառաջնումն, ուր տային ըղձմանունյն. Ծնն. ժգ. 5: *Որպէս յառաջնումն ողորմեցայք ինձ, նոյնպէս և այժմ գթացէք յիս. Վրք հց. ժդ: *Զոր յառաջնումն բանսարկութբ եառուն մերժել զնոս հայք. Փարպ: *Որ յառաջնումն չկարաց յաղթել, յայտ է՝ թէ և 'ի վախճանին չկարէ յաղթել: Զվերջին հարուածն յառաջնումն ոչ ած 'ի վերայ նորա. Եղնիկ: *Յառաջնումն իսկ (նուագի յանցանաց) 'ի բաց թողոյր առանց ուղղութե. Երզն. մտթ: *Որպէս յառաջնումն ընչեւոյ ըրհեղեղաւն, սոյնպէս յերկրորդումն. Շ. ա՛մ լուր: *Ըստ յառաջինսն մինչդեռ բարեացն առատութբ պատկեալ էր. Լաստ. ծէ: *Մեծ ճգնութիւն և աշխատանս ունին ընդ առաջինսն այնք, ովք դիմեն առ ած. իսկ յետոյ գտանեն խնդութիւն: Բազումք կամեցան ընդ առաջինսն նախ մեծամեծս առնել, և յետոյ և ոչ զփոքունս կարացին առնել. Վրք հց. ձ. Ն ԻԷ: Տես և ՅԱՌԱՋՆՄԷ, ԶԱՌԱՋԻՆՆ, ՆԱԽ ԱՌԱՋԻՆ:

ԱՌԱՋԻՆ. մ. Πρῶτον, τοπρῶτον. Primo, primum. Նախ. մի՝ զի. տօմըշ, պէյնը՛ օր. պիրինճի, պիր տէ, իպթիտա. *Վասն երկուց պատճառաց: Առաջին՝ զի մի եւն: Նշանագրեցի յայսմ յեօթն յեղանակի. առաջին՝ զժամանակն. երկրորդ եւն: Խորհեալ չարաչար խնայմունս. առաջին՝ զայս եւն. Խոր: Եղիշ: Փարպ: *Առաջին խոստացուք առ կրօնաւորսդ: Առաջին զհոգւոյն հոգալ կերակրոց, և ապա զմարմնոյն: Ինքն առաջին մարտեաւ, և յաղթեաց, և ուսոյց զօրինակ պատերազմին. Շ. ընդհ: Իգն: *Ոչ խոնարհէին միմեանց, թէ մինն առաջին մտցէ: Առաջին ախտանաս զամբարտաւանութիւն. Վրք հց. ծԲ. ԽԴ: Տես և ՆԱԽ ԱՌԱՋԻՆ:

ԱՌԱՋԱՃԱՆԱՊԱՐՀ. Տ. ՅԱՌԱՋԱՃԱՆԱՊԱՐՀ:

ԱՌԱՋՄԷ. Տ. ՅԱՌԱՋՆՄԷ:

ԱՌԱՋՆԱԳՈՅՆ. ա. Ἡγεμονικώτατος. Magis principalis. γενικώτατος, generalissimus. Գլխաւորագոյն. վերագոյն և առաջնորդական. սեռականագոյն. *Իշխանականագոյն և առաջնագոյն կենդանւոյն՝ դէմք. Փիլ. այլաբ: *Փայտն կենաց է իշխանականագոյն և առաջնագոյն առաքինութիւն. անդ:

ԱՌԱՋՆԱԳՈՒՇԱԿ. Տ. ՆԱԽԱԳՈՒՇԱԿ. *Զառաջնագուշակ վկայութիւն մարգարէիցն որ վասն քո. Հ=Ց. յնւր. Բ:

ԱՌԱՋՆԱԾԻՆ. ա. Իբր Անդրանկածին. (մայր) ծնող զառաջին զաւակ. *Զառաջնածին կնոջ զմանուկն չարամահ առնելով. Ցհ. կմ. պող:

Եւ Սկզբնաբար ծնող (հայրն). *Առաջնածին արուն, և պատճառագունի զօրութեան. Փիլ. լխ:

ԱՌԱՋՆԱԿ, ի, աց. ա. Առաջին. նախկին. *Անձնացեն ծնունդք ըստ առաջնակն ղեհնութեան: Առաջնակ գոլութիւն: Զերկեյայ յառաջնակին փառաբանութեց. Պիտ:

Եւ Առաջնորդ. հեղինակ. ըստ յն. առաջնորդուհի. Ἡγεμονίς. Ductrix, imperatrix. *Բարեպաշտութիւն և արժանաւորութիւն (արքութե) զառաքինութեն առաջնակս խոկ արդ արդեօք 'ի ներքս առհմանի ունիցին ոգւոցն. Փիլ. Ճ. բան:

ԱՌԱՋՆԱԿԱՆ, ի, աց. գ. Ἡγέμων, ἡγεμονίς, ἡγεμονικός, γενικώτατος. Princeps, principalis, generalissimus. Առաջին. գլխաւոր. իշխան, կամ իշխանուհի. և Առաջնորդական. իշխանական. և Սեռականագոյն. որպէս Առաջնագոյն. և Առաջնակ. *Դէմքն (կամ երեսք) առաջնական մարմնոյն է. Փիլ. լխ. ա. 5: *Զիշխանականն զառաջնական առաքինութիւն փայտ ասել կենաց ասեմք: Սիրտն, կամ միտքն՝ իշխանական առաջնական գոլով: Սկզբունս ո՛չ զտեղականսն առնու, այլ զառաջնականսն: Քանզի իւրաքանչիւր ոք յառաքինութեցն իշխանաւէտ և առաջնական և բամբիշն ճշմարտութբ է. Փիլ. այլաբ:

ԱՌԱՋՆԱՃԱՇԱԿ. ա. Առաջին ճաշակն, կամ ճաշակեալն պտուղ դրախտի. *Որ զառաջնաճաշակն քաղցրացոյց ճաշակմամբ դառնութե. Շար:

ԱՌԱՋՆԱՅԻՆ. ա. Իբր Առաջին. առաջնակ. *Նախկին և առաջնոյին (կամ առաջնոյն) խրատուն. Փիլ. լխ. ճ. 146:

ԱՌԱՋՆԱՊԱՀ. Տ. ԱՌԱՋԱՊԱՀ. *Նախինքն էր առաջնապահ և վերջնապահ. Եփր. ծն:

ԱՌԱՋՆԱՊԱՏՈՒՄ. ա. Յառաջագոյն պատմեալ, նախաճառեալ. *Ածեալ 'ի կատարումն զառաջնապատում պատգամն եսայեայ. Ագաթ:

ԱՌԱՋՆԱՊԱՐԳԵՒ, ի. գ. Առաջին պարգև. երախայրիք շնորհին. *Որ զառաջնապարգևի քո նշխար ոչ խնայեցեր ընծայել շանն հոմանասիրի. Շար:

ԱՌԱՋՆԱՊԷՍ. Տ. ՆԱԽԿԻՆԱԲԱՐ. Πρώτως. Primo loco, gradu. *Ի հաղորդութե լինել հայութբ և առաջնապէս, և երկրորդաբար և նուաստաբար. Դիոն. էրկն. ժԲ: *Սիրտ զհոգին նշանակելով. քանզի առաջնապէս զգայ զուրախութիւն, և ազդէ յանդամս մարմնոյն. Յհ. կմ. էկ: *Քան զայլ զգայութիւնս առաջնապէս աչք հաղորդին լուսոյ. Լծ. ածաբ:

ԱՌԱՋՆԱՊՏՈՒՂՔ. Տ. ԵՐԱԽԱՅՐԻՔ. *Բերին երբեմն գինի 'ի սենեկան՝ առաջնապտուղս. Վրք հց. Է. (իբր յառաջին խաղողոյ, կամ նորահաս գինի:)

ԱՌԱՋՆԱՍՏԵՂԾ. ա. Որպէս Նախաստեղծ. և Նախաստեղծեալ. *Առաջնաստեղծ մարդ: Զամենայն արու անդրանիկ քառասնօրեայ նուիրել տեառն վասն անդրանիկ առաջնաստեղծ մարդոյն յանցանաց. Զքր. կԲ: *Ածես 'ի լրութիւն առաջնաստեղծ հարստութեան: Ցեառ նախակարգ յօրինուածոյն առաջնաստեղծ լինելութեան. Նար. կԳ:

ԱՌԱՋՆԱՍՏԵՂԾՈՒԱԾ. Նոյն ընդ վ. *Երեց որդի զհրեշտակն ասէ, որ են առաջնաստեղծուած. Ոսկ. ղէ:

ԱՌԱՋՆԱՏԵՍ. ա. Յառաջնմէ տեսեալ, երևեալ, ցուցեալ. հին. *Զհարկանող օձիցն 'ի բաց փարատէ զառաջնատես խայթոցան. Եղիշ. խւ:

ԱՌԱՋՆԱՏԻՊ. Տ. ՍԿԶԲՆԱՏԻՊ. *Ըստ առաջնատիպ գեղեցկութեան մարդոյն. Լմբ. ող:

ԱՌԱՋՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ. գ. Առաջինն գոլ. նախապատուութիւն. գահերիցութիւն. *Այն՝ որ 'ի սրտին դնէ զառաջնաւորութիւն. Նիւս. կազմ:

ԱՌԱՋՆԵՐՈՐԴ, ի. ա. Որ լաւ ևս առաջին. առաջնորդ. ամէն. պիրինճի, իլք. *Յամին առաջներորդի (կամ առաջնորդի) բագաւորայ. Դան. Է. 1:

ԱՌԱՋՆՈՐԴ, ի. ա. Πρῶτος. Primus. Նոյն ընդ վ. այսինքն Առաջին. *Յամին առաջնորդի դարեհի: Յամին երեմներորդի և առաջնորդի, եւն. Դան. Թ. 1: Մ. Մ. ԺԳ. 42: Գ. ԹԳ. ԺԳ. 23:

ԱՌԱՋՆՈՐԴ, ի, աց. գ. Ὁδηγός. Viae dux. Յառաջագնաց ուղեցոյց. ճամբայ ցցնող, գլաւուզ. *Նախազ՝ առաջնորդ հօտի: Կոյրք են՝ կուրաց առաջնորդ. Առակ. լ. 31: Մտթ. ԺԵ. 14. եւն: *Տեառնողականքն աչօք՝ չունին պէտս առաջնորդի. Նար. ԺԲ: *Տեղեակ առաջնորդաք գոլ, կամ փախչել. Փարպ: *Առաջնորդ կենաց... առաջնորդեա մեզ գնալ 'ի ճանապարհս քո: Առաջնորդք եղին մեզ ուղիղ գնացիւք 'ի շաւիղս արքայութե երկնից: Նախաշաւիղ և առաջնորդ կենացն յաւիտենից՝ ով սբ վկայք. Ժմ:

Կամ Χειραγωγός. Manuducens. Ունող զձեռանէ. *Անկաւ 'ի վերայ նորա մէգ և խաւար, և շրջեալ խնդրէր առաջնորդս. Գծ. ԺԳ. 11:

ԱՌԱՋՆՈՐԴ. Ἡγέμων, ἡγούμενος, ἀρχηγός, προηγούμενος, προεστώς. Dux, princeps, praeses, rector, praepositus, praefectus, եւն. Առաջինն կամ գլխաւորն յամենայն տնտեսութիւն քաղաքական և եկեղեցական. վարիչ. ուղղիչ. թագաւոր. իշխան. վերակացու. հեղինակ. եպիսկոպոս. վանահայր. պարագլուխ. զօրագլուխ. եւն: *Զած՝ զհայրն, և զիշխան առաջնորդն աշխարհի. Փիլ. Ճ. բան: որ և ասի ԱՌԱՋՆՈՐԴԱՊԵՏ: *Տացէ զքեզ պատուիրանաւ առաջնորդ 'ի վերայ խորայելի: Իշխանք յուդայ առաջնորդք նորա: Դու ես մեր առաջնորդ փոխանակ յուդայի: Առաջնորդ 'ի վերայ ամենայն զօրացն: Առաջնորդ նազովրացւոց հերձուածոյն. եւն: *Առ եղեկիայիւ հրէից առաջնորդաւ: Ընդ պարսիկ առաջնորդաւ վարիլ. Խոր. ա. 22: *Ի դամասկացւոց առաջնորդէն փախուցեալ. Պարապմ. Բ: *Առաջնորդովք և գրովք սրբովք ազգի ազգի ուղղութիւն ցուցեալ. Խոսր: *Մեծն առաջնորդաց. Նար. ԺԲ: *Մի ոք յեղբարց արտաքոյ լիցի զառաջնորդէ իւրմէ. Շ. ԷՀ: *Մի ինչ զառաջնորդին զանօրէնութիւնն խուզել. Բրս. հց: *Առաջնորդքն մեր եղեն խորհրդագգածք. Դիոն. էկեղ:

ԱՌԱՋՆՈՐԴ. Ἀνάδοχος. Susceptor, fidejussor. Կնքահայր. որ ընդունի զոք 'ի սբ աւազանէ. *Ըստ առաջնորդին իւրոյ աւանդութե՝ այ և ածայնոցն հպել: Ի գիր հանել զնա, և զառաջնորդն նորա: Ընձեռեն առաջնորդի ընծայման. Դիոն. էկեղ. Բ:

ԱՌԱՋՆՈՐԴ. Ἀρχηγέτης, ἐξηγητής. Author, expositor, interpres. Նախկին մատենագիր, շարագիր. մեկնիչ. պատմիչ. օրէնսուսոյց. *Որ առաջնորդ եղև այնց դպրութեց. Բ. Մ. Բ. 32: *Ոչ գոյցէ առաջնորդ ազգի անօրինի. իսկ որ պահէ զօրէնս, երանելի է. Առակ. ԻԹ. 18:

ԱՌԱՋՆՈՐԴ. Ὁδηγής, ἡγούμενος, ἀρχηγός, δημαγογός. Dux, princeps, rector, եւն. Սկզբնապատճառ, վարդապետ, ուսուցիչ. կամ յառաջ վարող և առիթ յորս և է բանի. և բերան ժողովրդեան. *Խմաստութե առաջնորդ: Առաջնորդ բանին. Իմ. Է. 15: Գծ. ԺԳ. 11: *Առաջնորդ առաքինութեն մաքրաւորք և ձկնորսք. Ոսկ. մ. ա. 1: *Ա-

առաջնորդ գտեալ յազգապետական կարգաց. Յհ. կբ: *Առաջնորդ խաղաղութեան. Նար. կդ: *Զառաջնորդ կենացն սպանէք. Գծ. գ. 15: *Առաջնորդ կորստեան աշխարհիս լինէր. Փարպ: *Առաջնորդ լինել հեթանոսութեանց, կամ ձաղանաց, ևն. Պիտ:

Եւ իբրև Մեզք առաջնորդական. *Ցեղխանական առաջնորդքն 'ի բանականն յագողն. Փիլ. լի. ա. 6:

ԱՌԱՋՆՈՐԴԱԳՈՅՆ. ա. Գլխաւոր առաջնորդ. Տ. և ԱՌԱՋՆՈՐԴԱՊԵՏ. *Աստուածայինն անուն է առաջնորդագոյն և պետական, որով երկինն և երկիր և ամենայն աշխարհ վարի. Փիլ. Իւ. բ. 13:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ. ի, աց. ա. Ἡγουμενικός. Principalis. τὸ Ἡγεμονικόν. Princeps. Սեպհական առաջնորդաց և առաջնորդութե. *Առաջնորդական հանդէս, կծ պատուի, կամ իր և կոչումն. Յհ. կբ: Նար. խօս: Ղ. ափն:

Եւ Առաջնորդող. անուն զզօրութե առաջնորդելոյ. *Առաջնորդական աջ արարչին. Պիտ: *Առաջնորդական քո ցուպ. Մագ. իթ: *Իբր նախաշաւիղ առաջնորդական յանապարհին յարկ հրաւիրեաց. Նար. ծբ: *Հոգի ուղիղ առաջնորդական. Աճառ. զենք: և Շար: *Արեգակն, զոր ամենք առաջնորդական աստեղն գոլ. Փիլ. նխ. բ: *Հանձնելով առաջնորդական խափանեցաւ. Նար. իզ:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ. ա. գ. Ասացեալ սեպհականել մասին մարդոյ, որ է որպէս առաջնորդ բանական հոգւոյն. յն. ἡγεμονικόν, որ և ԱՌԱՋՆԱԿԱՆ, և ԻՇԽԱՆԱԿԱՆ ասի. *Իշխանական առաջնորդականն 'ի ներքս 'ի գլխաւորին է (յոգւոջ): Այժմ 'ի մարմնի իմաստ իշխանական առաջնորդականն ըստ պայացութե է, իսկ ըստ զօրութե յետոյս, կամ 'ի սկզբունս. Փիլ. այլոց: *Արտի (այսինքն մտաց) մաքրութի 'ի մեզ առաջնորդականին. Նիւս. խոս. գ: *Որ զառաջնորդական միտս լուսաւորէ: Խնամատութեն զառաջնորդական միտս սատալեալ ունի. Յճխ. գ. և է: *Յառաջնորդական միտս նոցա տպաւորեալ. Շար: *Միտքն որ է առաջնորդական հոգւոյն. Սարգ. ա. պ. գ: *Զառաջնորդականն իմոյ կախեալ զպարանոցէ. Յհ. խմ. աբ: *Որոց կուրացեալ է առաջնորդականն. Խոր:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ. գ. τὸ Ἡγεμονικόν. Potestas gubernandi. Առաջնորդական իշխանութի. կարողութի առաջնորդելոյ. *Ցայտնէ (անուն կամ մերականոմն) երկնայնոց պետութեցն զաստուածատեսակ պետականութեն և առաջնորդականութիւնն կարգաւ սպասաւորի. Դիոն. երկն: Ղ. հրեշտ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՊԵՏ. ի, աց. ա. գ. Գլխաւոր պետ և առաջնորդ. *Վասյեղերական նախկինել և ընծայեցուցեալ առաջնորդապետին այս: Կրտսերագոյնն՝ նորա երկրպագուին իշխան է և առաջնորդապետ. Փիլ. լի. զ: *Ի մերոց առաջնորդապետաց և վերակացուաց խնամատարութեան՝ 'ի պղտորումէ սանձ, և յարխայակելք. Ան. գորէ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ. գ. Φιλοπρωτεία. Primi loci cupiditas. Սէր առաջնորդութե. *Բազում ցանկութե առաջնորդասիրութե եւ զանձն իւր (մանաւանդ) ճանապարհ լինել թշնամւոյ. Նոն. գոմ. է. 16:

ԱՌԱՋՆՈՐԴԵՄ, եցի. չ. Ὁδηγέω, ἡγέομαι, κυβερνάω. Duco, conduco, rego, guberno, ևն. Լինել առաջնորդ ուղեցոյց. տանել ընդ ճանապարհ. ուղղել. վարել. յաջողել. առաջի երթալ. Գլուղոդւոֆ, ֆօլ կէօթիւրմէք. *Առաջնորդեաց ժողովրդեանն այնմիկ 'ի տեղին՝ յոր ասացի քեզ: Առաջնորդեաց արդարոյն 'ի շաւիղս: Առաջնորդեաց նոցա ընդ ճանապարհ ուղղորդելի: Ասաղն առաջնորդեաց նոցա: Առաջնորդեացէ մեզ տծ փրկիչ մեր: Ո՛ տէր փրկեա, ո՛ տէր առաջնորդեա: Ցուցա մի յերկոտասանից առաջնորդեր նոցա, ևն:

Կամ որպէս յն. Ղեկավարել. Թէքտիր էթմէք. *Առաջնորդեն ամբարիշտք նենգութեանց. Առակ. ծբ. 5: *Երկու ծերք դատաւորք, որք համարէին առաջնորդել ժողովրդեանն. Դան. ժգ. 5:

Կամ իբր Հովուել. կիւթմէք. *Արածէր զնոսա. յանմեղութե ձեռաց իւրոց առաջնորդէր նոցա. Սղ. հէ. 72:

Եւ մանաւանդ՝ Վերակացու և իշխան լինել. վարել զիշխանութի. առաջին լինել 'ի անուանութեան, ևն. հիւքմ էթմէք. *Ե՛ւ դու, և ամենայն ժողովուրդ քո՝ որում դուդ առաջնորդես. Եւ. ժա. 8: *Սիմոն ոմն առաջնորդէր տոհմին իւրոյ: Առաջնորդէր յոյժմաթան իւրև 'ի բերանոյ նեէմեայ, և այլքն զկնի կցէին. Բ. Ն. գ. 4. և ա. 23: Սոյնպէս և յայլ գիրս:

ԱՌԱՋՆՈՐԴԵԼ. ն. Ուսուցանել, ցուցանել զճանապարհ. և Տանել ընդ ճանապարհ. վարել. *Ծառայ տյ, առաջնորդեա՛ ինձ զճանապարհս փրկութե: Առաջնորդեա՛ ինձ տէր զնեղ և զնուրբ ճանապարհ. Վրք հց. յ: Եփր. աղօթ: *Ըքով և պատուով առաջնորդէր նոցա զերկայնութիւն ճանապարհին անդրէն յերկիրն հայոց. Եղիշ. բ: *Հովուել զհովուեալս, և առաջնորդել զառաջնորդեալս. Մաշտ: *Ոչ դք գոյր, որ առաջնորդէր նոցա զքահանայապետութեն. Բուզ. գ. 15:

ԱՌԱՋՆՈՐԴԻԼ. կր. *Առաջնորդեցայց 'ի լուսաւորացն: Առաջնորդելով 'ի գըլխաւորագունէ ուսմանէ. Պիտ: *Այրուձին հայոց 'ի ձեռն նախարարացն առաջնորդէր 'ի պատերազմին. Եղիշ. ա: *Որք փախչէին յեգիպտոս, առաջնորդեսցի նոցա սեամբ լուսոյ. Նեղոս:

ԱՌԱՋՆՈՐԴԻՉ. ա. գ. Որ առաջնորդէ. առաջնորդ. *Ուղղիչք և առաջնորդիչք. Նար. աստ:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ. գ. Ἡγεμονία, χειραγωγία, προοδοποιεῖν. Conductio, manuductio, viam parare, ևն. Առաջնորդելն, և իլն. ուղղելն, հորդելն զճանապարհ, յառաջ վարումն. իբր ձեռնածացի տանելն 'ի ճանապարհ կամ 'ի գործ ինչ. յաջողումն. հրահանգք. *Ձեռնուցանէր զնոսա (սիւն ամպոյն) 'ի ցրտոյ սառնամանեացն 'ի գիշերապահութե առաջնորդութեն. Ագաթ: *Զբարերար տէրն ընդ մեզ անտանելք յառաջնորդութե. Եղիշ. է: *Լուսաւորականաւն նորա (հրեշտակի) առաջնորդութե 'ի սրբազան տեսութեն այս վերացեալ. Դիոն. երկն: *Մեկընութեն յօժարաւ լինէր առաջնորդութիւն հանգերձեալ հաւատոյն. Ոսկ. յհ. ա. 28: *Ի խորատ և յառաջնորդութե վերին զօրացն. Յճխ. ղ: *Յորդորող յանսխալ առաջնորդութե հաւատոյն: Այսպէս 'ի յառաջնորդութէ բանիս երևեցան փարթամութիւնք. Պիտ: *Զի պայծառ լինիցի մեզ առաջնորդութի սիրոյն այ. Սարգ. ա. պ. է: *Ամենայն յօրինուածք (բարեխառնութե) երկրի 'ի բարուք առաջնորդութե վերին բնութեցն լինին. Վեցօր. գ:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ. Κυβέρνησις. Gubernatio. προστασία, praefectura. πρωτεῖον, primatus, և այլն. Իշխանութիւն առաջնորդական. վերակացութի. ղեկավարութի. հրամանատարութի. զօրավարութիւն. առաջինն գոլ յիմիք կարգի. գլխաւորութի. եպիսկոպոսութի. վարդապետութի. (և իբր 'ի թանձրացեալն՝ Առաջնորդ). *Որ հոնձարեալն է, զառաջնորդութի առաւել: Առաջնորդութեամբ մեզ պատերազմ: Որոց ոչ գոյ առաջնորդութիւն, թօթափին իբրև տերև: Ցանձն ամենայն զառաջնորդութի: Այց առանել հրէից առաջնորդութեամբ եղբ. ևն: *Ցովհաննէս տեղի տայր քրի գլխաւորութեանն և առաջնորդութեանն: Մեծ է առաջնորդութի եկեղեցեաց. Ոսկ. յհ. ա. 28: Բ. 14: *Սա 'ի բազում իրս վերակացու առաջնորդութե առաքեալ 'ի սահաողկոյ: Միաբանեալ և նոցա առաջնորդութե ներսէհի. Խոր. բ. 34: գ. 29: *Զառաջնորդութի հասարակաց ստանան. Պիտ: *Որ կալաւ զառաջնորդութիւն ամենեց. Յհ. կբ: *Արծաթասիրութիւն ստաստկար է առ թագաւորս և դատաւորս. բայց առաւել առ հոգևոր առաջնորդութիւ. Ղ. ընդհանր: *Ամենայն վարժապետաց նորայն եղեալ լինէր առաջնորդութի. Պիտ. (ուր կայ և տյ նչ): *Կարող է վերանալ ելանել (մարդն) . . և 'ի սքանչելի առաջնորդութիւս (այ). Վեցօր. է:

ԱՌԱՋՈՅ, ջոյք. ա. Ἔμπροσθεν, κατὰ πρόσωπον, ἐκ πρώρας, ևն. Ante, coram, ex prora, ևն. Որ ինչ կայցէ առաջի, կծ յառաջ կոյս յանդիման աչաց, հանդէպ երեսաց. առջևի, դիմացի. էօն, էօնտէկի. ուստի ԱՌԱՋՈՅ ԿՈՂՄԱՆԷ. առջևի դէն, առջևէն. էօնտէն. *Զերկայնութե նորա առաջոյ կողմանէ: Առաջոյ կողմանէ խորանին: Առաջոյ կողմանէ խարիսխս ձգել. Բ. Կ. գ. 8: Եւ. իը. 9: Գծ. իէ. 30: *Առաջոյքն և զկնիքն. Եղիշ. խոչէլ:

ԱՌԱՋՈՅ. մ. Ի հանդիպոյ, յառաջոյ կողմանէ. առջևէն. *Հասին 'ի վերայ նորա առաջոյ և զկնի: Եւ էին աչօք առաջոյ և յետոյ. Բ. Բգ. ծ. 9: Յայտ. դ. 6: *Առաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութե. Եղիշ. ա:

Կամ Ի մօտոյ. յառաջիկայս. մերձ ընդ մերձ. և Առժամայն. *Բազում ինչ այն է, որ արդ առաջոյ պատրաստեալ եմք: Եւ կամ որ այլ իրք առաջոյ լինելոց էին. Եղիշ. գ: *Եւ էր որ անդէն իսկ մօտալուտ առաջոյ 'ի նոյն 'ի նմին ժամանակի գեմ յանդիման ցուցանէ. Ագաթ:

ԱՌԱՋՈՅ ՔԱՆ. նախդր. Յառաջագոյն. կանխեալ. *Գտանես զնոսա անդ առաջոյ քան զքեզ. Սիր. ծբ. 17: *Այրուձի գումարեցէք առաջոյ քան զիս, և յանդիման լիջիք ինձ յապար աշխարհի. Եղիշ. ա:

ԱՌԱՋՈՅՔ. ա. գ. Որ կայցէ յառաջոյ կամ յառաջագոյն. *Առաջոյքն և զկնիքն. Եղիշ. խոչէ: *Իսկ առաջոյքս 'ի յառաջագունից մինչև 'ի տեառնականգոյնան եկեալք 'ի վեր՝ սեպք ասին և տեսակք. Պորփ:

ԱՌԱՋՈՒ. մ. ա. Նոյն ընդ ԱՌԱՋՈՅ, իբր Յառաջագոյն. և Կանխաւ եղեալն. *Մի զաջժմու կերպարանդ, այլ զառաջու գործեցեալն նկատեալ յեճեցիք. Պիտ: *Զգերին զոր առեալ էր յառաջու յերկրէն հրէաստանի. ա. Ն. Բ. 22:

*Զառաջոու զլարխան նոցա յայս սանէ. Ռոմ. ժ. ա. 11. յն. τὴν ἔμπροσθεν, anteriorem.

ԱՌԱՋՈՒՍՏ. Մ. Յառաջինն. յառաջագոյն. առաջուց. *Հեռի ժամանակօք առաջին, այսինքն առաջուստ. Եփր. եբր:

ԱՌԱՋՈՒՍՏ. որպէս Յառաջոյ կողմանէ. *Առաջուստ իմ սուր սպանանիցէ զնա. և եթէ զթիկունս դարձուցանիցեմ, ընդկարթս հարկանիցեն ըզ իմք իցեն. Եփր. աւետար:

ԱՌԱՋՔ. Տ. ԱՌԱՋ:

ԱՌԱՍԱԿԱՆ, ի, աց. ա. Προσηγορικός. Appellativus. Որ ինչ առասի, կամ յորջորջի արձականաբար զբազմաց. հասարակ (անուն). *Առասական է, որ զհասարակաց էութիւն ցուցանէ. որգոն, մարդ, ձի: Ի վերայ առասականացն. որպիսի, մունն ծովային, և մունն երկրային. Թր. քեր: *Վասն իսկիգ և առասականիգ. և այլն. Երզն. քեր:

Եւ իբր Προσαγορευτικός. Salutatorius. Կոչական. և Հանդիսական. *Հոչականն (ասի նաև) առասական. Թր. քեր: *Առասական մակարդակեալ տայլիք. Մագ. ծ:

ԱՌԱՍԱԿԱՆԱԲԱՐ. Մ. Προσηγορικῶς. Appellative. Հասարակաբար. արձակաբար. *Ոչ ախոյ է մարգարէն զբանն առասականաբար ընդ ամենայն հրէաստան. Երզն. քեր:

ԱՌԱՍԱՆ. ի, աց կամ ից. գ. (պ. տր. ...). Σπαρτίον, σχοῖνος, κάλως. Filum, restis. Չուան. Ճոպան. պարան. լար. թել. ... *Առասան երեքկին ոչ վաղվաղակի խզեսցի. Ժող. դ. 12: *Արկանել առասանս ՚ի կապանս կրծիցն գեղարանացն. Ագաթ: *Առասանք ձգողականացն խզեցան: Կարծր կմ սուսեր առասանաւ: Առասան յուսոյն. Նար: *Բազմութեան առասանիցն յոսկւոյ և յարծաթոյ օղամանեկօք կախեալ: Յառասանիցն այն պարպատեալ զմեջան: Ի խաւարչտին խորախոր առասանով բերեալ. Մագ: *Գեղարանօք, անուօք, և առասանօք. Շար: (Աստի կազմին և բառքն ԱԳԱՐԱՍԱՆ, ԵՐԱՍԱՆԱԿ, ևն:)

ԱՌԱՍԱՆԱԿ. ի, աց. գ. Բարակ չըւան. լար. *Ակին առասանակ ՚ի պարանոց նորա. Ա. ՚ն ...:

ԱՌԱՍԱՆԵՄ, եցի. ն. Առասանաձգել. ... *Կէթ կարթիւ կոչկոճահան առասանեալ. Մագ. խա:

ԱՌԱՍԱՆԵԼ. իբր Առասել. Ճառել. խօսել. *Կարկառուն բանիւք առասանել. Մագ. խգ:

ԱՌԱՍԱՆՈՒԹԻՒՆ. գ. Որպէս Առասացութիւն. ասացուած. բան. ճառ. որպէս յն. լտ. Λόγος, διάλογος, χρησμός. Oratio, sermocinatio, oraculum. *Գրէ զմարգարէիցն առասանութիւնս: Գրաւոնականն նորագոյնս առասանութիւն. Մագ. ե. իբ: *Ի մէտ առնուլ զմարգարէական առասանութիւն. Շ. յկ. իբ: *Զանէրունականն զառասանութիւն. Կանոն: *Որոյ կոչեցաւ անուն յն բատ հրեշտակին առասանութեան. Թէոդոր. կոստ:

Եւ որպէս Առոգանութիւն. Προσωδία. Accentus vocis. *Ըստ առոգանութեան, առասանութիւն զոլորակութիւնս շեշտիցն առէ՝ բթէին և պարուկին. Ոսկեփոր: *Խարութիւն մաքրել զբան և զբայ և զգիր՝ մաքուր և վճիտ առասանութեամբ. Մագ. քեր:

ԱՌԱՍԱՑՈՒԹԻՒՆ. գ. որ և ԱՌԱՍՈՒԹԻՒՆ, ԱՌԱՍԱՆՈՒԹԻՒՆ. իբր Πρόσρησις, προσαγόρευσις. Allocutio, compellatio. Ասութիւն առ այլս. ասացուած. խօսք. բան. ճառ. առած. *Ըստ առասացութեան ամբաստանոյ: Ըստ բանի քում առասացութեանց. Զքր. կթ: *Յոլով են առ այս՝ առասացութիւնք սրբոցն հայրերից. Խոսր: *Ներբողական առասացութիւն. Նար. խէ: *Այս առասացութիւն մարգարէական. Անան. եկեղ: *Յառասացութեանս՝ որ առաջի կայ: Նորագոյնս ասել բանաստեղծութիւնս, և ոչ յայլմէ առասացութեանց պատմել. Մագ. է:

Եւ որպէս Յորջորջումն. անուանակոչութիւն. Προσηγορία. Appellatio. *Դուք պատրողք մոլորելով այ առասացութիւն պատուէք (զդևս): Զքահանայապետին զառասացութիւն անձանց բերեանց վերագրեցին (այսինքն կայսերք զկոչումն քրմապետութեան). Նիւս. բնութ: *Այսպիսի առասացութիւն զերրորդ ... ձայնեալ զանուն. Անյաղթ. բարձր:

ԱՌԱՍԵՄ, ասացի. ն. Προσαγορεύω, προσέπω, προσειπεῖν. Կոչել. յորջորջել. անուանել. ասել. *Հերձուածողս առասեա զնոսա (ղսուրբս հարս), և ոչ զանգիտես. Յհ. իմ. եկղ: *Յերկրպայս զոմ, զինչ զքեզ առասացից, ած՝ եթէ մարդ. բայց սակայն ած առասացից (յն. գուշակեցից) զքեզ. Սոկր. դ: *Բարունք և զգիր լինելութեան առ Ճշմարտութիւն մարդոյն առասաց: Կոչիւր ապրամ նախկին անունն, և առասացաւ յետոյ աբրահամ. Փիլ. իմաստ: *Նոյնպէս գուլ ամս միշտ առասելի է: Միայն զայն առասել, այս ինչ է և այսպիսի իրիւն վարեալք անուանակոչութիւնք. (այսինքն այս ինչ և այսպիսի իր ասելով զաւարերս): Զսա արդ թեթև առասացաք. Պղատ. տիմ: *Ո՛վ սիրելի աթենացի. զի ոչ կամիմ առաւելեցի արդեօք առասել զքեզ. Պղատ. օրէն. ա: *Մարդն և արջառն հասարակ անուամբ առասին կենդանի. Արիստ. ստորոգ: *Մեղկութիւն մեղք առասի. Շ. ա. յհ. խդ: Իսկ Ոսկ. ե. կոր. *Յայլս առասէ զպատճառն», այսինքն ՚ի վերայ այլոց արկանելով ասէ:

ԱՌԱՍՈՒԹԻՒՆ. գ. Πρόσρησις, πρόρημα, προσηγορία. Appellatio, denominatio, nuncupatio. Կոչումն. յորջորջումն. *Յարանուանք զըստ անուանն ղառասութիւն ունին. որգան, ՚ի քերականութեանէն քերական: Զնով առասութեան զայս ինչ նշանակել. Արիստ. ստորոգ: *Դիւրայեղքն յախտից և զուգնամանականքն ոչ բաւականապէս ընձեռեն ումեք զառասութիւն. Անյ. ստորոգ: *(Արարածք, կամ գիրք ծննդոց) կոչի և մակագրի լինելութիւն աշխարհիս, ՚ի լինելութէ առեալ զառասութիւն: Չէին արժանիք նմին առասութեան հասանել. ևն. Փիլ. իմաստ: *Քաղցրութիւն ունելով մեզ ընկալաւ առասութիւն. Պղատ. տիմ:

Մերթ իբր Առասացութիւն. ասացուած. բան. ճառ. *Շարամանել բանս յիւրումն ածոյին առասութեան: Այսպիսի առաջելոյն առասութիւնք: Իմով իսկ առասութեամբ արծարծեմք. Մագ. ա. է. գ:

Կամ Բառ. ձայն նշանական. *Առասութեան մասունք ոչինչ նշանակեն զատուցեալք ՚ի միմեանց. Անյ. պերիարմ: *Եթէ միայն պարզիւրի առասութիւնքն իցէ. Մագ. է:

ԱՌԱՍՊԵԼ, ի, աց. (կամ լեք,) լեաց. գ. (՚ի բայէս Առասել, և ՚ի մասնկանէս պել, որպէս ՚ի լտ. ֆապուլա, ... ֆապէլլա, ֆապուլա. լծ. ընդ. յն. ... ...). Μῦθος, πρόβλημα, αἴνιγμα. Fabula, fabella, projectum, aenigma. Առասացութիւն մացածին. յօդեալ պատմութիւն. սուտ զրոյց. ... *Զհայել յառասպելս: Յառասպելաց պառաւանց հրաժարեսջիր: Առասպելաց զհետ երթեալ. ա. տիմ. ա. 4: դ. 7: բ. պետ. ա. 16: Առասպելեալ՝ գրի, Ագաթ: Խոր. բ. 7: Շ. ...:

Եւ Յարմարական յօդուած պատմութեան ՚ի գիմաց կենդանեաց և անկոց, որ և Առակք ասին. և Բանաստեղծական կեղծիք ՚ի վերայ գրոց. որ և զիցաբանութիւնք. և Միթաբանութիւնք նուագեալք առ հինս. *Առ ոս ինձ ՚ի Ճահ ելանէ քերթողական առասպելն, որ ասէ. բազում անգամ աղուէսք թագաւորել խորհեցան, բայց շունք ոչ առին յանձն. Արծր. ա. 14: *Յունական պերճ և ողորկ առասպել: Առ այսոքիւք և աշխարհիս մերոյ առասպելք զբազմահմուտ ասորին արգարացուցանեն. Խոր. ա. 31. և 17:

ԱՌԱՍՊԵԼ. Πρόβλημα. Propositio Առեղծուած. առակ. իբր խրթնաբանութիւն, և առարկուած նմանաբանական. ... Դատ. ժդ. 12. 19:

ԱՌԱՍՊԵԼ. Αἴνιγμα. Adagium. Առած. զրոյց վճռական և խորհրդաւոր. *Որպէս ասէ հին առասպելն, յանօրէն ձեռաց ելցէ յանցանք. ա. թգ. իդ. 14: *Որպէս առասպելն ասէ, թէ մարդ և ոչ մարդ, բայց սակայն մարդ. Սոկր. ծբ: *Փոքր ինչ արդեօք առասպելաւ վարել պարտ է, եթէ ևն. Պղատ. օրէն. դ: *Արդարանալ թուի առասպելին, որ ասի ՚ի մէջ գեղջկաց, թէ քո շարայի որկորն է, մեր չիրակոյ ամբարքն չեն. Խոր. ա. 11:

ԱՌԱՍՊԵԼ. Առակ նշանակի. զրոյց ՚ի բերանս բազմաց առ ՚ի ծանակել զոք, կմ շշնջել զնմանէ. ... *Զի առասպել զիս արարեր ՚ի կենցաղումս. Առ. որս. դ:

ԱՌԱՍՊԵԼ ԱՐԿԱՆԵԼ, կամ ԳՐԵԼ. Ասել՝ խօսել՝ գրել զառասպելս կմ զառակս. *Ամենեքեան առասպելս արկանեն. Եզնիկ: *Ա՛րկ մեզ զառասպելն քո. և լուիցուք զնա. Դտ. ժդ. 13: *Որք զառասպելսն գրեցին». յն. առասպելաբանք. Յոբ. ա. ...:

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆ. ի. ից կամ աց. ա. գ. Μυθολόγος, կամ γους. Fabulator. Որ խօսի կամ գրէ զառասպելս. առասպելախօս. *Դայեակ եղև կրետացւոյ այնմ, և առասպելաբանի. Նիւս. երգ: *Մի՛ ելցուք զհետ առասպելաբանիցն՝ ընդ անկոխն գնալով ճանապարհ. Արծր. գ. 6: *Ուստի՞ քեզ այդ, և կամ յորոց առանձնողաց, և կամ յառասպելաբանաց. Առ որս. ղ: *Այլոցիկ՝ որ առասպելաբանացն. և այնոցիկ՝ որ ևն. Նիւս. կազմ. լ:

Եւ իբր Առասպելաբանական, առասպելական. *Առասպելաբան բաղբանջանք, կամ ուսումն, կամ գիտութիւն. Անան. եկեղ: Արծր. գ. 5: Ճ. Ա: Կուս. ծգ:

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԵՄ, եցի. ն. Μυθολογέω. Fabulor. Առասպելս որպիսի և իցէ խօսել, գրել, յօդել, նուագել. *Ըզմտաւ ածել զոր ինչ ոչն է, և առեղծուլ, և առասպելաբանել. Ա. ե: *Որ յաղագս մարմնափոխութեան նոցա առասպելաբանեն. Նիւս. կազմ. լ: *Որպէս չար փիլիսոփայքն առասպելաբանեցին. Շիր: *Զայս

տեղի առասպելաբանելով վիպասանքն։ Զանանկ երգիչքն գողթան առասպելաբանեն. Խոր. Բ. 47. 58։ *Որք առասպելաբանեն, ասեն՝ թէ պախրիթեւս գողացաւ երբեմն յածոցն հուր, և շնորհեաց մարդկան. որ է այլաբանութիւն. Սահմ. Բ։ *Եղեւ ամ. վասն որոյ առասպելաբանիւր յոմանց, թէ եւ կորեալ ծածկեալ կայր... և զանց առնէին զինն բազմութիւնք գնողաց, և ոչ գտանէին զնա. Մաղ. խաղ։

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ. Տե՛ս ԱՌԱՍՊԵԼ. Μυθολογία, μύθος. Mytologia. fabula. *Եթէ հաւատալ արժան է առասպելաբանութեանդ. Եղիշ. Բ։ *Ի հետ անցանելով առասպելաբանութեանցն. Պիտ։ *Որպէս և հեթանոսաց առասպելաբանութիւնքն ասեն. Ոսկ. հա։ *Ուրեմն 'ի հրէականն եւս առասպելաբանութիւն կործանեսցուք. Լմբ. առ։ *Առասպելաբանութեան զիւրին եղև հաւանեցուցանել. Գրիգ. օրին. Բ։

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՐ. մ. Μυθικῶς. Fabulose. Իբրև առասպել. և Նմանաբանութբ. և Առ 'ի կարծ. ուրուական օրինակաւ. *Տեսանեմք ամենեկեան ընդ միշտասպասնոնս առասպելաբար, այսինքն ընդ զարմ ածականաց. Խոր. Բ. 46։ *Զիջեալ ընդ նոսա՝ առասպելաբար 'ի բազմնէն սկըսանելով զիրսն, և անդ այնուհետև հաստատէ զմշտնջենաւորն. Ոսկ. 4ծ։ *Մարմինն թշուառականս առասպելաբար շրջի. Կե. լաց. յաղէթս։

ԱՌԱՍՊԵԼԱԲԵՐ, ի, աց կամ ից. ա. Որ 'ի մէջ բերէ առասպելս. առասպելապատում. *Գող է բանսարկուն, և զմերն առասպելաբերաց առ իւր տեղ. տովն (գուշակս) տանի. Բրս. յխոկղքանէ։

ԱՌԱՍՊԵԼԱԳԻՐ, գրի, րաց. ա. գ. Μυθογράφος. Fabularum scriptor. Գրող առասպելաց. *Եւ զայլոց ասացեալս զիւրաքանչիւր ուրուք զանուանցն կոչմունս առասպելագրացն ընծեռեցին. Փիլ. Ծ. բան։

ԱՌԱՍՊԵԼԱԳՈՅՆ. ա. Կարի առասպելական. *Ընկալեալ 'ի նմանէ պատասխանիս՝ որպէս ընկեց զոյգ առասպելագոյն. Արծր. Բ. 4։

ԱՌԱՍՊԵԼԱԳՈՐԾԵՄ, եցի. ն. Μυθοποιέω. Fabulas fingo. Առասպելս գործել՝ յօդել. *Իմաստն անկատարիցն և խառնակիցն զորս նոցա (այսինքն առ նոսա) օրէնքն առասպելագործին. Նիւս. խաղ. Լ։

ԱՌԱՍՊԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. գ. Μυθοποιΐα. Fabularum fictio, fabulositas. Կազմութիւն առասպելաց. առասպել յօդել. *Եւ մի 'ի միոյ անգամ երբեք երկեալ 'ի մեր՝ այսպիսի առասպելագործութիւն. Փիլ. այլաբ։ *Եղծումն իմն փոփոխման յայլ մարմինս ոգւոյն առասպելագործութե. Նիւս. խաղ. Լ։

ԱՌԱՍՊԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ. գ. Μυθογραφία. Fabularum conscriptio. Գրութիւն առասպելաց. *Պարապիլ յառասպելագրութիւնս. Մագ. ծէ։

ԱՌԱՍՊԵԼԱԽՕՍ, ի, աց. ա. գ. Μυθολόγος. Fabulator. Առասպելաբան. և առասպելախօս. *Առասպելախօսք, և քննիչք իմաստից. Բարուք. Գ. 23։ *Լի երկրաւոր իմաստութեամբ, առասպելախօս, և առասպելական. Ղևոնդ. Ծ։

Եւ Μυθολογικός. Mythologicus, fabulosus. Առասպելաբանական. առասպելական. *Ո՞վ որ ոչ զարհուրի և դողայ 'ի յառասպելախօս և 'ի գատարկ բանից. Եփր. պհ։ *Ապականիչն յառասպելախօս բանս նոցա. Ոսկ. Բ. փիմ։

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ի, աց. ա. Μυθικός, μυθολογούμενος. Fabulosus, fictus. Առասպելեալ. սնոտի. չինծու. փուչք, էաքիմ, ծաղր մասուր. *Առասպելական բանք։ Եղնիկ։ Եղիշ. յէ։ Եփր. պհ։ *Առասպելական առասպելութիւն, կամ հնչմունք, կամ կրթարան (քերթողաց). Պիտ։ *Առասպելական ստեղծուած (այսինքն ստեղծաբանութիւն). Փիլ. բագն. և Ծ. բան։ *Սկսայց ասել, ոչ առասպելական, այլ որ է ճշմարիտ ասացեալ. Փիլ. սամփ։ *Փախիցեն 'ի վայելչախօսութենէ, և յառասպելական յաւելուածոց. Առ որս. Ը։ *Առ որովք ասեն լեալ զարմանալի ինչ առասպելականք (յն. առասպելաբանեալք). Եւս. քր. Ա։

Եւ իբր Առասպելամոլն. Μυθώδης. Fabulosus. *Անհաստատութիւնք և առասպելականք ոչ քննողացն ասացեալքն թուեսցին. Նիւս. երգ։

Մերթ իբր Առասպելախօս. բանդագուշեալ. աղճատեալ. *Երթեալ հանդիպիս, զոր միշտն խնդրես, երանիեաց առասպելականին. Յհ. իմ. երևումն։

ԱՌԱՍՊԵԼԱԿՈԾ. ա. Որ յածի կոծի յառասպելս. յառասպելս զառածեալ. *Յողդողդամիտ և առասպելակոծ մրցանօք յածիք այսր անդր. Մաղ. խաղ։

ԱՌԱՍՊԵԼԱՆՈՒՆ. ա. Իբրու անուն ինչ առասպելեալ. սնոտի. *Բախտ և բաշխ, և յառասպելանուն ծննդեանն հարկէ. Սեբեր. Ի։

ԱՍԱՑԵԱԼ, ցելոյ, ոց. ա. գ. իբր Բանն ասացեալ. զասանի և Ասիցեալ, ասիցելոց, կամ ասելոց. *Ոչ գիտէին զասացեալսն. Ղկ. ԺԸ. 34: *Վկայեաց տեառն ասացելոյն. Ագաթ: *Ըստ ասացելոյ իմաստնոյ ուսումն. Պիտ: *Եւ որ զկնի բերին, կմ ըհետ գան ասայեալքն. Նար. ծա. կ: *Ճշմարիտն գոլ ասիցեալն (եւրիպիդեայ): Սորա յառաջագոյն ասիցելոյ՝ և զայն ասելի է: Ոչ յասիցելոյն առաւել՝ քան 'ի մտաց գիտայեալք: Ցուսեքէ ասիցելոցն յաղթահարեալ: Վերջանան 'ի հասմանէ ըմբռնման ասիցելոցն. Փիլ: *Կատարեալ զայս ամենայն գործս ըստ ասելոցս կարգաւ. Փարպ:

ԱՍԱՑԵԱԼՔՆ, ցելոյն. գ. τὰ Λόγια. Oracula, Scriptura sacra. Պատգամք այ ասացեալք 'ի սբ գիրս. սբ գիրք. ածեղէն առաք. *Երկուց լուսաւորացն, զոր ասացեալքն մեծամեծս կոչեն: Որպէս ասացեալքն ասեն: Զոր և ասացելոցն բանից ճշմարտութեն ասէ, թէ ամենայն ինչ բարի է յոյժ. Դիոն. ափէ:

ԱՍԱՑԵԼՈՅՐ. այսինքն Ասացելոյ՝ յն. ոճով. Տես 'ի տառն Ր:

Ընդունելութին ներկայ լինի ԱՍՈՂ, ի, աց. ևս և ԱՍԱՑՈՂ. *Բանն 'ի բերան ասողին: Ցասողէն առ լսողն փոխին: Ցասողացն մեկնութեց. Ագաթ: Սարգ. յկ. Ճ: Փարպ: *Տեսաք զասացողն, եթէ ԵՆ. ՃՃ:

ԱՍԻԱԾԻՆ. ա. Իբր Ասիացի, և ասիական. Ἀσιάνος, Ἀσιανογενής, Ἀσιατικός. Asianus, Asiaticus. *Ուրան լեր, ասիածինդ կարգաւորութե պարծանք». այսինքն ասիական թեմի՝ քաղաքդ եփեսոս. Կիւրղ. 'ի կոյսն:

ԱՍԻԱԿԱՆ, ի, աց. ա. Որ ինչ ի յԱսիա. ասիական. Նոյն ընդ վ. *Ասիական կողմանն պետութե զինքնակալական առեալ բան. Համան. առոյ:

ԱՍԻԱՊԵՏ, ի, աց. գ. Ἀσιάρχης. Asiae princeps. Իշխան կողմանցն ասիոյ: Գծ. ԺԹ. 31:

ԱՍԻԴ, այ. կմ; ԱՍԻԴԱՅ, ի. } գ. Բառ եբր. Խէսիտա, կամ հասիտա. յորմէ յն. ասիտա, Ἀσίδα. Անուն անյայտ թռչնոյ, որ այլուր թարգմանի Արագիլ. և Ցոպոպ. որպէս և ըստ ակիւղասայ՝ Բազէ. և ըստ սիմաքոսի՝ Կարապ. Տես և ԱՐՍԻՆ: *Եթէ յղացի ասիդն, և նեսեսայն. Յոբ. ԼԹ. 13: *Ոմանք զասիդայդ հաւ ասացին. ԵՆ. Մխ. Երեմ: Իսկ Նար. յովէդ. բանիւ Սեբերիանոսի՝ գազան ասէ, և Համան յոյն էդ. սողուն: Ցորոց առեալ՝ ասի և 'ի Տօնական. *Ասիդ սողուն է սևագոյն կերպիւ փղշտակաց երկրին, յորժամ արկանէ ըզձուն, ընդ բերանն փոխէ, և բուսանի ծառ. ԵՆ:

ԱՍԿՆ. գ. Իբր Սուտակն. զոր տեսցես. *Ասկն, և շափիւղայն, և յասպիս. Սեբեր. Փ:

ԱՍՂԱՆԱԳՈՐԾ. ԱՍՂԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. Տ. ԱՍՂՆԱԳՈՐԾ. ԵՆ:

ԱՍՂԱՆԵԹՈՌՈՊ. Տ. ԱՍՂՆԱԹՈՌՈՊ:

ԱՍՂԱՆԻ, նւոյ, նեաց. գ. Κλῶσμα, νῆμα, ὕφασμα, σπαρτίον. Filum, vitta, textura. Շաղամախ. թել մանեալ՝ զոր ընդ ասեղն անցուցանեն 'ի պէտս կարելոյ կամ կիտուածոց. լար. ոստայն. նարոտ. և անկուած ասղանեօք. կիտուած. դերձան. իպլիկ, բիշիկ. *Դնիցէք 'ի վերայ ծոպից տանոցն ասղանի կապուտակ. Թւոց. ԺԵ. 38: *Խզեաց զայն 'ի բազկաց իւրոց իբրև զասղանի. Դտ. ԺԶ. 12: (Գրի և իբր ռմկ. ԱՍԽԱՆԻ:) *Խաչն անարգեալ է, և ասղանիքն կախարդաց պատուականք. Ոսկ. խոչ. Է. յն. գրուածք. γράμματα.

ԱՍՂԵՆԻ. Նոյն ընդ վ. *Աղ և ածուխ, կամ ասղենի առնուլ կարմիր. ԵՆ. (Գործ կախարդաց.) Մանդ. ԻԶ. Տես և ԱՍՂԱՆԻ:

ԱՍՂՆԱԳՈՐԾ, ի, աց. ա. Ῥαφιδευτός. Acu pictus, consutilis. Գրի և ԱՍԸՂՆԱԳՈՐԾ, ԱՍՂՆԵԳՈՐԾ, ԱՍԵՂՆԱԳՈՐԾ. Գործեալն կամ կիտեալն ասղամբ. ռագէմի. *Վարագոյր նկարէն յասղնագործաց: Պարեգօտք ասղնագործ. Ել. ԻԷ. 16: Լ. Բգ. ԺԲ. 18: *Խորան նկարակերտ ասեղնագործ. Ճ. Թ:

ԱՍՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. գ. Գործելն ասղամբ. գործ ասղնագործ. τὸ Ῥαφιδευτόν. *Որ ճարտարապետէր զոստայնանկութիւն և զասղնագործութիւն. Ել. ԼԵ. 23:

ԱՍՂՆԱԹՈՌՈՊ. ա. գ. որ և ԱՍՂԱՆԵԹՈՌՈՊ. Թուղթ կամ հանդերձ ինչ անշուք որպէս Բոռոպա, քուրձ, խորգ՝ խոշոր հիւսուածով ցանցառեալ. *Նոքա մեծքն (հին հարք) ասղնաթռոպ պարեգօտիւք անցուցին զնժդեհական վայրաց լուծութիւս. Մաշտ. աթէմ: *Ասղանեթռոպս ագանէին, և կապերտս սերինէս (հիւսեալս յարմաւենւոյ.) Վրք հց. Ձ:

ԱՍՂՆԱԾԵԾ. ա. Ասղամբ ծեծեալ, և ծակոտեալ, կիտեալ. *Վէմս ասղնածեծս մի առնել. Նխ. ղևտ:

ԱՍՂՆԱՆԻ, նւոյ, նեաց, նեօք կամ նօք. գ. Περίαμμα. Amuletum. Բժժանք, յուռութք յասղանւոյ կամ 'ի թելոյ. դիւթիւ Բոգըմը. *Ասղնանօք, և պառաւանց առասպելօք. Ոսկ. յովհ. Է:

ԱՍՂՆԱՉԱՓ. ա. մ. Ի չափ ասղան. ասղն լափ. իյնէ գափար. *Փոքր ինչ ասղնաչափ գանելով. Ոսկ. լուս:

ԱՍՂՆԵԱՅ. ա. Իբր Ասղնագործ. ռագէմի. *Պատմուճան հանդերձեալ, այն է բեհեզեայ, կամ նկարեալ ասղնեայ. Տօնակ:

ԱՍՂՆԵԳՈՐԾ. Տ. ԱՍՂՆԱԳՈՐԾ:

ԱՍՃԻ. գ. Որպէս Ճաշ. կուր. կերակուր սովորական. թչ. *Թէպէտև կերակրեաց, այլ աշտուճ հացիւ և ձկամբք. նաև քաղաքին այն իսկ համապատրաստի. Ոսկ. Ես:

ԱՍՈՂՈՒԹԻՒՆ. գ. Կարողութի ասելոյ կամ հրաման տալոյ. զօրութիւն և խակութի ներքին բանի. *Մի յերեսեան ասողութի և բնութե. Քեր. թէրբ:

ԱՍՈՐԱԿԱՆ. ա. Σύρος, συριακός. Syrus, syriacus. Որ է ասորի յազգէ. և որ ինչ սեպհական է ասորւոց, կամ սիւրիացւոց. սուրանի. *Մեծըն գրիգոր ածաբան, և սբ եփրեմ ասորական. Ցօ. որդի:

ԱՍՈՐԵԱԿ կամ ԱՍՈՐԵԿ, եկի. կաց. գ. Εὔζωμον. Eruca. իտ. ruchetta. (Գրի և ՍՈՐԵԿ.) Բանջար կծու և համեղ, ընտանի և վայրի՝ 'ի ձև թրթրոյ: Գաղղիան: Բժշկրն: Ճէրճէր, ժիժիր, ժէժէր, ԳիԳլի, հարդե: Ոմանք շփոթեն և և ընդ կոտեմ կամ ջրկոտեմ, որ է թթուաշ և կծու նոյնպէս. Κάρδαμον, καρδάμωμον. Nastartium, ԵՆ:

ԱՍՈՐԵՐԷՆ. մ. Συριστί. Syriace. Ի լեզու ասորւոց. ասորի բարբառով. սիւրիանճա. *Խօսեա՛ց ընդ ծառայս քո ասորերէն. Դ. Թգ. ԺԸ. 26: Ես. ԼԶ. 11:

ԱՍՈՐԻՔ, կամ ԵՐԿԻՐ ԱՍՈՐԻՈՑ. Σύροι, Συρία. Syri, Syria. շամ վիլայէթի. որպէս և ԱՍՈՐԵՍՏԱՆ, ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՔ, Ἀσσύρια, Ἀσσύριοι. Assyria, Assyrii. Տես 'ի բռ. յուկ. ան: Ոմանք շփոթեն կամ անխտիր վարեն զայսոսիկ անուանս. այլ բուն Ասորիք են 'ի սահմանս դամասկոսի, և Ասորեստանեայք 'ի սահմանս բաբելոնի:

ԱՍՈՒԵԱՑ. էի, եց. Տ. ԱՍՈՒՐԻ: Ղևտ. ԺԳ. 59:

ԱՍՈՒԵՂ, ի, աց. ա. Որ ունի ասր առատ. Բրդոտ. եափաղը, եիւնլիւ. *Որպէս նայն թէ և ասուեղ է. Եզնիկ:

ԱՍՈՒԹԻՒՆ. գ. Φάσις, λέξις. Dictio. Ասացուած. բան, և բառ. ձայն նշանական. *Լցեալ աստանօր զխաղագս այլոց հակակայից ասութե. Անյ. հաւաք: *Ըստ այսքան յեղանակս ունի բայ զասութիւն և զցուցումն. Երզն. քեր: *Բան է ձայն նշանական, որոյ մասանցն իմն՝ նշանական է զատ՝ իբր ասութե, և ոչ իբր ստորասութե կամ բացասութե: Անուն և բայ ասութե եղիցի միայն. Պերիարմ:

ԱՍՈՒՐԻ, ասուոյ, ուեաց. ա. Ἔριος. Laneus. որ և ԱՍՈՒԵԱՑ, ԱՍՐԵԱՑ, ԱՍՐԵՂԷՆ. Այն՝ որոյ նիւթն է ասր. բրդեղէն. եափաղան, եիւնփէն. *Զորձ ասուրի: Զպատմուճանս կտաւիս, և մի ասուրիս. Ղևտ. ԺԳ. 47=59: Եզեկ. ԽԴ. 17:

ԱՍՈՒՐԻ. գ. Ἔριον. Laneum. Հանդերձ յասուոյ. Բրդէ լաթ. *Եթէ 'ի կտաւիս, և եթէ յասուրիս: Թեզան յասուեաց, կամ 'ի կտաւեաց. Ղևտ. ԺԳ. 48. 51. 52: *Իբր ասուրի 'ի ցեցոյ հալեցայ. Նար. ԽԱ:

ԱՍՈՒՐԻ, կմ ԱՍՈՒՐԻՈՑ, վարի և իբր Աստւ. այսինքն որպէս սեռական բառիս ԱՍՐ. *Իբր ասուրի իջելոյ, կամ իջանելով: Եդիր զիս 'ի քրձին ասուրի. ՃՃ: *Գզաթ մի ասուրի. Դտ. Զ. 37: *Ի բեռանց ասուոյն. Նար. ԿԲ:

ԱՍՈՒՄՆ, ասմունք. Տ. ԱՍԱՑՈՒԱԾ. *Զի է իսկ ասումն, պատարագ այ հոգի մաշեալ. Մաշտ: Իսկ Նար. ՃԲ. *Զասումն մատղեաց». ընթերցիր, զասուն: *Ժողովեալ 'ի միաս զօտխայց և զաղերսողաց հակաքանաբար ասմունս. Սարկ. ԻՀ:

ԱՍՈՒՆ, ասնոյ, ոց. ա. գ. Տ. ՔԱՆԱԿԱՆ. (որում հակակայի Անասուն, անբան.) *Հոգի և մարմին, և անասուն և ասուն: Անասնոցս, ասնոց, առաքինեացս, վատթարացս: Բաղկացեալ յասնոյ և յանասնոյ. Փիլ: *Զասունս և զանասունս. Եզնիկ: *Ունայնացեալ 'ի բոլոր սասացուածոց ասնոց և անասնոց. Յհ. կթ: *Ասուն կենդանեաց. Նար. Կ. ԽԻԼ:

ԱՍՈՒԳ. գ. Բառ ռմկ. առեալ 'ի յարաբ. չինոց, չինհնոց. Տե՛ս ԹՈՒՂ:

ԱՍԳ. Բառ պրս. էսպ. այսինքն Ձի, երիվար. վարի 'ի մեզ 'ի բարդութիւնս ենթ:

ԱՍԳԱԶԱՆ. Տ. ԱՍԳՈՒԶԱՆ:

ԱՍԳԱԶԷՆ, զինի, նաց. գ. Զէն և զարդ երիվարի. ար. թասամէ՝ բոխպէ. ոթուլ. օյլուհը. *Իսկ նորա առեալ զերիվարն, և զասպազէնն առեալ կապէր 'ի թիկունս իւր. Աֆոթ: *Հանեալ յասպազինէն ըզ-ներդեայ քեմխասպատ պարանն. Խոր. ՟Բ. 82: *Մերկանան 'ի զինէ և յասպազինէ: Ցասպազինէ երիվարին 'ի վայր արկեալ զինքն: Կորաք յազեղն և 'ի զէն և յասպազէն: Տուէս գանձուց և ասպազինաց. Արծր. ՟Ա. 5. 7. 9: ՟Է. 7:

ԱՍԳԱԶԷՆ. ա. մ. Քաղ սպառազէն՝ որպէս ձիաւոր. և համակերձ զինուք ձիոց. *Վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ մինչ վառեալս և 'ի վերայ ասպազէնս 'ի քաղաքն, որ անցանեն 'ի վերայ ձեր անձրևս նետս երկաթեղէնս. Արծր. ՟Բ. 3: *Ասպազէն առնազէն զնոսա վառեալ: Արխաբար ասպազէն 'ի վերայ չահատակեալք. Ցհ. կթ:

ԱՍԳԱԶԻՆԵԼ. ն. Զինել զձի. սպառազինել զերիվարս պատերազմական. *Թագաւորն լիզէացւոց ասպազինեալ զերիվարն զուրշանակի պղնձի արկանելեօք: Կարթակոտր զասպազինեալ երիվարն առ-բարեալ: Մորակեալ զիւր ասպազինեալ երիվարն. Արծր. ՟Ա. 5. 14: ՟Գ. 17:

ԱՍԳԱԿԱՆԱՍԳԱՍ. ա. գ. Որ կայ 'ի սպասու ասպականաց, այսինքն որսորդի. որսորդ չաւն. բարակ որսական. ռմ. ...., ... *Սովեցեալոյս ասպականաս-պաս կաղկանձողական ամենաթշուառ վանդառորիս ասքուառ կերակրոյ փշրանաց հացի մասնաւորեսցես. Նար. ՟Խ: Իսկ Լծ. Նար. առեալ որպէս գոյական՝ գնէ. 'Ասպականասպաս, լակոն է՝ զոր տան շանն »:

ԱՍԳԱԿԱՆԻ, նւոյ, նեաց. գ. Որսորդ՝ որ գնայ յորս երիվարաւ և շամբք. ռմ. .... 'Իսու ասպականի էր, և վայրագ: Ասպականին ընդ շունս և ընդ գազանս առնէ զիւր զցեզերութիւն վարուց. Փիլ. ԼԲՆ: Իսկ Գիր. ՟Բ. 5. *Եւ նոքա յարձակէին 'ի ներքս՝ հետամարեալ զասպականեացն հոյլս. մարթ է իմանալ զորսորդս, կամ զորսորդ շունս:

ԱՍԳԱՀԱՆԻԿ. ա. Ելեալն կամ բերեալն յասպահան քաղաքէ (ազգ ծառոց). *Ա՛ռ ասպահանի ծարիր քար... չփէ զասպահանիկ ծարիրն՝ որ-որորի. Մխ. բժ.:

ԱՍԳԱՀԱՊԵՏ, ի, աց. գ. Պետ ասպայից. ասպարապետ. զօրագլուխ՝ մանաւանդ ձիաւորաց. պրս. ..... *Քոյր նոցա՝ ասպահապետի պահլաւ. քանզի 'ի վերայ զօրաց էր այրն նորա. Խոր. ՟Բ. 65. ... 37:

ԱՍԳԱՃԱՐԱԿԱԿԱՆ. ա. Νομαδικός. Pastoralis. Արօտական ձիոց և այլոց անասնոց. հովուական. *Ասպաճարակական կեանս կեցին, և այսպէս կոչէին հոմէք. Եւս. քր. ՟Ա:

ԱՍԳԱՆԴՈՒԿ, կմ ԱՍԳԱՆՏԱԿ. } ի, աց.
ԱՍԳԱՏԱՆ. և ԱՍԳԱՏԱՆԳ, } գ. ('ի նմանէս Լսպ. և տճկ. կամ կոզէնկ). Ոստանկ հեծելոյն յերկուս կողմանս թամբ ձիոյն. կոզէնկի, խազէնկի, ըէքէապ. լա. ...... *Խնդրեաց գրաստ (կամ ատտ ինչ առեալ) յերիցուէ անտի, և ասպաստանդ (կամ ասպաստանս. տպ. ասպանդանս) արարեալ ոտիցն՝ նստաւ 'ի վերայ նորա: Մերձեցան ոտք նորա յասպաստանն (տպ. յասպանդանն), ուր եդեալ էին ոտք որբոյն. Վրք հց. ԽԿ:

ԱՍԳԱՆՁԱԿԱՆ. ԱՍԳԱՆՁԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Տ. ԱՍԳՆՋԱԿԱՆ, ան: Ճ. Ա: ՍԵՔԵՐ. ՟Է. Ն ՟Մ:

ԱՍԳԱՍԱԼԱՐ. և ՍԱԳԱՍԱԼԱՐ. Տե՛ս ՍՊԱՍԱԼԱՐ. պ. .... այսինքն Սալար սպայից: Ուռհ. ...: Մաթէ:

ԱՍԳԱՍՏԱՆ, ի, ալ. գ. } Ἱπποστασία,
ԱՍԳԱՍՏԱՆԻ. նւոյ. } σιον, σιν. Equile, stabulum vel statio equorum. Կայան կմ ախոռ ձիոց. (թերևս նաև կայտ կամ երամակ ձիոց). *Մինչև ցանկիւն դրան ասպաստանացն արևելից. Երեմ. ԼԱ. 40: Ուր Մխ. երեմ. *Ասպաստանի՝ տուն ձիոյ ». այլ 'ի յն. լոկ, ձիոց: *Ձիոց ասպաստանս կազմելով, կերակուրս պատրաստելով. Փիլ. Լիւս: *Պատրաստ իցեն քեզ ձիք յիմոց ասպաստանաց. Պտմ. աղէք: *Շրջել զասպաստանաւ միով ալեքսին պարսից: Նստէր 'ի տան ասպաստանին: Գլխատէր 'ի ներքս յասպաստանի անդ. Բուզ. ՟Դ. 16: *Մտեալ յասպաստանն՝ ոչ համբերեցան ձիոյ. Արծր. ՟Բ. 3: *Ցարքունի ասպաստանէ ձիս սպիտակս ընտրեալ. Ճ. Գ:

ԱՍԳԱՍՏԱՆԻԿ. ա. Ցասպաստանի պահեալ դարմանեալ. իսկ ՁԻ ԱՍԳԱՍՏԱՆԻԿ, ըստ յն. է լոկ՝ Ձի. *Քառասուն հազար ձիք հեծեալ, և եօթն հազար ձի ասպաստանիկ. ՟Ա. Մ. ՟Գ. 39: ....:

ԱՍԳԱՏԱԿ, ի, աց. գ. ('ի պրս. էսպ, ձի. և Թախիփէն. ...., արշաւել, ընթանալ. լծ. և լտ. ....) Որ ձիով արշաւէ. յարձակող երիվարաւ. որ և ԱՍԳԱՏԱԿԱ-ԻՈՐ. ...., ... *Այլ առաւել վարի որպէս Ասպատակութիւն. արշաւանք ձիով. յարձակումն երիվարաւ. ձիարշաւք. ձիընթացք. Ὁρμή, ὅρμημα. Impetus. πάροδος, transitus, և transiens, (անցք, և անցաւոր). ....*Մի երկնչիք յասպատակէ քաղդէացւոցն, 'ի ձայնէ ասպատակի նորա: Եկին յասպատակէ: Ասպատակք քո 'ի վերայ ծովու: Ի վերայ նոցա հեղից իբրև ըզջուր զասպատակ իմ. ՟Դ. Թգ. ՟ԺԵ. 24: Երեմ. ԽԵ. 3: ՟Բ. Թգ. ՟Գ. 23: Ամբ. ՟Գ. 8: Ովս. ՟Է. 10: *Ամազոնաց յասխս ասպատակ: Մինչև ցհերակլիտացւոց ասպատակն. Եւս. քր: *Զամենայն կանայս ասպատակն ժողովէր. Բուզ. ՟Դ. 58: *Առաքէ զզօրս ասպատակաւ հինից: Հինից և ասպատակաց պարապեալք. Խոր. ՟Բ. 26. 56: *Ասպատակաւ արշաւէր. Եղիշ. ՟Է: *Ցետ միանգամ և երկիցս ասպատակի խաղացուցանելոյ զօրուն 'ի հայս. Ցհ. կթ: *Այսու զհինին այլազգեաց զասպատակն յայտ առնէ: Կարծէին իբրև յասպատակէ ինն զամենայն առնուլ: Հինից ասպատակօք երկեցուցանէ զնոսա. Ոսկ. Եփ: *Իբրև ասպատակն խառն ընդ միմեանս հարան, կամ պճիմեամբ սփռեցաւ. Ցհ. կթ: *Ասպատակք այլոց վայրենեաց ըստ նմանութեան գիւղց. Նար. կթ:

ԱՍԳԱՏԱԿ ՍՓՌԵԼ կամ ԱՐՁԱԿԵԼ. }
ԱՍԳԱՏԱԿ ԴՆԵԼ, ՏԱԼ, ԱՌՆԵԼ. } Ἱππεῖς ποιέω. Equites facio. Ἐπιβάλλω, ἐπιπίπτω, ὁρμάω. Aggredior, procedo, cado super. Ասպատակութիւն կամ ասպատակաւորս արձակել. յարձակել 'ի վերայ, վաղել՝ դիմել՝ անկանիլ. *Ասպատակ սփռէր ՟Է աշխարհն ամենայն, կմ զկողմամբքն առա-րեւմտի, կամ 'ի հայս, կամ ընդ երկաս դաւառին. ՟Ա. Դ. ՟Ա. 24: Աֆոթ: Ցհ. կթ: *Ասպատակ արձակէր գաւառաց, ան-զեաց, վայրաց. Եղիշ. ՟Բ: *Սոքա ասպատակ եդին 'ի կողմն մի: Անտի ասպատակ դնէին 'ի քաղաք մի սկիւթացւոց: Ցօծաբէին այնուհետև ասպատակ տալ 'ի հեթանոսսն. ՟Բ. Դ. ԺԷ. 13. 29: ՟Ա. Դ. ՟Գ. 25: *Նախ ինքն իսկ արքայ, ապա և այլք ոմանք զինի ասպատակ տուեալ. Ցհ. կթ: *Ասպատակ տուեալ առնուին զամենայն երկիրն. Բուզ. ՟Դ. 25: *Հանէր զզօրս հոնաց՝ ասպատակ առնել 'ի կողմանս պարսից: Ասպատակ եւս 'ի յոյնս արարին. Աֆոթ: Խոր. ՟Բ. 51: *Ասպատակ առնէին 'ի միջնաշխարհն. Բուզ. ՟Է. 4:

ԱՍԳԱՏԱԿԱՅԱՐՁԱԿ. ա. Ձիարձակ. համդոյն յարձակման ասպատակաւ. *Ձիարշաւս արարեալ ասպատակայարձակ շառաչմամբ. Արծր. ՟Ժ:

ԱՍԳԱՏԱԿԱՒՈՐ. ի, աց. ա. գ. Ἱππεύς. Eques. Արշաւող ձիով. ձիարշաւ ընթացող. հեծեալ ձիաւոր. *Ասպատակաւորք ասպատակեցին 'ի մեզ. Ցոբ. ՟Ա. 17. յն. ասպատակ արարին: *Սկսաւ այնուհետև 'ի բազում տեղիս արձակել զասպատակաւորսն. Եղիշ. ՟Է: *Ասպատակաւորաց նորա ընդդէմ նորա զինեալ. Ցհ. կթ:

ԱՍԳԱՏԱԿԵՄ, եցի. չ. Ἱππεῖς ποιέω. Equites facio. Ἐπιτίθημι, ἐξάλλομαι. ἐκκλίνω. Impetum facio, exilio, declino. Երիվարօք 'ի վերայ յարձակիլ, արշաւել. ձիարշաւ լինել. 'ի վեր կամ 'ի վերայ վազել. .... որ և ասի ԱՍԳԱՏԱԿ ԴՆԵԼ, ՏԱԼ, ԱՌՆԵԼ. *Ասպատակաւորք ասպատակեցին 'ի մեզ: Դարձան արք խորայէլի ասպատակեալքն զհետ այլազգեացն: Ասպատակէին 'ի վերայ գեսերայեցւոյն: Եւ ամաղէկ ասպատակեաց 'ի հարաւակողմն և 'ի սիկելակ. Ցոբ. ՟Ա. 7: ՟Ա. Թգ. ԺԷ. 53: ԻԷ. 8: Լ. 1: *Իբրև ըզշաչիւն կառաց 'ի վերայ գլխոց լերանց ասպատակեսցեն. Ցովէլ. ՟Բ. 5: *Ընդ գաւառն ասպատակեալ. Խոր. ՟Բ. 18: *Անդր ասպատակողացն. Պիտ:

Նմանութ ասի. *Ասպատակէ փայլակն, և ոչ հասանէ նմա. ՃՃ: *Եղիաս կառավարեալ ասպատակէր յերկինս. (այսինքն ձիավարէր.) Կանոն:

ԱՍԳԱՏԱԿԻ. ՅԱՍԳԱՏԱԿԻ. մ. Իբրու ասպատակաւ. արշաւակի ընթանալով. վաղելով. սխրալ. *Գոգս առեալ ուռուցեալ (նաւ) առագաստիւք ասպատակի 'ի վերայ մղանանց ծովուն: Մինչդեռ յասպատակի երթայր բանս յանկարծակի եառ զկայ. Վեցօր. ՟Է. ՟Ը:

ԱՍԳԱՏԱՆ, կամ ԱՍԳԱՏԱՆԳ. Տե՛ս ԱՍԳԱՆԴԱԿ:

ԱՍԳԱՐ, 'ի կմ ոյ, ալ. գ. Ἀσπίς, πέλτη. Scutum, clypeus, pelta, sive scutum brevius. (լծ. յն. .... պ. ...., ...; լծ. ընդ Պատսպար, և Հովանի.) Վահան. գալգան. *Սրով և գեղարդեամբ և ասպարաւ: Ասպականեցաւ ասպար զօրաւորաց. ՟Ա. Թգ. ՟Ա. 45: ՟Բ. Թգ. ՟Ա. 21: *Զինու և ասպարաւ քով օգնեա մեզ. Եղիշ. ՟Բ: *Ոչ զինուց պետք են, և ոչ ասպարոյ: Ասպար զնեան առնու, և չապականի. Վրդն. ող:

ԱՍԳԱՐԱԲԵԿ, ի, աց. ա. Πέλτη. Pelta, scutum. Բեկոր ասպարի, այսինքն փոքրիկ վահան. *Այրեացեն զզէնս, զնիզակաբեկս, զասպարաբեկս. Եզեկ. ԼԹ. 9:

ԱՍԳԱՐԱԿԻՐ, կրի, րաց. ա. գ. Θυρσοφόρος. Scutifer, scutatus pedes. (կամ

Δορυφόρος. Hastatus, satelles, spiculator.) Վահանակիր. սպասաւոր առնելի, որ միանգամայն լինէր և նիզակաւոր, կամ բրաւոր հանդերձ ոսկեզօծ վահանաւ. *Ազգի ազգի դասուք զօրականաց, գունդ գունդ ասպարակիրք. Ոսկ. ՃԻԼԻԴ. ԾԳ։

ԱՍՊԱՐԱԿՈՂ, ի. ա. գ. Որոյ կողն պատեալ է ասպարաւ (այր, կամ երիվար). *Ցեռուստ կողմանէ հարեալ 'ի գաղտնիս զգարշապար երիվարին' արար կաղանալ նժոյգ ասպարակողին. Առծր. Գ. 17։

ԱՍՊԱՐԱՀԱՏ, ի, աց. ա. Ասպարաւ հատանող զանգս հակառակորդաց. կամ հատիչ ասպարաց. *Ասպարահատք զվահանօք անկեալ' ընմանիս իւր կործանող։ Զնմանիսն իւր յառաջ քարշէր 'ի խաղս ասպարահատացն. Մեսր. Երէց։

ԱՍՊԱՐԱՊԵՏ. Տ. ՍՊԱՐԱՊԵՏ. *Որ 'ի ժամուն ասպարապետ էր անտիոքայ։ Մուշեղ ասպարապետն հայոց. Փարպ։ ՃՃ։ *Ասէ ընա միքայէլ. ես ասպարապետ եմ զօրութեանց տն. Մծբ։

ԱՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. Տ. ՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ։ Բուզ։ Մեսր. Երէց։ Ո—։

ԱՍՊԱՐԱՒՈՐ. Տ. ՎԱՀԱՆԱՒՈՐ. Πελταστής. Peltatus, scutatus. *Ասպարաւորք և աղեղնաւորք. Բ. Մն. ԺԴ. 8։ ԺԷ. 17։

ԱՍՊԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ. գ. Πελταστική. Ars utendi pelta. Կրելն և վարելն զասպար. *Աղեղնաւորութեամբ, և ասպարաւորութեամբ, և ամենայն զինուամարտութե. Պղատ. օրին. Է։

ԱՍՊԱՐԱՓԱԿ. Տ. ՎԱՀԱՆԱՓԱԿ. (իբր վահանաւ փակեալ, փակող, և փակումն). *Յասպարափակ բազմութե պահապանացն։ Ասպարափակ ռազմ. Փարպ։ Յհ. կթ։ *Ի ծովէ մինչև 'ի ծով ասպարափակ արարեալ։ Ասպարափակ եղեալ շուրջանակի լեգէոն հեծեալ զօրուն։ Զբազմութիւն վահանակիր զօրուն իբր ասպարափակս ինն ընդդէմ նոցա տուեալ. Ճ. Ա։ Յհ. կթ։

ԱՍՊԱՐԵԼ. չ. Գիտել վարել զասպար. վահան 'ի կիր արկանել. *Զգիտողաբար շարժմամբ ասպարելն. Պիտ։

ԱՍՊԱՐԻԶ, } ըիզի կամ ըի, աց կամ ից.
ԱՍՊԱՐԷՍ. } Ἱππόδρομος, στάδιον, κίρκος, παραδρομή, διάστημα. Cursus equorum, stadium, circus, intervallum. պ. Մէյտէրէ, Մէյտէրէ. ասպէրէ, խասպէրէ, Լն. ըստ հյ. Ձիընթաց. և Ձիարձակարան, կրկէս. հրապարակ. մրցարան. տաճկ. ալ Մէյտանը, Մէյտան. *Ի մերձենալ ինձ յասպարէզ երկրին քաբրաթայ։ Թաղեցի զնա յերկրի ասպարիսին։ Իբրև զթագաւոր թագ 'ի գլուխ յասպարէսս։ Որ յասպարիսին ընթանան. Լն։ *Մարտակեան զերիվար լեզուդ առ 'ի յասպարէս. Աճառ. Ծն. (յն. նպատակ. νύσσα). *Մրցանակեալ յընթացս սորա ասպարիսի զշըրթունս գրչիս։ Այս մարտիկ բարեփառ այսմ ասպարիսի. Նար. յիշ. և ՃԺԲ։

ԱՍՊԱՐԷՍ. Στάδιον. Stadium. Չափ հեռաւորութեան միոյ ձիընթացի, իբր 125 քայլ երկրաչափական. որ և կոչի ՎՏԱՒԱՆ. և յոմանց չափոյն ընդ մղոնի, և ընդ այլ չափմունս. Տես Բ. Մկ. ԺԲ. 5։ Ղկ. ԻԴ. 13։ Յհ. ԺԱ. 19։ ԺԲ. 18։ Յայտ. ԺԴ. 20։ Խոր. Ա։ Շիր։ Երզն. Մաթ։ Արիստ. Ա։ Պորփ. ալէքս. Լն։ *Ութանօք ամանակք ասպարիզօք. Պղատ. օրին. Դ։

ԱՍՊԱՐԷՍ. Στάδιον. Stadium. Որ և է միջոց ընդարձակ. տեսարան. հանդիսարան. կրթարան. ճեմարան. ատեան. դաշտ. և ընթացք. Մէյտան. *Արտաքոյ քաղաքին յասպարիսի անդ յընդարձակ տեղւոջ. Գ. Դ. Ը. 9։ *Ճախր առեալ ճեմէր յասպարիզի։ Տանէին յասպարէզ կառամարտանն. Յհ. կը։ *Ցերգս տրուեստականացն ... առաւել քան զհանդէսն լինուն զասպարիզայն տեղի. Ոսկ. յհ. Ա։ *Այս է ասպարէզ ենթակայս իրի հաւատորական հանդիսաւորաց։ Յառաքինութեան ասպարէզս. Պիտ։ *Զթեւաւորեալն 'ի հոգւոյն արդոյ պատմեաց առաջի խմբեալ ասպարիսին (ժողովոյ հարց). Ճ. Բ։ *Ընդ ծիրանածաւալ ծովային ծոցոյն ասպարէզ. Նար. խչ։ *Ընդ երկայն ասպարէզս ծովածուփ կենցաղոյս. Շար։ *Ըստ շրջագայութ ճախարակեալ փայտի, զոր ոչ արտաքոյ թողացուցանեն ասպարիզին 'ի կարակնակերտ բոլորակին. Մագ. Ը։ *Ո՞չ տեսանեն զանդադար ասպարէզս տունջեան 'ի գործառնութիս և 'ի վայելս ամենայն կենդանեաց. Շիր։ *Ոչ հիւսեցաք յասպարիսի ատպատմութ. Առծր. Է. 5։ *Թաղեցին յասպարիսին' որ մերձ է 'ի բեթղահէմ. Ոսկ. մ. ա. 9։

ԱՍՊԱՐԸՆԿԵՑ. ա. Ῥίψασπις. Scuti vel armorum abjector. որ և ՎԱՀԱՆԸՆԿԵՑ. Որ ընկենու 'ի բաց զասպար իւր. *Ամն' որ ասպարընկեց լիցի։ Ո՛չ որ 'ի բաց ելեալ լինի վայելչական բանութ, անուանեսցի թերևս ասպարընկէց. Պղատ. օրին. ԺԲ։ *Ոչ է փոքր վտանգ ասպարընկէց լինել 'ի պատերազմին. ՃՃ։

ԱՍՊԱՐԻՍԱԽԱՂԱՑ, ի. Տես ԱՍՊԱՐԷՍ ըստ Ա և Բ նշ. *Նստայ 'ի վերայ նորա 'ի մէջ տեղւոյ ասպարիսախաղացին. Վրք հրնտ։ Ճ. Ա։

ԱՍՊԱՐԻՍԱԿԱՆ. ա. Որ ինչ հայի յասպարէզ. *Ասպարիսական չափ. Խոր. Ա։

ԱՍՊԱՐԻՍԵԼ. չ. Ընթանալ յասպարիսի. արշաւել ընդ ասպարէզ. *Միոյն ի ձահ ասպարիսել 'ի հարթարդակ դաշտան. Պիտ։

ԱՍՊԵՏ, ի, աւ կամ իւ, աց, զք. գ. Ἱππεύς. Eques. իտ. Cavalliere. Ձիաւոր ազնուական. իշխանաւոր հեծեալ. որ և ՍՊԱՑ. օիֆահ. և առանձին առմամբ' կոմս. աւագ իշխան. ազատ. բարեկամ կամ թագադիր արքայի. պէկ, պէյզադէ, ժանթիլոմ. *Կոչիլ նմա թագադիր և ասպետ։ Բագարատաւ ասպետիւ։ Ինձ ասպետիս պարտ է զքեզ պատկել. Խոր. Բ. 7։ Գ. 9. 37։ *Սքանչելի ասպետուն սահակաւ. Փարպ։

ԱՍՊԵՏՈՒԹԻՒՆ. գ. Իշխանութիւն ասպետի. պատիւ ասպետաց. *Իշխանն թագակապ իշխանութեամբ ասպետութե. Ագաթ։ *Զթագակապ ասպետութիւնն ոչ հանէ. Խոր. Բ. 13։

ԱՍՊԻՍ. գ. Բառ յն. աքէն. Ἀσπίς. Տ. ԱՍՊԱՐ. *Իսկ ասպիսն չորեքանկիւնի վահան է. Կիւրղ. Բգ։

ԱՍՊՆՋԱԿԱՆ, ի, աց, կամ ից. ա. Ξένος, իբր Πρόξενος, ξενοδόχος. Hospes, իբր Hospitio excipiens. Հիւրընկալ. օտարընկալ. վանատուր. ('ի պրս. սփէնջ, որ է հիւր. որպէս և սփէնջ, է տուրք առեալ յօտարականէ). եէ շահազ, գօնագ սահապը, միհմանփար, միսաֆիր գապուլ իտէն. *Գայիոս ասպնջական իմ. Հռ. ԺԶ. 23։ *Ասպնջական աստ զօտարընկալն ասէ։ Ասպնջական վասն այնորիկ անուանեաց զնա, զի զօտարս ընդունէր. Ոսկ. հռ։ *Եթէ զհիւրս ընդունիս, զքեզ ընդունիս. և թէ օտարին լինիս վանատու, քեզ ես ասպնջական. Մանդ. Է։ *Զքնամեծար ասպնջականիցն իւրոց բաղում գովութիւս փոխանակ մեծարանացն կարգէ. Կորիւն։ *Ասպնջական լինել յն. ընդունել 'ի տուն իւր, կամ ընդ առաջ ելանել. Նիւս. 'ի օտանս։ Ոսկ. յհ. Բ. 14։ Մանդ. Է։ Կորիւն։

ԱՍՊՆՋԱԿԱՆ. լայնաբար' Ընդունակ. ընդունարան. *Ասպնջական հոգւոյ ածութեանն, կամ էին սիրոյ, կամ չարեաց. Ագաթ։ Ը. ոփ. ատ ոսկերոփ։ Եզնիկ։ *(Ծով) ասպնջական է հիւրամեծար գետոց բազմաց. Վեցօր. Ը։ *Որոց ասպնջական է տարտարոսն յաւիտենական. Ը. Բղխ։ *Ըզհայրն ասպնջականին իւրոյ բժշկեաց. Ոսկ. Գծ։

ԱՍՊՆՋԱԿԱՆ. Առիթ. որպէս յն. πρόξενος. *Գործ' տեսութեան ասպնջական է. Աճառ. Դիր։ *Դուք էք յորդորիչք կուսանաց, և ողջախոհութեան ասպնջականք. ՃՃ։

ԱՍՊՆՋԱԿԱՆԵԼ. Տ. ՀԻՒՐԸՆԿԱԼԵԼ. *Թէ լիցէ ոք, որ ասպնջականիցէ զնա 'ի 'ի տուն իւր. Բրս. մրկ։

ԱՍՊՆՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ. գ. Ξενιτεία, որպէս ξενοδοχία. Hospitum receptio, peregrinatio. Հիւրընկալութիւն. ընդունելութիւն, իմա ընդունելն, և ընկալեալ լինելն. իջևանս առնլն, և իջևանելն. օտարընկալութիւն, և օտարութիւն, ըստ համաձայնութեան յունին. *Զարեգակն անմիջապէս ետուր առատ ասպնջականութեան. Իմ. ԺԹ. 3։ *Զի և ասպնջականութեան զոք արժանի մի արասցեն. Եղիշ. Ը։ *Սրբազան կրօնաւորացդ ելանել յիւրաքանչիւր խրճիթէ սակս ասպնջականութեան. Մագ. ԻԸ։ *Իբր ոչ եթէ փոփոխումն ինչ տեղւոյ, այլ' ասպնջականութիւն. Ոսկ. յհ. Ա. 10։ *Անդ ժամանակաւ արար ասպնջականութիւն, և աստ յաւիտենական բնակութիւն. Սեբեր. Գ։ *Ոչ կամէին ծանրանալ եկեղեցւոյն, այլոյ ումեմն գոլով նոցա հիւրընկալ ասպնջականութ. Ոսկ. Գծ։

ԱՍՊՈՒԶԱՆ. գ. Ծաղիկ ինչ. *Հօրուտն և մորուտն, և ասպուզանն. Միխ. ատոմ. Լ։ *Զվարդ, զմերուշան, զասպուզան. Երզն. փէր։ *Վարդենիք, մեծուր, ասպուզան. Վստկ։ Իսկ Ագաթ. գրի Ասպազան. և յայլ ձ. Ասպուզան։ Այլ 'ի Բժշկարանս' ԱՍՊՈՒԶԱՆ մեկնի' խաղավարթի քամուքմն. և ԱՍՊՈՒԶԱՆԱԿ, խափիթ։

ԱՍՊՈՒԾԱԿ, ի, աց. գ. Ազգ սոխակ թռչնոյ. պիւլպիւլ փէսակին. *Քան զսոխակ և զասպուծակ (յն. մի բառ) չիցեն ինչ ձայնիւ երգեք քաղցր և հեշտական մրմնջել. Ոսկ. ՃԻԼԻԴ. Է։

ԱՍՊՈՒՐ, պրս. որ և գրի ԱՍՊՈՒՌ ԱՍՓՈՒՐ, ի. գ. Հրագոյն կարմիր ծաղիկ' ձևով նման լայլակի, ուստի լինի ներկ։ Բժշկր։ Մխ. Բժշ։

ԱՍՏ. մ. յայտարար կայից 'ի տեղւոջ ուրեք. (լծ. ընդ լտ. յն. պ. ոտօ, խոտօ. ձէ, խոտափէն. և հյ. աստ, ըստ, նիստ, հաստատ. Լն). Որպէս Ἐνθάδε, ἐνθαῦτα, αὐτοῦ, ὧ. Hic, istic. Յայսմ տեղւոջ. 'ի սմին տեղւոջ յայսմիկ. հօս, հօսփէզը. պուրատա, պուրտա. գաղմ. սփէ. *Ի՞ ոք քո աստ' փեսայ, կամ որդիք։ Նիստ աստ առ իս։ Չէ աստ։ Ունիք ինչ կերակուր աստ։ Ամենեքին աստ եմք։ Ցերուսաղէմ, և աստ։ Մատիցուք աստ առ ած։ Զի՞ ես դու աստ Եղիա։ Նիստ դու աստ։ Ագարակ աստ զայս գիւտ չէր։ Դու աստ կաց առ իս. Լն։ Որպէս և զոյգ ընդ բացայայտիչ անուան. *Աստ 'ի հօյս էին։ Աստ 'ի դաշտիս ցոյց մեզ։ Գոյ աստ յաշխարհիս մերում. Փարպ։ Յհ. կթ։

ԱՍՏ. ատ Յայսմ վայրի' միջոցի. յայսմ բանի. 'ի նոր օրէնս. Լն. *Աստ է հանդէ.

բան է հաւատ սէգ։ Աստ է իմաստութիւն. եւն։ *Աստ ամաչապարտակ արտաքս։ Աստ խորհուրդ 'ի մէջ առեալ։ Աստ առաջ 'ի վերջ հասեալ գագարէր թագաւորութիւն։ Աստ առաջ 'ի բաց կացեալ հայք. Խոր։ փարպ։ Յհ. կթ։ *Աստ յառաջագոյն է ան֊տականն քան զգործականն։ Եւ աստ պէտք բազում երկիւղագին պատրաստութեան. փարպ։

ԱՍՏ. որպէս Ցայսմ աշխարհի՝ կամ մի֊ջակի. յաստի կեանս. պա. փռենէսթա. *Աստ վայելել։ Աստ մարմնաւոր պատուով, և անդ յաղթութեամբ։ Աստ կարծիս, և անդ կատարած. աստ խէթ, և անդ հա֊տուցումն. եւն. Աֆոն։ Նար. կէ։ *Աստ սերմանեսցուք, զի անդ հնձեսցուք, և ու֊րախասցուք. գնդ։

ԱՍՏ. իբր Այսր. յայս տեղի. Huc. հու. պուրայա. *Աստ մատեալ իցէ ». յն. իջեալ իցէ. Գծ. ճ. 18։ *Ուրեք ելի ես աստ։ Նախ քան զգալն իմ աստ։ Եթէ բերես զամենայն ինչս քո աստ. Վրք հց։ *Ե՛կ աստ, ե՛կ աստ, ե՛կ և բնակեսցուք ընդ մի֊մեանս. կլիմաք։

ԱՍՏ. ա. իբր նոյն ընդ դերանուանս՝ Ցայսմ, յայսմիկ. կամ որպէս յօդ՝ ս. *Ի դրախտի աստ։ Ի տանի աստ։ Ի ժամա֊նակի աստ յայսմիկ. եւն։

Եւ իբր՝ Որ ինչ աստ է. որ ինչ յաստի կեանս իցէ. Տե՛ս և ԱՍՏԱՆՈՐ. *Համբե֊րեսցուք աստեկքեան և աստ քաղցրութեանցս, և անդ թողութեանցն. Ար. որս. ծա։

ԱՍՏԱԳՈՅՆ, կամ ԱՍՏԻԱԳՈՅՆ. ա. Ὀξύτερος. Acutior, vehementior. Սաս֊տիկ կամ յոյժ աստի, այսինքն սաստոյ, ազդու. սաստկագոյն. *Աստի է զայրումն բարկութեան, և աստագոյն է քան զամե֊նայն բոց տապածեալ. Ոսկ. յհ. ա. 3։ (վրիպակ է այլ. և ձ. անձնագոյն)։

ԱՍՏԱԽՈՏՈՍ. և } գ. Բառ յն. աս֊
ԱՍՏԱԿՈՍ, ի, աց. } տաքօս. Ἀστακὸς. Cancer. ռմկ. ըստախօզ. խեցգետին կամ խեցեմորթ ծովային. *Պապայիծ, աս֊տախօսս. եւն. Մխ. բժշ։ *Այնպէս և ամենայն խեցեմորթքն, որպէս կարկի֊նոսքն, և աստակոսքն. Նիւս. բն։

ԱՍՏԱՆԴԵՄ, եցի. ն. Այսր անդր առնել, ձգձգել, թիւրել. տատանել. *Որք ըստ խրատուց չարութեան կամաց աստանդեն զբանն ճշմարտութեան. Վեցօր. ֆ։ *Աստանդել չփոթել զճշմարիտ խոր֊հուրդ վարդապետութեանն. Եփր. բգ։ *Արեգական աստանդէ զբանն բերանոյն. Ոսկ. եծ։ *Անուանումն այսր և անդր աստանդե֊լով, ինքեան ընդդէմ և կռուող. Փիլ. լին։ *Ցոյժ իսկ երկուացեալ աստանդիքն միտքն խորհուրդք։ Աստանդեցան կառքն երա֊սխաղուցք. Մծբ. ժգ. ժէ։ *Ոչինչ այ֊լուհետև խառնակցիս, և ոչ ցնորեալ այսր անդր աստանդիցես. Ոսկ. եա։ Իսկ Եւս. պտմ. է. 20. *Ոչ գտանեն 'ի նմա պատրուակս բոծղուծս, կամ աստանդեալս, կամ ոլ֊ելոյս. խմն խոտորնակս, կամ շաղփաղ֊փօս. որպէս յն. σολοικισμός, soloecismus.

ԱՍՏԱՆԴԵՑՈՒՑԱՆԵԼ. Նոյն ընդ վ. *Աղաւ և զուշն 'ի յիշատակաց արուեստիցն աստանդեցուցանէ. Յճխ. ճ։

ԱՍՏԱՆԴՈՒԹԻՒՆ. գ. Տատանումն. երկբայութիւն բանից կամ մտաց. *Ան֊կայուն պատասպարին դիւանիքն մերումք աստանդութեան օգտակար իւրացն մերոց առ֊նել. Վեցօր. ա։ *Ոչ միայն տկարութեան, այլ և աստանդութեան խորհրդոց բանիցա֊րս. Սեբեր. ճ։

ԱՍՏԱՆՕՐ. մ. (որպէս թէ՝ Աստեն ուր). Ἐνθάδε, ἐνθαῦτα. Hic, istic. Աստ՝ (ըստ ամենայն առման.) յայսմ տեղւոջ, վայրի, միջոցի, բանի, եւն. *Աստանոր 'ի որբանոցին. Պիտ։ *Աստանոր գտանել. Նար։ *Աստանոր նորոգեցաւ. Շար։ *Աստանոր պիտոյ են վարդապետք իմաս֊տունք. Վրք հց։ *Աստանոր ճառագայթ ճշմարտութեան 'ի հայաստանս փայլէր աշ֊խարհ. Խոր. հոխ։ *Աստանոր ենանոս ընկեցաւ 'ի պատուոյն։ Աստանոր ամենայն Հայք հարկեցան Հոռոմայեցւոց. Յհ. կթ։ *Աստանոր տեսեալ մտացս իմաստից շա֊պագայիցն դիպուածս։ Աստանոր 'ի սոյն ամանակի. Նար։ *Ոչ իմ կամքս եղիցին, այլ քոյդ. երկուս կամս աստանոր ցուցա֊նէ. Աթ. ա։ *Աստ աստանոր փոխանակ սեռի առաւ արհեստն. Սահմ. դ։ *Աստա֊նոր աքիլլեայ դէմքն են ծանօթք. Պիտ։

ԱՍՏԱՆՕՐ. ա. Որ ինչ աստ կամ յաստի կեանս է. արդի. աս. փէղի, հիմակուան. պուրանըն, ըիմտիքի. *Զաստանոր կենացս պէտս պատրաստէ. Պիտ։ *Յաստանոր մե֊ծութիւնս եդեալ զյոյս իւր։ Յաստանոր կենացս, որ լի է դառնութեամբ. Սարգ. յկ. է. ես ա. դ. է։ *Ի մեր ընթացիր յաստա֊նոր ուրախութիւնս (երկնից). Աթ. 'ի ոփէֆ։

ԱՍՏԱՌ. գ. Բառ ռամկական, իբրու Պաստառ՝ որ դնի 'ի ներքին կողմն հանդեր֊ձի. *Երեսք, և աստառ լիցի. Վրդն. ող։

ԱՍՏԱՐԻՏԱՑՔ. գ. Բառ յն. ասդիս, ասդիգիս, գի. այսինքն Քաղաքացի. ցեղ. *Երկեան աստարիտայքն ճոխք քաղաքին 'ի շարժմանէ անտի. Ոսկ. գծ։

ԱՍՏԵՂԱԲԱՆԱԿ, ի, աց. ա. Ἀστρολόγος. Astrologus. Աստեղաբան՝ որ խօսի ըստ ախտարաց ծննդաբանութեան զաստե֊ղաց. աստեղագէտ սուտ գուշակութեամբ. մունէճճիմ. *Ոչ է ասել կարգեալ ինչ ժա֊մանակ, յորոց գիտացեալ լինիցի ման֊կանցն ծնունդ. որպէս զի որք կոչին աս֊տեղաբանակքն՝ զժամն 'ի նոցանէ առնուլ գտանիցեն. Փիլ. նխ. ա։

ԱՍՏԵՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ. գ. Ἀστρολογία. Astrologia. Գուշակական աստեղա֊գիտութիւն. սուտ քաղդէութիւն ախտարաց. ախտարք. իլմի-նիճում, մունէճճիմլիք. *Աս֊տեղաբանութեամբ հզօր եղեալ՝ յօժարեցաւ ուսանել զկատարեալ չարութիւն. Խոր. ա. 31։ Շիր։

ԱՍՏԵՂԱԲԱՇԽ, ի,ից. ա. գ. Ἀστρονόμος. Astronomus. Աստեղագէտ, որ բաշխելով զգիրս աստեղաց՝ զինէ զշարժ֊մունս նոցա իմաստասիրաբար. էհլի հէյ֊էէթ. այլ և զսուտ գուշակաց, որպէս Աս֊տեղաբանակ. *Խաղան նովաւ աստեղա֊բաշխքն. Վրդն. ող։ *Որք յայս եղեալ են աստեղաբաշխք, խոստանալ կամին զը֊տանել գոլ եւն. Փիլ. նխ. ա։

ԱՍՏԵՂԱԲԱՇԽԱԿԱՆ. ա. Ἀστρονομικός. Astronomicus. Որ ինչ անկ է աստեղաբաշխից կամ աստեղաբաշխութեան. *Մակացութիւն աստեղաբաշխական. Անյ. փորփ։

ԱՍՏԵՂԱԲԱՇԽԱԿԱՆՆ. գ. իբր Աստե֊ղաբաշխութիւն. ἡ Ἀστρονομική. Ars astronomica. *Աստեղաբաշխականն 'ի շարժումն շարունակ քանակէն։ Զաստեղաբաշ֊խականն (գոնէ) քաղդէացիք. Սահմ. ժէ։

ԱՍՏԵՂԱԲԱՇԽԱԿԱՆԱԳՈՅՆ, գու֊նի,ից. ա. Ἀστρονομοιώτατος. Առաւել աստեղաբաշխ. կարի հմուտ աստեղաբաշ֊խականին. *Տիմէոս աստեղաբաշխականա֊գոյն գոլով քան զմեզ. Պղատ. տիմ։

ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ. գ. Ἀστρονομία. Astronomia. Ուսումն և գիտութիւն աստեղաց՝ բաշխելով զգիրս նոցա, և տեղ զննելով զանմոլարս և զմոլորակս՝ բաժա֊նելիս յիւրեանց, և դիտելիս ըստ յատկու֊թեան շարժմանց նոցա. որ է մասն ու֊սումնականին, այսինքն մաթեմաթիգայի. և մասն է նորա տոմարականն. աստղա֊բաշխութիւն. իլմի հէյէէթ, հայաթ. *Աստե֊ղաբաշխութիւն ենթակայ ունի զերկնային մարմին. իսկ կատարումն ոչ եթէ զառ֊նել զնմանն նմա, այլ դիտել զշարժումն նո֊րա։ Աստեղաբաշխութեան ենթակայ գոյ երկնային մարմին. իսկ իմաստասիրութեան նոյն ինքն աստեղաբաշխութիւն է ենթա֊կայ. Սահմ. դ. ծա։ *Զաստեղաբաշխու֊թիւնն գտանել ասեն բաբելացիք 'ի ձեռն զրադաշտի (զրադաշտ մոգի), և երկրորդ՝ եգիպտացիքն ընկալան. Նոննոս։

ԱՍՏԵՂԱԲՈՐԲՈՔՈՒՄՆ, քմունք. գ. Երեւոյթ յերկինս իբր մանաւանդ վա֊ռումն լուսոյ ըստ նմանութեան աստեղաց. զոր օրինակ են թռիչք աստեղաձգք, եւն. *Վարսաւոր լամբարաց, և նմանօրէն այ֊լոց աստեղաց, և կամ աստեղաբորբոք֊մունք ցոլմանց. Փիլ. նխ. բ։

ԱՍՏԵՂԱԳԷՏ, գիտի, տաց. ա. Որ֊պէս Ἀστρονόμος. Astronomus. Որ ունի զգիտութիւն աստեղաց՝ իմաստասիրաբար. աստեղաբաշխ. *Յաստեղագէտսն քաղ հարցաք. Հեթմ. ոփ։ *Բաբելոն և զանազան կո֊չէին աստեղագէտքն. Վրդն. ող. ճգ։

Եւ որպէս Ἀστρολόγος. Astrologus. Աս֊տեղաբանակ. քաղդէայ. մոգ. (եբր. հո֊զեր. այսինքն դիտող). *Յարիցեն և ապ֊րեցուսցեն զքեզ աստեղագէտքն քո, որ նշմարեն զաստեղս երկնից. Ես. խէ. 13։ *Աղաս աստեղագէտ ճարտար. Եղն. փր. բ։ *Աստեղագիտին պարտ և պատշաճ է բազում փոյթ յանձին ունել եւն. Վեցօր. ղ։

ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ, ի, աց. ա. Ἀστρολογικός. Astrologicus. և Ἀστρονομικός. Astronomicus. Սեպհական աստեղա֊գիտաց կամ աստեղագիտութեան. *Յաստե֊ղագիտական և քաղդէականացն կարծեաց օրինաց։ Արդեամբ թարգմանի Հայր վերամ֊բարձ, երևեցուցանէ զաստեղագիտականն և զվերամբարձայածումն. Փիլ. Իմաստն։

ԱՍՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ. գ. Ἀστρονομία. Astronomia. Գիտութիւն աստեղաց. աստեղաբաշխութիւն գոլելի. իլմի հէյէէթ. *Քաղդէացիք առաւել աշխատեալ յաստե֊ղագիտութեան. Փիլ. Իմաստն։ *Աստեղագի֊տուն զզուշացեալքն՝ նորումբք աստեղը֊քըն զգծեն ուսուցին խորհուրդ. Պորփ. ։ *Աստեղագիտութիւն, և աստեղք. քան֊զի և՛ աստեղագիտութիւն անսխալ է, և՛ են֊թակայ նորին, այսինքն աստեղք. Սահմ. ժբ։ *Զաստեղագիտութեան մասնանս նա եհան 'ի յունաց լեզու. Եղն. փր. ա։ *Զա֊փէլ աստեղագիտութեան զաստեղսն. Կե֊ղու. ողէփ։

Եւ որպէս Ἀστρολογία. Astrologia. Աս֊տեղաբանութիւն պարսաւելի. ախտարք. մունէճճիմլիք. *Մի հայիր այսուհետև յաս֊տեղագիտութիւն։ Մի յաստեղագիտութիւն ինչ հաւատար, և մի 'ի հաւահմայութիւն. Կոչ. դ։ *Եւ արդ զիա՞րդ, եթէ ըստ օրի֊նաց աստեղագիտութեան էր ծնեալ, քակէր զաստեղագիտութիւն. Ոսկ. մ. ա. 6։ *Եւ գտողաց զաստեղագիտութիւնն և մեկնչաց աստեղագիտացն ... բազում ինչ վրիպեն. Վեցօր. ղ։

ԱՍՏԵՂԱԳԻՒՏ, ի,ից. ա. Գտանող աս֊

տեղաց, իբր աստեղագէտ. աստեղաբաշխ. *Զօրութիւն աստեղ ձեռօք երեւեալ աստեղագիտաց. Պորփ. կամ Թէոդոր. 'ի ծն։

ԱՍՏԵՂԱԶԱՐԴ. ա. մ. Իբր աստղ կամ աստեղբք զարդարեալ. *Աստեղազարդ մարգարտաց. Նար. խչ։ *Զգլուխդ յերկրի թշնամւոյն խոնարհեցո, եւ թագիւ աստեղազարդ ած զգլուխ քո զարդարէ յերկինս. Նար. խրատ։

ԱՍՏԵՂԱԼԻՐ. } ա. Լի աստեղբք. աստեղազարդ.
ԱՍՏԵՂԱԼԻՑ. } *Եդին 'ի գլուխ նորա պսակ աստեղալից (կամ աստեղալիր). ՃՃ։ Հ = Յ. յոհնա. ծդ։

ԱՍՏԵՂԱԽՈՒՌՆ. ա. Խառնեալ եւ խիտ ըստ բազմութեան լուսափայլ աստեղաց. *Թագաւոր փառաց նոր սքանչելութեամբ երեւեալ աստեղախուռն սրբովք՝ կացցէ 'ի միջի ձեռուս. Վանակ. փարէմփ։

ԱՍՏԵՂԱԾԻՆ. ա. Մակդիր աբրահամու, իբրու ծնօղ սերելոց յիւրմէ որպէս զաստեղս բազմութք. *Աստեղածին հայր. Երզն. լուս։

ԱՍՏԵՂԱԿԱՆ, ի, աց. ա. Սեպհական աստեղաց, կամ նման նոցա. աստեղեայ. երկնային. լուսաւոր. *Ըուն ձայն՝ բերի ըստ երից. այսինքն երկրային, աստեղական, եւ ծովային. Գումոք։ *Աստեղական գասուց. Պրոկղ. 'ի սփէջ։

ԱՍՏԵՂԱԿԱՌՈՅՑ. ա. մ. Կառուցեալ իբրեւ աստղ հաստատուն. *Սա յաւիտենից աստեղակառոյց կայ. Պրոկղ. 'ի սփէջ։

ԱՍՏԵՂԱՀԱՃ, կմ ԱՍՏԵՂԱՀԱՋ, կամ ԱՍՏԵՂԱՀԱՉ. ա. Անստոյգ բառ, իբր հաճեալ ընդ խորանս աստեղագիտաց. կամ հաջօղ որպէս շուն ընդդէմ աստեղաց. *Աստեղահաճ, խնձ մատիր, եւ մենամարտեսցուք. Զէնոբ։

ԱՍՏԵՂԱՁԵՒ. ա. Որ ունի զձեւ աստեղ. աստղակերպ. աստղանման. *Աստեղաձեւ թռիչք. Վրդն. ող։

ԱՍՏԵՂԱՃԱՃԱՆՉ. ա. Ճաճանչեալ իբրեւ զաստեղս. Ἀστροφεγγής, ἀστροφαής. In modum stellarum resplendens. *Ի քըղամիթ այ աստեղաճաճանչ 'ի բոլորածիրանէ ոսկեթել. Պտմ. աղէքս։

ԱՍՏԵՂԱՆԱԼ, ացեալ. չ. Լինել իբրեւ զաստղ. նմանիլ աստեղաց՝ բազմութբ, կմ լուսափայլութբ, եւն. *Նշանակէ զահարոնի զարեգակնային գնացս օրինօքն յաստեղացեալ յերկոտասան ցեղսն իսրայէլի։ Բոցով հրոյ աստեղացեալ լապտերաց. Արք։ *Աստեղացեալ որդիքն հօր հաւատոց. Երզն. քեր։ *Աբրահամու, եւ 'ի նմանէ սերեալ աստեղացեալ զաւակսն. Վանակ։ *Պատուէրքն գիր լուսով գրեալ, բոլոր խաչին աստեղացեալ. Գնձ։

ԱՍՏԵՂԱՆԻՇ. ա. Ունօղ զնիշ եւ զանսիլ աստեղ. *Շարք աստեղանիշք։ Աստեղանիշ լուսաւորութբ բոցաճաճանչ շքով պաճուճեալ. Նար. տաղ. ի գանձ եկեղ։

ԱՍՏԵՂԱՆԿԱՐ. ա. Իբրեւ զաստղ կմ աստեղաձեւ զարդու նկարեալ. *Տաճարին վարագուրի եւ խուցայ՝ ծաղկերանգքն եւ աստեղանկարք. Անան. եկեղ։

ԱՍՏԵՂԱՆՇՄԱՐ, ի, ից. ա. Նշմարօղ եւ դիտօղ աստեղաց. որպէս աստեղաբանակ. *Ոչ որպէս քաղդէայքն աստեղանշմարք. Եզնիկ։ *Ճանաչել զնշանն զառութին աստեղանշմարից. Վանակ. յոբ։

ԱՍՏԵՂԱՊԷՍ. մ. Որպէս աստղ. աստղէն պէս. Եըլտըզ կիպի. *Աստեղապէս ուղղիչք. Նար. տաղ։ *Իւրաքանչիւր տեսողացն աստեղապէս երեւեալ. Սխոլ։

ԱՍՏԵՂԱՏԵՍԱԿ. } ա. Որ ունի զատեսիլ եւ զնմանութիւն
ԱՍՏԵՂԱՏԻՊ. } աստեղ. աստղակերպ. աստեղաձեւ. *Աստեղատեսակ յերկինս նկարագրութեամբն (խաչի) զպայծառութիւն ստացեալ լինէր. Նոննոս. (որ 'ի Ճ. գրի ԱՍՏՂԱՏԵՍԱԿ)։ *Ի մուր՝ որ աստեղատիպ ընթացիւք պատմի. Պրոկղ. 'ի սփէջ. ըստ Ճ. Ա։

ԱՍՏԵՂԱՏՈՒՆ, տան. գ. τὸ Ζώδιον, σημεῖον. Constellatio, signum. Տուն աստեղաց. խումբ խումբ աստեղաց յիւրաքանչիւր կողմանս երկնից, մանաւանդ 'ի կամարն կենդանակերպից. համաստեղութիւն. պուրճ, ախթէր. *Որպէս թէ աստեղատունք ինչ իցեն, եւ ըստ դիպելոյ պատճառաւորաց աստեղացն յաստեղատունսն՝ նոյնպիսիք եւ ծնունդքն լինիցին։ Մինչդեռ առ իւրն անն յաստեղատանն իցէ։ Անցեալ ընդ ամենայն աստեղատունսն. Եզնիկ։ *Ասեն երկոտասան աստեղատանցդ բաժանել զերկին, զոր կենդանակերպս կոչեն. Շիր։ *Զյեղեղմունս ժամանակաց գործէ (արեգակն), փոփոխելով յաստեղատունսն. Պիտ։ *Ծանօթ էին մոգքն ամենայն պարուց աստեղատանց. Զքր. կթ։ *Զծննդոցն իմն զաստեղատանցն յայս իմն առնել կամէին։ Ասեն, աստեղքս այս յանկակիցք են պատկերաց եւ աստեղատանց կերպարանաց. Վեցօր. է։

ԱՍՏԵՂԱՓԱՅԼ. ա. Փայլեալ որպէս զաստղ. աստեղաճաճանչ. *Աստեղափայլ եւ ազատածին որդիս կոչելով աբրահամու. Վրդն. լուս։

ԱՍՏԵՂԵԱՅ. ա. Յաստեղաց կազմեալ. եըլտըզլը, եըլտըզլու. *Պսակ աստեղեայ յերկնաւորանից. Յայսմ. ծդ. 1. յն. աստեղաց երկնաւորանից։ *Պսակ աստեղեայ իջեալ յերկնից 'ի վերայ դագաղացն. Հ = Յ. դեկտ. իէ։ *Խաչ, կամ նշան աստեղեայ. Խոր. բ. 80։ Փարպ։

ԱՍՏԵՂՕՐԷՆ. մ. ա. Աստղանման. նըման աստեղաց. պայծառ. *Կանթեղս աստեղօրէնս վառեցաք. Նար. ծթ։

ԱՍՏԵՂՕՐԷՆՈՒԹԻՒՆ. գ. Նիւթական թարգմանութիւն յն. ձայնիս ἀστρονομία, որ լաւ եւս թարգմանի Աստեղաբաշխութիւն։ Շիր։

ԱՍՏԵՄ. եցի. ն. Նոյն ընդ ՀԱՍՏԵԼ. եւ ԱԶԴԵԼ (որ գրի նաեւ ԱՍԴԵԼ, ԱՍՏԵԼ). *Զոր արար ած, եւ աստեաց 'ի բնութիւն կենանեաց. Կանոն։ Իսկ 'ի հին բռ. գրի, *Աստել, կազմել"։

ԱՍՏԵՒՈՐ, ի, աց. ա. Ἄριστος. Optimus, idoneus. Հաստատուն. կուռ. արուեստ. եւ զօրաւոր. եւ կարի լաւ. ընտիր. *Ցուցանէ աստեւոր ճանապարհ բարձրութէ պետնարհութին. Ածաբ. ծն։ *Զաստեւոր եւ ըզզարմանալին տեսիլն ծննդ (մովսեսի). Պիտ։ *Վէմ ինչ աստեւոր եւ ստուար զառ 'ի վեր դժուարաւ տարեալ լինի, իսկ զառ 'ի վայր իւրովի հոսեսցի. Խոսր. պտրգ։

ԱՍՏԷՆ. մ. Ὧδε, ἐνθαῦτα. Hic. Աստանօր. յայսմ տեղւոջ՝ վայրի՝ միճակի՝ աշխարհի. եւ Այժմէն. պուրատա, պուրտա, շիմտիտէն. *Աստէն 'ի հրեշտականի յերկիւղի եմք։ Չեղանեմ, քանզի աստէն մեռանիմ. Ա. Բթ. ԻԴ. 3։ Դ. Բթ. Բ. 30։ *Ես աստէն պահեցի առ իս։ Դու աստէն 'ի հայս կաս. Փարպ։ *Աստ եղով խաչ՝ աստ իմացի գողգոթայ, եւ աստէն խաչելութի. Անյաղթ. բարեբ։ *Աստէն ընկալեալ զհատուցումն մեղաց իւրոց. Ագաթ։ *Աստէն իսկ դատապարտեալ է. Փարպ։ *Զաստէն գարովեալս մի կշտամբեսցես կրկնակի դատել 'ի մեծի աւուրն։ Զի 'ի դատաւորին ձեռանէ աստէն իսկ փրծայց. Նար. կէ. կը։

ԱՍՏԷՆ ԵՒ ԱՍՏ. որ եւ ասի՝ ԱՍՏԷՆ ԻՍԿ ՎԱՂՎԱՂԱԿԻ. մ. Αὐτίκα. Mox. Անյապաղ. 'ի մօտոյ. հուպ ընդ հուպ. փոյթ ընդ փոյթ. անիքէ։ Պիտ։ Ոսկ. յհ. ա. 3։ Պորփ։

ԱՍՏԷՆ. ա. Παρών, οὖσα, ον. Praesens. Ներկայ. առաջիկայ. այժմեան. այժմու. *Ե՛ւ յաստէն ամօթոյս ապրիցիմք, եւ ըղհանդերձեալ կեանսն շահեսցուք. Ոսկ. մ. ա. 7։

ԱՍՏԷՔ, տէից. կամ ԱՍՏ ԷՔ, էից. ա. գ. Աստ գտեալքս. աստէն եղեալքս. երկրաւորք. *Երկնայինցն տեսակն առաւել գոյանայ՝ քան թէ աստէիցս։ Տեսլի՝ աստէիցս առաւել գոյանայ, քան թէ երկնայինսն. Արէոփ։

ԱՍՏԻ. մ. Ἔνθεν, ἐντεῦθεν. Hinc. Յայսմ տեղւոջէ. 'ի տեղւոջէս յայսմանէ. եւ յայսմ բանէ. ասփից, ասիքց, ասէ. ուրկից, հուրկից. պուրատան, պունտան. *Աստի առ ձեզ անցանել։ Բարձին աստի։ Երթիցուք աստի. եւն։ *Եւ ոչ 'ի տուն իմ դարձայց. բայց 'ի նոյն (այսինքն միանգամայն) աստի իսկ 'ի վանս երթայց. Վրք հց. ա։ *Աստի սկսաք լինել առանց թագաւորի. Լմբ. ատ։ *Զի մի խիղճ ինչ աստի երեւեսցի. Ոսկ. յհ. ա. 3։

Ռամկական է ասելն. *Ես այլ աստից ոչ գնացից. ՃՃ։

ԱՍՏԻ ԵՒ ԱՆՏԻ. մ. Ἐντεῦθεν καὶ ἐντεῦθεν. Hinc inde. Յայսմ եւ յայնմ կողմանէ. պէրի տէն, պէրու տէն. *Երկուս եւս այլս աստի եւ անտի, եւ 'ի միջի զյս. Յհ. ծթ. 18։ *Աւուր գնաց աստի, եւ աւուր գնաց անտի։ Յանդ աստի, եւ յանդ անտի. Թագ. ծա. 31։ Իէ. 24։ Իսկ Ագաթ. *Անտի մերժումն 'ի ստանջանս, եւ աստի մերձումն յարքայութիւն"։ Իմա, յիրէ անտի, 'ի բանէ աստի։

ԱՍՏԻ ԱՆՏԻ. Որպէս Յամենայն կողմանց. տէօրտ տէէն. *Վասն յանձախութեան ազգի ազգի մնացն (այսինքն իմաստից) որ աստի անտի յարդին. Սեբեր. ե։

ԱՍՏԻ ԱՆՏԻՔ, տից. ա. Դատեալքն յերկոսին կողմանս. յն. երկաքանչիւր, ἑκάτερα, utraque. *(Զձոյլ եղեալ) աստի անտիքն՝ պատուականքն եւ առաջինքն եւ հուպք եւ մերձաւորք անուանին զօրութիւնք։ Պաշտօն առնլով միջինն յերկաքանչիւրոցն յաստից անտից զօրութեանցն. Փիլ. իմաստ։

ԱՍՏԻ. Իբր դերանուն, Յայսմանէ. կամ որպէս յօդ՝ ա. ὁ, ἡ, τό. *Ցիշխանութենէ աստի զմեզ 'ի բաց մերժել, եւ յօդուցս աստի մերոց։ Յաշխարհէ աստի. 'ի մարմնոյ աստի. զայսպիսեաց աստի. եւն։ *Ի մերոց աստի. Ագաթ։ *Ի միջոյ աստի մերմէ։ Ի հեռաստանէ աստի. Յհ. կը։ *Ի յերկրածնաց աստի։ Ի ստորնայնոցս աստի։ Ի ներքոյ աստի հոսեալ. Նար։ Կամ *Յախտէ աստի յայսմանէ։ Յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ. եւն։

ԱՍՏԻ. ա. ὁ, ἡ, τὸ Ἐντεῦθεν կմ ἐνταῦθα. Quod est hic vel hinc, hujus vitae, terrenus, temporalis. Որ ինչ է աստի ծագեալ. կամ որ ինչ գտանի աստ, մանաւանդ եղեալն յայսմ աշխարհի. ժամանակաւոր. երկրաւոր. այս. սոյն. պունտաքի, պուրատաքի, պու ֆանիտէքի. *Յայտարարեալ զանտի վնասն, եւ զաստի օգուտս։ Զի այսպէս յաստի եւ յանտի բարութիւն վայելեսցուք. Ոսկ. մ. բ. 20։ *Հայցեսցուք զանդ հանդիստն, ընկեսցուք զաստի ճգնութիւնս. Ածաբ. աղաւթից։ *Մեծա-

տուէն զրկեցաւ 'ի դրախտէն վասն աստի փափկութեանն. Բրս. հց: *Անքարաստանութիւն աստի կենացս. Jն. Լոկ, կենաց. ա. յհ. ժ. 16: *Զաստի կարծիս: Աստի յաւիտենիս: Յաստիս բերկրեցիք յաւիտենի. Ագաթ: *Ոչ վասն աստի ինչ իրաց. Պիտ: *Յետ աստի փառացս. Խոր: *Աստի ազգաց անդ մեծամեծս ժառանգել. Լմբ. ող: Յովհ:

ԱՍՏԻՔ, աստեաց. ա. գ. Երկրաւորքս. մարմնաւորքս. ժամանակեայք. մարդիկ. աշխարհ. որդիքս. այսորիկ. զոր փոխէա. *Զփափկութիւն և զկամս աստիս քան զյաւիտենականն լաւ համարեցար. Վրդ. հց. ի: *Խնդրեսցուք զանուն զհանգիստ աստեացս աշխատութեան(ք). Յճխ. ժէ: *Յիշատակ աստեացս պարտեաց: Ի տարրից աստեաց. Նար. ծա. և մե: *Ամենայն ինչ աստիքս իբր զստուեր երևի. Ոսկ. յհ. ը. 41: *Զնորքնովք և զմերովքն, զաստեօքս և զհանդերձելովքն: Զաստեացս հոգալք, և զերկնից և ոչ երբէք. Ոսկ. մ. ա. 6. 22: *Աստիս (այսինքն աստի կեանք) է ձիր և շնորհ: Զոր յաստիս կրէն մարդիկ: Յաստիս ասալով են. Լմբ. եր ընտ Եղբ. և ող: *Աստեացս խնամ ածէ. Սահմ. ժա: *Մին աստեացս, և միւս ապառնեացն: Զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս: Կընքելոց յիմաստից աստեացս: Ի կենցաղ աստեացս: Զաստեաց կենցաղոյս պատկեր: Զհոգին յաստեացս փրկեաց. Նար. ւ. խէ. կը. ճա. ճէ. և մե: Տես և զյաջորդ բառս:

ԱՍՏԻ, աստւոյ, ւոջ, ովք, ոտեաց կամ ովց. ա. որ և ԱՍՏԻԿ, ԱՍՏԵԻՈՐ, ԱՍՏՈՅ, ԱՁԴՈՅ. Հաստատ. հաստատուն. անյողդողդ. պինդ. տոկուն. առաքինի. և Սուրբ. աստիք. *Իմաստութիւն և աստին. աստին, և վստահ: Աստի իմաստութիւն ողորմութեան վարի առ ամենեսին: Առաքինութիւն ազգաւոր է աստւոյ և իմաստնոյ բարուց: Ընդ ամպաշտութիւն, և ընդ այլ ևս ընդ աստի առաքինութիւնս: Անորդութիւն աստի իմացուածոց կարգաց: Առաքինութիւն, զոր յաստ աղացն աստեաց և առաքինեաց կարծելի է. Փիլ. ոփեղ: *Աստի է զայրութիւն բարկութեան քան զամենայն բոց. Ոսկ. յհ. ա. 3: Ի Հին Բռ. գրի. *Աստի. հաստատուն. կամ զօրաւոր ։։:

ԱՍՏԻ. գ. Հաստատութիւն. պնդութիւն. զօրութիւն. առոյգութիւն. Տես և 'ի վերջ կոյս բառից ԱՁԴ, ՅԱՁԴՈՁ: *Արձանացեալ հաճոյ օրինացն է ինչ, որ յաստուածոյ. որոյ և արժան է կանգուն կալ, և հաստատուն ունել զնիստ կայանին. Փիլ. Եւ. բ. 17: *Պէսպէս ազդանսակաւքս յաստւոյ ուրտէ 'ի նոսա զերկիւղն. Ոսկ. Ես: *Յաստւոյ (կմ յաստուոյ) հաղածանացն էր յաւարտելի ուրեմն զղջեալ. Ճ. Ա: *Եւ ևս յաստոյ ասուել աստիք առ կռոնան. Եղ. ի: *Զի մի անկանիցիք յաստեաց հաստատութենէ. բ. պ. գ. 17. յն. 'ի բնիկ կայից. ըստ հյ. իբր 'ի վիճակէ կայից: *Յորժամ յաստիս յուժի զօրացաւ կեղեւորական բարի համբաւն. Լաոփ. իա. իէ:

Աստի և Աստուածք. հաստատ առոյգ. Յաստիս մանկութեն. Բառղ. դ. 3: *Աստեօք մանկութեն ծաղկեալ. Արող. գ. 5: Զանց է արարեալ զաստեօք 'ի մանկութենէ, և 'ի ծերութեն զար հասեալ. Յհ. կբ: *Յայժմ մանկութէ աստեաց՝ հասանէ յաստի երիտասարդութեն. Լմբ. ող: *Աշխատութեն յաստիս մարմնոյ, պատուղն և վայելք 'ի ծերութեն և յանցեալ ժամանակի:

Յետ աստեացն մանկութեն անցանելոյ առ պա առ զկինն. Ոսկ. մ. գ. 14: և Եբր. իդ: *Երկինք երեմեան է, այսինքն յաստիս յուժի զօրութեն, 'ի մեծութե 'ի փափկութե. Ոսկ. Եռ: *Առ հակառակն աստեօք երիտասարդութենն արիապէս մարտնչի: Մինչև յամս պաշտութենն և արդարութենն և սրբութենն ած յաստիս. Շ. ա. յհ. իգ:

Ի պէսպէս միտս ձգի ասելն. *Ո՞ր այն իմ ժամանակ, յորում ընդ ասել բանին և ես (երկիրս) յոքնազան վերաբերէի բուսակս 'ի կենցաղավէտս աստից: Օդ քաղցրաշունչ 'ի ձեռն արևելեան ցօղոյ, և բազմազութ խնամով սնուցանէի զիմ աստիցն զարմ. Պիտ. ձ. 5:

ԱՍՏԻՃԱՆ. կամ ԱՇՏԻՃԱՆ. ի. աց. գ. ('ի ձայնէս ճան՝ իբր արմատ բառիս սանդուղք, և աշտ, ոտն. թ. խոս. իբր բարձր. 'ի վեր.) Ἀναβαϑμός, βαϑμός, κλίμαξ, κρηπίς. Gradus, scala, basis. Ի վեր ելք ոտն առ ոտն ընդ սանդուղս. ելևելք, կամ ելևէջք, մատունք, կամ ոտք և ոտնատեղիք սանդղոց. և Սանդուղք, և բեմ. Ներտիւան կամ Մէրտիվէն տայղէ՝ պասամագ, պասամօգ, փէրէձէ. Մերտէկէ. *Մի ելանիցես ընդ աստիճանս 'ի սեղան իմ: Երկոտասան առիւծք կային 'ի վերայ վեցեցունց աստիճանացն (աթոռոյ): Ի վերայ միոյ աստիճանացն (բեմին) ուր նստէին: Պօղոս կացեալ 'ի վերայ աստիճանացն՝ շարժեաց զձեռն. ևն: *Ելանէլիս երկաթիս, և 'ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն. Խոր: *Իբրև աստիճանօք բարձրացաւ. Արէ: *Բարձրացոյց իբրև սանդղոց աստիճանօք զլսօղսն. Սարգ: *Որպէս յաստիճանէ յաստիճան զգնացսն փոփոխելով. Խոր: *Աստիճանս սեմոց դրանցն սահմանեալ. Լմբ: *Ի տեղի լողութեն աստիճանին. Փարպ:

ԱՍՏԻՃԱՆ. Նշանակ և վիճակ որպիսի և է բարձրութեն և ցածութեն, կամ մերձաւորութեն և հեռաւորութեն. *Երթիցէ ստուերն զաստն աստիճանօք (արեգակնային ժամացուցի). դ. Թգ. ի. 9. 11: Ես. լը. 8: *Օրհնութիւնք աստիճանաց (յելևէջս ձայնից երգոց). Սղ. ճծը. ևն: *Երգ աստիճանաց է. Ժմ: *Յաստիճան մահու հասանէր. Վէցօր. ա. այսինքն 'ի կէտ, կամ առ դուրս մահու:

ԱՍՏԻՃԱՆՔ ՏԱՆ. Յարկք. դաստիկոնք, որ ըստ յն. բովէլոն: ևԼին գոնը. *Անկաւ յերից աստիճանաց ներքնոց. Ոսկ. գծ:

ԱՍՏԻՃԱՆ. Նմանութ՝ է Յառաջատուութեն ուսման, առաքինութեն, և որ և է բանի. կամ շարադասութեն բանից ըստ ճարտասանից հետ զհետէ յիրէ յիր փոխելով. *Իմաստասիրութեն բազում աստիճանաց պիտանայ. քանզի և բազում աստիճանք են իմաստասիրութե. Սահմ. ժգ: *Առաջին աստիճան խոնարհութե է ... երկրորդ աստիճան են. Վրդ. հց. բանիւ բեն. ընէ: *Սուգն պահս ուսուցանէ. պահք աղօթս բերեն. աղօթքն յողորմութիւնս դարձուցանէ. և առ սակաւ սակաւ աստիճանաւ յաստիճան ելանեն, և դիւրաւ յերկինս ելանեն. Մանդ. ծէ: *Ոչ տակաւ տակաւ աստիճանէ յաստիճան փոփոխեալ։։ յն. ոչ 'ի յառաջատուէ (աճեցեալ). Կոչ. ծա:

ԱՍՏԻՃԱՆ. Աւագութեն, իշխանութեն. բարձրութեն. պատիւ. Մէրթէպէ, րիւթպէ, ճայէ. *Թագաւորութենն հասանեն յաստիճան. Խոր: *Յարարչութե աստիճանի գնէր. Յհ. իմ: *Աշտիճանի փառաց: Այս պէտ պանծալի այսր աստիճանի. Նար: *Որք առաքեցանն առ նա, հաւատարիմ էին, և բարձր աշտիճանաւ. Ոսկ. յհ: *Ոմն այր խոհական անուն՝ աշտիճանաւ իշխան. Կղմն: *Որ ելևէջս աստիճանի՝ բնութե եմոյծ հաւասարի. Շ. խոստ: *Զբարեկամացն քո ընկալարուք զաստիճան. Շ. ընդհանր: *Որ զվկայութենն աշտիճան առնին 'ի ժամանակի հալածանացն. Յճխ. է:

Մանաւանդ՝ Եկեղեցական կարգ, և դասակարգութե զանազանեալ պատուով և իշխանութեամբ. *Սարկաւագունք ... որ բարւոքն պաշտեսցեն, աստիճան բարի անձանց ինքեանց շահին. ա. տիմ. գ. 13: *Աստիճան պաշտաման երիցութեն, կամ վարդապետութե, կամ եպիսկոպոսութե, հայրապետութեն. Ագաթ: Կորիւն: Փարպ: Յհ. կթ: *Ձեռնադրութիւքն ըստ ամենայն աստիճանաց. Կոմրջ: *Առ դասս քահանայիցդ՝ որք աստիճանաւ երկրորդ էք եպիսկոպոսացդ. Շ. ընդհանր: Տես և Լմբ. պտրգ. և Մխ. դտ. յոյն աստիճանս երկրաւոր և երկրաւոր դասակարգութեէց:

ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐ, ի, աց. ա. Ունօղ զաստիճան եկեղեցական. ժառանգաւոր. կղերիկոս. կարգաւոր. *Նշխար կազմի աստիճանաւորաց ձեռօք. Վրդն. յաւէտպր: *Դնէ զյովհաննէս մկրտիչ 'ի դէմս ամենայն աստիճանաւորաց. Բրս. մրկ: *Աստիճանաւոր պատուովք զնախապատուելին բարեպաշտել՝ յառաջ մատուցանելով նախկին զփառսն. Յհ. իմ. ափ: *Զարս զայս աստիճանաւորս և զպիրս օրինացն յայլ կոչէ. Երզն. մփթ:

ԱՍՏԻՃԱՆԵՄ, կամ ԱՇՏԻՃԱՆԵՄ, եցի. Ն: Հանել յաշտիճան պատուոյ. տալ զաստիճան եկեղեցական. *Պահել արժան է զգիրս եկեղեցւոյն իբրև ոչ եպիսկոպոս մարթ լիցէ առնել, և ոչ վրիպանօք զիղձն աշտիճանել. Կանոն:

ԱՍՏԻՃԱՆԻՄ, եցայ. չ. Բաժանիլ կամ 'ի վեր ելանել յաստիճանս. զանազանիլ որ և է աստիճանաւ. *Ճեմեցուցանեն զվէտս վէտս ալեացն, որ աշտիճանիցին 'ի ջուրցն ծիծաղելոյ: Սկսանի արեգակն աստիճանել և ելս առնել 'ի հարաւակողմն կողմանց: Եղծանէ զաստիճանեալ կարգսն: Դիրք և գնացք աստեղացն 'ի մէջ միմեանց աստիճանեալք. Վէցօր: *Ճանապարհ աստիճանեալ ներքուստ 'ի վեր մինչ 'ի կատարած անձաւին. Արծր. դ. 11: *Ոչ բարձրութե ոք մեծացեալ, ոչ ելևէջս աստիճանեալ. Շ. Լիդ: *Կուրին՝ ըստ հաւատոց իւրոց աշտիճանեցաւ (կամ աստիճանեցաւ) բժշկութիւն նորա. Եփր. համաբ: և Շ. մտթ: *Զեկեղեցւոյ ցուցանեն զառանձնաւորութե, ուր դէտք կան աստիճանեալք. Տօնակ:

ԱՍՏԻՆ. Տ. ԱՍՏԻ, իբր Աստեւոր, հաստատուն. առաքինի. *Իմաստութիւն և աստին է վիճակաւ ելեալ և հասեալ պատճառին: Որոց տեսութեն աստին և իմաստուն, ևն. Փիլ. լին:

ԱՍՏԻՔ, աստեաց. Իբր Երկրաւորք, և իբր Աստեւորք. և իբր Արբունք. Տես 'ի վեր անդր ԱՍՏԻ. ա. գ:

ԱՍՏՂ, տեղ, տեղք, տեղաց կամ տեղց, տեղօք կամ տեղքք. գ. Ἀστήρ, ἄστρον. Stella, astrum, sidus. (լծ. ընդ լտ. ստէլլա, աստրում, սիտուս. յն. աստէր, աստրօն. պ. սիտարէ, սիտէր.) ար. նէճմ. թ. Եըլտըզ. Լուսաւոր, կամ լուսատու մարմին երկնաւոր, մեծ կամ փոքր, անմոլար կամ մոլորակ. մանաւանդ անմոլարքն. *Արար ած զերկուս լուսա-

ւորսն զմեծամեծս, և զաստեղս ։ Ընդ լուսնով, և ընդ ամենայն աստեղբ ։ Այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, և այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել է փառօք. ևն ։ *Արեգական և լուսնի՝ աստեղօք հանդերձ. Ագաթ ։ *Տի՛ նա և այլոցն աստեղց շարունակութիւք. Պիտ ։ *Աստեղք մոլարք ։ Մոլորական աստեղք. Յուդ. 13 ։ Եւս. քր. ա. ևն ։ *Որ գնայուն աստեղքն են, արեգակն և լուսին, և այլ ևս հինգ աստեղք. Եզնիկ ։

ԱՍՏՂ ԱՐԱՒՕՏԻՆ, կամ ԱՐԱՒՕՏՈՒ. կամ ԱՍՏՂ. իբր Արուսեակ ։ Յոբ. ԻԲ. 16 ։ Նար. խոս ։ Սարգ. յուդ. Բ ։ *Ի ծագելոյ առաւօտուն մինչև յերևելն աստեղն. Նեէս. Ժ. 21 ։

ԱՍՏՂ ՍԼԱՑԵԱԼ. Տ. ԹՌԻՉ. (աստղ.) *Զոր օրինակ 'ի գիշերի որք յանկարծակի յօդս փայլատակմունք լինին, զորս և սլացեալ աստեղս կոչեն. քանզի ասեն զհրաձև զայն ձգումն բոց լեալ յօդս՝ հողմով յերկնի գծեալ. Նիւս. խոս ։

ԱՍՏՂ. որպէս Աստղանիման ժժմակ ծովու. *Իսկ որք կոչին աստղ, կարի քաջ իմաստնաբար զօրէն խահամոքի զհետ երթեալ. Փիլ. Լիւս ։

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ. Տ. ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ. *Աստղաբաշխութի 'ի քաղդէացիս երևեցաւ. և ապա եգիպտացւոց և հելլենացւոց ուսեալ՝ առաւել ևս զօրացուցին ։ Մի ուսանել լինել զարուեստ աստղաբաշխութե, զի դիւրահաւան է 'ի մոլորութիս. Շիր ։ *Հնար գոլ արհեստ աստղաբաշխութե, վասն զի քաղդեայ էր. Մագ. Է ։ *Քաղդէացիք գործեն աստղաբաշխութի նախ առաջին. Փիլ. Լին ։

ԱՍՏՂԱԳԷՏ. Տ. ԱՍՏԵՂԱԳԷՏ. *Մեկնըչաց աստղագիտացն բազում իրք վրիպեն ։ Առացու աստղագիտին, ևն. Վ. Էյօր. Ղ ։

ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ. Տ. ԱՍՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ. *(Աղորոս ա Թագաւոր քաղդէացւոց) եգիտ զաստղագիտութին, և զԹիւս կենդանակերպիցն, և մոլորակաց, և զշրջմունս նոցա. և 'ի սմանէ անուանեցաւ քաղդէութին. Մխ. աւ ։

Դարձեալ՝ որպէս Աստեղագիտութիւն, կամ տեսուն աստեղն (յակոբայ). *Այս աստղագիտութե սպասեալ մնային մոգքն. Ձքր. ԿԲ ։

ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ. ա. Որ իցէ գուշակումն աստեղբ. Տես և ԱՍՏՂԱՆՇԱՆ. *Աստղագուշակ տեսլեամբն յայրին իջեվանի. Շար ։

ԱՍՏՂԱԼՈՅՍ, լուսոյ. գ. Լոյս կամ նշոյլք աստեղաց. *Գաղտ գողացաւ զմարմինն աստղալուսով երևեցուցեալ. Հ=Յ. ուեղփ. ծԳ ։

ԱՍՏՂԱԿԵՐՊ. ա. Որ է ըստ կերպի աստեղ. աստեղաձև. աստղանման. *Աստղակերպ փայլումն. ՃՃ ։

ԱՍՏՂԱՀԱՄ ԼԻՆԵԼ. Վնասիլ յաստեղաց. շանԹահարիլ. *Թէ ծառն աստղահար լինի. Վստկ. ՃՂ ։

ԱՍՏՂԱՃԱՃԱՆՉ. ա. Ճաճանչեալ որպէս զաստեղս, կամ աստեղօք. Տես և ԱՍՏԵՂԱՃԱՃԱՆՉ. *Աստղաճաճանչ շքեղացեալ փառօք. Ճ. Ա. և Բ ։ *Տեսանէ բազ աստղաճաճանչ, և փայլփէլին յարկ ձեղուանցն. Պտմ. աղէք ։

ԱՍՏՂԱՅԻՆ, յնոյ, ոց. ա. 'Αστρῷος. Sidereus. Աստեղական. աստեղեայ. *Յորժամ վասն շան է բանն, պարտ է քննել, եթէ նշանակէ զաստղայինն, և զծովայինն, և զերկրայինն. Սահմ. Ա ։

ԱՍՏՂԱՆԿԱՐ. ա. Ունող զնկարս 'ի նմանութեն աստեղաց. մակդիր Թեոց և տռան սրբամարգի. *Հաւն ամբարտաւան և պարսկաբարոյ՝ սփռելով զԹևն ոսկեճաճանչ և աստղանկար. Տօնակ ։

ԱՍՏՂԱՆՄԱՆ. ա. մ. Նման աստեղ. *Ընդ ըղձութի նոցա ձևացեալ աստղանման. Ձքր. ԿԲ. ծն ։ *Աստղանման սպարապետին՝ նըյն վարդանայ՝ քաջ նահատակին. Գնձ ։

ԱՍՏՂԱՆՇԱՆ. ա. մ. որ և ԱՍՏԵՂԱՆՈՒՇ. Բերող կամ բերելով յինքեան ըղձանշան և զնմանութե աստեղ. *Աստղանշան սիւն, կամ խաչ, կամ լոյս. Ճ. Ա ։ Վրք ոէղի ։ *Յարուցեալ աստղանշան՝ գնաց առ մնփիատոս. Հ=Յ. յուլ. ծԴ ։ *Որ բազական արևելեայ աստղանշան ծանօԹ գտեալ. Ագաթ ։ *Բացաւ դուռն արևելեան՝ աստղանշան ճանապարհաւն . . . Աստղանշան ուղևորութ. Թէոդոր. 'ի խոյան ։

ԱՍՏՂԱՊՍԱԿ, ի. գ. Աստեղեայ պըսակ. տարզէ պսակ. Էռլփըլպան իռիքճան. *Աստղապսակ 'ի լուսոյ կազմեալ՝ եւ տորատիոսեանց որց պարգևեալ. Գնձ ։

ԱՍՏՂԱՋԱՀԸՆԿԱԼ. ա. Որ տեսանիցի աստղն ջահընկալ լինել. *Խուժական մոգուցն աստղաջահընկալ առաջնորդութե գալ յերուսաղէմ. Տօնակ ։

ԱՍՏՂԱՎԱՐ. ա. 'Αστερόεις. Stellatus, sidereus. Իբր Աստղաւոր. կամ ուր վարին աստեղք. Ճեմարան աստեղաց. *Ջեւս հիմն երկրի, և աստղավար երկնի. Արիստ. Ծ ։

ԱՍՏՂԱՏԵՍԱԿ. Տ. ԱՍՏԵՂԱՏԵՍԱԿ ։

ԱՍՏՂԱՏՈՒՆ. Տ. ԱՍՏԵՂԱՏՈՒՆ ։ Շիր ։

ԱՍՏՂԱՑՈՒՑԱՆԵԼ. ն. Իբրու Աստղանել. տալ աստեղանալ. ընդ աստեղս դրել. *(Կենդանակերպ) Նշանակք երկոտասան նախահայրեացն. զանուանս նոցա փորեալ քանդակէ 'ի ներքս՝ կամեցեալ զնոսա աստղացուցանել. Փիլ. Եւ ։

ԱՍՏՂԱՒՈՐ, ի, աց. ա. Ունակ աստեղաց. որ և ԱՍՏՂԱՎԱՐ. ԱՍՏՂԱՅԻՆ. Էլւփըլլը. *Երեք են երկինք. նախ օդեղէն, երկրորդ՝ աստղաւոր, երրորդ՝ վերին, ուր աս յափշտակեալ պօղոս. Տօմար ։

ԱՍՏՂԻԿ, տղկան կմ տղկայ. գ. 'Αφροδίτη. Venus. Արուսեակ (իբր հարսն) 'ի մոլորակս, և 'ի չաստուածս ափրոդիտէ՝ օրինակ տռփանաց ցանկութե. զիւհրէ, նահիդ, աստղ էլւփըլլը. և Ծիծա, Նէֆա, Ջէհ Ջէբ. *Զկնոջ մարդոյ ուրումն պատկեր 'ի բարձունս կառուցեալ, աստղիկ անուն եդեալ. Կոչ. Դ ։ *Զափրոդիտ պաշտեմ ասէ՝ զաստղիկ ։ Զափրոդիտեան ցանկութիւնն ասեմ, այսինքն զաստղկանն. Ոսկ. եփես. ԾԵ ։ Ն Մ. Գ. 17 ։ *Տուն (կամ յանուն) արամազդայ և աստղկայ մեծարէին. քանզի վառէին զկրակն քրմն, և զաղբիւրն եղբայրն. Խոր. պտմ. հռիփ. ։ *Որ ինչ յաղագս տռփանորին, և երկնային աստղկանն պայծառագոյն ինչ ասել Թուի, յաղագս խրախութե և զուարճութե ամենայն առեալ եղև ։ Յաստղկան ցանկութեցն ։ Յաստղկան մոլութե են. Փիլ. տե լոբ. և Լիւս ։

ԱՍՏՂԿԵԱՆ. ա. 'Αφροδίσιος. Venereus. Ափրոդիտական. ցանկական. *Անառակ ցանկութիք. որ ափրոդիտեանն կոչին, այսինքն աստղկեան. Ոսկ. եբր. Է ։

ԱՍՏՂՈՌՈԲՈՆ. Տ. ԱՍՏՌՈՂԱԲՈՆ ։

ԱՍՏՈՅ, կամ ԱՍՏՈՒ. Տ. ԱԶԴՈՅ, և ԱՍՑԻ՝ իբր հաստատուն. զօրաւոր. *Սաղն աստու է (կամ ազդու է) 'ի հարկանելն ուռամբ. Վստկ. յոբ ։

ԱՍՏՈՒԱԾ, տուծոյ. գ. Θεός. Deus. (իբր հաստիչ, կամ աստ՝ և յաստիս ածօղ, այսինքն գոյացուցիչ, արարիչ, ստեղծիչ. որպէս ստուգաբանի 'ի բազմաց. տես Աս որս. Է. ըստ հյ. Երգ ։ Խոսր ։ Նար ։ Լմբ ։ Սկևռ ։ Վանք ։ և կամ կրաւորաբար, Աստոյ, ստուոր, հաստատուն, անշարժ, անփոփոխ, հզօր, ևն ։) Սեպհականեալ կոչումն անեղ և հարկաւոր էակի՝ էացուցչի ամենայն էից. որ և ասի Որ էն. Ե. Տէր. մի միայն բարի, ճըշմարիտ, ամենակալ, ամենատէր ևն. վասն որոյ և ըստ ինքեան եզակի ևեԹ ասի Ած. ալլահ, հագգ, Թէնրի, բէդդ, Խանբըր, խիւտա, էէզտան, իզիտ. երբ. էաւ, էօլօ, էլօհիմ. որ է յոգնական 'ի նշանակ պատուոյ. ափթա, ևն. *Ի սկզբանէ արար Ած զերկինս և զերկիր ։ Եւ ասաց Ած, եղիցի լոյս ։ Եւ ասէ տէր Ած ։ Տն Ած երկիր պագցես. ևն ։ Կամ *Բանն էր առ Ած, և Ած էր բանն. ևն ։ *Ած անունն արարչական է, որ զնախախնամելն յայտ առնէ ըստ փիլոնի. և առ մեզ ստուգաբանի, Թէ աստ էած զմեզ. Ի Գիրս խոսր ։ *Երրայեցին այլ և այլ անուամբք կոչէ զԱծ. մերԹ էլ կոչէ զնա, և մերԹ՝ յահ (այսինքն էած). և մերԹ ադոնայի (ադօնայի). և մերԹ եղուիմ (կմ էլօհիմ). Կիւրղ. ծն ։

ԱՍՏՈՒԱԾ, և ԱՍՏՈՒԱԾՔ, աստուծոց, կամ աստուածոց. ասին պատուաբար՝ երբեմն հրեշտակք, և մարդիկ՝ իբր առաւել հաղորդեալք ձրից բնութե և շնորհաց առ յԱյ. *Երևեցաւ նմա Ած առ կողմնաւն մամբրէի. Ծն. ԺԸ. 1. որ և զնին կոչին Երեք արք, և ապա Երկու հրեշտակք են. որպէս և Եւ. Գ. 2. նախ կոչի հրեշտակ, և ապա տէր, Ած, ևն. զի 'ի դիմաց այ երևէին հրեշտակք ։ Իսկ Եւ. Է. 1. ասի վասն մովսեսի. *Ետու զքեզ Ած փարաւոնի ։ Այլ Եւ. ԻԲ. 28. *Զածս քո մի բամբասիցես. և Սղ. ՁԱ. *Ած եկաց 'ի ժողովս աստուածոց (կամ աստուծոց). իմա զդատաւորս, և զայլ իշխանս ։ *Ած՝ ոչ մարդկան միայն, այլև ածոց է (ած), և իշխան՝ ոչ միայն գեղջկաց, այլև իշխանաց. Փիլ. բագն ։ *Ածս կոչէ ածաբանութիւն զերկնայինսն և զերագոյնս քան զմեզ էութիս, և առ 'ի մէնջ ածասէրս, և սրբազան արս. Դիոն. երկ. ԺԲ ։ *Զի որդիք այ լիցուք, և ածք սիրով. Յհ. Բ ։ Տես և Նար. խղ. ԺԸ. հէ ։ Շ. բերդ ։ Լմբ. ող. ևն ։

ԱՐԺԱՆԱՀԱՒԱՏ, ի, ից. } Ἀξιόπιστος. Fide dignus, qui fidem meretur. Արժանի հաւատալոյ. հաւատարիմ. ընդունելութեան արժանի. Խոստովանողք. *Ո՛չ են վկայ արժանահաւատ: Արժանահաւատ ձեզ լինել թուիմ: Արժանահաւատ առնել զանձն, կամ զվարդապետութիւնն: Եթէ զգոյն 'ի չգոյից ած յառաջ, արժանահաւատ Թերես է. Ոսկ. յհ. օրէկ: *Ապա գրաւեալ արիաբանակս արժանահաւատ բանիւ. Խոր. Բ. 87: *Արժանահաւատ քննութիւն այսպէս ծանիցուք. Սէլտ. յոր: *Որքա յոյժ արժանահաւատութիւն էին կայ արժանահաւատալի: Արժանահաւատալի առնել զբանն. Ոսկ. յհ: *Ի նոյն ինքն յամենեցունցն այ գործոցն, որ արժանահաւատալին է. Մագ. ա. գ. Ի: *Զնոյն ինքն զգարդարելի զարժանահաւատալին. Նիւս. խաչ:

ԱՐԺԱՆԱՀԱՒԱՏԱՐՄԱԳՈՅՆ. ա. Ἀξιοπιστότερος. Fide dignior. Առաւել կամ կարի արժանահաւատ. *Ա՛ռ 'ի թշնամեաց վկայութեամբ արժանահաւատարմագոյն. Բր. ձն:

ԱՐԺԱՆԱՅԱՂԹ, ի, ից. ա. Ἀξιόνικος. Condignus victor, vel victrix. Արժանի յաղթութեան կամ յաղթողաց. *Օրինաւ ձշնեալք' արժանայաղթիցն արքայութեն արժանացուցք զանձս. Մագ. եմբ. եղ:

ԱՐԺԱՆԱՆԱԽԱՆՁ. ա. Իբր Բարեխանձ. *Արժանանախանձ փախանձեալ. Փիլ. ... Շ. Կի գուցէ Արժանի նախանձելոյ, որպէս յն. ἀξιόζηλος.

ԱՐԺԱՆԱՆԱՄ, այ. ւ. Ἀξίουμαι, καταξίουμαι. Dignus fio, efficior; mereor. Արժանի լինել. սայեւ ժելայ. *Զխորհուրդս մեծամեծս նմանիցն արժանացեալ էր: Զոր և գտանել արժանացեալ. Եփր. *Ա՛մ երկնայն խորհուրդն արժանացեալք. Ածայն. բարձ: *Արժանացաւ անուանել 'ի ձեռն որդի մեր. Ցհ. կԹ: *Որդի ա՛յ արժանաւորայ լինել. Նար. եղբ: *Ի ձեռն (մի) հաղորդութեան լինել մեծ 'ի մարդկանէ արժանաւոր մարդ. Մագ. եմբ.

ԱՐԺԱՆԱՊԱՐ. ա. Զարկող արժանի. իրաւամբք վճարել 'ի չարիս. *Լցեալ են սատանէ բարկութեամբ 'ի վերայ արժանաչար պատուհասարարս. Բենիկ:

ԱՐԺԱՆԱՊԱՏԻԺ. ա. Պատժոյ արժանի. *Օտար ժամանակորդի՝ արժանապատիժ. Նար. Իա:

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ. ա. Ἀξιότιμος. Honore dignus, & Pretiosus. Արժանի պատուոյ. և ըստ արժանւոյն պատուեալ. պատուաւոր. որդոյ. յարգի. մեծարոյ. վեհ. վսեմական. *Բարրոքէ 'ի կող և 'ի կախ ընդդէմ արժանապատուին արանց: *Որդին աշխարհի արժանապատուիկ յանձինս. Լմբ. առաջ. և առ Լեւ: *Արժանապատուիւ անցուած: Արժանապատիւ փառօք առաւ քեալք: Զորակսն արժանապատուն գոլով ըթէ ոչ ընդունելիցէս: Արժանապատուին պատուէր: Բնաւէ արժանապատուն կեն գանեաց երկրին. Նար. առաք. և խոս: *Ուրախացիր արժանապատիւ սիրով մարիամ կոյս. Թեոփ. խոս:

ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԱԲԱՐ. մ. Ἀξιωτιμῶς. Condigne, & aequo pretio. Ըստ արժանւոյն. ըստ յարգի. *Որ ոչ իրաւ. ւսպէս վաճառէ, և կամ ոչ արժանապատուաբար. Գրիգ. օրին. ծ:

ԱՐԺԱՆԱՊԱՐՏ. ա. Ἀξιόχρεως. Jure debitor, obnoxius. Արժանապէս պարտական. իբր իրաւամբք պարտաւորեալ. *Արժանապարտ մեծի կորստեան գնաս գոլ յայսմ ասէ: Որ արժանապարտն է մահու: Ոչ ունիցին վկայ' արժանապարտ մահուցանելոյ զնա. Իդ:

ԱՐԺԱՆԱՊԷՍ. Իրաւամբք արժանի գտանել. արժանի կամ արժանաւոր. բաւ. ճշմարիտ. արժանահաւատ. Ἀξιόχρεως. Vere dignus, fide dignus, idoneus. *Կամաւորութեամբ մեծանի զաղգային արժանապարտ մահ, ինքն անպարտ գոլով մահու. Սէլտ. եւ: *Արժանապարտ' այսպէս գեղեցիկ առաքինութեան հայր հանել. Փիլ. լին. Գ. 111: *Միայն արժանապարտ հայրենի բարեպաշտութեան պատմել. Ոսկ. ատարոյ: *Եթէ երաշխաւոր արժանապարտ Ճշմարտապէս կայլ ոմն հաստատեցէ: Գրաւոն և կեանօն երաշխաւորք ձեզ էքէն արժանութեան արժանապարտք առաջ. Գրիգ. օրին. Ա. Եպիսկ:

ԱՐԺԱՆԱՊԷՍ. մ. Ἀξίως, ἐπαξίως, προσηκόντως, ἠκότως. Digne, rite, convenienter, merito. Որպէս և արժանն է. ըստ արժանեաց. ըստ արժանի. օրինօք. պատուով. ըստ պատշաճի. վայելչապէս. իրաւամբք. յաջողակ, հոգւ խնդր. *Արժանապէս (կամ արժանաւորապէս) ասել քեզ. Իմ. ԺԳ. 1: *Արժանապէս ասել, կամ խմբական, կամ մխիթարել, կամ շնորհել, կամ շինել ըստ հրեշտակս. Գրիգ. Եփ: Փիլ: Կոչ: *Արժանապէս առաքել, կամ հանել, ձանձել, բարեհամբաւել, վերադարձել, գանձել. Խոր. Գ. 57: Նար: *Զգեղ մեծագործութեանց արժանապէս երգով. Շար. որ լինի և ոքոյ:

Հանդերձ խնդրով. *Գնալ ձեզ արժանապէս Տեառն. Կող. Ա. 10: *Արժանապէս շնորհացն գնալ. Կիւ. ծէ:

ԱՐԺԱՆԱՍԱՍՏ. ա. Արժանապէս սաստիչ, կամ սաստիկ. *Արժանասաստ հրեշտակք. Ճ. Ա: *Զգեցին 'ի վերայ իւրեանց զարժանասաստ բարկութիւն այ. Ցիւլաս:

ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼՈՒՉ. ա. Ἀξιοπρεπής. Dignus, decorus. Արժանապէս վայելուչ. արժանի և վայելչական. *Արժանավայելուչ է անյապաղ փութով այսմ անցանել առաքինի. Պիտ:

ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼՉԱԳՈՅՆ. ա. Ἀξιοπρεπέστερος. Praestantior. Առաւել արժանավայելուչ. նախապատիւ. գերագոյն. *Զհոգին արժանավայելչագոյն տեղւոյ (քան զայլ ինչ՝ որ) 'ի մարմնաւորն. Նիւս. բն. ա:

ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼՉԱՊԷՍ. մ. Ἀξιοπρεπῶς. Digne, decore. Ըստ արժանւոյն վայելչապէս. արժանաւոր պատուով. *Արժանավայելչապէս զմեծութիւնն գովեցին. Փիլ. նխ. Ք: *Արժանավայելչապէս առ հառուցանէ այ զօրհնութիւն. Լմբ. ող:

ԱՐԺԱՆԱՏԱՆՋ. ա. Արժանի տանջանաց. արժանապատիժ. *Մի 'ի տապակս աներկեւղութեան տոչորեր զարժանատանջ անձն եղկելոյս. Բենիկ:

ԱՐԺԱՆԱՏԱՐՓԵԼԻ.
ԱՐԺԱՆԱՏԵՆՉ.
ԱՐԺԱՆԱՏԵՆՉԱԼԻ.
ա. Ἀξιέραστος. Dignus desiderio, amore; amabilis, maximopere expetendus. Արժանի տարփալոյ. սիրելոյ. ցանկալի և սիրելի յոյժ. կարի տենչալի. *Արդարև հոգւապէս գովելի և արժանատարփելի է գործն. Փիլ. խմութ: *Արժանատենչ տեսութիւն. Վրդն. լոււ: *Արժանատենչալի և զայրն և զմիտսն երևեցուցաք: Զամենագեղեցիկ, և զարժանատենչալի երեսսն, զոր աչք մարմնոյ ոչ տեսանեն. Փիլ. խմութ. և վին:

ԱՐԺԱՆԱՏԵՍ, ի, աց. ա. Արժանի տեսող լինելոյ. կամ արժանապէս տեսող. *Զժողովուրդս ոչ ընդ նոսա ելանել ('ի լեառն), բայց տեսողս լինել արժանատեսացն երջանիկ 'ի վերն Ճանապարհի. Փիլ. ել:

Եւ Արժանի տեսութեան. փառաւոր տեսլեամբ. *Վասն յերևսաց արժանատես և պայծառափայլ գոլոյ՝ զբառնաբաս դիոս կոչէին. Ոսկ. գծ:

ԱՐԺԱՆԱՏԵՍԻԼ. ա. Արժանի տեսութեան (ինչ). *Որոյ ոչինչ արտաքոյ (ըղձալի) տեսանելոյ՝ յառաջագոյն պատուեալ էր արժանատեսիլքն և արժանիքն փութոյ. Փիլ. լին:

ԱՐԺԱՆԱՑՈՒՑԱՆԵՄ. ցուցի. ն. Ἀξιόω. Dignor, dignum existimo. Տալ արժանաւորս արժանի առնել. կամ կացուցանել կամ համարել. արժանաւորել. և Վարձ կամ գին հատուցանել. տաճկ. էհլ էթ. օսման. *Անմոյն որ զինքն արժանացոյց մաքրութեան, պատկերացի. Անյաղթ. բարձր: *Միշտ աղաչելն միշտ պարգևաց արժանացուցանէ. Խոսր: *Կենացյարութեան արժանացուսցես. Նար. լէ: *Նախ իսկ յուսատրացն զոր արժանացուցանէ (կամ արժանեցուցանէ) լինել ժառանգորդս. գրեցէ (զկտակն): [illegible] և գնոյ արժանացուցանէ զմաձան[illegible]. Պղատ. օրին. ծա: *Ես ոչ եմ պա[illegible] զանձն իմ արժանացուցանել [illegible] և միոյ չարի (պատժոյ). [illegible]

ԱՐԺԱՆԱՒՈՐ, ի, աց. ա. [illegible] gnus. Արժանի. որպէս [illegible] բուռք, որ ունի արժանիս [illegible]

պատուոյ, կամ պատժոյ. և իր՝ որում անկ է և գիպող գովեստ կամ պարսաւ. ըւյըգ. ևւ, էլլանի, ըւյըգ, մուսթահագգ. *Ինքնին խնդրել զարժանաւորս իւր. Իմ. Զ. 17: *Ոչ չարակնեմ ընդ արժանիս. և արժանաւոր ո՞ ոք իցէ, բայց եթէ այն՝ որ ինձ և իմոց կամացս հեռանեցի: Ի վերայ առողջ և արժանաւորաց և այլց: Արժանաւորացն մահ՝ այլոյ կենաց սկիզբն է: Վասն միոյ արդարոյ և արժանաւորի բազում մարդիկ ապրին աղգականութեամբ. Փիլ: *Տէրն արժանաւորաց իւրոց մերձաւոր է. Ագաթ: *Իւրոց արժանաւորացն խմանի. Եղիշ. Ե: *Արդարապէս չարիք արժանաւորացն 'ի վերայ եկեալք. Բրս. չար: *Արժանաւոր փոխանորդ: Արժանաւորս իւրում առնել մերձաւորութեան. Պիտ: *Եւ ոչ 'ի ծառայական սպասաւորուէ արժանաւոր եմ զանձն կացուցանել. Կիւրղ. ղկ: *Արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ: Որում արժանաւորք եղիցուք հանդիպել ամպովք. Պտրգ: Ժմ: *Արժանաւորս արարեր զմեզ ժառանգորդ լինել կենացն յաւիտենից. Շար: *Զինչ հոգւոյ արժանաւոր (այսինքն զուգահեշխ արժանեօք.) Բրս. Ղրփ: *Գովութեան արժանաւոր: Թշնամանաց արժանաւոր: Արժանաւորք 'ի զարմանալ: Արժանաւոր գտեալ մեծամեծ պքանչելեաց. Պիտ: *Սարսափման լռողաց արժանաւոր. Խոր. Գ. 16:

ԱՐԺԱՆԱՒՈՐ. Κατήκων, προσήκον. Conveniens, congruus, եմ. Դիպող. գիպան, օրինաւոր. պատշաճաւոր. վայելչական. բարեյարմար. իրաւացի. արդար. կարևոր. մունասիպ, ուլայիգ, ճայիզ, հագգ. էօլլու. *Ի սոնս տարեկանաց և յայլ աւուրս արժանաւորս. Ա. Դ. ծՔ. 11: *Ցարժանաւոր ժամանակի. Եփր. աւետ: *Կարգաւ պատմութեան ըհետ անցանելով զարժանաւորան ասացից. Փիլ. փեւոկան: *Զայս ամենայն արժանաւոր իրաւամբք (յն. հարկաւ) եդեալ է մեր յառաջ քան զձառս պատմութեանս. Եւս. պտմ. Ա. 3: *Արժանաւոր մաքրութիւն. Անյաղթ. բարձր: *Արժանաւոր փարթամութեան փոխձանեալ. Վրք հց. ծԳ: *Ցարժանաւոր տեղիսն զնոսա պատկեացեն. Ցհ. իմ. ոփ: *Արժանաւոր երկրպագութիւն. Վեցօր. Ղ: *Արժանաւոր պատիւ, կամ աղաւթութիւն, պաշտպանութիւն, բարեբանութիւն: Զարժանաւոր պայտ սիրոյն հատուցանել: Դարձուցանել զարժանաւոր գործոցս աշխատութեան: Ոչ արտաքոյ արժանաւորին է այս բան: Այլ և այլս քան զարժանաւորն գէպ եղև կրել վարուց հետևմունս. Պիտ: *Արժանաւոր ըստ քեզ բամբասանս. Նար. Ի: *Անեղծից չէր արժանաւոր ամօթ կիր մերկութեան. Եփր. ծն: *Զորպիսի արժանաւոր գովեստ ընկալցի: Ցեանեալս 'ի նախագրութեանց արժանաւորաց. Նար. ծԲ. և լԲ:

ԱՐԺԱՆԱՒՈՐ Է. ՏԻմող. Արժան է. իրաւացի է. *Եսխւողեալ արժանաւոր է առաւել միշտ զհրաշափառագոյն նորաբանութիւն հատուցանել: Ցաղագս որոյ արժանաւոր է միշտ գովաբանել զայդա անմեկնաշ նահատակութիւն. Պիտ:

ԱՐԺԱՆԱՒՈՐ. մ. Ἀξίως. Digne. Արժանաւորապէս. վայելչապէս. *Խորհել արժանաւոր ըստ բանից ասացելոց. Իմ. Է. 15: *Ցարժանաւոր յառաջելն. Պիտ:

ԱՐԺԱՆԱՒՈՐԱԳՈՅՆ, գունի, իւ. [illegible]ερος. Dignior. Առաւել արժանաւոր[illegible] յոյժ. *Ի մաքրագունէն և յարժանաւորագունէն հոգւոց: Զինչ մաքրագոյն, և կամ արժանաւորագոյն քան զայդ հրեշտակ. Փիլ. լին: *Մովսէս կամաւոր այլ, և ծառայութեան առաւել քան զամենայն մարդկան արժանաւորագոյն. Դիոն. Բույթ: *Արժանաւորագոյն [illegible] (այսինքն արժանահաւատ՝ քան զյան) զաւ 'ի գործոցն ցուցանել լինել ասէր. Կիւրղ. գանձ:

ԱՐԺԱՆԱՒՈՐԱՆԱՄ, ացայ. Ց. ԱՐԺԱՆԱՒՈՐԻՄ. *Որ փրկչին աշխարհի արժանաւորացար լինել մայր և աղախին. Գնձր:

ԱՐԺԱՆԱՒՈՐԱՊԷՍ. մ. Ἀξίως. Digne, merito. Տես և ԱՐԺԱՆԱՊԷՍ. Արժանաւոր գոլով. արժանի գտեալ ըստ արժանեաց իւրոց. տաճկ. էհլնչէ. *Արժանաւորապէս հասանել 'ի տանուտէրութ, կամ վճռակել յաղթող կաթողիկոսութեան, կամ գտանել վայելող. Փարպ: Պիտ:

Եւ Արժանապէս. ըստ արժանեաց այլոց. վայելչապէս. օրինօք. *Արժանաւորապէս ըստ աւետարանին քում կրօնաւորել. Ցձի. իԳ: *Արժանաւորապէս խնդրել, կամ պատուել, պատուել, պարտ ինչ ցուցանել. Փարպ: *Եւ ոչ լոել անգամ արժանաւորապէս նորայն կարացին լինել քերթութեանց. Պիտ:

Եւ Ցիրաւի. իրաւամբք. արդարև. հագգ խուրէ, մուսթահագգ. *Զոր արժանաւորապէս ասացից՝ ոչ մահու զաւեալ, այլ անմահութեամբ զուարձացեալ: Զնոյն և արժանաւորապէս խորհեցայ իրրու ոչ կարել և թաքուցանել. Պիտ:

Մերթ՝ ա. Արժանաւոր. *Արժանաւորապէս զոհիւք հաձել զմիտս ածոցն. Փարպ: *Արժանաւորապէս պաշտամանց պատուեալ. Նար. հԷ:

ԱՐԺԱՆԱՒՈՐԵՄ, եցի. ն. Ἀξιόω. Dignum facio, efficio. Արժանաւոր առնել. արժանի կացուցանել. արժանացուցանել. տաճկ. էհլ էթ. *Իւր հանգստեանն արժանաւորեսցէ զամենեսեան. Ագաթ: *Աղաչէր, զի արժանաւորեսցէ զնոսա 'ի տուն իւրում: Ճճ: *Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ օրհնել: *Արժանաւորեա զմեզ տր լեն. Ժմ: Արժանաւորեա զնկերեցելոյն մեր լեն. Շար:

Եւ Ἀξιόω. Dignum censeo, dignor. Եւ Արժանաւոր կամ արժան համարել. *Եւ զինքն ոչ արժանաւորեաց զանձն իւր՝ զինքն բացա կոչեցն լուծանել. Ոսկ. յհ. Ա. 13: *Զիարդ զարարիչն գոլ ոչ արժանաւորեսցէ, որոց ոչ հրաժարէ 'ի նախախնամութենէ: Ասեն, թէ ոչ արժանաւորեաց մուլթէ: Եւ փառաւորց լինել արարիչ. Կիւրղ. գանձ: *Եւ ոչ 'ի վերջին բանս արժանաւորեցաք շարել. Խոր. Ա. 31:

ԱՐԺԱՆԱՒՈՐԵՑՈՒՑԱՆԵՄ. ցուցի. Տ. ԱՐԺԱՆԱՑՈՒՑԱՆԵԼ. *Ըստ պատկերի և իւր ըստ նմանութեան արար զմարդն այն, և իւր գիտութեանն արժանաւորեցոյց. Բրս. հց: *Հանգստեան արժանաւորեցուցից ասէ, որք գայք առ իս. Եղիշ. մթ:

ԱՐԺԱՆԱՒՈՐԻՄ, եցայ. չ. Ἀξιοῦμαι. Mereor, mereo. Արժանաւոր կամ արժանի լինել, գտանիլ. և Ընդունել ըստ արժանի օրինակ. գտանից վաստակոց. տաճկ. էլլանի օլմաք. *Բդեշխութեան կողմանցն արժանաւորեցան. *Ցաջակողմանն արժանացաւ. Խոր. Ա. 22: *Ցաջակողմանն արժանաւորեցայց գասուն կոչմանի. Պիտ: *Արժանաւորեցայց դասուն կոչմանի: Ը. Շինակ: զորմութ արժանաւորիք յայ. Ը. Շինակ: *Որք արժանաւորեցայք 'ի կոչումն փառաց: Որք արժանաւորութեան քոյ այ մերոյ: Որք արժանաւորեցայք կոչել յաշակերտութիւն առաքելոցդ

լոյս Թագէոսի. Ըստ.

Եւ որպէս համարակ բայց ըստ յհ. ոՃոյ. *(Վերին գասք) քան զամենայն՝ հրեշտակական մաքրանուներունեն լուսագոյն արժանաւորին՝ վասն նորա 'ի նոստ լինելոյ ամենապետականին լուսափայլութեանն. Դիոն. եւթ. ՟Գ:

ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ. գ. Ἀξιότης, ἀξία. Dignitas, dignatio. Արժանաւորն գոլ. արժանի գտանիլն. իրաւացի արժանիք, եւ որգիւնք վաստակոյ. որպէս եւ Լաւութիւն իրաց. շայէ֊ւէֆ, սէյօգօք, խուրէֆօֆ, սէլ֊ղ, էձր, էրղանէ. *Արդարութիւն է աւագիմութիւն անձին՝ բաշխական ըստ արժանաւորութեն. Արիստ. Ե: *Վայելեն անգ 'ի բարիս ըստ արժանաւորութեան: Ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան հատուսցէք. Ցձր. Է. ծԳ: փորդ: *Գարպասաւորութիւնք արժանաւորութ. Աթան: *Ցոյ ըստ նորա արժանաւորութեն զիստաւորութի. Վէյօր. Ջ: *Ամենայնիւ վերջացելագոյնովն յարժանաւորութեն. Սարգ. յէ. յաՀէ: *Ի վեր քան զգանն եւ զարժանաւորութի պատմունն (որ էլջէ լաւ եւ արժանաւոր իրացն). Սարգ. Ա. յհ. ՟Գ:

ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ. Ὁσιότης. Sanctitas, sanctimonia, pietas. Գործելն զարժանն. լաւութի. բարեպաշտութի. սրբութի. երկիւղածութի. անարատ քաղաքավարութիւն. (որոյ հակառակն ասի՝ գործել զանարժանս). *Բարեպաշտութի եւ արժանաւորութի: Արժանաւորութի եւ պղծութի: Արժանաւորութի առ ած, եւ արդարութի առ մարդիկ. Փիլ. Ծ. բան: Ն իմաստ: *Բարուցն արժանաւորութի 'ի մարդկանէ կարեաւ յաղթողգանելս խորհրդոց. Փիլ. Նխ. Ա:

ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ. Ἀξίωμα. Dignitas, auctoritas. Աչափման պատուոյ. պատիւ եւ բարձ. վայելչութի. ծովսութիւն. իշխանութի. ամփ. հէղինօֆօնէ. մեծութի. շքեղուն. եւ Սեպհական յարգ իրաց. *Ասոյ զդասուն եւ զազգ, զանսակ արժանաւորութն՝ յորում էրն. Ճ. Ա: *Մեծարել ըստ արժանաւորութեն վկայ ասելն. Աթան: *Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն ասնուլին, այլ հինաբար. Խէւ. Բ: *Որոշելով եւ բաժանելով զարժանաւորութի անգր երանութենցն. Ցհ. Ժ. Ել: *Շնորհօք 'ի միրոսութենն ընկալաք զպատկերին արժանաւորութի. կամրջ: *Զորոց զգովեսան արժանաւորութեն յայտ եմ բանի պաշտեցի. Նար. ԾԲ: *Արժանաւորութի հակառութէ էր զՃշմարիտն եւ ... որջել. Անյ. ղեբխոբսի:

ԱՐԺԱՆԱՓԱԿ. ա. Արժանապէս փակեալ կամ փակեալ. *Երկանկի շրթանցս արժանափակ ալխիւ կարկեւոյ. Նար. ԾԲ:

ԱՐԺԱՆԱՓԱՅԼ. ա. Արժանաւորութ փայլեալ. կարի արժանաւոր. *Արժանափայլ խնդիր. Խոր. առ որդ:

ԱՐԺԱՆԱՓԱՌ. ա. Արժանի փառաւորելոյ, զարմանալոյ. *Արգասաւոր 'ի բանս գործս արժանափառս. Խոր. Ա. 1:

ԱՐԺԱՆԵԱԼ. Քերթողաբար՝ իբր Արժանացեալ. *Արժանեալք լիցուք շնորհաց. Գր. ող. յԷԷՍ:

ԱՐԺԱՆԵԼ ԶԱՐԺԱՆՍՆ. Կնքել ըզ... 'ի գրանս, եւ զարժողուն նոցին որոշ... օէիֆ ղուտմագ. *Զնշեալ զգիրն, ... զարժանան զոր արժանեաց յո... Ոսկ. Ս. Ա. 11. յն. զԳԸ... զոր աղաւաղեաց:

ԱՐԺԱՆԸՆԴՈՒՆԱԿ. } Արժանի ընդունելութեն.
ԱՐԺԱՆԸՆԿԱԼ. ա.

Համօրյական. ընդունելի. մագաղաւ. *Քօ նք եւ արժանընդունակ աղօթիւք. Ըստ: *Արժանընկալ պատուիք (կանոնաց): Խընդրուածս հաշտարարս, եւ գոհութիւս արժանընկալս. Ցհ. կԲ:

ԱՐԺԱՆԻ, նւոյ, նեաց. ա. Ἄξιος. Dignus. Նա՝ կամ այն՝ որում արժան է ընծայել ինչ 'ի պատիւ կամ յանարգանս. արժանաւոր. յարմար. եւ Հաձոյ. ընտրեալ. ընտիր. պիտանի. շայէֆէլ, էրղան. Զանձանց ասի. *Եղէց արժանի աթոռոյ հօր իմոյ: Բարեաց յիշատակաց արժանի: Արժանի ողջունի: Եւ ոչ Թաղելոյ արժանի առնել: Եղբարցն արժանի եղեալ: Արժանի իմոյ ծերութեն երեսցայց: Արժանի ես դու լինել մեզ բարեկամ: Արժանի լեցի իմձ (դուստր քո), եւ ես քեզ եղէց արժանի փեսայութե: Արժանի իսկ են բաժանակից նմա լինելոյ: Արժանի իսկ էին նոքա վրիպելոյ 'ի լուսոյ: Փորձեաց զնոսա, եւ եգիտ իւր արժանիս: Տալ զյաղթութի արժանեաց իւրոց. եՆ: *Անուններն արժանեաց լսէ. Փիլ. Լին: *Զգիտութի Ճշմարտութե իւրոյ ցուցանէր նքզ եւ արժանեացն ամենեցուն. Ոսկ. յհ. Ա. 1: *Մատուցանելով մահու արժանեաց (այսինքն արժանեաց): Զոչ արժանիս լուսոյ. Նար. Ծ. Կէ: *Զարժանիսն զրկելով. Խոսր: *Մահու արժանեացս. Լմբ. ող:

Եւ զիրաց ասի. *Արժանի զարմանալոյ. *Քահանայապետութե ինչ արժանի գործ ոչ գործէր: Գեղեցիկ խորհուրդս զարժանի հասակին: Նրաց պատմել արժանի ժամանակին: Ոչինչ արժանի մահու կամ կապանաց ունէր մասն. եՆ: *Արժանի ծառայու. Փարդ: *Խոստովանել յարժանեին իմձ մասն. Նար: *Գործել զարժանին եւ զիրաւն: Արժանի ընծայիւք, կամ պատարագօք: Արժանի ամբութի: Արժանի գործոցն հատուցումն: Առանց սոցա անկար է լինել ինչ յարժանեաց. Ցձր: Խոր: Պիտ: *Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութե, եւ արժանի եղեալ չերկինք համբերութեան. Բուզ. Գ. 2: Խակ Իմ. ԾԲ. 7. *Զի արժանի գերուն ընկալցի ծառայից այ... պատուական երկիրն »»։ իմն, զաւլթակաւութի կամ ստորութի պատուաւոր:

ԱՐԺԱՆԻ. իբր Ցանկաւոր. սեպհական. *Տեառն մերոյ արժանի է լինել նաւահանգիստ ամենայն բարեաց. Եփր. համաբ:

ԱՐԺԱՆԻ. Որ արժէ, արժող. *Ցաւալի քան զԹագաւորին ձեռնագիրն արկանելոյ քարտեզ է. Թերեւս ասան լուսմայի արժանի. եւ յարժամ Թագաւորն ձեռն արկանիցէ եւ հատանիցէ, բազում կշռոց ոսկւոյ արժանի եւ մեծագին փոքրագինն լինի. Սէբէր. Գ: *Քանզի արժանի քեզ երեւեցի բանին այն յաւուր գատաստանին. Բրս. աղաղխ:

ԱՐԺԱՆԻՔ. գ. Արժանաւորութի. յարգ. եւ Արդասիք. վաստակք. եւ Իրաւունք. *Թէեւ ես յաւէտ Թափուր իցեմ յարժանեաց. Նար. ՅԳ: *Արտաքոյ արժանեաց իմոց պատուեցի քննել զգիրս. Սարգ. յէ. յաՀէ: Ուսանի

ԸՍՏ ԱՐԺԱՆԵԱՑ. գ. Ն. Ս. իբր Ըստ արդեանց վաստակոց, եւ իրաւամբք. օրինօք. արժանապէս. շայէֆ խուէրէ. *Ի գԹոյ հարկիս նայել յամենեսեան, Թէ եւ ոչ ունիցին արժանիս: Ոչ ըստ արժանեաց, այլ շնորհօք. Խոսր: *Ըստ արժանեացն ընկալցին զհատուցումն: Ըստ արժանեացն է հատուցումն առ բարեգործսն եւ արդարս. Ցձր. Է. Է: *Արդարապէս կշռէ ըստ իւրաքանչիւր արժանեաց զշնորհն. Լմբ. պարգ:

*Զնոյն արիւն արասցէ նոցա 'ի կորուստ ըստ իւրեանց արժանեաց. Աթան: *Ըստ արժանեաց Թագաւորաց: Ոչ ըստ արժանեաց իւրոց եղեւ ընկալեալ. Խոր. Գ. 23. 57: *Ըստ վայելչուչն արժանեաց եւ ոչ զարմանալ անգամ կարասցէ: Ըստ արժանեացն իւրոց աւել գովութիւնս: Ըստ արժանեացն եւ ոչ բնաւ ընդ ումեք համեմատեսցի. Պիտ:

ԱՐԺԱՆԻ, կամ նիս, նեօք. իբր Ս. Արժանապէս, եւ արժանաւորապէս. *Եւ ոչ արժանի ըստ որոց մեղայն՝ պատժեաց զիս. Ցօբ. ԼԳ. 27: *Արժանի՛ չար խորհրդոցն նմա հատուցեալ. Ցհ. կԲ: *Ընկալեալք զնա 'ի տր արժանի սրբց: Արժանի գնալ կոչմանն: Արժանի աւետարանին գնայցէք: Գնալ ձեզ արժանի տն. Հռ. ԺԶ. 2: Եփես. Դ. 1: Փիլիպ. Ա. 27: Կող. Ա. 10: *Որոց բարիս արարեալ յուղարկեա արժանիս այ. Գ. յհ. 6: *Թէ ըմպիցէք զնա արժանեօք, այրեսցէ զմեզս ձեր. Աթան:

ՑԱՐԺԱՆԻ. եւ } Ս. Δικαίως. Juste,
ԸՍՏ ԱՐԺԱՆԻՈՑՆ. } jure, merito.

Արժանապէս, արդարապէս, յիրաւի. օրինօք, իրաւամբք. *Որ այնչափ բարերարութե չեղեւ պիտանի, յարժանի զանհնարին վրէժս տայցէ. Ոսկ. Ս. Ա. 12: *Յարժանի եւ ըստ պատշաՃի եմուտ արարած ջերմութե յաշխարհս: Նոյնպէս եւ ջուրցն բազմութիւնք եւ յորդութիւնք առաւն յարժանի եւ յիրաւի. Վէյօր. Գ: *Յարժանի կրեմ եղկելիս զանզգամական զկիզումն. Նար. ԾԲ: *Բարուոք եւ յարժանի ցասեաւ ընդ նմանմարգարէն. Եփր. ԲԳ: *Մի ոանհար լիցիս ումեք 'ի նեղութե ժամու, յարժանի կամ յանարժանի. Վանակ. յոբ: *Զորոյ զպատժապարտանս ոչ կարեմ ըստ արժանոյն արտադրել. Պիտ: *Յամենեցունցն եղեւ պատուեալ ըստ արժանւոյ. Ցէշ: *Ամենայն ինչ ծածկեալ է ըստ արժանուն՝ այնոցիկ, որ տեսանել ոչ կարեն. Փիլ. Լին. Դ. 21:

ԸՍՏ ԱՐԺԱՆԻ. Տես 'ի բառն ԱՐԺԱՆ:

ԱՐԺԱՆԻ ԱՌՆԵԼ. Καταξιόω. Արժանացուցանել. արժանաւորել. եւ արժանի կամ արժան համարել. լայէգ էյլէ. *Ոչ պատանաց եւ ոչ Թաղելոյ արժանի առնել. Բ. Մ. Բ. 15: *Արժանի՛ արա ՃՆ. Ճմ. ՃՆ: *Այլ որպէս արժանի առնեն, զօրութե զամենայն ունել զընդիւնքեամբն զանազանութիւս. Պորփ:

ԱՐԺԱՆԻ ԼԻՆԵԼ. Καταξιόομαι. Արժանանալ. արժանաւորիլ. Տես Ղկ. Ի. 25: Գծ. Է. 41: Բ. Թես. Ա. 5:

ԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ. գ. Փոխանակ գրելոյ Արժանաւորութի. *Բերցի այժմ մեծութի ըստ արժանութե սրբյս իմոյ. Վրք հց. ԾԴ. փղ:

ԱՐԺԱՆՔ. գ. Իբր Արժանաւորութիւն. *Ներէր Թէպէտ եւ մեղացն արժանիք յայնմհետէ իսկ պահանջէին զպարտիսն. Ոսկ. Եփ: Տես եւ 'ի բառն ԱՐԺԱՆ: Եւ իբր Արժեցուցիչ կնիք դրամոյ. տես 'ի բայն ԱՐԺԱՆԵԼ:

ԱՐԺԵՄ, ժէ, ժեն. ն. Ἄξιος, ἀνθάξιός εἰμι. Valeo, pretium exaequo. Ըստ արժանւոյն կամ արժողութե լինել զանազի գնոյն. համարիլ ըստ գնոյ կամ ըստ յարգի. օծէլ. փէյմէթ. պ. էրղիւէն. *Ամենայն ինչ՝ որ պատուական է, չարժէ զնա. Առակ. Գ. 15: Ը. 11: *Զորս ոչ արժէ աշխարհս. Եբր. ԺԱ. 38: *Ի վայր ջանան արկանել քան զինչ (զոր ինչ) արժէ վաստակն. Ոսկ. յհ. Բ. 14: *Որ զամենայն արժէր, յաղագս ամենեցունցն մեռեալ:

Ոչ ուրեմն արժէր զամենեսին, եթէ էր մարդ սուտ. Գործոց. ն: *Զոր ոչ երկինք և ոչ երկիր արժել ոչ կարեն. Փարպ: *Ոչ արժեն ասսի չարչարանքս զհանդերձեալ փառսն. Իգն: *Ամենայն որ 'ի վերայ երկրի և ներքոյ սորա է ոսկի, զառաքինութիւն ոչ արժէ. Պղատ. օրին. է: *Ճշմարտութեամբ՝ ած (միայն) իմաստուն... մարդկային իմաստութիւն՝ սուղ ինչ և ոչ մի ինչ արժէ. Պղատ. ապլ: Տես և ԱՐԺԱՆ է:

ԱՐԺԻՔ, էից, ժեօք. գ. Առաւել ամի. որ և ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆ ասի. Գին. յարգ. փէյէէլ. գըյմէթ, ճահա. *Լիցի դրօշս ծանր արժեօք յաղթող և աշխարհու. Մագաղ. ջահ:

ԱՐԻ, րւոյ. րեաց. ա. (լծ. ընդ այր, արու, և առաքինի. և յաւնել, արի. թ. էր. էրէէլ. և յն. արէո, արէս չած մարտի. իսկ արէ, արէտօս, լաւ, ամենալաւ, և քաջ). 'Ἀνδρεῖος. Fortis. ˇἌριστος. Optimus vel egregius (sicut Mars), strenuus. γενναῖος, generosus. Քաջ. հզօր. աներկիւղ. կորովի. իբր կանգուն յառս, և առկուն իբրև զայր. ժաղառիրփ. ուրփուփ, եփրէմ, ուժօղ. էարար իյիփ, էէ-րէէրևլի, Տիւրէէրևլի, դահապըլ, Ճէրփի էչխէն, Ճէրփանէ. *Երկչոտն սպբրեաց ընդ արեւուն. Փիլ. այլաբ: *Յարւոյն արամազդայ. Ագաթ: *Զմեծ արին սամփսոնէ. Բրս. պհ: *Այնպիսին 'ի հարկէ և արի գոյ՝ զախտսն տորրագասելով. Սահմ. ծ: *Առ նկունս. և առ արիս: Արանց արեաց. Նար. գ. ի: *Զարեացն և զքաջացն զառաքինութիւն շառել. Մագ. իէ: *Արի կացցես 'ի մարտի քում. Վրք հց. իզ:

Եւ իբր Արիական. *Արի զօրութի: Արի վաստակ. Նար. ծէ. յէ: *Նիզակն արի. Խոր. ա. 10. կամ ըստ Մագ. ծէ. Նիզակն անարի:

ԱՐԻՔ, արեաց. Այսպէս կոչէին զինքեանս պարսիկք և մարք, իսկ զօտարազգիս՝ Անարիս. Եւս. քր. Խոր: Եղիշ: Փարպ:

ԱՐԻԱԲԱՐ. մ. Քաջաբար. քաջութբ. *Արիաբար ընդդէմ կալ. վարժիլ. կամ յաղթել, շահատակել, ելանել. Պիտ: Յհ. կը: Նար. յբ: *Արիաբար մրցմամբ. Յհ. կը: *Տիրեցին սմա արիաբար մարտիւք ընդ պարսս. Խոր. գ. 41:

ԱՐԻԱԲԱՐ, րք, րաց. ա. Արի բարուք. առաքինի. *Վառեն և գանգառն բնակել 'ի մէջ արիաբարաց. և արիաբարն՝ որ բնակեալն է 'ի մէջ վատացն և խօթիցն. Հց. աբ. կիւրղ. սփեղ:

ԱՐԻԱԳՈՅՆ, գունի, նց. ա. Առաւել կամ յոյժ արի. քաջագոյն. և Լաւագոյն. որպէս յն. ˇἌριστος. Virilis. և Optimus. *Գաւառ արիագունին առ ելս արևու: Արիագոյն անձամբ. Նխս. Բէօդոր: *Քեզ իսկ վայել է ազգուննեաց արիագունից (իբր քաջի արանց)... այսպիսի ձիւք զարիագոյնսն յաղորդել. Արիստ. ապ: *Արիագոյն առես լինել զքաղաքն.. 'ի թագաւորական քաղաքավարութէ. Պղատ. օրին. գ. սփեղ:

Իսկ Արիագոյն յաղթութիւն, գնի 'ի Պղատ. օրին. գ. որպէս յն. արիստոկրատիա, այսինքն Արի և ազնիւ արանց պետութիւն:

ԱՐԻԱԳՈՅՆ. մ. Քաջ. բարւոք. *Արիագոյն ասացեր ով սիրելի. Պղատ. օրին. գ:

ԱՐԻԱԿԱՆ, ի, աց. ա. 'Ἀνδρικός, γενναῖος, νεανικός. Virilis, generosus, strenuus. Սեպհական արի անձին կամ արիութե. և Արի. *Արիական և մեծ փառաց... թովլ: Պիտոյ է քաջ և արիական անձին առնել. Ոսկ. յհ. բ. 8: *Արիական քաջութիւն, կամ մրցմունք, ընթացք, մահ. Յհ. կը: Նար. հա: Ճառ: *Արիական արք, կամ քաջ սպառազէնք: Քաջարինք արիական. Մագ. ծե: Ճառ: Տօնակ:

ԱՐԻԱԿԱՆ. իբր Պարսկական. *Հայեցեալ յազգն արիական, թէ իգասեր էր. Եղիշ:

ԱՐԻԱԿԱՆՆ. գ. իբր Արիութի, կամ արիական մասն հոգւոյ. իբր նոյն և ոչ նոյն ընդ ցասմնականին կմ սրտմտականին. *Որ են այսպէս խորհուրդք ցանկականին և արիականին. Լմբ. աղ: *Իսկ ըստ արիականին մասին այսպէս միաւորի արդարութե: Առաքինութի արիական մասին հոգւոյ: Ի գլուխ հարեալ արիականն սրտմտականին. Տօնակ:

ԱՐԻԱՆԱՄ, ացայ. չ. որ գրի և ԱՐԻԱՆԱԼ, ԱՐԱՆԱԼ. Արի լինել. զօրանալ. քաջանալ. քաջալերիլ. աներկեր բուռն հարկանել. *Արիացիր ճգնայ: Արիանալ (ընդդէմ) փորձանաց սատանայի. Վրք հց. է. ծբ: *Ուսոյ նուաստին արիացեալ՝ զնուէն ձգէ: Արիացեալ յերկու. Պիտ: *Արիանամ զօրապէս, և վառթարագոյնս ընկրկիմ. Նար. հա: *Արիացեալք առ հակառակսն. Ճառ:

ԱՐԻԱՆՈՍ, ի, աց. գ. որ և ԱՐԻՈՍԱԿԱՆ. Հետեւող արիոսի աղանդոյն. *Սաբէլլիանոսացն պարտ էր երիս խոստովանել պատկերս, իսկ արիանոսացն՝ մի ածութի երրորդութե. Լծ. ածաբ:

ԱՐԻԱՊԷՍ. Տ. ԱՐԻԱԲԱՐ. *Արիապէս մարտուցեալ, կամ ընդունեալ. եծ. Նար. յբ. և խչ. և ծբ: *Վարք ձեր ոչ արիապէս, այլ յապաղամամբ է. Ոսկ. յհ. ա. 23:

ԱՐԻԱՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Տալ արիանալ. զօրացուցանել. սրտապնդել. քաջալերել. սիրտ տալ. *Արիացո զհեղգս առ բարին. Յճ. սրբ: *Փոխանակ արիացուցանելոյ հատեր զյոյս նորա. Վրք հց. զ: *Ի գուպարս ատենիցն արիացուցանելով: Պատկեն զյաղթողս, և առաւել արիացուցանեն. Պիտ: *Յանդիմանելովն արիացուցանել. Սարգ. ա. դ. գ:

ԱՐԻՈՍԱԲԱՐ. մ. Իբրև զարիոս հերձուածողս. *Հաւասար է անպարշտութիւն՝ և սաբէլլաբար միաւորել, և արիոսաբար որոշել. Ա. որս. զ: *Արիոսաբար և նեստորաբար բաժանել. Սիւն. առ գէրմ:

ԱՐԻՈՍԱԿԱՆ, ի, աց. Տ. ԱՐԻԱՆՈՍ. *Սաբէլլականացն, թէ արիոսականացն: Սաբէլլականացն առէ պարտ էր բաժանել, իսկ արիոսականացն միաւորել. Լծ. ածաբ:

ԱՐԻՈՎԹ. գ. 'Ἀριώθ. Բառ եբր. որպէս Ազգ վայրի բանջարոյ. *Եւ ել յանդն քաղել արիովթ, և եգիտ որթ յանդին. դ. թգ. դ. 39:

ԱՐԻՈՒԹԻՒՆ. գ. 'Ἀνδρεία. Fortitudo. γενναιότης, generositas. որ գրի և ԱՐԻՒԹԻՒՆ, ԱՐՈՒԹԻՒՆ. (քանզի և բառ յն. է այրութի). Քաջասրտութի. աներկեր ոգի. ...: *Յաղագս արիութե և զանգիտութե: Ի ձեռն ամենայն չորիցն նոյն համբերի. արիութբ և ողջախոհութբ և արդարութբ և խոհեմութբ. Պղատ. օրին. ա. և ծբ: *Արիութի է առաքինութի ցասմնականին: Արիութի (կամ արութի) է հեզգ գոլ առ զարհուրանսն երկեղիցն, որ մահ բազմանայ. Արիստ. առաք: *Առաքինութի ... արիութի. Գր. հր: *Յաղագս համբերութե և արիութե առ ախտ, երեցին զօտիք ձեր անդրդուելոյ ընդ մեզ. և առաքեալին, առէք զզգեստ հոգւոյն, և կացէք համբերութբ և անշարժս. Վրք հց. ա: *Զարգարեալ գոյ բարկութի արիութեամբ. Սահմ. ծ: *Պատշաճ է բացումն խմաստութի և արիութի: Ընդդէմ կալ զաղանին արիութբ (յն. արիաբար). Ոսկ. յհ. բ. 14:

կամ Քաջութի. զօրութի. և Գործ քաջութե. *Գործով արիութե զհանդերձ գեղեցիկն իրի կատարեն. Պիտ: *Սպառազէն արիութբ: Զառանց օրինի արիութիւն. Բազկի նորա արիութի. Նար. լա. խզ. և խչ: *Արիութեց պատերազմական, նախնեաց քաջացն գոլ նմանն. Ճ. առ ազնիւս:

ԱՐԻՈՒԹԻՒՆ. Մերթ՝ որպէս Այրութիւն. երկատուրդութե. *Մինչև համեալ էր յարիութե հասակն. Եղիշ. է:

ԱՐԻՍՏՈՏԷԼԱԲԱՐ. մ. 'Ἀριστοτελικῶς. Modo Aristotelico. Իբրև զարիստոտել. *Աւանդեմք, այլ ոչ միճամտանեմք. ձկնորսաբար, այլ ոչ արիստոտէլաբար. Ա. որս. ծզ:

ԱՐԻՒՆ, արեան, եանց. գ. Αἷμα. Sanguis, cruor. Հիւթ կենդանական կարմրագոյն՝ սփռեալ երակօք յամենայն մասունս մարմնոյ կենդանւոյն. արամ. գան, խուռն, դէմ, դամ. *Շունչ ամենայն մարմնոյ արիւն իւր է: Զմիս արեամբ շնչոյ մի ուտիցէք: Զարգ նորա թաւթափեն արեամբք. եծ: *Փոխարկեսն կերակուրք յարիւն, և արիւն 'ի մարմին, և յայլ մասունս մարմնոյն. Նխս. բն: *Զոր էր արեամբ գնեալ մեռեալ. Խոր. է. 8: *Ներկեալ յարեանց մերոց. Լաստ. իա: *Արեան արտասուք. Նար. իէ: *Թէ ոք 'ի վերայ մեռելոյ կոծ դնէ, և արիւն հանէ. Կանոն:

ԱՐԻՒՆ, իբրև Սպանութի, կոտորած, պէսպէս ոճով ըստ յարակից բայից և բառից. *Մի հեղցուք արիւն: Որ հեղու զարիւն: Մեղանչել յարիւն արդար: Զգալ յարիւն արդար: Զերծեալ յարիւն: Մի անկցի արիւն իմ յերկիր: Թագաւորութիւնք արիւն նորա խնդրի: Յարիւն ընկերի մի յօժարիցես: Յարիւն համարեսցի մարդոյն այնմիկ: Կցորդ արեան: Պարտական արեան: Այր արեանց: Արեամբ չափի (այսինքն մինչև ցմահ). եծ: *Որ զգեղեն գնոսա, այր արեանց է«. այսինքն արիւնահեղ և մահապարտ. Սիր. լա. 25: *Այրս մահու 'ի յարեանց գնդից. Նար. կէ: *Եղէք պատճառք բազում արեանց: Անանց հեղման անթիւ արիւնք. Փարպ: *Արեան ձայնարեան և կոտորածոյ. Ագաթ: *Արեան ձայնարեան և պատերազմս հանէին. Փարպ: *Զարեանցն պապաշիս առնել յարուցանել ուխտ. Պիտ: *Վասն եղբարց իւրեանց զրգռութեան, զի արիւն մեծ անկեալ է 'ի վերայ«. այսինքն արիւն հեղութի բազում է լեալ. Բուզ. է. 37:

ԱՐԻՒՆ. իբր Ազգականութի. համարիւն միաբանութիւնք. *Արիւն և համազատութիւն ստորաշխի: Արիւն վաղաբուղխայ են, այսինքն զարմ աղջկայ մեծի: Որպէս վերջնում և արեանց կցորդաց. Խոր. է. 26. 27. 35. 39: *Արիւն ձեր եմք. Փարպ: *Հարազատութե արեան զարմին եասւոյ: *Ի յարենէ արքայից: Ընտանի արեանն երջանկի. Նար. խչ. և ծբ: *Որք ազգականք էին 'ի յարենէցն (այսինքն յարեանց) էին: Որք հարազատ առ 'ի յարենէցն ազգականութե էին մարգկէ. Պիտ:

ԱՐԻՒՆ ՀԱՆԵԼ, կամ ԹԱՓԵԼ, կամ ՀԱՏԱՆԵԼ, կամ ԹՈՂՈՒԼ, է Արիւն առնուլ հատանելով երակի. արամ. անէ. գան ...

նոց. *Ցարժեալ մասնաւորապէս ասայ, կամ ա֊րիւն հանել. Սահմ. ԽԷ: *Գործ բժշկի այս է. խարել, հատել, և արիւն թափել. Մագ. ԽԳ: *Ի գարունն արիւն հատանեն, և գեղ առնուն. Յովհ֊փոր: *Պատճառն այն գտի, որ՝ ի պատահի ժամու արիւն չթողու. Մխ. բժշ.

ԱՐԻՒՆ ԽԱՂԱՂԱՑ կամ ՈՐԹՈՑ. Փառա֊ցու, մանաւանդ գինի. *Լուացէ արեամբ խաղողոյ զհանդերձս իւր: Զարիւն խաղո֊ղոյ ըմպէին գինի: Զփիղսն ձաշակեցուցին յարիւն խաղողոյ. Ծն. ԽԹ. 11: Օր. ԼԲ. 14: Ա. Մ. Զ. 34: *Արիւն խաղողոյ, և ձէթ. Սիր. ԼԹ. 31: *Կայլակ կաղին զա֊րիւն խաղողոյ. Նար. ՂԳ: *Կանխագոյն է ծաղկին հինգ ամսովք քան սկիզբն լինելոյ արեանն որթոյ. Եփր. համաբ:

ԸՆԴ ԱՐԻՒՆ ԳԱԼ. Մեռանիլ կամ շա֊ղախիլ արեամբ. *Ժամանակ է այս նահա֊տակելոյ... ընդ արիւն գալոյ. Ոսկ. ԵԲՐ. Է: Տե՛ս և ԱՊԱԺՈՅԺ:

ՑԱՐԵԱՆ ԵԼԱՆԵԼ. որպէս Արեամբ շա֊ղախիլ. արանոփէլ. *Զփուշսն ուսաւ և ու֊նելոց ոք, յարեան ռանեն զձեռս ունե֊լեացն. Ոսկ. Մ. Բ. 19:

ԱՐԻՒՆԱԲԱԺԱԿ. գ. Բաժակ ա֊րեան. *Հօգինոյս խառնեալ ընդ նմա ա֊րիւնարբուանի ՚ի նորոյ կտակարանացն. ՃՃ:

ԱՐԻՒՆԱԲԵՐ ԼԻՆԵԼ. Իբր Զարիւն փախել. *Եւ ոչ կերան զնա՝ արիւնաբերք եղեն. Կոչումն:

ԱՐԻՒՆԱԲՈՒՂԽ կամ ԱՐԻՒՆԱ֊ԲՈՒԽ. ա. Ուստի արիւնն բղխէ, կամ որ բղխէ և հոսէ զարիւն. *Ծաղկալից լինելին յարիւնաբուղխ վիրաց. Եղիշ. Է: *Սա֊տակեցեր զչիշխանսն յանձն արիւնաբուխ ափեծն. Վրք հոց:

ԱՐԻՒՆԱԳԵՂ. գ. Գեղացուր արեամբ. ուր կայ ինչ արիւնն քեզ. *Զարիւնագեղ անձանն խորհուրդ հանդրահռաչակեաց. Նար. ԽԱ:

ԱՐԻՒՆԱԳՈՅՆ. ա. որ և ԱՐԻՒՆԵ֊ՐԱՆԳ. Ունօղ կարմրութեն արեան. կարմիր. որպէս գոյն գրանձաւ. կար վարդեր. գոն գայլ֊ձուկ. *Տեսեալ զլուսանոյն արիւնագոյն լի֊նելոյ ընկերպարանեն. Եղիշ: *Ձի արիւ֊նագոյն. Մագ. ԿԳ: *Արիւնագոյն լեալ. Ը. Թագ: *Արիւնագոյն իբրև զորդան կարմիր. Սարգ. ՅԱ. Է: *Արիւնագոյն երե֊ւեր երկնայնոցն քո, զի յայսմ արտասցէ թէ ՚ի պատերազմէ եկն... զոր առեալ եր֊կնայինքն արիւնագոյն մարմնով. Վանք. յոր:

ԱՐԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. գ. Ցարիւն դարձուցանելն կամ դառնալն. *Ջերմոյ արծաթութեն ավելացք են առ ՚ի յարիւնա֊գործութիւն. Նիւս. կազմ. ԼԲ:

ԱՐԻՒՆԱԶԱՆԳ կամ ԱՐԻՒՆԱԶԱՆԿ. ա. որ և ԱՐԵՆԱԶԱՆԳ. Արեամբ զանգեալ. արիւնաշաղախ. *Տեսանեմ զծաղկատար֊ակս պատմուճանն արիւնազանգ առաջ֊նոյ. Պիտ: *Որ զիմեալ զայս յերգոսեայ ա֊րիւնազանգ կարմրութիւն ՚ի բասրայ. Լմբ. սղմ:

ԱՐԻՒՆԱԶԱՐԴ. ա. Արեամբ զարդա֊րեալ. կարմրերփեան. *Ահիւ սարսափ֊մամբ սարսնաւորն վերջինքն՝ եղանակքն յա֊րիւնազարդ մարմնով. Գնձ:

ԱՐԻՒՆԱԶԳԵՍՏ. և
ԱՐԻՒՆԱԶԳԵՍՏԵԱԼ. } ա. Զարիւն զգեցեալ. որ ըստ է արեամբ ներկեալ. *Պատերազմ֊ող արիւնազգեստ. Վանք. Եբրայեց: *Դի֊ւղ մերկ արիւնազգեստեալ. Շար: *Եւ յոգւոյն արիւնազգեստեալ հարսին. Խոր. հոգի:

ԱՐԻՒՆԱԹԱԹԱԽ. ա. Ἡμαγμένος. Cruentatus. Արեամբ թաթաւեալ. ա֊րիւնազանգ. արիւնաշաղախ. արանթա֊թախ, արանոփ. գանա զօշաղեալ. *Արիւ֊նաթաթախ ձեռօք, կամ ձեռք. Ոսկ. յհ. Բ. 19: Պիտ: ՃՃ: *Արիւնաթա֊թախ ապարեալ զմատունս. Վրք հոց: *Ե֊ղև հացն այն ինձ՝ միս արիւնաթաթախ. Վրք հց. ԾԳ: *Որ զքո զօրացն զգլխահոտ հալածն և զարիւնաթաթախ լուանալ տուաք. Մաղք:

ԱՐԻՒՆԱԹԱԹԱՒ. ա. Նոյն ընդ վ. *Հանդերձ արիւնաթաթաւ. Բրս. մրկ: *Արիւնաթաթաւ զսպասն բաց ցուցանէր. Ոսկիփոր: *Գանալից և արիւնաթաթաւ ան֊նեն. Վրք հոց: *Մերկ յամօթե, և ա֊րիւնաթաթաւ խայտառակեալ. Լմբ. ողբ:

ԱՐԻՒՆԱԹՈՐ. ա. Ուստի թորի ա֊րիւն. որ ծորէ զարիւն. արիւնաբուղխ. *Արիւնաթոր առեամբք մնուցանելով առ ՚ի զարգացումն. Անան. եկեղ:

ԱՐԻՒՆԱԼԻՑ. ա. Լցեալ արեամբ. *Ա֊րիւնալից արիւնապարտ մարմինն. Արծր. Գ. 8:

ԱՐԻՒՆԱԽԱՌՆ, կմ ԱՐԻՒՆԱԽԱՌՆ֊ա. Խառնեալ մրեալ ՚ի հեղումն և յար֊բումն արեան. արանդ ծծօղ՝ խմօղ, արանկլ֊ղոկ. *Իբրև զգազանս վայրենիս արիւնա֊խառնս: Զեմ գազան արիւնախառն. Ե֊ղիշ. Է: *Արիւնախառն վիրաց. Պիտ:

ԱՐԻՒՆԱԽԱՌՆ. ա. Ὕφαιμος. Sub-cruentus. Խառն ընդ արեան. արանոփ. գանիլ. *Արիւնախառն միս, կամ ջուր, կամ մարմինն. Վրք հց. ԾԸ. ԽԳ: ՃՃ: *Աչք բարկացողի հանապազ պղտոր և արիւնախառն. Նեղոս: *Ակն պղտոր և արիւնախառն լինի. Կիւր. Է. ԽՀ: *Ա֊րիւնախառն հուր. Թէոդոր. ԽԼ: *Դէմք խաժոռք, աչք արիւնախառն. Ոսկ. Ե֊փես. ԾԷ:

ԱՐԻՒՆԱԿԱԼ. ի, աց. գ. Θυΐσκη. Mortariolum. կամ ըստ եբր. թաք. Acer-ra. Անօթ զոհից, որպէս ընդունարան ա֊րեան ՚ի ձև սանդի կամ անկանի. ըստ այ֊լոց՝ տուփ կամ խնկաման. *Արար զկաճ սեղանոյն, և զարիւնակալս նորա. Եւ. ԼԷ. 16:

ԱՐԻՒՆԱԿԱՆ. ի, աց. ա. Իբր Արիւ֊նագոյն, կամ արիւնազանգ. *Պատմու֊ճան արիւնական. ՃՃ:

ԱՐԻՒՆԱԿԵՐ, ի, աց. ա. Որոյ կե֊րակուրն և ըմպելին է արիւն. արիւնար֊բու. (կամ ՚ի կեր, իբր կէտ, արիւնարար, արիւնահեղ). *Արիւնակեր առիւծ. ՃՃ: *Սոդոմայեցւոց հուր ծծըմբաբեր՝ հասցէ ՚ի գլուխս արիւնակեր. Ղ. Եղեւ:

ԱՐԻՒՆԱԿԵՐՊ. Տե՛ս ԱՐԻՒՆԱՆՄԱՆ. *Արիւնակերպս երևեցուցանէր զինքն. Վանք. յոր:

ԱՐԻՒՆԱԿԵՐՊԻՄ, եցայ. չ. Արիւ֊նակերպ լինել. լինել իբրև զարիւն. *Հրա֊գունեալ արիւնակերպին, և լուսափայ֊լեալ թելթեանան. Նար. յովէր:

ԱՐԻՒՆԱԿԻՑ, կցի, ցաց. ա. Կցորդ արեան. ազգակից՝ գոնէ ըստ սեռի, որ֊պէս կենդանին ընդ մարդոյ. *Անասուն՝ զի արիւնակից մարդկան է, չարար արժա֊նի ապրեցուցանել. Եղիշ. յեռ:

ԱՐԻՒՆԱՀԱՆ, ի, աց. ա. Որ հանէ զարիւն յանձնէ՝ ցռելով, կամ յայլոց՝ վի֊րաւորելով, սպանանելով. արան հանօղ՝ ը֊նող. *Այգեպանի ողբամք, և զազրալի խայ֊տառականօք արիւնահան և արիւնահեղ լինիք: Հեղամբ եցէք զարիւնահանան. Մագ. ԽԳ: *Եթէ արիւնահան ոք իցէ: Ամենայն գողք և աւազակք արիւնահանք. Բուզ. Դ. 12:

ԱՐԻՒՆԱՀԵՂ, ի. աց կմ եց. ա. Ἐκχέων αἷμα. Sanguinem fundens. Ἀνὴρ αἱμάτων. Vir sanguinum. Որ հեղու զարիւն մարդոյ յանիրաւի. մարդասպան. որպէս յն. հեղօղ զարիւն. Եզեկ. ԾԳ. 38: ԾԶ. 10: և ոմ Այր արեանց. Սղ. Է. 7: ԽԵ. 9: ԾԳ. 24: ԾԸ. 3: *Ամենայն որ նեն֊գութիւն ունի առ ընկերն, արիւնահեղ է. թէպէտ և ոչ եհեղ զարիւնն վասն ոչ լինելոյ ձեռնհաս. Լմբ. ող: *Առաջնոց արիւնա֊հեղիցն. Եւագ. մաբ: *Մինչև ցե՞րբ իցեմ յանհի և ՚ի դողման արիւնահեղ թագա֊ւորիս. Կաղանկ:

ԱՐԻՒՆԱՀԵՂՈՒԹԻՒՆ. Տ. ԱՐԻՒՆ֊ՀԵՂՈՒԹԻՒՆ. *Առաջակն զամենայն վա֊խեր յարիւնահեղութեն ծախեաց. Ճ. Ժ:

ԱՐԻՒՆԱՀՈՍ. ա. Ուր իցէ հոսումն արեան իւիք օրինակաւ. *Ցարիւնահոսն յարուցանելն քրտունս: Ծփուրական ափ֊ափք պաշարեալ, գեղոց և արիւնահոսն օ֊շտակելոց կարօտանոյ. Պիտ: *Պատառեալ արիւնահոսս. Սխոխան:

ԱՐԻՒՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ. գ. Αἱμορ-ρόια. Sanguinis profluvium. Հոսումն ա֊րեան, որպէս ՚ի տեռատես, և յախտա֊ցեալս թանչիւ կամ ախտիւ որովայնի. *Զեղեալ արիւնահոսութեք՝ մերձեցար ՚ի քեզ քղանցսն, և հոսումն եկաց. Աճառ. Դրփ:

ԱՐԻՒՆԱՅԵՂՑՈՒԹԻՒՆ. գ. Առա֊տութիւն կամ լիութիւն արեան. *Արիւնա֊յեղցութեան զզօլորն ընլով կենդանիս ու֊ժեղագոյնս գործէ. Պիտ:

ԱՐԻՒՆԱՆԱՄ, ացայ. չ. Ἐξαιματοῦ-μαι. In sanguinem convertor. Ցարիւն դառ֊նալ, փոխիլ. և Արիւնիլ. արան փոխուիլ՝ կտրիլ. արիւնոտիլ. *Ջիւթոյ կերակուրքն՝ կէսքն արիւնանան. Կոչ. Ի: *Ընկալեալ մասն արեան ինչ ՚ի լերդէն՝ արիւնանայ. Մագ. ԾԷ: *Հանեին զհացն արբութեն, և զգինին արիւնանալ պատարագին՝ ՚ի վե֊րայ սեղանոյն. Բուզ. Է. 28: *Բիւրք աչացն արիւնանան. Ոսկ. յհ. Ա. 25:

ԱՐԻՒՆԱՆԵՐԿ. ա. Ներկեալ կամ գունեալ արեամբ. արիւնազանգ, և արիւ֊նագոյն. *Տեսեալ զնա արիւնաներկ մար֊մնով. Վանք. յոր: *Արիւնաներկ սուսեր (խաչի). Բենիկ: *Մասն ՚ի կենաց փայ֊տէն արիւնաներկ. Վրդն. Յ: *Արիւնա֊ներկ շղթայիք, կամ հանդերձիւք. Խոր. հռետ: Գանձքն: *Ցարիւնաներկ ծաղկաց ծիրանացեալ: Արիւնաներկ մանուշակա֊գոյն. Թէոփիլ. Խ Դ: *Արիւնաներկ ձեռ սպառնումնեանի. Գնձ:

ԱՐԻՒՆԱՆԵՐԿԵԱԼ. Նոյն ընդ վ. *Ելէք ընդ առաջ արիւնաներկեալ կարմ֊րազգեստ խնոյ փեսային. Խոր. հռետ: *Պատմուճան արիւնաներկեալ. Սարգ. Ա. Դ. Է:

ԱՐԻՒՆԱՆՄԱՆ. ա. Նման արեան. ա֊րիւնագոյն. որ և ԱՐԻՒՆԱՏԵՍԱԿ, ԱՐԻՒՆԱ֊ՏԵՍԻԼ, ԱՐԻՒՆԱԿԵՐՊ. *Փրփրեալ ծիրա֊նեգոյն արիւնանմանն. Արծր. Բ. 5: *Բեր֊ցուք ձեզ խորտիկ արիւնանմանն. Ճ. Ա:

ԱՐԻՒՆԱՆՇԱՆ. Նոյն ընդ վ. *Լու֊սաւորք խաւարամած արիւնանշան. Աճառ:

ԱՐԻՒՆԱՇԱՂԱԽ. ա. Արեամբ շա֊ղախեալ. արիւնաթաթաւ. արիւնաթա֊թախ. արիւնաներկ. *Արիւնաշաղախ գը֊րունք, կամ սանձար, կամ, ակք ծե֊րոցն. Ածողբ. Բարսղ: Անան. եկեղ: Հ. Կի֊ւղ: Լաստ. ԾԷ:

ԱՐԻՒՆԱՇԱՏ. ա. Որոյ արիւնն է ա֊

ռատ՝ յաւուրս հասակի. *Ի ձեռն ջերմեռանդն և արիւնաշատ կուսին. Եփր. Բգ: *Գլխոյ եղև աղջիկ մի կոյս և արիւնաշատ, զի չեռուցանէ զնա. Տօնակ:

ԱՐԻՒՆԱԳԱՐՏ. ա. որ և ԱՐԵՆԱԳԱՐՏ. Գարշական արեան. արիւնահեղ. ոճրագործ. *փախստականք յաշխարհէն՝ արիւնապարտք. Փարպ: *Արիւնալից արիւնապարտ մարմինն. Արծր. Դ. 8: *Արիւնապարտք լինին ըստ մարգարէին 'ի ծուլանալն. Խոսր:

ԱՐԻՒՆԱՍԱԿԱՒ. ա. Որ սակաւ է արիւնն, կամ նուազեալ. *Արիւնասակաւ ծերութեան. Եփր. Բգ:

ԱՐԻՒՆԱՍԷՐ. ա. Սիրող արեան այսինքն արիւնհեղութեան. այր արեանց. *Ներկաւ մարմին նորա 'ի գոյն արեան, արիւնասէր գոլով. Վրդն. ծառ: *Թէպէտ յեղանակաւ ոչ գազանանման և արիւնասէր ունիցի զձեռս. Մխբ. դատ:

ԱՐԻՒՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ. գ. Սէր արիւնհեղութեան. *Ոչ եթէ նոր ինչ է ձեր արիւնասիրութիւդ. զի՞ 'ի մարգարէիցն ոչ սպանէին հարքն ձեր. Տօնակ:

ԱՐԻՒՆԱՎԷԺ. ա. Որ ունի զվիժումն, այսինքն զբղխումն և զհոսումն արեան. տեռատես. *Արիւնավէժ կինն 'ի գրօշակ արարչին մերձենալով բժշկեցաւ. Քեր. փէրբ:

ԱՐԻՒՆԱՏԵՍԱԿ. } Տ. ԱՐԻՒՆԱՆՄԱՆ.
ԱՐԻՒՆԱՏԵՍԻԼ. } *Զայն որ արիւնատեսակն է, մանրապէս գործեալ բաշխելով: Գոյն ինչ արիւնատեսակ տառեալ անուամբ կարմիր աստեղբ. Գղտփ. փիլ: *Աչաւն արիւնատեսակ. Առակ. Բ. 2: *Սարդիոն է չիկագոյն արիւնատեսիլ. Տօնակ:

ԱՐԻՒՆԱՐԲՈՒ, ի, աց. ա. Ըմպօղ արեան. արիւնահեղ. որպէս գազան, և գազանաբարոյ. արջառ խոզ, արջանկուն. *Իբրև զգազանս շաղղակերս և արիւնարբուս. Եղիշ. Է: *Որոց տեսեալ զարիւնարբուս 'ի կենդանեացդ. Ցհ. խմ. պաւ: *Կարիւն արիւնարբու. Գր. հր: *Զանյագ բերանս առիւծոյն սանձեաց, և զարիւնարբու ըղձեղումն կարճեաց. Ոսկ. Եփ: *Որոց զօրագլուխ էր արիւնարբու և այսակիրն մահմատ. Ղեւոնդ. Է: *Արիւնարբուք գազանացեալ. Ը. Վեմ: *Ըստ իւրեանց արիւնարբու բարուցն. Լաստ. ծէ:

ԱՐԻՒՆԱՐԲՈՒԹԻՒՆ. գ. Սիրելն ըմպել զարիւն. արիւնհեղութիւն. *Տակաւին ծարաւի է արիւնարբութեան. մինչև յերբ ոչ կամիցի յագենալ արեամբ. Արծր. Բ. 3:

ԱՐԻՒՆԱՑԱՅԹ. } ա. Ἡμαγμένος.
ԱՐԻՒՆԱՑԱՅՏ. } Cruore aspersus.
Որ ցայտէ կամ երևի ցայտեալ յինքեան զարիւն. արիւնաշաղախ. *Երբեմն վառեալ, և երբեմն արիւնացայտ երևեցի. Ոսկ. Եփ: *Զվերամբարձ բազնիսն արիւնացայտ լինել. Անան. եկեղ:

ԱՐԻՒՆԱՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Տալ արիւնանալ. յարիւն փոխարկել. *Քնի զինքն մարմնացուցեալ և արիւնացուցեալ 'ի վերայ սրբութեան սեղանոյն՝ հրամայեաց սրբութիւն ուտել և ըմպել. Եղիշ. Ննջ: *Զայրենաբերութեան Քաշակս իւր զօրէ արիւնացուցանել. Մագ. ծէ:

ԱՐԻՒՆԱՒՈՐ, ի, աց. ա. Ἔναιμος. Sanguine praeditus, vivus, & sanguineus. Ունօղ արեան. կենդանի. արեան ունեցօղ. *Արիւնաւոր կենդանիք, կամ զեռունք. Նիւս. բն: Տօնակ: Կանոն: *Սեղան... յարիւնաւորաց (այսինքն 'ի մսոյ ...հից). Փիլ. փեսայն:

ԱՐԻՒՆԱՔԱՄ ԼԻՆԵԼ. Քամիլ կամ հոսիլ արեան. նուաղիլ յարենէ. *Մարմինն արիւնաքամ եղեալ. Վրդն. ղուկ:

ԱՐԻՒՆԵՌԱՆԴՆ. ա. ն. Որ եռայ արիւնն. և եռացմամբ արեան. *Մինչ կայր եւս արիւնեռանդն յուզեալ. Մագ. կէ:

ԱՐԻՒՆԵՄ, եցի. ն. Արեամբ շաղախել ներկել. արանոփել. գանաբնօք. *Զհերն խզել, կամ զձակատն հարկանել. զերեսն արիւնել. Երզն. խրատ: Որպէս և Սիր. ԽԲ. 6. *Ծառայից չարաց վասն 'ի զիկօղսն յարենելոյ. ըստ յն. զգերելն է, զկողսն արիւնել:

ԱՐԻՒՆԵՐԱՆԳ. ա. Ունօղ զերանգ արեան. գան ռէնկլի. *Արիւներանգ ներկուած: Զարիւներանգն կարմիր. Նար. ծդ. և խլ: *Արիւներանգ մարմնով ունի զգեցեալ պատմուճան գեղեցիկ. Վանր. յոր:

ԱՐԻՒՆԸՆԾԱՅ. ա. Արեամբ հանդերձ ընծայեալ. խառն ընդ արեան նուէրական. *Արիւնընծայ ... ազերսեցն յարգամամբ. Նար. ձբ:

ԱՐԻՒՆԸՌՈՒՇՏՈՒԹԻՒՆ. գ. Արիւնըռուշտն գոլ. շառագունութիւն 'ի գոյն արեան. *Զգացուցեալ Թագաւորին զարիւնըռուշտութիւն խառնուածոց երեսացն անդուրայ. Ուռհ:

ԱՐԻՒՆԸՌՈՒՇՏ, կամ ԱՐԻՒՆՌՈՒՇՏ. ա. Ὕφαιμος. Sanguine suffusus, rubescens, sanguineus. Շառագոյն. արիւներանգ. մթագոյն. ոսկեգոյն արեամբ ներկեալ. Գերուշտագործ, գան ըէնկլի. (Աչք 'ի բարկութենէ) շառագոյն արիւնըռուշտ լինին: Արիւնըռուշտ աչօք հայելով (շան 'ի թշնամին՝) փրփրով բերանն լի. Փիլ. յմնօրփ. և լիւս: *Զոմանց աչս (տեսանէր) արիւնըռուշտ և կարմիրս: Ոմանց սև լեալ գէմք, ոմանց արիւնըռուշտ. Վրք հց. ծի: *Արիւնըռուշտ ակն. Սարգ. յկ. Բ:

Կամ Արիւնաշաղախ. *Եղնգամբք իւրև երկաթի քերչօք արիւնըռուշտ առնէին. Վրք ոսկ: *Իբր յառաջայրի փշալից և արիւնըռուշտ շրջիմ. Ի Գիրս խոսր: Իսկ *Զարիւնըռուշտ մահմեդայն անգր 'ի ներքս խաձողէր. ՃՃ. խմ, զարեամբ այլոց շաղախեալս յանիրաւութեան:

ԱՐԻՒՆԸՌՈՒՇՏ. իբր Արիւնախառն, կմ արիւնաշաղախ, ներկեալ յարենէ այլոց. *Արիւնըռուշտ գազան: Արիւնըռուշտ առիւծ. Ցհ. կբ: Մաշտ: Ճ. Ա:

ԱՐԻՒՆՀԵՂՈՒԹԻՒՆ. գ. Հեղուլն զարիւն այլոց. մարդասպանութիւն. կոտորած. արեան ճապաղիք. *Բազում ոճիրս արիւնհեղութեան գործեաց: Անուղղ վրէժս զատաւորկ արիւնհեղութեանցն զբրխտանկեց. Արծր. Բ. 2: *Ուր բազում արիւնհեղութիւնք եղեն. Լաստ. Ի: *Ոչ սուր արկաւ, ոչ արիւնհեղութիւնք. Սարգ. յկ. Դ: *Արիւնհեղումն աղգաւորք ոչ մարմնոյ արեան, այլ հոգւոյ. Լմբ. ող:

ԱՐԻՒՆՈՌՈՂ. ա. Արեամբ ոռոգիչ, և ոռոգեալ. արիւնաշաղախ. *Առ խաչ շաղախեա զընդ հանապազուրած բնակութիւն արիւնոռոգ ոռոգմամբ. Գիփ:

ԱՐԻՒՆՈՏ. ա. Նոյն և ռմկ. Արիւնազանգ. արիւնաթաթախ. *Հանդերձ արիւնոտ. Լմբ. հմբ: *Խնդրեաց զաեզն արիւնոտ, և համբուրեաց. Վրդն. յարեփոխ: *Ոչ զշրթունսն արիւնոտ տեսանեն. Ոսկ. մ. Բ. 5: *Ցեռոյ լուսանայն զարիւնն (արմկեալ), և ոչ եթէ արիւնոտ մնացին. Ոսկ. Եփր: *Ոչ եթէ արիւնոտ շրջէր հանապազ. Սարգ. ա. յհ. Է:

Եւ Արիւնաւոր. *Դաստանամարգձքն բարդկացկոյք լինին, և արիւնոտքն ցամաքանայցեն. Լմբ. առակ:

ԱՐԻՒՆՈՐԱԿ. Տ. ԱՐԻՒՆԵՐԱՆԳ. *Զարիւնորակ ձորձ. Նար. խլ:

ԱՐԻՒՆՈՒՏ. ա. Արիւնաւոր. ունօղ արեան. *Մարմին արիւնուտ և կակղագոյն բաղկացոյց. Գղտփ. փիլ. յն. Ἔγχυμον, հիւթոտ:

ԱՐԻՒՆՈՒՏ. ա. իբր Արիւնոտ և Արիւնագոյն. *Ցուռս ծերոյն մայրենոյ մօր հում արիւնուտ. Վրք հց. Ժ: *Զգալիքս ոչ կարեն ատանել միս հում և արիւնուտ. Ճլ: *Առ 'ի յամառանելն այդր արիւնուտ հրոյդ. Անյաղթ. բարձր: Թէոդոր. խչ:

ԱՐԻՒՆՈՒՏԱՑԻՆ. Նոյն ընդ վ. իբր արիւնատեսակ. (կամ արիւնայինն, խառն ընդ յն. ձայնիւս ξφου, տեսակ.) *Դնել զին 'ի ներքս 'ի խանւթին 'ի հրոյն մտրրակցութեն, հրամանն գունոյ՝ արիւնատեսակն շառագունեցուցեալ. յն. զարեան տեսակ. Նիւս. կազմ. ԼԲ:

ԱՐԻՒՆՌՈՒՇՏ. Տ. ԱՐԻՒՆԸՌՈՒՇՏ:

ԱՐԻՒՆՔԱՐ, ի. գ. Αἱματίτης. Haematites, lapis lenticularis. Քար գադարեցուցիչ հոսման արեան, կամ արիւնագոյն. արունաքար, արունի քար, ջաղի քար. համառխուղիւմ, շափէնէ, շափէնճ, Ժըմբիք թաշը: Բժշկր:

ԱՐԾԱԹ, ոյ, ով. գ. Ἀργύριον. Argentum. Մետաղ սպիտակափայլ՝ պատուականագոյն յետ ոսկւոյն. (նոյն բառ է և յն. լտ. արղիրօն, արճէնդում. Կիւմռ. ... Ֆըզա.) *Ոչ էր համարեալ արծաթ յաւուրս սողոմոնի՝ թէ իցէ ինչ: Չէ է տեղի արծաթոյ, ուստի լինի: Իբրև զարծաթ զտեալ: Անփորձ արծաթ: Արծաթ խոտան: Անօթս արծաթոյ (այսինքն արծաթեղէն). ԿՆ:

ԱՐԾԱԹ. Սպաս արծաթի. *Եդաւ յուզիթայ զամենայն արծաթ խորանին և զգահոյսն: Զխորդ զողանեալս 'ի տանէ տեառն քո արծաթ կամ ոսկի: Գործել զոսկին և զարծաթ: Զգարշելիս նոցա և զկուռս զփղձայսն և զքար և զարծաթ. ԿՆ:

ԱՐԾԱԹ. Դրամ արծաթի. ճէրմակ ստակ. *Տաց քեզ արծաթ ընդ ագարակին: Զորեքհարիւր սատեր արծաթոյ: Երեսուն կրկին սատեր արծաթ: Տուժեսցէ արծաթ: Կշռեցի նմա արծաթ եօթն սիկղ, և տասն արծաթոյ: Արծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ. ԿՆ:

ԱՐԾԱԹ. Խինչք. մեծութիւն. ընչոյ. զէ, մալ, դէնկիւնլիւ. *Որ սիրէ զարծաթ, ոչ յագեսցի արծաթով: Արծաթոյ լուեալ ցէ ամենայն ինչ, (այսինքն արծաթով վճարի.) Ժող. Է. 9: Ժ. 16: *Վաճառող արծաթն ծառայեցուցիչ. Նար. ԽԵ:

ԱՐԾԱԹ ԿԵՆԴԱՆԻ. Տ. ՍՆԴԻԿ. Argentum vivum. որ և է ըստ յն. ջրարծաթ. Ὑδράργυρος. *Օրինակ քաշապէս հեղանագութեան կենդանի արծաթն մեզ լինիցի, որ 'ի ներքոյ ամենեցուն գլորի, և յամենայն աղտոյ մարմնոյ անկցորդ. Կլիմաք:

ԱՐԾԱԹԱԳԻՆ, գնի. ա. Ἀργυρώνητος. Emptus pecunia, emptitius. Արծաթով գնեալն. ըռփօլ գնած, գնծու. *Արծաթագին անդրանկութեան. Մխ. դտ. Բ: *Արծաթագին ծառայք նոցա. Յոբ. Դ. 9:

ԱՐԾԱԹԱԳԻՆ. գ. որպէս Ծառայ արծաթագին. գնծու. փէօլէ, մալի մէմլուք, նէօքէր: Տես Ծն. ԺԷ. 12. 23. 27: Ել. ԺԲ. 44: *Ընդոծնելոյն տանս, և արծաթագնեաց տայցէ. Փիլ. ...:

ԱՐԾԱԹԱԳՈՅՆ. ա. Ունօղ զգոյն արծաթոյ. որ և ԱՐԾԱԹԱԳՈՒՆԵԱՆ. Կի-

ձեւ. *Արծաթագոյն կաթիլ. Ոսկ. մթ.։

ԱՐԾԱԹԱԳՈՐԾ, ի, աց. ա. գ. Ἀργυροκόπος. Conflator argenti. Որ գործէ պաս արծաթի. ուճինճ քեար չինօղ. գօյումճի. *Զուր աշխատի արծաթագործն. Եբեմ. ի. 29։ *Դեմետրիոս անուն անուանն՝ արծաթագործ. Գծ. ժթ. 24։ *Արծաթագործն եւ պղնձագործն. Եղնիկ։ *Ամբարտաւանէր գործոմն եւ ՚ի վերայ արծաթագործաց. Մխ. առակ։

ԱՐԾԱԹԱԳՈՐԾ. Գործեալ յարծաթոյ. արծաթի. ուճինճ չինած. *Արծաթագործ պատկեր. Ագաթ. *Զարդս ոսկեզարդս, եւ արծաթագործս. Արծր. Գ. 2։

ԱՐԾԱԹԱԳՈՐԾԱԿԱՆ, ի, աց. ա. Որ ինչ անկ է արծաթագործաց եւ արծաթագործութեան. *Ցարծաթագործական հատածոյն սակաւ մնածն նուաղանչչութիւն լինի. Քէր. քէրթ. ՚ի Մոգիոփ. (եւ Եբեմ. ուր վրիպակաւ գրել գնի, յարծաթագործականութեան հատուածոյն։)

ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. գ. Արուեստ հանելոյ եւ գործելոյ զարծաթ. մաքէնճիլիք, խուլճըլըգ, գօյումճուլուգ. *Գիտաւ արուեստ ոսկեհանութե եւ արծաթագործութե. Վրդն. գգծ։

ԱՐԾԱԹԱԳՈՒՆԵԱՆ. Տ. ԱՐԾԱԹԱԳՈՅՆ. *Արծաթագունեան լինին գանձինք. Բրս. ողջոյն։

ԱՐԾԱԹԱԶՕԾ. ա. Օծեալ կամ պատեալ արծաթով. կիւմիւշ գափլը, օլլմուշ. *Ցոյցի գահոյս հրամայեցէ հանգչել, եւ ՚ի մեննակս արծաթազօծս. Ոսկ. մ. ա. 20։ *Դրունս ձուլածոյս ՚ի յոսկեգոյն պղնձոյ արծաթազօծս. Մարթն. ուր վրիպակաւ գրի՝ ԱՐԾԱԹԱԶՕԹՍ, զոր կարէ ոք ընթեռնուլ եւ Արծաթազօզ։

ԱՐԾԱԹԱԾՐԱՐ. Տ. ՔԱՆՔԱՐԱԹԱՔՈՅՑ. *Մշակք նենգաւորք՝ արծաթածըրարք. Մծբ. ժբ.։

ԱՐԾԱԹԱԿՈՒՌ. ա. Կռեալ եւ հոծեալ արծաթի գործածով. *Ո՛չ զծի քաղցկացի կամ ազնիւ անուանեալք վասն բազմապատիկ արծաթակուռ փոկոցն. Ոսկէ։

ԱՐԾԱԹԱՀԱՆԳԻՍՏ. ա. Հանգիստ արծաթոյ (ըստ այլաբանութեն). կիւմիւշ մազակ. *Արծաթահանգիստ փայլումն. Սիւն. լգ։

ԱՐԾԱԹԱՀԱՆՔ. գ. Ἀργυροκοπεῖον. Argenti officina. Հանք կամ բովք, ուստի արծաթն հատանի կամ ելանէ. կիւմիւշ մադէնի, կիւմիշխանէ. *Ո՛չ արծաթահանք ի-ցին եկեղեցիս. այլ՝ բանակեալ հրեշտակաց, եւ բնակութե ած. Ոսկ. մ. բ. 25։

ԱՐԾԱԹԱՁՈՅԼ, ձուլի, լից. ա. Ἀργυροχόος. Argentarius. Որ հալէ եւ ձուլէ զարծաթ. արծաթագործ. ուճինճ կամ ար ծըթէ քալ թօփօղ. *Ընդ ոսկերիչս եւ ընդ արծաթաձոյլս հակառակի. Իմ. ժե. 9։ *Զձեռս եւ զգործիս հիւսանց... քաղ ՚ի բաց ղոսկեգործաց եւ զարծաթաձուլից, եւ արքայ նիւթոյն հանձոյ եղե ուսուցմե. Սարգ. հանգ.։

ԱՐԾԱԹԱՁՈՅԼ. Ձուլեալ յարծաթոյ. արծաթի. ուճինճ թօքմայ կամ չինած. *Արծաթաձոյլ կուռք. ԾԾ. *Պագղապաղմունք ոսկեփողացեալ եւ արծաթաձոյլք. Տօնակ։

ԱՐԾԱԹԱՃԱՃԱՆՉ. ա. Որ ճաճանչէ փայլէ իբրեւ զարծաթ. *Ուսուցանէ՝ զի արծաթաճաճանչ է ամպին ». յն. արծաթափայլ. Կոչ. ժէ։

ԱՐԾԱԹԱՆՄԱՆ. ա. Նման արծաթոյ. արծաթահանգէտ. պայծառափայլ. *Ձեռնապանծութեան ոսկեսանեալ փարօք, եւ արծաթանման առագաստք. Լծ. ռծոց։

ԱՐԾԱԹԱՊԱՏ, ի, աց. ա. Περιαργυρόμενος, καταργυρώμενος, եւն. Argento obductus. Արծաթի թիթեղաւ պատեալ. արծաթով զարդարեալ. ուճինճով պատած. կիւմիւշ իլէ գափլը. *Ամենայն սիւնք գաւթին շուրջանակի արծաթապատք. Ել. իէ. 17։ Ա լը. 17. 19։ *Թեւք աղաւնոյ արծաթապատ. Սղ. կէ. 14։ *Զկուռս արծաթապատս. Ես. լ. 22։ *Հուր անկանի ՚ի տուն գլխոյն ոսկեպատ պատոյն եւ արծաթապատացն. Թղթ. քարոզ։ *Դրամբք արծաթապատօք. Արծր. Է. 8։ *Գահոյս արծաթապատս մի առնիցես. Ոսկ. եփես. ժգ։ *Արծաթապատ տապան. Վրք հց. ժդ։

ԱՐԾԱԹԱՌ. եւ ԱՐԾԱԹԱՌՈՒ. } ա. Առօղ զարծաթ կամ զդրամս յայլմէ. *Վաճառականք իմաստունք արծաթառք։ Արծաթառուքն ցուցցեն զօգուտ եւ զշահ քանքարին. Մծբ. ժբ.։

ԱՐԾԱԹԱՍԱՆՁ. ա. Որոյ սանձն է արծաթի. *Ձիւքո ոչ իցէ արծաթասանձ. Բրս. հայեաց։

ԱՐԾԱԹԱՍԷՐ, սիրի, րաց. ա. մ. Φιλάργυρος. Pecuniae amans, avarus. Մոլեալ ՚ի սէր արծաթոյ. ընչասէր. ընչաքաղց, ագահ. Տիմ Ղկ. ժզ. 14։ Բ. տիմ. Գ. 11։ *Արծաթասէրն զհարկաւոր կարիսն առաջի արկանէ։ Ցանկութե արծաթասիրի ոչ յագի ՚ի բազմութէ ընչիցն։ Բարիոք թուի արծաթասիրացն՝ նիւթոյն գեղեցկագունութե. Նիւս. կազմ. իբ։

ԱՐԾԱԹԱՎԱՃԱՌ, ի, աց. ա. Ἀργυροπράτης. Nummularius. Որ վաճառէ զարծաթի դրամս. այն է լումայափոխ, սեղանաւոր. սառրաֆ. *Արծաթավաճառ ոմն մանուկ հասակաւ. Վրք հց. Է. *Վասն արծաթավաճառաց եւ գինեվաճառաց. Գէ. էս։

ԱՐԾԱԹԱՏԵՍԱԿ. եւ ԱՐԾԱԹԱՏԵՍԻԿ. } Ἀργυροειδής. Argenti formam praeseferens. Տ. ԱՐԾԱԹԱՆՄԱՆ. *Իշխանութիւն՝ որպէս ոսկետեսակ, համանգամայն եւ արծաթատեսակ. Դիոն. երկն։ *Արծաթատեսակք այլաբանութե. Սիւսան։ *Շուրջ կալով ՚ի վերայ արծաթատեսիկ սկաւռըն. Ճ. Բ։

ԱՐԾԱԹԱՐԱՐ, ի, աց. Տ. ԱՐԾԱԹԱԳՈՐԾ. *Կռանագործ արթածորարացն. Ագաթ։

ԱՐԾԱԹԱՐԺՈՒԹԻՒՆ. գ. Արժողութի արծաթոյ որոշեալ ՚ի տէրութէ կամ ՚ի սովորութէ. յն. արծաթ սահմանեալ. *Գին հատանել նախնրախայրեացն արծաթարժութե. Փիլ. լհ. ժբ։

ԱՐԾԱԹԱՓԱՅԼ. ա. փայլուն՝ սպիտակ՝ պայծառ որպէս զարծաթ. *Արծաթափայլ մաքրութի. Նար. կուս։ *Զսպիտակութիւն արծաթափայլ հոգւոյն շնորհաց. Լմբ. ող։

ԱՐԾԱԹԱՓՈԽԱՏՈՒ. ա. Որ տայ ըզդրամ ՚ի փոխ առնօսեօք. *Արծաթափոխատուք, վաշխավաճառք. Մծբ. ժբ։

ԱՐԾԱԹԵՂԷՆ, ղինի, նաց. ա. Ἀργύρεος. Argenteus. որ եւ ԱՐԾԱԹԻ. Յարծաթոյ շինեալ. ուճինճ. կիւմիւշտէն, կիւմիւշ. *Աձս արծաթեղէնս։ Ոսկեղէն ամպանոյն, նոյնպէս եւ զարծաթեղինացն. Ել. Ի. 23։ ա. թ. իէ. 16։ *Մահարձանօք արծաթեղինօք. Նար. գանձ էկեղ։ *Ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղէն ոսկեխաչաց տեսակաւ. Կոչման։ *Անօթով արծաթեղինաւ. Մխ. դպ։

Իսկ ա. դեփ. ա. 18. *Ոչ ապականացու արծաթեղինօք ». խմա, դրամովք, ընչիւք։

ԱՐԾԱԹԵՄ, եցի. ն. Առաւել ամկ. որ եւ արծթեմ. Արծաթով պատել կամ օծանել. *Զոր յետոյ Սսեցին արծաթեալ է. Մխ. այր։

ԱՐԾԱԹԻ, թւոյ, թեաց. ա. Ἀργύρεος, ἀργυροῦς. Argenteus. Տ. ԱՐԾԱԹԵՂԷՆ. *Զսկիհն իմ արծաթի։ Որ ոսկի ա-կի, եւ որ արծաթի՝ արծաթի։ Խարիսխս արծաթի։ Կողք արծաթիք. տաշտք արծաթիք։ Փողս կռածոյս արծաթիս։ Զանիւ, եւ լապտերօք արծաթեօք. եւն։ *Ոմն պղնձի, ոմն արծաթի։ Արծաթի եղջիւր, կամ կանթեղք. Ագաթ։ *Բազմութիւն պատկերաց՝ ոսկեղինաց եւ արծաթեաց. Սարգ. հանգ։ Իսկ Մթ. իզ. 15. *Կշռեցին նմա երեսուն արծաթի ». յն. արծաթիս, իմա դրամս, դահեկանս։ Այլ Առ. լա. *Ցաղագս երեսուն արծաթին ». իմա, արծաթոյ, դահեկանի։

ԱՐԾԱԹՈՒՆԱԿ. ա. Ունօղ յինքեան զարծաթ. այն է գանձանակ. եւ Որ ինչ անկ է գանձանակի. *Ցարծաթունակն կորբան տապանակին. Նար. խա։

ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹԻՒՆ. գ. Φιλαργυρία. Amor pecuniae, avaritia. Սէր արծաթոյ. ագահութի. տամա. *Արմատ ամենայն չարեաց արծաթսիրութի է. ա. տիմ. զ. 10։ *Ցարգի եղեւ արծաթսիրութիւն քան զմեծսէրութի. Լաստ. ժբ։ *Արծաթսիրութիւն ոչ ՚ի բազումն, այլ ՚ի կամս սիրողին գտանեսցի. Վրք հց. Բ։ *Արծաթսիրութե մոլեալ յուդայ. Շար։

ԱՐԾԱԹՔԱՂՑՈՒԹԻՒՆ. Նոյն ընդ վ. *Որ կցորդն եղեւ ստարացն մեղաց վասն արծաթքաղցութե. Սարգ. յհ։

ԱՐԾԱՐԾԱՆԵՄ, (ծի). եւ ԱՐԾԱՐԾԵՄ, եցի, եա. } ն. Ἀναζωπυρέω. Exsuscito. Ἔξω πύροω. Excito, accendo. Φυσάω. Sufflo, spiro. Իբրու Արթնացուցանել կամ զարթուցանել սաստիկ. այն է կրկին վերստին բորբոքել զառկայծեալ հուրն՝ փչմամբ կամ փքովք. հրահրել, վառել. ուեանտըրմագ, դօլաշտըրմագ. *Որ փքովք կայծակունս արծարծանէ. Ես. ծդ. 16։ *Հուրն՝ որ երբեմն արհամարհեցաւն եւ շիջաւ, սկսաւ վերստին արծարծիլ. Յհ. կբ։ *Իւղոյ պարարտութի արծարծեալ զճառագայթս ճրագի. Զքր. կթ։ *Միոյն արծարծէ, եւ միւսն շիջուցանէ։ Զշիջեալ չարիսն նոյնչափ արծարծեա. Նար. լ. հա։ *Զփոքր խարոյկն արծարծէ. Լմբ. ող։

Նմանութի՝ որպէս Վառ ՚ի վառ նորոգել, շարժել. գրգռել. զօրացուցանել. կազդուրել. սաէպ ՚ի կիր արկանել. վերանորոգել եւ պայծառացուցանել զինչ որ եւ է օրինակաւ, իբրու զարթուցանելով ՚ի թուլութենէ կամ ՚ի թմրութենէ, եւն։ *Արծարծել զշնորհսն այ։ Արծարծեցաւ ոգին յակոբայ. Բ. փլմ. ա. 6։ Ծն. խէ. 27։ *Առաքեաց զնա, զոմանս՝ որ տակաւին կանաչէին զնծ՝ արծարծել նորոգել. Կիւրղ. ծն։ *Անչափ նշանօքն արծարծեր զնոսա ՚ի հաւատս։ Վերստին արծարծել զխորհթացեալ բանս հաւատ-ոյն. (լուսաւորանել). Ոսկ. գծ։ *Զայս զնորագործեալ ձայն փչեցեալ այ զօրութեն յարոյց եւ արծարծեաց։ Որք ՚ի հի-ւանդութեցն արծարծին յառողջութե. Փիլ։ *Վերստին արծարծել զառաջին մասն։ Արծարծեաց, եւ զարգացոյց։ Արծարծելով յառողջութե։ Արծարծէ ընդ առողջութեն կարողապէս եւ զխորհրդոցն տեսութե. Պիտ։ *Արծարծեալ զմնացեալ իշխանսն՝ գնալ ՚ի վերայ արքային. Զենոբ։ *Հանգիստ առեալ զօրացն, եւ արծարծեալ յաղթութեն. Խոր. գ. 26։ *Արծարծել

անդրէն 'ի ձեռն ապաշաւանաց զկորուստն կորուսա. Աւծր. ա. 1: *Թոյնք մաշուն ինձ արծարծեցաւ. Նար. ԻԴ: *Զքեզ խմով խակ առասութիւք արծարծեմք: Ի կենդանութիւն դարձեալ զիս արծարծեաց: Սոքա արծարծեցին զկարգ և զօրէնսդրութիւն մեծին սահակայ. Մագ: *Զինչ կարօտի պարզ բանս արծարծելոյ. Լմբ. ող:

ԱՐԾԱՐԾԻՉ. ա. Որ արծարծէ (ըստ ամենայն առման). *Կայծակն արծարծիչ: Արծարծիչ բարեկարգ շինութեան. Պիտ: *Արծարծիչ շնչոյ. Լաոդ. ա:

ԱՐԾԱՐԾՈՒԹԻՒՆ. Տ. ԱՐԾԱՐԾՈՒՄՆ. *Տես զկերպարանս նորոգութեանն, տես զմկրտութիւն արծարծութիւն. Ոսկ. Եփ:

ԱՐԾԱՐԾՈՒՄՆ, ծման. գ. Արծարծելն, և իլն (ըստ ամենայն նշ.) *Արծարծումն կայծական ճառագայթի. Փիլ. լին. դ. 26: *Արծարծումն լուսաւորութեան: Զլուսոյն արծարծման պէտս: Արծարծմամբ լուսագունիցն հասից յառաջին ծայր կատարելութեան. Պիտ: *Ընդ զգալի խնկոյս, և զհոգւոյս ծուխ արծարծման նուիրեմ քեզ. Լմբ. պտրգ: *Խունկն յեռոյ արծարծմամբն 'ի բուրումն փոխադրեցաւ. Կլիմաք: *Զարծարծումն ցանկութեանց բորբոքէ խօսք կանանց. Նեղոս:

ԱՐԾԻՒ, ծուի. Տ. ԱՐԾՈՒԻ. *Արծիւութեամբ: քաջութիւն կամ տեսութիւն արծուի. Մագ. լ. ծէ: Նար. յովէր: Լմբ. ող: Վրք հց. ծի:

Եւ իբր անուն աստեղատան առ Շիր:

ԱՐԾՆԵՄ, եցի. գ. Որպէս թէ Արթնացուցանել կմ արծարծանել փայլմամբ կամ պայծառ գունով. փայլեցուցանել հրով. *Ծեփելն, և գունելն, և արծնելն, և նկարելն, այն 'ի զարդարիչ անդր հասի. Ե. Ա. Ը. 30. (յն. երկու ևեթ բայ, ներկելն և կենդանագրելն:)

ԱՐԾՈՒ. Տ. ԱԾՈՒ:

ԱՐԾՈՒԱԲԵՐ. ա. Իբր արծուի բերեալ 'ի թռիչս, խոյացեալ. (եթէ չիցէ գրելի, Արծուաբար). *Վասն արիութեան քաջութեանն՝ արծուաբեր քաջարտապէս խիզախութեանցն 'ի մարտս պատերազմացն՝ յարծուիս աւանկեցին զնա. Աւծր. ա. 8:

ԱՐԾՈՒԱԹՌԻՉ. ա. Նման թռչելոյ արծուեաց. *Արծուաթռիչ սլացիւք հերձին զթանձրամած խաւար կռապաշտութեան. Տօնակ:

ԱՐԾՈՒԱԿԵՐՊ. ա. Նմանեալ արծուոյ. *Երթեալ կացեալ հանդէպ արծուակերպ հրեշտակին. Մաղաք. աբ:

ԱՐԾՈՒԱՃԱՆԿ. գ. Ἄσπληνον. որպէս թէ փայծաղնադեղ. Asplenum. որ և ԱՐԾՈՒՈՅ ՃԱՆԿ կամ ՄԱԳԻԼ. Անուն խոտոյ. կէյիք օթի, գարգար այաղը, տանկէ փարմա, ըօխօպըօ ֆանփարիօն, իուփիլինիօ: Բժշկրն:

ԱՐԾՈՒԱՆՇԱՆ. ա. Որոյ նշանն կամ դրօշն է արծուի. *Նախնի թագաւորքն հայոց արծուանշան էին. Մոբբն:

ԱՐԾՈՒԷԿԻՐ, կրի, րաց. ա. Որ բարձեալ կրէ զարծուի (առաջի թագաւորաց). *Կացուցանէ և արծուէկիրս. Ցհ. կբ:

ԱՐԾՈՒԷՆՇԱՆ. ա. Ունօղ կամ բարձօղ զդրօշ արծուէնշան. Բռսլ. դ. 2: Մեսր. երէց. Է:

ԱՐԾՈՒԷՍ կմ ԱՐԾԸՒԷՍ. գ. Որպէս գաղղ. օրըլէօ. Արքեպիսկոպոս: Գր. տղ. յէմ: Պտմ. կիւէն:

ԱՐԾՈՒԻ, ծուոյ, ծուեաց. գ. Ἀετός. Aquila. որ և ԱՐԾԻՒ. Թագաւոր հաւուց թռչնոց, մեծամարմին, կորակտուց, մեծամագիլ, բարձրաթռիչ, սրատես, յափշտակիչ. որոյ են այլ և այլ տեսակք. գարբալ, գարա գուշ, փոլ, օգգօղ, հաւար, ըքուա, նիօր. եբր. նեշր. *Թեթևագոյնք քան զարծուիս: Իբրև զարծուի: Զագք արծուեաց: Զհետս արծուոյ թռուցելոյ: Ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք. ևն:

ԱՐԾՈՒԻՔ. Ցաւ ինչ, որպէս ազգ ջերգողութեան: Վրդ. ճյէ: Բժշկրն:

ԱՐԾՈՒՈՅ ՃԱՆԿ. Տ. ԱՐԾՈՒԱՃԱՆԿ:

ԱՐԾՌՈՒՆԳՈՒԹԻՒՆ կմ ԱՐԾՌԸՆԿՆՈՒԹԻՒՆ. գ. Γρυπότης. Nasi curvitas. Արծռունկն գոլ. ծռութիւն ռնգանց իբրև զկտուց արծուոյ. *Անանջատելի պատահումն արծռընկնութիւն (արծռընկունի). Պորփ: Մխ. ատպ:

Pronuncio , profero . Բարբառել լեզուաւ ,
խօսել . ասել . ճառել . հնչել . *Որ արտա-
բերեալ լինի բանս ('ի չափահասից) : Եր-
կար տաւիւք արտաբերիցի , որպիսի՝ մ՛օվ-
սէս . Փիլ . լին . Դ . 108 : Թր . քեր : *Ոմն
ամենիմաստուն արտաբերեաց բանիւ , ըղ-
հաւաստաւորիմ բարեկամս գեղ ասելով կե-
նաց : Արտաբերելով զօրաւորագոյն խը-
րատ : Արտաբերեալ յայտնեաց : Վասն
զպատշաճն արտաբերելոյ զանխատանու-
թեանցն բանաբանս . Պիփ : *Զմեկնութիւն
այսպիսեաց իւրոց տանջանաց ինքն 'ի պա-
տասխանիսն արտաբերէ . Սարկ . լուս :

ԱՐՏԱԲԵՐՈՒԹԻՒՆ . գ . Προφορά .
Prolatio . Ցառաջբերումն բանի , բարբա-
ռումն . *Արտաբերութիւն բանին լեզուաւ .
Երզն . քեր : *Այն որ ըստ բանին արտաբե-
րութիւն լինի : Որ յարտաբերութիւն բան է
արտաքոյ մտաց . Փիլ . լին . ոփէգ . Խ . այլոց :
*Որ են և ոգքս (անուն և բայ) մասնկունք
արտաբերութիւն բանի . Անյ . պերիարմ :
Արտաքս բերումն որ և է իրաց . * Վա-
նեալ են կարծրութիւնք արտաբերութեան'

սրտի բանադրկութիւն. Նար. ճէ: *Արտաբերութիւնք, արտահոսութիւնք. Տօնակ:

Ըստ յն. ոճոյ, որպէս Յուղարկաւորութիւն, և համբաւական հռչակ. Ἐκφορά. Funus, divulgatio. *Վախճանելոց տօնի՝ նախագրութիւնք, և արտաբերութիւնք. և գերեզման զանազան գոլ՝ քան եթէ այլոց քաղաքացեացն. Պղատ. օրէն. ժբ:

ԱՐՏԱԲԵՐՈՒՄՆ, ըման. Նոյն ընդ վ. *Արտաբերումն հեշտալուր բանիւք. Պիտ: *Նախ 'ի թիւ առնել զծածուկս սրտին՝ երախայրիս մատուցանել է աղ. և ապա ձայնիւ շրթամբք ընծութեամբ՝ արտաբերումն զգուարթութեան հոգևորի 'ի սրտի անդ խորութեան. Ցհ. իմ. էէ:

ԱՐՏԱԲՈՅՍ, բուսոյ. գ. Ἐκβλάστημα. Germen. Բոյս արտաքս ելեալ. ընձիւղ. բողբոջ. ծնունդ մերաբուսեալ. *Վայրի գաւարին (է իմանալին՝) արտաբոյս մնացն. իսկ խոտն՝ զգալին, անասունն հոգւոյն և այս բոյս է. Փիլ. այլաբ:

ԱՐՏԱԲՆԱԿ, ի. աց. ա. Ἄποικος. Colonus. Որոյ բնակութիւն է արտաքոյ իւրոց հայրենեաց. գաղթեալ. գաղթական. *Անմեր արտաբնակսն տեսայ (այսինքն տեսի) զամենայն քաղաքն արբեցեալ առ գինեստանսն. Պղատ. օրէն. ա:

ԱՐՏԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ. գ. Ἐξοίκησις. Demigratio. Վտարանդութիւն. օտարութիւն 'ի տանէ. տարաբնակութիւն. *Ներքուստ ինչ արտաբնակութեան ազաչիցէ լինել. Պղատ. օրէն. է:

ԱՐՏԱԲՈՒՆԻՄ, եցայ. չ. Արտաքս ելանել երբեք բոյս 'ի բնէ իւրմէ. բղխել. *Յանբաւժանելի բարւոյն սրտի բարերարութեան արտաբունեցաւ լոյսն. Դիոն. ածաբ. գ: (գրեալ էր, արտաբանեցաւ. յն. արտաբուսաւ):

ԱՐՏԱԳԾԵԱԼ. ա. Գծագրեալ. փորագրեալ. *Արձան արտագծեալ 'ի թիւս որքանութեն չափոյ սիղղոբայիցն. Նար. խը:

ԱՐՏԱԳՆԱՅԱԿԱՆ, ի, աց. ա. Յառաջբերական. արտաքս ծաւալական. *Բանն մեծանայ երկայնանալով և լայնանալով ըստ արտագնայական ձևոց. Փիլ. էլ. բ. 111:

ԱՐՏԱԳՈՉԵՄ, եցի. ն. Աղաղակել. բարձր բարբառով ասել. վերագոչել. *Այսպիսի ինչ արտագոչէր՝ ասելով. շնորհեա ինձ: Համաձայն աւազակին արտագոչեալ. Ճճ:

ԱՐՏԱԳՈՐԾԵՄ, եցի. ն. Առնել. ներգործել. յայտ առնել. կացուցանել. *Մաքրեաց հոգւով սրբով վերածնութեամբ աւազանին, և ժառանգ հայրենի արտագործեաց. Զքր. կը: Տես և ԱՌԱՐՏԱԳՈՐԾԵԼ:

ԱՐՏԱԳՐԵՄ, եցի. ն. Գտանի գրեալ՝ փոխանակ գրելոյ Տարագրել. և Արտագրել: Կանոն: Բրս. ծն:

ԱՐՏԱԴԱՏԵՄ, եցի. ն. Ἐκκρίνω. Excerno, dijudico. Բացորոշել. որպէս քաջ դատել, զննել, որոշել. և Ի բաց որոշել. որ և ասի ՏԱՐԱԴԱՏԵԼ. *Ի դատողականն ատենի արտադատել զերախոյզն խնդիր. Պիտ: *Ոչ լինի արծուիս առ եթէովպացին, և բոյն նոցա. և թռուցեալ՝ զնոսա ոչ արտադատէ աչք. Մագ. և Երզն. քեր: *Սպիտակն գոյն է արտադատող աչաց. Սահմ. ա: (Իսկ 'ի Լծ. պորփ. իա. գրի՝ տարադատող աչաց):

ԱՐՏԱԴԱՏՈՒԹԻՒՆ. գ. Ἔκκρισις. Excretio, evaporatio. Ի դուրս զեղումն. [illegible]. *Անտեղի է մեզ այժմ երկրորդել զառաստաղեանն յաղագս արտադատութեան հրոյն մանուածոյ՝ որ 'ի սատանայ. Խոր. ա. 67. կամ 70: *Պարփակող արտադատութեան և հասման զգալեացս: Զօրութեանց չորք են տեսակք, արտաբերութիւնք, արտահոսութիւնք, արտադատութիւնք, արտադրութիւնք. Տօնակ:

ԱՐՏԱԴԱՐՁՈՒՄՆ, ձման. գ. Վերադարձ. անդրէն դարձ. *Երբայեցւոց ամիսք ցուցանեն զկերպափոխ լուսնոյ արտադարձումն. Տօմար:

ՅԱՐՏԱ'ԴԻՐ ՈՒՆՈՂԱՑ. խմա. Յունողաց զդիր. Տես ԱՐՏ, ԱՐՏԱ. *Յարտադիր ունողացն առ միմեանս՝ յինքեանց մասանց բաղկացաւ. և են՝ որք ոչ են յարտ՝ ունողացն դիր. Արիստ. [illegible]:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ. Տ. ԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ. *Բանն արտադրական. Պիտ:

ԱՐՏԱԴՐԵՄ, եցի. ն. Ἐκτίθημι. Expono. Որպէս Բացադրել, և բացատրել. առաջի դնել, ձգել, մեկնել. վճռել. յայտ առնել. *Արտադրել զքահանայապետութե որոշմունս, կամ զաստուածաբանական տպաւորութիւս. Դիոն: *Զպատուական և տիեզերական հաւատոյս մեր արտադրեցին սահման. Կիւրղ. հանգ: *Եւ նախ զայս արտադրեսցուք, թէ զիարդ չինեցաւ եկեղեցի. Ցհ. իմ. էէ: *Զորոյ պախարականս ոչ կարեմ ըստ արժանւոյն արտադրել. Պիտ: *Զայս արտադրեցին 'ի ժողովն հռոմայ. Կանոն: *Զորոց և առաքեալ նախախնամաբար, յաղագս իւրոցն հոգւով սրբով արտադրեաց. Սարգ. հանգ: *Գեղեցկապէս մովսէս զարարչագործութե արտադրեալ: Զնախ եղելոց իրաց ինչ պատմութեան արտադրել. Նիւս. բն: Նախաց: *Փախչելն արարածոց ո՛չ թէ զյոչէութի դառնալն, այլ զևս պայծառանալն նոցին արտադրէ մեզ. Լմբ. յայտ:

Եւ որպէս Ἐκδίδωμι. Trado, reddo. Մատնել, տալ. և Թարգմանել. *Կենցաղականացս փութով արտադրեսցէ զանձինս, և մշտնջենաւորապէս. Ոսկ. յհ. բ. 58: *Թողութի նմա արտադրի յայս. Մագ: *Զհեբրայական բարբառն փոխանակ կուսի երիտասարդուհի արտադրեցին. Բրս. ծն. (այլ ձ. արտադրեցին):

ԱՐՏԱԴՐԵԼ. որպէս Դնել արտաքոյ (պատճառին). 'ի դուրս տալ. ծնանել. առնել. կր. Լինել. *Զմի և զնոյն վճառութեան ծնունդս արտադրեն: Մայր, զի զհարուստ դարուց ամբարեալսն 'ի քթթել ական արտադրէ. Նար. ձ. և ծբ: *Զչնչական սաորին խաբէութիւս փոխանակ 'ի նմա արտադրել. Սարգ. լուս: *Ծնող մեր ըստ աւետարանին, և նախահայր աստանօր արտադրելով. Ցհ. կը:

ԱՐՏԱԴՐԵԼ. Ի դուրս ձգել. ընկենուլ. *Ծնեալ զմանուկն՝ 'ի լեառն արտադրեաց. Նոննոս:

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ. գ. Ἔκθεσις. Expositio. πόνος, elaboratio. Բացադրութի, և բացատրութի. այսինքն առաջի դնելն զքան ինչ, և մեկնել. արտաձառութիւն. ձառ. աշխատասիրութի բանի. բացայայտութի. վարդապետութի, յայտարարութի մասանց և կամաց. *Արտադրութեան հաւատոյ սահմանեցելոյ առ 'ի սոյն հարցն մերոց 'ի նիկիացւոց քաղաքին: Հաւատոյ արտադրութի՝ սիւնհոդոսն (հանդամանակ): Ընթերցեալքն զնոցայն արտադրութիւնս. Պարզազ. խէ. և խ: *Ի վերայ բանի նախակին է նախերգանն, և երկրորդ՝ արտադրութի իրացն. Անյ. [illegible]: *Նախ առաջին սուղ ինչ բանակատարս առնել իրացն տասողին, և ապա զնոյն ինքն դնել զիրացն արտադրութի. Պիտ: *Ահա բնութեան եդե ինդիր արտադրութեան, և ոչ անուանակցութեան. Մագ. և Երզն. քեր: *Այսքեղ իմոյ արտադրութե բանից պատուղ. Թէոդոր. խւ: *Որք ոչ արտադրութե թագաւորացն, և ոչ հրամանի քում կամին անսալ. Ճ. Ա: *Արարչագործութեն բանի տացուք զայտցիկ արտադրութի. Նիւս. բն. խա:

ԱՐՏԱԶԱՆՑԵՄ, եցի. չ. Զանցանել և արտաքս վազել ըստ հրամանն. պատուիրանազանց լինել. *Յարդարելով կամացն ինքնատիրութեամբ արտազանցեալ. Թէոդոր. մայրագ:

ԱՐՏԱԶԱՏԵՄ, եցի. ն. Որպէս 'ի բաց զատանել, կամ բացորոշել. *Զգէտ արտազատեալ 'ի չափ կիսագնդի. Շիր:

ԱՐՏԱԶԵՂՈՒԼ. } Արտաքս զեղուլ, և զեղանելն.
ԱՐՏԱԶԵՂՈՒՄՆ. } *Փառք հոգւոյն ոչ արտազեղզք 'ի սորինայինսն. Մխ. այր: և Վրդ. հզ. իզ:

ԱՐՏԱԹԱՓԻՄ, եցայ. չ. Արտաքս թափել կամ թօթափիլ, հատանիլ կայծականց. *Ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին. Ածր. ա. 3:

ԱՐՏԱԹՈՐԻՄ, եցայ. չ. Արտաքս թորել, հոսել. *Ի կողէն արտաթորեալ արիւնն. Ճ. Ա: *Վտակաց արտաթորեալ յանիծելոյն [illegible]. Մագ. բ:

ԱՐՏԱԹՈՐՈՒԹԻՒՆ. } գ. Ἀπόκρισις.
ԱՐՏԱԹՈՐՈՒՄՆ. } Excrementum. Արտաքս թորումն. և Աւելորդք բնութե արտաքսելիք. *Արտաթորութիւնք եթէ, արտասուք, խլինք, քիրտն, են. Փիլ. այլաբ: *Յարտաթորումն անկաց. Սահմ:

ԱՐՏԱԼԱԾ. ա. Իբր Արտահալած. արտաքսեալ. վտարեալ. մերժեալ. *Արքայ արտալած. Նար. ծզ:

ԱՐՏԱԼԱԾԱԿԱՆ. ա. Հալածական, վտարական. *Արտալածական տարագրութի. Մագ. խգ:

ԱՐՏԱԼԱԾԵՄ, եցի. ն. Ἐξείργω. Excludo, extermino. Արտաքսել հալածելով. արտահալածել. 'ի դուրս հանել. 'ի բաց վարել. տարագրել. *Զառաջնորդս տոցա արտալածել 'ի գաւառէն: Արտալածեն և զնա 'ի քաղաքէն: Մեծ երիս արտալածիլ. Պղատ. օրէն. ը. ժ: *Մեծ միջոցաւ արտալածեալ 'ի բարեացն: Զօմանս միանգամայն արտալածեալ արտաքոյ իւրեանցն վարէին սահմանաց. Պիտ: *Արտալածեալ արտաքսէր 'ի տաճարէն զանվայելուչ վաճառս. Անան. եկեղ: *Ցիշեա զհայրենի փափկութին, ուստի արտալածեցար. Մագ: *Արտալածէ զամենայն ընդդիմամարտս. Նչ. եզեկ: *Արտաքոյ 'ի քաղաքէն արտալածիւր: Արտալածէր ընդ բնակութիւն անդ արքունեական գաւառին. Մագ. ա. ժգ. ժէ. իզ:

ԱՐՏԱԼԱԾԻԿ. Տ. ԱՐՏԱԼԱԾ. *Զոհ արտալածիկ 'ի խաւարչուտ կայանաց բանակէ ասեն զերծեալ: Հեռաւորն և արտալածիկ. Մագ. ծա. կզ:

ԱՐՏԱԼԱԾԻՉ. ա. Հալածիչ. տարագրիչ. *Անաշխատաբար տեսանիցի է արտալածիչ. Մագ. է:

ԱՐՏԱԼԱԾՈՒԹԻՒՆ. } գ. Հալածաման. տարագրութի. վտարանդութի.
ԱՐՏԱԼԱԾՈՒՄՆ. } *Զատրակտուական արտալածութե զաղէտ վշտաց քոց էմացեալ. Մագ. ա: *Եւ ամենայն արտալածութի կատարեալ: Այլ մի իցէ արտալածման: Արտալածմանցն իբրու այսպէս, որպէս տառացս. Պղատ. օրէն. ը:

ԱՐՏԱԼԱՑՆ, ի. գ. Կամ է ռմկ. կասփալա, խարէբայ, փոխէր. մասն փորոտեաց

կենդանեաց, և կամ ելք վայրի, որպէս Արտիկ, վայրի ոչխար կամ այծ, ևն. *կերակուր՝ խաշանի ջուր տալ 'ի Թեթև մաւ և 'ի գիւղայսին, զերդ ուղի ոտներ, և արտաքինք: Հաւու ձագ, և կաքաւու ձագ, և ուլու ոտներ, և արտաքայոյն՝ գգանով եփած. Մխ. բծն:

ԱՐՏԱԽԵԼՔ, լաց. ա. Արտաքոյ ելեալ խելաց. խելայեղ. *Ասլայեալ ըղձէմն իւր անզգայապէս՝ արտախելաց (կմ արտախելեաց) նմանեալ, յափշտակութեամբ խառ... Ճ. Ա:

ԱՐՏԱԽՈՅՐ, կմ ԱՐՏԱԽՈՒՐ, խառի. գ. Նոյն ընդ ԱՐՏԱԽՈՒՐԱԿ, նմանութիւնք. զոր օրինակ բանջար վարսաւոր, և մօլորակ երևելի՝ որպէս երևակն, կամ լուսնթագն. *Տեսչաց ամեն ամսեպակ աշկին անեղանելի զարտախուր խառնարան. Խոր. ա. 29: *Զհինգ աստեղացն, որք մոլորական անուանեցին. որոց անուանքն են այսոքիկ. լուծ, եղջերու (կամ եղջերի), ծկրաւորի, փառաւշնորհ, արտախուր (կամ արտախոյր, կամ արտախուրի): Սակցեալ արտախուրն 'ի չորրորդում աստղաշրջութեանն. Զքր. կբ. 'Ի շրջագայս: Տօմր:

ԱՐՏԱԽՈՅՐ ԳՍԱԿ կամ ԳՍԱԿԻ. Տ. ԱՐՏԱԽՈՒՐԱԿ, ԼԻԺԱԿ, ԱԳԱՐՈՍ. *Զթագաւորս չբերդոցուցանեն 'ի նմանութիւն արտախոյրն գսակի 'ի վերջաւորն փողփողեալ. Ակօք:

ԱՐՏԱԽՈՒԶԵԼ, զեալ. ն. Ἐξερέυνω. Exquiro. Քաջ խուզարկել. հետազօտել. *Զամենայն զասական արտախուզելով հանդերձ զինուք 'ի սակս պաշտպանութեան. Պղտ. օրին. ղ:

ԱՐՏԱԽՈՒԶԵԼ. որպէս Ի բաց կարել. արտախուզել: Երզն. ժեր:

ԱՐՏԱԽՈՒՐԱԿ, ի, աց. ա. Τιάρα. Tiara. Արտաքին զարդ խուրի. ապարոշ. վեժակ որ պատի զԹագիւ որպէս պսակ. և խոյր. գուշ եօրեհետ, փեւշդէնփ պիւրթէ, թորքէ, ֆեսքա. *Կապեցան պատմուճանօք, արտախուրակօք. Դան. գ. 21: *Առնոյր զդաշնակցութեան Թագն՝ օծանել և գնել նոցա արտախուրակս. Ակօբ:

ԱՐՏԱԽՈՒՐԱԿ. Ἐπιχάλυμμα. Operimentum. Ծածկոյթ գլխոյ. ծածկեալք. եօրթիւ. *Արար զարտախուրակն 'ի կապուտակէ 'ի վերոյ կողմանէ. Ել. լը. 19: ը. 17: Թուոց. գ. 26:

ԱՐՏԱԽՈՒՐԵԼ. ն. Պսակել. Թագաւորել. *Սա եղջան արտախուրեցաւ քահանայ պսակաւն (մարտիրոսութեան). Յհ. կբ:

ԱՐՏԱԾԱՂԿԵՑՈՒՑԱՆԵԼ. ն. Βλαστάνω. Produco, profero. Որպէս զծաղիկ 'ի դուրս բողբոջեցուցանել, վերընձիւղել. *Յօգնութիւն արտածաղկեցուցեալ բազմութեան աշակերտաց զինի յարութեանն՝ քան թէ յառաջ. Ամ. ղ:

ԱՐՏԱԾԱՂԿԻԼ. յ. Βλαστάνομαι. Germino, pullulo. Բողբոջել, բուսանել որպէս զծաղիկ. աղտարթանալ. *Զոր ոք հայր իմ ծնանէ, այնպիսին զինի հասուցանէ պտուղ, ոչ Թողով օտարոտի պղտոր 'ի ճշմարիտն այգւոյ արտածաղկիլ շառաւիղս. Ամ. ղ:

ԱՐՏԱԿԱՄ, կացի կամ ցայ, ցեալ. չ. Διΐσταμαι. Disto. διϊστάνομαι, disjungor. որ և ԱՐՏԱԿԱՑԻԼ. Ի բաց կալ. հեռանալ. զատանել. մեկնել. արտաքոյ. 'ի դուրս ելանել. հրաժարել. *Փոխանակ հաղորդիլ ժառանգութեց, յորոց անջատեալ արտակացք. Ճ. Ա: *Որով մատակարարեալ յանհուն երկրին արտակացար. Մագ. հէ: *Յորոց մնացեալք բանաւորքին զոյս արտակացեալ. Պիտ: *Ոչ արտակացեալ 'ի գոյոյն ած. Խոր. Վրդն: *Արտակացեալ 'ի ձեռնասուն եղանակաց. Զքր. կբ: *Արտակացեալ 'ի յարկէ բնակութեան հայրենեացն. Նար. խլ: *Արտակացելոցդ 'ի բոլոր կաթողիկէ եկեղեցւոյ: Արտակացեալ որթոց (հատելոց): Կրել ինձ յամենայնէ արտակացեալ: Արտակացեալ յածային քո խրատուէ. Մագ. ա. բ. է. ծդ: *Մինչ յաշխարհի օրէնս կայեալ, և 'ի խառնիցն արտակացեալ. Շ. Վեդ:

ԱՐՏԱԿԱՅԻԼ, յեալ. Նոյն ընդ վ. *Եւ ոչ ուսուցեալ Թաչուանն արտակայիլ. Մագ. ղ:

ԱՐՏԱԿԱՅՈՒԹԻՒՆ. գ. Διάστημα. Distantia, spatium. Հեռաւորութիւն. միջոց. *Կամ գտանել զապարուռած, ուր ոչ գոյ արտակայութիւն. Մագ. էկէղ:

ԱՐՏԱԿԱՅՑ, կամ ՅԱՐՏԱԿԱՅՑ. Ի կայից. յառաջին եղելոց. Տ. ԱՐՏ, ԱՐՏԱ:

ԱՐՏԱԿԱՐԳԵՄ, եցի. ն. Ուրոյն ուրոյն կարգել. զատուցանել. որոշել. *Արտակարգեաց զօգնին յայծեացն. Զքր. կբ:

ԱՐՏԱԿԱՑՈՒԹԻՒՆ. գ. Ἔκστασις. Extasis, mentis egressio. Արտաքոյ իրաց՝ մանաւանդ անձին ելանելն. ափշութիւն, յափշտակութիւն. հիացումն. և խելագարութիւն. հէյրան, օէրլէրփանէրք. *Զամենայն արտակացութիւն ըստանձնեալ. Մագ. է: *Արտակացութիւնն՝ որպէս նոյն ինքն յայտնապէս ազդէ անունդ, ոչ այլ ինչ է, այլ տեղի տալ և արտաքս ելանել խորհրդոյն. Փիլ. լին. գ. 9: *Մոլեկան արտակացութիւն ափշութիւն (յն. մի բառ): Արտակացութիւնք ափշութեան (յն. մի բառ) ոչ բնականք. Աւետ. որոց:

ԱՐՏԱԿԱՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Ի բաց կացուցանել. հեռացուցանել. *Յանզգածիցն արտակացար, և արտակացուցեր. Մագ. հէ:

ԱՐՏԱԿԵՐՏԵԼ. ն. Ի դուրս բերել. արտադրել. 'ի լոյս ընծայել. հանդիսացուցանել, կամ հանել 'ի ասպարէզ. *Սիրելեացն Ճաշ յօրինեցեն, զանսակս հրաշալիս արտակերտելով փոփրականս, և ծաղկեբանդամ՝ ասպակերպս: Սակայն անսոսս սիւն լուսոյ, յորում արտակերպին յողնախումբք վկայիցն ժողովք. Բրս. ափէք:

ԱՐՏԱԿԷՏ, կէտի, իւ. ա. Որ կայցէ կէտ կամ խայթ և Ճանկ արտաքս ցցուցեալ. և Որ արտաքս ձգէ Ճանկով. *Կէտ կարթիւ արտակիտիւ քերդ աւատիկ 'ի կախ կորուցեալ. Մագ. խա:

ԱՐՏԱԿԻՏԵԼ, եալ. ն. Արտաքին կիտուածովք յօրինել. զարդարել. պօսփ պօսփ՝ պէնէք պէնէք նքշտարէլ. *Մատիք առայն խմանալի ծաղկաւ արտակիտեալ սեղան. Նար. յուէտ: *Հանդերձիւք երևելի մետաքսոյ և ոսկեհուռ արտակիտեալ: Արտակիտելոցն կողից. Մագ. ծգ. ծէ:

ԱՐՏԱԿԻՏԵԼ. Արտակիտիւ կմ կարթիւ արտաքս ձգել, ըմբռնել. հարստել. *Արտակիտեալ զնա կարթիւք: Զմարգարտափառն (զմարգարիտ) 'ի Թալասսայ (այսինքն 'ի ծովէ) արտակիտեալ ստորինչացն 'ի խորս: Ի ծայրս կոչկին արտակիտեալ՝ 'ի վերջ նահանջէր. Մագ. ծբ. ն. ծէ:

ԱՐՏԱԿԻՐՔ, կրից. գ. Արտաքին կիրք՝ կամաւորք և ազատք. (բառ յարմարեալ քնի 'ի յետին գարս.) *Տէրն Ճըշմարտապէս երկեաւ և արտամեցաւ, բայց որում որ այսոքիկ նշանակեն զարտակիրսն. և արտակիրք ասի, յորժամ հոգին այնպէս ախտանայ, մինչ զի զաչս մաացն ոչ տեսանէ. Մխ. ապար:

ԱՐՏԱՀԱԼԱԾ. ա. որ և ԱՐՏԱԼԱԾ. Հալածական. *Ո՞չ իրրև զգանձինս մի արտահալած խուճապէր (պօղոս զատաւանայ). Ոսկ. փիլիպ. է:

ԱՐՏԱՀԱԼԱԾ ԱՌՆԵԼ. Ի բաց հալածել. *Զթիւրութիւն արտահալած առնելով զաւանդիչս. Յհ. իմ. էրն: *Արտահալած առներ զնասա 'ի վայելչական անկոց գրախտին. Զքր. կբ: *Զանկարգ Ճամարտակելն արտահալած արարեալ. Յհ. կբ: *Զգիւացն բազմութիւն արտահալածս արարեալ. Անան. էկէղ:

ԱՐՏԱՀԱԼԱԾԵՄ, եցի. Նոյն ընդ վ. *Զթշնամին արտահալածել: Զչարութիւն արտահալածէ զօրինակն. Խոր. ա. 23: ճճ: *Անհնազանդութիւն արտահալածեաց յինքենէ զհոգին ած. Սարգ. ա. դ. ծ: *Արտահալածի 'ի անեղանելի կենացն. Զքր. կբ: *Երկու 'ի հարկէ ամս արտահալածեալ լինիցի՝ տանջելով զիւրն ցասումն. Պղտ. օրին. ի:

ԱՐՏԱՀԱՆԵՄ, նեցի, կամ նի. ն. Ἐξάγω. Educo, subduco. Ի բաց հանել. *Զվերնոյ իմաստութեան զնշոյլս 'ի բաց 'ի նմանէ արտահանել. Սարկ. լոււ:

Մանաւանդ՝ Հանել բառնալ 'ի կենաց. կարձել 'ի կենաց. սպանանել. յն. էքսադէ. *Զխարդ իմաստասէր հմտասէր զինքն արտահանէ, այսինքն 'ի բաց բառնայ: Ոչ է պարտ ումեք զինքն արտահանել, այսինքն 'ի բաց բառնալ. Սահմ. ղ: *Մի նմանիցես այնոցիկ՝ որ զինքեանս արտահանել ջանան. Պտմ. աղէքս: *Յինքեանն մարմնոյս արտահանեալ. Մագ. ա: *Մարտիրոսութիւն ոչ լինի յինքենէ երթալ զիւրովին, և արտահանել զինքն 'ի կենաց. Մխ. ապար:

ԱՐՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ. } Բարձումն 'ի
ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆ. գ. } կենաց. մեռելութիւն. *Արտահանումն 'ի կապակցէն ('ի մարմնոյ): Յարատևական արտահանութիւն. Մագ. իէ. իզ:

ԱՐՏԱՀԱՐԵՄ, եցի. ն. Յանդիման հարկանել. կշտամբել. Էրէսին զուրնէն, խօթօլ ծէծէլ. *Արտահարեաց և սաստեաց որոց չարախօս եղեն զաքքայ վիճայեալ. Վրք հց. յ:

ԱՐՏԱՀՈՍԵՄ, եցի. ն. չ. Արտաքս հոսել, և հոսիլ. տուրս վաղդնէլ, վաղէլ. *Գրէ՛ եթէ կերպարեան որակեցեալ արտահոսեաց. Մագ. իը:

ԱՐՏԱՀՈՍԵՑՈՒՑԻՉ. ա. Որ 'ի դուրս հոսեցուցանէ. *Արտահոսեցուցիչ և 'ի բաց մղիչ ասուլթն. Մագ. լ:

ԱՐՏԱՀՈՍՈՒԹԻՒՆ. գ. Ἐκροή. Effluvium. Ի դուրս հոսումն. արտաթորութիւն. զեղումն. *Իբր արտահոսութիւն ինչ գոլով յայսմանէ որ առ մեզս ծովս՝ առ ծովն անդրդական. Նոննոս: *Առ 'ի յարամազգայ ջուրցն (անձրևաց)... օգտութիւն հոսելով 'ի բարձանց... զարտահոսութիւնն սոցա խափանելով չինուածովք իսկ, և խորափոփիւք. Պղտ. օրին. ղ: *Արտահոսութիւնք (բնութեն). Տօմարլ:

ԱՐՏԱՀՈՒՆՁ. Տ. ԱՐՏՀՈՒՆՁ:

ԱՐՏԱՁԱՅՆԵՄ, եցի. ն. Ἐκφωνέω. Eloquo, pronuncio. Ձայն արձակել. բարբառել. արտաբերել. հնչեցուցանել. *Ըեշտիւ ոլորակեալ եղանիւր՝ գերակայ քան զհայր իւր զինքն արտաձայնէ, զամենայն զոր ունի հայր՝ իմ է. և բՇի ասէ, հայր իմ մեծ է քան զիս. և պարունակի աստուածաշունչ, ես և հայր իմ մի եմք. Քէր. թերթ: *Ոչ արտաձայնեալ բարբառ և բան. Սարկ. փհ: *Յորժամ ասէքս՝ արտա

ձայնեալ, ձայնեալն՝ բան (այսինքն բայ) է. և արտն՝ հեգ միայն, որ ոչինչ ունի խորհուրդ, բայց միայն գժոխալուր առնել զբանն. Երզն. ժէր: *Ծափ հարկանել ձեռացն՝ հնչումն արտաձայնէ 'ի լը֊սողս. Լմբ. սղ:

ԱՐՏԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ. գ. Ἐκφώνησις. Elocutio, pronunciatio. Արտաբերումն. բարբառումն. *Ներտրամադրեալ բանն 'ի խորհրդողականին եղեալ առանց երկք արտաձայնութե. Նխս. բն: *փոխեա զարտաձայնութիւնն (այսինքն զբարբառդ). Ոսկ. յոհ: *Աղաղակ առ ած ոչ խմանամք միայն զլեզուոյ արտաձայնութիւն. Լմբ. սղ:

ԱՐՏԱՁԳԵԼ. ն. Ի դուրս ձգել. *Իբր 'ի հոսանաց արտաձգեալ յակամայ ընթացս. Նար. ծը: *Զարասէր և աներկեւղ նախանձուցն բարք (կայենի), եթէ ընդէր ոչ և նորայն ըստ նմին օրինակի եղև արտաձգեալ (կամ արտաձգեալ) յու. Արծր. ա. 1:

ԱՐՏԱՁԳՈՒԹԻՒՆ. գ. Ի դուրս ձըգումն. *Արտաշիկագոյն արտաձգումբ իբր յեռանդնուտ քրայէ հրանուտ հոսմամբ արտաքս արձակեա. Լմս. էկէղ:

ԱՐՏԱՃԱՌ. ա. Յայտնի ճառեալ. բացայայտ. կամ վիճաբանական. բաց խօսած, կամ հակաճառութ փոխ ընկած. *Ի նոյն մըտաց զօրութի համաձայնի միւսոյ սեանն կարծելոյ արտաճառ վարդապետութիւն. Լմբ. սղ:

ԱՐՏԱՃԱՌԵՄ, եցի. ն. Ὁμιλέω. Colloquor, sermocinor, disputo. Յայտնի ճառել. 'ի դուրս տալ զբան. բարբառել. արտասանել. վիճել. *Վերագոյնսն արտաճառեալ առեր, եղանեմք յերուսաղէմ. Զքր. կբ: *Իւրոցն արտաճառեալ խնկ յայտնէր աշակերտացն. Լմս. էկէղ: *Զներհակս առ նոսա արտաճառելով. Նանայ: *Արտաճառեսցուք զբանս գովասանականս: Զոր յեօթանասունն երկու ճառսն եմք արտաճառեալ: Նախ քան զքահանայանալն արտաճառեաց: Վերծանողութիւն պատմութե արտաճառի: Սուտ գութիւն արտաճառեալ 'ի թշնամւոյն. ճճ: *Անմիտ հայհոյութեցն արտաճառելոց. Խոր. գ. 65: *Զյաւելուած սրտին լեզուաւն արտաճառէր. Մաշտ:

ԱՐՏԱՃԱՌՈՒԹԻՒՆ. գ. } Ὁμιλία.
ԱՐՏԱՃԱՌՈՒՄՆ, ամունք. } Sermo, disputatio, homilia. Ճառ. խօսք. և վիճաբանութի. խօսուածք, հակաճառութի. *Զնոյնն ասել ածաբանական արտաճառութեբք ըստ պատշաճն պիտոյից. Դիոն. թղթ: *Զառ հրեշտակս ըստ հաւատոց զածա բանականս արտաճառամունս. Մագս. էկէղ:

ԱՐՏԱՄԵՐԺԵՄ, եցի. ն. Ի բաց մերժել. տարամերժել. տարագրել. *Զայնպիսիսն արտամերժէին 'ի յընտրութէն հաղորդակցութեն. Պղատ. օրէն. ա: *Արտամերժեաց զնա 'ի տանէ և 'ի ստացուածոց իւրոց: Որոց արտամերժեալ յանմահացուցրախտէն. Ճ. Ա: Ճչ: *Արտամերժեալք եղեն 'ի համազօր խնկականութեն. Եղիշ. դպ: *Զմարմնոց զկամն արտամերժեալ. Մաշտ: *Արտամերժեալ 'ի բաց ընկեցեալ զկատակս (կամ զքատակս) կերակրոց. Յհ. կբ:

ԱՐՏԱՄԵՐԺՈՒՄՆ. գ. Տարագրութիւն. զրկումն, կամ բարձումն. *Արտամերժումն ամենայն (կամ յամենայն) բարեաց. Վրք հց. ի֊ե:

ԱՐՏԱՄԵՐԿԱՆԱԼ. ն. Ի բաց մերկանալ. *Ի նախապղծեցին արտամերկանայր 'ի փառացն: Զարտամերկացեալն 'ի լուսաւոր ճշ ձեռացն՝ պատրեալ. Թէոդոր. խոյ. բրգ. և խչ:

ԱՐՏԱՄԻՏԵԼ. ն. Ἐκκλίνω. Declino, devior. Հակամիտել 'ի դուրս. խոտորիլ. զարտուղիլ. *Տեսանէ զինքն 'ի յառլն արտամիտեալ. Սահմ. բ:

ԱՐՏԱՅԱՅՏ. ա. մ. Ἔκδηλος. Manifestus. Քաջայայտ. երևելի. յայտնի. *Արեգական ծագեցելոյ՝ աներևոյթք այլոց աստեղացն փայլմունք են, և մտեցելոյ արտայայտք. Փիլ. այլաբ: *Արտայայտ զնոցայն բերել ուսմունս. Պիտ:

ԱՐՏԱՅԱՅՏԵՄ, եցի. ն. Παρίστημι. Exhibeo, in medium profero. φράζω, explico. Յայտնի կացուցանել կամ առնել. ծանուցանել. զեկուցանել. մեկնաբանել. ցուցանել. նշանակել. *Որ յայտնի աղաղակէր և արտայայտէր զճշմարիտ թագաւորութիւնն: Արտայայտեցաք զշրջանաց գիրս: Զջուրս աւազանին արտայայտեաց, զորս տարածելոց էր 'ի վերայ հեթանոսաց. Զքր. կբ: *Ընդ աղօտ արտայայտեցին զխթաղումն և զյարութի փրկչին. Լմս. նխն: *Զոր քննութբ արտայայտել հաւանիմք. Մագ. է: *Կշռակի չափովք արտայայտեալ բոլորեցուն ընձեռեաց վայելչական վարդապետութիւն. Պիտ: *Առաջնոյ սերդ֊ծուածոյն երկրպագելով՝ սատանայի երկրպագես, որպես բանդ արտայայտեաց. Աբ. է: *Արտայայտեալ ոմանք զնոս քաղաք, և ոմանք զնոս լեառն. Արէոպ. Ժ:

ԱՐՏԱՅԱՅՏԵԼ ԲՈՅՍՍ. Բուսուցանել: Պիտ:

ԱՐՏԱՆՈՒԱԳ. ա. Ἐκμελής (իբր անմեղեդի). Absonus, melodiae expers. Օտար 'ի նուագաց. աննուագ. աներաժիշտ. անախորժ լսելեաց. *Խռպոտ և պառօտ և արտանուագ ձայն ունելով՝ երգել ձեռնարկիցէ: Քաղցր՝ քնարահար երգչին ձայն, և կամ հակառակն՝ արտանուագ: Արտանուագ և գարշելի երևի (խմաստակութի). Փիլ. նխ. բ. և այլաբ. և լին:

ԱՐՏԱՇԷԿ. ա. (իբր առաշէկ, կամ արտաշէկ). որ և ԱՐՏԱՇԻԿԱՑԵԱԼ. Διάπυρος. Ignitus. Հրաշէկ. հրագոյն. շանթացեալ. *Զոր ջեռուցեալ, և յոյժ արտաշէկ արարեալ՝ առէ, պսակէմ զքեզ մերուժան. Խոր. գ. 37:

ԱՐՏԱՇԻԿԱԳՈՅՆ. ա. Կարի արտաշէկ. ամենայնիւ հրագոյն, կամ շանթացեալ. խիստ կարմիր՝ կրակ դարձած. *Իբրև արտաշիկագոյն լինէին (երկաթի) մանիճքն. Ճ. Ա: *Արտաշիկագոյն առու հրախառն ընդ արեանն. Անյաղթ. բարձր: *Արտաշիկագոյն, այսինքն յոյժ հրացեալ. Շ. անդ: *Արտաշիկագոյն արիւն. Նար. յոհէդ: Լմբ. պտրգ: *Արտաշիկագոյն արտաձգութբ. Լմս. էկէղ:

ԱՐՏԱՇԻԿԱՆԱՄ, ացեալ. ն. Արտաշէկ լինել. շանթանալ. հրագոյն կամ ջերմագին լինել. *Ի հրոյն արտաշիկանան, և գգոյն և զտիպ հրոյն առնուն: Սեաւ և ցուրտ է երկաթ, և 'ի քուրայ մտանէ, արտաշիկացեալ ջերմային հրովն. Զքր. կբ: *Ոսկի և արծաթ ընդ միմեանս խառնեալ, և 'ի հրոյն արտաշիկանան. Տօնակ: *Ջերմեռանդն և արտաշիկացեալ կամօք օրհնացն: Արիւն ոգւոյ կոչէ զջերմն սորա և զարտաշիկացեալն առաքինութի կանգնութի: Ջեռեալք և արտաշիկացեալք ոմանք ածային բանիւք: Ջերմ բանիւք և արտաշիկացելովք պատրաստեալք. Փիլ:

ԱՐՏԱՇՆՉԱԿԱՆ. ա. Ի դուրս շնչելի, ցնդելի. կամ Մահաբեր. *Իբրու զօրութի արտաշնչական ախտից ներհոսեցեալ ժամանակեայ. Մագ. ն:

ԱՐՏԱՇՆՉԱՆԱԼ, ացեալ. ն. Փչել զշունչ՝ զոգի. անշնչանալ. մեռանիլ. *Ի վերայ փայտին արտաշնչացեալ. Թէոդոր. խչ: *Որ սերմաննես զարտաշնչացեալ (այսինքն զմեռեալ կամ զանշունչ) մարմինս յերկրի. Նար. կգ:

ԱՐՏԱՇՆՉԵՄ, եցի. ն. Ἐκπνέω. Efflo, exspiro, morior. Փչել զոգի. մեռանիլ. *Զանօրինեալն արտաշնչեաց հոգի. Թէոդոր. խչ: *Ոչ ըստ մերումս արտաշնչէ, այլ արտաքոյ մերոյս գործէ. Շ. խոսք:

Եւ Շունչ տալ և առնուլ. շնչել. *Ղօղակք արտաշնչեն 'ի ջուրսն, որպէս ցամաքայինքն յօդսն. Զքր. կբ:

ԱՐՏԱՇՆՉՈՒԹԻՒՆ. գ. Ἐκπνοή. Exspiratio, exhalatio. Արտաքս կիմ 'ի դուրս տալն զշունչ կամ զոգի. որպէս Սփռումն շոգեաց կամ գոլորշեաց 'ի ձեռն բնութե. *Զայն՝ որ ընդ եթերն շնչէն շունչքն 'ի չորոյն հողմն կոչեմք, իսկ օդ (կամ սիւք) զառ 'ի գիջոյն բերեալ արտաշնչութիւքն. Արէոպ. Ժ: *Անյայտս փառս կոչեն զարտաշնչութի ամենայն մարմնոյն, ըստ որում շոգիք իմն բղխեալ 'ի ձեռն անդայտութե մորթոյն թափանցիկ լինի. Նխս. բն. ԽԲ: *Եւ այժմ խնկ սեաւ՝ վերաշնչութիւն, և արտաշնչութի ասեմք. Պղատ. փիմ:

Որպէս Շնչառութի և շնչառութի, և հառաչանք. *Ղօղակք ոչ ունին հագագ արտաշնչութե ընդ ռնգունսն կլանել զօդն, այլ արտաշնչեն 'ի ջուրսն. Զքր. կբ: *Զընդունական գրունսն թիւրելով. և փակելով, արտմութի առնուիցէ, և արտաշնչութիւն. Պղատ. փիմ. յն. Ἄση. Fastidium. *Կականումն, և արտաշնչութիւք. Մագ. ղ:

Որպէս Աւանդումն ոգւոյ. անշնչութի. *Ի վերայ քո մեռանի արտաշնչութեբն կենդանին. Թէոդոր. խչ:

ԱՐՏԱՇՆՉՈՒՄՆ, չման. գ. Արտաշնչութի, ըստ ան նշ. *Վճարեալ էր յարտաշնչմանէն (անդոսնելույ), որ տանի ըղձեզ յոչ պատշաճն. Ոսկեփոր:

Եւ Արտաքուստ 'ի ներքս շնչումն. ազդումն. յն. միտումն կամ բախումն. ῥοπή. *Ոչինչ է սէր, եթէ ոչ յարտաշնչմանէն որ 'ի վերուստ եկեալ. Ոսկ. յհ. բ. 27:

ԱՐՏԱՊԱՏՄԵԼ. գ. Ἀφηγέομαι. Enarro. Պատմել յայտնի. մեկնաբար ճառել. արտաճառել. *Իմ զբանն համառօտաբար որպէս արտապատմելով զայլոյ ուրումն ծերոյ մեծի. Մագս. էկէղ:

ԱՐՏԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ. գ. Διήγησις. Enarratio. Արտաճառութի. մեկնաբանութի. *Վարդապետապէս գրաւորութբ զայսոցիկ առնել զարտապատմութիւն. Մագս. էկէղ:

ԱՐՏԱՊԱՐԶԵԼ. ն. Ἐκαπλόω. Explico. Մեկնաբանել. պարզաբանել. *Ըստ անճառելին լուսութե և գիտութե արտապարզեալ. Մագս. էկէղ:

ԱՐՏԱՊՈՂՈՏԱՅ. ա. Արտաքոյ ուղւոյ. արտուղի. խոտորեալ. հակառակ. *Մի 'ի միտս ուրուք արտապողոտայ իրաւացւոյ այս ձեզ եկեսցէ. Պիտ:

ԱՐՏԱՌՈՒԹԻՒՆ. գ. Ի բաց առումն. բարձումն կամ արտակալումն. որպէս նիւթական թարգմանութի յն. ձայնիս՝ Ἔκληψις. Exceptio, collectio, եւ. *Կատարեաց զնոնգրուածս նոցա, և զորբութի արտառութեան անձանց սրտկեղ ցաւոցն. Բուզ. դ. 13:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ. ա. Արտաքոյ սահ֊

մանի և չարիս. անպայման. անչափ. *Ցար_ տաքսահման վիճակեցան վտանգս. Պիտ.:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱՀԱԼԱԾ. ա. Տ. Հալածեալ արտաքոյ սահմանաց. վտա_ րանդի. *Այսօր ծովագնացուկ մեղք աշ_ խարհի արտասահմանահալած փախչի. Թէոդոր. 'ի խաչն։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԱՌՆԵԼ, լինել. } Ἐξορίζω, ὑπερορίζω. Extermino, limitibus et finibus expello, exilio multo. Հանել ար_ տաքոյ սահմանաց. տարագրել. աքսորել. 'ի բաց վարել. վտարել, իլ. ﬔէլ. օիւրմէ, օիւրճիւն էթմէ. *Արտասահման արար զնա_ խաչարն. Ճ. Ա։ *Զբազումս արտասահ_ ման առնէին յեկեղեցւոյ. Վրք հց։ *Ար_ տասահման եղեն 'ի մեռաղս. Սարգ. Բ. պ. Գ։ *Սոսկես և ինքնակամն արտասահ_ մաներաց 'ի մեռաղս։ Բայց 'ի բաց արտա_ սահմանել զնա հրամայէ։ Հեղեղաւ զամ_ բարշտութիւն արտասահմանելով. Խոր. Բ. 87։ Գ. 29. 68։ *Արտասահմանեսցիք ոչ 'ի անկախելու դրախտէն, այլ 'ի նոյն ինքն յեկեղեցւոյ բարւոյն. Մանդ. ծա։ *Արտա_ սահմանեցայ յծծայցն բարեացն. Զքր. կթ։ *Զանձն արտասահմանել, և նեղել. Վրք հց. յ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ. գ. Ἐξορισμός. Exterminatio. Աքսոր. վտարան_ դութիւն. օիւրճիւն. *Փոխանակ մահու զար_ տասահմանութիւն 'ի վերայ քահանայակա_ նացն հատուցանէր. Սոկր։ *Ոչ հասցես 'ի տեղի արտասահմանութեան։ Պատճառս ար_ տասահմանութեանց. ՃՃ։ *Ցերկնայինն մե_ ռանել յառաջատ փոխանակ արտասահ_ մանութեան մերոյ 'ի դրախտէն կենաց. Ցհ. խ. էլ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄՆ. Նոյն ընդ վ. *Արտասահմանումն 'ի դրախտէն. Նախ_ երգ. ժէ։

ԱՐՏԱՍԱՑ. Ա. յոխնքն ի ասյց. յասյոց. 'ի ասցունց. ասաց. վասն այսց պատ_ ճառաց. Տ. ԱՐՏ. ԱՐՏՍ. Ἐκ τούτων. Ex his. *Այսու ուրեմն և արտասացս աետակն քան զնեան յաւէտ գոյացութիւն է. Ա. րիստ. փոյոց։ *Պատահի արտասացս և ըզ_ այն առորուել և բացուել համանգա_ մայն. Պերիարմ։

ԱՐՏԱՍԱՆԵՄ, եցի. ն. Ἐκφωνέω, φθέγγομαι, διαλέγομαι. Pronuncio, loquor, dissero. Արտասանել. արտաձայնել. պատմել. նկարագրել. մեկնել. խօսել ըզ բարբ. *Արտասանելի է գղէմս, և գիրս։ Ցորում մի ինչ արտասանի. Պիտ։ *Զգա_ ցանութեան ունակութեն ողեալ արտասա_ նեսցի. Թէոդոր. խւ։ *Զնախասարութեն երկուց ազգացն արտասանեալ համառօ_ տեցաք. Սամ. Երէց։ *Զանծանօթարար ե_ րեւումն յերկ ծովուն աշակերտացն փոքր ինչ արտասանեսցուք. Նանայ։ *Արտասա_ նէ զխարձն 'ի մարմին (զղզաքէսա), որ գո_ վեցաւ լեզուաւ փրկչին. Ցիշար։

ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. գ. Ὑποτύπωσις. διατύπωσις. Descriptio. Առացուած. բան. ձայն. պատմութիւն. և բառ հռետորաց՝ նկա_ րագրութիւն, կամ ստորագրութիւն պատա_ հական. *Հաղորդութիւն ըստ իւրաքան_ չիւր պատմագրաց արտասանութեանց, և ոչ յատուկ 'ի մէջ շարադրեցաւ. Խոր. Բ. 89։ *Արտասանութիւն է բան պատմական՝ 'ի զեն ածելով երեւելապէս զյայտնելոցն։ Արտասանութեանս անունք են պայծառ, և անունք շարադրեալք։ Արտասանութիւն պա_ տահման, յորժամ զտրդան վարելոց զթա_ գաւորս, են. Պիտ։

ԱՐՏԱՍԵԼ. Տ. ԱՐՏԱՍԱՆԵԼ. *Արտա_ սէ զերկաքանչիւրան 'ի միասին։ Պարտ է յարտասել զդէմսն՝ յառաջնոց մարմնոյ սկսանել. Պիտ։

ԱՐՏԱՍՈՐԵԼ. ն. Սորել արտաքս. ար_ տաթորել. հոսել. *Արտօսր արտասորեալ իւրու 'ի վտակաց աչերաց. Մագ. իզ։

ԱՐՏԱՍՈՒԱԲԵՐ. ա. Որ բերէ յին_ քեան զարտասուս. *Զպաղատանս արտա_ սուաբերս. Ագաթ։

ԱՐՏԱՍՈՒԱԳԻՆ. ա. Ուր իցեն սաս_ տիկ արտասուք. *Ողբ արտասուագին. Ցհ որդի։

ԱՐՏԱՍՈՒԱԳՈՉ. ա. Ուր իցէ գոչումն հանդերձ արտասուօք. *Արտասուագոչ պաղատանք, կամ բարբառ, կմ երգ. Վրք հց. ծդ։ Ճ. Ա։ Հ. կիւլիկ։

Տ. Արտասուօք գոչելով. 'ի ձայն ար_ տասուագին. *Իսկ նոքա արտասուագոչ ողորմ ողորմ զձեռս համբարձեալ յեր_ կինս. Ագաթ։

ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ. ա. Որ ինչ լինի թո_ րելով կամ ծորելով կամ հոսելով արտա_ սուս. արտասուահոս. արտասուակաթ. արտօսրաբուխ. *Արտասուաթոր կական_ նումն, կամ պաղատանք. Ցհ. կթ։ Խոսր։

ԱՐՏԱՍՈՒԱԼԻ. ա. Տ. } Լի կամ լցեալ ԱՐՏԱՍՈՒԱԼԻՑ. } արտասուօք. *Աղբիւր արտասուալի. Ցհ որդի։ *Արտա_ սուալից աչօք, կամ հառաչումն, կամ ողբք. Ցծն. ծբ։ Նար. լգ։ Եղիշ. ա։ *Ար_ տասուալից զձեռս յերկինս համբառնայ_ ին։ Եւ ողբային արտասուալից. Ագաթ։ Շար։

ԱՐՏԱՍՈՒԱԽԱՌՆ. ա. Խառն ընդ արտասուս. *Արտասուախառն ուրախու_ թիւն. Վրք հց. ծդ։

ԱՐՏԱՍՈՒԱԿԱԹ. Տես ԱՐՏԱՍՈՒԱ_ ԹՈՐ. *Արտասուակաթ ողբք. Բուզ. Գ. 11։

ԱՐՏԱՍՈՒԱԿԻՑ, կամ } լինել. Συγ- ԱՐՏԱՍՈՒԱԿՑՈՐԴ } κλαίω. Collacrimo, cum alio ploro, fleo. Կցորդել արտասուաց այլոց. *Ցորժամ տեսցես յա_ ռաջս ապաշխարանաց զեղքայրն սգացեալ արտասուակից լեր նմա. Բրս. յողնփ։ *Աղ_ քատկիցքն եղանէին գաղտուկ արտասուա_ կցորդ (կամ արտասուաց կցորդ) լինել. Գ. Դ. Ժ. 10։

ԱՐՏԱՍՈՒԱՀԱՌԱՉ. ա. Ուր իցէ հա_ ռաչանք հանդերձ արտասուօք. *Աղօթք արտասուահառաչք. Սխոլ։

ԱՐՏԱՍՈՒԱՀՈՍ. Տ. ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ. *Արտասուահոս պաղատանք. Սխոլ։

ԱՐՏԱՍՈՒԱՑԵՂՁ կամ ՑԵՂՑ. Տ. ԱՐՏԱՍՈՒԱԼԻՑ. *Արտասուայեղձ պաղա_ տանք. ՃՃ։

ԱՐՏԱՍՈՒԵՄ, եցի. ն. և չ. Δακρύω. Lacrymor. Արտասուս կամ արտօսր հե_ ղուլ. լալ. ուսալել. ազլամագ. բուքէլ. ալ_ լամագ. *Արտասուեաց յոյժ 'ի վերայ աղը_ տութեան և բազում խնամսութեան առն։ Մի արտասուեսցեն 'ի վերայ այդորիկ։ Եւ ար_ տասուեաց յո. Բ. Դ. Ժ. 37։ Մխ. Բ. 6։ Ցհ. ծա. 35։ *Արտասուեաց և ըղ_ ձացաւ և զքաղցութն. Ոսկ. մտթ։ *Որ արտա_ սուեմքս փղձկալով. Փարպ։ *Ոչ գիտեմ, եթէ զոր արտասուեցից. Խոր. Գ. 68։ *Մի լեցի ինձ ողբալ, և ոչ արտասուել. Նար. Բ։ *Բնական է մեզ 'ի խնդութեան ան_ տի արտասուել. Լմբ. աղ։

ԱՐՏԱՍՈՒԵԼԻ. Արժանի արտասուաց կամ լալոյ. ուսալելի. *Ո՛վ յուդայս ար_ տասուելի. Շար։ *Արտասուելիս ինձ յե_ ռանելէ։ Արտասուելի նմանութեան. Նար. խէ. հգ.

կամ իբր Արտասուալից. *Արտասուելի (այլ. արտասուալից) պաղատանօք հայցե_ լի է. Խոսր։

ԱՐՏԱՍՈՒՔ, սուաց. գ. Δάκρυ, δάκρυον. Lacryma. որ և ԱՐՏՕՍՐ. Շիթք աղի և ջերմ ջրոյ ցօղեալ յաչաց՝ 'ի նշանակ սգոյ, առ ձմնչելոյ սրտին 'ի ցաւոց, է զի և յուրախութենէ. արցունք. կէօզ եաշը, փէմ, էյն, օիւրեն. *Տեսի զարտասուս քո։ Արտասուօք իմովք զանկողինս իմ թացից։ Եղեն արտասուք իմ ինձ կերակուր։ Հաց արտասուաց։ Զաչս իմ յարտասուաց։ Ար_ տասուք զպարտակեացն։ Աղբիւրս արտա_ սուաց։ Իջուսցեն աչք ձեր արտասուս։ Իջուցէք ընդ աչս ձեր արտասուս։ Ար_ տասուք իւր 'ի վերայ ծնօտից իւրոց. ևն։ *Արտասուօք յարտասուացն փախչիցիք. Ածաբ. ողջապ։ *Ի զայրագին սրտէ բղխեն արտասուս. Մամբր։ *Հեղեալ արտասուաց վտակս. Փարպ։ *Աշխարհս մեր ծովացաւ արտասուօք. Ցհ. կթ։ *Արտասուաց ըղղխ_ մունք։ Հեղեղք արտասուաց։ Արեան արտասուս երկնեաց. Նար։ *Ի սաստիկ տառապանացն և 'ի պաւտրութեան՝ առոյք երակացն զջուրն որ զարտիւն՝ յաչսն 'ի վեր ասայցեն, և այն կաթիլք արտասուք անուանին. Սարգ. յկ. ի։ *Ոչ միայն տրտմութեան է պտուղ արտասուք, այլ մաքուրն նորա և առաւելն՝ ուրախութեան. Լմբ. աղ։ *Արեան արտասուս իջուցանէր. Ոսկեփոր։ *Թէպէտև զյորդանանն գետ բոլորովին յարտասուս աչաց իւրոց եհեղ, ոչ բաւա_ կան համարի. Կլիմաք։

ԱՐՏԱՍՈՒՍ ԱՐԿԱՆԵԼ. իբր իջուցանել. Δακρύω. Lacrymor. *Զգեւահարն յոր_ ժամ տեսանեմք, արտասուս արկանեմք. Ոսկ. ա. 18։

ՑԱՐՏԱՍՈՒՍ ՀԱՐԿԱՆԻԼ, կամ ԼԻՆԵԼ, կամ ՑՆԴԻԼ, է Արտասուել. լալ։ Խոր. Գ. 6։ Եղիշ. Գ։ Վրք հց. ծբ. ևն. Տես և ՑՆԴԻԼ։

Իսկ ԱՐՏԱՍՈՒ, սուի, ուէ. եղանակ՝ առ_ քերթողս ևեթ վարի. *Դժոխք պարտե_ ցաւ, ապականութիւն լուծաւ. ըստ այսմ իսկ երկաքանչիւրքն կորեան յարտասուէ (քմի). Գանձքն։ Այլ յասելն, *Ապաշ_ խարութեան արտասուս աւազան լինի». ի_ մա, արտասուքս։

ԱՐՏԱՍՓՌԵԼ. ն. Սփռել 'ի դուրս. ծաւալել. *Արտասփռեալ լոյսն գերա_ զանց 'ի հօրէ. Զքր. կթ։

ԱՐՏԱՎԱԶԵԼ. չ. Ի դուրս կամ 'ի բաց վազել. ընդոստնուլ. զանցանել. *Ոչ 'ի բաց արտավազել վերծանողաց. Մագ. չ։

ԱՐՏԱՎԱԶԻԿ. ա. Ընդոստ. փախըս_ տական. խուսափող. *Զի մի՛ անկարելի ո_ մանց թուեցեալ՝ արտավազիկ արշաւա_ նօք փախիցեն. Մագ. հէ։

ԱՐՏԱՎԱՅՐՔ, րաց. գ. Վայրք ար_ տուց կամ արտորէից. որ գրի կամ առի նաև ԱՐՏԱՎԱՐՔ. *Եթէ հնար գոյր արտավայ_ րացն առ հողագործն գալ, քանիՙօն ու_ րախութեամբ տային նմա զաերմն լնայես. Եփր. պհ։

ԱՐՏԱՎԱՐ, ի, աց. ա. Վարող զարտ. հերկող. երկրագործ. մշակ. իբր Ἀροτήρ, γεωργής. Arator, agricola. ըիֆթճի, էքին_ ճի. *Կերակուր խնդրելով յարտավարէ ումեմնէ։ Տեսին ամանք արտավարք 'ի գաւա_ ռին. Նոննոս։ Ճ. Ա։

ԱՐՏԱՎԱՐ. գ. Ἄρουρα. Arvum, ևն. Արտ վարելի կամ վարեալ. արտավայրք. անդաստան. ագարակ, և ածու. իբր ար_ տաչափ մի՛ արօրագրեալ վայր. ըիֆթ, ըիֆթլիք, բօրչա, փէճիճամ. *Ամրանալ 'ի

տեղի ինչ, որոյ չափ բնուր արտավարի գե- տին էր. Ես. ՎԲ. Է: *Ի հարաւակողմ արտավարին ցուցեալ նմա ղանեղին. ՃՃ: *Զառապարն արտավար գործեցին: Զա- րիւն եւս անձանց տամբ փոխանակ արտա- վարաց, և սակաւ ինչ չինուածոց. Ոսկ. Մ. Ա. 6. 12: *Զարտավար ձեր մի՛ սերմա- նիցէք խառնակ սերմանեօք. զի զգատերս խուրեանց հեթանոսաց մի՛ տայցեն. Եփր. օրին: *Ամենայն արտավարք՝ որ ընդ գե- տոյն ջրով վարեալ իցեն. Ես. ԺԹ. 7. յն. ամենայն սերմանեալն (վարուցանն): *Յա- տակ ջրոյն փոխատրեցաւ 'ի բնակութի, յանտառս, և յարտավարս դաշտաց: Ար- տավարս և ագարակս և մարգս (յն. մի բառ, ագարակք). Նիւս. սքանչ: *Ենթեր- կիր արտավարք, որ սխալեն, և ոչ բու- սանին. Եփր. պհ: *Սահմանք արտա- վարաց. (յն. սահմանագրութի.) Սահմ. ծէ: *Արտավարք ռոգանեալ բուծա- նէին: Բողբոջք բուսոց արտավարաց. Յհ. կը: *Զանդաստանս արտավարացն. (որ հայի և 'ի ա նշ). Մագ. ձ:

ԱՐՏԱՎԱՐԵՄ, եցի. ն. Վարել զարտ. արօրագրել. սերմանել. մշակել. Վարուցան ընել, ցանել. Արտ-ն մշակել (?). *Յեր- կինս արտավարեալ սորեցուցանէր իբր ըզ- ցորեան զմանանայն. Վրդն. ող: *Աղբեւ- րացոյց զվէմս, արտավարեաց յօդս. Վրդն. լուս:

Դարձեալ՝ Ի բաց վարել. *Զհօտեալ տուգանօն 'ի վերայ քո գիւրաւ արտավա- րեսցես (ընչիւք). Ոսկէփոր:

ԱՐՏԱՏԵՂԻ. ա. Ἄτοπος. Absurdus. Անտեղի. անտմոր. անպատեհ. անհնա- րին. գժնդակ. *Արտատեղի տարակոյսք ալեօրից. Փիլ. լին. ա. 87. յորմէ և Պիտ. Բ. 3: *Անվայելուչ և արտատեղի ոչ է. Տօնակ: *Արտատեղի խորհուրդք, կամ վրէժք. Պիտ: *Թուի ինձ ոչ անխորհուրդ և արտատեղի ըստ նշանակութեն գործե- ցեալն. Սարկ. հանգ:

ԱՐՏԱՏԻՊ. ա. գ. Տպաւորեալ նիշ կնքոյ. դրոշմեալն. *Տպաւորեսցես 'ի նմա արտատիպս կնքոյ սրբ տեառն: Զարտա- տիպ կնիքն՝ զտեսակ տեսակայն. Փիլ. Եւ. Բ. 122. 124:

ԱՐՏԱՏՈՀՄ. ա. Ἔκφυλος. Alienus, են. Օտար 'ի տոհմէ. անսովոր. այլան- դակ. *Զարտատոհմն և զարտօրէնս ան- առակութիս. Փիլ. խնամ:

ԱՐՏԱՏՈՒԵԱԼ. ա. Ի դուրս տուեալ. 'ի վերայ բերեալ. տացեալ. *Վայելուչս իմն և որդարս յոյժ արտատուեալ պատաս- խանիս. Պիտ:

ԱՐՏԱՏՊԱԻՈՐ. ա. Տպաւորեալն 'ի կնքոյ. արտատիպ. *Բարուք երեւեցոյց արտատպաւոր կնիք. Փիլ. Եւ. Բ. 122:

ԱՐՏԱՏՊԱԻՈՐԵԼ. ն. Ի վերին երեսս տպաւորել. դրոշմել իւիք օրինակաւ. *Իբր ոչ 'ի ներքս տպաւորելով, այլ ար- տատպաւորելով. Փիլ. Եւ. Բ. 122:

ԱՐՏԱՏՐՈՀԵՄ, եցի. ն. Ի բաց տրո- հել. *Նա՝ որ արտատրոհեաց 'ի կենաց դրախտէն զկողին պարառակից. Նար. խչ: *Զվայրավատին մտածմունս արտատրոհէ 'ի մտացն. Տօնակ: *Յեգիպտական գեղն պաշտամանց արտատրոհեալ որոշեցաւ. Պիտ: *Հանճարս հրաշալի արտատրոհեալ. Բենիկ:

ԱՐՏԱՏՐՈՒԹԻՒՆ. գ. Արտաքս տալն զաւելորդս. բացանցութի. *Արտահոսու- թիւք, արտատրութիւք. Տօնակ:

ԱՐՏԱՑՈՒՑԱՆԵԼ. ն. Ցուցանել ար- տաքս. արտափայլել. *Զխուրեանցն ար- տացուցանելով զզօրութի. Ոսկ. ծն:

ԱՐՏԱԻԱԶԴԱՀԱՒ, ու. գ. Թռչուն ջրային կամ ջրասէր. որպէս ագռ. Ճայից, ձկնկուլ, են. *Քանզի և ոչ արտաւազդա- հաւդ, և ցեծգ, և կամ յայնցանէ՝ որ 'ի ջուրսդ շրջին, ագռաւն էր (արձակեալն 'ի տապանէ). Փիլ. լին. Բ. 39: *Արտաւազ- դահաւդ և ցեծգ՝ հաւք են, որ 'ի ջուրն բնակեն, ձկնաքաղն, և չեասին. Լծ. Փիլ:

ԱՐՏԱՓ. Տ. ԱՐԴՈՒ: Շիր. նշա. չափ:

ԱՐՏԱՓԱԿԵԼ. ն. Արտաքս փակել. որոշել 'ի կողմն մի. պարուրել. *Երկու- սան երկին, հրեղինաւն արտափակեալ ըզ- հրեշտակս, և երկրորդաւն զմարդիկ. Տօ- նակ:

ԱՐՏԱՓԱՅԼԵՄ, եցի. ն. } Φαι-
ԱՐՏԱՓԱՅԼԵՑՈՒՑԱՆԵՄ. } δρύνω, φαιδρόω. Splendidum vel nitidum reddo, exhilaro. Ի դուրս փայլեցուցանել. պայ- ծառ և երեւելի առնել. *Փայլատակունք է տասն երկնուղին ոյ. զայս յորժամ արտա- փայլէ ընդդէմ դիւացն, ցրուին. Լմբ. ող: *Զմարգարէութեց նախագուշակութիւն արտափայլեալ լուսազարդեցեր. Շար: *Զխուրն որակութի արտափայլեալ՝ զօրա- նայ. Մագ. կէ: *Աստուածային բարու- թե գեղով զինքեանս արտափայլեցուցին. Մագթ. էկէղ:

ԱՐՏԱՓԱՅԼԵՄ, եցի. չ. } Φαιδρύ-
ԱՐՏԱՓԱՅԼԻՄ, եցայ. չ. } νομαι. Splendeo. Արտաքս փայլել. ճառագայ- թել, ծագել. նշողել. ցոլանալ. պայծա- ռանալ. *Արտափայլեցին իբրև զարեգակն 'ի մէջ տիեզերաց: Արտափայլեցաւ 'ի փըր- կութեն մեզ. Յհ. կը: *Ի փառս առաջին արտափայլեալ. Զքր. կը: *Արտափայլի սէրն առ ած: Ի մէջ ջրոցն արտափայլի հուր: Զփառս վերջին առաւելս առաւել քան զառաջնոյն գուշակեցին արտափայ- լեալ. Լմբ. ող. և ափ: *Լոյսն՝ որ պայծառ քան զարեգակն, արտափայլեալ շուրջա- նակի սրբյն պօղոսի: Զոր 'ի լերինն ար- տափայլեալ տեսին որդիքն որոտման. Շար:

ԱՐՏԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ. գ. } Φαιδρό-
ԱՐՏԱՓԱՅԼՈՒՄՆ, լման. } της. Nitor, splendor. Արտափայլելն. պայ- ծառ ծագումն. նշոյլք. ցոլք լուսոյ. *Պարտ էր յայտնի լինել 'ի սուրբ տաճարին խաւարին արեգակնական արտափայլումն. Ճ. Բ: *Ի ներքուստ յաձնութէն էր ար- տափայլումն. Երզն. մթե: *Յարտափայլ- մանէ փայլատականցն: Զանճառ ծնունդ հայրական, զարտափայլումն միշտ լուսոյդ 'ի մշտնջենաւորէն. Բենիկ:

ԱՐՏԱՓՉԵՄ, եցի. ն. Արտաշնչել. որպէս Շունչ առնուլ՝ տալ, և որպէս Ա- ւանդել զոգի. *Յարտափչելն սուլէր (խորդալով), յանդիմանեալ 'ի խղճէ մտացն. Անան. նին: *Զանօրինեալն ար- տափչեաց ոգի. Թէոդոր. խչ:

ԱՐՏԱՓՉՈՒՄՆ, փչման. գ. Արտափը- չելն. և Դոյզն վայրկեան շնչառութեան. որպէս յն. Ῥοπή, րոպէ. Momentum. *Խաչն ոչ անջրպետեալ մեկնեցաւ զձեզ խոպան, այլ դոյզն ինչ արտափչումն ծածկեալ թաքուցանէ միայն. Ոսկ. յհ. Բ. 29:

ԱՐՏԱՔԱՂԵԼ. ն. Ի բաց քաղել. *Զառ 'ի յայլոցն արտաքաղելով (փե- տուրս) բաղադրելով յիւրում սեաթոյր սարսափին. Պիտ:

ԱՐՏԱՔԻՆ, քնոյ, ոց. ա. ό Ἔξω, ἐξώτερος, ἐξώτατος. Externus, exterior, extimus. Որ է 'ի դուրս կամ արտաքոյ կամ արտաքս՝ ըստ տեղւոյ կամ ըստ դիրից, և ըստ երեւութի, հակակայ ներքնոյ. տըշրի. փըշտուըրքի, խարիճ. *Մինչև 'ի սրահն արտաքին: Կամարք 'ի յարտաքնում սրա- հին: Առ դրամբն արտաքնով: Ել յար- տաքին գաւիթն: Մուտ թագաւորին (այսինքն ճանապարհ մտից նորա 'ի տա- ճարն) արտաքին: Զյատակ տանն ըզ- ներքնոյն և զարտաքնոյն: Հայելիս 'ի ներքսագոյնն և յարտաքինն: Առ եզերբ արտաքնոյ փեղկին: Ոչ գտցի անուն նորա առ երեսօք արտաքնովք: Ի ներքոյ կող- մանն մինչև յարտաքին: Ի խաւարն ար- տաքին: Սրբէք զարտաքին զբաժակին: Եղիցի և արտաքինն նորա սրբ. են: *Ար- տաքին գիմօք. Նար. Է: *Յարտաքինն նո- րա հայել մեծութի: Արտաքին վայելչք երջանկիկ. Պիտ:

Եւ Բազմական, և օտար (տեղի, իրք, անձն.) իբր ռմկ. տըշրի, հէտաւ. եապանճը. *Հալածէի մինչև յարտաքին քաղաքս. Գծ. իզ. 11: *Արտաքին թշնամի: Յար- տաքնոցն հրոսակաց: Ի վերայ արտաք- նոցն, այսինքն ընչից: Արտաքնոցն իրաց. Եղիշ. ա: Յհ. կը: Սահմ. է: Պիտ: *Իմաս- տակի ուսմանն արտաքնոյ. Նար. ծէ: *Զի և արտաքինն եւս հեթանոսք գիւրաւ հաւա- նեսցին. Ոսկ. գծ: *Գիտէր և զարտաքին ուսմունս. Վրք հց. ծա:

ԱՐՏԱՔԻՆՔ. գ. Մարդիկ՝ որ չեն մեզ ընտանի կամ մերձաւոր. օտարք. որպէս լտ. Alieni, peregrini. տըշրի մուրտիլ, տըշ- ուեցիք, որանք ոչ մեզնէ չեն. եւ, եապանճըլար. *Նոցա՝ որ արտաքինքն են, ամենայն ինչ առակօք լինի: Իմաստութբ գնասջիք առ արտաքինսն: Զի կայ իմ և զարտաքինսն դատելոյ. են: *Արտաքնոցն երեւէին իբրև այլ իշ սգաւորք. Եղիշ. է: *Զրկօղ զներ- քինս և զարտաքինս անհնարին չարագոր- ծութբք. Պիտ:

Մանաւանդ՝ Օտարազգի կամ այլազգի հեթանոս մատենագիրք, քերթողք, և փիլիսոփայք, որպէս լտ. Profani auctores, են. *Ասէին արտաքինքն զաթենայէ, եթէ 'ի գլխոյն արամազդայ ծնաւ. Սահմ. ծբ: *Աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս սկզբանն առասպելս. Խոր. ա. 2: *Արտաքնոցն զգաստք 'ի պատ- րուն. Շար: *Հետեւելով իմ ընդ արտաք- նոց եւս ժամանակագրութիս: Զանուանս հարցն արտաքինքն տարբերաչս 'ի մէնջ ասեն: Որ և արտաքնոցն իմաստնագունից յոյժ հաճոյ թուեցաւ. Յհ. կը:

ԱՐՏԱՔՆԱԽՈՐՀՈՒՐԴ. ա. Որոյ խորհուրդն է օտար. օտարոտումն. *Ար- տաքնախորհուրդ հեթանոսաց յիմարու- թի. Նար. խչ:

ԱՐՏԱՔՆԱՅԱՐԴԱՐ. ա. Որ արտա- քին կամ վերին երեսն է յարդարեալ կմ մաքուր. *Արտաքնայարդար բաժակ. Նար. իէ:

ԱՐՏԱՔՆՈՑ, ի, աց. գ. Տեղի արտաքս ելանելոյ և նստելոյ ուրոյն 'ի պէտս հար- կի բնութեան. տըշրի եւլիւլըս եէրի, արտ- ճանպայ. տըշըրա, քինիֆ. ('ի յն. քենօն, այսինքն հասարակ.) *Ի դուռն ար- տաքնոցին անկեալ կայ թմրեալն. Վրք հց. Ը: *Ոչ ախոռ, ոչ արտաքնոց, և ոչ այլ ինչ գարշահոտ տուն. Վրք. ճէ: *Թա- գաւորն յարտաքնոցն գոյր առ 'ի վճարել զմարդկային կարիս. Մաշթ:

ԱՐՏԱՔՈՅ. նխ. Ἔξω, ἔξωθεν. Extra, foras, foris. Ի դուրս, և դէպ 'ի դուրս. և Յարտաքին կողմանէ. և Ի վեր- քան. տըշըրտը, տըշրա, տըշրէն. փըշտուրտա. փըշտուըրտը. փըշտուըրտընտան. *Արտաքոյ բանա-

կին, կամ քաղաքին, սահմանացն, բնակութեն, շինին, տան, ապարանից, վարագուրին, մարմնոյ իւրոյ. եւն: *Արտաքոյ հարանեացն ընկեցան: Արտաքոյ իւրեանց հալածեսցեն զաւառաւ. Փարպ: Պիտ: *Արժանաւորաց եւ անարժանից արտաքոյ եղեալ եկեղեցւոյ. Լմբ. պտրգ: *Մարգարէ սուտ արտաքոյ մտաց իւրոց եղև. Եփր. պտմ. է. 17: *Արտաքոյ մտաց իւրոց արարի ես զայդ. Վրք հց. իդ: *Արտաքոյ կայր ինքն ինքեան. Նիւս. Երգ: *Զի մի հերքեսցիցեն արտաքոյ կարգի պատուիցեն զնա. Եփր. օրէն: *Արտաքոյ զօրութեն իմոյ է այս. Եփր. պտմ. ա. 1:

Եւ Ուրոյն. 'ի զատ. մեկուսի. օտար. հակառակ. աննման. անբաւ. աղատ. ազանց. *Եղեւ քեզ զոհկիմ սեպհական արտաքոյ եկեղեցւոյ քոյ: Արտաքոյ օրինաց: Արտաքոյ վարդապետութեն' զոր դուքն ուսայք. եւն: *Արտաքոյ այլոցն արգահեալ: Արտաքոյ արժանեաց, կամ իրաւանց. վայելչականին, կամ արժանաւորին, յարմարականին: Արտաքոյ բոլոր միտականի հեծութեն: Արտաքոյ այցելութեն: Արտաքոյ ամենայն անդամնելի կրից, կամ անանձական կրից: Արտաքոյ կամացն մոյ. արտաքոյ բնութեն, կամ մտաց, կամ ըղձայութեն. եւն. Յհ. կբ: Սարգ: Պիտ: Նար: Ը. Բարլր. Ն ամենայն լար. եւն: *Զոր օրինակ եւ ոչ զերկայնակեաց կենդանեաց ասէ ոք անմահս, եւ սակայն նոքա բազում ժամանակս կան արտաքոյ մահուան. Ոսկ. յհ. ծ. 53:

ԱՐՏԱՔՈՅ ՔԱՆ. Նխ. Նոյն ընդ վ. ըստ ամենայն առման. *Արտաքոյ քան զայգին, կամ զերուսաղէմ. եւն: *Արտաքոյ քան զամուրան. Եղիշ. է: *Այլ ած արտաքոյ քան զնա. Եզնկ: *Արտաքոյ քան զխս. Ոսկ. Եփ: *Ոչ ինչ արտաքոյ ասել քան զոր մարգարէքն եւ մովսէս խօսեցան. Գծ. իզ. 22: *Արտաքոյ քան զցիրաւն արարեալ էին. Բուզ. գ. 13: *Պատուէին զնա արտաքոյ քան զարժանն. Եփր. պտմ. է. 16:

ԱՐՏԱՔՈՅ. մ. Արտաքս. 'ի դուրս. եւ Արտաքուստ. *Ել պատմեաց արտաքոյ: Կալ կամ շրջել կամ ագանել արտաքոյ: Ի տան ծնեալ' կամ արտաքոյ: Ծածկեսցես զնա ներքոյ եւ արտաքոյ: Արտաքոյ երևին գեղեցիկք: Արտաքոյ մարդ եւ 'ի ներքոյ արհաւիրք. եւն: *Զցանկ պարտիզին արտաքոյ գնել. Վրք հց. է:

Իսկ բացառական խնդրով, իբր Հեռի, անխափ է մ. եւ Նխ. *Արտաքոյ լեր յանդորրոյն ասմկէգ. Ճ. Բ: *Որ յայսմ ախտէ արտաքոյ է. Լմբ. ող: *Զայն արտաքոյ տարեալ տրոհէին յայլոց. Յհ. կբ:

ԱՐՏԱՔՈՅ ԿՈՂՄԷ. Յարտաքին կողմանէ. արտաքուստ. 'ի վերին երեսս. *Գանձն արտաքոյ կուռէ փուշ ունէր, եւ 'ի ներքոյ մարգարտովլ լի. Ոսկ. ղյ:

ԱՐՏԱՔՈՅՔ. քոյց, քոյս. գ. Արտաքին կողմունք. եւ Արտաքին իրք. *Զարտաքոյս եկեղեցւոյն, կամ արքունեացն ամրացուցանել. կմ հոգածել: Զարտաքոյսն (մարմնոյն) զգեստաւորել: Արտաքոյքդ միայն են 'ի տեսիլ արտաքնոց. Յհ. կբ: *Կամ զմարմինն միայն, կմ զարտաքոյսն' զինչսն յաւելեալով: Զարտաքոյսն, այսինքն զստացուածս: Տիրեն 'ի վերայ մարմնականացն եւ արտաքոյից: Իմաստասիրութեն զըղձութեն էոյն գիտէ. իսկ զարտաքոյս բնութեանց եւ չհեռակայս եր գիտել արհեստից. Սահմ. ծա:

ԱՐՏԱՔՈՒՍՏ. մ. Ἔξωθεν. Extrinsecus, extra, exterius, foris. Ի դրուստ. յարտաքին կողմանէ' վայրէ. որ ասի եւ ԱՐՏԱՔՈՅ. տըռէն, տըշըոնց. փըշարքան, տաշքոփան. *Արտաքուստ ժտաանգեաց զնա սուր, որպէս եւ մահ 'ի ներքուստ: Պատերազմ սրոյ արտաքուստ, եւ սով եւ մահ 'ի ներքուստ: Ոչինչ արտաքուստ 'ի մարդ մտեալ. եւն: *Եթէ մարտիցէ ոք արտաքուստ կամ 'ի ներքուստ. Պղատ. օրէն. է: *Արտաքուստ ոչ համարձակին 'ի վերայ խառովութիւնք. իսկ 'ի ներքս ոչ զմուան յումեք գտեալ. Խոր. ա. 27: *Ցուցանի արտաքուստ բարիոք: Մարմնովս արտաքուստ պճնիմ. Նար. խէ. հա: *Արտաքուստ ուստեք 'ի ներքս ածել. Խոր. ա. 1:

Մեկնեն' որպէս Արտաքոյ. 'ի դուրս. տուրըը. փըշարքա, Գըրփա. *Անդ բացօթեայ ագանէր արտաքուստ զօթն եւ զգիշեր. ՃՃ:

ԱՐՏԱՔՈՒՍՏ. ա. Արտաքին. *Արտաքուստ կողմանէ տանն: Դէմ յանդիման կամարին արտաքուստ կողմանէ. Գ. Բգ. Ղ. 6: Եզեկ. խա. 25: *Աշտարակքն արտաքուստ կուսէ են շուրջ զքաղաքաւն. Լմբ. ող: *Զարտաքուստն եւ զ'ի ներքուստն պէտս: Զարտաքուստ օգնականութեանցն պէտս. Պիտ: *Ելցուք յարտաքուստ գաւառս. ՃՃ. Ա:

Կամ Օտար. *Արտաքուստ եւ եկամուտ հարազատութիւնք. Խոր. ա. 26: *Ցարտաքուստ օտարոտի պատմուճանս. Պիտ:

ԱՐՏԱՔՈՒՍՏ ԱՐՏԱՔՍ. Ի բացի կամ հեռի յոյժ. տըռէ 'ի տուրս. *Առին արտաքուստ արտաքս, եւ տարան ապանին. Ա. Դ. է. 4: *Մի խնդրեր դու զզօրութեն բանից' որ կաղապարեն իցեն ճառք արտաքուստ արտաքս. Եփր. համաբ:

ԱՐՏԱՔՍ. մ. Ἔξω. Foras, foris, extra. Արմատ նախընթաց եւ հետեւորդ բառից. որպէս ծագեալ 'ի ձայնիցս Արտ, եւ աք. (անդք, եւ ոտք). եւ ըստ այսմ նշանակէ' Ցարտս, յանդս. 'ի դաշտ. զոր օրինակ. *Դիմեաց յոխանաթան 'ի սեղանոյ անտի արտաքս. Ա. Բգ. ի. 34. յն. յագարակն. որպէս եւ 'ի մեզ, 11. գնի, յանդն: Այլուր' ըստ յն. յագարակի, 'ի մեզ' 'ի բացի, 'ի վայրի: Կամ Արտաքս' ծագէ 'ի հյ. մասնկանէս աըփ, որ 'ի բաղադրութիս ըստ յն. է' էք, էքս. եւ յանգն հյ. աքս, (յոր. մէ եւ աքսոր) նոյնանայ ընդ յն. էքսօ, այսինքն արտաքս. 'ի դուրս. արտաքոյ. տրական եւ ներգոյական նշանակութբ. Թող զի գրիչք' ուր տեսանեն առ հինս գրոշմեալ ԱՐՏԱՔՈ, այսինքն արտաքոյ, սակայն երեւին ընթերցեալ եւ գրեալ' ԱՐՏԱՔՍ. տուրս, տուրըը. փըշարըը. փըշարքա. *Արտաքս ելանել: Ելանել արտաքս: Ընկենուլ արտաքս: Ածել արտաքս: Հանել արտաքս. եւն: Կամ *Որ 'ի ներքս' որ արտաքս: Արտաքս ոչ երեւէին. եւն:

Ոճով ասի. *Արտաքս ել ինքն յինքենէ, եւ 'ի հիացման լինելով արտաքոյ կայր ինքն ինքեան. Նիւս. Երգ: *Այս անիրաւ դատաստան եւ ոչ 'ի կարի չար դատաւորացն արտաքս ելեալ հատանելի: Գնալով ես արտաքս ընդ դուռն բնութեն (այսինքն ըստ դուռն, կմ քան զդուռն). Պիտ: *Ելք փախչողաց ըստ մարդկային հնարս արտաքս ելանէր. Լմբ. հմբ: *Արտաքս ըստ բնութեն իւրեանց ելանել: Արտաքս զնա առ 'ի նմանէն կորզեաց: Արտաքս զինքն 'ի հնազանդութեն բերեալ. Յհ. կբ: *Ըստ սահման կշռուն կամաց քոց արտաքս վազեցի. Նար. Է: *Մեր յայտմանէ արտաքս գոլով: Ցոյմէ առակաւոյ է արտաքս լինելն ''. այսինքն ազատ. Լմբ. ող: *Ցայսցանէ ոչինչ թողաք արտաքս. Վրք հց. իդ: *Արտաքս գալ կամ գնալ''. իբր 'ի բաց կալ, հրաժարել. Լմբ. ող: *Ամենեւին արտաքս սահմանեալ զինքն 'ի բարձրութէ: Ցաղագս չարութեն արտաքս սահմանեալ լինի ''. այսինքն արտասահմանեալ, տարագրեալ. Յհ. իմ. էկ: Անձաբ. ծն: *Ի կենցաղոյս իրաց զանձինս մեր արտաքս կացուսցուք. Երզն. մթ:

ԱՐՏԱՔՍ. Նխ. Տ. ԱՐՏԱՔՈՅ. (դուցէ երբեմն բուն գրածն էր ըստ հ. ԱՐՏԱՔՈ). *Զխորին խոզի արտաքս մարմնոյն իւրոյ 'ի բաց ընկենոյր. Ագաթ: *Արտաքս խորանին կալով. Լմբ. պտրգ: *Արտաքս ելեալ չարութեն սահմանին: Արտաքս է տանն իւրոյ. Լմբ. ող: *Եւ ես անպարտ եւ արտաքս մեղադրութեն գնացից. Յհ. կբ: Իսկ Լմբ. փնփէս. *Սա ամենայն օրինաց' որ մտացն է, արտաքս գնացեալ, պարտական է''. լինի Նխ. եւ մ:

ԱՐՏԱՔՍ ՔԱՆ. Տ. ԱՐՏԱՔՈՅ ՔԱՆ. *Զի մի առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն. Մրկ. է. 10: *Ելանել տայք արտաքս քան զերուսաղէմ: Թողուլ արտաքս քան զդուռն. Փարպ: *Չիք արարած բանաւոր արտաքս քան զայս երիս ջոկս. Եզնկ: *Եւ այս ոչ արտաքս քան զնախախնամութի հոգւոյն սրբոյ լինէր. Եղիշ. Բաղմ: *Արտաքս քան զսահմանն իմաստութեն. Պիտ: *Ցանձախութբն արտաքս ելանեն քան զսահման համարոց. Լմբ. ող: *Ի տանն բախաւու կեանք ժամանակեան, եւ արտաքս քան զնա մահ ժամանակեան. իսկ յեկեղեցւոջ դուն կեանք յաւիտենից, եւ արտաքս քան զնա դարձեալ մահն յաւիտենից. Եփր. յես:

ՅԱՐՏԱՔՍ. իբր Արտաքս. 'ի դուրս. 'ի բաց. *Ոչ մտանէ 'ի ներքս աստուածեալքն յականջսն, այլ իբր 'ի բաց եւ յարտաքս հեղեալ լինի. Փիլ. լին. դ. 104: *Զամենայն չարութեանն առժամայն յարտաքս արտահեծալ. Յհ. կբ:

ԱՐՏԱՔՍ ԵԼԱՆԵԼՆ. Ἔκκρισις. Depulsio excrementorum, excretio. Երթալն յարտաքնոցն 'ի թափել զաւելորդս. կղկղումն. տուրս էլլըն. տըշըրայը չըգմըգ, հաճէթ. *Խարտեաշն մաղձ առ 'ի յամոքումն կատարէ, եւ շարժէ զարտաքս ելանելն: Փայծաղն զարտաքս ելանելն յաւելուածոյն տակացուցանէ. Նիւս. բն. իէ:

ԱՐՏԱՔՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ. Տ. ԱՐՏԱԲԵՐՈՒԹԻՒՆ. *Բանիւ եւ' որ ըստ արտաքսաբերութեն, զոգիս արծարծեսցելոյ կատարելագոյն բնութեն. Փիլ. լին:

ԱՐՏԱՔՍԱԳՈՅՆ. ա. Որ առաւել 'ի դուրս կայ. *Այնք' որ 'ի ներքին յայլուցան են, անտեսանելիք են եւ անիմանալիք. իսկ որ արտաքսագոյն են քան զսոսա, տեսանելիք են եւ զգալիք. Փիլ. Եւ:

ԱՐՏԱՔՍԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ. Տ. ԱՐՏԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ. Ἐκφώνησις. Expressio sermone. *Գործակից լինելոյ տեսեմ ձեռք են արտաքսաձայնութեան բանի. Նիւս. կազմ. ի:

ԱՐՏԱՔՍԱՆԱՄ, ացայ. չ. Արտաքս բերիլ. 'ի բաց ելանել. *Առաւել քան 'ի մարմնի, յարժամ արտաքսանայ' քան ըղմարմնին լինի քաղցանէս եւ իմաստութն հոգին. Կաղնկտ:

ԱՐՏԱՔՍԱՇՆՉՈՒՄՆ, չման. գ. Շնչումն արտաքս. որպէս յն. Ἔκπνευσις. Exspiratio. *Զօդոյս ձգումն եւ զարտաքսաշնչումն հնարել թոքովք. Նիւս. կազմ. լէ:

ԱՐՏԱՔՍԱՐՈՒԱԲԱՐ. մ. Ἐκπορευτῶς. Processionis modo. Ելմամբ. ելողա-

պէս. բղխմամբ. *Հոգին ոչ ըստ որդիաբար, զի և ոչ ծննդեամբ, այլ արտաքսաբար. և եթէ ինչ նորաձևել յառաքաբար. և եթէ ինչ նորաձևել յանուանսն յաղագս յայտնութեանն լիցի. Ածաբ. յայտն.:

ԱՐՏԱՔՍ ԱՌԱՔՈՒՄՆ, կամ ԱՐՏԱՔՍ ԳՆԱԼՆ. որպէս յն. Ἐκπόρευσις. Processio. Ելումն, բղխումն, ասի առեալ վասն հոգւոյն սրբոյ: Ա՛ս որս. Ղ:

ԱՐՏԱՔՍԱՌԱՔՕՐԷՆ. Տ. ԱՐՏԱՔՍԱՌԱՔԱԲԱՐ. *Ոչ որդիաբար, այլ արտաքսառաքօրէն. Վրդր. Երրորդ:

ԱՐՏԱՔՍԵՄ, եցի. ն. Ἐκβάλλω, ἐξωθέω. Ejicio, expello. Արտաքս հանել. 'ի դուրս ձգել. 'ի բաց վարել. հալածել. դուրս բռնել, վռնտել. գօլմագ. *Զքաղդէացին ամբարձեալ գոռոզ 'ի Ճարակաւորացն արտաքսեաց խումբս: Զնա դատապարտեալ արտաքսէր 'ի տարտարոսազէնն խաւար. Խոր. հռետ: *Զխենեշութիւն մտացս արտաքսեցից. Պիտ: *Արտաքսել զսա օրինօքն առանց թաղման. Պղատ. օրին. Ը: *Արտաքսելով 'ի մէնջ զանխծաբերն մեռելութիւն. Մագ. ԿԵ: *Յեպիսկոպոսութենէ արտաքսել, կամ արտաքսիլ. Կանոն:

Եւ որպէս Περιορίζω. In exilium mitto. Աքսորել. արտասահմանել. տէրել. սիւրգիւն. *Առ յոլհաննէս ածաբան առաքեալ և աւետարանիչ արտաքսեալ 'ի պատմոս կղզի: Որ անիրաւելն զմեզ և արտաքսել համարին. Դիոն. Բղբ:

Եւ որպէս Ἀφαιρέω. Adimo. Ի դուրս կորզել. յանդորր հանել. խալըսել. սէլամէթէ չըգարմագ. *Իջուցեր զծառայ քո յունան յանդունդս, և արտաքսեցեր զնա 'ի դուրս. Ագաթ: *Որ զյովնան 'ի կիտէն կորզեալ արտաքսեցեր. Շար: *Արտաքսեա (զիս) յերկմտութեանցս. Նար. ՅԴ: *Միայն 'ի չարեացդ արտաքսեա՛ց (կամ արտաքսեա՛)". այսինքն եւ 'ի դուրս. Վրդ. հց. ԽԶ:

ԱՐՏԱՔՍԵՑՈՒՑԱՆԵԼ. Տ. ԱՐՏԱՔՍԵԼ. *Զմեզ 'ի կենացն հանեալ արտաքսեցոյց. Շար:

ԱՐՏԱՔՍԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ. Տ. ԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ:

ԱՐՏԵԼՈՒԹԻՒՆ. գ. Արտաքս ելումն. արտաւղութիւն. խոտորումն. անկարգութիւն. *Դիցես զքարին, և զկնի այնորիկ զարտելութիւն, զանցեալ զկեանսն բամբասեցելոյն ստգտանելով. Պիտ:

ԱՐՏԵՄԻՍ, մեայ կամ միդեայ. Տես ԱՆՆԱՀԻՏ, 'ի բռ. յոկ. ան:

ԱՐՏԵՐԵՒԻԼ. յ. Արտաքս երևիլ. երևելի լինել. *Հեռն յայտնապէս արտերևեալ՝ արագ ձգէ զհետամուտ թըշնամին զկնի նորա. Զքր. ԿԲ: *Իւրաքանչիւր ոք ըստ ինքեան եղեալ զետեղեցաւ արտերևելով. Մագ. ԷԿԵԴ:

ԱՐՏԵՐԵՒՈՒԹԱՆԱԼ. Տ. ԵՐԵՒՈՒԹԱՆԱԼ՝ իբր Երևակայել. Φαντάζω. Animo fingo. *Կիրս ինչ արդեօք շուրջ զանախտականաւն 'ի մարդկայինս ակարութե արտերևութանաս. Բրս. ծն:

ԱՐՏԵՒԱՆ, ի, նունք, նանց, կմ նաց. (իբր Արտերևան, արտաքս երևեալն). Ὀφρύς, βλέφαρον, ρα. Supercilium, ia; palpebrae, cilium. Եղակի է Դարաւանդ լերին, նմանութբ յոնից. ճէստն գըլսիւ. տէէքէ. *Ածին զնա մինչև յարտևան լերինն՝ գահավէժ առնել զնա. Ղկ. Դ. 29: *Հանին զնա յարտևան լերինն, այսինքն 'ի գլուխ լերինն, յաւարտն ". Վրդն. յոհէարն:

Յօքնակի՝ են Թարթափք կամ կոպք աչաց մաղեքն հանդերձ. Թարթիչ. կէօզ գափաղը, գըրփիգ, գիրփիգ. Տես Յոբ. ԺԳ. 17: Սղ. Ժ. 5: Ճղք. 4: Առակ. Դ. 25: Ղ. 4. 25: Լ. 13: Երեմ. Թ. 18: *Իսկ ըղձալի մասնութիւն այդեստանւոյ իբր զարտևանաց բազմութիւն այգեստանւոյ իբր զարտևանաց խիտ և գեղեցիկ ծիր. Խոր. Բ. 39: *Ածքն փրկութե աչացն հնարեցան զարտևանցն բնութի. Պղատ. տիմ: *Արտևանունք նորա քննեն (առէ դաւիթ). զի՞նչ է առ մեզ իմաստութի արտևանաց, զի քննել կարիցէ զմարդիկ. ոչ ապաքէն մազ է սա անկենդան՝ պահապան բբոց: Ըստ նուազագունից մազոյ արտևանացն առնելոց է քննութի ած մանուկ կրից. Շ. Թղթ: *Զի նա ինքն է թօթափումն մի արտևանան (այսինքն արտևանի, կամ արտևանաց). Եփր. համաբ:

ԱՐՏԻԿ. գ. Ոչխար արտի, այսինքն վայրի. Էապան գօյոնու. *Արտիկք բազում անգամ երկաւորեակս ծնանին. Վեցօր. Ը:

ԱՐՏԻՒՏ. Տ. ԱՐՏՈՅՏ:

ԱՐՏՀՈՒՆՁ. գ. որ գրի և ԱՐՏԱՀՈՒՆՁ, և ԱՐՏՈՒՆՁ. Որ հնձէ զարտ կմ զանդ. հնձօղ. *Ոչ հերկարար ես ժողովրդեանդ, և ոչ արտահունձ. Մանդ. ԻԱ. ճառ Ա: Ճ. Դ:

ԱՐՏՈԳԵԼ. ն. Վերաձայնել. յն. վերադրել. *Որդի, վասն այսորիկ և անդրանիկ արտոգեալ է. ԱԹ. Է:

ԱՐՏՈՅՏ, կամ ԱՐՏՈՒՏ, տուտի. գ. գրի և ԱՐՏԻՒՏ, և ԱՐՏՕՏ. Κορυδαλός, κορυδίς. Alauda, galerita. Փոքրիկ թռչուն արտի՝ երկայն փետրովք 'ի գլուխն. աբեղայագ. չայըր գուշու, թօյղար, գուգուլէր, գուլթաղար. ըստ ոմանց՝ չիֆնին, իբր աղգ ինչ աղաւնոյ: Գաղիան: Բժշկր: *Թըռչունքն զարտուտն օծին իւրեանց թագաւոր. Ոսկէփոր: *Նման արտուտի՝ քաղցրաձայն հաւի՝ գարնան գուշակի. Գնչ: *Ըստ որում 'ի գեհինս պատժի առակեալ արտուտի զգուշութի. Մագ. ԾԵ:

ԱՐՏՈՐԱՅ, ի, ից կամ ոց. } գրի և ԱՐՏՕ-
ԱՐՏՈՐԵԱՅ, րէի, ից. գ. } ՐԱՅ, օրեայ, այք. Աւաւել յոգնակի վարի, մանաւանդ 'ի սբ գիրս. τὰ Σπόριμα. Sata, segetes. Արտ, արտք. անդ. անդք. անդաստան (թերևս օրայից), կամ անդաստանք. ցանք. արփորէք, վարուցան, արփէր. Տես Մաթ. ԺԲ. 1: Մրկ. Բ. 23: Ղկ. Զ. 1: *Զարտորայս նոցա՝ որ մերձ էր 'ի հունձս, տարաժամ զայն հնձեալ. Յհ. ԿԲ: *Հնձօղք արտորայոցն շուրջ զտեղօքն գործէին. Փարպ: *Այրեաց զայլոց արտորեայս: Զամենայն հօտ նորա և զարտորեայս ապառեաց. Մխ. Դպ: Ճ. Ա: *Զգընայր յա ընդ արտորայն: Տեսէք զարտորեայն: Արտորայ, և հունձքն: Արտորեայ ապխտակացեալ. Ոսկ. Մ. Բ. 14. 22: յհ. Ա. 33: *Սերմանեցից հայր, զարտորայն իմ. Վրդ. հց. ԾԱ: *Երաշտ եղև, և արտօրեայք իմ չորացան: Բրեին արտօրեայս: Արտօրայքդ քո արացեն ցորեան. Հ = Յ. ժէպր. Է: Մրփ. Է:

ԱՐՏՈՐՈՇԵՄ, եցի. ն. Ի բաց որոշել. *Արտորոշեալ զնա յաւէժական բարութենէն: Արտորոշեաց զնա 'ի դրախտէն. Զքր. ԿԲ: *Ի լուսաւոր պատուիրանէ արտորոշեալ դառնէր: Թաղման անգամ արժանի ոչ արարեալ՝ զնոցա արտորոշէ զանկեալս. Պիտ: *Զամենեսեան արտորոշէր 'ի Ճանապարհաց չարաց. Յհ. ԿԲ:

Եւ Բաժանել. և Զանազանել. որոշել. *Անանջատելի բնութբ 'ի սմանէ ոչ արտորոշի. Անան. ԷԿԵԴ: *Արտորոշեալ Ճանաչի 'ի նոսա դէմն այսուիկ. հօր՝ ծնօղ գոլ, որդւոյ՝ ծնունդ. իսկ հոգւոյ՝ ելումն. Յհ. ԽՄ. Երև:

ԱՐՏՈՒՂԻ. ա. որ և ԶԱՐՏՈՒՂԻ. ὁ Ἐκτὸς τῆς ὁδοῦ, ἀλλότριος. Devius, alienus. Որ ինչ է արտաքոյ ուղւոյ. խոտորեալ. թիւր. օտար. *Ըստ արտուղի հետս հետեւել. Նար. ՀԸ: *Որ ընթանայ արտուղի մտօք, ոչ միաբանի չարչարանացն քի. Ածաղգ. Ը:

ԱՐՏՈՒՂԻ. գ. Ուղի արտաքոյ արահետ Ճանապարհի. թիւր Ճանապարհ կամ ընթացք. *Տարածին, և ոչ ըստ արտուղի անկանին. Ագաթ: Ն. Յհ. ԿԲ: *Մինչդեռ երթայր 'ի Ճանապարհի, մոլորեցաւ նա ըստ արտուղի, զի բազմացան հոգք խորհրդոց նորա. Եփր. ծն:

ԲԱԽԵԼ․ որպէս Ընդհարկանել․ Προσπίπτω. *Ընչեցին հողմք, և բախեցին ընդ տունն․ Մտթ․ Է․ 25։ *Մրրիկ հողմոյ բախեցաւ զհաստատուած մարմնոյ ․․․ յերկրայինն ծովուս։ Տերևք անկեալ շառժեալք 'ի հողմոց ուժգին բախելոց․ Նար․ Գ․ կա։ *Բախեալ 'ի քարի զատա իւր․ Վրք հց։ *Իբրև զանչարժ վէմ բախեալ անգրէն ընդ կրուննին գաւառայր․ Գէտ։ *Այնպէս 'ի գէտ կոչէր, զի բախէր կոչումն 'ի վերայ, և յետս 'ի կոչողն գառնայր (արձագանգն)․ Վրդն․ ծն։ *Բախեցին զնա ալիք, և ոչ լուծաւ քակտե-

ցաւ նաւ նորա. Եփր. ծն: *Խնամատարութեան բաղձանօք բախեալք. Փիլ. փեսայն: *Ոչ կարաց ժուժկալել, և բախեալ արտասուօք, յոգւոց եհան. Վրք հց. ծէ: *Լաւագունիւք՝ քան կնդրկօմք՝ անմարմին հատուածք բախեալ՝ յոյժ ուրախ լինին. Փիլ. լին: *Նշքա՝ որ ինչ ընդդէմ ածուէն բախէր՝ ատացին. Եփր. համառ:

ԲԱԽԵԼ. Ψάλλω, πλήσσω. Tango, pulso, cano. Հարկանել կամ հնչեցուցանել զնուագարանս. ղօրնէլ. չալմագ. *Երաժշտակին զուրախականն բախեալ նուագս. Սհմ. ծէ: *Բան մարգարէին իբրև կանգոց բախէր զլեզու կիթառին, և իբրև զքնար հնչեցուցանէր զաղի աղէտս ողբոց առ ած. Անան. յոհ: *Բախեսցէ հոգին զքնարն իւր. Վրդն. ծն: *Ցորժամ բախեսցին (ծնօտք), ամենայն ձայնի գործիքն ընդ նա հնչեն. Փիլ. ։

Նովին նմանութեամբ, Ազդել 'ի լսելիս, կամ շարժել զլսելիս. *Ջայլումից բախեալ՝ զեկուցանէ զլսելիս. Յհ. իմ. պատ: *Բախեալ իմ զգործարանս իմաստից նոցա՝ խրատու բարւոյ զունկն մատուցանէին: Որ զիմս բախեաց զիմաստիցս գործարան. Յհ. կը: *Որով բախեալ զձայնարձակութեանցն զազդողարան՝ սթափեցաք կանգնեցաք. Նար. ղբ: *Զոր օրինակ բախէ ձայն քարոզ լուսոյ 'ի դրունս լսելեաց, այսպէս ծագել ճրագի՝ 'ի դրունս բբաց. Եփր. համառ:

ԲԱԽԵԼ. որպէս Ցեալ ընկրկել, վանել, գանել. չըքմագ. Καταχρούω. Reprimo. *Զխավարք զդժուարերասանն ձիոց ոչ փութով խեղդէն սանձօքն, և ոչ անդրէն բախեն. Բրս. յուղէփ: *Ոչ միայն զի ոչ ցանկային փառաց, այլև զտուեալսն 'ի բաց բախէին. Ոսկ. գծ: *Զմեզ բախելով հանցեն 'ի խաւարն արտաքին. Վրք հց. Բ: *Ոչ որպէս արեգական բակդ, որք 'ի նա հայելն նկատելով, բախէ ճառագայթիւքն. Փիլ:

ԲԱԽԵԼ, ԲԱԽԻԼ. Συνάπτω, συνεφείδω. Congredior, conjunctis viribus ago. συγκρούω, confligo, եւն. Հարկանել պատերազմաւ զմիմեանս. ընդ միմեանս ընդհարկանել. 'ի գլուխ հարկանել. 'ի վերայ յարձակել. ղարնէլ ղարնաթել. չաթմագ, չաթըշմագ, փէօյթուշմէք, մուլագաթ օլմագ. *Սատակապէս բախեալ զմիմեանս (հին տպ. ընդ միմեանս), յերկոցունց կողմանցն բազում վիրաւորս յերկիր անկեալ: Անդ էր տեսանել շատաց մեծի տագնապին, առ 'ի յանդուգն յարձակմանէն՝ զմիմեանս բախելով. Եղիշ. ղ: *Հասին ճակատքն երկոքեան 'ի միմեանս, և ընդ միմեանս բախեցան: Հասանէին՝ բախէին՝ հարկանէին՝ սպանանէին. ա. Մ. Է. 42: Բ. Մ. Է. 30: *Թէպէտ և յանդուգն յարձակմամբ յառաջեալ բախէին, երագապէս և դառնային. Խոր. Բ. 43: *Մարտն ընդ միմեանս բախեալ. Յհ. կը: *Մարտ պատերազմի ընդ միմեանս բախէին. Եւս. քր. ա: *Պատկեր ծովու ծփեալ 'ի բազմաց ... և ընդդիմական ներհակօք զիրեարս բախեալ, ոմն յաղթէ, և ոմն պարտի. Նար. ծթ: *Հարկ է զի 'ի գլուխ բախիցէ քեզ 'ի միասին եսականն. Սեբեր. ա:

ԲԱԽԻԼ. որպէս Դիպել 'ի դէպ գալ. *Զինչ և անուանեաց ադամ, այն անուն է նորա. քանզի յարմար բախեցաւ (անունն ընդ բնութեան). Երզն. մտթ:

ԲԱԽԵՑՈՒՑԱՆԵՄ. ցուցի. ն. Նոյն ընդ Բախել, և բաբախել. ղարնէլ, յան հանէլ. *Զկնորաց բախեցուցեալ զնուավարչօք. Մագ. լէ:

ԲԱԽԻՒՆ. Տ. ԲԱԽՈՒՄՆ. *Մինչ բարբառ լուկ եղէ՝ բախիւն լեզուի է օդս. Ագաթ:

ԲԱԽՈՂԱՐԱՐ, ի, աց. ա. Որ առնէ զբախումն. այսինքն քնարահար, կամ մասն նորա, և գործիք. *Որպէս կարծեմ առ բախողարարն՝ ծակք հաւասարի ճշգրտութեան մասն ունելով ոչ բանաւորս հաւասարի հնչմունք են. Փիլ. լիոս: որ 'ի Լծ. ծիլ. այսպէս մեկնի. *Բախողարար ծակք. մասն աղւոյն կամ փողոյն, և այլ զինչ կամիս »:

ԲԱԽՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱԽՈՒՄՆ. *Ընդ միմեանս բախութեն իմն ամենայն երկնի, ըստ որում յարմարին կիրառութեանցն. Փիլ. նխ. Բ:

ԲԱԽՈՒՄՆ, խման, խմունք, մանց. գ. որ և ԲԱԽՈՒԹԻՒՆ. Բախելն և բախիլն՝ ըստ ամենայն նշ. հարումն. ընդհարումն. զարկուած. Թնդիւն, եւն. ղարնէլը, ղարնաթըլը. չարփմա, չարփըշմա, զարպ. *Ընդհարումն և բախումն գործեսցէ. Փիլ. այլաբ: *Բախումն կրծից. Յհ. կը: *Որ ողբալով բախմամբ արտին, տեսանելով խմոյ մայր առ խաչին. Ցմ. օրհն: *Ի կարծրութեան բախման վանեցեալ: Ի բախմանէ ալեաց, փոթորկաց: Ընդ ուժգնակի բախման թնդեալ ներքնային խորոց՝ հարթէ զլերինս. Նար: *Արկանել զնոսա յամենայն չարչարանս, և բախմունս կառանաց ... 'ի բարկ բախման անչափ աղէտիցն. *Բազում բախմունս պատերազմաց սաստկապէս յարդարեւին. Յհ. կը:

ԲԱԽՏ, ի, իւ, ից, իւք. գ. գրի յոմանց և ԲԱՂԴ. պ. պախթ, դէվլէթ. Τυχή. Fortuna, casus, felicitas. Դիպուած բարի կամ չար. մանաւանդ բարին՝ որ և Յաջողութիւն ասի, իմն առ յոյս. պախթ, տալիհ, նասիպ, գըսմէթ, գըսմէթ. *Եւ ասէ լիա, առ իս բախտ իմ. Ծն. Լ. 10: *Սահմանեն զբախտ, դիպուածս և ընթացակցութիւն յերկուց պատճառաց՝ 'ի յօժարութենէ զսկիզբն ունողաց՝ այլ ինչ քան զոր բնաւորեցաւն կատարողաց. որպէս գերեզման փորելով գանձ գտանել. Նիւս. բն: *Բախտ՝ անձնաւոր ինչ չէ, այլ դէպք աջողութեան. Եղնիկ:

ԲԱԽՏ. որպէս Բարեբախտութիւն. և ճոխութիւն, իշխանութիւն. *Բայց ըստ բախտի եղեալ արտաշէսի՝ մեռանի 'ի նմին ժամանակի գամբիւրանոս. Խոր. Բ. 51: *Ի վեր ելեալ բախտիւ՝ զմնձանց երևեցուցանէին բարգաւաճանս. Պիտ: *Որ զօտարսն 'ի ծառայութեան վաճառեալ՝ պետականին հասուցանէ բախտի. Մագ. յա:

ԲԱԽՏ՝ ըստ հեթանոսաց. Τυχή, δαίμων. Fortuna, genius. (յարմէ թ. ճէն.) Իբրու ոգի իմն դիւական. վիճակ և ճակատագիր բարեբախտութեան. *Կազմէիք դիւաց սեղան, և խառնէիք խառնելիս բախտից. Ես. կե. 11: *Հատեալ զցանկ հզօրին՝ բախտից հմայից զսեղանն մեծախորհուրդ արևանն սրսկման երևեցուցեալ (մանաւանդ). Նար. ծա: *Ծառք առնեն զանուն բախտի (քրիստոնեայք). Եղիշ. Բ: *Ո՛չ 'ի բաշխս բախտից, և ոչ ճակատագրաց. Եղնիկ: *Ոչ բախտից, ոչ աստերաց, ոչ դիպուածոց, և ոչ պատահմանց համարիցիմք զբարիսն՝ զոր ունիցիմք 'ի ձեռս, այլ՝ նախախնամութեան այ և ողորմութեան. Խոսր: *Աստուծով բախտ և ժամանակ զմարդիկ նուաճարեն. Ոսկիփոր:

Ցայպանումն առասպելեալ բախտին ասի յանդուպոնքիր. *Մանկունքն եդեալ էին որոգայթս վասն ձագուց. և արուսն կաս զհատ ցորենոյն, և բախտն անկաւ 'ի որոգայթն՝ և անշնչացաւ. և եկեալ զորքն հանին զբախտն »:

ԲԱԽՏԱԲԱՇԽ. ա. Բաշխող բախտի՝ ըստ հեթանոսաց. *Դժնդակ կռանիք և բախտաբաշխ հրամանօք. Ոսկ. եա:

ԲԱԽՏԱԳԻՒՏ, ի, իւ, ից. ա. Գտող, այսինքն գուշակող կամ հմայող զբախտ. ֆալճը. *Ծննդաբանք, բախտագիւտք. Գրմ. աղէքս:

ԲԱԽՏԱԳՐՈՒԹԻՒՆ. գ. Գրութիւն բախտից, կամ հեթանոսական ճակատագրութիւն. ճակատագիրք. ալն եազըլը. *Գուցէ առանց բախտագրութեան ասցէ աքիլլէս զեկտոր. Նոննոս:

ԲԱԽՏԱՆՈՑ, ի, աց. գ. Մեհեան չաստի բախտի. տուն կռոց. մեհեան. պութխանէ. *Ժողովել 'ի բախտանոցն, և 'ի միասին առնել: Եթէ ոչ կամիս գոհել, գնասցուք 'ի բախտանոցն եկ: Ո՛չ 'ի բախտանոցն, այլ 'ի բանդ երթամք. Ճ. Ա. Գ. եւ:

ԲԱԽՏԱՊԱՐԳԵՒ, ի. ա. Պարգևիչ բարեբախտութեան. պարգևատու բարեաց, որ միայն զայս ճշմարտէ ասի աստուածութեան. *Ճոխացուցանօղ (տէր,) և բախտապարգև. Սրկ. աղ:

ԲԱԽՏԱՑԻ. մ. Τυχικῶς. Fortuito casu. εὐτυχῶς, fortunate. Ըստ բերման բախտի. բախտէն, տէպատուֆէն. դուշէրինէն, տալէհ լէն. *Մարթն (կարելին՝ լինի) ... 'ի նաւացն, որպէս բախտացի. քանզի պակաս՝ ոք 'ի փորել ինչ եգիտ գանձ. Անյ. վերլծ. ծգ:

ԲԱԽՏԱՒՈՐ, ի, աց. ա. Εὐτυχής. Fortunatus, felix. Հասեալ իմիք բախտի. բարեբաստիկ. պէխթաւէր, տալիհլի, տալէհլու. *Ի փառաւորութեան անտի՝ բախտաւոր (կոչի). Եղնիկ: *Առ զգայութիւն ոչ բախտաւորք, ոտիւք և ձեռօք հաշմեալք, հիւանդոտք. Փիլ. նխ. Բ:

ԲԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ. գ. Εὐτυχία. Secunda fortuna, felicitas. Ունելն ըղբախտ կամ զյաջողութիւն, բարեբախտութիւն. *Ոչ ընդ ատեալս պշուցանել, թէ նոքա լինչ իցեն պատճառք բախտաւորութեան: Բախտաւորութեան և չուառութեան զատանելն գնեն պատճառք. Եղնիկ: *Որոյ բախտաւորութեան բազում ժամանակս ունի. Փիլ. նխ. Բ:

ԲԱԿ, ի, ից, կամ աց. գ. Περιβολή. Ambitus. αὐλή, προαύλιον, atrium. Ներքին շրջապատեալ տեղւոյ փակելոյ կամ պարսպելոյ որմով. վայրագաւիթ, գաւիթ. բակ. հավլու, հայաթ. *Ի ներքս 'ի բակին՝ 'ի պարսպին եղեալք. Նիւս. խոսք: *Յովանէս էր 'ի դրունս բակին. Եփր. համառ: *Զի՞նչ է կրկին այդն. երկու են գերեզմանք՝ այլք ընդ լերամբն, մին արտաքոյ, և միւսն 'ի ներքս. կամ երկու բակք, մի՝ որ փակեցեն, և միւսն՝ որ փակեալն լինի: Որք 'ի ներքս մտանեն 'ի մեհենիցն բակս, լուանալոյ և չլուացանութեան մաքրին: Որք զքաղաքս կալցեն, ոչ երեք կամ չորս կողմել տունս համարին, այլ բազում թուով ըստ մեծութեան բակին՝ բազմութիւն տանց ածեցուցանելով. Փիլ. լին. և նխ. Բ: *Շինող ոք յընդարձակ բակի. Վրդն. ծն: *Հերբայեցի 'ի քաղաքս բակաց ասէ, զի եծրովլթ՝ բակք են. ('ի մերումն գիրս 'ի քաղաքս հանգրուանաց.) Եփր. եւ:

ԲԱԿ. Ποίμνιον. Ovile. Գաւիթ ոչխարաց. փարախ. աղըլ. *Բակ խաշին. Մծբ. Է: *Ոչ է պարտ ոչխարաց կալ արտաքոյ բակի. Խոսր: *Իբրև զոչխարս արգելեալս

'ի բակի. Ղուկ. ծէ: *Մտին 'ի բակ հօտից նորա. Վրք հց. ծէ: *Ցուցանէ զնիկէն քնի ոչխարացն յայլմէ բակէ եկեալ 'ի փարախն քնի. Ճ. Ա:

ԲԱԿ. Միջոց կամ տարածէք՝ որ 'ի մէջ տանկաստանեաց. *Զկերպս տանտրայցն լի գոլ մօտ 'ի բակին յայն. Վրք ՀՁՆ. աւնիս:

ԲԱԿ. Περιοχή, կամ ὑπεροχή, κύκλος. Circus, orbis, circulus. Գօտի. շրջանակ. ծիր. պատուած. պարունակ: ԲԱԿ ՈՒՆԵԼ, կամ ԲԱԿ ԱՌՆՈՒԼ, կամ ԲԱԿ ԱՐԿԱՆԵԼ. Շուրջ պատել. շրջապատել. *Որ շուրջ զնովաւ բակ առեալ ունէր. Է. Ա. ծէ. 13: *Եւ լոյսն որ շուրջ զնովաւ բակ ունէր. Եզեկ. Ա. 27: *Շուրջ բակ արկանէ և կրթոյ պարիսպ՝ խոհականնութիւն զեփիւթաւ: Վասն շուրջ զիւրեւ բակ ունելոյ մարմնոյն և ծածկելոյ. Փիլ. այլոց. և յլն:

ԲԱԿ. որպէս Բոլոր շրջանակն սկաւառակի, կամ գնդոյ մարմնոյ արեգական. *Ոչ որպէս արեգական բակք, որք 'ի նմա հայելին նկատելով, բոլոր ճառագայթիւքն. Փիլ. ածխ:

ԲԱԿ. Ἅλως, ἅλων. Area, halo, corona, circulus siderum. որ և Նմանութեամբ առի ԿԱԼ. Շողի լուսափիլու, գունագեղեալ, և իբր ծիածանի փոքր պատեալ որպէս զկալ ցորենոյ շուրջ զլուսաւորօք. Ֆռկ. Հարման, հալէբ. Փլտիէր, այ՝ կիւն ազըլը, շափէլը. *Լուսինն 'ի խաւարութէ օդոյ ներկեալ՝ չանայ յիւրմէ զխոնաւութիւնն 'ի բաց պարզել. ուստի մերձեալ խոնաւութեան, և 'ի նա չհասեալ, բակ առեալ ծրանայ շուրջ զնովաւ, որով յայտ առնի անձրևաց նշանակ. Եղնկ: *Ցորժամ շուրջ բակ ունիցի լուսինն յամպոյ. Շիր:

ԲԱԿԱՁԵՒ. ա. մ. Բոլորշի. բոլորաձև. 'ի ձև բակի (ըստ ամենայն նշ.) *Բակաձև նստուցանէն զգլխաւոր կանայն. Ոսկիփոր:

ԲԱԿԱՌԱԲԵՐ. մ. Περιφερή. Շուրջ առեալ պատելով. շուրջանակի. *Բակառաբար պարունակեաց. Պղատ. փիմ: *Ածապարեա օգնականութեամբ նոցա, զի պատեսցի (կամ պարեսցի) բակառաբար պարթէն: խանելոց զնոքա բակառաբար բարբարոսաց. Մագ. Ծ. ՅԽ:

ԲԱԿԱՌԱԿԱՆ. Տ. ԲԱԳԱՁԱՁԱԿԱՆ. որպէս և 'ի յաջորդ բայդ:

ԲԱԿԱՌՆԵՄ, եցի. Ն. Περιλαμβάνω. Complector, comprehendo. Բակ առնուլ. պարփակել. բովանդակել. բովանդակել. Փոսլմփ. *Որ կենդանի առէ, մակաւէլք բակառէ, քան թէ որ զմարդն ». այսինքն 'ի սեռն բազում ինչ փակի քան 'ի տեսակն. Արիստ. ստորոգ: *Որով տարրերն բոլորն բակառեալ բանական և մահկանացու ևր. Մագ. ՅԼ: *Բակձաձական լի բակառականն. որպէս՝ պայր սաելովն, եղական թուովն զբազմօք բակառեաց. Մագ. ԺԵԲ: *Բակառեալք 'ի բանիս ևն. Եւս. ԺԵԲ: *Ծառայք են, որ շուրջ յամենայն կողմանց բակառեալ կան. Ճ. Ա: Զորգիս քրմացն զինքեամբ կացուցանէր՝ բակառեալ բազմութի յոյժ. Կաղանկ:

կամ Բակ առնուլ. որպէս շուրջ պատել. առըն թեր կալ շուրջանակի. Περιΐστημι. Circumdo, cingo, circum sto. և Παρίσταμαι. Assisto. *Իբրև զատաւանայան Թամբր բակ առեալ (կամ բակառեալ) կային և հային: Հրեշտակք 'ի սմա այ շուրջ բակ առեալ (կամ բակառեալ) զԹագաւորաւն. Ոսկ. մթ. և եբր:

Տես և 'ի բառն ԲԱԿ:

ԲԱԿԵՂԱԹ, կամ ԲԱԿԵՂԻԹ, ի. ա. } Գ. Πήρα. Pera, saccus. Պարկ, քսակ, մախաղ. փոքրակ. Խրատպ, Խօրպա, հէզպէկ, հէյպէ. *Եբեր առնն այ ... նկանակս գարեղէնս, և պաղատիտս բակեղաթաւ. (այլ ձ. բակեղեթաւ). Դ. Թգ. Դ. 42: Գրի և ԲԱԿԱՂԵԹ. *Բեղեկ բազմակ բեղուն բակաղեթիւ քեզ նուիրեալ. Մագ. ԺԳ: Իսկ 'ի ՀԻՆ բռ. գրի. *Բակաղթ, շալակ »:

ԲԱԿԼԱՅ, ի, ից. Գ. Κυάμος. Faba. Է ընդեղէն յայտնի. որ և ռմկ. Բախլա, պագլա. *Մարմնոյ մեծութեա՝ բակլայ և ոսպան պարծէին առ հաց կոտաւոյ և կնճիթան. Մխ. առկ: *Բաշխէր բակլայ աղքատաց. Տօնակ: և Հ:

ՄԱՆՐ ԲԱԿԼԱՅ. որպէս Լուպին, ևն. Թուրմուս, մըրըը պագլասը. Θέρμος. Lupinus. Գաղիան: Տես և ՈԼՈՌՆ:

ԲԱՀ, ի, ից. Գ. Ξύστρον. Pala. Թի երկաթի, գործի բրելոյ և պեղելոյ զհող երկրի. Ֆռհ. պէլ, լաքա, Քիւրէկ. *Առեալ Թագաւորին բահ և փայտատ՝ հատանել զգլուխ հանդստարանաց նոցա. Ագաթ: *Բրել ձեռամբ, փայտատօք և բահիւք. Շ. ընդհ: *Վասն բահի յոյժ տրտմէր, որպէս բրեացէ զերկիր. Վրք ՀՑ. Ի:

ԲԱՀՈՒԱՆԴ, ի, ից կամ աց. Գ. Զարդ ինչ կանացի մեծագին կամ ականակապ, որպէս մեհեանդ, կամ քայառմանեակ, և այլ ինչ նման. *Բահուանդս բիւրականս, և վարսակալս վայելչականս. Ագաթ: Ի ՀԻՆ բռ. գրի, *Մեհեանդ. անթանոց, կամ բահուանդ ». որպէս պ. Բէյլին, կամ Բայղէնփ. որ է ոտնակապ, ձեռակապ. զօգ, կապ, ևն:

ԲԱՂ, որ և ՓԱՂ. (լծ. թ. պիլէ.) Մասնիկ նոյնանշան ընդ ձայնիցդ՝ կից, համ, հաղ, շաղ, շար, յար, ևն. ըստ յն. συν, συγ, συλ, συμ, συρ. լտ. cum, con, col, com, cor, ևն. Տես 'ի հետագայ բառս, և ԿՈՂԱԲԱՂ: *Բաղ, (յն) հիւսական. ՀԻՆ բռ: *Աստուած և անուն հաւաքաբանութեան գոլ, որ նշանակէ բաղհաւաքումն. քանզի բաղ՝ յորոց վերայ առարի, բազմութիւն նշանակէ, որպէս մարմակից. Անյ. Կիւրղ. Ի:

ԲԱՂԱԲԱՂԵԼ. Իբր Բաղբաղել, կամ կցկցել. *Մի ինչ պատճառեր, և ընդ այս ընդ այն ինչ բաղաբաղեր. Մանդ. Է. կամ Գ:

ԲԱՂԱԲՈՒՇՏ. Տես ԲԱՂԱՓՈՒՇՏ:

ԲԱՂԱԴԱՍԵԼ. ԲԱՂԱԴԱՍՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՂԴԱՍԵԼ, ևն:

ԲԱՂԱԴՐԱԿԱՆ, ի, աց. ա. Կցեալ. յարադրեալ, եդեալ 'ի վերայ. *Ի վերայ փայտին բաղադրական. Թէոդոր. խչ:

(Իսկ առ յետին քերականս Բաղադրական մասնիկք ասին Զայնք իբր անուանք, որք յարեալ 'ի սկիզբն բառից՝ պէսպիսացուցանեն զնշանակութիւն նոցա, իբրու՝ կէս մի բարդելով:)

ԲԱՂԱԴՐԵՄ, եցի. Ն. Συντίθημι, προστίθημι. Compono, appono. Ի միասին դնել. կցել. յարել. որ և ՇԱՐԱԴՐԵԼ. Ձէկրէտ տնէլ. Քաթմագ, ղիլէ գօմագ. *Որ զնախադասական պայացուցանէն զմակերևութին բաղադրեալ հոգիանևրն և մարմնականաց երգողին. Թէոդոր. խչ: *Բաղադրեսցի անուանցն. (այսինքն յարեսցի ընդ անուանս): Ցուցանէ ստորագեալն յամենայն ձայնս՝ և Ճշմարտեալք ղուամքէ, որքեալք և բաղադրեալք 'ի միասին՝ Ճշմարտիցի՞ն զնմանէ. Անյ. պերիարմ: *Բանականն և մահկանացուն բաղադրեցաւ յենթակայ

ութեն մարդոյն. Պորփ:

ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ. ա. Σύνθεσις. Compositio. Ի միասին դրութի. զօդումն. շարադրութի. յարադրութի. բաղկացութիւն. զանգումն. խառնումն. միաւորութիւն. Ինքիպ. *Բաղադրութի է՝ պարզիցն առ միմեանս դրութի. Անյ. պերիարմ: *Եւ ո՞ զթուեաց բնութի (եցոյց), եթէ ոչ տասնեակքն ըստ մասանցն ամանակի բաղադրութիւնք. Փիլ. ԺՀ. Է: *Սանեղծեր ըղմարդն 'ի սիւղ տէրունեայ՝ բաղադրութեէ 'ի քառանիւթոյ. Գնձ:

ԲԱՂԱՁԱՆ, ի, ից. ա. ('ի բաղ, և զան, իբր Ազն). Συγγενής. Cognatus, proximus, adfinis, cohaerens, concivus. որ և ԲԱՂԱՁԱՆԵԱԼ. որպէս թէ Ազգակից իմն ըստ խմիք, միաբան, ընդակից, յարմար. համազէտ. քաջաձայ բաղարկեցեալ. յերիւրեալ. սոլուգ, պիրիշիք, մուշակ. *Են աղքա այնոցիկ բաղազանք, խառնեալք Է աներևութանիւ: Բաղազան գառնութէ՝ մասամբք վարելով. Պղատ. փիմ: *Երաժշտականն բաղազան է, զի 'ի բանից և 'ի ձայնից և յեզանակաց է, և 'ի փողոց և 'ի քնարից: Բաղազանեալ ասէ զհինգ և զտասն, որ է տասն և հինգ. և թէ տասն երկու հինգ է. և այս որ մինչև 'ի տասն է՝ ո՛չ է բաղազան. այլ որ անտի 'ի վեր չորին՝ թէպէտ չէն յատուկ բաղազան, այլ ասին. Լծ. առնմ:

ԲԱՂԱՁԱՆԱԳՈՅՆ, գունի, ից. ա. Συγγενήστατος. Nimis appositus. Ազգակցագոյն. մերձաւորագոյն. յարմարագոյն. *Բաղազանագոյն իւր, և վայելչական մանուանդ կարծեաց զուսումն նոցունց. Արիոփ. Ծ:

ԲԱՂԱՁԱՆԵՄ, եցի. Ն. Ազգակից իմն կացուցանել. յարել. յարմարել. միաւորել. կցորդել. համեմատել. բաղդատել. *Բաղազանել զթիւ առ այլ թիւ, որպէս զտասն առ հինգ, ասելով, թէ տասն հինգին կրկնապատիկ է. Սահմ. ծէ: Եղն. Քեր: *Զայստրիկ բաղազանէ ընդ միմեանս, և ստարագելոցն բնութե և պատահմամբ՝ համեմատութիւն առնէ բարոյից. Լծ. առոկ: *Ոտն ընդ ոտն բաղազանեալ կապեցաւ (երկուց կապելոցն). Կաղանկ: *Մի ներգործութի յերեսեան (անձինս) եղապէս բաղազանի. Քեր. Քերթ: *Ած 'ի մարմնի բաղազանեալ կերպիւ ծառայի. Զքր. կթ: *Այս իր՝ է կամ չէ, համաստութեամբ բաղազանին, և հակադրութե ըստորոգին. Ոսկէփոր:

ԲԱՂԱՁԱՆՈՒԹԻՒՆ. Գ. Συγγένεια. Cognatio, adfinitas, correlatio. ἀναλογία, analogia. Ազգակցութի. մերձաւորութի. յարաբերութի. ձայնակցութի. համեմատութի. *Որոց բաղազանութիւք են երեք. ներկայն ընդ յառաջին, յարակատարին ընդ գերակատարին, աներոշին ընդ ապառնոյն. Թր. Քեր: *Բաղազանութե հնչմանց, որպէս երաժշտականն: Բաղկանայ երաժշտականն 'ի տարբեր քանակէն, որ ըստ բաղազանութե. Սահմ. ծէ: *Զինչ են բաղազանութիքն. կրկնապատիկն առ կէսն, և կիսոյն առ կրկնապատիկն: Ունի երիս բաղազանութիս. 'ի հերակլեայ առ բազմութի հերակլեանց, և 'ի բազմութէ հերակլեանց առ հերակլէս, և 'ի հերակլեանց առ միմեանս. Անյ. պորփ: *Ցուցից և զիւր գործառնութեցն բաղազանութի. Մագ. ԿԲ: Իսկ ՀԻՆ բռ. մեկնէ. *Բաղազանութի, զուգաւորութի »:

ԲԱՂԱՁԱՆՈՒԹԻՒՆ. Ցածայինս՝ իբր Միաձանականութի. ներդրութի. ներբայար.

տառութիւն անձանց. առանձնութիւն. որպէս Ὁμοουσιότης. Consubstantialitas. ἐμπερίληψις, comprehensio, circuminsessio. *Զբաղադրութիւն ցուցանէ երից ներանձնութեանցն՝ ոչ պատահաբար, այլ՝ գոյացապէս. բաղադրութիւն Հոգւոյ և Որդւոյ 'ի ծոց Հօր լիակատար, և Հօր և Հոգւոյ 'ի ծոց որդւոյ անիմերի, և Որդւոյ և Հօր 'ի ծոց հոգւոյն լրմամբ լիացեալ. Քեր. քերթ.:

ԲԱՂԱԶԱՆՈՒՄՆ, նման. Նոյն ընդ վ. *Երից բաղխոհութեանց առ մի բաղխոհութիւն բաղադրութիւն. Քեր. քերթ.:

ԲԱՂԱԽՈՀԱԿԱՆ. Տ. ԲԱՂԽՈՀԱԿԱՆ. *Բաղախոհական թերևս իցէ եղեալ օրէն. Պղատ. օրէն. ժա.:

ԲԱՂԱԽՈՀԻՄ, եցայ. հ. Συλλογίζομαι. Colligo, ratiocinor. Տրամախոհել. տրամաբանել. քաջ ձեռնարկել. *Տգէտք գոլով այսորիկ՝ ոչ բաղախոհեն. Պղատ. օրէն. Է.:

ԲԱՂԱԽՈՀՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՂԽՈՀՈՒԹԻՒՆ. *Ըստ օրէն բուժողացն 'ի բաղխոհութիւն ուղղապէս բացորոշութեան. Մագ. Լ.:

ԲԱՂԱԽՈՐՀՈՒՐԴ. ա. Միախորհ. որոց խորհուրդ է մի և նոյն. *Զոր օրինակ զթղթոյ վերագիր ոք դրոշմէ, և առաջին գիրն բովանդակեալ արտայայտէ զբաղախորհուրդ թղթոյ բանիցն 'ի ներքս շարագրեալ. Ջահ. կԲ.:

ԲԱՂԱՁԱՅՆ, ի,ից. ա. գ. Σύμφωνος, συνχῶν. Consonans. որ և ասի Ձայնակից. Ձայնորդ. Շարաձայն. Բաղբառակից. Տառ կամ գիր հարկաւ կցելի ընդ ձայնաւոր տառից, զի և ինքն մարթասցի տալ զհւր հնչումն. զի ըստ ինքեան կամ է բոլորովին անձայն. զոր օրինակ բ, գ, դ են. և կամ. կիսաձայն, զ, շ, ս են. հայր. *Այլքն ամենայն (արտաքոյ ձայնաւոր տառից) բաղաձայնք են, բ գ դ զ թ են: Յորժամ յերկուս բաղաձայնս յանդեսցի, որպէս, արց. Թր. քեր: *Ի ձայնաւորաց տառիցն և 'ի բաղաձայնիցն յարմարելով. Շ. քերթ: *Որոշէ զձայնաւորսն 'ի բաղաձայնիցն՝ իբր պատուականս, և պատճառս ձայնից յարմարման. Երզն. քեր: Իսկ յասելն գանձարանի. *Զանբանականն 'ի բաղաձայնս թողով զգիր՝ ողբասցուք զհօրն զվտանգ». իմա զանձայն տառդ ի (մարդ), կամ բ (բանական). կամ այլ ինչ այսպիսի:

ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ, ի, աց. ա. Συμφωνέω. Consonus. Միաձայն. միաբանական. *Գոհանալով 'ի շնորհողէն յաղթութեան բաղաձայնականն հեշտալուր բանիւք. Պիտ.:

ԲԱՂԱՁԱՅՆԱԿԻ. մ. Συμφώνως. Concorditer, convenienter. Ձայնակցաբար. համաձայնութեամբ. *Ժամանակս նոյնպէս և բաղաձայնակի ամսոց և տարեաց 'ի թիւ արկանէ. Փիլ. էլ:

ԲԱՂԱՁԱՅՆԻՄ, եցայ. յ. Συμφωνέω. Consono. Համաձայնիլ. ձայնակից լինել. *Զանազանութեան ձայնիցն և իրացն ըստ պակասութեան ոչ բաղաձայնին միմեանց. Ան. հակաճ.:

ԲԱՂԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ. գ. Συμφωνία. Consonantia, concertus, consensus. Ձայնակցութիւն. միաձայնութիւն. յարմարութիւն. և միաբանութիւն ձայնից արուեստականաց. *Լսող լինել ալերասլի խմոյս բանից, և բաղաձայնութեան խրատու. Յհ. կԲ: *Զօրէն երաժշտական գործւոյ յարմարել առ մի և նոյն բաղաձայնութիւն և հնչակցութիւն կամաց առ բանս, և բանից առ գործս: Յարմարական և նուագաւոր բաղաձայնութիւն կատարէր, և արդարև երաժշտական. Փիլ. էլ. և փէտոխան:

ԲԱՂԱՑՈՂ. Տ. ԲԱՂՑՈՂ. *Բաղայօղ. 'ի պարզն յաւելուլ. Հին բռ.:

ԲԱՂԱՑՔ. այից կամ այց, յիւք. գ. Ὑπαίτιον, αἰτία, πρόφασις, ἀμπλάκημα. Causa, causatio, culpa, imputatio. Կրկնումնք բանից, որ և բաղբաղայք. պատճառանք. սուտ պատճառք. բարուրք. մեղ. մնաս. ստգիւտ. արատ. յանցանք. դէհանէ, մոհանա, վէօխէ, սուչ. *Բաղայս 'ի վերայ դնէին, յելանելն ձեր (ասեն) յաշխարհէն եգիպտացւոց՝ զաշխարհն մեր հարէք պատերազմաւ և կալարուք. Եղիշ. դպ: *Բաղայս առութեան կարկառեալ 'ի վերայ. Ղեւոնդ: *Սկսան դնել բաղայս իմն ճշմարիտ վարդապետութեան երանելոյն. Կողբացի: *Փոքր ինչ և զբաղայսն ունիցին առ նոսա յօգել պատճառս. Պիտ: *Յանդիմանութիւն (խղճի մտաց) ոչինչ սովորեալ ընդունել 'ի պատճառաց 'ի բաղայց: Առանց բաղայց (այսինքն անպատճառ) պարտական է կամաւոր մեղաց: Առանց բաղայից (այսինքն անմեղադրելի) են: Առանց բաղայց և անբիծ երթ գնա. Փիլ. ճ. բան. և լն. ա. 77: *Զամենայն վախս և զբաղայս 'ի բաց 'ի խորհրդոց նորա արտահեալ. Յհ. կԲ:

Եւս և՝ Պատճառ կամ փաստ որպիսի և իցէ. *Փաստաբանականք են, որք 'ի բացատրութեան՝ սակս բաղայց յարդարեսցեն. վասն. յաղագս. Թր. քեր: *Սակս բաղայց, որ է պատճառաց. Երզն. քեր:

ԲԱՂԱՆԱՊԱՆ. Տե՛ս ԲԱՂԱՆԵՊԱՆ. *Արգելոյր զնա բաղանապանն. Հ = Յ. նոյ. ժէ:

ԲԱՂԱՆԱՊԵՏ, ի, աց. գ. Պետ և վերակացու բաղանեաց. բաղնէփէր. համմամճը, չէրմագան. *Եկեալ առ բաղանապետ մի՝ տայր զինքն 'ի մշակութիւն նմա. Ճ. Ա: *Բաղանապետն յաղագս քաղաքական պիտոյից զառվոր ժամուն փոխեաց զկարգն. Փիլ. նխ. Բ:

ԲԱՂԱՆԵՊԱՆ, ի, աց. գ. Բաղանապետ. և Պահապան կամ սպասաւոր բաղանեաց. համմամճը, դէլլաք, նաթըր, թէլլաք, են. *Զտեղի կոչման նորա վկճակին ելից բաղանեպանն. Ճ. Բ:

ԲԱՂԱՆԻՔ, նեաց. գ. Βαλανεῖον, λουτρόν. Balneum. Θερμαί. Thermae. Տեղի լուանալոյ զանձն՝ ջերմ ջրով. ասի և ԼՈՒԱԼԻՔ, և ՋԵՐՄՈՒԿՔ. բաղնիք. համամ, Ըապխանէ, չէրմաղէ. *Ի բաղանիս մըտանէիր». յն. լուացեալ լինէիր. Եղէկ. ԽԴ. 40: *Ի բաղանիս նա ոչ եմուտ. Եւս. պտմ. Է. 23: *Շինեաց զբաղանիսն. Խոր. Բ. 88: *Զդրունս բաղանեաց. Վրք հց. Գ: *Բաղանեօք, և պէսպէս զգեստիւք. ՇԲ. անպ: *Ի բաղանիս և 'ի վարժարանի իւղ յօծումն եղեալ լինի յօգտութիւն. Փիլ. նխ. Բ: *Այսպիսի բաղանեօք մաքրել քոյով ջերմագոյն արեամբ. Մագ. ծԴ: *Ելցէ արտաքս 'ի կորստական բաղանիսն. Շար:

ԲԱՂԱՆՈՒԱՆԻՄ. եցայ. յ. Συνωνομάζομαι. Զոյգ ընդ այլում կոչ անգէն և անդանուանիլ. *Ոչ բաղանուանեցաւ ընդ հասարակն այժմ ազգամ. Նիւս. կազմ:

ԲԱՂԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ. գ. Συνωνυμία. Փաղանունութիւն. անուանակցութիւն, և նըշանակելն զնոյն. *Առաջին, և սկիզբն՝ ըստ բաղանունութեան է ասացեալ, նոցունց 'ի միմեանց ընկուցելոց. Փիլ. էլ:

ԲԱՂԱՆՏ. (լծ. պ. պէլէնտ. փայտ վերին բարաւորի դրան). Տ. ԲՈՒՔ. որ և ըստ Հին բռ. *Աւազակութեան գանիչ»: *Կարիճն գործի ինչ տանջանաց է, նուրբ և երկայն իբրև զբաղանտ, զոր հայերէն քուքն ասեն. զոր ընտրն աւազով և այնու հարկանեն 'ի գան. Կիւրղ. Բգ:

ԲԱՂԱՍԱԿԱՆ, ի, աց. ա. Որ ինչ միանգամայն ասի առ բաղումս, կամ 'ի բաղմաց. զոր օրինակ, փախիցուք են: Երզն. քեր:

ԲԱՂԱՍԱՄՈՆ. Տ. ԲԱԼԱՍԱՆ, և ԲԱՂՍԱՄՈՆ. *Եւղս անոյշս, և զբաղասամոնին աղնուական. Ոսկ. եբր. կամ ա. փիլ. բաղսամոնին: *Բաղասամոն. ապրասամոյ իւղ. Գաղիան:

ԲԱՂԱՍԱՑՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՂՍԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ:

ԲԱՂԱՏՐՈՒԹԻՒՆ. գ. փոխատրութիւն առ միմեանս. կցորդութիւն. *Անորիչ բաղատրութեան զերկաքանչիւրոց զանյայտն ունելով. զբարւոյն ասեմ և զչարի. Գնյ:

ԲԱՂԱՐԿԵՄ, եցի. ն. Συμβάλλω. Confero, congero. Ի մի բերել, արկանել. ձգել. ժողովել. *Զամենայն աշխարհն յինքն բաղարկեալ. Թէոդոր. խչ: *Քոյդ ճոխութիւն, զոր յասախօս բաղարկեալ ունիս. Նանայ. յովԸ:

ԲԱՂԱՐԿՈՑԵՄ, եցի. Նոյն ընդ վ. կամ հանգանակել. օգնել. կր. Ջուղընթանալ. *Որ 'ի գոլն բաղարկոցէ, զինչ էրն գոլ. և որ իրին է մասն. Պորփ: *Բանականն մասն է մարդոյ. քանզի բաղարկոցի 'ի սահման մարդոյ. Ան. պորփ:

ԲԱՂԱՐՋ, ի, ից կամ աց. ոյ, ոց. գ. Ἄζυμος. Azymus, non fermentatus. Անխմոր հաց. խամըրսըզ, համըրսուզ, ֆադըր, կիւմաճ. *Բաղարջ եփեաց նոցա: Բաղարջ ուտիցէք: Ի վերայ պանին բաղարջոյ: Բաղարջով կերիցէ: Առնել զտօն բաղարջոցն. են: *Զոհս և պանս բաղարջաց. Լմ. ող: *Բաղարջն՝ առանց հպարտութէ խորհուրդք հոգւոյ քո՝ յարմարի. Կլիմաք: *Բաղարջն (է) չոր, լոշ (կամ լաւաշ) անխմոր. Վրդն. էլ:

ԲԱՂԱՐՋ. ա. Անխմոր. մայասըզ. *Նըկանս բաղարջս. քանզի ոչ խմորեցաւ: Պանս բաղարջս, և չոթս բաղարջս: Քաքարս բաղարջս: Պան մի բաղարջ, և քաքար մի բաղարջ: Արգու մի ալիւր (կամ ալեր) բաղարջ: Քաքարացն բաղարջաց: Պանից բաղարջոց: Բաղարջ հացիւ. են:

ԲԱՂԱՐՋԱԿԵՐՔ, րաց. գ. Իբր Բաղարջակերութիւն. ժամանակ ուտելոյ հրէից զբաղարջ. տօն բաղարջոց. ըստ յն. բաղարջք. Ἄζυμα. *Եւ էր զատիկն, և բաղարջակերք յետ երկուց աւուրց: Յառաջնում աւուր բաղարջակերաց: Զտօն բաղարջակերացն պահեսջիք. են:

ԲԱՂԱՐՋԸՆԾԱՅ. ա. Անխմոր ընծայեալ՝ մատուցեալ՝ նուիրեալ. *Պանք բաղարջընծայք. Նար. ղԳ:

ԲԱՂԱՓՈՒՇՏ, փշտի. գ. Κύστις. Vesica. որ գրի և Փաղափուշտ, Բաղարուշտ, Փալափուշտ, Փամփուշտ. Ամանն մաշկեայ, յոր հաւաքի մէզ կենդանեաց. խաւուղ, գաւուգ, գուդուր, մէսանէի, սիդան, քիւսթէ եման. *Զբատեսակն ընդ ցնցուղ քաղըրգին 'ի բաղափուշտն ժողովի, և մէզ լինի. Ոսկեփոր: *Խոյլս ունին իբրև զբաղափուշտ մեծ. Մարթին:

ԲԱՂԲԱՂԱՑՔ, այից կամ այց. Տ. ԲԱՂԱՑՔ. *Ամենևին պատճառս և յանցանս և բաղբաղայս ոչ գտանէին զնմանէ. Դան. Զ. 4: *Ի ծննդենէն մինչև 'ի կատարած առանց բաղբաղայից: Բաղբաղայս պատճառելով զաւհամանեալ ժամանա-

կաւն անցանեն։ Զամենեսին ոչ է հաստատուն բաղբաղայիւք հարկանել։ Բանսականաղեօ բաղբաղայս 'ի վերայ դնէ, եթէ անիրաւաբար։ Գեղեցիկ բաղբաղայս 'ի վերայ դնէ. Փիլ. ԺՀ. Է. ԺԷ. Նոր. Ա։ *Գաղտագող բաղբաղայց այպանեաց. Մագ. Ա։

ԲԱՂԲԱՂԱՆՔ, նաց. Նոյն ընդ վ. *Այնուհետև այլ ինձ բարուրս և բաղբաղանս 'ի մէջ բերէին. Նար. Խոյ։ *Որպէս զի ճարտարեսցէ (կամ կարկատեսցէ) 'ի վերայ նորա բաղբաղանս ինչ. Վրք. ոսկ։ *Նաւէր բաղբաղանօք իբրև զքաջանայապետ (այսինքն սուտ անուամբ, կամ պատրուակաւ, պատճառանօք). Մագ. Ա։ *Իբրու չհոգին ամենայն բաղբաղանօք անմեղաքուր ունելով. Պղատ. օրէն. յն. πλημμελεία, յանցանք, սղալանք։

ԲԱՂԲԱՂԵՄ, եցի. Αἰτιάομαι. Causor, criminor. σκήπτω, fingo, praetexo. Կցկցել. կարկատել. ստութիւ յօդել բաղբաղայս, այսինքն պատճառանս վասն իւր, կամ մեղադրանս 'ի վերայ այլոց. պատճառել. մեղադրել. ստգտանել. դէհանէ էթ. Ф+, ... *Ցորժամ մեղիցէ, բաղբաղէ և բարուրս դնէ զմեղութեան, զիւր խոստովանութիւն յեղմանն դնելով իւյ։ Մի ըղձհոյթ բաղբաղէր, այլ ղջօ զբարոզ։ Պատասխանէր վասն ունելով պատճառանն և բաղբաղեն զանպատճառն և զանբաղբաղայն. Փիլ. օրէն։ *Հնարի հնարս, և ցուցանէ ինչ յորովայնի ունել, և բաղբաղել չարչարանս. Խոր. Ա. 31։ *Զայս ինչ և զայն բաղբաղես, և պատճառես զպատճառս մեղաց։ Մի ինչ բաղբաղեսցես, մի ինչ առակախօսեսցես հակառակ քո փրկութեանդ. Ածաբ. Ղեւ։ *Ոչ զաղբատութիւն ունի բաղբաղել. Պիտ։ *Բաղբաղէն 'ի խորհուրդս իւրեանց, կարկատեն զպատճառս. Մագ. ԼԱ. (որ և 'ի Ի. Դ. վարէ իբր պատրուակել կամ թաքուցանել պատճառանօք)։ *Մի բաղբաղեսցէ ասել, թէ 'ի բազմին գագարէ յարձակումն բնութեան. Իմ։ *Բառս ինձ և քննութիւնս ընդդէմ մեծաց ուսոյց բաղբաղել։ Ցամոթ լիցին դոքա, որք արարած բաղբաղեցին (այսինքն յօդեցին) զբանն իւյ. Լմբ. սղ. Ա սաղմ։ *Զամենայն խնդ պատմութիւնս քերթողացն պատճառ կորստեան յիրաւի ոք թերևս բաղբաղեսցէ լինել. այսինքն ամբաստանեսցէ փառիլ. Պիտ։

ԲԱՂԲԱՂՈՒՄՆ, ղման. գ. Բաղբաղեն. բաղայք. բաղբաղայք. *Ոչ դանդաղեցից ասել քեզ զբաղմանցն այսպիսի բաղբաղման. Մագ. Ա։

ԲԱՂԲԱՆԱԿԱՆ, ի, աց. ա. Որ յօդեալն ընդ բանի. հաւաքաբանական. որպէս է շաղկապք, Որպէս, Այսպէս ու... Այլ 'ի գրոց և 'ի մեկնչաց Հին. Թր. շփոթի և ընդ այլ շաղկապս, 'ի յն. ... այլազգ. *Բաղբանականք են, որք առ մակբայս ('ի մակաբայութեան), և առ շաղկապս ('ի հաւաքմունս) բաղադրեն զբաղ առանձնակայքն. Թր. քեր։ *Բաղբանական, այսինքն հաւաքաբանականն. Մեկ. քեր. ... *Բաղբանական է՝ բառ զոր բազել բան, և 'ի վեր եկեալ առաջ հաստատութիւն. Նչ. քեր։ *Բաղբանական կարէ լինել և տարակուսական. ... ուրեմն և արդեօք. Երզն. քեր։

ԲԱՂԲԱՆՈՒԹԻՒՆ. Տ. ՀԱՒԱՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ. *Անբաժնահական բաղբանութիւն. Մագ. ԺԶ։

ԲԱՂԲԱՆՋԵԼ. չ. Որպէս Բարբանջել, բաղձալ, և պատապէշել. *Նմանեալ ... և ... կանանց, որք նստին 'ի փողոցի, և բաղբանջեն լեզուաւ իւրեանց. Ոսկ։

ԲԱՂԲԱՆՋՈՒՄՆ, ջման. } Տ. ԲԱՂԲԱՆՋԱՆՔ, նաց. գ. } ՋԱՂԱՆՔ, և ԲԱՐԲԱՋԱՆՔ. *Ըստ հեթանոսական առասպելաբան բաղբանջմանց. Անան. Եկ։ *Զամենայն զոր խօսեսցիս՝ իբրև բաղբանջանս արհամարհեսցեն. Սեբեր. Ժ։

ԲԱՂԲԱՋԵԼ. Տ. ԳԱՂԳԱՋԵԼ. և ԲԱՐԲԱՋԵԼ։

ԲԱՂԲԱՔ, կամ ԲԱՂԲԱԿ. Տ. ՋՐԱԲԱՔ. որ և ըստ ոմանց՝ Սամիթ. և ըստ այլոց Տուղտ։ Բժշկրն։

ԲԱՂԴ. Տ. ԲԱԽՏ։

ԲԱՂԴԱՍԵՄ, եցի. ն. Συντάσσω, ττω. Compono, constituo, construo, ordino. Շարադասել, շարակարգել զբան. և Բաղադրել. գրի և ԲԱՂԱԴԱՍԵԼ. *Յորժամ զխնդիրն (նախադրութիւն) յաւելեալ՝ առասցես, 'ի վերայ սորա, բաղդասեսցես։ Իսկ ոմանք բաղադասեալ են, այսինքն 'ի շարն և 'ի դաս և 'ի կարգ բանիցն պիտանացու առ 'ի լրումն. Երզն. քեր։

ԲԱՂԴԱՍՈՒԹԻՒՆ. գ. Σύνταξις. Constructio, ordo. որ և ԲԱՂԱԴԱՍՈՒԹԻՒՆ. Շարադասութիւն. առընթեր դասաւորութիւն. շարակարգութիւն բառից և բանից ըստ կանոնաց քերականութեան. շարադրութիւն. բաղադրութիւն. յարադրութիւն։ և Շարագրութիւն. ճառ. գիրք. *Բառ է մասն դուզնաքեայ՝ ըստ բաղդասութեան բանի. Թր. քեր։ *Բառ 'ի շարադրութեան բանի՝ մասն է շարադասութեան. Նչ. քեր։ *Նախադրութիւն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի՝ ըստ բարդութեան (զոր օրինակ ընդունել), և 'ի բաղդասութեան (զոր օրինակ, ընդ նմա). Թր. և Երզն. քեր. ուր գրի և ԲԱՂԱԴԱՍՈՒԹԻՒՆ։ *Զկեանս վարուց զըստ մովսեսի իմաստութեան արանց յառաջնում բաղդասութեան (այսինքն մատենագրութեան մերում) զեկուցեալ. Փիլ. Ժ. բան։

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ, ի, աց. ա. Συγκριτικός. Comparativus. Համեմատական. ընտրողական. զուգակշիռ. *Զ բաղդատականին և փորձ համեմատութեան տեսանել. Պիտ։ *Բաղդատական տրոհմամբ զիւրաքանչիւրոցն յատուկ ըստ տեսակի. Մագ. ՃԿ։ *Բաղդատական բողոք վարկայ. Մագ. ԿԲ։

Ըստ քերականաց՝ նշանակ բաղդատութեան յածանցս, կամ Ածանցական մասնիկ յաւելուածս 'ի համեմատութիւն. Խմ. Բէգֆէլ. *Բաղդատական է, որ հաստատութիւն (յն. համազատութիւն) ունի եղ առ մունմանաւոր, որգոն, գաւիթ առաւելագոյն քան զաւուզ. և կամ միոյ առ բազումս այլասեռս, որպիսի, գաւիթ առաւելագոյն քան զզեթացիսն։ Եւ բաղդատականացն գաղափարք են երկու (ըստ յն. երեք, τερος, ιων, σων. լտ. մի, ior.) գոյն, հիւար, արագագոյն, յամրագոյն. և գին, որգոն, սաստկագին, ուժգին. Թր. քեր։

Որպէս և բաղդատական մակբայք ըստ յն. մակբայք բաղդատութեան. *Բաղդատականն. (ց) առաւել, նուազ. Թր. քեր։

Մերթ Բաղդատող ըստ յն. ոճոյ, որպէս Որոշիչ բաղդատութեամբ. Διακριτικός. Disgregans. *Զայն՝ որ բաղդատական է աչաց՝ սպիտակ, և զներհակ նորին սեաւ. Պղատ. տիմ։ *Գոյն իմ, աչաց տեսողութեան բաղդատական. Շ. ԽՏ Եղան։

ԲԱՂԴԱՏԵՄ, եցի. ն. Συγκρίνω. Comparo, confero. Դատել կշռութեամբ, կշռել ընդ այլում, համեմատել, և Նմանեցուցանել իւիք. ... , Բէնդիւ էթմէք, դէհէլիք. *Զորս ընդ ումն ումեք բաղդատել պարտ և արժան է. Փիլ. փեսախն։ *Բաղդատեսցէ զմերձակայ կին առ այլ ինչ մեծ։ Բաղդատել կամ զբարի ընդ բարւոյ յարարկանելով, և կամ զվատթար ընդ վատթարս, և կամ զմեծամեծս ընդ փոքունս, և կամ զփոքունս ընդ մեծամեծս. Պիտ։ *Փոքր՝ աղեքսանդրի և գործեհի պատերազմն առ արտաշիսին բաղդատեալ. Խոր. Բ. 12։ *Մի բաղդատեր զյոյժ 'ի միմեանց տարբերեալսն. Ցն. ԻՃ. Երխ։ *Այ (օրինակ է) արեգակն, կամ այլ ինչ 'ի յէից՝ զորս բաղդատեսցէ. Լմբ. պտրգ։ *Ո՞ւմ բաղդատեցից զմեռեալս մոզ։ Ցառագաստ փեսայի զկեանս իւր բաղդատեաց. Երզն. մտթ։

ԲԱՂԴԱՏԵԼ. Որպէս ըստ համաձայնութեան հին յունին Συγκρίνω. Comisceo, coagmento. Հաւաքել, խառնել, միաւորել. *Ընդհանուր սպիտակն գոյն է արտադատող աչաց, և ընդհանուր սեաւն է բաղդատող աչաց. Սահմ. Ա։ *Արուեստիւ գոյն է բաղդատող, սրատեսողաց եմ ես խնդրող. Կրոց. ոփ։ *Որք անհանդչելի ձայնիւ առ միմեանս բաղդատելով զերեքսրբեանն գրուատեն զնշխանական ըղփառս. Մաշտ։

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ. գ. Σύγκρισις. Comparatio. Համեմատութիւն. կշռութիւն. Բէնդիւ. *Կատարեալ էր յազգի իւրում, ըստ բաղդատութեան՝ ըստ այնց ժամանակաց բարի էր։ Որ մաքուր մօք յած հայրն, զզան մանաւանդ զիւրեանց տկարութիւնս առ բաղդատութիւն նորայն մեծութեան. Փիլ. Ֆմասփն։ *Համազուգել հաւասարապէս բաղդատութեամբ. Պիտ։ *Փոքր ինչ բաղդատութիւն առնել ընդ այլոց ազգաց. Լմբ. պտրգ։ *Այսօրէնկ ըստ մարմնոյ, որ յոյժ փոքունք և նուաղք են առ բաղդատութիւն հոգևորական տուգանացն. Գր. Հր։

Նոյն է և ձև Ճարտասանական. *Բաղդատութիւն է յարադրական բան՝ ընդդէմ հարցաքննեալ՝ միշտ առ մեծագոյնսն։ Եւ բաղդատութիւն՝ կրկին. ներբողեան է, կամ պարսաւ. Պիտ։

Մերթ՝ լոկ Նմանութիւն. օրինակ. առակ. Բէնզէր. *Բաղդատութեան աչաց զեղբարսն համեմատեսցուք. ունին գոլով մեր, մի, զի չեմք ալին, սասասցուք, եթէ չեմք 'ի մարմնոյ անտի. Լմբ. ոփ։ *Բաղդատութեամբս ուսուցանէ, թէ իւրաքանչիւր ոք հանդերձեալ է հաշիւ տալ գործոց իւրոց. Երզն. մտթ։

ԲԱՂԴԱՑՈՒԹԻՒՆ. Ըստ հին հելլենաբանութեան, Σύγκρισις, σύγκριμα. Concretio, compago, congregatio, coagulum. Բաղկացութիւն. խառնուրդ. զօդ. միաբանութիւն. *Ըստ ամենայն մասին մարդկային բաղդատութեան, ըստ որում բնաւորեցաւ իւրաքանչիւր ոք գործել. Նիւս. կազմ։ *Բանականք անմարմնոցն բաղդատութեամբ 'ի քում յարկ կացեալ միան։ Պարակցելով և յօդնահոյլ խմբիցն բաղդատութեացն անլռելի փառաւորութեամբ. Անան. Եկ։

ԲԱՂԵԶԵՐՈՒԹԻՒՆ. } գ. Συνορισμός, συμ-
ԲԱՂԵԶԵՐՈՒՄՆ, րման. } πέρασμα, σύγκλεισις, συγκλεισμός. Conclusio, conterminatio. Եզրակացութիւն հաւաքաբանութեան. Նէթիճէ, ...։ *Զինչ է բաղեզերութիւն և գտանել զառաջարկութիւն։ Եզրակացութիւն, այսինքն բաղեզերումն ասացաւ, և վասն տարբերեցելոցն առ 'ի սոյնիկեանց բաղհաւաքմանց, որք զբաղեզերումն զնոյն առնէին միում յառաջարկութեանց. որգոն, եթէ ոմն է

տիւ. այլ սուրբ տիւ է, ապա ուրեմն տիւ է. Անյ. աւետ.։

ԲԱՂԵՂՆ, ղան. և որպէս ռմկ. ԲԱՂԵՂ. գ. Κισσός, κιττός. Hedera. ἑλξίνη, σμῖλαξ. taxus, convolvulus. Պատատուկ, պատատլիճ բոյս, որ բաղի կամ կցի և պատէ զոնկոյք. է որ ճիւղաւոր անկոց և բուսոյ իբր գաղձ, և է որ անճիւղ. ԱՐՄՏ., ՆԵԳԼԻՆ, ԵՌՈՒԱԿՈՆ. և ԼԱՏԻՆ ՆԵՐԵՍԷ։ Գաղիան. *Բաղեղն ճիւղաւոր պատի զծառոյն. այլ ձ. պատատլիճ. Նեղոս. *Իբր սիրական համբուրիւք ողջունի զմիմեամբք պատատի, որպէս զձիթենեօքն բաղեղն. Փիլ. լին. *Բաղեղ՝ խոտ է, և ոսր կոչի՝ յերկնայ, և ծաղիկն զեռ զվլան է. աղէկն կապոյտ ծաղիկն է. Բժշկրն.

ԲԱՂԵՄ, եցի. ն. որ և ՓԱՂԵԼ. Կցել. կցորդել. շարակարգել. միաւորել. զուգել. յարել. պատել. (լծ. ռմկ. ...) *Բաղբանական է՝ բաղում բաղեալ բան. Նչ. ...։ *Բաղաձայնք՝ բաղելով ընդ նոսա ձայնաւոր գիր, ձայն բացակատարեն. Մխ. ատ. 'ի Հին բռ. գրի. *Բաղել, պատել»։

ԲԱՂԷՋՈՒԹԻՒՆ. Բառ անստոյգ. իմա կամ ընթերցիր Բախածութիւն, անմտութի. և կամ իբր Համախոհութիւն եզականի ընդ անձին իւրում և ընդ սրտի. *Ապա թէ ասիցէ ծառայն չար 'ի բաղէջութէ իւրում, տէր իմ յամէ. Ջ+ր. ԻԲ : (որպէս և արաբ. ...՝ է մտածումն):

ԲԱՂԻՍՏՐ, կմ ԲԱԼԻՍՏՐ, տրի, կմ լստեր. գ. ('ի յն. ...) Βαλλίστρα, βελόστασις. Ballista. Բաբան. մեքենայ պատերազմական 'ի ձգել նետս և նիզակս և քարինս. նետաձիգ աշտարակ. մանգղիոն. ... *Կանգնեցին մանգղիոնս և մենքենայս, և բալիստր՝ նետաձիգ աշտարակս. Ա. Մ. Զ. 51 : Տես և ՆԵՏԱԿԱԼ։

Եւ Նետ. (որպէս յն. ...) Βολή. *Բալիստր խոցոտիչ լեզուք նոցա. Եփր. ծն. 8 : Իսկ Մեկնիչն երեմ. Մխ. գոչ՝ ասէ, *Բաղիստր՝ սուր է եռասայր, զոր ունին զինուորք 'ի մորակս երիվարաց»։

ԲԱՂԽԵԼ. Տ. ԲԱԽԵԼ. *Ոչ դրանն բաղխել ոչինչ ազդիցէ : Իբր ընդ վիմեղէն լերին պնդութէ բաղխեցեալ ցնդին. Նար. ԿԲ. Խ ՂԷ։

ԲԱՂԽՈՀԱԿԱՆ, ի, աց. ա. Συμβουλευτικός. Deliberativus, suasorius, vel dissuasorius. Միախորհ. համախոհական, որպէս տրամախոհական ընդ անձին, և ընդ այլս. *Բաղխոհական նախուսոն օրինակյլս. Պղտ. օրէն. Ա : *Բաղխոհական խորհուրդ 'ի մէջ առեալ : Բաղխոհական հնարիւք տրամախորհէր. Մագ. ԺԲ. ԼԱ :

Որպէս Հանդէս Ճարտասանական՝ խորհրդատու միախորհ ունկնդրաց ընտրել զբարին, և խորշել 'ի չարէն. *Ճարտասանականն՝ սեռ գոլով յերիս բաժանի 'ի տեսակս. յատենականն, 'ի բաղխոհականն, 'ի կացրդականն : Բաղխոհականն վասն ապառնոյ ժամանակին ունի զգոյութիւն. վասն զի յորժամ ոք ումեք խորհրդակից գոյ, վասն հանդերձելոյն խորհի. Սահմ. ԺԲ :

ԲԱՂԽՈՀԻՄ, եցայ. հ. Συμβουλεύω. Consulo, censeo. Քաջ խորհել խորհրդակցութբ ընդ այլս՝ կամ ընդ անձին. *Զվայելչականն այժմիկ ծնեալ քաղաքավարութեանս կազմել՝ բաղխոհելով և վերաւորն ուղղելով հրահանգաւ հմտութեց. Պղտ. օրէն. ԺԲ :

ԲԱՂԽՈՀՈՒԹԻՒՆ. գ. Συμβουλή, συμβουλία. Consilium, consultatio, suasio. որ և ԲԱՂԱԽՈՀՈՒԹԻՒՆ. խորհրդակցութի ընդ այլում կամ ընդ անձին. տրամախոհութի. խորհուրդ. մտածութիւն. հանճար. *Եկեալ եմ ընդ ձեզ զօրավիգն, թելադրել զբաղխոհութի ձեր. Ջ+ր. ԻԲ : *Բաղխոհութիս առնել նոքօք 'ի դուզնաքեայ կենցաղումս : Այսո զդուշութիւն քեզ բաղխոհութբ ստուգեսցի : Կարծիս կասկածանաց եղեալ մեզ զդուշական բաղխոհութե մերոց լռեսցաց : Աղաչեմք զտէր միալ քեզ այսպիսի տրամախոհական բաղխոհութե. Մագ :

Ձեռնարկութիւն 'ի խորհրդատուութե կամ համոզական. որպէս հանդէս բաղխոհական. *Բաղխոհութիւնս եռ գոլով երիս յինքեան երևեցուցանէ ենթակս : Արդ բաղխոհութի է որ ապացուցական է, և է որ տրամաբանական, և է որ իմաստական : Ապացուցական բաղխոհութիւն միշտ է և յարաժամ : Տրամաբանական բաղխոհութի երբեմն ճշմարտէ, երբեմն ստէ. իսկ իմաստականքն (այսինքն իմաստակականքն) սուտ. Քեր. ԺԷԲ :

ԲԱՂԿԱԿԻՑ, կցի, ցաց. ա. Ի միասին բաղկացեալ. տնկակից. ընդակից. կցորդ. միաբան. *Ցանկութի ազդոյ յաղթահարիչ բնութե մարմնոյս, այն զի բաղկակից է նորին : Զողջումն և ամօթն բաղկակից են միմեանց : Օրէնք հաստատեցին բնաւոր գիտութբն՝ բաղկակից և յոյժ համեմատ ճշմարիտ օրինացն. Լմբ. ող:

ԲԱՂԿԱԿՑԻՄ, եցայ. ձ. Բաղկակից լինել. կցորդիլ. զուգիլ. զուգընթանալ. *Մարմնոյս աչս, և լոյս արեգական յորժամ ընդ միմեանս բաղկակցին, ապա զմեզ զգալի լուսոյս ընդունակ առնեն : Երկուցս պարտ է բաղկակցել. Լմբ. ող:

ԲԱՂԿԱՆԱՄ, ացայ. չ. ('ի բաղ, և կայանալ.) Συνίσταμαι. Consisto, consto. Զօդիլ. բաղադրիլ. շարակայիլ. և հաստիլ. գոյանալ. կալ. լինել. *Մասանցն ոչ գոլով և ոչ բոլորն կարող գոլ բաղկանալ : Ի չորից տարերցդ բաղկացեալ գոյ մարմին : Ոսոսկրական քանակիւն բաղկանայ. Սահմ. ... : *Բոլորն 'ի մասանց բաղկանայ, և զբաղկացեալն 'ի մասանց քակտէ ապականութիւն. Յհ. իմ. Երև : *Բաղկանալ յոգւոյ և 'ի մարմնոյ, կամ 'ի չնչոյ և 'ի մարմնոյ : Ոչ 'ի ժամանակի եղև աշխարհ, այլ 'ի ձեռն աշխարհի բաղկացաւ ժամանակ : Աշխարհօղին կեանք 'ի խաւարէ և 'ի լուսոյ բաղկանան. Փիլ. ... : *Բաղկանայ սա 'ի խորհրդոց բարկութե : Տրամութի բաղկանայ 'ի վրէպ լինելոյ ըղձից մարմնոյն. Նեղոս. *Թեթև պարզութի հիւթիւ բաղկացեալ. Նար. խոս. *Յօրմէ հետէ միանգամ 'ի լինելումն մարդկայինս բաղկացաւ ազն. Պիտ :

Կամ Ենթակայանալ. հաստատիլ. կայանալ. 'ի միասին կալ. *Ընդհանրականապէս զայս առնուլ՝ ոչ բաղկասցի բանն. Անյ. պորփ. *Ընդհանուր սախոսկն ոչ կարէ 'ի ձեռն բաղկանալ : Իմաստասիրութի ոչ եթէ վասն այսորիկ ոչ կարէ բաղկանալ, զի ընդհանուր գիտութի է. Սահմ. Ա : *Ներհակքն ոչ կարեն համանգամայն 'ի միում (ենթակայի), և 'ի նոյն ժամանակի բաղկանալ : (Ապականութի) ոչ կարէր 'ի միասին ընդ գոլոյն բաղկանալ. Յհ. իմ. Երև : *Բաղկացեալ բնակեաց 'ի սմա, և բնակէ և բնակեսցէ յաւիտեան. Ագաթ. ... :

ԲԱՂԿԱՊԵԼ. Տ. ՇԱՂԿԱՊԵԼ. *Գրոհն զբանս բաղկապելով. Եփր. ... :

ԲԱՂԿԱՑԱԲԱՐ. մ. Συστατικῶς. Constitutive. Իբրև բաղկացուցիչ. կացուցիչ. *Տարբերութին բաղկացաբար և բաժանաբար առեալ գոյ. Անյ. պորփ :

ԲԱՂԿԱՑԱԿԱՆ, ի, աց. ա. Συστατικός. Constitutivus. Բաղկացուցիչ. բաղկացուցանօղ. կացուցիչ. *Տարբերութիք ասին բաղկացականք տեսակացն. Պորփ : *Բաժանականք են ընդդիմակայքն. որգոն. բանականն և անբանն. իսկ բաղկացականքն են նոյնք, այլ ընդ միմեամբքն առնլով. որպէս բանականն և մահկանացուն : Կենդանոյն բաղկացականք են գոյացութիւն, ներշնչաւորն և զգայականն. Են. Անյ. պորփ : Իսկ Յհ. իմ. Երև. յասելն զբնաւորական կրից. *Են բաղկացականք գոյացութե». իմա, կամ ամբողջացուցիչ մասունք, կմ բաղկացուք, որք կան միշտ առընթեր, որպէս ընդաբոյսք :

ԲԱՂԿԱՑԵԼԻ. ա. Իբր Բաղկացական, կամ բաղկացեալ. *Ըստ պղատոնի չորս են բաղկացելիքն. բանական անմահ, բանական մահկանացու. անբան մահկանացու, անբան անմահ. իսկ արիստոտել զանբան անմահն ոչ ընդունի, այլ երիս բաղկացելիս. Անյ. պորփ :

ԲԱՂԿԱՑՈՒ. ա. Որ կայ 'ի միասին. առընթերակայ. աջակից. ուստի ԲԱՂԿԱՑՈՒ ԼԻՆԵԼ. Συμπαρίσταμαι. Adsto, juvo. *Սուրբ հրեշտակք հրաւիրեն զմեզ յաղօթս, և բաղկացուք լինին մեզ, ուրախանալով 'ի նմին և աղօթելով. Նեղոս :

ԲԱՂԿԱՑՈՒԹԻՒՆ. գ. Σύστασις, σύστημα. Constitutio, systema, coagmentatio, compages. Բաղկանալն. բաղադրութի. կազմութիւն. գոյաւորութի. հաստատած. կազմած. *Աշխարհ է բաղկացութիւն յերկնէ և յերկրէ. Արիստ. Ա : *Այս իսկ բաղկացութիս ամենայն երկրի. Պղտ. տիմ : *Արհեստ է բաղկացութիւն, այսինքն գումարութիւն յարադրութե. Սահմ. ԺԲ : *Յինքեանց ինքեանք լուծեալ քակտեսցին, և 'ի բաց հոսեսցի բաղկացութի նոցա. Ոսկ. գծ : *Բաղկացութի մարմնաձև՝ մահկանացուացն բաղկացութի : Ամենայն ժամանակ՝ աւուրց և գիշերաց է բաղկացութի. Փիլ. այլաբ : *Ի չորից զբոլոր բաղկացութիս առեն լինել : Մակաւսար(?) բոլոր բաղկացութե գոյից. Մագ. Ն. ԿԲ : *Մի և նոյն մարմին է ամենայն մարդկան՝ 'ի միոյ զանկուածոյ ունելով զբաղկացութի. Նիւս. Բնութ :

Եւ 'ի միասին կալն. յարադրութիւն. մերձադրութի. *Ի միասին բաղկացութե. Մագ. Է : *Զխմանալի ներգործութի հոգւոյն բաղկացութբ մարմնական ընթացից երևելի առնէ. Լմբ. ող:

Եւ Դեգերմունք հրահանգաց. կրթութի. *(Անսանձ ձի) ամենայն բաղկացութե անտեղական : Ծանիր ծանօթագոյնդ ծայրագոյն բաղկացութե. Մագ. Ա. ԼԱ :

ԲԱՂԿԱՑՈՒՄՆ, ցման. Նոյն ընդ վ. Σύστασις. *Ոչ ըստ հասարակաց բնութե մարմնոյ եղև բաղկացումն (կամ բաղկացութին) տեառն. քանզի այն ինչ կառուցեալ մարմնով գոյր յղացեալ. Բրս. ծն : *Զխորդ այսորիկ են չարութեցն բաղկացումն, գոյութի 'ի գոլոյն առի. իսկ գոլն ածութի իրեք՝ բաղկացումն ենթադրելի բոլոր գոյ. Մագ. Է. ԻԲ :

ԲԱՂԿԱՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Συνίστημι, συνιστάνω. Constituo, compono, creo. συνάπτω, coapto, jungo. Տալ բաղկանալ. կացուցանել զինչ համօրէն. գոյացուցանել. առնել. կազմել. յօրինել. հաստել.

հաստատել. բաղադրել. զուգայարմարել. *Որ զխմանալի աշխարհն բաղկացոյց. Մագ. թղթ. ԷԿ: *Սկիզբն առնէ բաղկացուցանել զայս զգալի և զնիւթական աշխարհս. Զոր. ԿԲ: *Բաղկացոյց զգոյութի շնչոյս հրաշալեա. Նար. ՀԷ: *Զգոյս յոշնչէ բաղկացուցեր. Ճ. Ա: *Կարգաւորէր յետ աշխարհիս լինելութե զոտեսական կենցաղն բաղկացուցանել. Փիլ. ԼԻ: *Սաոյգ և բաժշաականն բանիւ միայն պիտանացեալ բաղկացուցանէ զինքն. Սահմ. ԺԷ: *ԺԱ, Բ, Գ, Գ. որոց չարադրութեն բաղկացուցանէ զատան. Ցհ. ԻՏ. ապ:

ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ, ցչի. ա. Συνίστασα. Constituens. Որ բաղկացուցանէ. բաղկացական. *Որ զայս ամենայն՝ բաղկեցուցիչն՝ բաղկացոյց, բարի էր: Զոսկին բաղկացոյց այսպէս. Պղատ. փիլ: *Բոլոր բարեաց բաղկացուցիչ. Մագ. Է: *Ոչ ունի բաղկացուցիչ զանազանուս: Ամենայն սահմանն 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութեց լինի. Անյ. պորփ:

ԲԱՂՀԱՒԱՔԱԿԱՆ, ի, աց. ա. Իոր հաւաքաբանական: Անյ. վերլծ. արխոփ:

ԲԱՂՀԱՒԱՔՈՒՄՆ, քման. գ. Συλλογισμός. ('ի λόγος, և συλλέγω.) Syllogismus. συλλογή, collectio. Համահաւաքումն բանից. իբր հաւաքաբանութիւն և համաբարդութի. *Աստուստ և անունն հաւաքաբանութե գտաւ, որ նշանակէ բաղհաւաքումն: Նոյնպէս հաւաքակցութիւն, այսինքն բաղհաւաքումն, սակս բազում ինչ միանգամայն հաւաքաբանելոյ: Որ 'ի նուազէն զմեծն յարգարէ, մակածութի ասի. իսկ որք 'ի մեծէն զնուազն հաւաստացուցանեն, այնոքիկ բաղհաւաքումն ասին. Անյ. վերլծ. արխոփ: (Ուր և ձախաղոյն բանք լինին ընդգէմ բաղհաւաքմանցն սոփեստից:)

ԲԱՂՀԻՒՍԱԿԱՆ, ի, աց. ա. Ընդմիմեանս կամ 'ի մի հիւսիչ. շարամանող. իսկ ըստ որում անուն շաղկապի առ մեզ, ասի ըստ հն. ՇՈԿԱՄՈՆ. *Են ըստ ինքեան պարզք և անշարադիրք. իսկ բաղհիւսական եղանակաւ ընդ ածութեանն մակադրեալք՝ շարունակք ասին. Քեր. թրքն: *կամ ներգործութե, կամ մտածութե. որդ կամս այս՝ կամ բաղհիւսական է, կմ տարալուծական: Եւ եթէ բաղհիւսական է որպէս գոլ, թէ՝ և ներգործութեամբ և մտածութե, ասէ սահմանդ. Անյ. պորփ:

ԲԱՂՀԻՒՍԵՄ. եցի. ն. Հիւսել 'ի մի. *Ղարունակաւն բաղհիւսեսցուք քանակաւ. Քեր. թրքն.

ԲԱՂՁԱԼԻ, լւոյ, լեաց. ա. ('ի բաղ և իղձ.) ἐπιθυμητός, ἱμερτός. Desiderabilis, optandus. Ըղձալի յոյժ. տենչալի. ցանկալի. փափագելի. բաղձելի, արղասանաճոգ. *Հեշտ և բաղձալի թուեսցին բանքս իմ 'ի լսելիս մեծամեծաց և փոքունց. Եղիշ. Է: *Միացուցանեն զանձինս ընդ յոյսն բաղձալի. Փարպ: *Բացականայն գոս բաղձալի: Բաղձալի բերկրութի, կմ երանութի, աչերս, անուն, վայրք, բնակարան, օթոց, ևն. Նար:

Մերձ Բաղձացող. *Զի որ բարւոյն է բաղձալի, առ 'ի բարւոյն նախանձ չարժի. Ը. Աղ:

ԲԱՂՁԱԼԻ. և } ա. Լի կամ լցեալ
ԲԱՂՁԱԼԻՑ. } բաղձանօք. մեծափափագ. անձկալից. *Գնալ զկնի աղքատութե, և կեալ բաղձալի կարօտանօք. Փարպ: *Սուրբ սիրով, շնորհալից յուսով, և բաղձալից գթով առ կամսն մյ. Ցճն. ԻԳ: *Վերապատուեսցք զորս բաղձալից. Գնչ:

ԲԱՂՁԱԿԱՆ, ի, աց. ա. Բաղձալի ինչ. ցանկալի. *Հասանել 'ի բաղձականն. Փիլ. Ժ. բան:

ԲԱՂՁԱՄ, կամ } ացայ, ձա. Ն. Ὀρέ-
ԲԱՂՁԱՆԱՄ. } γω, ὀρέγομαι, ἐφίημι. Desidero, appeto, cupio, և այլն. Ըղձալ կմ ըղձանալ ամենայնիւ. տենչալ. ցանկալ. ցանկանալ. փափագել. անձկալ. ձկտիլ. ձգիլ. բերիլ. յօժարիլ իբր 'ի բնէ. արղոպլամագ, հաղբօղըշմեք, մուրատ եթիշմեք. *Բաղձայր փափագանօք: Բաղձան լնուլ զփափագումն. Պիտ: *Հուրոչ յինքնաստատ յօժարմտութե բաղձայ բորբոքիլ. Նար. ՂԲ: *Ոչ բարւոք է գոլ միայնում, քանզի բաղձայ կերպարանին: Որ յուսայն, բաղձացեալ է միշտ բարւոյն: Ոչ իմիք բաղձանալ առաւել քան զգօյութեն: Ցորժամ ոչ է 'ի միջի, բաղձանայցէ հասանել նմա: Էին տեսման բաղձացի. Փիլ: *Որում չքաւոր աղքատ բաղձանաս (կամ բաղձաս) և ցանկաս. Մանդ. Բ: *Բաղձացայք 'ի վերայ անուան երանելւոյս. Ոսկ. 'ի Թէկղ: *Մեծարել բաղձացան. Ցհ. ԻՏ. ապ: *Եթէ բաղձայցէ. Ը. ԺՏ լաբ:

Ն. Կամիլ 'ի սրտէ. խնդրել կարօտանօք. *Ամենեցուն զկեալն կամիս, և զփրկութիւնն բաղձաս. Նար. ԼԲ: *Զմխատարութ բաղձայ, և ոչ զօգտակարսն. Խոսր: *Լնուլ մեզ զկենաց պատճառն, զոր 'ի սկզբանէ բաղձայաք. Ը. Բարձր:

ԲԱՂՁԱՆՔ, նաց. գ. Ἵμερος, ὄρεξις. Desiderium, cupiditas, appetentia. Ուժգին ըղձանք. իղձ. բերումն ըղձից. ձկտումն սրտի առ ցանկալին. սէր. տենչ. յօժարութիւն. կամք. քեֆ, խաթըր. արզու, մուրատ, հավէս, հաւէս, դոյս. *Խմաստասիրութեն բաղձանօք բախեալք: Վասն հասարակութե բաղձանաց (այսինքն սիրոյ հասարակաց). Փիլ: *Զմահուն բաղձանօք հայցեն հանգիստ: Ի գեղոյն պատրեցաւ բաղձանս: Ընդունել մեծաւ բաղձանօք: Մեծափափագ բաղձանաց արժանի: Ի բաղձանս փափագանաց ձգէ: Իղձք բաղձանաց: Ախորժակք բաղձանաց: Բաղձանք խորհակակերութե, կամ ագահութեան. Պիտ: *Լնուլ զբաղձանս: Բաղձանօք մաղթել: Սրտից բաղձանօք: Ի բաղձանաց սրտի, ևն. Նար: *Իու ես իմ սրտիս բաղձանս. Խոսր. (տպ. բաղձանք:)

ԲԱՂՁԱՑՈՒՑԱՆԵԼ. ն. Տալ բաղձալ. շարժել զբաղձանս կամ 'ի բաղձանս. *Անապատ գոլով զիղձն բաղձայուցանէ. Վանակ. յոբ: *Զիղձ հաւատոց նոցա բաղձացուցանէ. Երզն. Մտթ:

ԲԱՂՁՆՈՒԼ. Տ. ԲԱՂՁԱԼ. *Զխարգ բաղձնուլ ոք երբէք կարասցէ. Սարգ. ԺԴ:

ԲԱՂՁՈՂ. Իբր Բաղձացող. *Բարւոյն բաղձող բնութեամբ է մարդս բանական. Ոսկիփոր:

ԲԱՂՁՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՂՁԱՆՔ. *Ախումն մոլեգնութեան անհնար է կատարած առնուլ 'ի ձեռն միոյ ուրուք բաղձութեց. Փիլ. Ժ. բան:

ԲԱՂՁՈՒՄՆ, ձման. գ. Ὄρεξις. Բաղձալն. բաղձութիւն. բաղձանք. ըղձումն. իղձք. փափագումն. յօժարութի. ցանկութի. բերումն ցանկութե. *Ախտական մտածութեցն է բաղձումն այս. Մագ. ԻԵ: *Ցանհապելի յուսոյն զբաղձումն առաջի դնէր՝ էական բնութեն լինել հաւատար. Ճ. Գ: *Որ յաղթեաց բաղձման, պարտեաց զախտս. Նեղոս: *Եւ այն սիրով բաղձմամբ սրտի, որով հոգին արբեալ մայրի. Ցճ. որդի:

ԲԱՂՁՔ, ձից. Տ. ԲԱՂՁԱՆՔ, և ԻՂՁ. *Զքոց բաղձից ցածուսցէ: Զորս միշտ բաղձիւք խոկացաւ. Պիտ:

ԲԱՂՄԱՏ, ի, ից կմ աց. ա. ('ի բաղ, և մատչել). Συναπτικός. Colligans, copulativus. Մերձակից, սահմանակից, կցորդական, անուն աննկատարական շաղկապի. *Բաղմատք են որ գոյութե ոչ յայտնեն, այլ ոճ իմն (յն. հետևանս) նշանակեն. թէ, զի թէ, թէպէտ, զի թէպէտ. Թր. թէր: *Բաղմատդ լսի ժողով մտա: Տարբաղմատն ընդդէմ է բաղմատին. Երզն. թէր: *Մեր փիլիսոփայն այսպէս ասէ. բաղմատ է, որ ոչ 'ի նմին հաւաստի՝ ճանապարհին, այլ՝ զճանապարհաւն. Նչ. թէր:

ԲԱՂՅՕԴ. ի, ից. ա. Σύναρθρος. Articulo copulatus. որ և ԲԱՂԱՅՕԴ. (վերապակաւ՝ Բաղօդ). Յօդակից. կից ընդ յօդիցս՝ ս, դ, ն. կամ ըստ յն. որ ընդունի 'ի սկիզբն զյօդքս, ὁ, ἡ, τό. *Ի դերանունս են որ անբաղյօդք են, և են որ բաղյօդք: Անբաղյօդք, որդոն, ես. (զի 'ի յն. ոչ լինի՝ ես). և բաղյօդք, որզան, իմս. Թր. թէր: Ըստ Հին բա. *Բաղայօդ. 'ի պարզն յաւելուլ,,:

ԲԱՂՆԱՊԱՆ. } Տես ԲԱՂԱՆԷՊԱՆ.
ԲԱՂՆԵՊԱՆ. } *Տեսեալ բաղնապան և յոյժ զարհուրեր: Բաղնապանին այն զարթուցեալ, ևն. Գնչ: *Բաղնեպանն, գարպապանն. Ոսկիփոր:

ԲԱՂՇՏԱԿ. գ. Տակ այսինքն արմատ Բաղչ անուն ջրային բուսոյ. պ. վաթխ. վանձ, ոճ. թ. ակէր՝ էկէր օթու. լտ. աֆօրուս. իտ. աֆօրօ, ճլաթէօլօ, ճալանձէ. *Բաղշտակն, որ է վանձն, որ է ակէրն. ինքն սպիտակ և թեթև տակ է, և ջրին մէջն կբուսնի. լաւն այն է՝ որ 'ի լի լինի, և անուշահոտ լինի: Ոճն՝ որ է ակէրն, որ է վանձն, որ հայերէն բաղշտակ ասի. Բժշկր:

ԲԱՂՍԱՄՈՆ. մոնի, ի. գ. որ և ԲԱՂԱՍԱՄՈՆ, ԲԱՂԱՍԱՄՈՍ. Տ. ԲԱԼԱՍԱՆ. պալսամ. *Կիտրոնն, և տապս բալսամոնն, և դարնիկն. Ագաթ: *Իւղս անոյշս ցանիցէ, և զբաղսամոնին այնուական. Ոսկ. ա. փիլ. Է: *Սքինոս, բաղսամոս, նարդեա (իւրև ծառք). Վէզոր. Ղ:

ԲԱՂՍՏՈՐԱԴՐՈՒԹԻՒՆ. գ. Συγκατάθεσις. Adsensio, approbatio. Ստորադութի. հաւանութի. յանձնառութիւն. *Բաղստորադրութեն (շաղկապք). այո, հայոյ. Թր. թէր. Տես և ՑԱՆՁՆԱՌԱԿԱՆ: (գտանի գրեալ և ԲԱՂԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ՝ նոյնին մտօք, իբր ձայնակցութի). իսկ 'ի Հին բա. *Բաղստորադրութի է խոստովանումն,,:

ԲԱՂՐՋՈՒԿ. գ. Նոյն ընդ Մոլոշ. Μαλάχη. Malva. Էղէմ կիւմէճի, խաթմըթօղ. Բէնիրէ: Բժշկր:

ԲԱՂՕԴ. Տ. ԲԱՂՅՕԴ:

ԲԱՃԿՈՆ, ի, աց. գ. Ἱμάτιον, χιτών. Vestis, tunica. Սովորաբար 'ի մեզ կարծի լինել ագանելի ներքին 'ի վերայ շապկի. Էէլէկ, ղըֆթան. բայց 'ի գիրս վարք որպէս պատմուճան, պարեգօտ. հանդերձ որ 'ի ներքոյ վերարկուի. և վերարկու. և որ և է ձորձ՝ մանաւանդ կտաւի և աղնիւ. հագուստ, լաթ, կապայ. (լծ. ընդ արտ. պէչէաւն, պէշմաք. հանդերձ 'ի բեհեզոյ այսինքն 'ի կտաւոյ.) *Եթէ գրաւեսցես զբաճկոն ընկերիքոյ: Առին իւրաքանչիւր զբաճկոն իւր, և եդին 'ի ներքոյ նորա: Որ հանէ զբաճկոն յաւուր ցրտոյ: Որ հանէ 'ի քէն զբաճկոն քո, մի արգելուր 'ի նմանէ զշապիկս. ևն: *Եւ յօժարեսցի առ 'ի տեկնոջէ անտի առանց բաճկոնի. Եփր. ծն: *Որք մտով այծեաւ, կամ բաճկոնաւ շատանան. Լաստ. Ղ:

ԲԱՃԿՈՆԱԿ, ի, աց. գ. Ἱματίδιον. Vesticula, palliolum. Հանդերձիկ. բաճկոնիկ, լաթիկ. *Այր ողորմած պահէ զգանձ իւր. իսկ որ անպիտանն է, զբաճկոնակն իւր դիցէ 'ի վերայ նորա։ Ոչ որ յափշտակեացն՝ դնէ ևս 'ի վերայ զբաճկոնակն իւր. Եւագր. ծդ. իէ։ *Տարածեաց զբաճկոնակն իւր 'ի վերայ հօրն. Վրդն. ծն։ *Ունէր զբաճկոնակ ինչ, կամ ստրմնալակ, ուր զմուրանսն ժողովէր. Տօնակ։

ԲԱՄ. շ. Թարմատար. Բա. Թէ. զի. որ. քի. (այլ 'ի յն. չէք շաղկապ ինչ). *Ասացի, բամ ցրեցից զնոսա։ Արտաքեցի առ ձեզ... բամ դարձարուք իւրաքանչիւր 'ի ճանապարհէ իւրմէ չարէ։ Ասացի՝ բամ աչօ մերժեցայ։ Ասացեր, բամ յորում աւուր կարդացից առ քեզ, մի երկիցես. Օր. լբ. 26։ Երեմ. ժէ. 15։ Ողբ. գ. 54. 57։ *Ասացեր՝ բամ մինչև յաւիտեան կայցես. Ոսկ. եւ։ *Ասացեր դու ինձ, բամ Թոյլ տուր։ Ասացի բամ ևն. Եփր. եւ։ ա. կոր։ Եզն. դպ. ը. 12։

ԲԱՄԱ. Ըստ երբ. թարգ. այսինքն Բեմ. սեղան կռոցից բարձր։ ա. Թգ. ի. 19։ Տես և ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ, ԲԱՐՁՈՒՆՔ։

ԲԱՄԲ, ի, ից. ա. գ. պ. ար. պամ, դէմ. Հաստ թելն քնարի խոշորաձայն. և Ձայն խոշոր. *Զորրորդ (ձայն) է բամբն, հով և դէջ ըստ բնութեան ջրոյն. Զորրորդ լարն, որ է պամն, բնութիւն ջրոյ և մաղասոյ՝ ցուրտ և դէջ. Երզն. քեր։ *Ճանաչէ 'ի տարորոշ բազմութէ աղեաց, թէ որ է սուր, և որ է բութ, որ զիլ, և որ բամբ. Ոսկ. փիլ։

ԲԱՄԲԱԿ, ի, աց. գ. Ξύλον, πάμβαξ. Gossypium (լծ. դողակ. իսկ Βόμβυξ. Bombyx. Տ. ՇԵՐԱՄ). գրի և ԲԱՆԲԱԿ. ռմկ. բամպակ. բամպուգ, բամուգ. պ. քէնդէ, քէնդէ. ար. գուտուն, կամ գուտն. իտ. քօթթօնէ, պօմպաճէ, պօմպաճօ. Բոյս բուսեալ 'ի դողակէ ելեալ՝ սպիտակ, փափուկ, նիւթ հանդերձից 'ի ջերմ պահել զմարմինս. *Փայտախարան, լինի 'ի նմա բամբակ ամբաւ. Խոր. ա։ *Գտանին 'ի նոսա նաւթ և աղ, ապրիշում և բամբակ. Կողբացի։ *Ոչ զբամբակ ընդ ասր խառնել. Երզն. մթ։ *Որպէս ակն արական է, կարող էակ և ունիմք սովոր առնել զբամբակ (կամ զբանբակ) արական. Մագ. և Երզն. քեր։

ԲԱՄԲԱԿԵՆԻ, նւոյ, նեաց. գ. Բոյս կամ տունկ բամբակի. *Առոգանէին երկրագործք զբամբակենիսն, և միմեանց պատուիրէին զգուշանալ, զի մի զծառսն կոխեսցեն զբամբակենիսն... պատասխանեալ բամբակենիսին, ևն. Մխ. առակ. ծժ։

ԲԱՄԲԱՍ, ի. գ. (գրի և ԲԱՆԲԱՍ). յոր. մէ Բամբասանք. նոյն ընդ նմա. և և Ցանցանք բամբասելի. *Եւ ըղորմութիւնսն ընդ բամբասին, ըղքրթմնջիւն ընդ շոգմոլին. Ցմ. որդի։ *Ի սակս պատնկութեն էր բամբասն. Ոսկ. մ. ա. 13. յն. ἔγκλημα, crimen. *Եւ առին բանբաս (կամ բանբասանս) 'ի մովսէս և յածծ. Վրդն. Թւոց։

ԲԱՄԲԱՍԱԿԱՆ, ի, աց. ա. Προφασιστικός. Occasionalis, ad accusandum, vel exousandum. Որ ինչ 'ի մէջ բերէ զբամբասանս. բամբասաւոր. մեղադրական. ստգտանական. *Դիցէ 'ի վերայ պատճառս բամբասականս բանից. Օր. իբ. 14։

ԲԱՄԲԱՍԱՆՔ, նաց. ն. ('ի բամ, բա, կամ բամբ, և ասել). Καταλαλία, ἀντιλογία, λοιδορία, μέμψις, ψόγος. Oblocutio, obtrectatio, detractio, delatio, convitium, incusatio, vituperium, reprehensio. Մեղադրութիւն, պարսաւ, չարախօսութիւն, տրտունջ, լուտանք, Թշնամանք՝ եթէ 'ի դէմս ուրուք, և եթէ 'ի բացակայութեան նորա յանդիման այլոց. գռ. ղէմ, գօյղէպ. *Ի բամբասանաց խնայեցէ՛ք զլեզու։ Լուայ ես զբամբասանս բազմաց։ Անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ փորձութիւն, և բամբասանս՝ վասն բամբասանաց որդւոյն Իսրայէլի։ Մի չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. ևն։ *Առանց յիշատակի բամբասանաց թողուլ. Խոր. ա. 2։ *Բամբասանս ապիրատս յօդէլին։ Բանս ապիրատս բամբասանաց 'ի վերայ յօդէլին. Յհ. կբ։ *Ընբանութեան բամբասանօք։ Բամբասանաց քարաձգութեան։ Սոգոանք բիւր բամբասանաց. Նար։ *Որ ոչն մեղանչէ, ոչ է ընդ բամբասանօք։ Ընդ բամբասանօք է սատանայ. Նիւս. կամ Ան. ամ չար։ *Ընդ բամբասանօք է մեղք. Շ. ամ չար։

ԲԱՄԲԱՍԱՍԷՐ, սիրի, րաց. ա. Սիրող զբամբասանս. չարախօս. պարսաւագիր. մեղադրական. *Ոչ բամբասասէր մըտօք, այլ Ճշմարտութբ զեւս իւրեանց առեալ. Եղիշ. ե։ *Որ ոչն երկնչէին, և բամբասասէրքն էին. Վրք հց. ծլ։ *Խաբեցան բամբասասէրքն՝ ծուխ փոխանակ աւրեգականի ունել. Կլիմաք։ *Մեղադիր և բամբասասէր բանիւք 'ի վերայ ձեր ծանրացեալ. Ոսկ. յհ. ա. 10։

ԲԱՄԲԱՍԱՒՈՐ, ի, աց. Տ. ԲԱՄԲԱՍԱԿԱՆ. *Առեցեալ զսա՝ դնէ 'ի վերայ պատճառս բամբասաւոր բանից. Օր. իբ. 17։ *Բամբասաւորօք զլինելն նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. Նար. իէ։

ԲԱՄԲԱՍԵՄ, եցի. ն. Καταλαλέω, κακολογέω, λοιδορέω, μέμφομαι, ψογέω, διαγογγύζω. Obloquor, attracto, maledico, convito, probro afficio, quaeror, ևն. գրի 'ի յետնոց և ԲԱՆԲԱՍԵԼ. Զարիս խօսել զայլմէ. ընդ վայր հարկանել, պարսաւել, ամբաստանել. տրտնջել. քրթմնջել. մեղ դնել. լուտալ. Թշնամանել. դիմախօսել. գռ. գօյղէպ սէօյլէմէք, դէմ գօլ էթմէք. *Բամբասեցին Մարիամ և Ահարոն զՄովսէս։ Բամբասեաց ժողովուրդն զԱծ, և զՄովսէս։ Զի բամբասէք զիս։ Զոր բանսարկուքն բամբասէին։ Որ բամբասէ զհայր կամ զմայր։ Բամբասել զՃանապարհն առաջի բազմութեն։ Որ բամբասեալ, և ոչ փոխարէն բամբասէր. ևն։ Կմ Առաքեալ լռեսցէ զերկիրն, և եկեալ բամբասեցին զնմանէ առ ժողովրդեանն. Թուոց. ծդ. 36։ *Զունիմք իշխանութիւն բամբասել զիշխանս. Եղիշ. ե։ *Ոչ զնոսա գովէ, այլ զասս բամբասէ. Մխ. երեմ։ *Զի մի դարձեալ բամբասիցիմք յայդ, որպէս հրէայքն. Խոսր։ *Սախալիս 'ի սիրոյ, և ոչ բամբասիս։ Ոչ բամբասիս 'ի շնորհաց։ Ցիրաւի բամբասելոցս։ Բամբասեցելոյս ընդ բեթսայիդայ։ Իբրև զՈրս բամբասողս։ Ոչնչից հոլով, բամբասելի բերք. Նար։ *Ոչ ոք ասէ զՃշմարիտն զմէնջ իբրև զբամբասողս (կմ զբանբասողս) մեր. Վրք հց. ե։ *Զանսփաութենն սխա բամբասէ. Երզն. մթ։

ԲԱՄԲԱՍՈՂԱԿԱՆ. Տ. ԲԱՄԲԱՍԱԿԱՆ. *Չէ ինչ պարտ սակս այսորիկ 'ի սոսա բամբասողական նետս ձգել. Լմբ. պտրգ։

ԲԱՄԲԱՍՈՂՈՒԹԻՒՆ. } Λοιδορία,
ԲԱՄԲԱՍՈՒԹԻՒՆ. գ. } ἔγκλημα. Convitium, accusatio. Բամբասողն լինել, և Բամբասանք. լուտանք. *Զինչ է բամբասողութիւն. ամենայն բան կամօք անպատուութեան ասացեալ՝ բամբասանք են, թէպէտ նոյն ինքն բանն կարծիցի ոչ լինել Թշնամանօք. Բրս. հց։ *Եթէ չար է չնութիւն, հաւասար (չար) առնէ և բամբասողութիւն. Մանդ. ժ։ *Ոչ եթէ զանձն ազատէ 'ի բամբասութենէ, այլ զնոսա կամի առնել յուղղութիւն. Ոսկ. մ. բ. 17։

ԲԱՄԲԻՇՆ, բշան. և } Βασίλισσα,
ԲԱՄԲԻՇ, բշի. գ. } βασίλεια, βασιλίς. Regina, imperatrix. Թագուհի. դշխոյ. տիկնաց տիկին. կին Թագաւորի, մայր ազգայորդւոյ, որպէս և մեծի իշխանի. Վէլիէթ, խաթուն, Վալիտէ սուլթան. *Մի Թագ դնել, և մի զբամբիշն զմայր որդւոյն լինել։ Տոմիրիս բամբիշն մասսագետաց սպան զկիւրոս. Եւս. քր։ *Պատրեաց երբեմն բոզն այն և զբամբշուհին իսկ զերդրայքն. Ոսկ. մ. գ. 14։ *Առնուլ զարքայս 'ի կնութիւն. որպէս զի բամբշամբն զոր առնու, առցէ և զԹագաւորութիւն սաղմանի. Եփր. բգ։ *Եսթեր եղև բամբիշ 'ի տեղի վաշթեայ. Մծբ. գ։ *Գլանեալ զփայտ խաչին՝ բամբիշ հեղինէին. Գնձ։ *Կին նորին, որում բամբիշն կոչէին։ Որ և ստանայ 'ի բամբշանէն։ Առաքեալ էր զմայրն՝ զբամբիշն վասպուրականի առ զօրավարն բուխայ. Ասող. գ. 3։ դ. 4։

Նմանութբ ասի. *Զատ (զաչս) ած՝ բամբիշն այլոց երևեցոյց (զգայութեց), 'ի վերայ եդեալ ամենեցուն։ Իւրաքանչիւր յառաքինութեցն բամբիշն Ճշմարտութիւն է. Փիլ. իմաստ. և այլուր։

ԲԱՄԲԻՌՆ, բռան. գ. Ազգ նուագարանի (Թերևս որպէս Թմբուկ, կամ սնդուռ. կամ Ծնծղայ մեծ, և փոքր, որպէս զիլ, չալփառ, ևն.) Տես և ԲԱՆԴԻՌՆ. *Ի նուագս բամբռան։ Որք բամբռամբն երգէին. Խոր. ա. 5. 23. (լա. Թրգ. cymbalum. որ է ըստ յն. κύμβαλον.) *Բարբացուցական՝ բամբռան բառաչի բարբանութեց. Նար. ղբ։

ԲԱՄԲՈՑ, ի. գ. Բառ անյայտ, իբր Ամմոնիական. Ἀμμωνίακον. Ammoniacum, succus, vel gummi ferulae in Libya. (Թուի Գաւառական, որով լինի բախել զխմն կամ զնուագարան)։ Ուստի

ԽՈՒՆԿ Ի ԲԱՄԲՈՑԷ կամ Ի ԲԱՆԲՈՑԷ կոչի 'ի բառս Գաղիանոսի խիժն ծորեալ 'ի գաւազանաձև տնկոց 'ի լիբիա։

ԲԱՄԲՌԱՍԱՑ. գ. Որ նուագէ բամբռաւ. *Ո՞ւր բամբռասացքն գովեստին. Դր. փղ. յէէմ։

ԲԱՑ. շ. Երբեմն Թարգմանի, որպէս Բա. բամ. թէ. զի. որ. քի. *Եւ ասացին, և ասեն, բայ հուր ինչ մեզ անկցի ոչ գտաք։ Զի ասէր, բայ բազմաց 'ի ձենջ են բնականք առ մեզ։ Ասաց անձն իմ, բայ բաժին իմ է նա։ Եւ ասացէք, բայ ընդէր. ա. Պ. ա. 20։ ծբ. 24։ Ողբ. գ. 24։ Մաղ. բ. 14։ (ուր չէք շաղկապ ըստ յն. այլ միայն բայդ՝ ասել)։ *Ի յայնժմիկ, զի ասաց բայ նոր, զառաջինն հնացոյց։ Ահաւանիկ դարձաւ ասաց նա, բայ գուցէ մեռանիցի. Եփր. օրէն։

Երբեմն 'ի նշանակ հաստատութեն. որպէս Արդարև, արդարև. իբր. գոգցես. արդեօք. Թերևս. անշուշտ. ռմկ. դա, դէ. ևն. *Բերոսոս բայ ասէ յառաջնում մատենին։ Եւ գրով բայ ասէ զքաջութիւն գրոշմէր. Եւս. քր. ա։ *Այսօր ընդ իս եղիցիս ասէ յադէն դրախտին. բայ զինչ աւելցես արդեօք. 'ի խաչ ելեալ և բևեռեալ ես, և զդրախտն խոստանաս. Ոսկ. եւ։ *Գրեաց... զի բայ Թերևս յանդիմանեսցին, և եկեսցեն 'ի խոնարհութի հեզութե. Եփր. ա. կոր։ *Զի մի յոլովագոյն բայ կըշ-

առնք բարձցէ զնա: Ապարատաննեալ բայ յաղագս բազմորդութեան: Հրաման տայր բայ նմին: Արդ եթէ կամիք, բայ կարող եմ ես զնա ձեզ ցուցանել. Պիտ:

Եւ իբր զձայն յունական, ճէա, ճէէ. այսինքն աստ, աստ. * Ո՞ր լիցեն (սահմանք ապարանից). և նորա զնիզակն ցցեալ. բայ, յայամ վայրի. Պիտ:

ԲԱՅ, ի. ից. գ. Ῥῆμα. Verbum. Ըստ քերականաց՝ Մասն բանի յայտարար գործողութեան. փիլ. * Բայ է բառ անհոլով ընդունական ժամանակաց, դիմաց, և թուոց, որ ներգործութիւն կամ կիր յարկացուցանէ. Թր. քեր: * Բայ է, որ առնչանակէ ամանակ. Պերիարմ: * Եւ է բայ՝ ըստ բանիս մեկնութեան, որ է ասութիւն մեր զգործոց մերոց. զոր ասեմք, թէ զայս ինչ գործեցի, կամ գործեմ, կամ գործեցին. Մագ. քեր. (որ է ասել, թէ ձայնս բայ կամ բա՝ է արմատ բառից Բառ, բան, այսինքն ասութիւն. ըստ. և վէպ. որպէս և յն. էբօ, և ֆաօ, ասեմ. լտ. ֆօրի, ասել. իտ. բառօլա, խօսք:) * Սառոյդ բայ է ներկայն. իսկ անցեալն և ապառնին՝ հոլովմունք առդաման. Երզն. քեր: * Զներկայն անուանէ բայ, իսկ զանցեալն և զապառնին ոչ բայ, այլ՝ հոլով բայի: Իւրաքանչիւր ոք 'ի բայից նշանակէ իմն. Անյ. պերիարմ:

ԲԱՅ. Լայնաբար՝ որ և է մասն բանի. բառ. ձայն ինչ նշանակական. լօղէթ. Λέξις. Vocabulum. * Զայս ունողաց զօրութիւն 'ի վերայ այս անուանց և բայից. Կիւրղ. գանձ: * Այս բայ՝ Ով, ըստ երկուց տարբաղաց լսի: Վճռողք և բարլին համգոյն բայք են միմեանց: Քննութիւն բայից ուսոյց: Սակս բայից և բառից քննութիւն. Լմբ. սղ. և սփ: * Արհամարհել բաժանելով (զէակս) տասն ստորոգութեանցն բայիւք. Գր. տղ. Յոբ: * Սուրբ բայ՝ կարճ է 'ի մերս բարբառ: Գիտեմք, զի յայսր բայէ հրաժարէք. Ժղ. համ.:

ԲԱՅ. Ըստ համաձայնութեան յունին Ῥῆμα, որ է ասութիւն. որպէս Բան, խօսք, բարբառ մարդկեղէն՝ 'ի նիւթական բառակց յօդեալ. * Փանաքիմաց բայիւք՝ մերոյ փոքրութեան գովասանութիւն հատուցուք. Անյաղթ. բարձր: * Մի, որպէս մեք իմանամք և ասեմք փանաքիմաց բայիւք մերովք. Սարգ. ա. պ. ը: * Որ ինչ միանգամ ասէ նա, ոչ բայք են, այլ՝ գործք. զորս աչօք յառաջ քան զականջս գասախին. Փիլ. ծ. բան:

ԲԱՅ. ա. Լոկ ասութեամբ յօդեալ, կցկցեալ, Թարգմանար, ընդվայր բարբառեալ, զբոսական. * Ի բայ բանից և անաճ իմն յաղագս հայկայ և նմանեացն կաճկալէ. Խոր. ա. 21:

ԲԱՅ, ի, ից. գ. Φωλεός, φωλία. Lustrum, latibulum, cubile. որ և ԲԱՅՈՅ. ամկ. եաբոյ, կամ բուն. Որջ կենդանեաց՝ մանաւանդ որջոց յասուրս ձմերայնոյ. որպէս պաց, այսինքն գիրապ, և պահք, յորժամ առանձնացեալ մնան իբր թմրեալ և անսուաղ զաւուրս բազումս. գօտիք, եաղի, ին, եանագ, և մւնէ. ծինէ. (այսինքն քառասունք պահելի.) * Առիւծ դադեաց 'ի յանտառին, և գիշախանձ արջն 'ի բայի. Ը. Եղեն:

ԲԱՅԱԾԱԿԱՆ, ի, աց. ա. Ῥηματικός. Verbalis. Ածանցեալ 'ի բայէ (բառ կամ անուն). * Բայածական է, որ յիմբայէ ածանցեալ է. հիւար, սիրուն, իմաստուն, մարթուն. Թր. քեր. (յն. սիրիչ. ճշմարիտ):

ԲԱՅԱՆԱՄ, ացայ, ացեալ. չ. } Φωλέω,
ԲԱՅԵՄ, կմ ԲԱՅԻՄ, յեցեալ. } φωλέυω. Lateo in lustro, cubo. μένω, maneo. Ի բայ կամ 'ի բայոց մտանել կենդանեաց. որջանալ. Թաքչել. բոյնել, բոհել. եօ-նջափա՝ ինփէ օնարմագ, սօքին օյնագ, չինէյէ կիրմէք. * Բայանան օձք ընդ հողով. և որջքն խորեանց են 'ի սորս և 'ի սոյզս երկրի. Փիլ. լին. ա. 36: * Բայացեալքն՝ եթէ գազանք, և եթէ թռչունք: Ուր բնակեալ բայանայր զօրավարն տաճկաց՝ զօրհասական արջոյ բերելով նմանութիւն. Արծր. բ. 7: * Ազգք ազգք առնետաց 'ի ձմերանի բայեցեալ անշարժ կայ. Կոչ. ժզ:

ԲԱՅՈՅ, ի, աց. Տ. ԲԱՅ. որպէս Որջ կենդանեաց. ամկ. որջոտ բուն. * Ազգմունք բնականք, և արջոյ յառաջագոյն քան զձմեռն 'ի բայոց մտանելոյ. Եղնիկ:

ԲԱՅՑ. շ. (որպէս թէ 'ի բաց առեալ, կամ բաց 'ի բանէ ասաի.) Πλήν, ἔμπας, ἔμπης, ὅμως δέ. Tamen, verum, nihilominus, autem. Սակայն. այլ սակայն. այլ. իսկ. յայսր ամի վերայ. համայն. դեռ, դեռ ևս. լաքին, էմմա, անճագ, ֆագաթ. * Ցամենայն ծառոց ուտելով կերիջես, բայց 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի ուտիցէք: Անձեյուցից զքեզ յոյժ. բայց դու զուխտ իմ պահեսցես: Սահակաւ կոչեսցի քեզ զաւակ. բայց զորդի աղախնոյդ արարից յազգ մեծ: Ե՛րթ, բայց ըզգոյշ լինիջիր: Ասէ, ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ, և չոգաւ յայգին: Առաջաւ, բայց ես ասեմ ձեզ: Այր մի 'ի հազարաց գտի, բայց կին ամենևին ոչ. ևն: * Դուք անձնապաշտուք լինիք, բայց մեք ամենեքեան կորնչիմք. Փարպ: * Ինքեան ինչ հակառակ և վնասակար չէ, բայց ընկերին. Եղնիկ: * Ոչ եթէ 'ի մինն միայն մեղանչեն կմ յերկուս, բայց և 'ի բոլոր օրինագրութիւնս իւրեանց. Մագ. ա:

Եւ որպէս՝ Բայց միայն. բայց եթէ. եթէ ոչ. Ἀλλά, πλήν, εἰ μή. Nisi, praeterquam, tantum. հազա. եա, անճագ, ֆագաթ, իլլա. * Իմ ոչ էր լուեալ, բայց այսօր: (Ոչ ոք), բայց քաղէբ: (Ոչ ինչ առից), բայց որչափ կերան մանկունք: Նշան մի տացի նմա, բայց նշանն յովնանու: Ոչինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ. ևն: * Ոչ մի ինչ ելս գտանել կարող եմք, բայց բողոքել թագաւորին. Փարպ: * Վախճանելոյն առնել՝ երթիցես առ հարս քո՝ զինչ այլ ինչ է, բայց այլ կեանս յանգիման կացուցանէ. Փիլ. լին:

ԲԱՅՑ 'Ի. նխ. Տ. ԲԱՅ 'Ի. Πλήν. Praeter. * Բայց յինէն այլ ած քեզ մի լիցի. Եղնիկ: * Ոչ ոք գիտաց՝ բայց 'ի նոցանէ յերկոցունցն. Ագ. անփ: * Զ իմրդ ներհակք միաբանեսցին, բայց 'ի տարերց. Սրկ. հանգ: * Ոչ զերիւար՝ բայց 'ի սանձանց, և ոչ զինչս և զմեծութիւն առանց խելաց կարող ոք է արդելուլ. Ոսկիփոր:

ԲԱՅՑ ԱՐԴ. շ. կրկին. Այլ արդ. և արդ. հիմա. էյ, փէնտի. * Բայց արդ մեռան հաւատք, յոյս, սէր. ևն: * Բայց արդ յայսմ հետէ այսպէս կամք են. Փարպ: * Բայց արդ՝ որպէս երբեմն, նոյնպէս և յայսմ. Նար:

ԲԱՅՑ ԵԹԷ. շ. Εἰ μή. Nisi. Բայց միայն. եթէ ոչ. բայց. եա, ֆագաթ, անճագ, մէկէր. * Ոչ իմիք աղգեսցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս: Ոչ է մարդարէ անարգ, բայց եթէ 'ի գաւառի իւրում. և այլն:

Այլ է և կրկին շաղկապ. էմմա, էյէր. * Բայց՝ եթէ նեղ ինչ էր ինձ, զայդչափ ու կի այսր զի՞ բերէիր. Փարպ:

ԲԱՅՑ ՄԻԱՅՆ. շ. Նոյն ընդ վ. Εἰ μή. Nisi. Բայց եթէ. եթէ ոչ, այլ միայն. * Ոչ այրեաց, բայց միայն զաստուր: Չիք փրկութիւն, բայց միայն (այնմ) առ որ ձգէ արքայ զոսկի գաւազանն: Ոչ զոք եթող, բայց միայն զպետրոս: Ոչինչ եգիտ, բայց միայն տերեւ: Մի ինչ այնպիսի պահեսցես՝ բայց միայն զգուշանալ. ևն:

կամ Միայն թէ. Μόνον. Tantum. * Բայց միայն զորդեակդ իմ մի դարձուցանիցես անդր: Բայց միայն լո՛ւր ձայնի իմում. ևն:

ԲԱՅՑ ՄԻԱՅՆ 'Ի. նխ. Տ. ԲԱՅ 'Ի. Πλήν. Praeter, excepto. * Բայց միայն 'ի գաւազանէ աստն յուդայ. գ. թգ. ժբ. 20: * Բայց միայն յերկուց փնդացն և 'ի կարմիր կոչէ. Խոր. բ. 44: * Բայց միայն յայսց կառաց. Եղնիկ: * Սա (նիւթն սուզին) ոչինչ է արդեօք, բայց միայն 'ի բանէ (մտաց). Պղատ. փիմ:

ԲԱՅՑ ՍԱԿԱՅՆ. շ. կրկին. Տ. ԲԱՅՑ. ՍԱԿԱՅՆ. Πλήν. Verumtamen, caeterum. վէ լաքին. * Բայց սակայն ած փրկեսցէ զգլուխ թշնամեաց մերոց. Սղ. կէ. 22: * Բայց սակայն երդեսցէ բանս, որքան զօրեսցէ. Նար. կաս: * Եւ և նա ընդ առաջ, բայց սակայն ոչ կարաց ունել զդէմ նորա. Ագաթ: * Արդ թէպէտև ածեալ զմտաւ, բայց սակայն չկարէին հանդուրժել. Փարպ:

ԲԱՆ, ի, ից. գ. Λόγος, ῥῆμα. Verbum, oratio, sermo. խօսք. ասացուած. զրոյց. կարգաւոր. չարք բառից բերանով բարբառեալ յայտնիչ իմաստից մտաց, կամ 'ի գիր անցուցեալ. սեպհական է մարդոյ, այլ նմանութ կամ առաւելաւմբ 'ի դէպ գայ և հրեշտակաց, և այլ գլխովլին. խօսք. սէօզ, քէլիմէ, լօֆզ, լօղէթ, լօգըրթ. * Ո՛ւնկնդիր բանից իմոց: Խօսեցաւ զամենայն բանս զայսոսիկ: Խիստ թուեցաւ բանն: Տէր տացէ զբան: Բանիւք և արդեամբք: Բանիւ և գործով: Բանք բերանոյ: Բանք մարդկան: Բան տեառն: Բան հրեշտակի. ևն: * Տացին մեզ բանք 'ի բերան՝ ցուցանել ձեզ զօգուտն. ինձ ասել, և ձեզ լսել. Ագաթ: * Բան ընդ բան յեռալով յաղագս նոցունց երկայնաբանել թուեցիմք. Փիլ. նխ. բ: * Արտաբերական բանիցն զկնի և գործն յաջորդի: Ըմբերանեսցես հանճարեղ բանիւ զբանիւն պանծացեալն. Պիտ: * Բանի անճառ, անտես մտաց. Ը. խոսփ: * Բան է հետևակ (և տաղաչափական) բառի շարադրութիւն, զօրամախոհութի ինքնակատար յայտնելով. Թր. քեր: * Բան է ձայն նշանական ըստ կարգաւորութեան, որոյ մասն իմն նշանական է զատ իբր ասութիւն (այսինքն բառ), այլ ոչ իբր ստորասութի կմ բացասութի. Պերիարմ:

ԲԱՆ ՏԵԱՌՆ. իբր Պատգամ, հրաման, պատուէր. Λόγιον. Oraculum. էմր, քէլամ, քէլիմէթուլլահ. * Բանք տեառն բանք սուրբ են: Հաստատեալ ծառայի քում զբանս քո յերկիւղ քո: Բան քո կեցոյց զիս: Ողորմեա ինձ ըստ բանի քում. ևն:

ԲԱՆ՝ ներքին կամ ներքոյամադրեալ, արտաքին բանի. վարկ. կարծիք. բանականութի. ծնունդ մտաց. խորհուրդ. իմաստութի. Λόγος. Ratio, sententia. ագլ, օգըլ. * Երկու են բանք. այն՝ որ 'ի ներքս 'ի խորհուրդսն բնակեալ է, և զոր արտաքս բերեմք. Փիլ. լին. դ. 96: * Առ սրո բանիւ են պատճուճեալ՝ բանքս ». այսինքն առ բանականս են խօսք իմ. Ա. որ. ա: * Զարդարեսցեր բանիւ: Երաստանաս բա-

նին. Ղուկ. Է. Ժ։ *Բան ոչ է բարբառ լեզուոյ, այլ՝ խոկումն մտացն. Լմբ. սղ։ *Որ առ ՚ի մէնջ բանիւս։ Ըստ վայելչական բանին։ Ըստ իմաստս բանի. Պղատ։ Անյաղթ։ Խոր։ *Եւ դու ՚ի նոցա բանի ես. Եղիշ. Գ։ *Այն ամենայնիւ բան է. Ագաթ։

ԲԱՆՆ, կամ ԲԱՆ ՀՕՐ, կամ ԲԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԷԱԿԱՆ, ԲԱՆՆ ԱՍՏՈՒԱԾ. Միածին որդին այ՝ որպէս հարազատ ծնունդ մտաց հօր. ὁ Λόγος. Verbum aeternum. քէլիմէթուլլահ. *Ի սկզբանէ էր բանն, եւ բանն էր առ այ, եւ այ էր բանն։ Եւ բանն մարմին եղեւ։ Ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց։ Եւ կոչէր անուն նորա բան այ. Եւն։ *Բանն այ ոչ միայն բան ինչ անանձն, այլ եւ բան անձնաւոր, եւ մարդ կատարեալ. Ոսկ. Եսայ։ *Բան է կենդանի այ, ՚ի ձեռն որոյ ամենայն աշխարհ արարաւ. Փիլ. լին. ա։ *Դառնալ առ այ կենդանի, եւ ՚ի բան նորա յորդին միածին. Ագաթ։ *Բան կոչէ զորդի, զի անախտ ծննդեամբ (է) ՚ի հօրէ, որպէս բան ՚ի մտաց. եւ ծանուցիչ է կամացն հօր, որպէս բան ծանուցիչ կամաց խօսողին . . . եւ անմեկնելի է ՚ի ծնողէն, որպէս բանն յայլսն հնչէ, ՚ի միասն մնայ. Խոր. պիտ։ *Զի որպէս ծնունդ է բան՝ սրտի, նոյնպէս եւ հօր ծնունդ որդի։ Բան առաջաւ անուն նորին, զի անմարմին է ծնունդ բանին. Յո. ուղղ։ *Բանն բազմեալ յանբանից մտաւ։ Բանիւ բանն այ կենդանագործեաց զկազմուած։ Բանդ այ՝ որ ՚ի ծոց հօր. Շար։

ԲԱՆ. Ըստ համաձայնութեան յունին. Ῥῆμα. որպէս Բառ. *Մինչ բան՝ ոչ եղեւ ժամանակ ինչ է սահմանադրելոյ. Կոչ. ծէ։

ԲԱՆ. Λόγος. Ratio. ըստ յն. ոճոյ, որպէս համեմատութիւն. կարգ, յարաբերութիւն, հայեցուած, պատճառ, փաստ, եւ հանգամանք իրաց. վէճհ, հէսապ, միւնասէպէթ. *Զնոյն բան ունին արհեստք եւ մակացութիւնք, զոր բան եւ նոցա ենթակայն առ նոսա. Սահմ. ժա։ *Զամենայն բանից թուականաց։ Եւ զերկրաչափականն, ըստ որում որպէս բանն առ առաջինն՝ երկրորդին, այսպէս եւ առ երկրորդն՝ երրորդին. Փիլ. ժ. բան։ *Եթէ ոչ փութամք զերիցս այսոցիկ քննել զբանն, ընդունայն ընթանամք. Վրք հց. Գ։ *Այնպիսի կարգաւորութեամբ վարել, որպէս աստուածութեան բան պահանջէ ՚ի նոցանէ. Սարգ. Ե. ղ. ղ։ *Արդարութեան բան զխաչդ պահեցի. Բրս. մրկ։

ԲԱՆ, բաներ. կամ բանեար, երոյ. ռմկ. բան, բանէր. Πρᾶγμα, ῥῆμα. Res, negotium, verbum. Իր, իրք. Իշ, չէյ, նէսնէ. նեսնէ. *Որ արարին զբանն չար։ Յետ բանիցս այսոցիկ։ Միթէ տկարանայցէ՞ առ ՚ի յայ բան, կամ ամենայն բան։ Քաւ լիցի քեզ առնել զայն բան։ Արարեր դու ըզբանդ զայդ։ Զայս եւեթ բան արասցես ինձ. Եւն։ Իսկ *Առանց բանի պոռնկութե. Մտթ. Է. 32. խմն իրք պատճառ։ *Նա որ ինչ ցնոր բանքն էին, զամենայն արար կատարեաց». յն. զիւրն զամենայն. Ոսկ. յհ. ա. 9։ *Ոչ գոյր նմա մեղ գտնել բանսերբին, եւ ոչ պատճառ, եւ ոչ բանք. Բուզ. Գ. 5։ *Հնար է եւ առանց ջանի բան վճարել. Լմբ. ծող։ *Ազատեալ լինէր յուսմկն ՚ի բանսրայն. Բուզ. Գ. 5։ *Թողէք ՚ի բաց զբանսերդ. Փարպ։ *Մնացեալ լիցէ դարձեալ հարկաւոր բանեար. Վրդն. ծն։

ԲԱՆ. Իբր Բարբառ. լեզու. փիլ. լիսան. *Ցեզուլ ՚ի յոյն բան։ Որ եւ անուն յեզուս ՚ի յոյն բան. Խոր. ա. 1։ Բ. 65։ *Ըստ հերովլեցւոց բանիցն բարբառոյ. Կիւրղ. ծն։

ԲԱՆ ԱՌ ԲԱՆ. մ. Ըստ միոյ միոյ ՚ի խօսիցն. մի ըստ միոջէ ըստ բառիցն. քէլիմէ քէլիմէ. *Արարէք բան առ բան նամակի պատասխանի։ Բան առ բան եղեւ, եւ իմացոյց ձեզ զօրէնս ձեր. Եղիշ. Ը։ *Եթէ բան առ բան զաս մեկնեմ, լռողքդ ձանձրանայք. Նար. Եըգ։ *Տեսցուք բան առ բան. Բրս. մրկ։

ՆՈՅՆ ԲԱՆ Է. } Զնոյն իմանալի է
ՆՈՅՆ ԲԱՆՔ ԵՆ. } կամ ասելի է. եւ ըզնոյն համեմատութիւն իմն. *Նոյն բանք են եւ վասն պոռնկութեան։ Նաեւ զոպանութեան նոյն բանք են։ Նաեւ յինչս առնուլ նոյն բանք են. Եզնիկ։ *Նոյն բան կացցէ եւ ՚ի վերայ բարերարի եւ մարդասիրի եւ աներեւութի։ Որոց բան նոյն է, այսոցիկ ամենայն իրօք եւ համանմանս եւ միմեանց նման գոլ բնութեամբ հարկաւոր է. Կիւրղ. գանձ։

ԲԱՆ Ի ԳՈՐԾ ԱՌՆԵԼ. Բուռն հարկանել, ձեռնարկել. սկսանել արդեամբք ըզբանն խորհեալ. *Բանս ՚ի գործ արարին ունել զնա. Երեմ. ծը. 22։ *Սկիզբն արարեալ բան ՚ի գործ արասցուք վարդապետել ձեզ. Ագաթ։

ԲԱՆ ԻՆՉ. } Պէսպէս առմամբ, որ֊
ԲԱՆՔ ԻՆՉ. } պէս ռմկ. խօսք մը. եւ բան մը, իշմիշ մը. եւ ղալ մը, նօքտա մը. *Բան ինչ է ինձ ընդ քեզ իշխանդ. առ ո՞ յամենեցունց ՚ի մէնջ. առ քեզ իշխանդ. Դ. Թգ. Թ. 5։ *Եւ մի ՚ի բանս ինչ գայցես ընդ նոսա. Կոչ. ը։ *Բանք ինչ ոչ գոյին նոցա ընդ ասորիս։ Հեռի էին ՚ի սիդոնացւոց, եւ բանք ինչ ոչ էին նոցա ումեք ՚ի մարդկանէ. Դտ. ծը. 7. 28։ *Իմ բանք ինչ են ընդ հրեայսն, գուցէ տացեն զիս ՚ի ձեռս. Երեմ. լը. 19։

ԲԱՆ ԻՆՉ ԱՍԵԼ. Դիմախօսել. արտընջել. անիծանել, որ եւ հեգնելով ասի օրհնել. *Աղէ ասա՛ բան ինչ ՚ի տէր, եւ վախճանեաց. Յոբ. Բ. 9։

ԲԱՆ ՈՒՆԵԼ կամ ԱՌՆԵԼ, կամ ԳՏԱՆԵԼ. ռմկ. խօսք կապել, կամ դնել. Ուխտ դնել. *Բան ունիմ ընդ երանելի ծերոյն, եւ նա ընդ իս, թէ որ յառաջէսցէ ՚ի մէնջ, աղաչեսցէ զայր այ, զի ժողովեսցէ եւ զընկերն. Վրք հց. ծէ։ *Առ վաղիւն բանս արարեալ քաղաքին ՚ի ներքս առնուլ զզօրսն. Մամբ։ *Բան կապեալ առ գիսն՝ ոչ երբէք ծովագնացութեան մակաշլըջել փայլունք. Մագ. ճը։

ԲԱՆ ՏԱԼ. խօսք տալ. խոստանալ. սէօզ վէրմէք. *Տո՛ւր ինձ բան, զի այդր բնակեսցիս. եւ ես նմա բան ՚ի յայրին մնալ։ Տո՛ւր ինձ բան, որ արձակեսցես զքեզ. Վրք հց. ծր. Ն. Դ։

ԿՄ Միջնորդ լինել. բարեխօսել. *Դառնալ զիւրոյ հովուութեան ոչխարս, կամ թէ բան տալ ընդ նոցա՝ մաղթանաց. Սարկ. լա։

Եւ Համար տալ. Λόγος. Ratio. *Պարտ է ամենեցուն պատրաստ լինել, որպէս թէ բան տալոց են դատաւորին. Նխ. ա. ղեփ։ *Աստուածապէս բան տացուք այ, թէ ոչ հանապազ ազամք. Կլիմաք։

Ի ԲԱՆ ԶԳԵԼ. Ի կարգ բանին անցուցանել եւ ճառել. բանի փէչ դնել, ու վրան խօսիլ. *Զաս ՚ի բան ձգել, եւ պատմել՝ անարգութիւն է շնորհին. Լմբ. պտրգ։

Ի ԲԱՆ ՈՒՆԵԼ. Ի համարի ունել. ՚ի համար արկանել. սէպէլ, բանի փէչ դնել. *Աղերսէր մի ունել նմա ՚ի բանի գլանցուածս իւր։ Ոչ ՚ի բանի ունէր զնորայն կառավարութեան կամաց՝ որ ՚ի չարին. Յհ. կթ։

Ի ԲԱՆԻ ԱՌՆԵԼ. Հաւանեցուցանել. համոզել. յանկուցանել. Πείθω. Persuadeo. *Ի բանի արարեալ զբղաստոս սենե֊կապետ արքայի. Գծ. ծբ. 20։ *Զպոմպէոս ՚ի բանի առնէր, զի նովաւ դառնացէ յասորիս. Եւս. քր. ա։

ԸՆԴ ԲԱՆԻՒ ԱՌՆԵԼ. Իբր. ԼԻՆԵԼ, ԳԱԼ. Բանադրել. կապել, իլ. *Մի զբոլորատունն ընդ բանիւ արասցեն։ Ո՛չ օրէն է վասն միոյ զամենեսեան ընդ բանիւ առնել։ Զի մի՛ այլքն ընդ բանիւ կացցեն վասն միոյ մեղուցելոյ. Մխ. դտ։

ԶԲԱՆԻՒՔ ԱՌՆԵԼ. Զբաղեցուցանել բանիւք. խօսքի բռնել. *Զբանիւք առնէր զաշակերտսն, մինչեւ մեռեալն թաղմանց գերեզմանին վճարեցաւ. Մամբր։

ԶԲԱՆԻՒՔ ԱՆԿԱՆԻԼ. Դերգերիլ՝ պարապիլ ՚ի խօսս. խօսքի հետ քալել. սէօզէ դալմագ. *Մի զբաղումն բանիւք անկանիր։ Ցերկարապատոյն նուագօք զբանիւք անկանէին. Յոբ. ծա. 3։ Գ. Դ. Ե. 9։

ԶԲԱՆԻՒՔ (իւրովք) ԳԱԼ. Հակառակ ելանել իւրոց բանից. եւ կրկնաբանութիւն առնել. *Զի մի՛ երեւեցայց ՚ի մէջ անմտացն իբրեւ զբանիւք իմն եկեալ։ Զբանիւք եկեալ երեւէր. Ոսկ. յհ. ա. 7։

ԲԱՆ ԵԼ, կամ ԳԱԼԱՐ. իբր Համբաւեցաւ. խօսք ելաւ, լաֆ ելաւ. *Եւ ել բանս այս յեղբարս. Յհ. իա. 23։ *Բան կալաւ՝ ընդ ենովքայ եւ ընդ եղիայի տակաւին ՚ի մարմնի զնա եղ. Ճ. Զ։

Ի ԲԱՆՍ ԵԼՈՒ. Բանիւք գրգռեալ՝ պատրեալ՝ պատրաստեալ. *(Նեստոր) չար մոլորութե գտեալ՝ ՚ի բանս ելու առնել ընդ նացուս զբարեպաշտապոյն թագաւորն մեր. Կիւրղ. ՚ի նոյն։

ԲԱՆՍ ԱՐԿԱՆԵԼ. Տե՛ս ԲԱՆՍԱՐԿԵԼ. *Սկսան բանս արկանել առ թագուհին. Վրք ոսկ. (Նոր Հ. եւ ազ. բանսարկուել)։

ՈՐԳԷՍ ԻՄ ԲԱՆՍ Է. } Ըստ կարծեացս
ԸՍՏ ԻՄՈՒՄՍ ԲԱՆԻ. } իմոց. որպէս ինձ թուի. պիմ զաննըմմա, պէնճէ պիլէ. զաննըմճա. *Ամենայն մարդ սուտ է. եւ այս է, որպէս իմ բանս է, թէ ամենայն մարդ տկարանայ յանդիման կացուցանել՝ զոր իմացան զայս. Նխ. ժող։ *Ոչ այլ ինչ է՝ ըստ իմում բանիս, բայց ընդ այ միայն լինել. անտ։

Ի ԲԱՆ ՏԱՆԵԼ. Ի ԲԱՆ, կմ Ի ԲԱՆԻ ԳԱՀԵԼ. ռմկ. ոճով. Ի կիր արկանել. վարել. գործածել, բանեցնել. Վրք. ճը։ Մխ. բծ. ատեղ։

ԲԱՆ, բաներ կամ բանք. Որպէս յն. վալանոս. Βαλανον. Glans. կաղին, վալանի. եւ ամենայն պտուղ խաղային եւ գաւն. *Ոչ ամենայն բաներ ուտելի է՝ որպէս ցմախ, որպէս բանք, շագանակ, եւ այլք ոմանք գաւառինք, եւ կէսք մաճարերք իսկ. Վրդն. ծն։

Եւ կամ Μυροβάλανον. Myrobalanum, glans unguentaria. Տունկ եւ ծաղիկ եւ պտուղ, եւ իւղ, որով օծանէին առէպ զխարտ ՚ի ջերմին գաւառս. թիւլ, հէլիլէ, հէլիճ. *Երջանիկն արարիա. եւ իւղք անոյշք ՚ի նմա, եւ ծաղիկք՝ բալասան, բան, յասմիկ. Խոր. աշխ։

ԲԱՆ, բանեար. Որպէս Գան, կամ բաղարջ փեթակի. *Զամէն բանն, երբ կատարած լինի ՚ի կոճակի, կթէ։ Բանեարոյն բաղարջն. Վրդ. յա։

ԲԱՆԱԲԵՐ. Տ. ԲԱՆԲԵՐ. Պատգամաբեր. *Հրեշտակք (կոչին), զի ամենեքեան ածային բանիցն բանաբերք են։ Հրեշտակն պատգամատար ասի, եւ բանաբեր. Գովել բանաբերս ամենեցունց. Վրդն. ող։

ԲԱՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ. գ. Հրեշտակութիւն. պատգամաւորութիւն. *Ի բանաբերութեան զամենեսեան հրեշտակս կոչելով.

Վրդ. ող։

ԲԱՆԱԳԷՏ, գիտի, տաց. ա. Գիտակ բանից. հանճարեղ. ճարտար. իրագէտ. խորագէտ. *Սուզանէ զմիտս իւր բանագէտն յատենի ՚՚. այլ ձ. բանգէտն. Առակ. իէ. 26 ։ *Որ սուտ, և առոյգ բանագէտ ընկերին յանցանացն լինի, ոչ վասն իւրոց յանցանացն կատարելապէս և անտանելի ունի զփիշատակութիւն. Կլիմաք։

ԲԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ։

ԲԱՆԱԳԻՐ, գրի, գրաց. ա. Λογόγραφος. Orationum et historiarum scriptor. Շարագրող պէսպէս բանից, և պատմութեանց. շարագիր. մատենագիր. *Արդեօք ճարտասանի ուրուք և կամ բանագրի գժնէի յարմարելով զբանն առ ՚ի լսողացն հիացումն. Բրս. ՚ի Գորդ։ *Բանագրի գարով. Նար. ծը։ *Բանագիր լինիմք յոքնազան և բազմապատիկ պիտառութեանց. Առաք. Փ. 21 ։

ԲԱՆԱԳԻՒՏ, գտի, գտաց. ա. Գտօղ բանից, և պատճառանաց առ ատգտանելոյ. իրիտխս. ընդվզյրայքնին. *Իմաստակութե գործ է բանագիւտ լինել. իսկ իմաստութե՝ քննել. Փիլ. Նխ. Ե։

ԲԱՆԱԳՆԱՑ ԼԻՆԵԼ. Պատգամաւորք, կամ միջնորդօք խօսել. *Նախ բանագնաց եղեն, սկսան խօսել ընդ նոսա, և ա.ն. ա. Գ. Ե. 33 ։ *Զանխուլ փութացաւ հաստուցանել չարիս՝ բանագնաց ՚ի թշնամին ելով. Պիպ։

ԲԱՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ. գ. Գովաբանութիւն. բան գովասանական. գովեստ. *Զայնիւ երգոցս օրհնութե՝ քումդ երանութե բանագովութե. Նար. կա։

ԲԱՆԱԳՈՐԾԵՄ, եցի. ն. Յարմարել զբանն. և վերաբերել առ իմն. *Զոր ոմանք գեղեցկապէս ՚ի խորհուրդ երրորդութեն բանագործեցին. Կամրջ։

Կամ Բան ՚ի գործ ածել. արդիւնացուցանել. *Իմացուածք միտնջենաւորք, և բանագործեն զամենայն բնութիւն ՚՚. յն. և բանք՝ գործօղք. Մագ. ՚ի Գիրս։

ԲԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. գ. Δραματουργία. Scriptio vel descriptio rerum. Բանահիւսութի. ձևացուցանելն զբան իբրև ՚ի հանդիսի. առասպելութի. առած. առակ. *Աքանչացեալք ասիցեն թէ եօթնեայ բանագործուեն, ով է սա՝ որ գայ յեգոմայ. Ածոփ. գրոց. Ե։ *Ցիշեցեալ լինին աստանօր ազգամանեան բանագործուեքն։ Ի վեցերորդ ատլեանն գտանիցի, և զաքարիայի բանագործութեն. Արծր. Դ. 2. 11 ։ *Ոմանք առնան յեօթնեայ բանագործութեան. Շ. Ճարպ։ *Ըստ դաւթայն և ըստ եօթնեայ բանագործութեցն. Ոսկ. Եբր։

ԲԱՆԱԳՏԱԿ ԼԻՆԵԼ. որ և ԲԱՆԱԳԻՒՏ ԼԻՆԵԼ. Գտանել բանս պատճառանաց. բաղբաղել. պատճառս հնարել՝ հայթհայթել. *Բանագտակ լինէր (աքող), թէ ոչ փորձեցից զոէր. Գէ. Եփ։ *Լռագոյն էր ածել զասացեալն՝ քան հարտարութբ բանագտակ լինել. Ոսկ. Եփ։ *Բանագտակ լինին յաղագս կարգին, ըղձամ կրկերագոյն կարծեալք, իսկ զվերջին երկրագոյն զյաքէթ. Փիլ. Լին։

ԲԱՆԱԳՏՈՒԹԻՒՆ. գ. Εὑρεσιλογία. Sollertia in inveniendis verbis. Գիւտ պատճառանաց. հայթայթանք բանից. հնարք. ճարտարութի. *Բանագտութե ինն հաստատեցուցանել. Նիւս. կազմ։ *Վասն յարահամր իմաստակութեան բանագտութեն։ Զանհաւան բանագտութիւնս։ Ոչ համանկան բանագտութեք. Փիլ։

ԲԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ. գ. Գրութի բանից. ճառագրութի. շարագրութի. *Լից զնուագդ իմ բանագրութե։ Հաստատեացէ ճշմարիտ լինել զասացեալսս բանագրութե։ Նախաճառս բանագրութե յապաւնեացս խորհուրդ նայի. Նար. խէ. հա. և խււ։

ԲԱՆԱԴՐԱՆՔ, նաց. գ. Ἀνάθεμα, ἀφορισμὸς. Separatio, excommunicatio. Դնելն և գնելն ընդ բանիւ եկեղեցական կապանաց և արգելման. Նզովք. հատումն կամ որոշումն ՚ի հաղորդութէ. անաթէմա. աֆօրօս, լանէթ. *Զի մի՛ վասն միոյն բանադրանաց զայլսն զրկիցէ։ Թէ առաւելութբ իցէ բանադրանքն. Մխ. դտ։

ԲԱՆԱԴՐԵՄ, եցի. ն. Ἀναθεματίζω. Anathema declaro, excomunico. Ընդ բանիւ առնել. կապել. նզովիւք արգելուլ և որոշել յեկեղեցական հաղորդակցութէ. *Զմեղուցեալսն անձինս բանադրեսցեն։ Բանադրեալ լինին յեպիսկոպոսացն։ Ըզբանադրեալն չթաղել. Մխ. դտ։ և Կանոն։ Եւ քանզի բանադրելն՝ ըստ յն. ասի վերադրել, վասն որոյ յայլ և այլ միտս բերի ասելն ՚ի Վարս ոսկ. *Սատանեա՛, այսինքն բանադրեա՛. որպէս թէ ասիցէ ոք, արկ զբանս քո յականջս նորա, զի ծանիցէ՝ թէ գիտակ ես նորա յանցանացն ՚՚։

ԲԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՆԱԴՐԱՆՔ. *Լուծեալ լիցի բանադրութեն. Կանոն։

ԲԱՆԱԶԻՆՈՒԹԻՒՆ. գ. Ընդդէմ զինելն բանիւք. *Մտաւոր բանազինութբ. Ճ. Ա։

ԲԱՆԱԼԵՊԱՆ, ի, աց. գ. Փականակալ. Քուլէջի պէյ։ Այլ չիցէ ընդ Բաղանեպան ՚ի Հ. Հկ. ճե. Դ։

ԲԱՆԱԼԻ, լւոյ, լիք, լեաց. գ. Κλείς, ջեռ. κλείδος. Clavis. Փականք՝ ա որում բացօղ. գործի բանալոյ և փակելոյ զդուռն. Քուլէջ. անախտար. *Առին զբանալին, և բացին։ Նոքա էին ՚ի վերայ բանալեացն։ Ընդ առաւօտս բանային զդրունս տաճարին։ Տուաւ նմա բանալի գբոյն անդնդոց. Դփ. Գ. 25 ։ ա. ճ. Ի. 27 ։ Յայտ. Ի։ *Բանալի արքայութե. Շար։

Պէսպէս նմանութեք ասի. *Բանալիք քո բանայ զդուռն իմ ՚՚. այսինքն խօսք քո առիթ լինին և ինձ խօսելոյ. Վրք հց. ծբ։ *Զքեզ եդ առաջի բանալիք բացարան. Նար. խւ։ *Զմին միոյն առնլով բանալի ՚՚. այսինքն բացատրութի. Լմբ. ող։ *Բերկրական իրաց, և բանալի ականջաց սրտի. Ցէղ. ոսկ. յհ։ *Թուքն նորա եղև բանալի աչաց փակելոյ. Եփր. համաբ։

ԲԱՆԱԽՕՍ. ա. Որ հրապարակախօս լինի. ատենախօս։ ՃՃ։

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. գ. Հրապարակախօսութի. ատենախօսութի. քարոզութիւն. *Ի մէջ ամենեցունցն՝ որ յարէսպագոս ատենական բանախօսութիւն. Կոչ. ծէ. (այլ ձ. ատենախօսութիւն. յն. δημηγορία.)

ԲԱՆԱԾՆՈՒՆԴ. ա. Որ ծնանի բանս ՚ի մտաց. մտացի. *Կին բարեմիտ յառաջ որդի բերէ բանածնունդ. Ոսկէփոր։

ԲԱՆԱԿ, ի, աց. գ. Παρεμβολή. Castra. Միաբան բազմութի զօրու՝ ՚ի չու, ՚ի ճակատու, և ՚ի կայանս. որպէս և Կարաւան ուղևորաց. և Տեղի իջևանելոյ. գաղոք. օրտու, մուասքէր, ասքէրկեահ. *Եւ ես զբանակ ծոյ։ Բանակք հրեշտակաց։ Զատոյց զժողովուրդն (անուանովք հանգերձ) յերկուս բանակս։ Նշէաց զայն գի. չեր անդէն ՚ի բանակին։ Եմուտ ՚ի մէջ բանակի եգիպտացւոցն, և ՚ի մէջ բանակի իսրայէլացւոցն։ Դարձաւ յետս և ամենայն խաղայել ընդ նմա ՚ի բանակն ՚ի գաղգաղա։ Իբրև զզունդս բանակաց։ Ծախեսցի զբանակս ձեր։ Առին զբանակս օտարաց. ևն։ *Երթեալ տեսանելին՝ զի թափուր կայր բանակն առանց մարդոյ. Բուզ. Դ. 20 ։ *Մտանելոց էր պօղոս ՚ի բանակն. այսինքն ուր զատողական կայանքն էր. Ոսկ. Գծ։

ԲԱՆԱԿ. Λογεῖον, λόγιον. Rationale, oraculum. Որպէս թէ բանիկ, պատգամիկ, կամ բանաւոր, բանարան. Նիւթական թարգմանութիւն յն. ձայնիս լօղիօն, այն է Տախտակ դատաստանաց եդեալ ՚ի վերայ կրծոյ ահարոնի. Եբր. խօշէն. այսինքն լանջանոց. *Ցաղագս որ ՚ի վերայ լանջացն երկոտասան ակունքն, որ բանակ կոչի։ Բանակին երկդիմի անկուածս յարդարէ։ Զի՞նչ է բանակն. որպէս և ինքն անուանդ զեկուցանէ, բանի նշանակ. և բան երկդիմի է. ևն. Փիլ։ *Արասցես դու քեզ բանակս դատաստանի. Ճ. Թ։ *Երրորդն պղնձագոյն. այս քարս ՚ի քահանայական բանակն ոչ էր. Լմբ. յայփ։ *Բանակ դատաստանին զպարանոցօք ահարոնի հանդերձ երկոտասան ակամբքն. Տօնակ։

ԲԱՆԱԿԱԿԻՑ ԼԻՆԵԼ. Խմբակից և պարակից լինել. ըստ յն. պարակցիլ. *Ամենեցուն խառնուրդք լինէին, հրեշտակք բանակակիցք մարդկան, և մարդիկ հաղորդք հրեշտակաց. Ոսկ. Մ. ա. 1 ։ *Զի իցեմք բանակակիցք հրեշտակաց և զօրաց երկնաւոր թագաւորին մերոյ. Եղիշ. Է։

ԲԱՆԱԿԱՄԷՋ. միջի. ն. Միջին վայրք բանակի կամ բանակաց. *Մինչդեռ գայր նա ընդ բանակամէջն. Բուզ. Դ. 15 ։

ԲԱՆԱԿԱՆ, ի, աց. ա. Λογικός. Rationalis, ratione et oratione praeditus. Ունակ ներքին և արտաքին բանի, այսինքն բանականութե և խօսողութե. բանաւոր. տրամաբան. մտաւոր. իմացական. ատուն. խօսուն. հոյեանի նոտրգ. *Ոմանք բանականք, իսկ ոմանք անբանք գոն. Սահմ։ *Սահման է մարդոյ, կենդանի բանական։ Մարդ ոչ միայն շնչոյ, այլ և բանական շընչոյ մասն ընկալեալ է։ Տնկեաց ՚ի բանական յոգւոյն արարիչն. Փիլ։ *Բանական և իմանալի բնութի. Աթ. Դ։ *Առաքինութիւն բանականին է խոհականութի։ Անկատարութի ոգւոյն բանականի. Խոր. ա. 1 ։ *Ցիմարամիտն այն ապողինար զմարդկայինն ՚ի բաց կրճատեալ եհան ՚ի մարմնոյն քոյ զբանական հոգին. Ցհ. իմ. էրև։ *Ազգ բանականաց։ Ի բանականացս դասուց։ Բանականիս էութե։ Բանական մաղթողիս։ Գետոցն բանականաց։ Բանական բուրաստ, ևն. Նար։ *Գինի կոչէ զբանական ուրախութիւն. Բրս. յաղէփ։ Իսկ Տօնակ. *Աւին բանական արք ՚՚, իմա՛ քաջ տրամաբանօղ, նրբամիտ, բանիբուն։

Մխիթ իբր Այն՝ որ հայի ՚ի բան, այսինքն ՚ի խօսս, հակական գործնականին. *Պիտոյից ոմանք են բանականք, և ոմանք գործականք, և ոմանք խառնք։ Եւ բանականք են, որ բանիւն միայն նշանակեն զչափն։ Պէտք բանականք (իբր վճռական խօսք). Պէտ։

ԲԱՆԱԿԱՆՆ. գ. իմա՛ Արուեստ կամ մակացութի բանական. տրամաբանութի. ή Λογική. Logica, dialectica, ars disserendi. լօժիգա. մանտըգ, Իլմ մանտըգ. *Բանական մասն իմաստասիրութե։ Բանականն եթէ մասն է իմաստասիրութե, և եթէ գործի, ՚ի տարրագութեան արժանաւորելի ուսցուք։ Արդեամբ և հիմն են բանականին՝ ստորոգեալն և ենթակայն։ Բա-

նական՝ կատարումն ունի զապացուցականն. Անյ. պորփ.: *Ի ձեռն բանականին (ուղղեաց) առ անպատրելի մեկնութիւն. Փիլ. բագն.: *Բանական արուեստ. Սահմ.: *Բանական մակացութեան առաւել բովանդակին հնարք. Յհ. իմ. ատ.:

ԲԱՆԱԿԱՆԱԳՈՅՆ, գունի, ից. ա. Λογικότερος, ον, λογιστικός. Ad logicem accommodatus, subtilis, subtiliter. Քաջ տրամաբանող, և տրամաբանեալ, և տրամաբանելով. նրբագոյն. նրբութբ. *Բանականագոյն արհեստից, ճարտասանութե, և քերթողութե. Պիտ.: *Իբրու անուսումն նական զոսա նախատել պարտ է, թէպէտև յոյժ իցեն բանականագոյն. Պղատ. օրին. Զ: *Բանականագոյն բուռն հարեալ առացին. Պորփ.: *Բանականագոյն խնդրել յանձն առեալ. Անյ. պորփ.:

ԲԱՆԱԿԱՆԱՊԷՍ. մ. Λογικῶς. Cum ratione, rationaliter. Որպէս բանական, խոհական. իմաստութբ. և Բանաւոր՝ նուրբ կամ իրաւացի փաստիւք. Տարբեր. պէտ. խնդրով, հաւ ուսննալով. *Բանականապէս վայելեալք յիւր գործն, և ոչ անասնաբար. Լմբ. ող.: *Որք բանականապէս և ըստ պատշաճի ընթանան առ հանդարտութի. իսկ որք անբանաբար եկին առ նա, ևն. Կլիմաք.: *Ոչ հանդարտութբ և բանականապէս լինէր. Մխ. երեմ.: *Բանիւ ինչ առնել, և բանականապէս զգալ. Փիլ. լին.: *Մարմնելի է բանականապէս, այլ ոչ զինուորաբար. Ա. որ. ծէ: *Բանականապէս ոլորայ պատմութիս. Նար. խչ.:

ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ. գ. Λόγος, λογισμός, λογιότης. Ratio, rationis compotem esse, rationalitas. Ունել զբան ներքին և զարտաքին. տրամաբանող և խօսուն գոլն. տարբերութի բանաւորաց յանբանից. մարդկութի. և իմացականութի. *Ի բանականութեն ընդ անասունս դասակարգեալ: Բանականութեն յարգանօք կրկին ճոխացար. Նար. իգ. խը: *Մեք զբանականութիս յայտնի կացուցանեմք 'ի ձեռն լեզուիս, ևն. Մագ. 'ի տիտ.:

Իբր թանձրացեալ. Բանաւոր, իմացական. *Գերազարդ բանականութեցն հոյլք. Շ. հրեշտ.:

ԲԱՆԱԿԱՏԵՂ. Տ. ԲԱՆԱԿԵՏԵՂ. *Աբարեալ զիւր զօրսն բանակատեղս. Փարպ.: *Ի տեղւոջ միում հանդէպ կղզւոյն (սևանայ), որ կոչի բանակատեղ. Սեբէ. ճառ.:

ԲԱՆԱԿԱՐԳ. ա. Կարգաւորեալ բանիւ և հանճարով. *Զհիացուցանօղն խորհուրդ բանակարգ բարեզարդութբ խաչիս քննութե. Նար. խչ.:

Եւ Նախակարգեալ յընթացս բանին. *Զառագրեալ բանակարգն (զնոյեան տապան) 'ի լեառն մասիս կացուցեալ. Ճ. Ա.:

ԲԱՆԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ. գ. Կարգումն բանից. կարգաբանութի. *Սքանչացեալ ընդ քաջասրտութին և ընդ իմաստուն բանակարգութին: Պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն. Արծր. ա. 7: Է. 11: *Ի պատուար պղնձի պարունակեցաւ ըստ երեմիայի բանակարգութեանն. Նար. ծբ:

ԲԱՆԱԿԵՏԵՂ. տեղ. տեղք, ղաց. գ. Κατάλυμα. Diversorium. σταθμός, statio. որ և ԲԱՆԱԿԱՏԵՂ. Տեղի բանակելոյ զօրաց, և ուղևորաց. բանակ. կայք. բնակութիւն. վանք. իջևան, օթևան. օրթու օթաղը, գօնագ, մէնզիլխանէ. *Այս բանակետեղք որդւոցն իսրայէլի: Գրեաց մովսէս զչուս նոցա, և զբանակետղս իւրեանց: Եւ այս էն բանակետեղք գնացից նոցա. Թուոց. լգ. 1: *Եկեղեցի՝ հրեշտակաց սէգ բանակետեղ. Խոսր.: *Գալ հասանել նոքօք 'ի բանակետեղդ պարգևաց քոց. Եփր. համաբ.: *Ոչ ոք ('ի ձկանց) համարձակի անցանել յայլոց բանակետեղ. Վեցօր. Է: *Որակութիք 'ի քեզ բանակետեղ ընկալցի անյեղափոխելի. Մագ. Ղ: *Բանակետեղ և բնակութի երրորդութեանն եղեալ են մարդիկ. Եփր. ա. կոր.:

ԲԱՆԱԿԵՑՈՒՑԱՆԵՄ. ցուցի. ն. Տալ բանակիլ. կարգել զզօրն կամ զբանակն. և խաղացուցանել զբանակ. օրտույա գոնտրմագ՝ գոնտըրմագ. *Տարաւ բանակեցոյց 'ի միջոյ անտի ընդ ճանապարհին բեթաւոկարեայ. ա. Ղ. ը. 33:

ԲԱՆԱԿԻՄ, եցայ. չ. Παρεμβάλλω. Castrametor. καταλύω, diversor. Բանակ հարկանել. իջևանիլ. ագանիլ. նստիլ. գօնմագ, նիւզուլ էթմէք. եբր. խանա. *Գտին զնոսա բանակեալս առ ծովեզերբն: Բանակեցան եգիպտացիքն 'ի թիկանց նոցա: Անտի չուեցին, և բանակեցան 'ի ձորն զարեդ: Եւ դուք բանակեցարուք արտաքոյ բանակին: Բանակեցարուք զգուշաւ շուրջանակի: Եւ ամենայն զօրքն հասանէին, և բանակէին 'ի թիկանց ամաւոյ: Բանակեցան անդ յառաջ քան զանցանելն. ևն:

ԲԱՆԱԿՈՐՈՎ. ա. Կորովի բանիւք. իմաստնագոյն. *Բանաւորաց ազգի, բանակորովն. Կամրջ:

ԲԱՆԱԿՌԻՒ, կռուի. ուաց. ա. Λογομάχος. Qui verbis pugnat, argutator. Բանիւ կռուօղ. կագօղ. հակառակասէր. գիմախօս. *Մի ոք դարձեալ յիմ վերայ արձակեսցի 'ի բանակռուացն. Ա. որ. ը: *Հանդարտ բարք ընդդէմ բանակռուացն. Ոսկ. Ե. փիլ.: *Տեսանելով և զընդդիմակաց զօրութիւն առընթեր բանակռուիս. Ոսկ. ննջ.:

ԲԱՆԱԿՌԻՒ ԼԻՆԻՄ. } Λογομαχέω. Verbis pugno, riscor.
ԲԱՆԱԿՌՈՒԻՄ, եցայ. չ. }

Հակառակիլ բանիւ. կագել. վիճել. գաւղա՝ նիզա էթմէք. *Մի բանակռիւ լինել յոչինչ պէտս 'ի կործանումն լսողաց. Բ. տիմ. Բ. 14: *Զինչ պէտք են խնդրել և բանակռիւ լինել. հաւատալն է օգտակար. Աթ. Ե: *Այսպէս ընդ միմեանս բանակռիւք լինէին. Վրք հց: *Բանակռուեալք յոչինչ պէտս առ 'ի կործանումն լսողաց. Պարապմ.: *Յաղագս նոցա բանակռուեսցուք, եթէ գտցեն հակառակք. Գր. տղ. ճղբ: *Բանակռուել ձեր հոտ անոյշ ելանէ առաջի իմ. Վրք հց. ծէ:

ԲԱՆԱԿՌՈՒՈՒԹԻՒՆ. գ. Λογομαχία, φιλονεικία, ἀντιλογία. Rixa, controversia, contradictio. Հակառակաբանութիւն. վէճ. կագ. յաղթամրութի. գիմախօսութի. մուճատէլէ, նիզա, իտտիհամ, նէճնաքէէթ. *Միայն զբանակռուութիւն ունելով առ ճշմարտութի: Այս է առ բարեպաշտութեն հաւատ բանակռուութի. Աթ. ծբ: Գրի և կարճելով ԲԱՆԱԿՌՈՒԹԻՒՆ. *Ոչ տայ թոյլ ընդ հակառակսն հակառակել բանակռուութբ. Ոսկ. Ե. փիլ.:

ԲԱՆԱԿՐԿԻՏ. ա. Կրկտօղ բանից. և Բանագիւտ. բանագտակ. որպէս խնդրօղ պատճառանաց. պարսաւագէտ. *Բանաքաղք, բանակրկիտք, ագահք և պիղծք. Մծբ. ծԲ:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ. գ. Ὁμιλία, σύλλογος. Collocutio, conventus. Խօսակցութի. կենակցութի 'ի զրոյցս. *Թագաւոր ընդ անանկի խօսիցի. չէք ինչ այն, որ զփառաւորեալն՝ տկարին բանակցութիւնն փոխել կարէ. Ոսկ. յհ. ա. 10: *Ըստ իւրաքանչիւր ումեք բանակցութեան ընթերցանի. Բրս. ող. ծը:

ԲԱՆԱՀԻՒՍ, ի, աց կամ ից. ա. Λογοποιός. Orationis artifex. ποιητής, poëta. Հիւսօղ բանից. բանաստեղծ. քերթող. *Ցեռին բանահիւսաց, և կրտսեր վարժապետաց: Եւ յետ ընտրելական երգս բանահիւսից գերահռչակեալ են: Բանահիւսից կանանց լալականաց. Նար. յէւ. և խուա. և կէ:

ԲԱՆԱՃԱՌԵՄ, եցի. ն. Ճառել ըղբան կամ բանիւ. արտաճառել. *Առ այժմ բանաճառեսցի յաղագս զգուշագունից ոմանց. Պիտ.:

ԲԱՆԱՃԱՐԱԿ. ա. Որ ինչ լինի ճարակելով զբան, քննելով և խելամուտ լինելով. *Ի բերս շրթանց բանաճարակ որոճման. Նար. խը:

ԲԱՆԱՄ, բացի, բաց, բացեալ. ն. Ἀνοίγω, διανοίγω, ἀνακαλύπτω. Aperio, revelo, relego. Պարզել և արձակել զփակեալն, զծածկեալն, զմածեալն ևն. բառնալ զարգելս. անցս տալ. առնել և յայտնի առնել. հերձուլ. մեկնել, ևն. ալմագ, թէ-չափէ՝ իչհար էթմէք, փէթհ էթմէք. եբր. փաթախ, փաշախ. (ուստի եփփաթա՝ և բացիր. ըստ արամայոյն են մի և նոյն.) *Եբաց նոյ զպատուհան տապանին: Զդրունս երկնից եբաց: Բաց մեզ (զդուռն): Եբաց յովսէփ զամենայն շտեմարանս ցորենոյ: Բացաք զամանս մեր: Բանալ զաչս, զշրթունս, զբերան (մարդոյ, կամ երկրի.) զդրունս, զհանդերձ: Եբաց զգիրսն: Որպէս բանայր մեզ զգիրս: Եբաց զմիտս նոցա՝ իմանալ զգիրս: Նախածին, որ բանայ զամենայն արգանդ: Բաց դու զփոր ձըկանդ: Եփաց զարգանդ նորա, ևն: *Զկոյս բանալ. Ագաթ.:

Կր. լինի ԲԱՆԱԼ, ԲԱՆԻԼ, և ԲԱՑԵԼ ԼԻՆԵԼ. *Փակեալն բանալ բնաւորեցաւ յարժանաւոր ժամանակի. Փիլ. լին.: *Բանջարքն այլ և այլ զօրութի ունին. զի մին կակղացուցանէ՝ և միւսն խստացուցանէ. մին բանայ և միւսն կնքէ. մին միս ածէ և միւսն հալէ. Կիւրղ. ղևտ.: *Գիտեմ ես, զի բանան աչք հօրն քո: Բանայցեն աչք ձեր: Բանայցեն քեզ դրունք մահու: Սահանք երկնից բացան: Երկինք բացան: Բանալ երկնից: Բացաւ երկիր, և եկուլ զդաթան: Գերեզմանք բացան: Եփփաթա, որ է բացիր: Բացմուսնի, զի բացայց. բացաւ, և երթայր զհետ նորա. ևն: *Կոյրք բանային. Ճ. Ա.: *Բանին դրունք երկնից: Բանին գերեզմանք: Դպրութիք հրաշից բանին. Շար.: *Բանի ածընկալ աւետարանն. Մաշտ.: *Բացեալ լինէին դրունք. Յհ. իմ. Երև.: *Որովք փակեալն բանանի. Նիւս. երգ. (կամ է սխալ գրչի. փոխանակ գրելոյ՝ բանի. կամ որպէս լինի և գնիլ, գնանիլ.)

Նմանութբ և ոճով ասի. *Եբաց ած զաչս նորա. Ծն. իա. 19: *Եւ բացան աչք նորա (յն. վերահայեցան). ա. Թգ. ծդ. 27: *Բացան աչք նորա, և սփոփեցաւ. Մէկն. ղևտ.:

ԲԱՆԱՄԱՐՏ, ի, ից. ա. Բանակռիւ. վիճօղ, և վիճողական. *Հանդիպելով 'ի դուպարս բանամարտից՝ ըմբերանեցեա. Պիտ.: *Զանօգուտ քննութիս, և զբանամարտ հակառակութիւնս. յն. մի բառ. բանամարտութի. Ոսկ. յհ. ա. 5:

ԲԱՆԱՑԵՂՑ. ա. Ծոփ բանիւ. առլցեալ ներբողենիւ. *Գեղեցկացուցանէք ըղ բանայեղց նուագարանաց գովութեան մե-

րոյ . Թէոդոր . 'ի խաչն :

ԲԱՆԱՑԻՆ , յնոյ , ոց . Տ . ԲԱՆԱԳԱՆ . *Մարդն բանայինն՝ պատուով պատկերին արարչականին . Գնձ :

ԲԱՆԱՆԱՄ , ացայ . չ . Բան լինել կամ ձեռնալ . *Որպէս ձայն բանանայ , և բան գրի 'ի քարտ և 'ի մագաղաթ : Տառք ձայնանան և բանանան . Վրդն . ծն : յորմէ և Ոսկեփոր :

ԲԱՆԱՇՈՒՐՋ . ա . Որ շրջէ և փոխէ զբան իւր , կամ շրջի և փոխի 'ի բանից . խօսք եփ դարձեալ խօսելն դարձեալ . *Մատնիչ եղեր , և սուտ , և խորհրդափոխ , և բանաշուրջ երեւցար հրէից . Զքր . կը :

ԲԱՆԱՊԱՃՈՅՃ . ա . Բանիւ պաճուճեալ . պերճաբան . պանծալի , և պանծացեալ 'ի բանս . *Մի ոմն յիշխանացն զինուոր բանապաճոյճ , եւն . Նիւս . Բնութ : *Որ այժմս բանապաճոյճ , խրոխտաձայն , ամբարտաւան . Նար . կգ : *Ոչ բանապաճոյճ մտացածին ինչ վէպս մեզ յարմարել . Ցհ . կը : *Բանապաճոյճ խոհականութեամբ արհեստապէս ճարտասանելով . Պիտ :

ԲԱՆԱՊԱՏԿԱՌԻԼ . չ . Իբր Պատկառել 'ի բանից . *Մովսէս պզտիկեալ երեսօք խօսէր ցնոսա . որ և 'ի պայծառութենէ երեսացն բանապատկառիւր . Թէոփիլ . գհ :

ԲԱՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ . գ . Պատմութիւն և մեկնութիւն բանից . Ճառ . *Արդարև անբիծ է նորին բանապատմութիւնն . Կլիմաք :

ԲԱՆԱՍԷՐ . սիրի . րաց . ա . Λογοφιλής , φιλόλογος . Eloquentiae , vel litterarum studiosus , litteratus , doctus . Սիրող բանից . ուսումնասէր . իմաստասէր . գրագէտ . բանակիրկիր . և իմաստակ . Ւիճ տես՝ մտ , Գաճիկ . *Ուսանել և 'ի բանասէր արանց յաղագս զանազանութեան օգտոց . Ա . ծէ : *Զգուշի բանից իմաստակաց՝ մոլէս բանասէր զնա գիտէ գոլ , բայց իմաստուն և ոչ միով իրօք . Փիլ . այլաբ : *Քաջք բանասիրաց . Արշ . Է : *Կրսեր բանասիրաց . Նար . յիշ : *Ուսումնաւորաց և բանասիրաց . Սարգ . յկ . ա : *Զի դուք բանասէր էք , գիտեմ եւ . Վրք հց . ծէ :

ԲԱՆԱՍԻՐԱԲԱՐ . ա . Բանասիրութեամբ . ուսումնասիրաբար . մտադրութեամբ . *Բանասիրաբար ընթերցիր (ով հրէայ՝ զմարգարէս) . Գրիգ . ծն :

ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ . գ . Φιλολογία . Philologia , litterarum studium . Ուսումնասիրութիւն . փոյթ բանից և գրոց . *Բանասիրութեան , և քննութեան իմաստից . Վրդն . զեփ :

ԲԱՆԱՍՏԵՂԾ , ի , ից կամ աց . ա . Ποιητής . Poëta , vates . Սահեղծաբան . բանահիւս . մանաւանդ քերթող . և յն . Հայնիւ , պոէտէս , պուէտիկոս . (այսինքն արարող , կերտող՝ իմն տաղաչափական բանից .) շայիր , շաղի , հոգէր . *Զբանաստեղծս , զձայնագիրս . Եւս . քր . ա : *Նիւթ բանաստեղծիցն՝ սուտ է . Գրգ . ւէ : *Մի ինչ ազգս զառաջնոցն զբանաստեղծացն պատմութիւն . Նիւս . կուս : *Զբանաստեղծից սխտուորաբար մնալն . Դիոն . Եղբ : *Դժուարին պատուածովք ըստ բանաստեղծացն ասել . Ածրու . Է : *Զոմն արգեք 'ի բանաստեղծաց պատրուակեալ ընդմտանելիս . Գր . տղ . Եղբ :

Եւ Μυθοποιός . Fabularum fictor , scriptor . Առասպելաբանիչ . առակախօս . *Եսով պր բանաստեղծ 'ի գեղջկացուոց ստարակեցոյ . Եւս . քր . Է :

Եւ Բանիբուն . զրպարտող . Ճարտարաբան . քաջ մատենագիր . (կամ թէ քերթող՝ ըստ տնղ) . *կարգէ արտաքս զվերջոյր հազարապետա՝ զայր իմաստուն և բանաստեղծ . Խոր . Է . 50 : *Նախ քան զմեզ քաջք և բանաստեղծք , արք հոյակապք և զարմանալիք զարժանի բան պատմութեան արձանագրեցին . Ցհ . կը :

ԲԱՆԱՍՏԵՂԾ (բան) . } ա . Բանաստեղծութեան յօրինեալ . բանահիւսական . քերթողական .
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ . } Ճարտարահնար . և Մտացածին . սուտ . *Այլ և Ճառս եւ ինքնախօս բանաստեղծս յարդարեալ՝ զմոլորեցուցիչս չար գործոյ . Ցհ . կը : *Բոլորովին 'ի բանաստեղծականն հրաժարել պատմութեանց . Պիտ :

ԲԱՆԱՍՏԵՂԾԵԼ . ն . Բանաստեղծանել . քերթուածս յօրինել . *Զօրութեամբ բազկի չարագրական բանաստեղծեալ բաժանեմ . Մագ . ԽԲ :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ . գ . Ποίησις , ποίημα . Poësis , poëma . Քերթողութիւն , քերթուած . շիր . շիար . Իւն արուզ . *Տաղաչափութիւն , որ և բանաստեղծութիւն ասի . Երզն . քեր :

Այլ առաւել՝ Յօրինուած ճարտար բանից յոր և է կարգի . բանահիւսութիւն . ինքնախօս բան վայելչապաշտար . սուտ բանութիւն . *Ի բանաստեղծութիւն փութոյ . Մագ : *Որք զվայելչութեան բանաստեղծութիւն : Ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց : Մոլորականն բանաստեղծութիւն . Նար . խը . խէ . ղգ : *Սիրելի է ինձ նորագոյնս ասել բանաստեղծութիւնս , և ոչ յայլմէ առասպելեանցն պատմել . Մագ . Է :

ԲԱՆԱՎԱՃԱՌ . ա . Λογέμπορος , λογοπώλος . Verborum venditor . Որ վաճառական լինի բանին այ , կամ զբանս իւր վաճառէ իմաստակութեամբ . *Զգուշաբաղին , և որք կամիցին յուցանել զանձինս . հետաքննիչք , բանավաճառք . Մխ . տօ : *Բանտաւորքն , և բանավաճառք . Փիլ . լին : *Շաղփաղփելով բանավաճառ լինիք 'ի բամբասել զարդարն . Վանակ . յոբ :

ԲԱՆԱՎՃԱՐ . ա . Որ վճարէ զբան՝ ասելով և բերելով զլուր . լրաբեր . *Զի հրեշտակական , և բանավճար . և տզդող համբաւեալ էր ազատն . Վրդն . ծն :

ԲԱՆԱՏԵՂ . գ . Իբր Տեղի խօսակցութեան . *Իսկ միաբանքն յաւելուին զգործս բանաստեղծացն թէոգուլայ . Ոսկեփոր :

ԲԱՆԱՏՈՒ , ի . ա . Տուիչն բանի և բանականութեան . *Զապարաւոն բարին առ բանատուն և ստեղծիչն գարձուցանել . Երզն . լս : *Որ է նոյն ինքն բան՝ բանատու բերան ունողաց . Ցիւ . ոոկ . յհ :

ԲԱՆԱՐԱՆԱԿԱԼ , ի , աց . ա . Ունող կամ կրող զբանարան , իմն զբանակ՝ ըստ որում տախտակ գատաստանաց . *Նարտթ և աբիութ , քահանայք վակասաւորք . բանարանակալքն , և մանեկաւորքն . Մծբ . ձբ . (ուր 'ի լտ . վրիպակաւ թարգմանեալ է՝ փակակալ , ունող բանալեաց :)

ԲԱՆԱՐԱՐ , ի , աց . ա . Արարող բանից , որպէս բանաստեղծ . քերթող . Ποιητής . Poëta . *Որքան միագամ ինչ բանարարացն գովեաց յարմարագոյն . Առաքել . Է :

Եւ Առենախօս . քարոզատու . Ճառաբան . *Ոչ եթէ հասուցաք 'ի ժողովս , որ գիւրին է բանարարաց . Իգն . վերՁ :

ԲԱՆԱՐԱՐ . Կամակատար , կամարար . հնազանդ , որ առնէ զբան հրամայողին . Ὑπήκοος . Morigerus . *Հաւանեալք նմա բանարարք , որք նմին գասու կարգեալք են . Փիլ . Ճ . բան :

ԲԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ . գ . Բանաստեղծութիւն . չարագրութիւն , և Ճարտարաբանութիւն . *Տղայք գոլով արհեստի բանարարութեան . Լմբ . էկեղ : *Առընկալեալ ծնօղս (մայրն սամփսոնի) զծնիցելոյն բանարարութի : Իբրև զարուեստագէտ զբանարարութի մանկանն 'ի հասարակ ժողովրդեանն փրկութիւն ընդունի . Փիլ . սամփս :

ԲԱՆԱՒՈՐ , ի , աց . ա . գ . Λογικός . Rationalis , et intellectualis . Բանական . տրամաբանող . մտաւոր . իմացական և խօսուն . *Մարդ է կենդանի բանաւոր : Ընդհեւս բանաւոր կենդանի՝ մարդ 'ի հաղոյ . Սահմ . Գ : Շար : *Ոչ կարասցէ ոք ասել , թէ բանաւոր եմ , և անբան . Կիւրղ . գանձ : *Զխորդ ոչ գիտէր զբարի և զչար՝ բանաւոր գոլով բնութե , և ազատ խորհրդովք . Ածր . Դ : *Աներևութական եկեղեցի , անբանն 'ի բանաւորէն կառուցեալ , մեծ է քան ըզմարդ . առաւել քան զբանաւոր , գերազանց քան զմտաւոր . Նար . ԼԷ :

Ասի և զհրեշտակաց , որք չեն տրամաբանող , այլ ունակք գերագոյն բանի յիմացական կարգի . *Հոգիք մտաւորք և բանաւորք : Բանաւորաց՝ հոգեղինաց , և մարմնաւորաց . Ագաթ : *Զայն տեսցուք , թէ բնաւ գուցէն այլ ինչ արարածք բանաւորք՝ քան զհրեշտակս , և զդևս , և զմարդիկ . Եզնիկ : *Հրեշտակք ամենայն և մարդիկ՝ բանաւոր էութիւնք են . Մագ . 'ի տէառն : *Ի փրկութի բանաւորաց՝ հրեշտակաց և մարդկան . Շար :

ԲԱՆԱՒՈՐ . իբր Բանիբուն . մտացի . հանճարեղ . Ճարտարաբան . ազնիւ . *Այր ոմն իմաստասէր և բանաւոր . Վրք հց . ծէ : *Թէ և ամենայն իսկ որք իմաստնագոյն բանաւորացն 'ի մի վայր ժողովեսցին . Պիտ : *Զոչխարին քան զհովիւս՝ բանաւորս արարեր . Փարպ : *Խորին բանաւորքն և պերճացեալքն 'ի Ճարտարութե լեզուոյ . Լմբ . ող :

ԲԱՆԱՒՈՐ . խօսուն . բարբառող նիւթապէս . *Զանբանն (զէշն բաղաամու) բանաւոր կացոյց , և զանարժանն մարգարէութե պատուեաց . Սարգ . յակ :

ԲԱՆԱՒՈՐ . խօսական . որ ինչ բանիւ լոկով վճարի . *Իմաստութե տեսակ կրկին է . է որ երկրաւոր է և բանաւոր , որ ճարտասանութեան իմանի , և է որ հոգեւոր է , և գործով ճանաչի . Սարգ . յկ . Ե :

Կամ Որ ինչ հայի 'ի բանս այ , կամ 'ի քարոզութի . *Բանաւոր անձրևաւն պարարեցաւ արօտից երկիրս մեղէն անապատացեալ մարդկան . Ագաթ : *Եթէ զբանաւոր հացն սիրես ուտել . Լմբ . ծգ . (որ հայի և 'ի յաջորդ նշ) :

ԲԱՆԱՒՈՐ . Բանաւորական . իմանալի . հոգեւոր . շնչաւոր . բանական . *Հովուեն հօտից բանաւոր ոչխարաց . Ագաթ . *Բանաւոր հօտ , գառինք : Ողջակէզք բանաւորք . ժմ : Շար : Խոր . հռիփս : *Բանաւոր պատարագ , պաշտօն : Երկիր բանաւոր : Բանաւոր դրախտ : Բանաւոր բուրաստան . Շար : Խոր . հռիփս : *Սահման բանաւոր : Փայտ բանաւոր : Տիգմն բանաւոր : Բանաւոր մոխրոյս . Նար :

ԲԱՆԱՒՈՐԱԳՈՅՆ . ա . Իբր Մտաւորագոյն . Նրբամիտ . գիտնաւոր . *Որք թանձրագոյնքն էին , նշանքն ձգէին զնոսա . և որք բանաւորագոյնքն էին , մարգարէութիւնքն . Ոսկ . յհ . ա . 23 :

ԲԱՆԱՒՈՐԱԿԱՆ , ի , աց . ա . Λογικός , κή , κόν . Rationalis , le . Սեպհական բանաւորաց . որ ինչ է ըստ բանաւորութե .

տրամաբանական. իմանալի. մտաւոր. բանաւոր. բանական. *Ի բանաւորականէն, և յանասուն մասնէն 'ի մի գոյացեալք. Փիլ. Բագն: *Բանաւորական արհեստս առաջարկութիւն հնգիւքս այսոքիւք կատարի. դիտաւորութ, հարազատութ, ևն. Մագ. Թէր: *Հոգւոյն հօտից բանաւորականաց: Բանաւորական քարինք, կամ յարկ, կմ թեզան. Նար. հէ. հէ. ղզ. Ծֆբ: *Հրեշտակք են առաւել քան զմեզ բանաւորականս: Բանաւորականն փրկութիւն և մերոյս, և գերագունիցն քան զմեզ էութեանց. Դիոն. Երկն. Բ: Եկեղ. Ե:

ԲԱՆԱԻՈՐԱՊԷՍ. Տ. ԲԱՆԱԿԱՆԱՊԷՍ. *Բանաւորապէս տեսանել և լսել, և բանիւ ինչ առնել. Փիլ. Լին: *Ոչ այս բանաւորապէս նմա շարժիլ 'ի հոգևորական ջանսն. Նեղոս: *Որ բանաւորապէս հնազանդի, յամենայն առուր ուրախանայ. Կլիմաք: *Բանաւորապէս գործել զքարին: Բանաւորապէս որոշեսցուք ըզմեծն և զփոքրն 'ի միմեանց. Լմբ. Ծղ. Ա Եկեղ:

ԲԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Λογιότης. Rationalitas, ևն. *կենդանեաց անմասն գոլ 'ի բանաւորութէ. Փիլ. Լին: *Ի պատկեր իւր արար զնա. մի՝ վասն իմաստութեն, բանաւորութեն, կենդանութեն, հոգևոր շնչոյն... Զկենդանական շունչն իմաստակիր մտաւորութ, բանաւորութ. Ագաթ: *Ամ է ազբիւր ամենայն բանաւորութեան. Եզնիկ: *Պատճառ կենդանութե, առիթ բանաւորութե. Նար. ՅԳ:

Կամ որպէս թանձրացեալ. *Անմիմանս հանդունակից բանաւորութեց. Նար. ԾԵ:

Մերթ՝ որպէս իմաստութի. խոհեմութի. գիտութի. հմտութի. մտաւորութի. և Բան ներքին. միտք. խելամուտ, և խելք. *Ի սատոյգ հոգեշահ բանաւորութիս առաջնորդեա. Փարպ: *Իմանալի հայեցողութ, և խորհրդական բանաւորութեամբ. Լմբ. պտրգ: *Անձավայելուչ բանաւորութիւն. Դիոն. Երկն. Ե: *Ըստ զմարմինս զդայաբանօք բանաւորութե. Եփր. Ծն: *Խնայեմ 'ի բանաւորութենդ: Առասպելախօս բանաւորութի. Ճ. Ա: *Ասեն իմաստունքն յունաց զխոհականութիւնն գոլ բանաւորութի: Զարդ ականջաց լսողաց անախտ բանաւորութե. Վրդն. Ծն:

ԲԱՆԱՓՈՓՈԽ. Տ. ԲԱՆԱԾՈՒՐՋ. *փափկակեացս, բանափոփոխս, շնորհամաձայնս. Ոսկիփոր:

ԲԱՆԱՔԱՂ, ի, աց կամ ից. ա. Որ քաղէ կցկտուր բանս 'ի կարկատել զանտի կարծիս, ևն. բանակրկիտ. բանորսակ. *Ո՞վ բանաքաղ մարկիոն, որ զմին լսէ, և զմիւսն ստգտանէ. Եզնիկ: *(Կախարդք) բանաքաղ լինին յաւետարանէն քմի, և 'ի ներքս խառնեն գրով. Նոննոս: *Մարդահաճոյք, բանաքաղք. Մծբ. ԾԻ:

ԲԱՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ. Գ. Քննութի բանից. խնդիր. վէճ՝ դժուարին. *Այսպիսիս (սր անձն՝) բանաքննութբ 'ի մարմնոյն բաժանեցաւ. Կլիմաք:

ԲԱՆԲԱՍԱՆՔ. ԲԱՆԲԱՍԵԼ. Տ. ԲԱՄԲԱՍԱՆՔ, ևն:

ԲԱՆԲԵՐ, ի, ից կամ ից. ա. Գ. Բանաբեր. լրաբեր. պատգամաւոր. *Ոչ գոյր նորա մեզ գնել բանբերին: Բանբեր անգամ ոչ առաքեր. Բուզ. Դ. 5: Ե. 37:

ԲԱՆԳ, կմ ԲԱՆԿ. Գ. Ὑοσκύαμος. (այսինքն խոզի բակլայ.) Hyoscyamus. Անուն խոտոյ, և սերման նորա. գանի օ-բաս, պէնճ, պէնկիլիւ. օպյոն: Գաղիան: խոկ 'ի Բժշկարանի, Աղուեշ բանկ:

ԲԱՆԳԻՏ. Տ. ԲԱՆԱԳԷՏ:

ԲԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ. Գ. գրի և ԲԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. Գիտութի բանից. բանաւոր գիտութի. հմտութի. որպէս և ՎԵՐՆԱՑԻՆ ԲԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ՝ է Աստուածաբանութի. *Ոչ բաւականանամ իմով աղքատիմաստ բանգիտութբ զսորայս բացայայտել զքաջ ներբողականին: Զմեծս զայս բանգիտութե ընթանալ առաջարկէք: Երանելին մաշտոց (երկրորդ) ուսումնական բանգիտութեն քաջահմտագոյն. Ասող. Գ. 12: Դ. 2. և 8: *Վերնային բանգիտութե տեղեկութի: Վերին բանգիտութե արուեստն: փոխանակ վերնային բանագիտութե. ևն. Փիլ. Լին. Գ. 43:

Ըփոթի և ընդ ԲԱՆԳՑՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՆԱԳՑՈՒԹԻՒՆ. Ուսուցանեմք մեք՝ ոչ 'ի բանգիտութէ, այլ 'ի գրոց սրց. Կոչ. ԺԷ:

ԲԱՆԳԿՆ. Տ. ԲԱՆԿՆ. և ԲԱՆԻԿ, բանկունք:

ԲԱՆԴ, ի, ից. Տ. ԲԱՆՏ, և զածանցս նորին. (զի զկնի Ն տառի Տ մեղմ հնչի որպէս Դ. մինչ զի և երբեմն փոխանակ գրելոյ՝ բանտ քո, կամ բանդ քո, ոմանք գրեն բանըդ. բանտ:)

ԲԱՆԴԱԳՈՒՇԱՆ. մանունդ }
ԲԱՆԴԱԳՈՒՇԱՆՔ, նաց. } Գ. Նոյն ընդ յն. ֆանդազիա. Φαντασία, λήρημα, τερατολογία, τερατεία. Imaginatio, hallucinatio, delirium, prodigiosum verbum, monstrum. Ցնորք. պատիր և շաղփաղփ բանք. այլանդակ զրոյցք մտացածինք, կամ ծնունդք երևակայութեան. հրէշք. լաֆ, խէյալ, հէւէս. *Թուէր իմն բանդագուշան իրն և ոչ այլ ինչ. Մեկն. Ղուկ: *Եթէ առաւելքն ըստ նոցա բանդագուշանացն ածք լիցին. Եզնիկ: *Զայսպիսի զձեր բանդագուշանաց բանս լսել. Փարպ: *Թուեցեալս գոլ բազմաց բանդագուշանս: Լի անհաւանելեօք և առեղծական բանդագուշանօք. Դիոն. Եկղ. Ը:

ԲԱՆԴԱԳՈՒՇԱՑՈՒՑԱՆԵՄ. } Ցնո-
ԲԱՆԴԱԳՈՒՇԵՄ, եցի. Ն. } րեցուցանել. տատանեցուցանել զմիտս. պատրել. պակուցանել. շաշկրթել. շաշկրթ. *Պատրողական բանիւք բանդագուշացուցանէր պատգամաւորօք զատրվշնասպ. Փարպ: *Մի բանդագուշեսցէ զքեզ երկիւղիցն ստատմունքն. Մագ:

ԲԱՆԴԱԳՈՒՇԵՄ, չեալ. Լ. Տես ԲԱՆԴԱԳՈՒՇԻՄ. *Մոլորեցուցիչքն այլ ընդ այլոյ իմն բանդագուշեն. Ոսկ. Գաղ: (որ լինի և իբր բարբառել ցնորս:)

ԲԱՆԴԱԳՈՒՇԻՄ, եցայ. Յ. Φαντάζομαι, πλάνομαι, ևն. Imaginor, erro, deliro, ևն. Ցնորիլ. երևութանալ. երազել. յայլոց խելս լինել. կապիլ ուշոյ. ապշիլ. ընդվայր յածիլ. թափառիլ. տատանիլ. վարանիլ. յիմարիլ. մոլորիլ. մոլիլ. տայըֆլանմագ, խեյալլանմագ, հէւէս էթմէք. *Իբրև զայն՝ որ երկնիցէ, բանդագուշի սիրտն. Սիր. լդ. 6: Մինչդեռ առողջ էք մտօք, և չճանաչէք զայլ աւետարան, մի ուրեք բանդագուշիք: Այսր անդր հայիցի բանդագուշեալ, և զվայրօք զաչսն յածիցէ. Ոսկ. Գաղ: Ա Տ. ա. 19: *Խորանօք և գիւթօք վարին, և սուտ երազօք պատրեալ բանդագուշին. Մանդ. Իզ: *Առասպելական բանիւք բանդագուշեալք. Եզնիկ: *Զանմիտ և զխստասակար բանս բանդագուշեալ թագաւորին ձերոյ. Փարպ: *Որդիք անառակ ծնողօք բանդագուշեցան. Պիտ: *Այսպէս շամբուշ խորհրդով բանդագուշեն. Ցհ. Իմ. Երև: *Որպէս կոյրք այսր անդր բանդագուշին. Լծ. Կոչ: *Յամառեալ բանդագուշիս յագահութէ, յանառակ արբեցութենէ, ևն. Եփր. Թղ: *Զատահական, որ բանդագուշեալ շրջին, և ինչ ոչ գործեն: Զդատարկսն և զբանդագուշեալս. Եփր. Ա. Բէա:

ԲԱՆԴԱԽԱՌՆ. ա. ('ի պ. պէնտ, այսինքն կապ.) Կապակցեալ. բարեյարմար. դաշնակաւոր. ...., փէյվէնդլի. *Խօսիմք նուագարանիւք քո. և արդ մի աղի պակասեաց. ժրագոյն զբանդախառն երգարանս, զի մի և այլ թերասցի. Թէոփ. 'ի Խ Ղ:

ԲԱՆԴԱԿ, ոյ, ով. Գ. Բառ ամկ. որպէս Հիւթ մզեալ 'ի պտղոց, և եփմամբ թանձրացուցեալ. Ճուրուպ. *Խաղողոյ խնծորի բանդակով, և թթու նռան բանդակով, ևն. Մխ. Բժ. ուրեք. ուր գրի և ԲԱԴԱԿ:

ԲԱՆԴԱԿԱԼ, ԲԱՆԴԱԿԱՆ, ԲԱՆԴԱՐԳԵԼ, ևն. Տես ԲԱՆՏԱԿԱԼ, և զորս զկնի:

ԲԱՆԴԵՄ, որ և ԲԱՆՏԵՄ, եցի. Ն. Ի բանտ արկանել. փակել 'ի կապարանի. և Արգելուլ ուրեք իբրև 'ի բանտի կամ 'ի դիպահոջ. որպէս իտ. Carcerare. հապս էթմէք, գընտանա գօմագ. *Բանդեցին զմեծն ստմփոսն: Բանդեաց զյափշտակողն. Եփր. Բաղմ: *Տեսցուք զբանդեալն ո. յն. զ'ի բանտին. Ոսկ. յհ: *Զլուսաւոր արեգակն 'ի խաւարի արկեալ բանդեցաք. Ոսկ. լս: *Զորս վիրաւորէր, կափէր, բանդէր. Ղ. ա. զ. ՃՂ: *Բանդեաց զնա յամուր մախանոյ: Զաղքատս և զտնարս զրկէ և բանդէ. Լմբ. պտրգ. և առակ: *Յայլ տունս բանդեցան մարքն. Մագ: *Բանդէր ըզհոգիսն. Վրդն. Օր: *Բանդեաց 'ի կոր կիտին (զյունան). Երզն. Մտթ:

ԲԱՆԴԻՈՆ կմ ԲԱՆԴԵՈՆ, գաւ. Տ. ՓԱՆԴԻՈՆ, և ԲԱՄԲԻՈՆ. *Փուքքն հնչիւն հանեն 'ի փողի և 'ի բանդաւն: Բերանն որպէս բանդիւն. Ոսկիփոր: խոկ Հին Բռ. *Կիթառն, փանդիռն ո:

ԲԱՆԴՈԿ. Տ. ԳԱՆԴՈԿ. *Բանդոկ պատրաստեալ, ըզհիւրս ընկալեալ. վանք սովաւ չինի, բանդոկ իջևանի. Գնձ:

ԲԱՆԵԱՐ. Իբր Բանք հակառակուէ. կագ, կռիւ. խօսք խօքաթը. գավկա, նիզա. *Զծառայսն զովսայ, որ զբանեարսն սիրէին. Եփր. Ծն: Տես և ԲԱՆ, ԲԱՆԵՐ կամ ԲԱՆԵԱՐ:

ԲԱՆԵՂ, ի, աց. ա. Λογάς, ἐλλόγιμος. Eloquens, disertus. Կորովաբան. իմաստաբան. քաջախօս. Ճոխաբան. Ճարտարախօս. խօսուն. փէլտօղ, ֆասիհ, էհլի քէլամ. *Ի ձեռն բանեղ կնոջն զարթոյց յավուր զկամս գաւթի. Նխ. Ե. ԲԳ: *Հեթանոսացն իմաստունք և բանեղք: Բանն ոյ յինքն քարշէր զմեծամեծս և զտանկս, զբանեղս և զծանրալեզուս. Պարոյ. ԼԲ. Ա ՅԵա: *Թէ զսա սիրես, լինիս բանեղ. Կրպփ. ոփ: *Զանբանն՝ բանեղս արար (որպէս զէշն բաղաամու). Նար. յՃէտ:

ԲԱՆԵՂԷՆ, ղինի, նաց. ա. Λογικός, κή, κόν. Rationalis, ևն. Բանաւորական. բանաւոր, բանական. խօսուն, խօսական. *Բանեղէն պատարագ, կմ մաղթանք, կմ գաւազան. Վրդն. ող. և Եկ: Տօնակ: *Նորկեա՛ զերանգս իմաստից բանեղէն գեղոց. Երզն. լա: *Յարդարեալ բանեղէն բաղկօք զհանդիսաւորս զայս ջահ. Վրդն. Դրգ:

ԲԱՆԵՐՈՂ. Իբր Բանակռիւ. կռուասէր. *Զծառայսն զովսայ զբանեռողս և զկագարողս մերժեաց ստուգութեան և ընկեաց 'ի մէջ սոդոմացւոց որ զբանեարսն

մտրէին. Եփր. ծն։

ԲԱՆԸՆԴԴԻՄ. ա. Ընդդիմախօս. դէմ խօսող. *Եթէ ոք յոյժ անմիտ իցէ, չկարէ բանընդդէմ լինել, թէ չիցէ այնպէս. Ոսկ. ես։

ԲԱՆԻԲՈՒՆ, բունք. ա. Ῥήτωρ. Rhetor. կորովաբան. պերճաբան. ճարտարաբան. ճարտասան. ըստ յն. հռետոր. խօսօղ ոք. զօրաւոր բանիւ, և խելամուտ ամենայն բանի. իմաստակ ... *Իմաստունք և ճարտարախօսք, և բանիբունք։ Բանիբունք և իմաստունք և փիլիսոփայք. Ոսկ. մ. ա. 8. 24. 27. և եփես. խա։ *Անգէն յառաջեալոցն ժամանակս յորոյց մծ քարոզս բանիբունս՝ ճարտարախօսս։ Ապողոս՝ բանիբուն և զօրաւոր գրովք և մօք, և բանիբուն մեկնութբ. Սեբեր. դ։ *Փիղոն աղեքսանդրացի այր բանիբուն ճանաչէր. Եւս. եր. է։ *Երանելին ապաւինեալ այր բանիբուն գիտութեամբ, և լի ամենայն հրահանգիւ. Փարպ։ *Զնոյն անուանս դնէ Ջրհորոցն, զոր հայրն եդ. զի բանիբուն հայրն կոչեաց, շատացաւ և նա. Փիլ. լին։

ԲԱՆԻԿ. բանկունք. գ. Λογίδιον. Oratiuncula, fabella. Բան գուզնաքեայ և չնչին, անպիտան, և մտացածին. Տես և ԲԱՆԳՆ. *Մեկնիչ քաջ չէղէ, դէթ բանիկ ասէի. Երզն. փեր։ *(Հերետիկոսք) բանկունս ինչ շարադրեալ՝ ասել յանդըգնեցան զայս ինչ. Գրիգոր. լէ։

ԲԱՆԻՄԱՍՏ. ա. Իբր Բանիմաց. իմացող կամ իմացուցիչ բանից. *Բանիմաստ խօսարանք. Ագաթ։

ԲԱՆԻՋՈՅՑ. Տ. ԲԱՆԻԲՈՒՆ. *Ըահատակարար ծաղկեցուցանել զբանիջոյց կոռովմեան մերոյ արգասիս. Թէոդոր. ՚ի խաչն։

ԲԱՆԿԱՅ. ա. Որ բանք ընդունելի են առաջի այլոց. ... *Սեսինոս՝ տիբերի հազարապետ, որ յոյժ բանկայ էր արքային, միանգամայն զազգն հրէից կորուսանել խնդրէր. Եւս. եր. բ։

ԲԱՆԿՆ, կամ ԲԱՆԳՆ, բանկունք. (որ և է յոքն. բառիս Բանիկ.) Διήγημα. Narratio. Անպիտան բան. զրոյց անբարի. առասպել. ստայօդ պատմութիւն. *Ծաղիկ, և երազ, և բանգն, և առասպելք. Ոսկ. եբր. բ։ *Պարտ է 'ի սկիզբն ընդ խօսել ազգին՝ ոչ թողուլ ուսանել նմա բանկն, և պիղծ զրոյց, և հանելուկ. Բրս. մրկ։

ԲԱՆԿՆԱՐԿԵԼ. ն. Μυθεύω. Fabulosa narro, fabulor. Առասպելս արկանել. առասպելել. *Զոր պոսիդոնի և լիբայ որդի լեալ բանկնարկեն. Եւս. եր. ա։

ԲԱՆՀՈԳ, ի, աց. գ. Բառ ռմկ. որպէս Բան հոգացօղ. հոգաբարձու. գործակալ մշակութեն. *Պարտ է բանհոգաց երկրին և գաւառացն ճանաչել և իմանալ փոփոխումն եղանակաց. Վրդ. ծ. ծբ։

ԲԱՆՁԱՌ. ա. Բառ ռմկ. իբրու Ցիրուցան կամ Ըիթ առ չիթ. ... *Երբ 'ի վերայ պուտկի կամ ... երբ 'ի վերայ կրակի լինի, զկրակն ... զանձառ մարդկատապէս յեղուլ, ... է անձրևի. Վրդ. ծդ։

ԲԱՆՈՐՍԱԿ, } ի, աց. ա. Որսօղ բանից այլոց առ ստգտանելոյ, բանաքաղ. բանակրկիտ. բանագողակ. պարսաւասէր. *Բանորսակքն և բանվաճառքն։ Իմաստակքն և բանորսակքն. Փիլ. լին։ *Մի 'ի վերայ վաղեսցեն պարսաւասցելոցս՝ բանորսակացն դրժութիւնք. Ցհ. իմ. պղուղ։ *Հացկատակք, բանորսողք, խաբեբայք, շողակրատք. Փարպ։
ԲԱՆՈՐՍՈՂ,

ԲԱՐԵՓՈՐՁՈՒԹԻՒՆ. գ. Փորձ և ընտիր գտանիլն. լաւութիւն. *Որ երկաքանչիւրոց աջողական իցէ, զկատարապէս բարեփորձութեան առցէ գովեստ. Մեկն. ղեփ։

ԲԱՐԵՔ, ի. կամ ԲԱՐԵՔԻ, քւոյ. քւոց. ա. որ և ԲԱՐԵՔԻԿ. Բարուոք, կամ բարիոք. բարի. լաւ. ընտիր. *Եթէ որդիք ուրուք իցեն յառի, և նա ցանկացի այլոյ որդւոց բարեքւոց հայր անուանել. Ոսկ. յհ. ա. 12. ըստ հին ձեռ. իսկ 'ի նորն բարե ոց. և 'ի տպ. բարեաց։

ԲԱՐԵՔԱՁԵՒ, ի, աց կամ ից. ա. Որ ունի բարուոք ձև. բարեձև. գեղեցիկ, բարետեսիլ. *Որոց և դիպեցին բարեքաձևոց տարերց. Յհ. իմ. պաւղ։

ԲԱՐԵՔԱՐՇԿԱՊԷՍ. մ. Բառ անյայտ. թերևս՝ որպէս բարեկրօնութեամբ. օրինօք. պարկեշտ կարգօք. 'ի պ. ֆէւհ. կէտ. *Պայծառագոյն հանդերձիւք զվախճանեալսն 'ի մէնջ բարեքաշկապէս զարդարանօք պատեմք. Պիտ. (ուր 'ի մի ձ. էր մեկնաբար գրի՝ բարեպաշտապէս։)

ԲԱՐԵՔԵՄ, եցի. ն. Բարիոք պաճուճել, սեթևեթել. պատրուակել. տառագաստել. *Ցուցանց մատենագիրք կամ քաղդէացիք զախտն բարեքեն, (այսինքն զնարուգտոնոտրայ պատուժիլն)... և ած անուանեն զմոլորութիւն՝ որ եմուտ 'ի նա. Եփր. ԺԲ. ա։ *Ոչ եթէ անուամբք բարեքօղք եղեն խոստացեալ երանութիւնքն, այլ՝ առնելեաց երանութեանցն. Եփր. համաձոէ։

ԲԱՐԵՔԻԿ. ա. գ. Ի բառէս Բարեք, երրու բարուոք կամ բարուոքիկ. ըստ յն. պայծառ. պայծառագոյն. λαμπρότερος. ոդէկոէ, լաւէէ, խէէէ. եյիծէ. *Եթէ որ 'ի քահանայից հանդերձիւք ինչ բարեքիկ զգանիցի. Ոսկ. ֆիլէպ։ *Եւ զայր վարդապետ՝ եթէ տեսանեն՝ որ 'ի կերակուրս ինչ մտարերիցէ, և բարեքիկ հանդերձիւք զգանիցի... բամբասանն. Սրգ. յովհ. Ծ. րսփ։

ԲԱՐԻ". Այսպէս գրեն ոմանք 'ի դըպրաց զնախակարգեալ բառաքարգեալս առվորաբար ըստ ուղիղ կանոնի ԲԱՐԵ". ('ի բարի, բարեաւ, բարեաց.) օրինակի վասն սոսա զնեմք զբանի մի բառս, որովք լիցի զուգիցի գտանել գրագրոց։

ԲԱՐԻԱԶԳԻ. Տես ԲԱՐԻԱԶԳԻ. և 'ի բառն ԲԱՐԵԶԳԵԱՑ. *Այր քաջ և բարեազգի. Սոկր։

ԲԱՐԻԴՐՈՒԱՏԵԼԻ. ա. Յոյժ գովելի. երկնաւ երանելի. բարեյիշատակ. *Բարեգրուատելին գրիգոր. Թէոդոր. նաշրգ։

ԲԱՐԻԶԲՕՍՈՒԹԻՒՆ. գ. Պարապումն 'ի բարի բարւոյ զբօսանս կամ զբաղանս. *Որ զամենեցուն անձինս շարժէր 'ի բարեզբօսութիւն առաքինութեան. Սոկր։

ԲԱՐԻԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ. գ. որ և ԲԱՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ. Մատուցիւր և սիրով ընդունելութիւն. *Եւ արդ գրեմ ձերում բարեընկալութեանդ զճշմարիտն զոր լուայ. Աթ. անփ։

ԲԱՐԻԺԱՄԱՆԱԿ. ա. Բարեխառն ըստ եղանակի օդոց կամ գրից. հաւէֆար. *Շինեալ քաղաք բարեժամանակ՝ 'ի մէջ ծովուն և ձեռագործ ըշխի կառուցեալ. Խոր. Գ. 62։

ԲԱՐԻԿԱՄԵՆԱՄ. Տ. ԲԱՐԵԿԱՄԱՆԱԼ, ԲԱՐԵԿԱՄԻԼ. *Եկեալք 'ի ծանօթութիւն որդւոցն նորա՝ բարեկամեցան. Ճ. Բ։

ԲԱՐԻՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ. գ. Εὐτολμία. Confidentia. Գեղեցիկ յանդգնութիւն, կամ գովելի համարձակութիւն. քաջ վստահութիւն առաքինեաց. *Հետևեալ լինի արիութեան բարեյանդգնութիւն. Արիստ. առաք։

ԲԱՐԻՅՈՐԴԱՐ, կամ ԲԱՐԵՅՈՐԴՈՐ. ա. Ի լաւ անդր յորդորիչ, կամ յորդորեալ. մատղիւր. յօժար. *Ամենայն բարեյորդոր կամօք կայր. Վրք. հց. ծէ։

ԲԱՐԵՅՈՐԴՈՐՈՒԹԻՒՆ. գ. Յորդորումն 'ի բարիս. յօժարութիւն և սէր բարւոյ. փոյթ. ջան. *Զգաստ և հլու յամենայն բարեյորդորութիւնս. Կանոն։

ԲԱՐԻՊԱՐԳԵՒՈՒԹԻՒՆ. գ. Պարգևումն բարեաց. առատաձեռնութիւն. և պարգևք բարիք. *Քո անծախ բարեպարգևութեամբ զրուանք՝ են քո սիրոյդ առ մեզ յարձակումն. Խոսր։

ԲԱՐԻՏԵՍԱԿ. Տ. ԲԱՐԵՏԵՍԱԿ. *Աչեղ, ալեխառն, բարետեսակ. Հ = Յ. տպր. ծէ։

ԲԱՐԻՏԵՍՈՒԹԻՒՆ. Տես ԲԱՐԵՏԵՍՈՒԹԻՒՆ։

ԲԱՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՐԻԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ. *Այսպիսի է արտաքոյ բանաւորութիւն, ձեռով բարընկալութեան զնէ զըրօգայթն. Ոսկ. գծ։

ԲԱՐԺԱԿ. Տ. ԲԱԺԱԿ. Վրք. հց. ժ։

ԲԱՐԺԱՆԱԿՈՒԹԻՒՆ. գ. Տ. ԲԱԺԱՆՈՒՄՆ. *Այլև ոչ ըստ չարորդին բարժանականն՝ եղելութեան օրինակն. Խոր։

ԲԱՐԺԱՆԵԼ, ել. Տ. ԲԱԺԱՆԵԼ. *Առ նոր երրորդութեան բարժանիլ անբարժանաբար, և միաւորիլ որոշմամբ. արդ բարժանի ըստ դիմաց, և միաւորի ըստ բնութեան. Խոսրովիկ։

ԲԱՐԺԱՆՈՂ. Որպէս Բաժանեալ կամ

բաժանելի. *Փառք հօրն այն երկնից 'ի հօրէ, և յորդւոյ ոչ բաժանելին, և խնամակալին հօր և որդւոյ. Ցիշոփ. Եփր. Գծ. փիլ:

ԲԱՐԺԱՆՈՂՈՒԹԻՒՆ. գ. Բաժանողութիւն. բաժանումն.։ *Զգոյշ էր փոխել և զանուն, և ոչ կոչել հայրապետի, այլ բաժանողութեան. Լմբ. պտրգ:

ԲԱՐԺԱՆՈՒՄՆ. Տես ԲԱԺԱՆՈՒՄՆ. *կենաց և համբարձելոյն բաժանմանն. Մաշտ:

ԲԱՐԻ, բւոյ, բեաց. ա. և գ. Ἀγαθός, θή, θόν. Bonus, na, num. Լաւ. ազնիւ. պատուական. գովելի. սիրելի. բաղձալի ըստ ինքեան (ոք, կամ ինչ). աղէկ. էյի, ալա մարղուպ. (առնս. չօրա, ընտիր, ազնիւ). Տ. և ԲԱՐՈՒԹԻՒՆ: *Չիք ոք բարի, բայց մի Աստուած: Այր բարի և անձնեայ: Մարդ բարի 'ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս: Աղբիւր ծառայ բարի և հաւատարիմ: Ծառ կամ պտուղ կամ երկիր կամ մշակ բարի: Գործեա բարիս: Տուրք բարիք: Էր գործովք բարեօք: Զգործս բարեաց. կմ Զյիշատակ մեր բարեաց. (յն. բարի): Գիտել զբարի կամ զչար: Խոտորեա 'ի չարէ, և արա զբարի: Բանս բարիս: Չէ բարի բանդ: Չէ ինձ բարի: Ուղիղ և բարի ես դու յայս իմ: Ինձ մերձենալ առ Աստուած բարի է: Արա որ ինչ բարի թուի առաջի աչաց քոց: Տէր որ ինչ բարի է առաջի իւր, ինքն արասցէ: Ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց: Զչարս և զբարիս: Ժողովեցին զբարի բարին (այսինքն զլաւսն) յամանս, և զխոտանն 'ի բաց ընկեցին. ևն: 'Ի բարութենէ ոք բարի կոչի, և 'ի չարութենէ չար. Եղնիկ: *Որ բարին էր, նոյն և չարաց. Եղիշ. Է: (որպէս թէ բարի՝ բէկ լծ. ընդ Բարք, փարելի, բերրի, արի. ևն: *Բարիքն՝ որպէս թուի ինձ, բարիք են թուեցեալ յամենայն տեղ, և դառնելիքն՝ դառնելիք. Գրիգ. մծնղ:

կամ որպէս յն. Καλός, λή, λόν. (լծ. գեղեցիկ. աղուոր. կիւզէլ.) Գեղեցիկ. հաճոյական. ընտիր. բաղձալի, և այլոց օգտակար. *Ետես Աստ զլոյսն, զի բարի է: Որթ մի մատաղ և բարի: Ուտել բարի էր տեսլեամբ: Դիմօք ինչ, և բարի հասակաւ: Նշանս բարի եղև ինձ: Գործ մի բարի գործեաց զա յիս: Բազում գործս բարիս ցուցի ձեզ: Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ. ևն: *Երկեաւս 'ի բարի չքոյ անտի փառաց հրեշտակին. Եփր. համաբ: *Տուր ինձ ընդ բարի զգեստ կանչոյս այսօրիկ. Եփր. ծնող: 'Բարի՝ որում ամենեքեան ցանկան. Ոսկէփ: 'Մարդոյ բնութի՝ բարեաց ցանկացող է, և ոչ չարեաց. Եղնիկ:

կամ Լաւ, բարւոք. որպէս յն. Εὖ, εὖ. էյի, էյիս, խոյր. *Բարի լիցի ինձ կմ մեզ: Բարի լինիցի քեզ և որդւոց քոց յետ քո: Բարի արարից կամ արասցուք քեզ: Աւետիս բարիս առնէին վասն նորա: Մի յանցուցէք բարի առնել կարօտելոց: Բարիս արարէք, չար արարէք. ևն: *Ոչ անեղեաց բանաւորութիւնք զբարին և զխաղաղութեանն գոր. ծեն. Փիլ. այլաբ: *Յոր ինչ ոք ձեռն արկանիցէ, բարի և կարեւոր գործոյ ակեաք իւրոց ... Կիւրղ. ծն:

ԲԱՐԻ. գ. } Բարութիւն, բարեգործութիւն. բարերարութիւնն. իրք
ԲԱՐԻՔ. } բարիք. աղէկլուք, աղէկ շէյլէր. էյլիք, խայր, քէր. *Զինչ բարի գործեցից: Բարւոյ արժանի լինել: Որ գործէ զբարի: Մի հայցել բարին ձեր: Բարի արարէք առաջ. Ամենայնի: Ընդ ամենայնի ամենայն բա-

րեաւ եղէ: Ցոյց բարիս այնոցիկ՝ որ խնդրեն զնա: Բարիս գործել: Ընկալար անդէն զբարիս քո: Զ բարեաց զհետ երթայք: Համբերելոյն բարեաց: Դու հատուցեր ինձ բարիս: Արարեր ինձ բարիս: Որոց բարիս արարեալ՝ յաղագս երկրիս արժանիս եմ: Տէր հատուսցէ նմա բարիս. ևն: *Քանզի բարի եղեն, փոխարէնս հատուցանէ բարերարին. Սեբեր. Է: *Ո՞չ բաւական է բարեաց բարերարին գոհութիւն մատուցանել. Ցճխ. Է: *Որ արժանեացն լինին բարիքն, պարտք է. Խոսր: *Անցեալ որ զինչ և է բարով (այսինքն բարւով, բարեօք). Փարպ:

Եւ իբր Ինչք. գոյք. մալ միւլք. *Փոխանակեցուք զբարին մեր առ նոցա կարիսն. Ցճխ. ժա:

Եւ Ողջութիւն. բարեմանութիւն. բարօրութիւն. յաջողութիւն. խօշլուգ, սէլամէթ բա-խտ. *Ի բարւոջ մերում յիշեալ եղբայր սիրելի. Խոր. Գ. 17: *Որ պարգևեցեր զօրս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել. Ժմ:

ԲԱՐԵԱՒ, կամ ԲԱՐԵՕՔ. որպէս Ողջամբ: Տես 'ի վեր անդր ԲԱՐԵ″. ևն:

ԲԱՐՈՎ. մ. իբր Ողջով, մարդասիրութեամբ. *Ի սկզբանն բարով ինձ ընկալեալ. Ցհ. կը:

ԲԱՐԵՕՔ. Տ. ԲԱՐԻՈՔ կամ ԲԱՐԻՈՔ. *Աստ լինին, որ եղեն յայնմ կոչելոց այնպէս բարեօք. Բուզ. Դ. 6: *Հրամայեաց, զի նոքին կապանօքն երթիցէ 'ի բանտն, մինչև եղիցի առեալ լսել նմա բարեօք. Ճ. Ա: Որ և գրի Բարիւք. Պղատ. օրէն:

ԲԱՐԵԱՑՆ. իբր բարի արանց. (հեշտափառութիւն). τὰ τῶν ἀγαθῶν. *Հաստատուն և միաբանքն՝ ընդ առաքելութեամբ, սիրելեացն (իբր բարեկամաց), և եւս կարի առաւել բարեացն, որոց հոգ խնամոյ է հաճոյ լինել նոյ. Փիլ. իմաստն:

✱ ԲԱՐԻ՛. մ. Բարեաւ. ողջամբ. խօշ գէլդին. *Բարի եկիր Ճանապարհորդ խաղաղութեան. . Բարւոք գտաք զձեզ՝ օթեւանք այս հոգւոյն. Ջէնոբ: *Բարի եկիր որդեակ իմ. Հ=Ց. նոյ. ԻԳ: *Բարի եկիր մեծ որդեակ իմ. Վրք հց. Ի: *Բարի եկեք տեարք աղախնոյք քոյ. Հ. ԿԷ: *Բարի առաջնորդեալ 'ի դէմ եղեալ տեղին. Ցհ. գառն:

ԲԱ՛ՐԻ. չ. որպէս ուխ. քուրէ. պուրէ. այսինքն Գոհեմ. գեթ: Լմբ. պտրգ:

ԲԱՐԻԱԶԳԻ. ա. Εὐγένιος. Nobilis, generosus. որ և ԲԱՐԵԱԶԳԻ. Ազնուազգի. բարեզարմ, ազնուական, և ազնիւ, ընտիր. Տես և 'ի բառն ԲԱՐԵԶԳԵԱՑ: *Պատուական և բարիազգի եմ. Ճ. Ա: *Լաւաւորիւք նորին (որթոյ) բարիազգի և Ճղմորիս այգւոյն հանգիսին (այսինքն զգլ-ամնին). ՍԱ. Է:

ԲԱՐԻԱՆԱԼ, ացայ. չ. Որ և ԲԱՐԵՆԱԼ. Բարի լինել. լաւանալ. աղէկնալ. *Որով խրատել մարդիկ՝ բարիանան. Եղն. ճիշդ: *Միայն ինքն Աստ՝ բարութի. իսկ այլք՝ միայն հաղորդակցութ̃ բարւոյն բարիացեալք ... Որ 'ի պատճառէն է (բարւոյ), բարիանայ. Գրոնղ. աղէ:

ԲԱՐԻԱՆՈՒՆ. ա. Εὐώνυμος. Fausti nominis, clarus. Որոյ անունն է բարի. բարեհամբաւ. անուանի. *Այր պատուաբանալ և բարիանուն. Ճ. Ա: *Իբրև անուան այլ եղանակ բարիանուան, խնդութ̃ ընդունին: Եթէ ընդ բարիանուանն այն զնի ինչ առնես 'ի հանձնելոյն. ևն. Վրք հց. Ճ:

ԲԱՐԻԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ. գ. Բարիանուն գոլն, և բարի կոչելն. որպէս յն. Ἀγαθωνυμία. Bonis nominis adeptio, et appellatio. *Զբոլորեցին զայ յասուած ճառ պարգեւաց յայտնապատմական բարիանուանութեան տեսցուք: Այդ բեր, 'ի վերայ նորին ընկալցուք բանիւ զբարիանունութիւն. Դիոն. ածայ:

ԲԱՐԻԱՇԱՏ. ա. Լի բարեօք կամ արգասեօք. բոլ բէրէքէթ լօփ. պէրէքէթլի. *Երկիր բարիաշատ և անանապատ. Վրդն. օրին:

ԲԱՐԻԱՍԱՑ. Տ. ԲԱՐԵՍԱՑ. *Բարեկամք և բարիասացք հայրապետաց. Մծբ. ծի:

ԲԱՐԻԱՏԵԱՑ. Տ. ԲԱՐԵԱՏԵԱՑ. Μισόκαλος. Osor boni vel honesti. *Բարիատեաց թշնամին. Թէոդոր. խչ: *Բարիատեաց բանսարկուն. ՃՃ: Վրք հց: Լծ. խոչ. (ուր առ. բարեատեաց): *Բարիատեաց, հեգգ, ծոյլ. Եղնիկ: *Բարիատեաց բարուց. Վրդն. ել:

ԲԱՐԻԱՏՈՒՐ. ա. Որպէս Բարետուր, և բարերարական. *Յուցանէ զբարիատուր զերախտապարգև հատուցմունս վասն իւրոյ մարդասիրութեան. Բուզ. Ե. 6:

ԲԱՐԻԱՐԱՐԱԾ. ա. Բարի աստեղծեալ կամ հաստեալ. ստեղծուածք բարի. *Գեղեցիկ և բարիարարած կենդանիքս 'ի հաւականաց միացեալք. Առ:

ԲԱՐԻԱՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Տալ բարիանալ. *Եթէ պատճառն բարիացուցանէ, և որ 'ի պատճառէն է՝ բարիանայ, ապա եղիցի նոյն ինքն բարուն պատճառ. Գրոնղ. ռլէ:

ԲԱՐԻԳԱՒԱՌԵԱՑ. ա. Εὐπατρίδης. Nobilis patriâ, vel genere. Ազնուական՝ գաւառաւ կամ հայրենեօք. *Ծառայն զի ոչ ազատ է, գժուարի. որ ազատութ̃ մնեալ է՝ զի ոչ բարիգաւառեայ (աւազանէ), ևն. Բրս. յուղփ:

ԲԱՐԻԸՆԿԱԼ. ա. Ընկալօղ կմ ընդունարան բարւոյ. *Բարիընկալ առաքինութի. Ճ. Ա:

ԲԱՐԻԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՐԵԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ. *Կոչ 'ի մտերմութեան և բարեխորհրդութե. Ցճխ. Է:

ԲԱՐԻԿԵՆԴԱՆ. Տ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆ:

ԲԱՐԻԿՐԵԱԼ. Տ. ԲԱՐԵԿՐԵԱԼ. *Բարիկրեալ գրդի. Պիտ:

ԲԱՐԻՅԻՇԱՏԱԿ. ա. Εὐμνηστός. Bonae, vel felicis memoriae. որ և ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ. Յիշատակաց արժանի. որոյ գոյ յիշատակ բարի. *Կարէոր համարիմ զբարեյիշատակացն նախապատուել զօրինադրութիւն. Լմբ. պտրգ:

ԲԱՐԻՈՏՆ. ա. Որոյ ոտն՝ այսինքն գալուստն է բարենշան կամ բարեբաստիկ, ուղուրլու այաղլը. *Կարի բարիոտն է, և լաւաբարոյ. Վրք հց. ծԴ:

ԲԱՐԻՈՐԴՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱԶՄԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ. *Աղքատ 'ի մեծատանէ, և անորդի 'ի բարիորդութէ 'ի միում վայրկեան ժամանակի եղեալ. Բրս:

ԲԱՐԻՈՔ. Տ. ԲԱՐԻՈՔ. մ. Καλῶς. Bene. որպէս թէ՝ Բարեօք. կամ Բարւոք. զի գրի և Բարիւք: Լաւ. լաւ ևս. գեղեցիկ. քաղցր. աղէկ. էյի. *Ծանկել բարիոք է: Որպէս և բարիոք թուի քեզ. Տօբ. ԺԷ. 11: Ցուդթ. Գ. 3. *Զայդ բարիոք առնէք. Եղիշ. Ը: *Պատճառք կեղծ և բարիոք կեղծ. Փիլ. բոգն: *Այլ բարիոք պատմեսցեն: Եւ բարիոք կարգաւորեալ. Շ. յո̃ որդի. և Ղիմ:

կամ ա. Καλός. Bonus. Բարի. ընտիր. ազնիւ. *Ապականէ զբարիոք արարածս նոցա. Եղնիկ: *Ոսկի երկիրն այնորիկ բարիք է. ապա ասէր զոյ այլ ոսկի ոչ բարիոք. Փիլ. այլաբ: *Քան զոչ բարիոք ծառս՝ առ-

տօսր գունեղ. Աճառ. աղ.։ * Որ բարիոք վարուք կեցեալ է։ Եւ բարիոք կարգըս աղն֊կեալ. Ցօ՛ սրբ.։ * Զանուանս բարիոքս. Եփր. համաբ։

ԲԱՐԻՈՔԱԳՈՅՆ. որ և ԲԱՐԻՈՔԱԳՈՅՆ. Լաւագոյն. լաւ. ագ. ագղէլ. * Ո՛չ բարիոքա֊գոյն քո Թագաւորութեէդ խորհրին խոր֊հուրդ ››. այսինքն լաւագոյն. Ատծր. ա. 14։

ԲԱՐԻՈՔԱՊԷՍ. Տ. ԲԱՐԻՈՔԱՊԷՍ. * Ոչ բարիոքապէս պատմեսցի. Տօնակ։ * Ա֊ծել յաւարտումն զբարիոքապէս խոր֊հուրդն. Կանոն։

ԲԱՐԻՈՔՈՒԹԻՒՆ. գ. Լաւութիւն. բա֊րեկաւութիւն. * Բարիոքութեն տանն իւրայե֊լի կոչեցաւ այգի ցանկալի. Եփր. համաբ։

ԲԱՐԻՕՐԻՆԱԿ. Տ. ԲԱՐԵՏԵՍԱԿ. * Ո՛ր֊քան բարիօրինակ տեսլեամբ հրեշտակին աղ֊տակս անթառամս. Ճ. Ա։

ԲԱՐԽՐԻՄ, եցայ. չ. ամկ. բախմել. այսինքն Լինել որպէս բախեալ. ցնորիլ. յիմարել. * Ցայսպիսեացս է երբեք և պատ֊րել տկարամտացն, և աստուածոց բարխր֊րել, և կարծել զնա Թագաւոր՝ որպէս զորս տեսանեմք, և տէր՝ իբրև որ առ մեզս են. Վահ. Ե֊ղոթ։

ԲԱՐԿ. ա. եբր. Ὀξύς. Acer, acutus. (Լծորդ ընդ Բարակ, և արմատ Բարկութե). Սուր և կծու ըստ որակի. կարի Թթու. համով. կսկծեցուցիչ և տոչորիչ. կրծող. թեթեւ, սուր, իրր. * Աղ. և բարկ քացախ. Ագաթ։ և ՃՃ. գտէղ։

կամ Դժնդակ. կարի խիստ և սաստիկ. լի բարկութեբ. զայրագին. անագորոյն. եբր. Ὠμός. Crudelis. Δεινός, τραχύς. Acerbus, acer. ֆեքր, տազուզ. * Զոր բարկն անուանեն, գտանի հեզ և հանդարտ. Ոսկ. Յ. ա. 16։ * Լաւ է աշխարհական հան֊դարտ՝ քան զմիայնակեաց բարկ և անզգամ. Եւագր. ծԳ։ * Արբեցողն՝ ցասկոտ և նա֊խանձոտ և բարկ և անմիտ լինի։ Այլ զի ամենեւին զբարկ միտսն յայտ առնիցեմք, վերագրաւն հանդերձ զազանս վայրենիս կոչեմք (զչարս). Ոսկ. Ես։ * Բերանսեցան 'ի բարկ բախման անչափ ալեացն. Յհ. կը։ * Ցամենայն ախտս բարկ և չոյտք են ը մեզ 'ի մարտնչել։ Ծանրատիրտ տասց զգայա֊րանս՝ բարկս և նանրախոհս. Լմբ. ող։ * Բոր֊բոքելով զանն խիստ ու բարկ. Շ. էդեա։

ԲԱՐԿ. Տ. Սաստկապէս. սաստիկ, ուժ֊գին. * Մինչ բարկս բարբառել 'ի խստու֊թե վարէ. Ոսկ. Գղ։ * Ցանկարծակի բարկ ծիծաղելով։ Ամբոխն բարկ ծիծաղեցաւ. (որ է քրքջալ. ֆահֆահ խնտալ). Ճ. Ա։ Ոսկեփոր։

ԲԱՐԿԱԳՈՅՆ. ա. Առաւել բարկ. սաստկագոյն. առաւել բարկացող. * (Ա֊ռիւծ) գազան՝ քան զամենեսեան բարկա֊գոյն է. Ոսկ. Յփբ։

ԲԱՐԿԱՃԱՅԹ. ա. Բարկ ճայթմամբ, սաստիկ ճայթմունս գործող. * Իբրև զկար֊կուտս բարկաճայթս ափռեցան. Նար. յոհէտ։

ԲԱՐԿԱՆԱՄ, ացայ. չ. Ὀργίζομαι, θυμόομαι, ἀγανακτέω, παροξύνομαι. Irascor, indignor, furo, exacerbor. Բարկ և սաստիկ լինել՝ վառմամբ կրից՝ մտնաւանդ 'ի վրէժ անիրաւութեն եղելոյ. ցասնուլ. զայրանալ. սրտմտիլ. զայրագնիլ. զչարիլ. գառանանալ. օրտօղէլ. փարլամագ, էօֆքէլէնմէք, ղոդէղէ կէսմէք, կիւծենմէք. * Բարկա֊ցաւ յակոբ. և կռուէր ընդ լաբանու։ Իբ֊րև լուաւ աէրն նորա, բարկացաւ սրտմը֊տութբ։ Բարկացաւ տէր սրտմտութբ 'ի վերայ մովսէսի։ Բարկանայք, և մի մեղան֊չէք։ Մի բարկասցիս ծառայի քում։ Բար֊կացաւ տէր ողայ, կմ 'ի վերայ ողայ։ Զի մի բարկասցի նա 'ի բարբառ քո։ Բարկա֊ցեալ է սոցա տէր։ Մինչե գիտոյ բար֊կասցիս տէր։ Ի վերայ այսր ամի ո՛չ բարկա֊նայցեմ։ Բարկացեալ էի 'ի վերայ ժողովր֊դեան իմոյ։ Բարկացաւ սրտմտութե իմ 'ի վր նորա. եւն։ * Բարկանալով 'ի բժիշկն. Վրք հց. իզ։ * Այն՝ բարկացեալոյ էր, և այս՝ խրա֊տողի. Մխ. Երեմ։ * Բարկացան նոքա 'ի մէնջ 'ի վէգ եկին ››. այսինքն ոխացան. (ֆիւտիէֆ). ա. Գ. դ. 59։ * Բարկացաւ 'ի նմանէն մինչև յօրն գատաստանին տեառն մերոյ. Եփր. համաբ։

ԲԱՐԿԱՆԱԼ. որպէս Դժուարիլ, դըժ֊կամակիլ, սորջանալ. դճարը գալ. կիւճէն֊մէք, ինճինմէք, էիւշման օլմագ. * Բարկացայ, զի արարի զնոսա։ Եւ լուեալ տեառնն՝ բարկացան 'ի վերայ երկուցն եղբարց։ Սկը֊սան բարկանալ յակոբայ և յովհաննու. և այլն։

ԲԱՐԿԱՆԱԼ. Զայրանալ, ըստ որում սաստկանալ. Տես 'ի բայն ԲԱՐԿԱՑՈՒՑԱ֊ՆԵԼ, ըստ բ նշ։

ԲԱՐԿԱՄԻՐՏ, սրտի. տաց. ա. Ὀξύθυμος, θυμώδης. Iracundus, celer ad iram. որ և ԲԱՐԿԱՑՈՂ ասի. Ունող 'ի սրտի ըղ֊բարկութիւն, ցասմնոտ, ցասկոտ 'ի բնէ, և փոյթ 'ի բարկութիւն. էօֆքէլի, ճէհիլճան, ճիճիկ. * Բարկամիրան գործէ առանց խոր֊հրդոյ։ Մեծամեծքն բարկամիրաք են. գի֊նի մի արբցեն. Առակ. ժԴ. 17։ ԻԱ. 4։ * Բարկամիտ է և Թշնամանող. Ճ. Ա։ * Բարկամիրտ ես, և խիստ առ յանցաւորս. Հ. յնւր. ժԷ։ * Բազում անգամ է տեսա֊նել զգազանս վայրենիս՝ հանդարտացեալս, խսկ զբարկամիրտս ոչ երբեք. Սրգ. յկ. Դ։ * Բազումք 'ի բարկասրտացն եղեն կարի հեզք. Բրս. մրկ։

ԲԱՐԿԱՑԱՅՏ. ա. Ցայտեալ սաստկու֊թբ որպէս բարկութբ. որ ցայտէ ըզսա֊սումն. ահագին, սաստիկ յուզեալ. * Այժմ ծով 'ի բարկացայտ լեռնակուտակ ալեացն զնստեալ վրդովմանց. Խոր. Հրտղ։ * Բար֊կացայտ (կամ բարկացեալ) ալիքն՝ լեռ֊նաձև կուտակին. Ագաթ։

ԲԱՐԿԱՑՈՂ, ի, աց. Բարկացեալն. և որ սակայ բարկանայ. բարկամիրտ. Ὀργίλος, θυμώδης. Iracundus. էօֆքէլի, ճէհիլճան. * Այր բարկացող՝ տգեղ է կերպարանօք։ Մի լինիր ընկեր առն բարկացողի։ Մի բար֊կացող, մի Թշնամանող։ Լաւ իցէ բնակել յանապատի, քան ընդ կնոջ լեզուանւոյ, անզգամի և բարկացողի։ Փրկիչ իմ 'ի Թըշ֊նամեաց իմոց բարկացողաց. եւն։ * Որպէս ըստ սոսա ասին և բարկացօղք ... Ոչ ես ասի բարկացող. Արիստ. որոտ։

ԲԱՐԿԱՑՈՂԱԳՈՅՆ, գունի, իզ. ա. Ὀργιλότερος. Iracundior. Առաւել բար֊կամիրտ. չոք նէզիւրէ. ֆէք ճիճիկ. * Ասող ասին. հիզան, եթէ սրտմտել՝ բարկայո֊ղագոյն ոք է. քանզի ոչ ես ասի բարկա֊ցող, որ յայսպիսում ախտէ բարկացողա֊գոյնն է, այլ յաւէտ կիրք ասին այսպիսիքս. Արիստ. որոտ։

ԲԱՐԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ. գ. Ὀργιλότης. Iracundia. * Ախտ բարկութե. լինելի գիւ֊րաշարժ 'ի բարկութիւն. * Բարկացողութեն է չարութեն ցասմնատեսակին, ըստ որում դիւրաշարժք լինին 'ի ձեռն բարկութե ››. յն. 'ի բարկութիւն. Արիստ. առաք. յորմէ և Լմբ. ող։ * Հարկեցաւ 'ի բարկացողու֊թին, որ է 'ի նման Թունաւորութե կերք։ Զինչ է բարկացողութիւն. եւն. Վրք հց. բ. ԻԴ։ * Մեղք գիւթի բարկութեն է և բարկա֊ցողութիւն. Եփր. բգ։

ԲԱՐԿԱՑԿՈՏ. որ և ՔԱՐԵԱՑԿՈՏ. Տ. ԲԱՐԿԱՑՈՂ. * Դառնամամորձքն բարկա֊ցոտք (կմ բարկացօղք) լինին. Լմբ. առկ։

ԲԱՐԿԱՑՈՒԹԻՒՆ. գ. Բարկացողու֊թիւն, կամ առիթ բարկութեան. * Աղօթք փարիսեցւոյն բարկացութե եղև։ Աղդ 'ի բարկացութե անտի յայտնեաց ժառան֊գեան զու զաղօթս մաքսաւորին. Եփր. համաբ։

ԲԱՐԿԱՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Παροξύνω. Exacerbo. Շարժել 'ի բարկութիւն. զայրացուցանել. գառանացուցանել. օրտօղ֊ըլնէլ. փասպլամագ, էօֆքէլէնտիրմէք. * Ո՛րչափ բարկացուցեր զտէր Ած քո։ Եւ 'ի քորեբ բարկացուցէք զնա։ Մինչև յե՞րբ բարկա֊ցուցանէ զիս ժողովուրդս։ Բարկացոյց նա զԱծ. եւն. Օրին։ Թուոց։ * Բարկացուցեալ և գառանացուցեալ զարարիչն. Ագաթ։ * Վա՜յ, անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բար֊կացուցի. Նար. Է։

Մերթ՝ պարզապէս Բարկ առնել. այ֊սինքն սաստկացուցանել, վառել բորբոքել զկիրս ամենայն, գրգռել զզգայութիւն և զյօժարութի. տղշըլմագ, գըզըշդըրմագ. * Սէր աստուածեղէն բարկացուցանէ և բորբոքե֊ցուցանէ զքեզ ամէ։ Նախանձ թե շա֊խասութեն բարկացուցանէ զքեզ լեզու։ Ծանրասիրտք եղէք, բարկացայք 'ի չար ցանկութիւնս ... այլ զբարկանալ յետ ցանկութեց մեղաց հատէք 'ի ձէնջ զըղ֊ջումն. Լմբ. ող։

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ. գ. Ὀργή (յորմէ Թ. էօֆքէ). Θυμός, χόλος. Ira, indignatio. Բարկանալն. կիրք սրտի վասն ընկալեալ անիրաւութեն հանդերձ բաղձանօք վրէժ֊խնդրութե. ցասումն, զայրոյթ, սրտմտու֊թի. էօֆքէ, փարկինլիկ, խըշմ, ղազէպ. * Բար֊կութիւն՝ ոխք սրտմտութե և յարձակումն բանական առ 'ի զոկելոյն փոխարինութ իբրև 'ի զկծեցելոյ անձին 'ի վրէժ առնուլ. Բրս. էրկ։ * Անցցէ սրտմտութի բարկութե եղբօր քո 'ի քէն։ Դարձաւ 'ի բարկութենէ։ Խօսեսցի ընդ նոսա բարկութբ իւրով։ Մի բարկութբ քով խրատեր զիս։ Բան խիստ յարուցանէ զբարկութի։ Տուրք գաղտնիք դարձուցանեն զբարկութե։ Բարկութի մարդոյ զարդարութի Այ ոչ գործէ։ Գանձես անձին քում բարկութի յաւուր բարկութե. եւն։ * Բարկութիւն՝ բնական ինչ է. և սակայն յանԹակայէ և 'ի կատարմանէ սահմանեսցք զնա՝ ասելով. եթէ Բարկութի է եռանդն զարտեան արեանն՝ առ 'ի անձնչումն փոխա֊րէն արտմեցուցանելոյ. Սահմ. * Է՛ բար֊կութի, որ պարտաւորի է ... և է բար֊կութի՝ որ 'ի վրէժխնդրութիւն յանցաւո֊րաց է. որպէս Այն անբարկանալի բնութե. Սրգ. յկ. Դ։ * Ի ժամուն յայնմիկ 'ի ձեռն ունէր զբարկութեն. Խոր. Գ. 21։ * Ախտ բարկութեն հեզութբ առ ողջանայ. Խոր։ * Արմատ բարկութե՝ ամբարտաւանութի. քանզի բարկութե պատճառք՝ Թշնամանք և անարգանք լինին. Շ. մաղթ։ * Զանոյ յաղթել բարկութբ բարկութե. Վրք հց. բ։ * Բարկութե է չարժումն խռովութե՝ բանիւ վերասլերեալ, խսկ գառանուի՝ զըժ֊նէութի 'ի ներքուստ աղմկեալ 'ի չարեն. Ոսկ. Եփես։

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ. Դնի երբեմն փոխա֊նակ գործոց բարկութեան, պատժոց, կո֊րստեան, ապառնալեաց. ղազէպ. * Մեծ է որ բարկութեան՝ նոցա. Օրին. ԼԲ. 35։ * Բարկութե այ ամայ 'ի վերայ նորա. Յհ. Գ. 36։ * Սրտմտեցաւ վասն բարկութեան ուսանելոց և գանելոց իւրոց. Օրին. ԼԲ. 19։ * Ի բարկութենէ եհեթ աղբեցայ. փոյժ։

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ. կամ ՀՐԱՑԱՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ. Κεραυνός. Fulmen. կայծակն, շանթ երկնից. Եըլտըըըմ, զօրգ, չիմշէք. *Բանուք հրացան բարկութեանցն. Իմ. ծԲ. 12: *Որ կերպանամն կոչէր. այսինքն է բարկութիւն: Գոգամեի բարկութեան (այսինքն կայծակն կոչեցելոյ) զաւանն կապելով զաւարի և զհնչիւն ամպոյ. Եսա. ԻԲ. Խ: *Զձայն ամ, որչափ բարկուէր, քանի փայլատակմանց (արփամնի) գործոյ գործեսցի: Ո՛րչափ բարկութեան չիցեն արժանի այնպիսի իրք: Անժուժելութիւն... եամ և 'ի սաստկ զհրացան բարկութիւն. Ոսկ. մթ:

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ. Բարկ գոլն, սաստկութիւն, գծնդակութիւն. եալըզլըգ. *Բարկութիւն բորբոքեալ բոցոյն. Ցհ. ԿԲ: *Ա. 'ի յառաջ. րել անձանց մերոց 'ի բարկութեան աղեացն. Ճ. Ա:

ԲԱՐՁ, ի.ից. Գ. Προσκεφάλαιον. Cervical, pulvinus, pulvinar. Գորգ լցեալ կակուղ իրօք, և եդեալ 'ի ներքոյ ընդ գլխով 'ի ննջել կամ 'ի հանգչել. որպէս ինչ մի բարձր, կամ բարձող 'ի վեր զգլուխն. եաստըգ, դաւիղ, մինտէր. *Եւ ինքն ննջէր 'ի խելս նաւին՝ 'ի վերայ բարձի. Մրկ. Դ. 38: *Վասն մերոյն աւուրք անարի բարձիցն. Եզեկ. ԺԳ: *Տեսանէ յանուրջս՝ որ բարձ գլխոյն այրեցաւ. Հ = Ց. Փետր. ԻԲ: Տե՛ս և ԲԱՐՁԿՆԵԱՐ:

ԲԱՐՁ. Πρωτοκλισία. Primus in convivio locus. Նստարան բարձր կամ պատուաւոր 'ի կոչունս. բազմոց. գահ. օնփիր, գէրզ. *Մի բազմիցիս յառաջին բարձին. Ղկ. ԺԴ. 8: *Սկսաւ տանել առաջարկին բարձիցն պատուաւորութիւն, զայր այր յիւրաքանչիւր գահ հրամայէր նստուցանել. Փ. Կ. Է. 8: *Ունիմ իշխանութիւն ընդ եղբարս՝ զբարձն արքայի համբուրել. Խոր. Գ. 5Ժ: *Որդւոյն կարմրութիւն գունեկրանց բարձից. Նար. ծԺ. (որ հայի յայլ և այլ նշանակութիւնս):

Նմանութ. Աշտիճան պատուոյ. շուք. պատիւ, աստիճան. փոյէ, մանսապ. *Փոխանակ պատուելոյն անարգանօք, և փոխանակ բարձ աւելոյ և յառաջ ձգելոյ՝ բանտ և կապանք: Մեծ առաւելութիւն բարձի և պատուոյ պարգևս խոստանայր. Ագաթ. *Բարձ և պատիւ. ՃՃ: *Աղատութիւն բարձին: Անհակալեալ բարձի. Ցհ. ԿԲ:

Եւս և նմանութ՝ Աշտիճան կամ նստարան նաւին 'ի վերնակողմանն. օնբ. *Ի բաց առին զաստղաստան, և ըմբին զկեամին, և ըզբարձս նաւին. Ճ. Ա:

ԲԱՐՁ, բարձք. Βάσις. Basis. (ըծ. թ. գոտն.) Խարիսխ եռանկեան և այլոց ձևոց քան երկրաչափից. *Գորունակելով խորանիսից, բարձք ունելով քառն՝ հաւասարակողմ եռանկիւնս եղև: Վեց ամփոփեալ քառանկիւն՝ հաւասարակողմն ունելով բարձք: Երկիր ունի զբարձն հաւասարագոյն. և բարձքն այն է, որ 'ի սկըզբանն եռանկեանցն ներքոյ եդաւ. Պղատ. փիմ:

ԲԱՐՁՔ, բարձից, իւք. Մասունք մարմնոյ 'ի միջոյ և 'ի վայր իբրու կրկին բարձք կամ բարձող զծանրութեան մարմնոյն. որ և Ազդերք. Երանք. և սորին կողմանքն նոյն մինչև 'ի ծունկս և յոլորս կամ 'ի սրունս. դոփ, դալըըը, խալչա, պաճագ. որպէս յն. Σκέλος, μηρός. Femur, femen. *Արարեր նոցա անդրավարտիս կըտաւեայս՝ ծածկել մերկութիւն, և բարձից չափ: Մէջք նորա, և բարձք՝ պղնձիք: 'Ի տալ տեառն զբարձս քո 'ի քայքայումն, և զորովայն քո յուռուցումն: Ոչ խոյսառ

կնօջն զբարձս նորա: Բարձք նոցա՝ բարձք աղուորք: Բազուկք, և բարձք նորա իբրև զանտսփ փայլման պղնձոյ: Եւ ոչ տառանեցան բարձք իւր: Սանդարամեք պղնձիք 'ի վերայ բարձից նորա. եւն: *Ի խարսխաց բարձիցս մինչև ցաւին կառուցման լրութեան ասդամոցս՝ չէ առողջութիւն». այսինքն յոտից մինչև ցգլուխ. Նար. ծԸ: *Արաց բարձք՝ այծից. և եղ ջիւրք 'ի գլուխս. Եսա. ԽԲ:

Անաւոր են հոլովքս. *Զոր ունէր 'ի վերայ բարձուց իւրոց. Ճ. Ա: *Տուր ձեռաց իմոց զզօրութիւն... և բարձանց իմոց զժուժկալութիւն բանաւոր անուացն. Եփր. ծն. փոխ:

ԲԱՐՁԱԲԵԿ ԼԻՆԵԼ. Խորտակիլ բարձից. *Բրդք գալարօք բարձաբեկ լիցի. Ճ. Ա:

ԲԱՐՁԱԲԵԿՈՒԹԻՒՆ. Գ. Σκελιαγὲς. Cruris fractio. Բեկումն, կամ խորտակումն բարձից, ուտի և կաղութիւն. *Ցաւագին բարձաբեկութեան հեփեստեայ». որ էր չնծ կաղ. Նոննոս:

ԲԱՐՁԱԲԵՐՁՈՒԹԻՒՆ. Գ. Առագութիւն բարձի. կամ ամբարձումն 'ի գահ իշխանութեան. *Զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւաստեալ՝ ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն հայոց. մանաւանդ մեծին տրդատայ թագաւորի. Արծր. Դ. 6:

ԲԱՐՁԱԿԻՑ, կցի, ցաց. ա. Գ. Συνανακείμενος, σύνεδρος, κοινωνός. Conviva, consessor, particeps. Բազմեալն ընդ այլս 'ի նմին սեղանի բարձիւք. սեղանակից. հէմ-դէմ, ծէլիս, փօմօգ. *Վասն երդմանցն և բարձակցացն՝ հրամայեաց տալ նմա. Մտթ. ԺԴ. 9: *Ցայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց. Ղկ. ԺԴ. 10: *Զբարձակիցսն 'ի բազմականացն 'ի բաց արուզեաց. Խոր. Բ. 60:

Կամ Աթոռակից, գահակից, կցորդ պատուոյ. *Տէրերիոս զգրուտս՝ բարձակից իշխանութեան արար: Անտոնինոս զկոմոդոս զորդի իւր բարձակից թագաւորութեան արար. Եւս. փր. Բ: *Բարձակից արեգական՝ շարաւուհ արքայից արքայ. Խոր. Գ. 17: *Ցարարելոցս ոչ ոք է բոլորից թագաւորին համաթոռ, և բարձակից. Կիւրղ. գանձ:

ԲԱՐՁԱԿՈՒՐ ԼԻՆԵԼ. Կուրիլ վասն յառաջագահութեան՝ յընթրիս, և յայլ աշտիճանս պատուոյ. *Բարձակուրք լինէին, որ կրկին ախտի էր գուշակ, հպարտութեան՝ միանգամայն և որկրամոլութեան. Երզն. մտթ:

ԲԱՐՁԱԿՐԵՄ, եցի. ն. Ըստանձնել. բարձեալ բերել. *Զամենայն արարածս բարձակրեաց յինքեան (խորհուրդ խաչին). Անան. 'Ի դէպս:

ԲԱՐՁԱԿՑՈՒԹԻՒՆ. Գ. Բարձակիցն գոլ. և ժողով բարձակցաց կամ իշխանակցաց. *Ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութեան իշխանացն հայոց. Արծր. Ը. 5:

ԲԱՐՁԱՁԳՈՒԹԻՒՆ. Գ. Ձգումն կամ բերումն 'ի բարձ և 'ի պատիւ. *Վասն մարտի մղբառման՝ բարձաձգութեան գըլխաւոր իշխանութեան. Մծբ. ԺԲ:

ԲԱՐՁԱՊԱՆ, ի, աց. Գ. Զինուորական պահապանակ կամ զանկապան բարձից. *Զարդարեալ էր ունապանօք և բարձապանօք մորթեղինօք. Պղտ. տղէտս:

ԲԱՐՁԱՌՈՒ ԼԻՆԵԼ. Առնուլ ըզբարձ պատուոյ և իշխանութեան, իբրև գահակից կամ յաջորդ. *Ոչ միմեանց բարձառու լինել միանգամայն, այլ՝ ոմանց տալ, և ոմանց անդ թագաւորել. Եւս. փր. Խ:

ԲԱՐՁԱԽԱՆԴԱԿ. Տ. ԲԱՐՁՐԱԽԱՆԴԱԿ:

ԲԱՐՁԵՐԷՑ. ա. Գահերէց, և գահերիցական. բարձրագահ յընթրիս կամ յիշխանութեան. *Եա քեզ զաւագութիւն, և զբարձերէց անդրն». յն. մի բառ՝ զնախագահութիւն. προεδρία. *Որ էր մի 'ի չորից գահերէց բարձերէց ասպարին ավքածնի. Բուզ. Գ. 9:

ԲԱՐՁԵՐԷՑՔ. Գ. Երէցութիւն 'ի բարձի, կամ 'ի բազմականի. որ և ասի՝ Առաջին բարձ. կամ Գահագլխութիւն. Πρωτοκλισία. Primus in convivio locus. *Սիրեն զբարձերէցս յընթրիս. Ղկ. Ի. 46:

ԲԱՐՁ ԵՒ ԹՈՂ ԱՌՆԵԼ. Տ. ԲԱՐՁԻ ԹՈՂԻ ԱՌՆԵԼ. *Բարձ և թող արասցեն զորդիս վասն առնելոյ. Կանոն:

ԲԱՐՁԸՆՏԻՐ. որի. րաց. ա. Ընտրեալն յառաջին բարձ. նախագահ, գահագլուխ. *Իսկ երանելւոյ... տոհմ արշակունեաց... բարձրընտրաց, գահանշանաց. Նար. մժբ:

ԲԱՐՁԸՆՏԻՐ ԼԻՆԵԼ. Ընտրութիւն առնել բարձի և բարձի 'ի բազմականի. ցանկալ առաջին տեղւոյ. յն. ընտրել զյառաջագահութիւն. *Հայեցեալ թէ զիարդ բարձընտիր լինէին. Ղկ. ԺԴ. 7:

ԲԱՐՁԻ ԹՈՂԻ ԱՌՆԵԼ. որ և ԲԱՐՁ ԵՒ ԹՈՂ ԱՌՆԵԼ. Բառնալ թողուլ. թողուլ լքանել յերեսաց. անտես առնել. *Զծերացեալն մի բարձի թողի առնիցէք. Հ. ընդհ: *Ըն բարձի թողի արար զնոսա՝ երթալ զհետ աստեղց իւրեանց. Մխ. առակ: *Զամենայն կարեորսն թագաւորութեան բարձի թողի առնել. Մաշթն:

ԲԱՐՁԻՁ, ձչի. չաց. ա. Բարձօղ. այն՝ որ բառնայ զոր ինչ և է. *Ոչ միայն բարձիչ յուսոյն չլինին նեղութիւնք, այլ և կազմիչ. Ոսկ. հռ: *Կոյսն ծնաւ զբարձիչն մեղաց. Եփր. համաբ: *Եկեալ է բարձիչն մեղաց. Երզն. մտթ:

ԲԱՐՁԿՆԵԱՐ, ներոյ. Գ. Որպէս թէ բարձիկք. թուշըքներ. յն. բարձք. Προσκεφάλια. Cervicalia. Թերևս՝ որպէս Ազնիւ կամ փոքրիկ բարձք փափուկք. եասթըգ թըշէբ. եաստըգ մինտէր. *Կարեն կարկատեն զբարձկներս 'ի ներքոյ ամենայն արմըկան ձեռին, և առնեն գլխադիրս գլխոյ ամենայն հասակաց: Ահաւասիկ ես 'ի վերայ բարձկներոյդ ձերոյ, յոր դուք ժողովէք զանձինս. և պատառեցից զայդ 'ի բազկաց ձերոց... և պատառեցից զգլխադիրսն ձեր. Եզեկ. ԺԳ. 18. 20:

ԲԱՐՁՈՂՈՒԹԻՒՆ. Գ. Կարողութիւն և ներգործութիւն բառնալոյ. բարձումն, 'ի վերայ իւր բառնալն. *Զբարձողութիւն չինուածոյ մարմնոյս... պատապարեսցես. Նար. ծԷ:

ԲԱՐՁՈՒԱՆԴԱԿ, կամ } Տե՛ս 'ի բառն
ԲԱՐՁՈՒԱԽԱՆԴԱԿ. } ԲԱՐՁՐԱԽԱՆԴԱԿ:

ԲԱՐՁՈՒԵՆԵԱԿ, նեկի. կաց. Գ. Ἀβρότονον (իբրու անմահական). Abrotonum. Էգն կոչի յիտալականն, Abrotono femina. santolina. Բանջար մշտադալար, յորմէ կազմի և գինի. բուրջուէնէէ, բուր-ջէնէ. ղօյուն ճօմ ըլուն չիչէյի, փօյուն օթու, փօյուում: Որձ բարձուենեակն կոչի և ԳՆԴԱԾԱՂԻԿ. սպիտակն ասի և ԿԱՑԾՈՒՍ. և գեղինն՝ ըստ ոմանց ԲՐԻՆՃԱՍՈՒՍ, կամ ԲՈՆՋԱՍ: Գաղիա: Ի Բծ-ջեն:

ԲԱՐՁՈՒՄՆ, ձման, ամբ. Գ. Բառնալն կամ բառնիլն՝ 'ի վեր, կամ 'ի միջոյ. վէրօլընէ, ն վէրօլընէ. *Բարձումն բազկի, ձգումն ձեռին: Բարձումն (այսինքն

բարձիչ) պարանաց, փոխարկիչ կարեաց. Նար. լէ. ղ: *Անխոյթ առնել ծանուցն՝ համանգամայնցն է 'ի բաց բարձումն. Յհ. իմ. ապ: *Բարձումն առ հասարակ յամենեցունց ախտոյ և ամօթոյ. Խոր. գ. 67: *Ճանաչելով զբարձումն քաղ զօրավարացս». այսինքն զկորուստ կամ զմահ. Փարպ: *Զաստանութեամբ աւուրց նկարեն, զանցաւորացս բարձումն գրեն. Նար. ծբ:

'Ի ԲԱՐՁՈՒՍՏ. մ. Ի բարձուէ, 'ի բարձանց, 'ի բարձրութենէ, 'ի վերուստ. Բարըյէն. Էի-ֆոքեքէն. Եբր յն. ὑψόθεν. ex alto, desuper. *Քար ինչ 'ի բարձուստ ուստեք հոլովեալ. Յհ. իմ. եբ:

ԲԱՐՁՈՒՑԱՆԵՄ, ձուցի, ձն. ն. Βαστάζω. Bajulo, tollo. Տալ բառնալ. օգնել 'ի բառնալ. բեռնաւորել. ըստ յն. բառնալ. Բերդնել կամ վերդնել. *Ի մէջ որայոցն քաղիցէ. և մի պատկառեցուցանէք զնա, այլ և բառնալով բարձուսջիք. Հռութ. բ. 16:

ԲԱՐՁՐ, բարձու, 'ի բարձուէ, ձամբ, կամ ձու. բարձունք, ձանց, ձամբք. ա. Ὑψηλός. Altus, elatus, excelsus, sublimis. Ի վեր բարձեալ, ամբարձեալ, վերացեալ. վերին. վերագոյն. Բարըյր. Էի-ֆոքէք. Էի-ձէ, ալի. պալա. 'ի բարդութիւնս լինի բերձ. որպէս պ. պէրզ, պիւրզ, պէրզէկ. *Հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր: Եւ 'ի վերայ լերինդ բարձու: Լերինք բարձունք: Ծածկէր զամենայն լերինս բարձունս: Ի վերայ ամենայն բլրոցն բարձանց: Ցամենայն բլուրս բարձունս: Երկինք բարձունք կամ բարձր, և երկիր խորին կամ խոր: Բարձր են երկինք, խոր են գետինք: Ներհամարեա զամպս, որչափ բարձր են 'ի քէն: Ի վերայ տանց բարձանց: Դրունք նորա բարձունք: Պարիսպք նորա մեծ և բարձր: Առ կաղնեաւն բարձու: Գնա դու յերկիր բարձր: Սեղան զոհից բարձր. ևն: *Ի վերայ աթոռոյ բարձու. Յհ. իմ: *Ի բարձրն գիտանոց. Նար: *Բարձր աստիճան. Յհ. կբ: *Ձիթենի բարձր: Բեմբ բարձր յերկրէ մինչև յերկինս. Փարպ: *Իբր 'ի գագաթանէ յոյժ բարձուէ և ծայրագունէ անկցին 'ի խորխորատ. Սարկ. քհ: *Ուսովք չափ 'ի վեր բարձր էր քան զամենայն երկիրն. ա. Թգ. ի. 2: *Զայր խոժոռագեղ, և բարձր. Խոր:

ԲԱՐՁՐ. որպէս Պերճ. պ. պէրճ. Գերագոյն, վեհ, վսեմ, պանծալի, յաղթօղ. հզօր, երևելի. մեծանուն, շքեղ, պատուական. ևս և Ամբարտաւան. Պ-ֆէլէք, ալիմ, ալիշան. *Բարձր քան զամենայն թագաւորս երկրի: Բարձր է 'ի վերայ ամենայն ազգաց տէր: Բարձր է տէր, զխոնարհս տեսանէ, և զբարձունս 'ի հեռաստանէ ճանաչէ: Աչք տեառն բարձունք են: Որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի այ: Հզօր ձեռամբ, և բարձր բազկաւ: Ձեռն հզօր, և զբազուկ բարձր: Զոտունս զայս զբարձր. (այսինքն շքեղ): Գնացին 'ի բարձր պարանոց (այսինքն ամբարտաւանութեամբ):*Անկցին բարձունքն սրով». այսինքն ամբարտաւանքն. Եզ. ծ. 34: *Շրթունք արդարոց ճանաչեն զբարձունս». այսինքն զբարձր իրս, կամ զխորհուրդս. Առակ: *Որ 'ի բարձրութիւն երկնից՝ բարձր բանիւք բարբառիս. Շար: *Բարձրն եսայեան վասն երուսաղէմի մարգարէանայր. Լաստ: *Բարձր նշանացն: Դնէ սեղան բարձր, և զի ամենայն բարութիւն. Վրք հց. բ: *(Աղքատք հոգւով են) բարբառնեալք յամենեցունց, և առ այ բարձունք. Իգն:

ԲԱՐՁՐ՝ առ ձայնէ, որպէս Մեծաձայն. քաղաղէնչօղ, ստուար, մեծագոչ. ամուր, պինտ. ֆէք, գաբը, պիւլէնտ. *Ի ձայն բարձր աղաղակէր: Կոչել բարձր քարոզութեամբ. ևն: *Բարձր բարբառով. Եղիշ: *Բարձրձայնիւ: Բարձր աղաղակաւ. Նար. լմ. լէ: *Ձայնիւ բարձու. Ճ. Ա:

Կամ մ. *Զարթուցեալ ձայնէր բարձր. Ճ. Ա: *Բարձր որոտալով 'ի վերայ համատոհմիցն». այսինքն խրոխտալով, յոխորտալով. Սրգ. ա. յժ. ը:

ԲԱՐՁՐ. գ. } τὸ Ὑψηλόν, τὰ ὑψηλά, τὸ
ԲԱՐՁՈՒՆՔ. } ὕψος, τὰ ὕψη. Altum, alta; excelsum, sa; altitudo, celsitudo, fastigium, cacumen, vertex. որպէս Բարձր տեղի, կամ բարձրունք. Բարըյր փէր. Դէփէ. *Կամէր ելանել 'ի վեր, և զանձն 'ի բարձուէ ընդ պարիսպն հոսել. բ. Մկ. ժգ. 43: *Բարձր 'ի վերայ բարձու պահէ, և բարձունք 'ի վերայ նոցա. Ժող. է. 7: *Հաստատեցեր զոտս իմ... և 'ի վերայ բարձանց կացուցեր զիս. Սղ. ժէ. 34: *Զարգք արծուեաց 'ի բարձունս թռչին. Յոբ. է. 7: *Կախեցին զնա զբարձուէն կուսէ... և փաղփաղէր մարմին 'ի բարձուէն. Բուզ: *Զբարձունս բարձանցն կառավարէ. Լմբ. ծղ:

ԲԱՐՁՈՒՆՔ. որպէս Բարձրութիւն երկնից. երկինք երկնից. *Սքանչելի ես դու տէր 'ի բարձունս: Եկեսցէ 'ի վերայ ձեր հոգի 'ի բարձանց: Ո՞ է տէր այ մեր՝ որ բնակեալն է 'ի բարձունս: Եւ 'ի բարձունս: Այց արասցէ մեզ արեգակն 'ի բարձանց: Զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց: Փառք 'ի բարձունս այ. ևն: *Ի բարձունս կամ 'ի բարձանցն երկնից: Օրհնեսջիք 'ի բարձունս: Թագաւոր բարձանց: Ի բարձունս կողկողել, կամ տարածանել: Գանձ բարձանց: Թռչունք բարձանց, ևն. Նար. սպէղ: *Ճողոպրելով հարկաւ յառաւօտէն մինչև 'ի բարձունս հասանելոյն արեգական. Պղատ. օրին. ծբ:

ԲԱՐՁՈՒՆՔ ԵՐԿՐԻ. որպէս Բլուրք, լերինք, գագաթունք լերանց, ծառք, ևն. *Սուգ առին բարձունք երկրի: Իջուցեր զբնակիչս բարձանց: Ելանէ 'ի վերայ բարձանց երկրի: Լիբանան բարձամբք իւրովք կործանեսցի: Ցանկաթան 'ի վերայ բարձանց քոց վիրաւոր. ևն:

ԲԱՐՁՈՒՆՔ. որպէս Բարձր սեղանք զոհից, կամ բագինք հրէականք 'ի բլուրս և 'ի լերինս՝ նուիրականք այ, այլ պէսպէս խոտորանօք խառն. որ կոչին և ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ. և ԲԱՄԱ. ըստ եբր. դամա. որ և յն. վէմա, և հյ. Բեմ. *Արկանէին խունկս 'ի վերայ բարձանց... Բայց 'ի բարձունս և նա զոհէր, և արկանէր խունկս: Եւ արար տունս 'ի վերայ բարձանց... և կացոյց քուրմս բարձանցն զոր արար: Շինեցին նոքա իւրեանց բարձունս, և անդրիս 'ի վերայ ամենայն բլրոյ բարձու: Սակայն ըզբարձունսն ոչ եբարձ. ևն: *Մոռացումն առնէ այնակիր բարձանցն կռամոլութեն. Նար. կդ:

ԲԱՐՁՐ ԱՌՆԵԼ. Ὑψόω, ἀνυψόω. Exalto. որպէս Բարձրացուցանել. վերացուցանել. համբառնալ. 'ի վեր առնուլ. *Ո բարձր արարեր զնա 'ի դրանց 'ի մահուանէ: Բարձր առնէ զտառապեալս յաղքատաց: *Ցանկանէ որ յարուցեալ էին 'ի վերայ իմ, բարձր արարեր զիս: Ի վիմէ բարձր արարեր զիս: Բարձր առնել զգլուխ 'ի վերայ թշնամեաց. ևն:

ԲԱՐՁՐ ԱՌՆԵԼ. որպէս Օրհնել, փառաւորել. փառաբանել. ուլուլամագ, Թաղիմ էթմէք. *Բարձր առնեմ զքեզ տէր: Բարձր արասցուք զանուն նորա 'ի միասին: Օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան. և այլն:

ԲԱՐՁՐ ԼԻՆԵԼ. Բարձրանալ. և փառաւորիլ. *Բարձր եղիցի տէր փրկութեան իմոյ: Բարձր լեր տէր 'ի զօրութեան քում: Բարձր եղեց 'ի հեթանոսս, և բարձրացայց 'ի վերայ երկրի. ևն:

ԲԱՐՁՐԱԲԱԶՈՒԿ. ա. մ. Բարձր բազկաւ. հզօր զօրութեամբ. պանծալի փառօք և յաղթութեամբ. *Ամենազօրն, և թագաւոր բարձրաբազուկ 'ի վերայ ամենայն երկրի: Բարձրաբազուկ 'ի վերայ թշնամեաց մեր ճախրեսցուք. Լմբ. պտրգ. և հմբ:

ԲԱՐՁՐԱԲԱՆ. ա. մ. Մեծաբան. և Մեծաբանութեամբ. *Որք համարձակութեամբ խօսին ընդ այնոսիկ՝ որք բարձրաբանս խօսին. Իսիդ:

ԲԱՐՁՐԱԲԱՆԱԿԱՆ, ի, աց. ա. Μετεωρολογικός. In rebus sublimis curiosus. Որ բերի կամ ձգտի 'ի բանս բարձունս. *Բարձրաբանականաց իսկ բերելով սեսութեամբն. Պղատ. փիմ:

ԲԱՐՁՐԱԲԱՆԵԼ. չ. Մեծաբանել. ամբարտաւանս բարբառել. *Բարձրաբանեալ թշնամիք խաչին՝ տեառնն, ահա, ևն. Ճ. փ:

ԲԱՐՁՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ. ա. Որպէս Վսեմաբանութիւն. վսեմ բանք. *(Գրուածութիւնք պղատոնի՝) գեղեցկութեան անուանս, և այլոյ բարձրաբանութեն, քերթողական մեծութեն ոչինչ են ընդհատ. Փիլ. նխ. բ:

ԲԱՐՁՐԱԲԱՐ. մ. Բարձր և վսեմ ոճ. նակաւ. բարձրագոյնս և նրբագոյնս. *Բարձրաբար յաղագս նոցա խնդրել. Անյ. պորֆ:

ԲԱՐՁՐԱԲԱՐԲԱՌ. ա. Μεγαλόφωνος. Altam vocem edens, altiloquus. Մեծաձայն, բարձրագոչ. համարձակաձայն. *Ծառը բարձրաբարբառ. Մծբ. ղ: *Որպէս և տեսէ բարձրաբարբառն եսայիաս. Տօնակ:

մ. Μεγαλοφώνως. Alta voce. Ի ձայն բարձր. բարձր ձայնիւ. գաբը ալըղ իլէ. *Բարձրաբարբառ ընդհանուր աղաղակէին. Ագաթ: *Զզեղխանաց ամբարտաւանութեան իւրոյ բանն՝ բարձրաբարբառ զօրացուցանէր զայրքայն. Յհ. կբ:

ԲԱՐՁՐԱԲԱՐԲԱՌԱԳՈՅՆ. ա. մ. Μεγαλοφωνότερα. Առաւել բարձր ձայնիւ, աճաւոր հնչմամբ. *Եթէ ձայնք՝ որոտմանց (այսինքն քան զորոտմունս) բարձրաբարբառագոյնք ևս գոչիցեն. Կիւ. ղ:

ԲԱՐՁՐԱԲԵՂՈՒՆ. ա. Որ բերք կամ պտուղք են 'ի բարձունս, և գերապանծ. *Բարձրաբեղուն ծառ ողկուզական. Գնձ:

ԲԱՐՁՐԱԲԵՐՁ, ի, աց կամ եց. ա. Որպէս թէ Բարձր և պերճ, և բարձրբարձ. յոյժ բարձր, բարձրակատար, բարձրակառոյց. բարձրացեալ. ամբարձեալ. խիստ Բարըյր. ֆէք Էի-ֆոքէք, Էի-ձէ, ըէֆիա. (յն. պէսպէս). *Առին զքաղաքս բարձրաբերձս. Նեեմ. թ. 25: *Զուռձարն նորա կամին բարձրաբերձ շինել. ա. Եզր. ժ. 18: *Ըզբարձրաբերձ աշտարակն շինէին: Սկսանէին զբարձրաբերձ զբուրգն կանգնել. Եւս. քր. ա: *Փոխանակ բարձրաբերձ և վայելուչ աշտարակին՝ խաչն Ճշմարտութե կանգնեցաւ. Ագաթ: *Բարձրաբերձ ահագին շինուածոց աշտարակս. Խոր. գ. 59: *Բարձրաբերձ պարիսպք. Ագաթ: Փարպ: Սոփ: *Բարձրաբերձ շինուածք, կամ տեղիք շինուածոց: Բլուրք, կամ վայրք մայրեաց. Փարպ: Ագաթ: *Բարձրաբերձ ամբարտակին: Ի բարձրաբերձ տանեաց. Յհ. կբ:

*Բարձրաբերձ քաղաք. Բուզ. աղաւնի: *Բարձրաբերձ գմբեթ. Մագ. Է: *Բարձրաբերձ աշտարակ: Բարձրաբերձ մայրիւք. Նար: *Ի բարձրաբերձանցն (ծիծեռնաց) ա_ նկանէ. Պիտ: *Բարձրաբերձ ամենամեծ 'ի վեր ընծայեցին. Լաստ: *(Ծառք) բարձրա_ բերձք և կարծրաբերձք. Վրդն. ծն:

ԲԱՐՁՐԱԲԵՐՁՈՒԹԻՒՆ. τὸ Ὑψίφορον. Supera petere. Վերամբարձութիւն, յոյժ վերացումն. *Կերպարան արծուին (նշանակէ) զթագաւորականութիւն, և ըզ_ բարձրաբերձութիւն, և զերագաթացութիւն. Դիոն. երկն: և Հ. հրեշ:

ԲԱՐՁՐԱԲՆԱԿ, ի, աց. ա. Որ 'ի բարձր վայրս բնակէ. և Բնակիչ երկնից. *Բարձրաբնակ եղջերու. Նար. յովէ: *Բա_ բերանեալք 'ի բարձրաբնակաց, փառաւո_ րեալք 'ի հողեղինաց. Գնձ:

ԲԱՐՁՐԱԲՈՒՆ. ա. Ունօղ զբարձր բուն կամ զձող. *Խաչափայտ բարձրաբուն. Մաղ:

ԲԱՐՁՐԱԳԱԳԱԹՆ, թան, թունք, թանց. ա. Որոյ գագաթն է բարձր. բար_ ձրակատար. Եիւքսէք Թէփէլի. *Ի բարձրա_ գագաթանց պարագեալ լերանց. Խոր. Ա. 11: *Պատուեալ իմն է բարձրագագաթն ամբողջակատար լերամբք. Յհ. կբ:

ԲԱՐՁՐԱԳԱՀ. ա. Որ բարձր է գահ. գահերէց. նախապատիւ. *Քննեցաւ (սո_ ցա) 'ի բարձրագահ ատենէն". այսինքն 'ի բարձրելոյն. Ագաթ: *Բարձրագահ օրհ_ նութեան եկեղ խոնարհեցութեամբ. Նար. ծթ: *Արք պատուաւորք, ծերք, և բարձրա_ գահք. Արծր: *Բարձրագահ առ գառա_ ցական աթոռն եղեալ. Սկեւռ. աղ: *Ամ և բարձրագահ տրբերահանդիսութեամբ. Գա_ նկ առ ամենայն:

Կմ որպէս Բարձր գահիւք՝ գրիւք. բար_ ձրաբերձ. *Բարձրագահ աշտարակ: Բա_ ղին բարձրագահ. Անան. էկ: *Ելանել 'ի բարձրագահ ծայրն առաքինութեան. Ճ. Ա: *Ի վերայ բարձրագահ գխոանցի ա_ ռաքինութե ելեալ. Սկեւռ. ըմ:

կամ Փերձ. վեհ, վսեմ. բարձրագոյն. *Ողին և յաւէտ բարձրագահ խորհուրդ: Բնակեալ 'ի փառս բարձրագահս. Անան. էկ: *Բարձրագահ իշխանութիւ. Ոսկ:

ԲԱՐՁՐԱԳԱՀԻՔ, ից. գ. որպէս Յառա_ ջագահք, կամ նախաթոռք. այսինքն ա_ ռաջին նստարան, կամ եկեղեցւոյ բարձրագոյն յա_ րկ. Πρωτοκαθεδρία. Prima cathedra, sedes. *Սիրէք զբարձրագահս 'ի ժողո_ վուրդս. Ղկ. ժա. 43: *Կործանեցան բար_ ձրագահք ամբարշտաց նոցա. Եղիշ. Է:

կամ Բարձր տեղի, բեմ, գահանոց. *Զարթուցեալ մարգարէն (յովնան), և 'ի վերայ նորին ոգին եղեալ... 'ի վերուստ 'ի բարձրագահից իմն՝ չարեացն շուրջ եղեալ եսես զպատգամութիւն. Փիլ. յոբ:

ԲԱՐՁՐԱԳԱՀՈՅՔ, ոյից, իւք. գ. Բարձր գահոյք, կամ մահիճք. *Արարաք մեզ բարձրագահոյս առաւել քան զաշ_ խարհս. Եղիշ. Փանյ:

ԲԱՐՁՐԱԴԻՒԱՆ, ի. գ. Բարձր կմ դիւան. երկինք. *Ի ձեռս իմ պա_ րս պահպանի պարգևք ամենայն պաշտօ_ նոյ 'ի բարձրադիւանն. Եփր. պհ:

ԲԱՐՁՐԱԳԵՂ. ա. Բարձր և գեղե_ ցիկ. գեղեցիկս բարձրացեալ. կամ վայելչ_ ալ. *Զբարձրութե տաղաւարթիցն, և ըզ_ բարձրագեղ վայելուչ զրուցաց համբար_ ձման, և զոյլ գեղեցկութեան. Պիտ:

ԲԱՐՁՐԱԳԼՈՒԽ. ա. Բարձր որպէս գլխով. վեհապար, յաւելաբարձր. գերա_ պանծ, վերացեալ, պանծացեալ. *Բարձրա_ գլուխ պարտու մարգարէից մեծն հեզիաս: Որով կատարելապէս բարձրագլուխ էր մեծաւ յաղթութի: Քաջարութեն անուանի հանդէս՝ քան իւնք, քան թէ առաւել բար_ ձրագլուխ լինելով. Պիտ:

Եւ Բարձրացեալ գլխով. պարզերես, աներկիւղ, անվեհեր, արիական. Ճակատը_ բաց, ճէրմակ երես. *Բարձրագլուխ պար_ ծանօք առաւել և զյաղթութեն քաջապէս անուան. Պիտ: *Անպաշտութիւն բարձրա_ գլուխ կամակարութե երևելի լինէր յաշ_ խարհին հայոց. Եղիշ. ա:

ԲԱՐՁՐԱԳԼՈՒԽ, կամ ԲԱՐՁՐԻԳԼՈՒԽ. մ. Որպէս թէ Ի բարձր գլուխ. բարձր գլխով, կամ պարծանօք. *Բարձրա_ գլուխ (կամ բարձրիգլուխ) պարծի ողոր_ մութի առ դատաստանաւ. Յկ. Բ. 13. յն. լոկ պանծանալ. κατακαυχάομαι. *Յոյժ բարձրիգլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւ. Մանդ. Է: *Բարձրի_ գլուխ պարծեսցի: Ողորմութիւն՝ անցեալ կայ բարձրիգլուխ, ոչ ամաչէ, ոչ պատկա_ ռէ: Ըմբշամարտ որք առ մարտօգիրն մա_ տուցեալ բարձրագլուխ զպսակն պահան_ ջէ. Սարգ. յկ. Ղ: *Բարձրագլուխ 'ի մէջ յոգնախումբ կացեալ հրապարակաց. Պիտ: *Յարկեղից պատերազմէն կորակոր, և ոչ բարձրագլուխ էր դարձեալ. Եղիշ. Գ: *Եղև բարձրիգլուխ և յայսմ պատերազ_ միս. Լաստ. իէ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ, գունի, իւ, կմ աւ, ից, կամ աց, իւք կամ օք. ա. Ὑψηλότερος, ὑψηλότατος. Altior, excelsus. Առա_ ւել բարձր (ըստ ամենայն նշ). վերա_ գոյն. վեհագոյն. գերապանծ. գերա_ զանց. *Մին բարձրագոյն էր քան զմիւսն. Դան. Է. 3: *Զի նա՝ առաւել բարձրա_ գոյն և մեծ էր. Գ. Թգ. Գ. 4: *Լերանց բարձրագունից. Խոր. Ա. 10: *Քան զեր_ կինս բարձրագոյն. Հռ: *Որ կատարեալն են սիրով նորա՝ բարձրագոյն են նոքա 'ի պատճառանաց օրինաց. Եփր. էլ: *Բար_ ձրագունից արժանաւոր գովութեց. Խոր. Ա. 1: *Բարձրագոյն քան զամենայն պա_ տիւ. Յհ. կբ: *Բարձրագոյն գոս հրաշից. Անյ. Բարձր: *Բարձրագոյն ազգեցութե, վարդապետութի, առաւելութի, բնութե, ևն: Զբարձրագունյան որոտաց. Ագաթ: *Բարձրագոյն բարբառ, օրհնութիւնք, հա_ ւատացումն, ևն. Կոչւմ: *Ի բարձրագոյն խնդրոյս. Մագ: *Բարձրագոյն խնամս, շնորհս, բարիք, բերք, և այլն. Նար. ...: *Զիարդ է խոնարհ, որ 'ի ծոց էր բարձրա_ գունին հօր. Կիւրղ. գանձ: *Եւ այսպէս բարձրագունին ծանուցաւ խոնարհութի. Յհ. իմ. երկ: *Եւ թէ ևս 'ի բարձրագու_ նացն. Մխ. դպ: *Պատուով բարձրագու_ նաւ: Փառօք բարձրագունիւք. Ճճ: *Լի են խոնարհագունիւք և բարձրագունիւքն. Իգն: *Բարձրագունօքն և հանդերձեալովքն պատկառեցոյց. Ոսկ. մ. ա. 16: *Եւ ոչ թէ առ բարձրագոյն ոք". այսինքն առա_ ւագոյն. Ագաթ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ. մ. Ի բարձր վայրի. կմ համարձակ 'ի ձայն բարձր. կամ խորա_ գոյնս. *Բարձրագոյնս նստեալ քո 'ի հո_ գւոյ քում գատարանի. Մաշ: *Որք բար_ ձրագոյն պատմէին խորոյէլական տոհմին: Բարձրագոյն գոչէին. Ագաթ: *Բարձրա_ գոյն իմն խորհելով. Սահմ. Ճ:

ԲԱՐՁՐԱԳՈՉ. ա. Որ ինչ լինի բարձր գոչմամբ, մեծաձայն. *Եւ բարձրագոչ ձայնիւ գոչէր ոերն 'ի խաչին. Հ. փղ: *Ցեա բարձրագոչ աղաղակի փողարքշո_ ղացն զինի մեծամասնացն՝ գայր հրաւիրակ մահուան. Լմբ. ող:

ԲԱՐՁՐԱԴԻԿԶ. ա. Դիզացեալ 'ի բարձրութե. դիզեալ 'ի բարձունս. *Բարձ_ րադէզ կուտակս յարուցանէ (ծով): Բարձրադէզ փրփուրս խորհրդոց յուզեալ յարուցանէ (փորձութիւն). Սրգ. ա. Գ. Ժ: *Կոխել քաջութեն զբարձրադէզ փըր_ փրուսն. Մաշ:

ԲԱՐՁՐԱԴԻՏ, դիտի. ա. Ի բարձանց դիտող, կամ դիտելի. բարձրադիտակ. *Ի բարձրադէտ սենեկեղ ակնարկեալ. Լմբ. առ ռուբն: *Պայծառ էր երևել 'ի բարձունս ... երբև յուռեքէ բարձրադէտ հովանա_ ւորութէ ամենայն լրութեան ցուցեալ. Եզնկ. խւ:

ԲԱՐՁՐԱԴԻՏԱԿ, ի, աց. ա. և գ. Բարձր դիտակալ, կամ տեսլեամբ. բարձ_ րաբերձ. երևելի (վայր, կամ դիտանոց). *Դնանել 'ի բարձրադիտակ տեղւոջ. Ճ. Ա: *Պարանոցս բարձրադիտակ՝ խոնար_ հեալ. Բենիկ: *Որ ելեր 'ի բարձրադիտակ (վայր, կամ 'ի բարձր դիտանոց) քառա_ թևին. Ըստ: *Խաչն կանգնեցաւ 'ի բարձ_ րադիտակն գողգոթայ. Տօնակ:

ԲԱՐՁՐԱԹԵՒ, ի. ա. Բարձր թևօք կամ բազկօք. *Ո՞վ խաչ բարձրաթև. Եզնկ. խւ:

ԲԱՐՁՐԱԹԻՌ. ա. Որ բարձր թռանի. բարձրաթռիչ. *Ո՞վ որ զբարձրաթիռ ար_ ծիւն 'ի խոնարհ սուզել լինէր ձեռնհաս. Արծր. Գ. 12:

ԲԱՐՁՐԱԹՌԻՉ. ա. Ὑψηλοπέτης, ὑψιπέτης. Altivolus, altivolans. որ և ԲԱՐՁ_ ՐԱԹԻՌ. Որ թռչի 'ի բարձունս, կամ 'ի բարձանց, իրօք կամ նմանութբ. Եիւքսէք ուչար, պիւլէնտ փէրվազ. *Արծուի բարձ_ րաթռիչ. Մխ. դպ: և Նեղոս: *Զբարձրա_ թռիչ թևսն անընչութե. Վրք հց. Ա: *Ո՞ր_ պիսի բարձրաթռիչ արար զհողեղէն և զծանր բնութիւնս. Սարգ. յկ. Է: *Բարձ_ րաթռիչ եղեալ՝ եկին առ նա. Վրք հց. ժԲ: *Անուանեցաւ արծուի՝ վասն բարձ_ րաթռիչ տեսութեն. Տօնակ: *Անգա_ դար և բարձրաթռիչ մշտաշարժութեանն (սերովբէից). Դիոն. երկն: Իսկ Եղիշ. Ա. *Ահա վերաբերեմք առ քեզ՝ ճախրելով, իբրև 'ի բարձրաթռիչս եղեալ". իմա, որ_ պէս բարձրաթռիչ (թռչուն) լինելով:

ԲԱՐՁՐԱԹՌՉՈՒԹԻՒՆ. գ. Բարձր թռչելն. բարձր թռիչք. բարձրաթռիչն գոլ. *Զինչ գործէ աղաւնոյ բարձրա_ թռչութեն 'ի մէջ այնչափ բազէից խոշ_ ճանկելոց. Երզն. մթ: *Աստուածնչի գե_ ղեցկութբ, և տեսական բարձրաթռչութբ. Տօնակ:

ԲԱՐՁՐԱԼԵՐԻՆՔ. ա. Ուր իցեն լե_ րինք բարձունք. *(Արար) զհիւսիս անօ_ րահաս, և բարձրալերինս. Հանձ. առկ. յոգ_ մէ և Վանակ. յոբ. *Զհիւսիս անօրահաս և բարձրալերինս":

ԲԱՐՁՐԱԽԱՌՆ. ա. Որ ինչ իցէ զուգ_ ընդ բարձրութե, անմեկնելի 'ի բարձրու_ թէ. ըստ այսմ մարգարէութիւն բանին տյ կոչի, *Բարձրախառն խոնարհումն. Ագաթ:

ԲԱՐՁՐԱԽՈՒՄԲ. Տ. ԵՐԿՆԱԽՈՒՄԲ. *Պարագրեալ ընդ վերաբերական մանկցն՝ բարձրախմբիցն. Նանայ:

ԲԱՐՁՐԱԾԱՅՐ, ի, ից. ա. Ὑψοπέτηλος. Altus, procerus. Որոյ ծայրն է բարձր յոյժ. բարձրագագաթն, բարձրա_ բերձ. *Ծառք բարձրածայրք. Գրձ. աչէփ:

ԲԱՐՁՐԱԾԱՅՐԵԱԼ. Համբեալ 'ի ծայր կամ 'ի ծագ բարձրութե. *Առ ամ_ բարձումն հրեշտակացն բարձրածայրեալ. Խոր. Հրեշ:

ԲԱՐՁՐԱԾԱՅՐՈՒԹԻՒՆ. գ. Վերագոյն ամբարձումն. գերագոյն բարձրութիւն. *Քոյով բարձրածայրութեամբ ծառալեալ սփռեցան շնորհօք սուրբ հոգւոյն. Անան. եէ։

ԲԱՐՁՐԱԾՆՈՒԹԻՒՆ. գ. Ծննդիլն, այսինքն բուսանիլն տնկոց 'ի վեր կոյս. *Տնկոց վերահանգիտանալ հասակ առեղն բարձրածնութեամբ. Մագ։

ԲԱՐՁՐԱԿԻԱԼ. ա. Որ կալեալ ունիցի զբարձրունս. գերատիրման. *Պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք, և բարձրակալ կատարման հասանողք. Բուզ. Դ. 6. և ճճ։

ԲԱՐՁՐԱԿԱՑ, ի,ից. ա. Որ կայ 'ի բարձրունս, կամ 'ի բարձր կայս. բարձրաբերձ. *Ի բանական և 'ի հոգևոր բնութիւն զատեալ որոշեցան բարձրակայ վայրիւք. Մագ։

ԲԱՐՁՐԱԿԱՆ, ի, աց. ա. Որ բարձրանայ, կամ է բարձրացեալ. և Բարձրաթռիչ գոյն. *Փառաց 'ի փառս բարձրական. Գնձ։ *Ձ՞ինչ կամիցի արդեօք նշանակել մեզ թեգն. բայց եթէ զվերնականն, և զբարձրականն, և զթեթևականն. Ոսկ. եա։

ԲԱՐՁՐԱԿԱՌ. ա. Իբր Բարձրակառք, բազմեալ 'ի բարձր կառս. կամ Բարձրակառոյց. *Աթոռ հրեղէն բարձրակառ. Գնձ։

ԲԱՐՁՐԱԿԱՌՈՅՑ. ա. Ի բարձունս կառուցեալ. բարձրաբերձ. *Պատուեցաւ քեզ արարատեան՝ բարձրակառոյցն մասիք (կամ մասսիւք). Երզն. լա։

ԲԱՐՁՐԱԿԱՏԱՐ. ա. Որոյ բարձր է կատար, բարձրածայր. բարձրաբերձ. *Բարձրակատար (կամ բերձակատար) պարիսպ. Պիտ։

ԲԱՐՁՐԱԿՈՀԱԿ. ա. Բարձր կոհակօք, բարձրադէզ. վերամբարձ. *Հարկանէին զբարձրակոհակ կոյտս ջուրցն. Լաստ. ԻԳ։ *Ծովն 'ի բարձրակոհակ վրդովմանց լռեալ կայ. Սհկ. կբ. արման։

ԲԱՐՁՐԱԿՈՒՏԱԿ. ա. Իբր Նոյն ընդ վ. կուտակեալ ցբարձրութիւն. *Ծուփ ալէկոծութեան բարձրակուտակ գուալով. Ճ. Ա։

ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ, եցի, ցաց. ա. Հայեցօղ 'ի բարձունս. նկատօղ բարձանց. *Բարձրահայեաց բանական, կամ բանականացս. Վրդն. յանթառան. և Երզն. լա։ *Լուսափայլ և բարձրահայեաց աչաց (առեփաննոսիգ). Տօնակ։ *Բարձրահայեաց և երկնապիշ լինելով երգնուն. Ցհ. իմ. պատլ։

ԲԱՐՁՐԱՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ. գ. Հայելն 'ի բարձունս միօք. նկատելն զերկնաւորս կամ զածայինս. վսեմ և նուրբ խորհուրդ. *Լեառն (կոչի եկեղեցին՝) վասն բարձրահայեցողութեան։ Բեհեզեայ պատմուճանքն նշանակէ զանօսր էութիւննոցա, և զպայծառութիւն, և զբարձրահայեցողութիւն. Լմբ. աղ. և յայտ։

ԲԱՐՁՐԱՀԱՍԱԿ, ի, աց. ա. Ἐυμήκης. Procerus. Բարձր կամ երկայն հասակաւ. պօյլու պօսլու, ուզուն պօյլու. *Աչեղ և բարձրահասակ. Խոր. Ա. 25։ *Հըսկայս բարձրահասակս. Լաստ. ԻԳ։ *Ցեղութեանցն մարդկան՝ զառն կերպարան և բարձրահասակն մարմնակերպութեամբ զգենուն. Տօնակ։ *Արամանեակ բարձրահասակ. Սկեւ. աղ։

ԲԱՐՁՐԱՀՌՉԱԿ. ա. Մեծահռչակ. և Բարձրաձայն. *Բարձրահռչակ (կամ բազմահռչակ) աւետաւորութեամբ... գրեն. Նար. առաք։ *Բարձրահռչակ աղաղակաւ սոխակս զմեզ օրհնել. Լմբ. աղ։

ԲԱՐՁՐԱՁԱՂԿ. ա. Որոյ բարձր են ծաղիկք, այսինքն ոստք, գագաթունք. ամբարձուղեշ, բարձրոստեան. *Կաղնի բարձրածաղկ աճեցեալ (յն. 'ի բարձունս ծըգեալ)։ Բարձրածաղկ իբրև զկաղնիս. Ոսկ. ղէ։ Սրգ. յոգ. Ե։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ. ա. Մեծաձայն. բարձրագոչ. *Եւ աւէ յուզիւթ բարձրաձայն բարբառով. յն. ձայնիւ մեծաւ. Ցուցբ. ԺԳ. 17։ *Եւ զայն ցուցանէր բարձրաձայն աղաղակաւ յայտ յանդիման առաջի ամենեցուն. Ագաթ։

Տ. Ի ձայն բարձր. դիւլէնտ աճագլը. *Բարձրաձայն հնչել. Ագաթ։ Լմբ. աղ։ *Սկսաւ ասել բարձրաձայն. Վրք հց. Ե։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵՄ, եցի. ն. չ. Ի ձայն բարձր գոչել. համարձակ քարոզել՝ հաչակել. *Քարոզեմք զանօրէնութիւնս, բարձրաձայնեմք զխոնարհութեան։ Բարձրաձայնեալ քարոզէին ընդհանուր տիեզերաց, խաչեցելոյն երկրպագել. Գնձ։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ. գ. Բարձրաձայնելն. և Բարձր բարբառ. դիւլէնտ աճագ, սէտա. *Փոխադրէ բարձրաձայնութեամբ ընդ փոքուն զմեծն. Ղ. Բղբ։ *Ընդ բարձրաձայնութեան մեծին գրիգորի. Կանոն։ *Ի բարձրաձայնութենէ լալեացն արձագանգ լերինն զհետ հնչէին։ Բարձրաձայնութեամբ 'ի վերայ պարսպացն զանձ աղաչէին. Լաստ. ԺԱ. ԾԴ։ *Անպատշաճ բարձրաձայնութեան ('ի խօսս). Լմբ. կանոն բէնէդ։ *Իւրով բարձրաձայնութեամբ (իբրև զառաւորակ,) ևն. Կիւրղ. ղկ։

ԲԱՐՁՐԱՁԵՂՈՒՆ. ա. Որ ունի ըզբարձր ձեղունս, կամ առաստաղս, կամ յարկս. *Բարձրաձեղուն ապարանք արքունաշէն տաճարաց։ Տունք ցանկալիք՝ բարձրաձեղունք և մեծամեծք. Լաստ. Ե. Ծ։

ԲԱՐՁՐԱՁԵՌՆ. ա. Տ. Հզօր ձեռամբ. յաղթական, և յաղթութեամբ. *Զբարձրաձեռն տիրելն հիւսիսականացն ազգաց. Յհ. կթ։

ԲԱՐՁՐԱՁԵՒ. ա. Բարձր ձևով. բարձրատեսակ. ամբարձեալ. և Պանծալի. *Լուսին ծագեալ 'ի վերայ լերանց բարձանց, և 'ի բարձրաձև գագաթունս կոհակացն՝ արտափայլեալ, ևն. Զքր. կբ։ *Մշտափթիթն լինելով, և փայլօղ երփն երփն բարձրաձև գունաւորութեամբն. Պիտ։

ԲԱՐՁՐԱՃԻՉ. ա. Որ իցէ ճիչ բարձր. բարձրագոչ. *Բարձրաճիչ ձայն արձակեն. Ճէր։ *Բարձրաճիչ աղաղակաւ զերկինս գողոցուցանէին. Եղիշ. Գ։ *Ի բարձրաթռիչ աղաղակացն հնչեաց գուռն գաբրիելասա. Աւծր. Ծ. 12։

ԲԱՐՁՐԱՄԻՏ, մաց, աց. ա. Ὑψόφρων, ὑψηλόφρων. Altum et elatum habens animum. որ և ԲԱՐՁՐԱՄԻՐՏ, ՄԵԾԱՄԻՏ. Ամբարտաւան. փքացեալ. յոխորտ. Քիպիրլի, կիւրուր. *Պիղծ է առաջի նոյ ամենայն բարձրամիտ։ Վասն բարձրամիտ անապաստանականին. Վրք հց. ԽԷ։ *Զօր և ոչ առ ծառայակիցսն բարձրամիտ երբեք ցուցանէին. Նանայ։

ԲԱՐՁՐԱՄՈՒՐ. ա. Բարձր և ամուր. հզօր և անառիկ. *Կախեաց զնիկանովրայ զգլուխն զբարձրամուր աշտարակէն ». յն. ակառն կամ բերդ. ἄκρα. Բ. Մ. ԺԵ. 35։

ԲԱՐՁՐԱՄՏԵՄ, եցի. չ. } Ὑψηλοφρονέω.

ԲԱՐՁՐԱՄՏԻՄ, եցայ. յ. }

Alta sum mente, animo sum elato, superbio. Ամբարտաւանիլ, մեծամտիլ, փքանալ. հպարտանալ. *Մի բարձրամտեսցես այլ երկիր. Ոսկ. հա։ *Եւ մի ընչիւքն բարձրամտեսցէ. Նար. ղԳ։ *Ըստ նախասացեալ կամացս ոչ բարձրամտեմք. Լմբ. աղ։ *Ի մեռ առեցես մեղաց, և մի բարձրամտեսցես։ Ընդէր բարձրամտես անձամբ. Վրք հց. ԾԷ։ *Ես ամբարձուածս ինքն բարձրամտեցեալ. Բրս. Ի սրբէհ։

ԲԱՐՁՐԱՄՏՈՒԹԻՒՆ. գ. Ἔπαρσις. Elatio, tumor, superbia. Ամբարտաւանութիւն, փքացումն, մեծամտութիւն, գոռոզութիւն, հպարտութիւն. կուրուր, քիպիրլիք. *Ոչ գիտէի զնորա արտին բարձրամտութիւն, և զամբարտաւանութիւն. Վրք հց. ԽԷ։ *Նոցունց իսկ լինիցի բարձրամտութեան առիթ. Բրս. հց։ *Մի հպարտացին բարձրամտութեամբ. Վրդն. ղեռ։

ԲԱՐՁՐԱՅԱՐԿ. ա. Որոյ բարձր են յարկք. բարձրաշէն, մեծակառոյց. *Բարձրայարկ ապարանից և տանց. Գր. եէկ։ *Բարձրայարկ խորան. Երզն. լա։ *Ի կամարս խորանայարկս բարձրայարկս։ Զորեքկերպեան աթոռ... բարձրայարկ. Գնձ։

ԲԱՐՁՐԱՅՕՆ, ի,ից. ա. Բարձր՝ յօնիւք, այսինքն ամբարտաւան՝ աչօք. ամբարհաւաճ, ամպարտ. կուրուր, քիպիրլի, մէղրուր. *Առ ինքնաբերգոյ բարձրայօնն. Նար. Գ։ *Ահարկութեամբ՝ առ պատուակայն 'ի պատուիրանէն է պխտանիցու, և առ բարձրայօնսն. Սրգ. Ա. Դ. ծա։ *Բարձրայօն պարծանօք ». այսինքն ամբարտաւանականն. Ճ. Բ։

Տ. Իբր Ամբարտաւանութիւն. *Ամբարտաւանս և բարձրայօնս փքայր. Ցհ. կե։

ԲԱՐՁՐԱՅՕՆ՝ ասի լեառն՝ Որոյ բարձր է արտևանն կամ եղբ 'ի գուրս քունձն ելեալ. բարձրագագաթն. *Բանձրուկքն ձեռն բարձրայօն լերանցն ապառաժ. Երզն. լա։

ԲԱՐՁՐԱՅՕՆԱԿ. Նոյն ընդ վերինն, իբր Առիթ բարձրայօն երևելոյ, պանծացեալ. և Պանծալի. որ խրատուէք ունի պանծանալ. գերապանծ. *Ուխտ բարձրայօնակ վարուց ներհանք. Սիւն. ա։ *Գլխաւոր անատէի խրատ՝ բարձրայօնակ գահերիցութեամբ։ Եթէ այդր (առանձ կայցէ) խոհեմութեամբ, ասա (յանձն հայրապետականն կայ) բարձրայօնակ ամբողութիւն. Գր. աղ. առ փոփ։

ԲԱՐՁՐԱՅՕՆՈՒԹԻՒՆ. գ. Ամբարհաւանութիւն, բարձրամտութիւն, փքացումն. հպարտութիւն. *Բնութիւն ունելով զբարձրայօնութիւն. Խոր. Բ. 89։ *Բարձրայօնութեան խոսիմք. Սարգ. Ա. Դ. Ա։ *Հեղ ամենայն յամօթ զեղբարյն բարձրայօնութեանց. Ղ. յէ. ԽԱ։

ԲԱՐՁՐԱՆԱՄ, ացայ. չ. Ὑψόομαι, ἀναβαίνω. Altior fio, elevor, exaltor, ascendo. Բարձր լինել, վերանալ, ելանել 'ի վեր, 'ի բարձունս ամբառնալ. բարձրանալ, վեր ելնել. Elevatezza, altezza, elevazione. *Վերացոյց ըզտապանն, և բարձրացաւ յերկրէ։ Հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն 'ի վեր։ Բարձրացաւ ջուրն 'ի վերայ երկրի։ Եթէ բարձրասցի բարեխօսն իբրև զերկինս։ Որպէս մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ ». այսինքն 'ի վերայ խաչին. ևն։ *Որ բարձրացար 'ի խաչին։ Զի դու բարձրացար, զմեզ փրկեցեր. Շար։ *Ա.յր օր եկեալք բարձրացին աւագեալ ընդ նմին թևօք հաւատոց 'ի փառս երկնաւորս. Լմբ։

ԲԱՐՁՐԱՆԱԼ. որպէս Աճել. և Սաստկանալ. պիւյիւմէք, աղմաք. *Բարձրանայ.

չէ՞ կենեն առանց ըմպելոյ. Յոբ. Է. 11: *Նեղեալ հոգւով բարձրացեալ. Ծն. ԽԱ. 21: *Զի բարձրացաւ աղաղակ սոցա առաջի տեառն. Ծն. ԺԹ. 13: *Եւ աղաղակն երուսաղէմի բարձրացաւ. Երեմ. ԺԴ. 2:

ԲԱՐՁՐԱՆԱԼ. Նմանութեամբ, Մեծանալ Ճոխութեամբ. բարգաւաճիլ, զօրանալ, գերազանցել, փառաւորիլ. որ զնոյ առեալ 'ի մեզ առաւել՝ ԲԱՐՁՐ ԼԻՆԵԼ. էէ-ձէ օլմագ, ու-լուլանմագ, խօնէլը օլմագ. *Օրհնեալ (տէր) զօրէր իմ յոյժ և բարձրացաւ: Եւ բարձրացաւ այրն. Ծն. ԽԴ. 35: ԽԷ. 13: *Բարձրացաւ եղջիւր իմ յած փրկիչ իմ. Ա. Թգ. Բ. 1: *Զի բարձրասցի կողմն Ճշմարտութեան. Եղիշ: *Ոչ եթէ բարձրեալն բարձրանայ, այլ մարմինն բարձրելոյն... Որպէս մարդ բարձրանայ՝ առնեալ անուն 'ի վերայ քան զամենայն անուն. Ան. Ա: *Մարմնով գերազանց նմին բարձրացաւ: Գանկեցան՝ բարձրացան: Բարձրացեալ 'ի փառս: Բարձրացեալ ծնող: Բարձրասցի պտուղ քո իմն: Բարձրացիր սիոն, ևն. Նար. ոփէղ:

ԲԱՐՁՐԱՆԱԼ. որպէս Բարձրամտիլ, ամբարտաւանիլ, գոռոզանալ, մեծամտիլ. պէդիրլէնմէք, խօրօզլանմագ, ղուրուր կէթմէք. *Մինչև ցե՞րբ բարձրանայ թշնամին 'ի վերայ իմ: Տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ. Սղ. ԺԲ. 3: ՃԼ. 1: *Եւ դու կափառնաում. մի՞ մինչև յերկինս բարձրացիր, այլ մինչև 'ի դժոխս իջցես. Մտթ. ԺԱ. 23: *Զի մի՛ տացէ բարձրանալ հպարտութեան՝ կոխել զինքն. Ագաթ: *Հպարտացաւ, բարձրացաւ 'ի միտս իւր. Եղիշ. Ա: *Գոռոզացայ, բարձրացայ. Նար. Է: *Տէ՛ս որդեակ, մի՛ բարձրանար, զի ահա չես մեռեալ. Վրք հց. ԽԴ:

ԲԱՐՁՐԱՑԵԱԼ. Ὑψωθείς, ὑψώμενος. Exaltatus. Վերացեալ, ամբարձեալ. *Աջովն այ բարձրացեալ. Գծ. Բ. 33: *Աթոռ փառաց բարձրացեալ. Երեմ. ԺԷ. 12:

Կամ Ὑπερυψούμενος. Superexaltatus. *Վերացեալ և բարձրացեալ. Սղ. ԼԶ. 35: *Գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս. Դան. Գ. 52=56:

ԲԱՐՁՐԱՑԵԱԼ. ա. Ὑψηλός. Altus. Բարձր. բարձրաբերձ. և Ամբարձեալ հպարտութեամբ. *Առ ոգորութեն բարձրացեալ բազկոյն քո: Խոնարհեցուցանեմ զփայտ (կամ զծառ) բարձրացեալ: Կործանեսցին պարիսպք քո բարձրացեալք: Մայրից բարձրացելոց, բլրոց բարձրացելոց, պարսպաց բարձրացելոց: Օր տեառն զօրութեանց 'ի վերայ ամենայն հպարտից և ամբարտաւանից, և 'ի վերայ ամենայն բարձրացելոց և վերացելոց. ևն:

Կամ Հզօր, փառաւոր, աչառկու. յաղթական. և Մեծանուն. շքեղ. *Եւ որդիքն իսրայէլի ելանէին բարձրացեալ ձեռամբ: 'Ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է: Եւ այս ձեռն բարձրացեալ 'ի վերայ ամենայն ազգաց ('ի պատուհասել). ևն: *Եւ եկեսցի... տունդ բարձրացեալ՝ 'ի զնոյգս. Գ. Թգ. Թ. 8:

ԲԱՐՁՐԱՆԻՇ. ա. Բարձրութեամբ նշանաւոր. երեւելի ամենայն աչաց. *Վարշամնն 'ի դլուխն բարձրանիշ տեղի՝ սաղաւարտ փրկութեան. Ոսկեփոր:

ԲԱՐՁՐԱՆՇԱՆ. ա. Հրաշանշան. մեծանշան, նշանչելի յոյժ. *Տեառնեան ընդ-բարձրանշան, չնաշխարհիկ, և գլխաւորբագաւ զմուտ հոգւոյն ևն. Ագաթ:

ԲԱՐՁՐԱՇԷՆ. ա. Բարձր շինեալ. բարձր շինուածով. *Ի բարձրաշէն կանգնեալ աշտարակս. Պիտ: *Բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանք. Լաստ. ԽԳ: և Եղիշ. Երեւ: *Պարիսպքն բարձրաշէնք. Ոսկ. Մ. Է. 18:

ԲԱՐՁՐԱՇՈՒՔ. ա. Մեծաշուք, բարձր և շքեղ. *Ո՞ւր հասանէին բարձրաշուք մեծութիւն. Ճ. Բ:

ԲԱՐՁՐԱՊԱՏԻՒ. ա. Մեծապատիւ, մեծաշուք. հռչակաւոր. *Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի. Նար. յիշ:

Մ. Բարձր պատուով. *Թէպէտ և այնպէս բարձրապատիւ և պայծառանշան առաջեցաւ (պօղոս) 'ի քնէ. Ագաթ. (հին տպ. պանծապատիւ:)

ԲԱՐՁՐԱՊԱՏՈՒՄ. ա. Մ. Պատմօղ, կամ պատմելով զբարձրագոյնս. *Վասն որոյ և բարձրապատում խօսք հնչեցուցանէ (աւետարանիչն): Բարձրապատումս սկսան հաւաքեցուցանել զպատիւ միածնին. Ագաթ:

ԲԱՐՁՐԱՊԱՐԱՆՈՑ, ի, աց. ա. Ὑψαύχην. Elatam cervicem habens. կամ բայիւ, ὑψαυχενέω, cervicem extollo. որ և ԲԱՐՁՐԱՊԱՐԱՆՈՑ ասի, և ԲԱՐՁՐԱՎԻԶ. Իբր Ամբարտաւան, գոռոզ. *Մի երկրաւորդ բարձրապարանոց լինիցիս. զի (դողին) յերկնից ձգեցան նոքա՝ որք անիւթք էին. Կլմնտ: *Հպարտանալ... յօդն կալ. բարձրապարանոց երևել 'ի վերայ եղբարաւորաց իւրեանց. Գ. Դ. Գ. 12: *Բարձրապարանոցաց (կամ բարձր պարանոցաց) խորտակիչ. ՃՃ:

ԲԱՐՁՐԱՊԱՐԱՆՈՑՈՒԹԻՒՆ. Տե՛ս ԲԱՐՁՐԱՎԶՈՒԹԻՒՆ. *Այսու՝ որով յոյժ բարձրապարանոցութեամբ վզանիս, անարժան արասցէ զքեզ 'ի ծառայութէ իւրում ասա՛ մի իմաստունն. Փիլ. լին:

ԲԱՐՁՐԱՊԱՐԻՍՊ. ա. Որոյ են բարձր պարիսպք. *Որ զաշտարական յաղթս և բարձրապարիսպսն կործանեաց. Եփր. յես:

ԲԱՐՁՐԱՊԱՐՈՒ. ա. Որ պարէ 'ի բարձունս. օդապարիկ, բարձաթռիչ. *Հաւասար բարձրապարու արծուոյն՝ կառաբարձ փառաց անեղին. Վրդն. ծրղ:

ԲԱՐՁՐԱՊԷՍ. Մ. Բարձր օրինակաւ. *Զայսոսիկ յոյժ բարձրապէս խօսի. Ոսկ. Գծ:

ԲԱՐՁՐ ԱՌՆԵԼ, ԼԻՆԵԼ. Տ. ԲԱՐՁՐ:

ԲԱՐՁՐԱՍԱՂԱՐԹ. ա. Որոյ սաղարթք են բարձր. ուռճացեալ բարձր ոստովք և տերևովք. *Ընդ բարձրասաղարթ ծառով 'ի ժամ տօթոյ հանգչի մարդ. Վանակ. յոբ:

ԲԱՐՁՐԱՍԱՑՈՒԹԻՒՆ. Ὑψηγορία. Jactantia, vel sermo elegans. Պանծալի ասացուած կամ Ճառ. *Եւսեբի պամփիլեայ՝ գրեաց և զվարս կոստանդիանոսի... ժողովական բարձրասացութեամբ. Սոկր:

ԲԱՐՁՐԱՍԻՐՏ. Տ. ԲԱՐՁՐԱՄԻՏ. *Ոչ խոնարհի կիպարի յերկիր, և ոչ բարձրասիրտ միայնակեաց լռութե առանոյ. Կլմնտ:

ԲԱՐՁՐԱՍՐՈՒՆ. ա. Ὑπεροχελής. Որոյ սրունքն են բարձր քան զտովորականն. Ձի. Վէրը Բուրլը. ուզուն պաճագլը. *Իբրու արդ բարձրասրուն, և կամ այլ ինչ վերադրոյն քան զբնակութիւն անշափ՝ գարշելի է. Պղատ. օրնք:

ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ. ա. (եթէ չիցէ գրելի Բարձրաւանդակ.) Ունօղ զբարձր վանդակս. *Զբարձրավանդակ սրբարանն գիտանոցի. Նար. խւ:

ԲԱՐՁՐԱՎԱՐՍ. ա. Ὑψίκομος. Alte comatus. Նոր զվարսաւոր ծառոյ. որպէս բարձրոստեան, բարձրասաղարթ. *Ունել յնկեան զբարձրավարս արմաւենեին: Նա է բարձրավարս արմաւենին, որ զբարձրութիւն խնութեանս մերոյ ընծայեցեաց. Նիւս. Երգ: *Ելեր 'ի բարձրավարս արմաւենին. Պիտ:

ԲԱՐՁՐԱՎԶԱՆԱՄ, ացայ. ւ. } Ὑψαυχενέω, կամ νίζω. Cervices tollo, glorior, jacto. Բարձրավիզ կամ բարձրապարանոց լինել. փքանալ. սնքալ. *Ըստ մեռեալ զինքն ոչ պատկառէր, կամ բարձրավզանայր՝ ասել. Մագ. ՃԹ: *Բարձրավզեալ ամբարտաւանի եղկելին. Վրք հց. Ի:

ԲԱՐՁՐԱՎԶԻՄ, եցայ, եալ. Յ.

ԲԱՐՁՐԱՎԶՈՒԹԻՒՆ. գ. Ἀπόνια. Arrogantia, ևն. որ և ԲԱՐՁՐԱՊԱՐԱՆՈՑՈՒԹԻՒՆ. Ամբարտաւանութիւն. ամբարհաւաճութիւն. գոռոզութիւն. փքացումն. հպարտութիւն. Տաղրուրլուգ. *Զմայր չարեաց զամբարտաւանութիւն և զբարձրավզութիւն ունէր արմատացեալ յոգւոյն... Զբարձրավզութիւն ասեմ և զամբարհաւաճութիւն. Ոսկ. ՂԷ: *Խորտակեցեալ բարձրավզութիւն. Թէոդոր. Խչ:

ԲԱՐՁՐԱՎԻԶ, վզի, իւց. ա. Ὑψαύχην. Cervicem attollens. Բարձրապարանոց, իբրք կամ նմանութիւն. խրոխտ. գոռոզ. Պէղը պոյնլը, և պոյնօղ. ուէր պէր հէլա, Տաղրուր. *Այժմ բարձրավիզ ձի, և խրոխտ... խայտայ 'ի դաշտս. Անյաղթ. նոր կէր: *Մի՛ ախորժեսցես 'ի վեր ամբառնալ զձեռնդ քո (ընդդէմ քո) լոռ բարձրավզիցն. Անյաղթ. առք: *Զբարձրավիզն խոնարհեցուցեր. Սիրա. ԼԹ: *Ո՞ւր իցէ բարձրավիզն հպարտութիւն. Վրք հց: *Նշանակ բարձրավզին և փքացելոյ վասն ամբարհաւաճութեան: Ինձ մախանացուեք զինչ արժան է բարձրավիզ լինել, փքանալ, փռնդալով առ նմանիսն. Փիլ. Էլ. և Ձ. Բան: *Ցանգղջուէ անձանց, և 'ի բարձրավիզն լինելոյ մտաց և ապարասան 'ի վերայ առաքինութե այդ արանցն. Վրք հց. Ա:

ԲԱՐՁՐԱՏԵՍԱԿ. Տ. ԲԱՐՁՐԱՁԵՒ. *Բարձրատեսակ և պայծառ երկին, աթոռ փառաց բարձրելոյ. Թէոդոր. 'Ի խաչն:

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. Ն. Ὑψόω, ἀνυψόω. Exalto, in altum extollo. αἴρω, ἀναιρέω, ἀναλαμβάνω, sursum tollo, affero. Բարձր առնել՝ իրօք կամ նմանութեամբ. վերացուցանել. 'ի վեր առնուլ՝ հանել՝ յարուցանել՝ կանգնել, համբառնալ, տնկել. Բուլէնտէնէ, Վէր հանէլ, Վէր վէրտէնէ. Էէ-ձէ էյլէմէք, էգալլ գալդըրմագ. Յիւլէ էթմէք, դիկէլմէն. *Շինեաց պարիսպ, և բարձրացոյց յոյժ: Բարձրացուցանել զտուն այ մերոյ, կանգնել և շինել զանապատս զայս: Խոնարհեցուցանեմ զփայտ բարձրացեալ, և բարձրացուցանեմ զփայտ խոնարհեալ: Մի բարձրացուցանէք զեղջիւրս ձեր: Բարձրացո՛ տէր ած իմ զերեսս իմ առ քեզ: Բարձրացուցէք նշան 'ի հեթանոսս: Եթէ բարձրացուցանես իբրև զարծուի զբոյն քո, և անտի իջուցից զքեզ: Հոգի տեառն վերացոյց զիս և բարձրացոյց. ևն: *Ի վեր զբոյն բարձրացուցանէին. Յհ. կբ:

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ. Բարձր առնել պատուով. մեծարել գովութ, իշխանութեամբ. մեծացուցանել, փառաւորել. Պէծիլէլ. էէ-ձէ էթմէք, Բաշէմ էթմէք. *Սկիզբն առարից բարձրացուցանել զքեզ առաջի ամենայն որդւոյն իսրայէլի: Բարձրացուցի զքեզ 'ի միջոյ ժողովրդեանդ: Բարձրացուցի զքեզ յերկրէ: Որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին: Արդարութիւն զազգ բարձրացուցանէ.

նուաստացուցանէն զաղքատս մերձ: Զորս կամէր ինքն՝ բարձրացուցանէր, և զորս կամէր ինքն՝ խոնարհեցուցանէր: Տէր խոնարհեցուցանէ, և բարձրացուցանէ: Որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի. եւն: *Արութիւն ցուցեալ զազգ մեր բարձրացոյց. Խոր: *Հովանեաւ և բարձրացոյ զոստս. Պտրգ: *Դու զնուաստացուցիչն ատես, և զբարձրացուցանողքն զանց առնես. Աճառ. ծն:

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ. Բարձր առնել զանձ օրհնութեամբ. փառաւորել. *Նուաստէին առաջի արքային բանիւքն այ, բարձրացուցանել եղջերն առն. Ա. Մն. իէ. 5: *Բարձրացուցէ՛ք զտէր այ մեր՝ գոչէ մարգարէն: Այս հարցն մերոց, գովեմք զքեզ, և առաւել բարձրացուցանեմք. եւն. Անյ. Բարզր: Ն. Ղազ: Այլ 'ի սուրբ գիրս՝ ուր ըստ յն. է բարձրացուցանել զանձ, 'ի մեզ թարգմանի՝ բարձր առնել զանձ:

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ. որպէս Սաստկացուցանել զձայն. համարձակ գոչել. վերագոչել. [illegible] *Բարձրացուցէ՛ք զբարբառ ձեր 'ի վերայ նոցա: Առ ո՞ բարձրացուցեր զբարբառ քո: Բարձրացո՛ իբրև զփող զբարբառ քո: Բարձրացուցին զձայնս փողոցն և ծնծղայիւք. եւն: *Եւ ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտէրունի կանոնն կատարէին. Եղիշ. Գ:

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ. Չափազանց օրինակաւ վարիլ. մեծացուցանել զբանն. [illegible] *Պղծեցեր զերկիրն ... 'ի մեղաց ոչ երբէք պղծի երկիր, քանզի արարածս պիղծ ոչ լինի. այլ՝ բարձրացուցանելով զիրան ասէ. Մխ. Երեմ:

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԻՉ. ցչի, չաց. ա. Ὑψῶν. Exaltans, exaltator. ἀναγωγός, ad supera ducens. Բարձրացուցանող. 'ի վեր ամբարձող. վերածիչ. վերբերող. *Փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ. Սղ. Գ. 4: *Ցածայնոյն և բարձրացուցիչ կենդանութեան կամաւորութբ անկեալ առ հակառակն յեռանութեան ածաւ. Դիոն. Էկեղ:

ԲԱՐՁՐԱՒԱՆԴ. կմ **ԲԱՐՁԱՒԱՆԴ.** Տ. ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ. *Հուր եկեալ ընդ բարձաւանդ նորա այրեաց. Ճճ: *Խճաքարք՝ որ 'ի բարձրաւանդի կային, առաջի հողմոց ոչ մնային. Սիր. իբ. 21. յն. Μετέωρος. Sublimis, excelsus.

ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ, ի, աց. ա. գրի և ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, ԲԱՐՁԱՒԱՆԴԱԿ, և կմ ԲԱՐՁՈՒԱՆԴԱԿ. սեռ. բարձու աւանդակի, կամ բարձուանդակի. ('ի բարձր, և անգր. լծ. և լտ. անդէ. բն. տանդի. յառաջ. թ. էօնդէ, էօնդէն). Բարձր, մանաւանդ առաւել բարձր (վայր.) բարձրածայրեալ (տեղի, շինուած.) բարձունք. ըստ յն. պէսպէս. Μετέωρος, ἄκρα, ὑψηλός, βωμός, ἀνάβασις, κρήμνος, եւն. այսինքն անգր քան զտեսութի. ակառն, կամ բարձր ամուր. բեմ. բագին. ծայր, ծագ, վերելք. գահաւանդ, հողաբլուր, գիտանոց. եւն:

Իբր ա. *Ի վերայ ամենայն լերանց բարձանց, և 'ի վերայ ամենայն բլրոց բարձրաւանդակաց: Կային 'ի բարձրաւանդակ տեղւոջ եզըր և ղևտացիք. Եզ. ր. 25: Նեէմ. ը. 4: *Ի բարձրաւանդակ տանիս սպարանից որմոյն: Ի բարձրաւանդակ խաչն: Ի բարձրաւանդակ տեղի. Ագաթ. *Ի բարձրաւանդակ դաշտի, կամ տեղւոջ. Խոր. ա. ց. 10: *Կացեալ 'ի վերայ տեղւոյ բարձրաւանդակի՝ քարոզէ. Փիլ. յուշ.: *Ի բարձրաւանդակ քարանձաւաց 'ի վայր հոսեալ. Ցհ. կբ.: *Տեռամնն իբրև 'ի բարձրաւանդակ խմբէ զիտանոցէ. Բրս. տաոնէբ: *Բարձրաւանդակ սրբարանն գիտանոցի. Նար. խչ: *Ի բարձրաւանդակէ առ 'ի խոնարհ առաւել քան զբան է հոսմանն երագութի. Ղ. ծոբ. (որ է իբր գ:)

Եւ իբրու գ. *Յընտիր ընտիր մայրից բարձուաւանդակին (կամ կէն)". յն. մայրւոյ բարձու 'ի գագաթանէ. Եզեկ. ժէ. 22: *Շինեաց սողոմոն զբարձրաւանդակն քամոշայ: Գնաց սողոմն 'ի բարձրաւանդակն գաբաւոնի: Կործանեցին զբարձրաւանդակսն, և զբագինսն: Շինեաց զբարձրաւանդակն մահարձանոքն: Գահավէժ առնէին զնոսա 'ի ծայրից բարձրաւանդակին: Ի բարձրաւանդակաց քաղաքաց իւրոց: Ի բարձրաւանդակաց ցուրտ: Ի բարձրաւանդակի գերեզմանաց. եւն: *Կայ 'ի բարձրաւանդակի վերայ: Ոչ 'ի բարձրաւանդակէ ուսանէք 'ի բաց 'ի վայր հայելով: Բարձր լերինք ընդ մարմնոյս մերում առակէ զզայութիս. քանզի 'ի բարձրաւանդակի 'ի գլուխս մեր գեալ եղև նոցա ունել զնիստ հաստատութէ. Փիլ: *Կանգուն արար զնա (զմարդ) և ('ի) բարձրաւանդակ մարմնոյ հաստատեաց զաչսն. Ոսկ. եփ: *Զչնհոր բարձրաւանդակին: Ի բարձրաւանդակի քաղաքին: Ի վեր իսկ 'ի բարձրաւանդակս 'ի լիբանան լերին. Եւս. քր: *Զիցէ՞ տեսեալ քո 'ի բարձրաբերձ բարձրաւանդակաց զզաշտ ընդարձակ. Վեցօր. ղ: *Արջառք իջին 'ի բարձրաւանդակէն, և արբին յաղբիւրէն: Իշխանն նստէր 'ի բարձրաւանդակի. Հ=Ց. Նոյեմ. իէ. յունիս. ծբ: *Կախեցին զերկուսին 'ի բարձուաւանդակի. անդ. յունիս. իզ:

ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԱԳՈՅՆ, կամ **ԲԱՐՁԱՒԱՆԴԱԿԱԳՈՅՆ.** ա. Μετέωρος. Editior, altior. Բարձրագոյն. *Ծովն պատառեալ... ընդ որ ժողովուրդն հետևեալ մինչև յայնկոյս ցամաքն՝ առ բարձաւանդակագոյնսն յուղարկեալք. Փիլ. փէտոլան:

ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱՅԱՐԿ, ի, աց. ա. Որ ունի զբարձրաբերձ յարկս. բարձրաշէն. *Աճազոր զօրութբդ բայաբարձումն լեալ բարձրաւանդայարկ բագնացն. Անան. Էկեղ:

ԲԱՐՁՐԱՔԵԱՑ. ա. Որ ունի զբարձր աքեայս, բարձս և ոտս. բարձրասրուն. [illegible] *Առ 'ի հաւասարութի բարձրաքեայ ոտիցն. Վեցօր. ը:

ԲԱՐՁՐԲԱՐՁ. ա. Որպէս Բարձրաբերձ. կամ ըստ յն. ամենաբարձր. *Ծառք 'ի բարձրբարձ բարձունս վերացեալք: Ջուրն 'ի բարձրբարձ բարձունս վերինս՝ պատեալ շուրջ զբոլորն բոլորակն երկնից. Վեցօր. Բ. Գ:

ԲԱՐՁՐԵԱԼ, ելոյ. գ. Սեպհականեալ անուն Աստուծոյ այ, ըստ որում է խնկութբ բարձր ամենայնիւ. կամ Ամենաբարձր, որպէս ասի յայլ լեզուս. Ὕψιστος. Altissimus. եբր. էլիօն. առճկ. հագ թէալա, ալլահ թէալա. *Որոտաց տէր յերկնից, և բարձրեալն ետ զձայն իւր: Որդի բարձրելոյ կոչեսցի: Զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո: Մարգարէ բարձրելոյ կոչեսջիր: Այլ ոչ եթէ բարձրեալն 'ի ձեռագործ տաճարս բնակէ. և այլն:

Կամ իբր ա. *Քահանայ էր այ բարձրելոյ: Օրհնեալ է աբրամ այ բարձրելոյ, որ արար զերկինս և զերկիր: Օրհնեալ է այ բարձրեալ: Սաղմոս ասացից անուան այ բարձրելոյ. Եւն: *Բարձրեալ, ահաւոր տէր, փառք քեզ: Բարձրեալ վասն վերին աթոռոյն... Բարձրեալ ես դու յերկինս անդ: Բարձրեալ թագաւոր, որ վասն մեր եկեր 'ի խաչ. Շար: *Չի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն տէր մեր յս քս. Ժմ: Ն. Նար. ոպէղ:

Անսովոր է՝ առեալն Միքայելի եպիսի 'ի խչ. *Բազմամ առակօք բարձրելովք մարգարէանայ". այսինքն բարձր առակօք:

ԲԱՐՁՐԵՂՋԻՒՐ. ա. Որոյ բարձր են եղջիւրք. *Բարձրեղջիւր նոխազ 'ի կառս իւր լծեալ. Մագ. ծա:

ԲԱՐՁՐ 'Ի ԳԼՈՒԽ. Տես 'ի բառն ԲԱՐՁՐԱԳԼՈՒԽ. *Աղքատքն եղիցին քեզ գահերէցք, և նզովք բարձր 'ի գլուխ լերդ". այսինքն պանծալիր. Մանդ. ղ:

ԲԱՐՁՐ 'Ի ՁԱՅՆ. մ. այսինքն ի ձայն բարձր, բարձրաձայն, ձայնիւ մեծաւ. *Մեծաւ զօրութբ բարձր 'ի ձայն աղաղակէ. Վեցօր. Գ. յն. մեծաձայնապէս, μεγαλωφώνως.

ԲԱՐՁՐԻՉ. այսինքն Բարձրացուցիչ. *Իբր կամեցաւ բարձրիչն խոնարհից. Մծբ. ծբ:

ԲԱՐՁՐՄՏՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՐՁՐԱՄՏՈՒԹԻՒՆ. *Առանց բարձրմտութե էր և խոնարհ. Ոսկ. Գծ:

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ. գ. Ὕψος. Altitudo. Բարձր գոլն, չափ 'ի ստորէ 'ի վեր. զիմաբաժանեալ ընդ խորութե կամ ընդ ցածութեան. [illegible] *Զինչ է լայնութի և երկայնութի. և բարձրութի և խորութի: Արտացեա զտապանն, յերեսուն կանգնոյ զբարձրութին: Բարձրութիք լերանց՝ նորա են: Որոյ բարձրութիւն իւր՝ բարձրութիւն մայրի: Գոլիաթ... բարձրութի նորա վեց կանգուն և թզաւ. եւն: *Ընդ բարձրութիւն հասակին հիացեալք. Ցհ. իմ. պաւ: *Ի պաշտօն առնն զերկին վասն գեղեցկութե և բարձրութե. Մխ. Երեմ:

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ, կամ **ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՔ.** որպէս Բարձր տեղի. բարձունք. երկինք. *Խնդրեա դու քեզ նշան 'ի տեառնէ այ քումմէ 'ի խորութէ կամ 'ի բարձրութէ. Ես. է. 11: *Որ 'ի բարձրութիս երկնից բարձր բանիւք բարբառնիս. Շար: *Ի բարձրութիս ելանէին, ուր ըզզանգակալին հնչէին. Ղ. էդէս:

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ. Ὕψος, ὕψωμα, ὕψωσις, ἀνάστημα. Exaltatio, erectio, sublimitas. Բարձրանալն, բարձրացումն. մեծութի. առաւելութի. գերազանցութի. փառք, փառաւորութի. *Նայեաց 'ի գործս ձեռաց իմոց, և 'ի բարձրութիւն եզակ: Դու բարձրութի երուսաղեմի, դու ցնծութի իսրայէլի: Անձնաց 'ի բարձրութի թագաւորութե նորա: Եստու զայգ 'ի տուն այ իմոյ 'ի բարձրութի: Երթալով յավանդան մեծանայր 'ի բարձրութիւն: Հպարտացոյծ բարձրութի նորա: Փառք նորա լցան անարգանօք, և բարձրութի նորա 'ի սուգ կործանեցաւ: Զբազումս չարչարեաց բարձրութի նորա. եւն: *Որ գերազանց գոյք և երկնի՝ ամենազօրզ բարձրութի. Նար. հէ: *Ոչ է հնար ընդունել զբարձրութի զաստուածային. Ոսկ. յհ. ա. 1: *Հանդերձ կատարելութեամբ և պատուոյ բարձրութբ. Ցհ. կտ. ապ:

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ. որպէս Բարձրամտութի, մեծամտութի. *Գիտացեալ զխորհուրդն կործանումն, մանաւանդ թէ զաստուածային խոկ 'ի բարձրութէ և 'ի հպարտութէ լեալ. Նար:

ԲԱՐՁՐՈՒՂԷՇ. ա. Որոյ բարձր են ուղէշք. բարձրաձայն. Ճչըրը Բօռչը. Ելոտոնէ փոնաէ. *Ծառա բարձրուղէշ և պղտազաւեշտաւ. Երգ. լս: *Ցայգուոյն փչալից յայանկցաւ որթն բարձրուղէշ. Ոսկեփոր:

ԲԱՐՁՐԳԱՐԱՆՈՑ. Տ. ԲԱՐՁՐԱԳԱՐԱՆՈՑ. *Եղիցես դու (ինքնահաճութ̃բ) բարձրպարանոց՝ խիստ և անթոյլ, և ոչ հեզ և մարդասէր. Կիւրղ: *Բարձրպարանոց խարտակիչ. Ճճ:

ԲԱՐՁՐՎԶԵԼ. Տ. ԲԱՐՁՐԱՎԶԵԼ. *Ցկսոյ (աքաղաղն) ճեմել և բարձրվզել վասն յաղթութե. Վրդն. առակ:

ԲԱՐՇ. Տ. ԲԱՇ. *(Զի՛) պսակաձև յօրինուածով զարդարեալ՝ խիտ և հրաշալի բարշին բարեձևութ̃բ. Պիտ:

ԲԱՐՈՑԱԽՕՍ, ի, ից. կամ աց. ա. գ. գրի և ԲԱՐՈՒԱԽՕՍ. Φυσιολόγος. Qui de natura disserit. Որ խօսի զբարոյից կամ զբարուց կենդանեաց. բնախօս. *Բարոյախօսն ասէ. Եղիշ. Ծնըն. ոփեր: (որոյ գործն յայլոց ընծայի փիլոնի կարպացւոյ. և յայս բերի յաշորդ վկայութեն.) *Փիլոգոս՝ բարոյախօսն ամենայն կենդանեաց. Վրդն. պտմ:

ԲԱՐՈՑԱԽՕՍԵԼ. չ. Φυσιολογέω. De natura dissero. Խօսել կամ ճառել զբարուց և զբնութեանց, մանաւանդ կենդանեաց. *Եւ տաւիղ իմն ասէ՝ այլ ընդ այլոյ բարոյախօսեալ զայնպիսի բնութեանց. Եղ. ծն. ա:

ԲԱՐՈՑԱԾԻՆ. Տ. ԲՆԱԾԻՆ. *Օրէնք ընդարոյս՝ բարոյածինք՝ հաստատեալ կան 'ի բնութի նոցա (այսինքն ձկանց). Վեցօր. է:

ԲԱՐՈՑԱԿԱՆ, ի, աց. (գրի և ԲԱՐՈՒԱԿԱՆ) իբրև գ. Բարոյականն. Ἠθική. Ethica, morale, praecepta morum. Իմաստասիրութիւն, կամ գիրք որ ճառէ ըղբարուց և զվարուց մարդկան, ըստ որում կամաւոր գործ բարի կամ չար. Ախլաք իլմի. *'Ի ձեռն ոստականերին յարգաբի. և 'ի ձեռն բանի պաճուճէ զբարուականն, և հնազանդեցուցանէ զախտս (կամ զկիրս): Արիստոտէլականքն յերիս բաժանեն զգործնականն. 'ի քաղաքականն, 'ի տնտեսականն, 'ի բարոյականն. և յերբուն: Արիստոտէլ գրեաց զբարոյականն, յորում վասն բարուց ճառէ. Սահմ. Ի. և Իա: *Օգուտ արար մարդկային կենացս՝ 'ի ձեռն բարոյականին՝ առ 'ի բարուցն ուղղութե: Տեսութի ունի իմաստասիրութի 'ի ձեռն երից մասանցն իւրոց, բանականին, բարոյականին և բնականին. Փիլ. բացն. և այլոց:

ԲԱՐՈՑԱԿԱՆ. իբր ա. Ἠθικός, κή. Moralis. Որ ինչ հայի 'ի մարդկային բարս կամ 'ի վարս. *Մակացական առաքինութիւնք առաջին վասն բարոյականաց առաքինութեց. Սահմ. Ժ: *Ելանէ յանցաւն և յանուշխատ ճանապարհ բարոյական ուղղութեն. Լմբ. ող: *Իսկ բարոյական օրինակաւ, հարթութեամբ զկատարեալ առաքինութի յայտնէ. Գէ. Եւ: *Իսկ բարոյական բանն (իմաստ գրոց) այսպիսի է. Փիլ. այլաբ:

ԲԱՐՈՑԱԿԱՆ. իբր Բարոյախօսական. Φυσιολογικός. ուսումն Բարոյականն՝ որպէս Բարոյախօսութի. Φυσιολογία. *Բարոյականն է շարագրութի օրինակեալ առ 'ի վարս առաքինութե կամ չարութե. և առաջի առնելով, գազանաց, թռչնոց և լողակաց: Եւ առի բարոյականն (կամ բարուականն՝) խօսք բարուց զգայութե կենդանեաց. Տօնակ:

ԲԱՐՈՑԱԿԱՆ. որպէս Բարեբարոյական, և բարեբարոյութ̃. բարեսէր, և բարք բարիք. *Ըստ բարոյականն կամեցողի արքայինն ամբաւոյ: Զի նախնական իւրեանց բնականօքն շարժմամբ բարոյականին առ 'ի յօգտակար վայելումն ճեպիցին. Ցհ. կբ: *Բարոյականին նախաւան հօր (այ) համգաղափար գոլ գտանին. Մագ. ճ:

ԲԱՐՈՑԱԿԱՆԱԲԱՐ. մ. Ἠθικῶς. Moraliter. որ և ԲԱՐՈՑԱԿԱՆԱԳԷՍ, և ԲԱՐՈՑԱԳԷՍ. Իբրու կարգեալ առ բարոյականն, կամ առ վարս. որպէս 'ի բարոյական կարգի. ըստ բարոյական իմաստից գրոց. *Ի դէմն շնչէ՝ բնականապէս, և բարոյականաբար: Արդ՝ ասելի է բարոյականաբար զայս: Իսկ բարոյականաբար այսպէս. Լծ. Փիլ. ոփեր:

ԲԱՐՈՑԱԿԱՆԱԳՈՅՆ, գունի,ից. ա. Առաւել յանկաւոր բարոյական վարդապետութե, կամ վարուց. *Բնականագոյն հատուցումն (մեկնութե) այս է. իսկ ըղբարոյականագոյնն ասելի է. Փիլ. լծ:

ԲԱՐՈՑԱԿԱՆԱԳԷՍ. Տ. ԲԱՐՈՑԱԿԱՆԱԲԱՐ. *Բնականաբար և բարոյականապէս (կամ բարոյապէս) զոր կարէ առնել բնութիւն գիւրին. Կանոն: *Հոգևոր տեսութի գրոց, զոր իմաստունքն բնականապէս և բարոյականապէս ասեն. Վանր. յայտ: *Բայց ես և այլ իմն ասեմ բարոյականապէս. Եղիշ. խոր:

ԲԱՐՈՑԱԿԻՑ, կցի, ցաց. ա. Ὁμότροπος. Similibus moribus praeditus, ejusdemmodi. Համաբարոյ, մերձաւոր բարուք կամ վարուք. համանման. *Որք ըստ առաքինութեն են ազգակիցք և բարոյակիցք. Ածաբ. 'ի պասէք. Բ: *Արար իւր եղբայր, բարոյակից զնա գտեալ: Զօտարս բարոյակիցս՝ լաւ համարին. Մխ. առակ:

ԲԱՐՈՑԱԳԷՍ. որ և գրի ԲԱՐՈՒՈՑԱԳԷՍ. Տ. ԲԱՐՈՑԱԿԱՆԱԲԱՐ. *Զգաղափար առնլի է բարոյապէս (կմ բարուոյապէս). Մխ. առակ:

ԲԱՐՈՑՔ, ոյից, իւք. Տ. ԲԱՐՔ ըստ ամենայն նշ. *Վասն անճնասէր բարոյից. Բ. Դ. Է. 21: *Առ այնպիսի խորամանգ բարոյիւք նոցա. Գ. Դ. Գ. 16: *Առագշոտ յիմարութե ցոփուէ բարոյիցն: Ցանկաշտութիւս բազմասէր բարոյիցն. Ագաթ: *Մարթ էր 'ի բարոյիցն հաւատարիմ գտանել՝ քան յերդմանէն. Ոսկ: *Վասն բարոյիցն անվրէպ նմանութեանն. Կիւրղ. գանձ: *Պատուելով զշնորհակալութ բարոյոյն. Փիլ. լծ: *Բնական բարոյիցս չերմութ̃ (զոր օրինակ հառաչանօք, արտասուօք են) զնա թախանձել: Ցեռ զբարոյոյն սահմանելոյ՝ գրեցի զուղղութի նորին. Լմբ. ող. և ծղ: *Ըստ բարոյից նոցա հաւանեցից. Մխ. երեմ: *Բայց ևս անբանական բարոյից է ասուն կենդանեաց 'ի յարոտս մահու ճարակել: Ըստ բազմապատիկ նենգութե բարոյից գաւառական աղուեսուց: Ի գազանական բարոյից նախագոյն նուիրեալք. Նար. կ. կե. և ծբ: *Հաւուց տարերք, որք մարդասէր բարոյիւք ընտանի գոլով մերայոյն աղինս. Լաստ: *Կենդանիք և այլ ևս անբան բարոյիւք. Առլ: *Բնական բարոյից ընտանի սովորութիւնք (յամենայն արարածս) այլ ընդ այլոյ յեղանակեցան. Նար. խէ:

ԲԱՐՈՎ. մ. այսինքն Բարեաւ, բարութ. Բարով, օւրով. *Զի զինքն ոչինչ առնելով զայլոցն բարով ընդունելիցին. Ոսկ. ա. խոր:

ԲԱՐՈՒ, րուք. Տ. ՀԱՄԲԱՐՈՒ, և ԳԱՐԻԿ. Այլ թուի նշանակել և զսիրամայն թռչունս, որպիսի են ճայք. ագռաւք. յն. Κολοιός. Graccūlus. աշխ գարկա, չէրքէզ. կմ Galgulus, galgula. քօճէնօ, սարը գուշ. *Իշխք անառակեն, և աղաղակեն բարուք. Ոսկ. յհ. Է. 30. (ըստ ձձ. բարուոք, որ է սխալ:)

ԲԱՐՈՒԹ. գ. Բառ անծ. պարօտ. որ առ մեզ յարմարութ̃բ ասի և ՎԱՌՕԴ. Փոշի արուեստական գիւրավառ 'ի պէտս զինուց. *Ոչ էառ հուր, քանզի բարութն թրջեալ էր 'ի մէջ ջուրց ծովուն և տղղմոյն: Հրդեհեալ բարութն 'ի վեր էառ զտունն. Առաքել. պտմ:

ԲԱՐՈՒԹԻՒՆ. գ. Ἀγαθωσύνη. Bonitas. Իսկութի բարւոյ՝ հակակայ չարութեան և վատթարութե. լաւութիւն յինքեան և առ այլս. առաքինութի. բարեգործութի, և բարեբարութի. Էյիլիք, էյլիք, խայր. *Քաղցրութի, բարութի, հաւատք: Պտուղ լուսոյ ամենայն բարութ̃բ է: Զամենայն հաճութե բարութ̃բ: Ցամենայն բարութիւ արդարութ̃բ: Սիրեաց զչարութի քան զբարութիւն: Ըստ ամենայն բարութեն՝ զոր արար Իսրայէլի: Զգթութեւք, և զբազում բարութիւ՝ զոր եառուր մեզ. Լծ: *Մեծ գեռոն՝ որոյ չորք վտակք են՝ սեռական առաքինութիւնն է՝ զոր բարութիւն անուանեն: Գեռոն՝ սեռական առաքինութին է՝ բարութի. Փիլ. այլաբ: *Չկամեցան զիւրեանց բարութիսն ծանուցանել անմտացն. Փարպ: *Կարգեաց սատանայ զբարութի, և ոչ զգեղեցկութի. զի գեղեցկութեանն տուիչ ինքն է. և բարութ̃բն զանձնիշխանութին արար բարուէ. Եղնիկ:

ԲԱՐՈՒԹԻՒՆ. և ԲԱՐՈՒԹԻՒՆՔ. Բարին. բարիք. բարի իրք. ստացուածք կամ իրք վայելչականք. Բարէթնէր, աղէկ բանէր. էյի շէյլէր, դէրէքէթ, խայր, փայտ. *Բարութիւն ամենայն երկրիս եգիպտացւոց ձեզ լիցի: Տաց ձեզ յամենայն բարութեց եգիպտացւոց: Ո՞ ցուցցէ մեզ զբարութի: Անձն նորա 'ի բարութե հանգիցէ: Վայելեսցեն 'ի բարութե անձինք ձեր: Կեցցեն 'ի բարութե անձինք ձեր: Զքաղցեալս լցոյց բարութ̃բ: Տունս լի ամենայն բարութ̃բք: Զբարութիս երկրի կերիջիք: Անձն ունիս բազում բարութիս: Այր զօրութե ես դու, և բարութիս աւետարանես. Լծ: *Բազմաց յինէն հանդիպեցիս բարութեց. Խոր. Գ. 34: *Բաշխօղ բարութեց. Շար: *Բարութիւք յուսոյն կենացն յաւիտենից: Վայելել 'ի բարութիսն անպատում. Ցճխ. է:

ԲԱՐՈՒԹԵԱՆ. (յատկացուցիչ, փոխանակ ածականիս՝ բարի.) *Երկիր բարութե. գանձ բարութե. շնորհք բարութե. օր բարութե. տօնք բարութեց. գրգութե բարութեց. Լծ: Մանաւանդ ասի "Գործք բարութե". այսինքն գործք բարիք, կամ բարեգործութիւնք, ոփեր 'ի Նոր կտ":

ԲԱՐՈՒՆԱԿ, ի, աց. գ. Երկայնատարած ուռն որթոյ, և ոստք այլոց անկոց. որպէս բարւոյ ունակ կամ բերունակ, բարեբեր շառաւիղ. յն. բարին. Ἀγαθόν. *Մի ծաղկեսցեն բարունակք նորա. Ցոբ. Ի. 21: *Բարունակն, և բարութիւնք իւր. Նար. ղէ:

Այլ առաւել՝ որպէս յն. Ἀναδενδράς, ἀπώρυξ, κλῆμα. Arbustum, propago, palmes, sarmentum. չուխ, չաֆ, փէթան, փալ. *Ծածկեաց զլերինս հովանի նորա, և բարունակք նորա զմայրսն այ. Սղ. հէ. 11: *Եհան անդ ողկոյզս, և արձակեաց զբարունակս իւր: Եղեւ մայր մեծ, և բարունակք նորա 'ի նմին հաստատեսցին:

Եղիշ. ծն. 6. 23: *Բարունակք քո (այսինքն ողկոյզք) ձգեցան ընդ ծով. Երեմ. խը. 32: *Բարունակ ողկուզաբեր ճշմարիտ որթոյն: Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ. Շար: *Բարունակ ասեն զայն, որ բառնայ յինքեան զբազմաշառաւիղ որթս, եթէ յարմարացեալ ծառս, և եթէ հասեալ բազուկս փայտից (այսինքն խեչակս), յօրինեալս՚ի ձև տախտակաց անկրպակատեալս միջոցօք. (իբր ասմա, և ասմալըգ.) Վրդն. յանհ: *Արուեստաւոր իմն երկրագործութե՜ երկայնաձիգ ելուզմունք բարունակացն ընդ գերակայ ծայր ծառոցն շարամանեալք. Պիտ:

ԲԱՐՈՒՆԱԿԱՁԵՒ. ա. Որ ունի զձև և զնմանութիւն բարունակի. *Բարունակաձև բազուկք քո բևեռեցան 'ի խաչափայտի. Ոսկիփոր: *Ծառ կենաց ... բարունակաձև. Գնձ:

ԲԱՐՈՒՆԱԿԱՑԵԱԼ. } Ի բարունակէ պտղաբերեալ. յառաջ եկեալ.
ԲԱՐՈՒՆԱԿԵԱԼ. }
*Ի կենաց որթոյն մեզ բարունակացեալ պայծառ և կանոնիս ողկոյզ. Խոր. հաւատ: *Տիւունայլին կաղնի մերձ, առ ստորին գլոխնեալ (չարին որթոյ), զոր բարձեալ մսկուստար որթոյն մասին բարունակեալ չափից ... ճմլի հնձան. Մագ. խը:

ԲԱՐՈՒՐ. Տ. ԲԱՐՈՒՐՔ. *Որք ընդպատճառ և ընդբարուր՝ մեզ քեզ յօգեն իբր ընդբըլուր. Կրպք. օփ: *Եւ այլ բարուր կուտեաց 'ի վերայ նորա, և հրամայեաց սպանանել զնա. Կաղնկտ:

ԲԱՐՈՒՐԱՆՔ, նաց. Տ. ԲԱՐՈՒՐՔ, և ԲԱՐՐԱՆՔ. Περίστασις. Occasio. *Առանց բարուրանաց իսկ լուծանէր զշաբաթն. Ոսկ. մ. բ. 14:

ԲԱՐՈՒՐ. մանաւանդ՝ } Πρόφασις, αἰτία, ὑπόθεσις,
ԲԱՐՈՒՐՔ, բուրս. } σκῆψις, περίστασις, ἀφορμή. Praetextus, causa, occasio, ansa, excusatio. որ և ԲԱՐՈՒՐԱՆՔ, ԲԱՐՐԱՆՔ. Բաղպյք, բաղբաղայք, պատճառանք, մնոտի կամ սուտ պատճառք. չքմեղութիւն. պատրուակ. պէհ՛ր, պէրտ, պէհանէ, մահանա, վէսիլէ. *Բարուրս եդեալ գոյզն գունդս առաքէ. Խոր. գ. 25: *Այլ այն՝ բարուրք են անմիտ լոռղաց. եթէ լսեմ սաէ հանապազ, և ոչ առնեմ, զի՞նչ օգուտ լինիցի. Ոսկ. ղն: *Այպա թէ ասիցես, վատակեալ եմ 'ի տուրնջեան, և ոչ կարեմ յառնել. այդ բարուրք է. Ոսկ. գծ: *Եւեմիայ՝ որ զմանկունս բարուրս առնէր, ոչ առ յանձն առ. Ոսկ. եա: *Զի մի թողուցու քեզ բարուրս՝ 'ի ջրոյն փախչելոյ. Սեբեր. գ: *Կարծելով բարուրք յօգեալ վասն ծածկելոյ ըզմիտսն. Շ. մտթ: *Բարուրս կարկատեն՝ ասելով, ած վասն կերակրոյ ոչ բարկանայ ումեք. Գր. հր: *Զայն ևս պատճառս և բարուրս 'ի միջոյ բառնայ: Զաւելորդ բարուրսն և պատճառս 'ի միջոյ բարձեալ, և 'ի քրտունս առաքինութեան միջամուխ լիցուք: Պատճառք և բարուրք են այն ամենայն. Ոսկ. մտթ: *Ցորժամ մեղիցէ ... բամբասէ, և բարուրս դնէ զածութիւնն. Փիլ. այլաբ:

Կամ որպէս Մեղադրութի. զրպարտութի. մեղս. յանցանք. *Զի յորժամ յաղթիցէ, ըմբերանեսցին, և մի բարուրս պատճառանաց 'ի նա հայեցուսցեն. Եղն. մտթ: *Ոչ զի օգտեսցին, այլ զի բարուրս ինչ յօդեսցեն. Տօնակ:

Կամ որպէս Բանաւոր պատճառաբանութի, խրատունք, խրատացի բան. հագգ. *Լուծանէր զշաբաթն, զընութեն հարկ բարուրս առաջի եդեալ. Ոսկ. մ. բ. 14: *Այպա զայնպիսի բարուրս լուեալ բարկացեալ բանի պատգամաց. Ցհ. կը: *Ոչ առ յինէն ունիմ բարուրս ինչ փրկութեան. Սկեւռ. աղ:

Կամ պարզապէս Պատճառ. առիթ. սէպէպ. *Ոչ եթէ ամենայն ուրեք պատճառք հիւանդութեան մեղք իցեն, այլ է ուրեք՝ զի և պակաս ևս բարուրք լինի. Ոսկ. եա: *Բարուրք չարժամանն՝ բարկութիւն այ. և ցասմանն պատճառք՝ մեղք մեր. Ոսկ. ղն: *Զի թէ զամենեսեան սատակէր, ապա և զձգանացն իսկ բարուրս 'ի միջոյ բառնայր: Տեսանէ՞ք զի դուք էք բարուրք. Ոսկ. եա: *Մարդասիրութե բարուրք լինիցին կերակուրքն, և մի անագորոյնութե. ողորմութե, և մի թշնամանաց: Հարկ համարին այնուհետև զբարուրս սպանութեն (յոհաննու մկրտչի) առնել. Ոսկ. մտթ:

ԲԱՐՍԳԻՏՈՒԹԻՒՆ. գ. որպէս յն. հեշտասիրութի. τὸ Φιληδόνον. Amor voluptatis. Թերևս իբր պ. պէրէ. ֆէրս, որ է ցանկութի, ըղձախոհութի, պղծք. *Մի՛ բարսգիտուե զհետ լինիցիս. Կոչ. ժ:

ԲԱՐՍԵԱԼ. Որպէս յն. Κίβδηλος. որ է Այլայլական. խառնակ, դարձելի. պիղծ. և խարդախ, կամ պարսաւելի. գորըւլըգ. գուլբ. *Բարսեալ են ընդդիմացողացն այ բանք. Կիւրղ. գանձ:

ԲԱՐՍԵՄ, եցի. ն. Թուի որպէս Բասրել, պարսաւել. յն. հայհոյել. βλασφημῶ. *Բարսէին զնա 'ի խորհուրդս, թէ ո՞ է նա՝ որ զմեղս թողու. Ոսկ. եա:

ԲԱՐՍՄՈՒՆՔ, մանց. գ. Որպէս պ. պէրսէմ, 'ի ձայնիցս՝ պէրսեյան, որ է գաւազան. կամ պէրճ, այն է գլան. ստուար և նշանակէ զՄատեանն գալարեալ իբրև գաւազան 'ի վերայ գլանի. քանզի և առ պարսիկս՝ պէրսէմ էր աղօթագիրք կասպաշտից կամ կրակապաշտից՝ կալեալ մի մի ոստ 'ի ձեռին 'ի վերայ կրակի 'ի ժամ պաշտաման. *Զրուանայ ... առեալ զբարսմունսն՝ զոր 'ի ձեռին բուռն ունէր, ողջակէզ զյաշտն առնէր, ես ցորմիզդ. և ասէ. ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես: Զբարսմունսն ետ նմա՝ առնել վասն իւր յաշտ. իբր ոչ եթէ յորմզդի, կամ 'ի յազելի՝ էր զօրութիւն, այլ 'ի գաւազանսն: Որ զերկինս և զերկիր կարող էր առնել առանց բարսմանցն, զհայրն զիա՞րդ ոչ կարէր անհոգ առնել առանց գաւազանացն. Եզնիկ:

ԲԱՐՏԻ, տւոյ, տեաց. գ. որ և ՀԱԳՆԻ. բառ յն. ἄγνος, Ἄγνος. Hagnus, agnus, vitex. իտ. agnocasto, vitrice. Գօխլըգ. Ծառ ուղղաբերձ բառ նոճւոյ, և տերևք նորա գիւրաշարժք 'ի հողմոյ, որ լինի 'ի ջրարբի տեղիս որպէս զուռի. *Եւ զբարտի ծառն մի՛ աւելի պատուէք քան զուռին և զկաղամախին, և զայլս 'ի ծառոց. և մի՛ կարծէք, թէ փայտ խաչին քնի բարտի էր ... Այդ ծառ՝ որ բարտի անուանի, 'ի կռապաշտութեան ժամանակն 'ի պաշտօն առեալ էր նոցա. Շ. իղբ:

ԲԱՐՐԱԿԱՆ, ի. ա. Բառ անստոյգ. որպէս Բարուրական, պատճառաբանական. և կամ Բարեբարոյ. բարեմոյն. *Ի միւթարութե զնա համոզեալ ('ի սգոյն) ... դադար վշտացն տայր՝ ոչ փոփոխել յինքեան զիւր բարրական բնութեն. Ցհ. կը:

ԲԱՐՐԱՆՔ, նաց, նօք. որպէս Բարուրանք. Տ. ԲԱՐՈՒՐՔ. Πρόφασις, եւն. *Զի՞նչ առ այսուիկ կարասցես գտանել բարրանաց յօգուածս. Սրկ. հանգ: *Եթէ բարրանօք՝ և եթէ ճշմարտութբ: Շնութեն բարրանօք՝ անհնարին գատտաստանօք դատեցին: Ընդ խրատով Թագաւորին բարրանօք իցէ (սուտակապաղանն). Ոսկ. եբ. ե. մտթ. ե. էփե: *Ի ճնամարտն՝ փառաւոր բարրանօք զզայդ 'ի ցերեկ փոխարկեսցին. Անան. էկեղ: *Անգործ առարկեք զուր նոցա՝ առ 'ի յոչ ճարակել զձեզ բարրանօք: Անձամբ զանձն բարրանօք տիրել անհնարի է կարծիք. Շ. ա. յհ. ճէ: բ. յհ. ք: *Ոչ է պարտ մնոտի բարրանօք՝ խուսափել ... պատուամատոյց լինել. Լծ. դպրգ: *Զատութեն ինչ կամելով ճշմարտութե բարրանօք ծածկել, և ճշմարիտ երևեցուցանել. Սկեւ. յար: *Մի՛ բարրանաց գտնէր պատճառ, և 'ի գործոց լինէր յամառ. Եղն. այբուբ: *Եւ զամենեսեան այսու բարրանօք (խաբէութե) յիւր համանուութին ձգէ (նեռն). Լծ. յայտ:

ԲԱՐՐԵԼ. ւ. } Պատճառանս կարկատել. բաղբաղել. և
ԲԱՐՐԻԼ. ի. } կեղծաւորել. *Հնազանդեալ էին ... և զտարեւորական զհարկս՝ առանց բարրելոյ հարկէին. յն. անպատճառ, ἀπροφασίστως. Փիլ. իմաստ: *Հերձուածողն .. բարրի քարոզել զհոգին Տր, և հայհոյէ զհոգին. Սեբեր. գ:

ԲԱՐՐԵԼԻ. ա. Որպէս Բարրողական, բաղբաղական. պատրողական. սուտակապաս. պատիր. Προσποίητος. Simulatus, fictus. *Ի բաց գտանեմ 'ի բարրելի աղօթանացն. Փիլ. իմաստ:

ԲԱՐԻՈՔ. ա. որ և ստէպ գրի ԲԱՐԻՈՔ, ևս և ԲԱՐԵԻՔ. (նոյնպէս երկավանկ, կամ եռավանկ իբր բարիօք, այսինքն բարեօք, կի՛ բարեաւք.) Ἀγαθός, καλός, ή, όν. Bonus, a, um. Բարի, լաւ. աղէկ. էյի. խօշ. *Մնեալ 'ի բարւոք ծերութե: Մեռաւ 'ի բարւոք ծերութե: Եւ նա էր կարմիր, և աչօք գեղեցիկ, և բարւոք տեսանելով տեսան: Զձեր բարւոք գնացս 'ի քս: Զբարւոք մտացն հանդէս: Հայհոյեն զբարւոք անունն: Մնանիցիս բարւոք վարդապետութեամբն. ևն: *Զբարւոքն և զիրաւացին: Ընդ բարւոք ուղին: Բարւոք հաւաքման. Նար. ոփէղ: *Թէ և 'ի բարւոքն զգործն վճարեաց. Մխ. դփ: *Զգործս բարւոքս նոյի: Եւ զբարւոքս որ են 'ի նմա՝ և զնոսա՞ ջնջիցես: Խօսել ընդ նոսա զբանս բարւոքս. Եփր. ծն. եւ. բգ: *Բարեօք մշակի՝ նորատոյն անկոցն վայել է յառաջագոյն փոյթ ունել, և ապա յետ այսորիկ՝ այլոցն. Պղտ. էմիփտոն:

Անուանի է հոլով սորա. *Առանց առաքինութե ամենայն խոտան է ... և այլ ինչ նոյնպիսիք՝ անշահք են առանց բարոյից բարւոքոց. Ոսկ:

ԲԱՐԻՈՔ. մ. Καλῶς, εὖ. Bene, optime. աղէկ, չիրպա. էյի, էյիճէ, փոզո.. *Բարւոք մարգարէացաւ 'ի վերայ ձեր ձեր եսայի: Բարւոք ես նոցա զպատասխանին: Բարւոք ասացեր, թէ չէք իմ այր: Ո՞չ բարւոք ասեմք մեք, եթէ սամարացի ես: Բարւոք գոհանամ: Բարւոք ընթանայիք. և այլն: *Գեղեցկանալ պարտ է բարւոք (կամ բարեւք, իբր բարեօք) ծառայելով մանաւանդ՝ քան եթէ բարւոք խշխշելով՝ նոցա իսկ օրինացն. Պղտ. օրէն. ը: *Նախախնամութիւն ամենակատար է, որ գոլոյն, և բարւոք գոլոյն ամենայնի է պատճառ. Դիոն. եղբ:

Մերթ՝ իբր Կարի. խիստ. ամենայնիւ. *Բարւոք խոտէք զպատուիրանն այ. Մրկ. է. 9: *Գիտեմ և ես մեր, եթէ բարւոք

պարհուրեցան, քաջալերեալ զնոսա. Եփր. համաք. որ և ամի. ողջէ մը. էէ էօէ։

ԲԱՐԻՈՔ է. ա. մ. և փխմ. Լաւ է. ողջէ է. Καλόν έστι, άγαθόν. Bonum est. καλῶς, bene. *Բարւոք է վայրապարտ։ Բարւոք է մեզ աստ լինել։ Բարւոք են օրէնք։ Կեալն սակէն, բարւոք է։ Բարւոք է բանգ, են երթիցուք։ Բարւոք է մարդոյ՝ թէ այնպէս իցէ. եւն։

կամ բացասաբար. Ού καλόν. Non est bonum. ողջէ չէ. էօէ փէօէւ. *Ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինել։ Ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց։ Ոչ է բարւոք՝ լուրն, զոր ես լսեմ։ Ոչ են բարւոք պարծանքդ ձեր։ Տուժել զայր արդար՝ չէ՛ բարւոք։ Աչն առնուլ ամբարշտի՝ չէ բարւոք։ Կչիռ նենգութեան ոչ է բարւոք առաջի նորա։ Աչն առնուլ 'ի դատաստանի չէ՛ բարւոք։ Մեզ չատ ուտել՝ չէ՛ բարւոք։ Տգիտութի անձին իւրում ոչ է բարւոք։ Որ ակն ածէ զերեսս անօրինաց յանդիմանել, չէ՛ բարւոք. եւն։

ԲԱՐԻՈՔ ԹՈՒԻ. Լաւ կամ հաճոյ թուել. ողջէ երեւալ. *Եթէ բարւոք թուի առաջի քո՝ գալ ընդ իս 'ի բաբելոն, եկ։ *Թէ բարւոք թուի յաչս ձեր, տուք զվարձս իմ։ Եթէ բարիոք թուի քեզ թագաւոր։ Ցաչս նախարարացն ոչ թուիս դու բարւոք։ Բարւոք թուիս դու յաչս իմ. եւն։

ԲԱՐԻՈՔԱՊԷՍ. Տ. ԲԱՐԻՈՔ. Καλῶς. *Զարաչարս խորհելով յաղագս հոգւոյն ...՝ և ոչ վասն որդւոյ բարւոքապէս խորհին։ Այլազգ պատմել զառաքելոյն բան, զոր նա բարւոքապէս գրեաց. Ամ. ծԲ։ *Զօր պատուասիրաբար և բարւոքապէս ընկալեալ. Ցհ. կբ։ *Ածել յաւարտումն բարի զբարւոքապէս խորհուրդն. Կանոն։

ԲԱՐԻՈՔԵՄ, եցի. ն. Ευεργετέω. Benefacio. Բարւոք և լաւագոյն ինչ առնել. բարեգործել, բարերարել. ողջէօ. ... *Որչափ բարւոքեմ առ սոսա, նս առաւել չարանան առ իս. Անյոգ. Է։

ԲԱՐՔ, բուց, բուք. գ. որ և ԲԱՐՈՅՔ. (լծ. վարք. և բնութիւն. և բար, այսինքն պէս.) Բնաւորութի. բնութի. կամ խառնուած և յատկութի բնութեան. որ և ասի Բոյս բարուց. վարուք և սովորութի ընդարոյս. ... , ..., ... որպէս յն. Ἦθος, τά ἤθη. Mores, indoles, ingenium. *Ապականեն զբարս քաղցունս բանք չարք. ա. կոր. ժԵ. 33։ *Խառնուած կամ խառնումն բարուց. Փիլ. ... *Իսկ առ 'ի բարս բացառութեան է այսպիսի. Փիլ. ... (այսինքն 'ի պէսս վարուց, կամ բարոյական։) *Զբարս ուղղիցէք. Ոսկ. մրգր. Բ։

Եւ որպէս Φύσις. Natura, nativitas, ortus. Զայնոց յն. ..., այսինքն բնութի. լծորդ է ընդ հյ. բոյս, և թ. ..., և ... *Զբարս անասնոց. Իմ. Է. 20։ *Մանկունս 'ի սորին բուսոյ բարուց ծննդեանէ էր. Ոսկ. յհ. ա. 11։

կամ որպէս Τρόπος. Modus, institutum, mos. Եղանակ. կերպ. օրինակ. որպիսութի. առեալ. համեմատութիւնք. ..., ... *Բարք անարծաթասէրք լիցին։ Օրհնեալ բարք քո։ Բայց 'ի բարուց խաժամուժն եւեր. Եփր. ծԳ. 5։ ա. Թգ. ԻԵ. 33։ Ե. Գ. Է. 22։ *Խառնութի բարուց։ Ամպարշտացն և անօրէնաց ոչ մի են բարք, այլ բազումք ... 'ի ձեռն բարոյականին ... 'ի բարուցն ... Փիլ. Եզեկ.։ *... բարս բաժանեն. Ոսկ. յհ. ա. 45։

Եւ որպէս Ἀγωγή. Educatio, vitae ratio. ἦθος, mos, consuetudo. Բերումն. ընթացք. կարգ. սովորութի. օրէն. *Որոց ընդ բարս, և ընդ գնացս նախանձէին. Բ. Մ. Դ. 26։ *Առանձին բարք են միշտ գրոց՝ զխրատս կամ զպատիժս բաժակ անուանել. ՍԷԲԷՐ. Բ։ *Առանձին բարք են հեբրայեցւոց՝ կրկին զբանն ասել, երթալով երթայցես, և կեալով կեցցես, և մահու մեռանիցես. փոխանակ ասելոյ՝ թէ երթիցես, և կեցցես, և մեռանիցես. Կիւրղ. ծն։

կամ Συνείδησις. Conscientia. Գիտակցութի. խիղճ մտաց. *Ունիցիք բարս քաղցունս. ա. պետ. Գ. 16։

Եւ Γνώμη. Sententia, mens, propositum. Ճանաչումն. կարծիք. միտք. վարդապետութի. սկզբունք. *Ամենայն ոգւոյք լցեալք ածաւսիրական բարուք։ Կամաւոր բարուք զաչս ոգւոց 'ի բաց ընկենուլ։ Կամաւոր բարուք գործիցէ զչար. Փիլ. բագն. և Ճ. բան։ *Զայս բարոյս և մանի հմոյծ. Ամ. Դ։

Եւ Προαίρεσις. Praeelectio, arbitrium. Յօժարութիւն կամաւոր. անձնիշխան կամք. կամակար ընտրութի. մտադիւրութի. *Զխմոյ բարուց զկնի հայեցեալ. Բ. Մ. Բ. 27։ *Ցիւրոց բարուց անտի բանսարկու եղև։ Ի կամաց բարուցն մեղանչեմք. Կոչ. Բ. և Դ։ *Զբարուցդ զգիւրագթելութի. Ոսկ. ա. 32։ *Որ 'ի զաւակէ եգիպտացի է, բայց բարուք յօժարութ եբրայեցի. Փիլ. ...։

Ցայս ամենայն առմունս վերածելի են և այլ բազմապատիկ ձեւք բանից նախնեաց մերոց հայկաբանից. զոր օրինակ 'ի Ցաճախապատումն ասի. *Ընչասիրաց անասնոց են բարս և ոսչ առ 'ի պէտս. որոց ուշն զբարս չարժէ առ 'ի ներգործութիւն, և բարուց նոցա վարդապետս զմիտս մարդկան։ Յանձնիշխան կամացն այլև այլ բարք ծնանին, և 'ի բարուցն գործք։ Անուանքն զընտրութին տայցեն՝ զգրոյն 'ի միմեանց որոշումն, և գիրն զբարս (այսինքն զհանգամանս) անուանն կարգացէ. և այլն։ Եւ 'ի Նար. *Անբարի բարուց։ Բարուց անպիտաց։ Զհաստարակաց բարուց. և այլն։

ԲԱՐՔԱԽՈՒՊՈՏ. Տ. ԽՈՒՊՈՏ (բարուք)։ *Ուր յոլով յեղաբել և հերոգխայք լիցին, յոր ունելով ինքեանց փափկակեացս արքունավայելս, բարքախուպոտս, չնորհավաճառս. Ոսկէփոր։

ԲԱՐՕՐՈՒԹԻՒՆ. գ. Εὐημερία. Dies faelix. Ունելն զբարի օր, կամ զերջանիկ աւուրս. բարեկենդանութի, բարեկեցութիւն, բարեբաստութի, երջանկութի, յաջողութի. ողջէ օր, օրէր. էօէ ...։ *Սովորեցին յաղօթս կալ ... իբրև արև ծագէ, բարօրութի խնդրելով զէապէան բարօրութիւն, երկնային լուսոյն զմիտսն առնուլ։ Ընդ առաւօտն ... զծերութիւն բարօրութիւնն և զծշմարտութին ըղձիւք խնդրեն, և ստակնութի խորհրդոց մտաց. Փիլ. փեսակն։ *Ցաւէժ բարօրութեամբ յղփանայի ('ի գրախտին)։ Կատարելով միշտ զբարօրութեանցն գիտութեամբ։ Ըստ հեթանոսական յուսոյն, և միասաբեր բարօրութեն. Պիտ։ *Ընծայեցէք, որք 'ի սուգ՝ զմխիթարութին, որք 'ի բարօրութի՝ զերկիւղն։ Հոգւոց մանաւանդ գոյ հաւատալ՝ ոչ կացելոց, քան եթէ մարդկան բարօրութե. Անյոբ. կիւր. և ... *Թշուառութիք բազումք փոխանակեցին զբարօրութիւն մեր. Լմբ. ...։ և Մաշ։ *Ըղձայ նա առաջին կենաց իւրոց բարօրութեցն. Վանակ։

Իսկ *Զընծայս բարօրութե առաքելոյ. հերու ընծայիւք չնորհաւորել զբարի աւուրս. Ցհ. կբ։

ԲԱՑ, բացաւ, բացօք, 'ի բաց. ա. Որպէս Բացեալ. անփակ. անծածկելի. Ἀνεῳγμένος, ἀποκεκαλυμμένος, ἀκατακάλυπτος. Apertus, revelatus. ..., ..., ... *Դուռն իմ բաց էր ամենայն եկելոց։ Եւ դուռն բաց էր ինձ 'ի տէր։ *Պատուհանք բաց էին նմա։ Բաց էին ականջք ձեր, և ոչ լուարուք։ Լինել բաց աչաց քոց։ Եղիցին աչք քո և ականջք քո բաց՝ 'ի խնդրուածս ծառայի քո։ Որպէս գերեզման բաց՝ է կոկորդ նոցա։ Ամենայն աման բաց, որ ոչ իցէ խփեալ։ Որ զանկանել ոյ եռեսս 'ի քուն աչօք իւրովք բացօք։ Տեսանել աչօք բացօք զհրեշտակն ոյ։ Աչօք բացօք ոչ զոք տեսանէր։ Բացաւ երեսօք զփառսն տեառն իբրև ընդ հայելի տեսանել. եւն։ *Բացօք երեսօք տեսանեմք. Եփր. Բ. կոր։ *Բազում անգամ բացօք աչօք ոչ տեսանենն. Ոսկ. եօ։ *Բացաւ աչօք տեսանէին զյոյժն խնդալից. Եղիշ. Է։ *Բաց ունելով զկող. Անյ. բորփր։ *Թողլին զբազաքն 'ի բաց"։ այսինքն բացեալ. Ցես. Է. 17։ *Ի բաց են դրունք ողորմութե նորա. Եղիշ. հայր մեր։ *Որք աստ իբրև 'ի բանտի են յաղքատութեն, նոցա 'ի բաց է դուռն արքայութեն. Մաշտ։ *Թէպէտ և 'ի բաց իցեն աչքն. Ոսկ։ *Աչքն ոյ 'ի վերայ այնպիսւոյն քաղցրութե 'ի բաց է։ Զգլուխս 'ի բաց ունիմք առանց նիւթեղէն ծածկութից. Լմբ. ող. և պորփ։ *Թողեալ եմք 'ի բաց զբերան և զունկն մեր. Վրք հց. ծԲ։ *Գտին զդուռն 'ի բաց. Հ = Ց. յուլ. իա։

Իսկ ԲԱՑԱՒ ԳԼԽՈՎ՝ է Հոլանի, և Անամօթաբար. *Յաղօթս կացցէ կամ մարգարէանայցէ բացաւ գլխով. ա. կոր. ժա. 5։ *Առանց երկիւղի բացաւ գլխով առնուլ ձեռնադրութի. Օրբէ. ...։

Իսկ Եղնիկ. *Ոչ կարէ ակն բաց (կամ ակնբաց)՝ 'ի ցամաք գործել"։ Նշանակէ կամ բաց ակն, կմ՝ 'ի բացագոյն ցամաք։

Ի ԲԱՑԻ. Ἐν ἀγρῷ. In agro. Ցանդի. յագարակի. 'ի դաշտի, 'ի վայրի, 'ի բացօթեայ վայրս՝ հեռի 'ի բնակութեանց. ... ..., ..., ... *Ի բացի եգիտ զնա։ Որչափ եղեաք ընդ նոսա 'ի բացի։ Բնակեալ են 'ի բացի։ Ելին 'ի բանակէն, և թաքեան 'ի բացի։ Լուան ամենայն զօրավարք զօրաց՝ որ էին 'ի բացի։ Գոն մեզ գանձք 'ի բացի, ցորեան և գարի։ Զխոտն որ այսօր 'ի բացի է. եւն։

Ի ԲԱՑՈՅ. մ. Ի բաց ունելով կամ գոլով. *Առնու զձէթն աջ բթոմբ 'ի բացոյ. Մաշտ։

ԲԱՑ 'Ի. նխ. որ գրի և ԲԱՑՑ 'Ի. իբր բատ յն. Πλήν. Praeter. Զատ, որիշ. արտաքոյ. բայց. միայն. թող. ... *Չիք ինչ զատեալ յինէն, բաց 'ի քէն։ Եւ եղև երկիրն՝ փարաւոնի, բաց յերկրէ քրմացն։ Ամենեքեան ցրուեցան՝ բաց յառաքելոցն. եւն։

Մերթ՝ որպէս Առանց. Χωρίς. Sine. *Իսկ որ բաց 'ի տացանէ (այսինքն առանց առաքինութեց) մնացէ յիմանալի ծովն, միշտ մեծամեծս և աշխատանս կրեսցէ. Վրք հց. Գ։ *Պատահումն է, որ լինի և բացլինի՝ բաց յառաջնկայի ապականութեն. Պորփ։

ԲԱՑ, կամ ԲԱՑԱ՛. Իբրանականս նախդիր Առ, արտա. այսինքն 'ի. յ. որպէս յն. ἀπό. Տես 'ի բառն ԲԱՑԱՄԱՑ, իբր 'ի

տայց, 'ի ստցանել։

ԲԱՑ. Մասնիկ բաղադրիչ և բարդիչ 'ի ձայնիցս՝ բաց, և 'ի բաց, պէսպէս անշուք հեղինակութեանց, որպէս տեսցի 'ի կարգին։

ԲԱՑԱԲԱՌՆԱԼ. նիլ. Ի բաց բառնալ. *Հարկ է բացաբարձեցելոյ կամ սեռին կամ տարբերութեան՝ բացաբառնիլ զընդ նոյզգսն. Պորփ։ *Բայց յորժամ յին բացաբառնի. Երզն։

ԲԱՑԱԲԱՐՁՈՂԱԿԱՆ. ի, աց. ա. Ի բաց բարձող, վերացուցիչ. *Իսկ ըստ գերազանցութեան պատճառի զգոյն բոլոր եղականաց գոյ բացաբարձողականեն. Մագս. Էլէգ։

ԲԱՑԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ. } Ի բաց
ԲԱՑԱԲԱՐՁՈՒՄՆ. գ. } բարձումն (խոյք կամ մտօք). *Ի բառնալ թուոցն բացաբարձութեան յեղանակելով իսկ միահամուռ բացաբարձական թուոցն. Շիր։ *Դիր գոլ գերագոյականին էի զեղականացն բացաբարձումն. Մագս. Էլէգ։

ԲԱՑԱԲԵՐԱՆԵԱԼ. այսինքն Բերանաբացեալ. Κέχηνως. Hians. Բերանը բաց. *Ի կարօտութենէ անուն կերակրոց ('ի սովոյ) բացաբերանեալ էին իբրև շունք. Նար. պփ. Փ. 6։

ԲԱՑԱԲԻԾ. ա. Ունօղ զբիծ և զարատ յայտնի. *Ասէին, թէ բացաբիծ ախտ գիտէ զանձնէ, և այնր աղագաւ հեռզգայ. Լծ. ածաբ։

ԲԱՑԱԲՆԱԿ. ա. Ἄποικος. Domo emissus, peregrinus. ἀπῳκηκὼς, commigrans. Ի բաց գնացեալ 'ի բնիկ բնակութենէ. գաղթական. վտարանդի. *Ի քաղկիդէս քաղաքէ որ է 'ի բնակութեան աշխարհին, բացաբնակք եկեալք 'ի նա։ Կարքեդոնի վայրապետն 'ի մետաղացն բացաբնակ անդանօր եղեալ. Ոսկեփոր։ *Իպելոպոննիսականէն լեալ բացաբնակ բնակութիւն քաղաքին. Պղատ. օրէն. Ժ։

ԲԱՑԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ. գ. Ἐξοίκισις. Expulsio e domo. ἀποίκησις, peregrinatio, emigratio. Տարագրութիւն 'ի բնակութենէ. վտարանդութիւն. գաղթականութիւն. *Վասն բարեբանութեան 'ի բաց փոխելոց՝ անուն եդեալ բացաբնակութեան։ Նախնի (այսինքն հին) բացաբնակութիւն լինելով նորա եկեղեցւոյն՝ զգաւառն զայն անապատ գործեաց. Պղատ. օրէն. Ժ։

ԲԱՑԱԳԱՑԻԼ. չ. Ի յայտ գալ. բացայայտիլ. *Նմանապէս և սեռ կարող գոյ բացագայիլ տեսակաւ և զանազանութեամբ (կամ տարբերութեամբ). Անյ. պորփ։

ԲԱՑԱԳԱՆՉՈՒԹԻՒՆ. } գ. Ἐκ-
ԲԱՑԱԳԱՆՉՈՒՄՆ. չման. } βόησις, ἐκφώνησις. Exclamatio. Ἀπόφθεγμα. Acute dictum, et breve. Սաստիկ գանչիւն, գոչիւն. ձայնարձակութիւն. հնչումն ուժգին. արձագանգ. և Առած աղդոյ. *Բացագանչութեամբ ձայնի վերուստ 'ի վայր զգացուցանէին առաքեալքն. Յհ. կբ։ *Բացագանչութիւն պատկանեալ և յարմարեալ ձայնիւ. Մագ. ծԳ։ *Ունէին զգայ, թէ յուսմէ է բացագանչութիւն. Գր. հր։ *Բայց դումի յայս բացագանչութիւն ձայնի պահանջեր. Լմբ. ող։ *Ամենայն որ 'ի նիւթոյ է կազմեալ աղօտ իմն և աստուերային բացագանչութիւն հնչմանց ունի զիմանալեացն. Մագս. 'Ի տիմ։ *Վասն առաջելոց բացագանչմանց, որգան, ծանիր զքեզ. և եթէ մի ինչ յոյժ. Սահմ. Փ։

ԲԱՑԱԳԼՈՒԽ. և բացագլխով, կմ բացագլխաւ. ա. մ. Հոլանի. գլխիբաց. բացագլխով. որոշ ուրեք. *Բացագլխուք և հոլանի կանանցն. Յճանէ։ *Բացագլուխ (կմ բացագլխով), և բոկ ոտիւքն գնաց. Լմբ. պտրգ։ *Բացագլխումն և բոկոտն խաղայր. Ճ. Դ։ Ն. Վրք հց. Ց։ *Տիկնայք և աղախնայք բացագլխաւ ընդ երկիր զանձինս իւրեանց քարշէին. Արծր. Ց. 12։

ԲԱՑԱԳՆԱԼ. Տիրապէս գնալ, մեկնել, անջատել. *Բացագնալով 'ի վերայ ծովուն ած մարմինով. Քեր. քերթ։

ԲԱՑԱԳՆԱՑ ԼԻՆԵԼ. Տարագնաց վտարանդի լինել. *Յերեսաց հալածչացն բացագնացք լինէին. Ոսկ. գծ։

ԲԱՑԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ. գ. Գնալն հեռի ուրեք. օտարութիւն. *Հատանել զբացագնացութիւն մեր և իջէ։ Բացագնացութեան այլոց գաւառաց և եկեղեաց... 'ի բացագնացութիւն... բացագնացութեամբք քաղաքականօք. Պղատ. օրէն. ԾԲ։

ԲԱՑԱԳՈՅ, իջ. ա. Ἀπών. Absens. Որ 'ի բացեայ գոյ. բացակայ. հեռաւոր. *Երևակայութիւն է բացագոյիցն մասնական դիտումն։ Երևակայութիւն բացագոյիցն է յիշողութիւն. Սահմ. ԺԳ. (հին տպ. բացակայից)։

ԲԱՑԱԳՈՅՆ. ա. մ. նխ. Առաւել բացական. 'ի բացեայ. հեռագոյն. Ἀφιστάμενος, διάστημα ἔχων. Distans. Μακρός. μακράν, ἀπὸ μακρόθεν. Longinquus, et longe. հեռու, հեռուանց. ուզագ, ուզագդան. *Գտեալ յագարակս և 'ի բացագոյն տեղիս. Լաստ. ԻԲ։ *Բացագոյն (կամ բացագոյնս) 'ի միմեանց տանիցէք հօտս 'ի հօտից։ Եւ պետրոս զհետ նորա երթայր բացագոյն. Ծն. ԼԲ. 16։ Մտթ. ԻԶ. 58։ *Զատ որոշեաց 'ի նախարարաց զքահանայսն, և հեռացոյց 'ի նոցանէ բացագոյն. Եղիշ. Է։ *Եւ 'ի սմանէ զհարաւով բացագոյն՝ հովիտ իմն գաշտաձև։ Ճամբարն երուանդայ էր բացագոյն 'ի քաղաքէ նորին. Խոր. Ա. 15։ Բ. 43։ *Զատուցանէն զաղխս բանակին իւրեանց բացագոյն 'ի նոցանէ բազում վտաւանօք։ Բանակէր բացագոյն 'ի նոցունց իբրև վտաւանօք ինչ սակաւ. Ղևոնդ։

ԲԱՑԱԳՈՐԾԵՄ, եցի. ն. Ἀπεργάζομαι. Efficio, conficio, facio. Տիրապէս գործել. առնել. ներգործել. կատարել. *Բժշկարան հիւանդաց զանազան զդեղիս զայս բացագործեալ. Նիւս. բնութ։ *Մեռելութիւն բացագործէ ախտից. Սահմ. Է։ յորմէ և Վահր. յոյփ։ *Անհաւասարի գոլով պէտս խնդրոյ բացագործէ. Անյ. պորփ։

ԲԱՑԱԳՈՅՆՈՒԹԻՒՆ. գ. Բացագոյն գոլ. հեռաւորութիւն. *Ճշմարիտ թախանձութեան կոչեցեալ զբացագունութիւն յերացն. Անյ. վերլծ. արիստ։

ԲԱՑԱԴԱՌՆԱԼ. և } Ἀποστρέφο-
ԲԱՑԱԴԱՐՁ ԱՌՆԵԼ. } μαι, ἐκκλί-
ԲԱՑԱԴԱՐՁԵԼ. ել. } νω. Aversor, evito, declino, declinare facio. Ի բաց դառնալ և դարձուցանել. խորշել. Կէրի տէօնտիւրմէք, չէվիրմէք. *Ի պոռնկէն ոչ բացադարձաւ. Վրք հց. Փ։ *Տրամութեան զանազանութեանն զանձն սրտմտութեամբ, և յամենայն խոտից բացադարձ առնէ։ Քանզի բացադարձէ 'ի սոցին ախտից ըղձմանէ ամենեին. Նեղոս։ *Ի սակրիւր հեռաց բացադարձեալ։ Բացադարձեալ 'ի հրաժարելեացս. Սկևռ. լմբ. և ող։

ԲԱՑԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ. գ. Ἀποστροφή. Aversio, aversatio. Ի բաց դարձումն. հրաժարումն. *Բացադարձումն 'ի զգայութեանց հեշտութէ. Լմբ. էր ընդ եղբ։

ԲԱՑԱԴԱՐՁՈՒՑԱՆԵՄ, ձուցի. ն. Ἀποστρέφω. Averto. Ի բաց դարձուցանել. 'ի բաց վարել. *Բացադարձուցելս զհոգեկան (կամ հոգական) խորհրդոց պատահմանս. Նեղոս։

ԲԱՑԱԴԷՄ. ա. Բացաւ գլխով և դէմ երեսօք. համարձակ, աներկիւղ. *Կին (չար) տան մերիկ, բացադէմ պատերազմ, հացակեաց գողան. Ոսկեփոր։

ԲԱՑԱԴՐԵՄ, եցի. ն. Ἀποτίθημι. Depono. ἐκτίθημι, expono. Ի բաց դնել, մերկանալ, թողուլ. հեռացուցանել. փարատել. Քէնարէ գօյմագ կամ չըգարմագ. *Զբոլոր հին մարդն բացադրել հանդերձ գործովք իւրովք. Մագս. Էլէգ։ *Մովսէս յորժամ 'ի խորանն մտանէր, բացադրէր զքօղն յերեսաց։ Խնդալ և զբարս մարդկան, և բացադրեաց 'ի միմեանց. Լմբ. ծղ։ *Բացադրեալ վերնայինն զմարմնոյն մասնակն. Նար. ծէ։

Կամ Ցանգիտման և բաց դնել. *Տեառն պանականն խորան բացադրեալ. Ճ. Գ։

Եւ Մեկնել. բացատրել, բաց և յայտնի դնել առաջի. *Ա՛ս իսկ զչեխեանս բանի զուացուցս այսուցիկ մեզ բացադրէ մի ըստ միոջէ. Յհ. կբ։ *Որոց եղեւ իշխանութիւն բացադրել զխորհուրդն քո յաշխարհս. Շար։ Տես և ԲԱՑԱՏՐԵԼ. զի տ և դ են լծորդ։

ԲԱՑԱԴՐՈՇՄԵՄ, եցի. ն. Յայտնի կամ տիրապէս դրոշմել. կնքել, տպաւորել. *Բացադրոշմէ 'ի գեանս նոցա. Նչ. եղէկ։

ԲԱՑԱԴՐՈՒԹԻՒՆ. գ. Ի բաց դնումն. *Բացադրութիւն ամենայն կենցաղոյ. Լմբ. ող։ Տես և ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ։

ԲԱՑԱԹՈՒԵՄ, եցի. ն. Քաղ թուել, 'ի համար արկանել. *Բացաթուեալ զմտաւորս առաւելութեանցն. Անյ. վերլծ. արիստ։

ԲԱՑԱԼԻՆԻՄ, բաց եղեալ. Ἄπειμι. Absum. ἀπογίνομαι, recedo. Ի բացեայ լինել, 'ի բաց գնալ, հեռանալ. չգտանիլ ներկայ. *Պատահումն, որ լինի, և բացալինի՝ առանց ենթակային ապականութեան. Գործ։ *Որակութիւն լինի և բացալինի առանց ենթակային ապականութեան. Նիւս. բն։ *Սահմանս այս զեղեալսն և զբացեղեալսն՝ պատահումն նշանակէ... որգոն, զսպիտակն՝ որ կարող գոյ յիս լինել և բացալինել... (իսկ յաւէլն՝) ոչ բացալինի սեաւն եթովպացւոյն, և ոչ զարձեալ ագռաւուն... պայծառ է յաւելուլ 'ի սահմանս. մասնաւորութիւն, և (կամ) ներգործութեամբ. Անյ. պորփ։

ԲԱՑԱԼՔԵՄ, կմ ԲԱՑԱԼՔԱՆԵՄ. լքի, լքեալ. ն. Ի բաց թողուլ, լքանել. անտես առնել. *Թողեալ բացալքին զաշխարհս։ Հեմ բացալքեալ թողուս զիս. Ձեր. կբ։

ԲԱՑԱԽԱՑՏԱՄ. չ. Ἀποσκιρτάω. Resilio. Խայտալով 'ի բաց ընդոստնուլ. Տըշարը սըչրամագ. *Երկնից գերերասան՝ հրահանգեալն պահօք. և ոչ բացախայտեալ 'ի վերակացու (այսինքն 'ի վերահսկող) մնացն. Նեղոս։

ԲԱՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ. գ. Ἀπολογισμός, ἀπολογία. Rationis redditio, expositio, satisfactio. Ցայտնաբանութիւն. հրապարակախօսութիւն. պատասխանատուութիւն. յանդիմանութիւն. գատապարտութիւն. *Ցեա քո զպատանեանն, և նորա զգեհենայն բացախօսութիւնս։ Ուր երկնայինք առնէ՝ ընդդէմ ամբարշտացն զբացախօսութիւնն, որ որոշող է և հատու քան զամենայն սուր երկսայրի. Լմբ. յոյփ։ *Արդ զինչ իցէ պատասխանն, արդ զինչ իցէ բացախօսութիւն. Վրք հց. Փ։ *Զահաւոր զատաստանին 'ի մէջ առ ըղբացախօսութեան վճռին. Կլիմ։

ԲԱՑԱԾԱԳԵՄ, եցի. ն. չ. Ի դուրս և յայտնի ծագել. արտափայլել. *Զճշ-

մարտութեանն յայսմ ամի բացածագեցին լուսոյ խորհուրդ ։ Գերակատար լրութիւնն յայսմ բացածագեաց աւուրս. Խոր. կտկ։

ԲԱՑԱԾԱՆՈՒՑԱՆԵՄ. ուցի. ն. Յայտնի ծանուցանել. արտայայտել. *Ըղձմանն մեր անձնաւոր... մարմնացեալս բացածանուցեր. Նար. խոստ։

ԲԱՑԱԾԱՆՕԹԱՆԱՄ. ացայ. չ. Ἀπογινώσκομαι. Non cognoscor, rejicior, despero. Անծանօթանալ, անյոյս մնալ. եւ երա յն. ոճոյ՝ Անյուսանալ. վհատիլ. *Այսուհետեւ մի բացածանօթասցի Թերեւս 'ի մէնջ՝ յարակցել իմն հունձք չար մշակաց։ Այսպէս ապա բացածանօթացեալ նմա ողջոյն կրին. Յհ. կթ. (Թերեւս կանխաւ անծանօթ մնացեալ, եւ ապա քաջ ծանուցեալ)։ *Մի բացածանօթասցիս 'ի քէն. Բրս. հայէաց։

ԲԱՑԱԾՈՒԹԻՒՆ. գ. Ἀπαγωγή. Abductio, reductio. Ածումն 'ի բաց, հարկաւ ձգումն. ըստ տրամաբանից՝ Հարկաւորին յանդգնելս, կամ վերածելին յանհարելին. *Վասն էր ոչ ուսուցանէ մեզ յառաջադոյն եւ զանհարկելին բացածութիւն։ Զառ 'ի յանհարկելի բացածութեն ուսուցանէ. Անյ. վերլծ. արիստ։ *Սակս հեռաբնակութե, ողորմացեալ յանմանելի բացածութի բոլորից լուսաւորացս. Տօնակ։

ԲԱՑԱԾՆԵՄ. եցի. ն. Ἀπογεννάω. Genero, produco. Ի դուրս ծնանել կամ ծնուցանել, մանաւանդ բանի. *Զի հատանելով եւ զանելով զգլուխն՝ բացածնեսցէ. Նանայ։

ԲԱՑԱԿԱՄ. կացի, ցեալ. չ. Ἀφίσταμαι. Absto, abscedo, disto. Ի բաց կալ. հեռանալ. օտարանալ. *Ոչ երբեք առ յինքենէ բացակալ կարացեալ. Մագ. էհէղ։ 'Բացակացեալն յայ՝ անկցի 'ի վայր. Նեղոս։ *Մեք այնպիսի օտար, եւ բացակացեալ. Խոր. ա. 18։ *Բացակալով յարեգակէ աւելի կամ պակաս. Շիր։

ԲԱՑԱԿԱՑ, ի, ից. ա. որ եւ ԲԱՑԱԳՈՅ. Ἀπών. Absens, distans. եւ բայիւ. διίσταμαι, disto. Որ կայ 'ի բաց. բացակայ. տարակաց. հեռաւոր. հեռի. օտար. *Իսկ բացակայն՝ որ ոչ է անտ. Լմբ. ծղ։ 'Հեռաւորեալ բացակայ արասցէ զմեզ բոլորից ամէն ('ի մոլորութենց). Զքր. կբ։ *Բացակայիցն տարակացելոց գիրս գրէր. Սարգ. յհ. ա։ 'Բացակայ յերկրայինն կրից. Նար. տաղ։ *Բացակայ է ճանապարհ արդարոյն եւ անօրինին 'ի միմեանց. Լմբ. առակ։ *Ըստ ազգականին հարկանին եւ ըստ սեռակին... որ որէչ եւ բացակայ են գունոյն. Նիւս. կազմ։

ԲԱՑԱԿԱՅԱՆԱՄ. ացայ. Տ. ԲԱՑԱԿԱՑԻՄ. *Ի չհետեւելոյն կենդանակերպից բացակայանայցեն աստեղքն յարեգակնէ մասունս ժէ։ Յորժամ բացակայասցին յարեգակնէ մասունս ժէ։ Յորժամ կենդանատեսակքն բացակայասցին յարեգակնէ. Շիր։

ԲԱՑԱԿԱՑԻՄ. եալ. յ. Ἀπέχω, ἀπέχομαι, διίσταμαι. Abstineo, disto. Ի բաց կալ. եւ հրաժարիլ. եւ լինել բացակայ, հեռի կալ կամ գտանիլ. *Մի բացակայեսցիս յորմէ առնել կարօտելոց. Բրս. պաղատ։ *Անձնեանք բացակայքն 'ի մեղացն գնացից. Յճխ. առակ։ *Ոչ անարժանն... բացակայել արեանց փափագելեան. Խոսր։ *Յորքանոց նուագեցին լուսաւորմնեցն ըմբռնողութեանց 'ի նորա բացակայել յարգարականն ... Սկեւ. Լմբ։

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ. գ. Հեռակայութիւն, հեռակացութիւն. հեռաւորութիւն, եւ հեռի կալն. *Առանց անջատման եւ բացակայութեան 'ի նոսա հնչելով. Փիլ. էլ։ *Անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խորան 'ի խորանէ. Նար. ծէ։ *Կամ քըն հեռի գտանէր բացակայութեամբ յայս։ Գրեւն՝ զբացակայութիւն նշանակէ, որպէս որ հեռի է 'ի մէնջ՝ գրով տեղեկանայ. Լմբ. ող։ *Ըստ տունջեան եւ գիշերոյ բացակայութեանց. Արծր։

ԲԱՑԱԿԱՑՈՒՄՆ, յման. գ. Ի բաց կալն. հեռանալն. *Ազգէ կնոջն զբացակայումն սրովբէին 'ի խափանելոյ զմուտս դրախտին. Ճ. Գ։

ԲԱՑԱԿԱՆ, ի, աց. ա. Ἀπέχων. Quod abest. τὸ πάῤῥωθεν, longinquum. Որ կայ 'ի բացեայ, հեռի, հեռաւոր, տարակաց, բացակայ. *Վաճառեսցեն զնոսա 'ի գերութիւն յազգ հեռաւոր բացական. Յովէլ. գ. 8։ *Զորս յանդիման պատուել ոչ կարէին մարդիկ վասն հեռի բնակելոյ, զբացական տեսիլն՝ զնոյն օրինակ քանդակեցին. Իմ. ժդ. 17։ *Բացականացն զօս բաղձալի. Նար. ի։

Կամ Αἴθριος. Subdialis, sub dio. Բացօթեայ, որ կայ 'ի բացի, կամ 'ի պարզի. *Նստիս օթագացեալ բացական. Յոբ. լէ. 9։

Եւ իբր Պարզեալ, բացեալ, բաց. *Հովանանային քերովբէիցն բացական Թեւոցն տարածմամբ. Անան. էկ։

ԲԱՑԱԿԱՆԱԳՈՅՆ. ա. Հեռագոյն. եւ կարի օտար. անհման. *Եւ զի՞ եւս երկարս՝ պատուածօրէնս՝ բացականագոյնս չարագրեցից բանաստեղծուիս. Նար. ղդ։

ԲԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Տ. ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ. *Ոչ անջրպետիս բացականութեամբ. Սարկ. աղ։

ԲԱՑԱԿԱՏԱՐԵՄ, եցի. ն. Ἀποτελέω. Efficio, perficio, constituo. Տիրապէս կատարել. առնել, կացուցանել, կամ բաղկացուցանել. եւ. լինել. եղանիլ. *Շրնչաւորն եւ զգայունն ... բացակատարեցին զկենդանին. Պորփ։ *Ութին մասունք (դ. բ. ա) չարագրեալ՝ զեօթն թիւ բացակատարեն։ Աւերբ ոչ եթէ զօգ հարկանէ, ոչ բացակատարէ ձայն։ Սկզբունս ամենայնի բացակատարէ զչորս տարերս։ Սահման զբաղումն մի ինչ առնէ, եւ մի բնութի բացակատարէ. Սահմ։ *Դեղագործութի 'ի դեղոց (գունոց) պատկեր բացակատարեաց։ Քաղաքական միաբանութի 'ի բազմաց եւ յաննմանից բացակատարի. Արիստ. ...։ *Լինելութիւն՝ ապականեցելոց այլոց, եւ ապականութի՝ ծնիցելոց այլոց, բացակատարի. Փիլ. այլաբ։

Եւ կամ պարզապէս՝ Կատարել, 'ի լըրումն ածել, գլխաւորել. լնուլ. առնել. *Եկեալ բացակատարեաց տէրն զխախտեալ բարբառն ածազգեստիցն. Զքր կբ։ *Ծառայք են հաւատարմեալք, որք բացակատարեն զպատուիրեալսն. Մագ. էհէղ։

ԲԱՑԱԿԱՏԱՐՈՒԱԾ, ոյ, ոց. գ. Ἀποτέλεσμα. Effectus, opus, effectio. Գործ ինչ արդեամբք վճարեալ եւ կատարեալ. արարած. կերտուած. *Զ բացակատարուածսն (պատուէրն) զարեգակն, զլուսին, զամենայն երկին, եւ զաշխարհ. այլ եւ սոքա ոչ յինքեանց եղեն, այլ յումեմնէ արարչէ 'ի կատարելագունէ հանճարով. Փիլ. փէտոսկան։

ԲԱՑԱԿԱՏԱՐՈՒՄՆ, րման. Նոյն ընդ վ. Տիրապէս կատարումն. եւ Գործ. *Զայն է բացակատարումն գանձեցելոյ 'ի մեզ հագստի. Սահմ. ծա։

ԲԱՑԱԿԱՑԵԱԼ. Տ. ԲԱՑԱԿԱՄ։

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ. գ. Ի բաց կալն, տարակացութի. կամ տարագրութի, օտարութիւն. *Արտաքսմանն ադամ վերստին կանգնեցաւ, բացակացութի լուծաւ. Ճ. Բ։ *Երանութի է պարառութի ամենայն բարեաց, եւ բացակացութի ամենայն չարեաց. Մխ. այր։

ԲԱՑԱԿԱՑՈՒՑԱՆԵՄ. ն. Տալ բացակայել. հեռի կացուցանել. *Զնոյն մատուանս զբռնաւորն եւ չորս բացակացուցէ յարեգակնէ. Շիր։

ԲԱՑԱԿՈՂՄԱՆՔ, անց. գ. Հեռաւոր կողմանք, կամ բնակիչք նոցին. *Մեծաւ պնդութեամբ առնէր վերժխնդրութիւն հաւատոց եւ վարուց երանելին տրդատ, առաւել այնոցիկ՝ որ բացակողմանքն էին յիւրում իշխանութեան. Խոր. գ. 3։

ԲԱՑԱԿՈՉԵԼ. ն. Ἀποκαλέω. Voco, appello, appellito. Կոչել արձակաբար կամ իւիք օրինակաւ. յորջորջել. *Կապարան (այսինքն բանտ) զմարմինն բացակոչէ հոմերոս. Սահմ. է։

ԲԱՑԱԿՏՈՒՐ. ա. Ἀπρόκοπος. Իբր Կիսակտուր, թերի, անկատար. յն. անյառաջադէմ. *Եթէ այժմ ծնցիս, եղիցի բացակտուր ծնունդն. Պտմ. աղէքս։

ԲԱՑԱԿՏՐԵԱԼ. Ἀποτεμνόμενος. Ի բաց կտրեալ, հատեալ 'ի բաց. *Ըստ օրինակի շառաւիղաց բացակտրեալք անկան յածայնոցն. Ար. է։

ԲԱՑԱՀԱԼԱԾԵԼ. ն. Ի բաց հալածել. *Զգիւղգունդ բանակս նորա բացահալածեալ վանեցեր. Զքր. կբ։

ԲԱՑԱՀԱՅԵԱՑ. ա. Բայց աչօք հայեցօղ. յառակատես, կամ հեռատես, սրատես. *Այլ մեր բացահայեաց աչօք տեսեալ զլոյսն երկնաւոր. Եղիշ. է։

ԲԱՑԱՀԱՅԻԼ. յ. Ἀποβλέπω. Respicior, intueor. Քաջ 'ի բաց հայել. ակնարկել. դիտել. *Առ եզր ածային խոստմանց տէր բացահայելով. Սահմ. ա։

ԲԱՑԱՀՆՉՈՒՄՆ. Տ. ԲԱՑԱԳԱՆՉՈՒՄՆ. *Ոչ, ասէ, լեզուով կարգամ առ քեզ, եւ ձայնի բացահնչմամբ. Լմբ. ող։

ԲԱՑԱՀՈՍԵՄ, եցի. ն. Ի բաց հոսել, հեռացուցանել. *Բացահոսեաց լուսինն զհրատն, եւ չարամերձեցաւ լուսոյն թագին 'ի նէր եօթնամանեակ. Շիր։

ԲԱՑԱՀՈՍՈՒԹԻՒՆ. գ. Ի բաց հոսելն, կամ հոսիլն. հեռացումն. *Առ 'ի գիտութի բացահոսութեան եւ չարամերձութե բանի բերջիր ասել. Շիր։

ԲԱՑԱՁԱՅՆԵՄ, եցի. ն. Ἐκφωνέω. Exclamo, pronuntio, exprimo. Բացարձակ կամ յայտնի ձայնիւ կարդալ. գոչել. վերաձայնել. *Բացաձայնեսցուք երգողաբարբառ բարեբանութիւս. Նար. խլ։ *Ցանգումն բացաձայնելոցն օրհնութեց. Մագ. էհէղ։

Կամ Որոշ ձայնիւ եւ բանիւ կամիլ բացայայտել զիրս միթինս. եւ պիտակաբար՝ լայնաբար խօսելով ասել. *Զներգործութին անճառ միաւորութեն բացաձայնէ։ Անճառ միութեանն քարոզ՝ զայս բացաձայնեցաք. Լմբ. ատ։ *Զմարմնական յօդուածոյս անուանն բացաձայնէ 'ի վերայ սոցա. Լմբ. ող։ *Վասն մի բնութե 'ի քն բացաձայնելոյն փոխանակ անձին. Լմբ. առ ռուխն։

ԲԱՑԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ. գ. Պարզապէս եւ բացարձակ կոչումն. պարզ կամ լոկ ասութի. *Ոչ առաց բացաձայնութեամբ, թէ երանի է աղքատաց, այլ՝ զխոնարհսն 'ի մէջ ած, թէ հոգւով. Լմբ. ող։

Եւ Լայնաբար կամ պիտակաբար ասու֊

թի. Impropria dictio. [illegible]

ԲԱՑԱԶԻԳ. ա. Հեռաձիգ, տարածիգ, բացաձիգ. [illegible]

ԲԱՑԱԶԿՏԻԼ. յ. Հեռացեալ ձգիլ ձգիլ. [illegible]

ԲԱՑԱԾԱՆՈՒԹԻՒՆ. գ. [illegible]

ԲԱՑԱՄԵՐԺԵՄ. եցի. ն. Ի բաց մերժել. [illegible]

ԲԱՑԱՄԵՐԺՈՒԹԻՒՆ. գ. Տարագրութիւն, 'ի բաց վարումն. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏ. ա. Բաց և յայտնի. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏԱԿԱՆ. ի, աց. Տ. ԲԱՑԱՅԱՅՏԻՉ. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏԱԿԻ. մ. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏԱՊԷՍ. Նոյն ընդ վ. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏԵՄ. եցի. ն. Ἐκφανίζω, δηλόω, ἐῶ. Manifestum reddo, patefacio, expono, &c. [illegible]

կարգացն զՄեկնութիւն. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏԻՉ. ա. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏՆԵԼ. Տ. ԲԱՑԱՅԱՅՏԵԼ. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ. գ. Մեկնութիւն. [illegible]

ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆ, ման. գ. [illegible]

ԲԱՑԱՅԻՇԱՏԱԿ. ի, աց. գ. Ἀπομνημόνευμα. Dictum vel factum memorabile, et commentarii rerum gestarum. [illegible]

ԲՂԽԵԼ. որպէս Ծնունդ Որդւոյ. *Ընդունելի է մշտնջենաւորակից 'ի նմանէ բանն՝ որպէս յաղբերէ 'ի հայրական էութէ բըղխեալ. Կիւրղ. գանձ։ *Անն աղբերն 'ի հօրէ բղխեալ բանն. Հ. ամ. ատ։ *Բանն իմաստութե բղխեալն 'ի հօրէ աղբերաբար. Յհ. իմ. էլ։ *Զծննդեանն ծնանել կամելով՝ բղխել զնոյն մերձակոչէ. Վանք. հմբ։ *Այս բան (որդին) ծնունդ և մշտնջենաւորութիւն է 'ի նորին հօր զօրութէ առանց իրիք (ախտի) բղխեալ. Ոսկ. յհ. ա. 3։

ԲՂԽԵԼ. առ ելումն հոգւոյն սբյ. Ἐκπορεύομαι. Precedo. *Որ 'ի հարազատ 'ի յարգանդէն յառաջ բղխեալ անհատաբար 'ի յորդւոյ տիրապէս սբ հոգին։ Որ 'ի հայրական էութենէն յառաջ բղխեալ աղբիւր լուսոյ. Շար։ *(Հոգին սբ) աղբիւր մշտական՝ բղխեալ յարական՝ յերկուց միական, յանկնէ հայրական՝ գետէ ծննդական՝ ծով ծաւալական. Գանձք։ Իսկ Կոչ. ծէ. *Հոգին ուր կամի՝ բղխէ ». իմն ըստ յն. շնչէ։ *Եթէ յառաջ խաղալ, և եթէ բղխել, և եթէ ելանել ոք ասիցէ, 'ի ճշմարտութենէն ոչ սխալէ. Լմբ. հանգ։

ԲՂԽԵՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Տալ բղխել (ըստ ամենայն առման). *Բղխեցուցանել զբոյս դալարւոյ. Յոբ. լԸ. 27։ *Ջբոյսս և ըղձունկըս բղխեցոյց. Շար։ *Բղխեցոյց զնա 'ի գալիլիէ, և ծագեցոյց զնա 'ի նազարէթ. Եփր. համաբ։ *Բղխեցուցից յանջուր երկրին զմայրն և զսօսափն. Ես. խա. 19։ *Աղբիւրս յանապատ վայրի բխեցուցեալ։ Աղբիւր յանապատի բղխեցոյց։ Բղխեցոյց զաղբիւրն յորդաբուղխ. Փիլ. այլաբ։ Նար. մծբ։ Ագաթ։

ԲՂԽԻՄ, եցայ. չ. ց. Դուն ուրեք վարի առ նախնիս. Տ. ԲՂԽԵՄ. *Խառնակ յանապատութեալ արգանդէ բխեցաւ տունն բազմապատուող. Եփր. վճւի։ *Այլև քոյդ հոգի, որ 'ի քէն բըխի՝ անապատելի. Գնձ։ և Մխ. ատար. և այլք յետինք։

ԲՂԽԻՉ. Այսինքն Բղխօղ. *Բղխիչ ամենայն բարութեց։ Կաթին և մեղու ասի բղխիչ. Ագաթ։ Անյաղթ. բարձր։ և եւս Սարգ. յկ. Բ։ Լմբ. ող։ *Որովայնամոլութին է բխիչ ամենայն չարեաց. Վրք հց։

ԲՂԽՈՂԱԲԱՐ. մ. Իբրև բղխեալ. ըստ օրինակի բղխման. բղխմամբ. *Զելումն բխողաբար զամենասբ հոգւոյն. Տօնակ։

ԲՂԽՈՂՈՒԹԻՒՆ. գ. Բղխօղն գոլ. բղխելն ներգործաբար. *Որպէս որդի է 'ի հայր ծնելութբն, և հայր յորդի ծնօղութբն. Նոյնպէս հայր և որդի են 'ի սբ հոգին բղխողութբն, և հոգին սբ 'ի հայր և յորդի բղխելութբն. Մխ. ատար։

Մերթ եւս՝ Բղխեալն գոլ. բղխումն կրաւորաբար. բղխելութիւն. *Ցաղագս հօր անելութեն, և որդւոյ ծնելութե, և ամենասբ հոգւոյն բխողութեն. Տօնակ։

ԲՂԽՈՐ, կամ ԲՂԽՈՐՈՍ. որպէս յն. χλωρός. որ և ՔԼՈՐՈՍ. Դեղին կամ դալար, որպիսի է գոյն նորաբողբոջ խոտոց բղխելոց 'ի հողոյ. *Որդի կոստոսայ. որ բղխոր անուանեցաւ։ Էր որդի բղխորոսին. Հ = Ց. մայ. իէ։

ԲՂԽՈՒՄՆ, խման. գ. որ և ԲԽՈՒՄՆ. Բղխելն ներգործաբար, և մանաւանդ չէզոքաբար, կամ կրաւորաբար (ըստ ամենայն առման). *Նապաստակ երինջի և 'ի բըղխմանէ վիժից աղբերց։ Զիմաստութե բըղխմունս. Փիլ. լիոս. և լին։ *Աղբերք՝ որոց բղխմունքն զայլոց կարօտութիւս լնուն։ Յորդութե բղխմանց. Եղիշ։ *Ընկալան զվտակս բղխման անմահութեան. Ագաթ։ *Բղխումն յորդաբուղխ տուրք արեանցն. *Բղխմամբ քո սբ արտասուաց. Շար։ *Արտասուացն բղխմունս։ Բղխմունք հանապազահոսք։ Բղխման բանիս, կամ կայլակաց բանից, կամ երգաբանութեան. Նար։

ԲՂԽՈՒՄՆ. Անճառ ելումն կմ ծագումն հոգւոյն սբյ՝ ըստ նմանութեան անոպաա աղբեր կամ գետոյ. և նոյն ինքն հոգին սբ բղխեալ. *Սբ հոգին անհատացեալ բըղխումն 'ի հօրէ և յորդւոյ անհատաբար, յերկաքանչիւրոց ընդ պատճառաւ». այսինքն իբրև 'ի միջէ սկզբնէ. Քեր. թեր։ *Որ համագոյդ ես հօր և որդւոյ՝ անճառաբար բղխումն 'ի միշտ էէն. Շար։ *Զորդի իբր ծնեալ 'ի հօրէ բնութենակից և հաւասար հօր, և զհոգին իբրև զբղխումն 'ի նոյունց էութէ. Խոսր։ *Եւ ոչ աղբեր հոսման հանգոյն՝ գոլ անմարմին բղխումն հոգւոյն. Յհ. օձն։ Տես և ԵՐԵՒՈՒՄՆ (ըստ յն. ոճոյ)։ Ասի բղխումն հոգւոյն սբյ և նմանութբ ծագման ծաղկի կմ պըտղոյ իբր յարմատոյ և 'ի բնոյ. և նմանութբ բղխման շնչոյ 'ի բերանոյ, կամ ճառագայթի յարեգականէ. եւն։ Վրդն. ծն։ Կիւրղ. 'ի վանականէ։ Կիւրղ. գանձ։

ԲՂԽՈՒՄՆ, ասի լայնաբար և Ծնունդն որդւոյ 'ի հօրէ անճառ ծննդեամբ. *Իմոյ ծոցոյս է ծնունդ, և հայրական սըրտիս է բղխումն. Երզն. մտթ։ *Նա միակ է և միածին և ծոցածին որդի, և բղխումն սրտի բան սերտ սիրելի և հաճոյ. Տօնակ։ *Բխումն՝ եւս զորդի անուանեն (գիրք)։ Զորդին միածին դաւիթ 'ի դէմս հօր բըղխումն զնա կոչէ ասելով. բխեաց սիրտ իմ զբան բարի. անախտ և աննիւթ ծնընդեանն որ 'ի հօրէ, զբղխումն անուն մերձ դնէ։ Զծնեալն զորդի բխումն 'ի հօրէ պատմաբանէ. որպէս զի բխմամբն զանախտութիւն, և զառանց չարչարանաց (այսինքն կրից) և հոսման պելումն գուշակեսցէ. Նոյնպէս և զըստ մարմնոյն ծնունդ բխումն 'ի կուսէն մարգարէն ասէ. Վանք. եըըտ. և յոյփն։

ԲՂԽՈՒՄՆ. որպէս Բղխիչ. բղխօղ. *Հայր է հայրն միածնի որդւոյ, և բխումն հոգւոյն սբյ։ Որ է հայր միածնի որդւոյ, և բղխումն հոգւոյն սբյ։ Սէր աղբիւր է ամենայն բարեաց, սէր բղխումն երախտեաց քոյ, և վայելեցուցիչ յանպատում շնորհս նորա. Յճխ. Է. Դ. ծա։ *Որդւոյ պատճառ ծննդեամբ անճառ, հոգւոյ բղխումն սըղբերաբար։ Աղբիւր կենաց ես, և բղխումն ողորմութե։ Բղխումն ողորմութե, և պարգևիչ կենդանութե. Շար։

ԲՂՈՒՂ, բղղի. որ և ԲՂՈՂ. գ. ռմկ. Բղուղ, Բղիղ. Կարաս. Թակոյկ. կուժ. ընդունարան մեղու, իւղոյ, գինւոյ, եւն, մեծ կամ փոքր, քարեղէն կամ խեցեղէն. թիաք, ճարա, բեոփի, գաղամոց. *Քեզ ըղղուղ մի իւղ տամ... Եղից զբղղուղ մի յարդով մինչև 'ի ճիւն, և զբերան բղղին սերեկեաց. Ոսկեփոր։ որպէս և Վարդ. ճխէ։ Հին բռ։

ԲՂՋԱԽՈՀ, ի, աց կամ ից. ա. Ἄσωτος. Luxuriosus. և ἄφρων, insanus. որ և ԲՈՂՋԱԽՈՀ. Իբր Աղողջախոհ, ոչ ողջախոհ. կամ աղծախոհ. և ոչ ողջամիտ. ցանկասէր, և ցանկասիրական. և Չարախորհ. *Ի լինելն բղջախոհ. Լմբ. ծղ։ *Ողջախոհ, և բղջախոհ. Երզն. օէր։ *Բըղջախոհ ցանկութբ. Գր. հր։ *Եկից զբըղջախոհ ախտին իւրոյ արփանս. Կոչման։ *Բողջախոհ զեղխութբն (գինւոյ). Պիտ։ *Կրեմ զփառս և զանարգանս 'ի բարեխոհ և 'ի բղջախոհ մարդկանէ. Առակ. յեղ։ *Բըղջախոհ, չարախորհ. Հին բռ։

ԲՂՋԱԽՈՀԱԿԱՆ, ի, աց. ա. Վաւաշոտական, և Չարախոհական. *Բղջախոհական ցանկութի։ Բղջախոհական անխրատութի. Ճ. Ա։

ԲՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ. գ. Ἀσωτία. ἀκρασία. Luxuria, եւն. Չար ցանկութի.

վաւաշոտութիւն. անխառնութիւն. և Չարախոհութիւն. *Ոչ խրատեցի ղցանկութիւն ողջախոհութեամբ, այլ մանաւանդ հակառակացն բերմամբ, հեղգութեամբ, բղջախոհութեամբ. Ը. տփ. *Բղջախոհութիւն թողանիւ: Գործեաց 'ի բղջախոհութեան. Լմբ. ծղ. Ոսկեփոր. *Կորնչել 'ի ցանկականէն ղբղջախոհութիւն. Բրս. մրկ. *Արիութիւն, և ողջախոհութիւն. արդարութիւն, և բղջախոհութիւն. Գր. հր.

ԲՃԻՃ. Տ. ԲՁԻՁ.

ԲՄԲԻՒՆ. Տ. ԲՈՄԲԻՒՆ. *Քան զամենայն բմբիւն որոտման. Տօնակ.

ԲՆԱԲԱՆ, ի, ից. գ. Θέμα, θέσις, γραφή. Thesis, textus, originalis littera. Բուն և հարազատ բանն գրոց. և Բնագիրն. վկայութիւն 'ի գրոց 'ի պէտս առաջիկայ ճառի. *Ցարմար տանիս բնաբան. Ի բնաբանն մովսէսի գրոյն. Վրդն. յանձառ. Ն ծն. *Բնաբանիս անգամ ոչ ընդգուշացաք, որ պատուիրէ իւրաքանչիւր ումեք հայել յինքն. Տօնակ. *Զասցա օրինակս բնաբանն (հին քերականութեան) ոչ յայտնէ, և մեկնիչքն նուրբ չաւղջք բառիցն միայն ցուցին: Եւ այս քննութիւն մատանց յօգնիս՝ ըստ իւրում ցուցելոյ բնաբանին մասանց. Երզն. քեր.

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ, ի, աց. ա. Ի բնէ բանական. իմացական. *Մեք և հրեշտակք բնաբանական ելով. Քեր. քերթ.

Եւ Բնախօս. *Հերակլիտոս և գիմոկրիտոս բնաբանականք ելով,, իբր նիւթապէս քննօղք բնութեան. Նոննոս.

ԲՆԱԲԱՆԱԳՈՒՆ. Φυσική. Physica. Մասն իմաստասիրութեան՝ որ խօսի զզգալի բնութենէ. ըստ յն. ֆիւզիգէ, (բնականն). Ճըմ հիւ+ձէր. *Իմաստասիրութիւն բաժանի 'ի բնաբանականն, և յուսմնականն, և յածաբանականն: Բնաբանականն զառաջինն կալաւ գաս՝ որպէս մննդակից և հուպ 'ի մեզ, և որպէս ամենեւին նիւթական. Սահմ. ա. Ն ծղ: *Ամբառնալ 'ի բնաբանականէն յածաբանականն. Մագ. ծէ: *Բնաբանականն մասն իմաստասիրութեան՝ 'ի վերայ էիցն բնաքննութիւն առնելն է. Լծ. սահմ.

ԲՆԱԲԱՆԵԼ. Տ. ԲՆԱԽՕՍԵԼ. *Կամեցաւ և գերապոյսի բնութիւն բնաբանել. Նոննոս: *Գլուխն առաքելոց պետրոս՝ ոչ յերևելին յաւելով ըստ երևելոյն ինչ բընութեան բնաբանեաց զպատասխանին. Խոսրովիկ:

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ. գ. Φυσιολογία, φυσική. Disciplina physica. Որպէս Բնախօսութիւն իմաստասիրական. Ճըմ հիւ+ձէր. *Ի բնաբանութիւնն արհեստական ուսցուք. Անյ. պորփ:

Եւ որպէս Բուն բանն կամ իմաստ ճառից. բնաբան. վկայութիւն գրոց. և Հաւաստաբանութիւն. իսկաբանութիւն. *Աստանօր առ գերակայ երանութիւնն բարձրացուցուք ղբնաբանութիւս. Քեր. քերթ: *Տեսակ և զօրութիւն բնաբանութեանն այսպէս երևեցաւ մեզ: Այլ քո եկեալ քահանայապետ. և թերևս վայելչական է բնաբանութիւն այս 'ի պաշտօն ժամուս և տօնիս. Վրդն. ծն. Ն գրղ: *Զբնաբանութիւն աւետարանին արտաքս մերժել. Երզն. մթ: *Որ է առաջին եգեալ բնաբանութիւս, որ ասէ. ոչ կամիմ եղբարք, եթէ ոգէտք իցէք. Տօնակ.

ԲՆԱԲԱՐ. մ. ա. Φυσικῶς: φυσικός, κή, κόν. Naturaliter, naturalis, ձն. Ի բնէ. ըստ բնութեան. բնութեամբ. բնաւորապէս. և մանաւանդ Բնաւորական. բնական. բուն. հարազատ. ընդաբոյս. որ ինչ է ըստ բուն բնաւոյ բարուց. և Սովորական. աւանդական, ղաւթնական, ևն. *Խորհուրդ և յանձնառութիւն ուրա հարկաւորապէս և բնաբար 'ի հօրէն ծնանելոյն 'ի մեռոց. Փիլ. լիւ: *Բնաբար շարժելին յինքն, յորժամ թոյլ տայր բանին մարմնոյն կրել զիւրն. Դամասկ: *Ծնեալն 'ի մարիամայ էութեան 'ի նորա բնութեան (այսինքն մարդկայինն) ոչ էր ած բնաբար, այլ միաւորութեամբ անօրէնութեան. Բրս. առ յհ. իմ. Եբր: *Անութիւն և զօրութիւն բնաբար ունելով տէրութեան. Տօնակ: *Անբանքն զկարիս բնաբար (այսինքն բնական ազդմամբ) ցուցանելով. Վրդն. ող: *Տեսանել զբարելաւութիւն աշխարհին՝ համեցաւ 'ի նմա լինել բնաբար (այսինքն իբր բուն բնակիչ). Կոչումն: *Բնաբար բարիք (ած): Ի բնաբար բարութեանց. Բենիկ: *Որ բնաբար սովորութեամբ էր յերկիր մերում. Խոր. գ. 20: *Ոչ ըստ մարդկային բնաբարն բնութեան բարուց. Նար. խչ: *Բնաբար կուսականք գաւառացն. Յհ. կթ: *Բնաբար և սեփական 'ի միում առնակի: Բնաբարն առաքինութեան. Մագ. իէ: *Ազգականն և բնաբար սիրելին. Երզն. մթ.

ԲՆԱԲԱՐՁ ԱՌՆԵԼ, լինել. Զբուն կամ բնաւին բառնալ. բնաջինջ կամ անհետ առնել, լինել. *Սուրն կոտորածի բնաբարձ արար զնոսա. Մծբ. ծէ: *Զոր բնաբարձ արարեալ երանելւոյն. Խոր. գ. 60: *Զբնաբարձ (եղեալ) աւերակս նորա յայտ առնէ: Որպէս և 'ի հողմոյն բնաբարձ լինելն: Եւ զայն մի առեր, եթէ ընդէր խոկ ոչ բնաբարձ եղեն չարիքն. Ոսկ. ես: *Բնաբարձ աւերմամբ քանդեալ զվայրն. Լաստ. ծէ:

ԲՆԱԲԱՐՈՒԹԻՒՆ. գ. Ի բնէ կամ ընդաբոյս բարութիւն. *Այլ զամենայն չարիւն ըստ բնաբարութեան քո բարեգործութիւն համարեա նոցա. Սկևռ. աղ:

ԲՆԱԲՆԱԿ. ա. Ի բնէ կամ բուն բնակութիւն եղեալ. հայրենի. բուն. սեպհական. *Անդէն 'ի նմին ազգային և բնաբնակ գաւառին մնկաց. Նար. խչ:

ԲՆԱԲՈՅՍ. ա. Ընդաբոյս, բնածին. բնական. *Բնաբոյս իմաստութիւն, կամ գիտութիւն, կամ ուսումն. Լմբ. ող. սղմ:

ԲՆԱԲՈՅՍՔ. գ. Բոյսք բնականք. ծաղիկք ինքնաբոյսք՝ ունօղք զբուն սեպհական, ուրոյն 'ի ծաղկանց ծառոց. *Կարգեաց զբնաբոյսս ծաղկանց 'ի զգօսանս և 'ի բժշկութիւս. Մխ. առակ. իզ:

ԲՆԱԴԱՒԱՌ, ի, աց. գ. Բուն գաւառ. երկիր հայրենի. հայրենիք. *Կէսքն տաէին տանել 'ի բնադաւառն իւր 'ի տարոն. Խոր. գ. 67:

ԲՆԱԳԵՐԱՆ, ի. գ. Բուն և մեծ գերանն շինուածոյ տանն. *Տան գուբն և առիքն և բնագերան՝ տանն տէրն է. Ոսկեփոր:

ԲՆԱԳԻՐ, գրի. րաց, կամ րոց. գ. ա. Αὐτόγραφος. Autographus. Ἀρχική γραφή. Vernaculus, vel originalis textus. Բուն և հարազատ գրեալն 'ի գիրս. որ գիրք ըստ սկզբնագրին. և Հնագիր օրինակ կամ թարգմանութեան. *Զիցեն մեզ բաւական օրէնքն բնագիրք, յոր ենն լուով կամքն ած. ընդէր ունիցիմք զհրամանս նորաւորս և ըղձութեամբ պատիրս (յուսութիւս). Մանդ: *Ի մերում թարգմանութեան ոչ ուրեք 'ի բնագրի գտանի. Խոր. ա. 4: *Բայց զի 'ի բնագրին ոչ գտանի. մեզ անընդունելի է. Արշ: *Եւ ոչ բնագիր ինչ մեզ յայտնեաց. Շիր: *Ի հայք մեծ լեառն աղաբագայ, որ է մասիս, ըստ բնագրոցն. Միխ. առ:

Եւ Բնաբան. վկայութիւն. *Յայտ խոկ է 'ի բնագրէ առաքի. Երզն. մթ: *Որպէս և գոյ ուսանել բացերևապէս 'ի բնագրէ անտի. Լծ. պէտրոս:

ԲՆԱԳԻՐ. Արձանագրութիւն 'ի յիշատակ վախճանելոցն 'ի քր. յիշատակագիրք, կամ պատկեր կենդանագրեալ համդերձ ներբողական յիշատակարանաւ. տես և ՏԻՓ. ՏԻԿՈՆ. *Բնագիրք յիշատակեցան նոցա. Եղիշ. է: *Ընթերցողք. և գործ է նոցա ընթեռնուլ զմարգարէս, և զբնագիրս, և զվարդապետականս. Լմբ. պտրգ. (ուր մարթ է իմանալ և զթուղթս առաքելոց, կամ զկանոնս, ևն):

ԲՆԱԳՈՅՆ. ա. Առաւել բուն և հարազատ, կամ ներքին և գլխաւոր. *Զորն բարւոյ բժշկի շօշափելով և զննելով զխոկոյն և զբնագոյն մասունսն. Փիլ. լին:

ԲՆԱԴԻՐ, դրի, րաց. գ. Բանակ. կամ բանակադիրք, ուր բուն վրանից եղեալ իցէ, կամ խորան հարեալ. *Ելանէին անկանէին 'ի վերայ բնակչացն բնադրացն ասորւոյ,,. յն. լոկ. 'ի վերայ բանակին ասորւոյ. Ցուդթ. ծէ. 7:

ԲՆԱՁԱՆՑ. և ԲՆԱՁԱՆՑԱԲԱՐ. } ա. մ. Μεταφυσικός, κή, κόν: μεταφυσικῶς. Metaphysicus, ca, cum; metaphysice. Զանցեալ կամ զանցանելով անդր քան զբնութիւն զգալի. 'ի վեր քան զբնաբանական կարգ. մեթաֆիզիգական, մեթաֆիզիգապէս. *Քանզի է յորսկումն գոյացութիւն, թէպէտ բնազանցաբար. քանզի երկակի է առորդութիւն. մին ըստ բնութեան, իսկ միւսն բնազանց. ըստ բնուն՝ յորժամ հանուրքն մասնականացն, և պատահումն գոյացութեանց առորդքին. իսկ ընդնազանցաբար, յորժամ մասնականքն ընդհանուրցն, և գոյացութիւնք պատահմանց առորդքին. Անյ. վերլծ. արիստ:

ԲՆԱԽՕՍ, ի, աց, կամ ից. ա. գ. Φυσιολόγος. Physicus. Որ խօսի զբնութենէ զգալի էակաց. տես և ՖԻԶԻԿՈՍ. *Բնականին և բնախօսին ոգին վայել է թեւաւոր լինել: Որ եղև և նոցա բնախօս լինելոյ սկիզբն. Փիլ. լին:

Եւ Բարոյախօս. առակախօս. *Բնախօսքն վարքին այնպիսեացն յօրինակս խրատուց. Վրդն. ծն:

Եւ Ճշմարտախօս. Ճշգրտաբան. հաւաստապատում. հնախօս. *Զայս աւանդութիւն 'ի բնախօս արանց լուայ. Արիստակէս. նաւակոփ: *Ի բնախօսից ոմանց հաւաստապատում արանց. Սրկ. հանգ:

ԲՆԱԽՕՍԵՄ, եցի. ն. չ. Φυσιολογέω. Dissero de rebus naturae. որ և ԲՆԱԲԱՆԵԼ. Ճառել զբնութենէ զգալեաց. խօսել քաջ քննութեամբ՝ իբրու զննելով զբնութիւն իրաց. Ճշգրտաբանել. հետազօտել բանիւ. *Արուեստակելով բնախօսէ. Նիւսացի: *Այսմ գու զանձնելութիւն հօր, և եւ զծնելութիւն որդւոյ բնախօսեցից քեզ. Ստ. որս. զ: *Որք բնախօսեցին, առեն ընդմանանխոյ՝ անփոփոխելի ունելով բնութիւն. Երզն. մթ: *Բժիշկ ոմն բնախօսէր՝ առաջադրաբանելով զանուան բանիցարին: Զարատաբանս (զայս) իմաստունք բնախօսին (կամ ասեն). Մխ. առակ. ծա: *Բնախօսեսցէ վասն նոցա առանց ուսման. Լծ. սահմ: *Որ անճառելի է, և պատմել խորհրդ ... վասն որոյ և ունայն բնախօսէ. Կիւրղ: *Սուղ ինչ բնախօսել է պարտ. Լմբ. պտրգ: *Զմեղոցն երկոցունց բնախօսելով գաղափարեցուցեր զմեզ 'ի խորհրդոյս. Սարգ. յակ. բ: *Գիր երբեմն յաղագս ածոյ բնախօսէ, և երբեմն 'ի մակս մարդ-

կութն, և երկրին վասն երկուցն միջոցաւն. դառնալ:

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. գ. Φυσιολογία. Disciplina physica. Բնաբանութիւն. ճշմարտութիւն գիտելեաց. *Ընդհանուրն բնախօսութիւն: (Բժիշկն) աշխարհականս բնախօսութիւն զբանն ցուցանէր. Նիւս. կազմ. և խօս: *Զի մի բնախօսութեան անվարժն՝ ընդ հակին բնախօսութեան զարմասցի. Փիլ. այլաբ: *Ըստ ամենից իմաստնագոյն բնախօսութեան. Պիտ:

Եւ Քաղ խուզարկութիւն. հաւաստաբանութիւն. *Բնախօսութեամբ քննութիւն յաղագս զօրութեան աղօթից: Նախաշաւիղ բանին բնախօսութիւն: Բնախօսութիւն արարեալ 'ի թուղթն համեմատեցելոց՝ այսպէս եցոյց զընթացս բնութեանն. Լմբ. պտրգ. և աղ:

Եւ Յատկութիւն կամ սովորութիւն խօսից. բնիկ լեզու. *Զոր և մեք սովորեցաք բնախօսութեամբ՝ յարգադրել հեշտ անուանել. Շիր:

ԲՆԱԾԻՆ. ա. Ի բնէ ծնեալ և կարգեալ առ իւն. և ընդաբոյս. բնաւորեալ. *Իբրև զանխօս անասունս ըստ բնածին բարուցն յեղծուած և յապականութիւն ... յն. բնութեամբ ծնելոց յեղծուած. Բ. պետ. Բ. 12: *Ըստ ընդաբոյս բնածին բարի բարուցն բռնայ. Նար. խը:

ԲՆԱԿ, ի, աց. գ. ա. Αὐτόχθων, ἐγχώριος. Indigena. ('Ի բառէս բուն, և իբրև արմատ բնակել բարին.) Բուն բնակիչ. բնիկ քաղաքացի, գաւառական. Եէրլի, փէղալի. վէրլէսի, Եէրլի. *Բնակն, և պանդուխտն. յեկաց և 'ի բնակաց երկրին. եկին և բնակի երկրին. բնակին և եկին. եւն: *Ի բնակաց գաւառին. Փիլ. ԺՀ. ժա: *Բնակ Թագաւորք. Եւս. քր. ա: *Բնակք և եկք. Շար:

ԲՆԱԿ. գ. Բուն բնակութիւն կամ տեղի. բնակարան. յարկ. մէքէան. *Զքեզ բնակ հրեղէն էութիւն. Շար: *Բնակ բարձրելոյն աւիշ (եկեղեցի): Ծովէ բոլոր էից գոգ, անքոյթ ծոց, և բնակ բանակի: Նախ զբնակն, ապա զբազմեալն. Նար: *Զհօրն ժառանգեաց բնակ. Մագ. ՃԷ: *Ի բնակաց ելանէ 'ի գործ իւր. Սհկ. կբ. արմաւ:

ԲՆԱԿՔ. գ. Սեպհականեալ բնակութեան մեկենայն. գերեզման. շիրիմ. *Տացէ ինձ զայրն կրկին 'ի սասցուած բնակաց ... այրն չերոփ. Ծն. իգ. 9: *Տուք ինձ ... սասցուած բնակաց ընդ ձեզ, զի թաղեցից զմեռեալս իմ. Կիւրղ. ծն:

ԲՆԱԿ. գ. Ἐγγενής, γνήσιος, συγγενής. Nativus, genuinus, cognatus. Բուն. բնիկ. հարազատ. սոս, զտի. *Ի վերայ այլեկաց բնակաց առնհմայրին քաղաքացաց. Բ. Ղ. ԺԷ. 18: *Ի բնակ երկրի մեռցես. Խոր. Է. 23: *Բնակ ակր, կամ ատամք. Բուզ. Գ. 2. 20: Ե. 4:

Եւ Ἔμμονος. Permanens, perseverans. Բնաւորեալ, առարուցեալ. մնայուն. մշտական. *Բնակ բարբառութիւն. Ղեւ. ԺԳ. 51. 52: ԺԴ. 44: *Այլ են սմանք որ իբրև բնակ իմն հաստարեբին (զաեր մարմնոց)... զի բաղձանց ըստ բնութեան Թոփ. Ոսկ. Եօ:

ԲՆԱԿԱԲԱՐ. մ. Իբրև բնակ, բնիկ գոլով. *Պանդխտաբար 'ի աելով, և ամ 'ի սիրոյն բնակաբար. Ագաթ:

ԲՆԱԿԱԿԻՐ. ա. Ի բնէ կրեալ կամ ... բնածին. ընդաբոյս. *Ոչ բերող ... թեան բնակակիր համեմատեցելս կա... Նար. խոս:

ԲՆԱԿԱԿԻՑ, կցի, ցաց. ա. Σύνοικος, συνοικέτης. Cohabitator, contubernalis. Ընկեր բնակութեան. կից բնակութեամբ. յարակակից. որ կայ 'ի միասին ընդ այլում. *Ընդունիցիս բնակակից զոմն և կին գրացի, որ յայժ գոյ արտաքոյն, և ոչ լիցէ ազգական. Պղատ. օրին. Գ: *Զմտաւորական հեռ... 'ի բաց բնակեցուցանել, և զօգտակարան միայն բնակակից լինել. Փիլ. նխ. Բ: *Զի խորդ կարէ ոք ասպրել, թէ ընդ առ... ղուծս և ընդ գաղանս բնակակիցս արարեալ էր զմեզ. Եղնիկ: *Պահապան մատանիչ, բնակակից չարախօս. Նար. ծղ: *Արժանացոյց (տէր զզպէտս) բնակակից և սեղանակից առնել. Իգն: *Զմի հոգին եա մեզ քո բնակակից և ուսուցիչ. Լմբ. աստ: *Հրեշտակք բնակակիցք մարդկան, և մարդիկ հաղորդք հրեշտակաց. Ը. Մփբ:

ԲՆԱԿԱԿԻՑ. Συμφυής, σύμφυλος. Gentilis, ejusdem naturae, innatus. Բնակից. ազգակից. համաբուն. անկակից. ընդաբոյս. *Մարմին զօրհանապազ բնակակից մեր լինելով. Պղատ. փիլ: *Որոտմունք և փայլատակմունք, և այլ որ ինչ բնակակից է սոցունց. Արիստ. Ա:

ԲՆԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ. գ. Ի միասին բնակիլն. ընկերութիւն. *Պատրաստեալ ած (մեզ) զհրեշտակաց բնակակցութեան օգնական. Լմբ. աղ:

ԲՆԱԿԱՆ, ի, աց. ա. Φυσικός, κή, κόν. Naturalis, le; physicus, ca, cum. Սեպհական և յանկաւոր բնութեան. բնաւորական. բնածին. յառաջ եկեալ 'ի բնութէ. որ ինչ է 'ի բնէ. *Փոխանակեցին զգայեաս բնականս 'ի պէտս անբնականս: Թողեալ զբնական պէտս. Հռ. Ա. 26. 27: *Ի վերայ բնականացն, 'ի վերայ արուեստականացն: Բնական ասի չարամերձութիւն հոգւոյ և մարմնոյ: Բնական մահ է անջատումն հոգւոյ 'ի մարմնոյ. Սահմ. Ժ. Է: *Կիրքս՝ բնական մարմնոյ և ոգւոյ կարիք: Ես զբնականացն ասեմ, դու զանբնականսն 'ի ներքս մղես: Բնականք ասին՝ ըստ բնութեան (այսինքն 'ի բնէ) 'ի մեզ արամադրեալք. Յհ. իմ. երև: *Բնական գութ, կամ իմաստութիւն, կամ տկարութիւն. Եղիշ: Կոչումն: Փարպ: *Զօրէնսն յաւելուած բնականացն արարեալ: Խմանալ զած 'ի նիւթականացս բնականօք: Ծովու կզզեաց օրհնել և ցնծալ ասեն՝ բնականաւ, և ոչ բնականաւ. Առ: *Օրէնք բնականք, գրաւորական, աւետարանական: Բնականն տուեալ ադամայ. եւն. Վրդն. Ծրղ:

Եւ որպէս Բուն, իւրական, սեպհական. բնիկ. և հարազատ. ընտանի. *Բնական բարոյից ընտանի սովորութեանց. Նար. խղ: *Երթեալք հանդչէին 'ի բնական սատանին հայոց. Փարպ: *Իբրև հատանին 'ի բնական մորէն. Վրդն. Եւ: *Որով և բնականք իւր էք նորա (այ) ընտանութեամբ, ըստ քրիստոնեական հաւատոցն: Բնական սիրով փութացէ զձեզ. Յհ. կբ: *Զորեքչարութիւն և սրբութիւն՝ բնական պտուղ են քրիստոնէից. Տօնակ:

ԲՆԱԿԱՆ. որպէս Բնախօս. և Բնաբանական. *Ըստ բնականին եմպեդոկլեայ, Արիստ. Ա: *Բնական իմաստասէրն. Սահմ. Է. ԺԲ: *Լուսոյ և 'ի բնական արանց: Ըստ քաղ բժշկացն և բնականաց: Ի բնականաց (այսինքն 'ի բնականաց) ոմանք ասացին: Իմաստասիրութիւն 'ի ձեռն երից մասանց իւրոց, բանականին, բարոյականին և բնականին. Փիլ: *Որք 'ի բնականէն յանձնա... բանականն անբաւական. Մագ. ԾԷ:

ԲՆԱԿԱՆՔ. գ. Բնութիւն որոշիչ սերի. առմեթոյք. *Զարուացն բնականան կրծառէ 'ի պաշտօն իգական գիւղին. Լմբ. ԻՄ:

ԲՆԱԿԱՆԱԲԱՐ. մ. Φυσικῶς. Naturaliter, physice. որ և Προσφυῶς. Apte, convenienter. Բնականապէս. բնաւորապէս. բնութեամբ. 'ի բնէ. ըստ բնութեան. 'ի դէպ. *Ի դէմսն չիցէ... բնականաբար, զի ընդգայութեան 'ի դէմսն առնէր: Այլ և այսորիկ բնականաբար այլաբանին. Փիլ. այլաբ: *Բնականաբար շարժեալ 'ի գութ ծնողին. Անան 'ի պէտր: *Բնականաբար ձմին հոգին. Լմբ. ծղ: *Խօսէ առ այս զբնականաբար (առաքինանալ). Իգն: *Բնականաբար և յարմարապէս այծեմամն նմանելով. Նիւս. Երգ: *Տարբերութիւնն. բնականաբար նախադասեցաւ յառաջ քան զանասունն. Անյ. պորփ:

Եւ Οἰκείως. Domestice, familiariter. Որպէս բնակ, որպէս բնիկ, և ընտանեբար. *Գլխաւորք (տարք), որք բնականաբար սեպհականէին զառհմանս քաղաքացն. Յհ. կբ: *Ոչ որպէս 'ի մարգարէսն, այլ առաւելապէս եւս, և բնականաբար, և առանց մեկնելոյ, ընդ ձեզ բնակեսցէ յաւիտեան. Խոսր:

ԲՆԱԿԱՆԱԳՈՅՆ, գունի, ից. ա. Φυσικώτερος, τατος. Magis vel omnino naturalis. Առաւել կամ կարի բնական. ընտանեգոյն. հարազատ. ընդաբոյս. *Բայց երևեցուցանէ իմն և բնականագոյն (բան գրոյն): Ցխնեբեակն սրբագոյն և բնականագոյն թիւ. Փիլ. այլաբ. և փեսական: *Արտալածեալ 'ի բնականագոյն սեպհականէ: Բնականագունին առաքինութ: Ըստ բնականագոյն սիրոյ. Մագ. ԾԲ. ԻԷ. ԽԸ:

մ. Φυσικώτατον, τα. Appositissime. Յոյժ բնական օրինակաւ. կարի 'ի դէպ. *Բայց բնականագոյն է այն ասացեալ: Ոչ տեղաց, և մարդ ոչ էր բնականագոյն, քանզի, եւն: Ոսկերաց յիշատակ առնէ և մարմնոյ բնականագոյնս. Փիլ. Իմաստ. և այլաբ. և լին: *Բնականագոյն նախուստն մերոց արքայազանից որդւոցելոյ. Մագ. Ա. (որ լինի և ածական:)

ԲՆԱԿԱՆԱՄ, ացայ. չ. Οἰκέω. Habito, dego. Բնակել. բնակ լինել իբրև 'ի բնիկ տեղւոջ. և Ընտանենալ. բնաւորիլ. *Բնականալ 'ի յարկս մեղաւորաց. Սղ. ՂԳ. 11: *Առաքինութիւն հանապազորդ 'ի մեզ խնդրէ բնականալ. Յհ. իմ. աս: *Տեսանել զամենառատ շնորհացն նորին 'ի մեզ բնականալն առիթապէս. Խոսր: *Ոչ կամք իւրեանց, և ոչ բնակացեալ սովորութիւն կարէր զդէմ ունել. Ոսկ. յհ. Բ. 4:

ԲՆԱԿԱՆԱՊԷՍ. Տ. ԲՆԱԿԱՆԱԲԱՐ. *Խակ 'ի 'ի դէմսն չիցէ՝ բնականապէս, և բարոյականաբար. Փիլ. այլաբ: *Որ 'ի պաշտօն բանականին բնականապէս 'ի յարարչեգ սահմանէ եղաւ. Սխոլ. աղ:

ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ. գ. Բնական հաւաստութիւն. *Ոչինչ զգացուցի մարմնոյ և արեան, զառաքելոցն ակնարկէ, և բնականութեամբ անուանք կոչէ զնոսա. Ոսկ. Գղ:

ԲՆԱԿԱՆՈՒՆԴ. ա. Մնուցիչ ընտանի սիրով. *Եթէ գուցէ ոք ամենեքին 'ի բնականունդ գայլեկաց. Եղիշ. Է:

ԲՆԱԿԱՐԱՆ, ի, աց. գ. Οἰκητήριον, κατοικητήριον. Habitaculum, domicilium. Բնակեաց. տուն և տեղի բնակելոյ. որ և ԲՆԱԿՈՒԹԻՒՆ ասի. օթեւան. օթարան. ընդունարան. և Տաճար. պան փեղ. փուրտ, մէքէան, խանէ, գմնաթ, մէսքէն. *Բնակարան՝ փոխանակ մարմնականացս կոչէ մեղքն (մոլորեալքն). ԱԲ. Բ: *Լիցուք տաճար և բնակարան ամենայն շնորհաց. Ժմ:

*Լեառն գիտակ, և բնակարան վկայից: Ի բնակարանս հրեշտակաց, և մարդկան քաւարան: Զքեզ կոյս և մայր և բնակարան ծածկին ներմարդութեան: Զբնակարան անսկզբնակից որդւոյն: Զմիածնի որդւոյ քո զբնակարան (այսինքն կրօղ յարգանդի): Այսօր զբնակարան հոգւոյն սրբոյ (այսինքն զընդունարան,) ևն. Շար: *Բնակարան բանին: Բնակարան համօրէն կամաց անեղն ծնութեան: Վերակարգելոց թուոցս այսոցիկ բնակարան բաղձալինոյ:

ԲՆԱԿԱՐԾԻՔ. գ. Կարծիք տարրացեալ կամ հին. *Բողոքէ և զասխացոյն, զի լուծցէ զբնակարծիս. Ոսկ. գծ:

ԲՆԱԿԱՒԷՏ. ա. Յարմար 'ի յաւէտ բնակութիւն. *Անտի փոխեալ 'ի սուրբ լեառն գիտակ. և բնակաւէտ. Գնձ:

ԲՆԱԿԱՒՈՐ. ի. աց. ա. Μόνημος. Permanens. φυσικώτερος, ὁ κατὰ φύσιν. naturalis, naturae consonus. Որպէս Բնակ կամ բուռնեալ և բնակեալ հաստատութեամբ. մնացական. և Բնիկ. բնաւորական. բնական. բնաւորեալ. հաստատուն. *Եղիցի յոյս վախճանի քոյ, ասէ տէր, բնակաւոր որդւոց քոց 'ի սահմանս նոցա ». յն. մնայուն, կամ մշտնջենաւոր. Երեմ. լա. 17: *Եւ է ժամ, զի առողջութիւն հիւանդութիւն լինի, յորժամ ցաւն բնակաւոր լինիցի. Ոսկ. եփ: *Զքո բնակաւոր հեզութիւն (յն. զըստ բնութեան) 'ի չբնակաւոր գազանութիւն հաներ: Քան զայլսն առաւել բնակաւորք (յն. բնականագոյնք). Ոսկ. մ. ա. 4. և 17: *Հարկաւորք բնակաւորք (այսինքն սպառահարկուք 'ի բնէ): Ոչ են եկամուտ 'ի նա կամքն, այլ բնակաւորք. Եղնիկ: *Բնակաւոր չարժութիւն բնութեան: Բնակաւոր կերպակուր: Առեալ 'ի հօրէ զբնակաւոր զիւր թագաւորութիւնն. Իգն: *Յաղթել բնակաւոր կարեաց մարմնոյ. Սարգ. ա. դ. ա. և ծբ: *Բնակաւոր ցանկութիւն. Ճ. Գ:

ԲՆԱԿԱՓՈԽՈՒԹԻՒՆ. գ. Ἀποικία. Migratio. փոխիլն 'ի բուն բնակութենէ. տեղափոխութիւն. վտարանդութիւն 'ի հայրենի երկրէ. պանդխտութիւն. գաղթականութիւն. *Ըստ բնակափոխութեան իմաստնոյն: Երկրորդ բնակափոխութիւն առնէ: Զբնակափոխութիւն առնեն 'ի դէպ վայր. Փիլ. իմաստ. և փէտակն:

ԲՆԱԿԵՄ. եցի. չ. } Οἰκέω, κατοικέω,
ԲՆԱԿԻՄ. եցայ. յ. } κέω, ἐνοικέω.
Habito, inhabito. σκηνόω, κατασκηνόω. Commoveor tamquam in tabernaculo. καταλύω, diversor, ևն. որ և ԲՆԱԿԱՆԱԼ. Բնակ լինել. նստել իբրև 'ի բուն տեղւոջ և 'ի բնիկ տան. բունել. որջանալ. տաղաւարիլ. դադարել. զետեղիլ. օթևանիլ. հանգչիլ. կալ մնալ ուրեք. առ+ին օրժամ, օթարժամ, գոնժամ, փոքրժամ, գալժամ. *Բնակեցաւ յերկրին Նայիդ յանդիման Եդեմայ: Բնակեաց յայրի անդ: Ցորոց մինչ ես բնակեմ: Բնակեցէք 'ի քաղաքս ձեր: Բնակեցան, կամ բնակեցին անդ: Բնակեցաւ առ կաղնեաւն Մամբրէի. ևն: կմ* Բնակել 'ի ծակս վիմաց: Զխաշինն որ բնակեալ են առանձինն յանտառի: Ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել: Թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա. ևն: կմ* Որ բնակեալդ ես յերկինս: Բնակել քոյ հաւատովք 'ի սիրտս ձեր: Ես եկից և բնակեցայց 'ի միջի քում: Բանն մարմին եղև, և բնակեաց 'ի մեզ: Հոգին՝ որ բնակեաց 'ի մեզ: Ի ձեռն հոգւոյն սրբոյ 'ի մեզ բնակելոյ: Բանն քրիստոսի բնակեսցէ 'ի ձեզ առատապէս. ևն: կմ* Ի նմա հաճեցաւ ամենայն լրումն աստուածութեան բնակել: Ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս (այսինքն միաւորեալ աստուածութեամբ ընդ մարդկութեան յանձին բանին). ևն: *Ես յո՞ հայեցայց և բնակեցից, բայց 'ի հեզս և 'ի խոնարհս. Եփր. ղևտ: *Որ հաճեցաւ 'ի սմա բնակել, 'ի սմանէ ոչ մեկնեցաւ, այլ բնակեաց, բնակէ, և բնակեսցէ. Անյ. բարձ: *Զնորին կողմանս բնակեցաւ: Զյորդան գետով բնակեալ էին ամովրհացիքն. Խոր. բ. 50: Եւս. քր. ա: *Մի հոգին առ խաղաղարարսն բնակէ. Լմբ. առ: *Յորում առաւել բնակեաց բան նորա և աւանդութիւնն. Նար. առաք:

ԲՆԱԿԻ կամ ԲՆԱԿԻ, եացէ կմ ցի, կել. դիմաղ. կր. Κατοίκηται. Habitatur, ևն. Ըստ յն. ոճոյ, Բնակութիւն կամ բնակելի լինել. չէն լինել. բնակիչս ունել. *Ոչ բնակեսցէ (բաբելոն) յաւիտեանս ժամանակաց: Բնակեսցի քաղաքդ այդ յաւիտեան: Բնակեսցին քաղաքք, և աւերակք շինեսցին: Զքաղաք մի ... բնակեցեալ զօրօք. Ես. ծզ. 20: Երեմ. ծէ. 25: Եզեկ. լզ. 10: Բ. Մ. ծբ. 13: *Կորնթոս և սիկիոն 'ի գովրիացւոցն բնակեցան. Եւս. քր. ա: *Անապատանալ քաղաքացն խորայելի, և դարձեալ բնակիլ. Նար. ծբ: Իսկ Եղիշ. ա. *Ցամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհն նորա ». բերի 'ի կրկին նշ. զի հայի յերկիրն. և 'ի մարդիկ երկրին:

ԲՆԱԿԵՏՂ, եաց. Տ. ԲՆԱԿԱՐԱՆ. *Եղեր տաճար սոյ բանին, և բնակետղ հոգւոյն սրբոյ. Ա՛. 'ի կոյսն: *Բնակետղ ծածկին զօրութեան. Անան. եկեղ: *Ուր բնակեալն է անբաւ բիւրուց բնակելոցն 'ի լոյս. Հանմ. ատ:

ԲՆԱԿԵՑՈՒՑԱՆԵՄ, ցուցի. ն. Κατοικίζω, ἐνοικίζω, κατασκηνόω. Habitare facio, colloco. Տալ բնակել (ըստ ամենայն առմամբ). *Բնակեցուցանել յանդիման դրախտին, կամ 'ի բարւոք երկիր, 'ի տան, 'ի տաղաւարս, 'ի վայրի ճանապարհոջ. ևն: կմ* Խորան՝ զոր բնակեցոյց (այսինքն եհար) 'ի մէջ մարդկան: Բնակեցուցի զանուն իմ անդ: Զփառս իմ 'ի հող բնակեցուցէ. ևն: *Բնակեցուցաներ 'ի նմա բազում սպառազէնս. Եւս. քր. ա: *Բնակեցուցէ 'ի յաւիտենից յարկսն. Փարպ: *Զերրորդութեան սրբոյ 'ի նոսա կոչեալ բնակեցուցանէ զօրութիւն. Յհ. իմ. պաւ: *Յաչքաղանչն նախանձու յառաքինութեան մեկուսի բնակեցուցեալ է ». կր. այսինքն հեռի է. Փիլ. բագն:

Եւ որպէս Οἰκίζω. յորմէ οἴκισμα. Բնակութիւն առնել զտեղի ինչ. հիմնել. *Հռոմոս և ռոմիղոս զքաղաքն բնակեցուցանէին, և 'ի մօրն անուն կոչէին: Թեբայեցիք զկրինէ բնակեցուցին, և էր բնակեցուցիչ բատտոս. Եւս. քր: *Եռակի զպայասն բաժանելով երիս քաղաքս բնակեցուցանել: Այլ է ճշմարտապէս օրինադրութիւն, և բնակեցուցանելն զքաղաքսն՝ ամենեցուն կատարելագունից առաքինութեան արանց. Պղատ. օրին. ա. գ:

ԲՆԱԿԵՑՈՒՑԻՉ, ցչի. } Բերօղ
ԲՆԱԿԵՑՈՒՑՈՂ. ի, աց. } զմարդիկ 'ի բնակել 'ի քաղաք նոր. հիմնադիր. *Զենեայ ասէ լինել բնակեցուցիչ քաղաքին: Բնակեցուցիչ քաղաքին զառմոս յայտ առնէ: Այլափոխ ասեն զբնակեցուցչաց քաղաքին. Եւս. քր: *Դժուարին լինելոյ բնակեցուցողին, և օրինադրին. Պղատ. օրին. դ:

ԲՆԱԿԷՏ. կիտի. գ. Բուն և տիրական կէտ. այսինքն կէտ ատարակեալ. միջակէտ. *Եւ են հանգամանք բնակիտս. մի ըստ բացարձակ ձայնի. և միւսն՝ յարմար 'ի միջին կիտին հանգիտօ առնուցու՝ երթեալ 'ի տառակիտէն. Մագ. և Երզն. քեր:

ԲՆԱԿԻՉ, կչի, չաց. ա. գ. Κατοικῶν, ἐνοικῶν, κατοικός, οἰκήτωρ. Habitans, habitator, incola. Բնակօղ, բնակեալն. բնակ. որ նստի ուրեք իբրև 'ի բնիկ քաղաքի և 'ի տան. էհուլի. *Զամենայն բնակիչս քաղաքացն: Ամենայն բնակչաց երկրիս: Բնակիչքն երուսաղէմի: Բնակիչք հրէաստանի: Ան 'ի չգոյէ բնակչաց. ևն: *Բոլորապատ տանն բնակչօք սպառեալ սատակեցան. Լմբ. խա: *Արութիւն քաղաքին ոչ քարինքն են, այլ բնակչացն առաքինութիւն: Ոչ տեղին ինչ օգնէ, եթէ ոչ բնակիչքն լաւք իցեն. Մխ. երեմ: *Հասարակ մեծամեծաց՝ աշխարհին բնակիչք, և եկքն տայինն. Եւս. քր. ա:

Մերթ որպէս Բնակեցուցիչ. *Բնակիչ նմին հաշուի զզօրավար գաղթականութեան զառմսն. Եւս. քր. ա:

ԲՆԱԿԻՏ. Տ. ԳՆԱԿԻՏ. Πινακίς, ακος. πινακίδος. *Ի սմանէ մանկունս է տեսանել... բնակիտ 'ի ձեռս առեալ. Լմբ. ծէ:

ԲՆԱԿԻՑ, կցի, ցաց. ա. Ὁμοφυής. Ejusdem naturae. ὁμοούσιος, consubstantialis. Բնութենակից. համաբնակից. յանծայրինս նախ՝ էակից, համագոյակից. *Ծնեալ, և ոչ արարեալ, բնակից հօր, որով ամենայն եղև. Դաւանդ. խէ: *Ի հօրէ՝ բնակից նմա. Տօնակ: *Զի թէ ամենայն ինչ հօր՝ նորա է, յայտ է թէ և հոգին հօր՝ նորա բնակից է ... Զհոգին փոր բնակից եռ 'ի կենդանութիւն մեռելութեան աշխարհի. Ոսկ. եփ: *Տես զու ինձ զբնակից և զհամապատիւ տէրութիւնն. Ոսկ. յհ. ծա: *Եւա մարմին զիմ բնակիցս: Եւա 'ի սրբոյ կուսէն զբնակից մարմինս մեր. Եղիշ. ննջ: *Մարդ է բնակից քեզ՝ միապէս տոհմ և ազգ. քո ». յն. նորին ընդ քեզ հաղորդ բնութեան. Ոսկ. յհ. ա. 14: *Յաղթեաց նմա տէր մեր մարմնովն, ոչ երկնաւորովն, այլ բնակցաւն այնոցիկ՝ որ պարտաւորեցանն 'ի նմանէ. Եփր. գ. կոր:

ԲՆԱԿԻՑ. Σύμφυτος, συμφυής. Connaturalis, cognatus. Ընդաբնակից, ընդաբոյս. բնաւոր. համաբնական, ազգակից, անկակից. *Իւրաքանչիւր ոգւոյ բնաւորեալ և բնակից է յանդիմանութիւն (խղճի): Զբնակիցն 'ի մեզ զպատճառն պարարեն զգանկութիւն: Երկիր բնակից մարդոյն՝ մարմինն է. որոյ մշակ միտքն են. Փիլ: *Բնակից ջերմութիւն կենդանացուցանէ զմարմինն. Մագ. 'ի դիմն: *Եւ այս (ծիծաղականն) մշտ նմա (մարդոյն) բնակից է. Պորփ: *Բնակիցն չարժեալ նախանձու. Սիւն. աղ: *Առաքինութեան, կամ անպականութեան բնակից. Ճ. Գ: Իսկ Եփր. ա. կոր. *Որպէս այր բնակից կնոջ՝ գլուխ կնոջ ». իմա ըստ ա և բ նշ. և ո և ըստ յաջորդին:

ԲՆԱԿԻՑ. որպէս Բնակակից. *(փարաւոն) լինելով անդրանկաց խորոցն. Լմբ. ծա:

ԲՆԱԿՈՒԹԻՒՆ. գ. Οἴκησις, οἰκισμος, κατοίκησις, κατοικία. Habitatio, habitaculum, ևն. Բնակելն. բնակիլն. *Քաղաք, կամ երկիր բնակութեան: Բնակութիւն քաղաքիս բարի է. ևն: *Լաւ համարէին զգաղանաբար բնակութիւն ծածկաշուութեան 'ի քարանձաւս կեալոյ. Եղիշ. է:

Մանաւանդ՝ Բնակարան. տուն և տեղի

բնակելոյ. յարկ. բուն կայանն. *Քաղաքա֊ չինաց, և բնակութիւն: Ցամենայն բնա֊ կութի ձերում: Ի բնակութիւն քո: Աւր֊ ձակեաց զայր 'ի բնակութեն իւր: Ցերկնից 'ի բնակութենէ քումմէ. ևն: *Մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ. Եղիշ. Գ: *Ոչ կեալ յայրարա 'ի բնակութիւն արքայի. Խոր. Բ. 21: *Զմերն կորուսեալ զբնա֊ կութի դգրախան. խոսր:

Եւ իբր Բնակակցութիւն, ամուսնակցու֊ թի. *Եթովպացի գոլ առեալ յաղագս բնակութեան ամուսնացն ընդ եգիպտոս. Խոր. Ա. Կ:

ԲՆԱԿՈՒՆԱԿ ԿԱՑՄՆՔ. Գերերզման. չիրիմ. որ և ԲՆԱԿ առի, որպէս բուն և յերկար բնակելի տեղի. *Եթէ առ աւ֊ քէլ (առաւելենցայց), նա անդ 'ի տե֊ ղւոջն ունի զբնակունակն կայեանս. Պիտ:

ԲՆԱԿՑԱԲԱՐ. } մ. Συμφυῶς. Con-
ԲՆԱԿՑԱԳԷՍ. } naturaliter, ևն: Համաբնապէս. բնաւորապէս. իբրև ընդա֊ բոյս, անկակից և ընտանի. աղգակցապէս. 'ի գէպ. *Բնակցաբար 'ի ներքոյ կացելոց իմաստից բանս առաջման յարմարեցաւ. Նիւս. Էրգ: *Այլ առա հոգին լինքն բնակ֊ ցաբար 'ի նոսա լինի. Ոսկ. Գծ: *Առ ինքն բնակցաբար ունի. Նիւս. խորհ: *Հայրե֊ նական իմասնելք բնակցապէս և ընտանե֊ բար յօրինեալ: Հուր ընդ հարմանմբ բնակցա֊ պէս և ընտանեբար յանկարծօրէն երևեալ: Բնակցապէս՝ համանգամայն և գերբնա֊ բարութեամբ: Առ որ յարձակի բնակցապէս իւրաքանչիւր էից հանրականն տարրումն. Դիոն. օփէղ:

ԲՆԱԿՑԻՄ, կմ ԲՆԱԿՑԵՄ, ցեալ. յ. ւ. Συμφύομαι. Coalesco, cohaeresco. Տնկա֊ կից լինել. բնաւորիլ. բնաւորապէս միա֊ նալ, զօդիլ. ընտանենալ, հաղորդիլ. կամ Բնակակից և գառակից լինել. *Չէ հնար, որ միանգամ բնակցեալն է, 'ի բաց հա֊ տանել (փ հատանիլ). Նիւս. խաղ: *Մինչև կարգեսցի և 'ի գառ անկցի, և հաստատե֊ ցի եղեալն երկուք՝ կցեալք և բնակցեալք. Փիլ. լին: *Ցուցէ խնդակցեալք, և ձեզ բնակցեալք. Գնդ:

ԲՆԱԿՑՈՒԹԻՒՆ. գ. Συμφυΐα. Ejusdem naturae esse, և conjunctio, cognatio, ևն. Բնութենակցութի, որպէս համա֊ գոյութի. միաւորականութիւն. 'ի բնէ միութի. *Լոյս առեալ, որ 'ի հօր և յորդւոջ և 'ի սբ հոգւոյն ատեանի, որոյ ծնունդ է բնակ֊ ցութիւն: Երից անբաժանելի անբաժ բնակցութի. Ոսկ. Դիոն: *Բնակցութիւն, (այսինքն) բնաւորեալն միութիւն. Լծ. ոծոփ:

Եւ որպէս Ազգակցութի ըստ բնութեն. համաձայնութի բնութեն. ընտանութիւն. ընդակցութիւն. *Զինչ է հաղորդութի սոցա առ իրեարս, և բնակցութիւնն, և միաբանութի: Գտաւեսցեալ զբնակցութիւն, պատկանեալ 'ի սկզբնատպէն. Առ որս. Է. ծա: *Գնտակ է այգւոյն առ մշտնջենաւոր կենանին յարմարութի և բնակցութի. Նիւս. Էրգ: *Իբրև քերեսցի առ 'ի բարին բնակ֊ ցութէ. Նիւս. խաղ: *Ցաղագս բնակցու֊ թեանն առ նա եղանէ. Տեառ:

ԲՆԱԿՑՈՒԹԻՒՆ. Συνοικήσις, συσκηνία. Contubernium. Բնակակցութի. 'ի միա֊ սին բնակելն, որ լինի իւրք ընտանութբ. Եթէ նմա օգնական զկինն, և արար զնա բնակելով նմա. քանզի գիտէր թէ բազում լինէր նոցա օգուտ 'ի բնակցութէս յարա֊ տենէ: Բազում չարհս առնանեմք, որ եղև 'ի բնակցութէ առ միմեանս. Ոսկ. յհ. Ա. 18. *Զրասփն 'ի բնակցութէ վանիցն արա֊ քածոյ ձգեցին. Վրք հց. յ. *Քէ չարի

բնակցութեն հեծեռնափայլեցեր զպանծալի և զփայլեալ զփառս տանս այս (եկեղե֊ ցւոյ). Շար. (սուր խմանի և մարգելութի ընդ մեզ բնութենակցութե:) *Բնակցու֊ թբ սբ փեսայիդ՝ արժանացայց առագաս֊ տի լուսոյ վերին հարսնարանին. Սկեա. աղ: *Անճառելի է խնդութի (յերկինս), և ընդ հրեշտակս բնակցութիւնն. Սարգ. Ա. Պ. Բ:

ԲՆԱՄԵԾ. ի, աց. ա. Որոյ բունն է մեծ. հաստաբուն. *Ծառ մի ճշգենի (կմ ճշգարենի) բնամեծ էր 'ի մէջ քաղաքին պտուղոյ. Հ=Ց. յունիս. ծգ:

ԲՆԱՆԱՄ. ացայ. Տ. ԲՆԱՒՈՐԻԼ. *Որ իւր կամաւորութբն ընդ բարւոյն բնացաւ. Թէոդոր. ծոցր:

ԲՆԱՇԱՐԺԻԼ. յ. Իբրու Բնութեամբ կամ 'ի բնէ շարժիլ. յօժարութբ բերիլ. *Բնաշարժեալ 'ի կարգս ածային պատուի֊ րանապահութե. Գր. տղ. Եղբ:

ԲՆԱՇԽԱՐՀ. ի, աց. գ. Երևելի մասն աշխարհի, յորս բուն բնակութի է մարդ֊ կան, կամ որ է բուն աշխարհ տէրութե ուրուք. *Բոլեից մասանց երից բնաշ֊ խարհաց կայսր բարեպաշտ կոստանդիա֊ նոս. Գնդ: *Առաջին հատուածն եւրո֊ պիա երկրոտեան աշխարհ է, և է մեծա֊ ման բնաշխարհ. Տօնակ: *Աքայիա, որ է ել֊ լադայ՝ բնաշխարհն կորնթացւոց. Ոսկ. Գծ:

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ. ա. Բնակ, կամ բնիկ երկիք աշխարհի, գաւառի. և Որ ինչ հայի 'ի բուն աշխարհ ուրուք, և 'ի հայրենի գա֊ ւառ. *Գանդուխտ է իմաստակութի՝ ըստ բաղդատութե բնաշխարհիկ իմաստութե. Փիլ. լին. Գ. 19:

ԲՆԱՋԵՂՔ. գ. Բուն և արմատական ջիղք երևելիք. *Բնաջեղքն հակթին (ա֊ մորձեաց)»։ այլ Յ. բնածիղք. Վեփ. յդ:

ԲՆԱՋԻՆՋ ԱՌՆԵԼ, ԼԻՆԵԼ. Բնա֊ ւին՝ իսպառ ջնջել, ջնջիլ. անհետ առնել, լինել. *Զյեղուզական բնաջինջ արարեալ 'ի լեռնէն. Խոր. Բ. 15: *Զամենայն հե֊ թանոսական պաշտամունս բնաջինջ խլե֊ ցից յերեսաց հօնաց երկրիս. Կաղանկ: *Բնաջինջ լինել այսօր յիւրայէլէ ցեղի միոյ. Դատ. Իա. 3: *Վասն ջրհեղեղին, և բնա֊ ջինջ մարդկան ապականութեն լինելոյ. Եւս. քր. Ա: *Բնաջինջ լինել ազգի սո֊ րա. Խոր. Բ. 23: *Առ մեօք այս կարգ բը֊ նաջինջ է յեկեղեցւոյ. Լմբ. պտրգ: *Բնա֊ ջինջ լինել օտարմելի աշխարհիս, կամ ազ֊ գի գորա: Լինի բնաջինջ կոտորումն բա֊ նակին. Ցհ. կբ: *Բնաջինջ յարմատոյ թողուլ. Մագ. ծգ: *Զբնաջինջ առերն. Գէ. Եւ: *Կենդանութի արդարութեան զեղջաւ, և բնաջինջ մեռան հոգւով և մարմնով. Սահմն:

ԲՆԱՏԱԿ, կմ ԲՆԱՏԱԿՈՒԹ. Բաւ֊ ռակ. Տակ բնոյ. բուն տակն ծառոց և տըն֊ կոց: Վեփ. Յ. ծդ:

ԲՆԱՏԷՐ. տեառն, տերանց կմ րաց. գ. Բուն և հարազատ և հին տէր. *Առա֊ ջի իւրոց մարմնաւոր բնատերացն. Բաղ. Գ. 11:

ԲՆԱՑՈՒՑԱՆԵԼ. Տ. ՀՈՒՐՋ ԲՆԱ֊ ՑՈՒՑԱՆԵԼ:

ԲՆԱՒ. ի, ից. ա. Ὅλος, πᾶς, σύμπας, ἅπας. Totus, integer, cunctus, universus. ('ի գործածական առաւել Բուն.) Բո֊ լոր. համօրէն. բովանդակ. ամէն. ամե֊ նայն. համուր իւր սարքն. ֆօլօր ֆօլօրուն. տմոչն. դիւթիւն. փիւլեւ. *Առ համաշխարհ՝ ոչ ամենայն պարգեւն, այլ մասն ինչ 'ի բնաւէն. Սեբեր. Է: *Բնաւից գոլով ան֊ գիւտելի՝ եկեր համօրեց տեսանելի. Պիտ:

*Ընդ բնաւին տանջեցաւ (յն. պահանջե֊ ցաւ): Ամենայնի իսկ և բնաւի աղէտք են: Լրումն բնաւի եկեղեցւոյ. Ոսկ. Տիթ. և Ե֊ փես. և Եբր: *Զիշխանն աշխարհի 'ի բնաւ ծնունդէն արտաքս ընկէց. Կիւրղ. Ղկ: *Զբնաւն կատարեալ զխնդիրս: Ուստի զբնաւ կողմանս պարսից. Խոր. Գ. 51. 54: *Ընդ բնաւս սլանան, և ամենայնի բաւա֊ կան են: Նոյն վարէ և ածէ զբնաւ. Եղ֊ նիկ. (որ և ըստ յն. ողոյ, բան. այսինքն աշխարհ ամենայն, ոլերերը): *Բնաւ գա֊ ւառ. առ բնաւ ազգօք. բնաւ բարբարո֊ սաց, կամ կանանց. քան զբնաւ կենդա֊ նիս. 'ի բնաւին վախճան. 'ի բնաւս առ հասարակ. զբնաւ արհամարհանս. Պիտ: տես և Փարպ: և Նար. օփէղ: *Զբնաւ ճեռ որդւոցն խարայէլի. Սարկ. լը: *Իմաստիս զբնաւ իսկ զծովեզրն կոչեմ: Զբնաւ իսկ զիշխանութիւն առեալ. Եւս. քր:

ԲՆԱՒ. մ. և } Σύμπαν, ὅλως, ὁλοκλήρου.
ԲՆԱՒ ԻՍԿ. } Omnino, penitus, prorsus, sane, quidem. Բոլորովին. ամենևիմբ. ա֊ մենայնիւ. պարզապէս. իսպառ. յար և նման. ամենայն մասամբք. գլխովին. կարի. ֆօլօր. հէփ, դիւթիւն. *Բնաւ իբրև զմարդ. Ագաթ: *Բնաւ ծառայական ամենայն ախ֊ տից. Վրք հց. Գ: *Մինչև բնաւ արտա֊ քոյ իւրեանց. Կոչումն: *Բնաւ անզգայից նմանեցան. Մխ. Երեմ: *Անբիծ և անա֊ րատ զբնաւ առաքինին առնէ. Սարգ. Բ. Պ. Ղ: *Ոչ իշխէր աղաչել, և բնաւ թափել զպարկութիւն. Ոսկ. Ես: *Որ բնաւ սակաւ ժողովեաց՝ տասն չեղջ. Եփր. Եւ: *Բնաւ իսկ կորեալ և ոտարացեալ էր: իսկ դու բնաւ իսկ արքայութիւն. Նար: *Երբեմն բնաւ իսկ սոսկագոյն իբրև զմարդիկ հրեշ֊ տակքն երևեալ. Ագաթ: *Զախտս, և ըզ֊ բնաւ զմաս իսկ. Եղնիկ:

կամ Ն. Ապաքէն. արդեօք. իսկ. եր֊ բէք. համայն. յայսր ամենայնի վերայ. միթէ. իւիք. անգամ. Թող զայն. *Եթէ լիցէ լուսցեն, և կամ բնաւ ծանիցեն»։ յն. և ծանիցեն. Եղէկ. Բ. 5: *Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդէ՞ր պատանկուլ»։ յն. համայն, կմ գլխովին. Ա. կոր. Է. 1: *Իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդա֊ րութիւն իմ»։ յն. լոկ, ընդէ՞ր. Սղ. խթ. 16: *Բնաւ ո՞յր իսկ ածեալ է զձեզ այսր: Ե֊ թէ զուցէ ոք բնաւ 'ի սիրելի հարազատաց. Եղիշ. Է: *Իսկ մեք հողեղէնքս բնաւ իսկ զի՞նչ բերիցեմք 'ի համար զմեր նեղութի. Ագաթ: *Անելի է, թէ բնաւ ահիւ իշխեաց մահն մերձենալ 'ի նա. Վրք հց. ծԲ:

ԲՆԱՒ ՈՉ. ՈՉ ԲՆԱՒ. } Οὐδέν, ἁπλῶς,
ԲՆԱՒ ԻՍԿ ՈՉ. մ. } οὐδαμῶς. Nullo modo, penitus non, nullatenus. Եր֊ բէք ոչ. ոչ երբէք. ամենևին ոչ. և ո՛չ իսկ. ո՛չ իւիք. եօքի. հէչ, տայլ. *Ուսեալ բնաւ չէք: Ուր չէր բնաւ զղջ եգեալ: Եւ ոչ բնաւ ամենևին հրէայ անուան ա֊ նուանել իշխել. ևն: *Որ բնաւ զաղջ և զձախ ոչ գիտէր: Որ բնաւ ոչինչ իսկ են: Եւ ոչ բնաւ երևէր, թէ լեալ ինչ իցէ անդ. Ագաթ: *Եւ ոչ բնաւ իսկ: Բնաւ իսկ ոչ: Եւ ո՛չ բնաւ ընդ ումեք համեմա֊ տեսցի. Պիտ: *Ցայտ է թէ բնաւ և էր իսկ ոչ զբանաւոն: Զոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ. Եղնիկ: *Հոգւոյն բնաւ չէք իսկ ուշ: Ե֊ ղիշ. Է: *Ցարմէ և բնաւ իսկ ոչ մեկուսա֊ ցաւ. Նար. ճզ:

ԸՆԴ ԲՆԱՒ. մ. Ἐφ᾽ ᾧ τὸ πᾶν, τοῦ παντός, τὰ πάντα. Per omnia, universim. Ընդ ա֊ մենայն տեղիս. և ընդ ամենայն. համան֊ գամայն. *Հալածել հարկէք ընդ բնաւ վասն իրացդ գործելոց. Ոսկ. Եւ: *Ընդ բնաւ

խաւար և ջուր էր։ խառնաւ և ջուր էր ընդ բնաւ։ Ընդ ամենայն խէջ ողողմպիաղք. և ընդ բնաւ՝ ամք ճոճ. Եղն. ժբ։

ԲՆԱՒԱԳԻՍ. Տ. ԲՆԱՒ. մ. *Բանից արուեստողականաց բնաւապէս անփարձ եղեալ. Մագ. էկէղ։

ԲՆԱՒԻՄԲ. մ. Բնաւ. բնաւին. *Անհնարելի բնաւիմբ։ Բնաւիմբ պատկերեալ. Բենէկ։ Վրդն. ծն։ *Որք բնաւիմբ եղբարք տեառն են կոչեցեալք». յն. 'ի տեղի եղբարց տեառն. Բրս. հց։

ԲՆԱՒԻՆ. Տ. ԲՆԱՒ, ա. *Արարչին երկնի, և բնաւին երկրի։ Ծառայք բուսոց բնաւին անտառաց. Նար. յ. և խը։ *Տաբածանելին ընդ բնաւին իսկ ընդհանուր հաստատեալս. Անան. էկէղ։ *Բնաւին իրաւամբք էր ջնջել զայդ զխորայէլ. Մխ. երէմ. (որ լինի և Դ)։

ԱՅԼ առաւել տես ԲՆԱՒ, մ. գ. *Բնաւին հրաժարել. Պիտ։ *Բնաւ ամփոփին։ Բնաւին բարձեալ, կամ մեռեալ աշխարհի. ատեցեալ, ատելի. եղծեալ. սևացեալ։ Զծիծաղելին բնաւին՝ իբրև լքումն շնորհի։ Բնաւին ողորմութի, կամ բարեբար, կամ չար, կամ բարձունք. Նար։ *Եղեն արդարք և սուրբք, այլ ո՛չ բնաւին անմեղք. Խոսր։ *Ծանեաւ սուղ ինն, թէպէտև ոչ բնաւին։ Ի բնաւին խոնարհս զմեզ սորաքարշեայ. Մագ. է. ծբ։ *Բնաւին ապատանի տեղի մի լիցի. Մխ. երէմ։ *Ոչ կարի հեռի, և ո՛չ բնաւին մերձ. Վրդն. ծն։ *Զխո՞րդ բնաւին է որդի, որ ոչ յեւուէ ծնողին։ Զխո՞րդ բնաւին բարի, որ արդելու ամենեցունց զհաղորդելն նմա. Կիւրղ. գնձ։ *Եւ աստ արդար զբնաւին (յն. զյամմի) առաքինին առէ. Ոսկ. մ. ա. 4։

ԲՆԱՒՈՐ. ի, աց. ա. Φυσικός, ἔμφυτος. Naturalis, a natura insitus. Բնական. բնիկ. ընդաբոյս. սեպհական. անկակից. *Չէ բնաւոր ցանկութիւն արծաթսիրութե։ Վախճան լինիցի 'ի յաւուց ինչ բնաւորաց. Ոսկ. մթ. և ես։ *Բնաւոր էիցս ընդ էին ճշմարտի. Համամ. առկ։ *Յործում թլփատեցին շունչք հողմոցն յընտանի և 'ի բնաւոր ճանապարհացն. Սարկ. շար։ *Իւրական և բնաւոր առաքինութիւնք։ Ի բնաւորսն ունակութիւս. Գր. հր։ *Տէր զօրութեց վերնոցն, և ամենայն երկրի. և այս ըստ արարչութեն և բնաւոր տէրութեն. Սկեւ. եւ։

ԲՆԱՒՈՐԱԲԱՐ. Տ. ԲՆԱՒՈՐԱՊԷՍ. *Զբնաւորաբար սերմանեալսն 'ի նմա զօրութիւս. Դիոն. էկէղ։ *Բնաւորաբար կամեցաւ մերկանալ. Փիլ. լին։ *Յարատեւութե վասն և բնաւորաբար յօդնութե մեզ 'ի սահղծչէն պարգեւեցան. Խոսրովիկ։ *Որ միշտ 'ի բնութե ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց։ Ոչ բնաւորաբար գոլով հոգևոր. Նար. ծէ. լը։ *Այս մարդկան բնաւորաբար օրէն է, զի յորոց սիրեն՝ զնոսին և սիրեն։ Ոչ բնաւորաբար, այլ առացողապէս. Լմբ. ող. և հանգ։

ԲՆԱՒՈՐԱԳՈՅՆ. Տես ԲՆԱՒՈՐԱԿԱՆԱԳՈՅՆ։

ԲՆԱՒՈՐԱԿԱՆ, ի, աց. ա. Φυσικός, σύμφυτος, ἐπιπεφυκώς. Naturalis, innatus, proprius. որ և ԲՆԱՒՈՐ. Բնական. և ընդաբոյս. անկակից. սեպհական. իւրական. բուն, և ընտանի. *Բնաւորական իր։ Նիւթ ամենայն բնաւորականացն առ հասարակ է։ Բնաւորականք են զգալիքս և երևելիքս. Անյ. պորփ։ Մագ. 'ի դէոն։ *Բնաւորական սահման է՝ բան համառօտ յայտնիչ բնութե. Անյ. ստորոգ։ *Բնաւորական մահ. Սահմ. է։ *Բնաւորական կամք, կմ մտերմութի. Փիլ։ *Որ 'ի մեզ բնաւորականքն են՝ հոգեկանք և մարմնականք։ Բնաւորականօքս ընդդիմամարտեալ. Լմ. Յհ. խմ. երև։ *Յաղթեաց չարին բնաւորականօքն. Լմբ. օփել։ *Ի բնաւորականացն և յանբնականացն ախտից։ Մի յաղթեսցէ եկամուտն, այլ բնաւորականն. Սարկ. ք. և ող։ *Զեկամուտսն ընդ բնաւորականացն։ Զբնաւորականսդ քո բարերարութիւնս։ Զատուցումն մեղեաց բնաւորականաց. Նար։ *Որոյ բնաւորական անունն էր Մինաս. Հ = Յ. դեկտ. 10։ *Մոգքն 'ի բնաւորական ընդդիմակութիւնս նայելով. Բրս. ծն. յն. Ֆիւզիգոն. (որ հայի և 'ի յաջորդ նշ)։

ԲՆԱՒՈՐԱԿԱՆ. Բնախօս, և Բնաբանական գիտութի. Φυσικός, κή, κόν. Phisicus, ca, cum. *Աշխեալ լինի 'ի բժշկաց, և 'ի բնաւորական արանց։ Աստ 'ի բնաւորականաց արանց։ Ոգուտ արար 'ի ձեռն բնաւորականին առ 'ի գիտութիւն հանճարոյ երկնի և աշխարհի. Փիլ։

Եւ Սկզբնական. հին և նախկին. ապաժմին. *Պեղագիանոսք ուրանան զբնաւորական մեղսն գոլ 'ի տղայսն. Մխ. ապար։

ԲՆԱՒՈՐԱԿԱՆԱԳՈՅՆ. կմ } Առաւել
ԲՆԱՒՈՐԱԳՈՅՆ. ա. մ. } բնաւորական, կամ բնաւոր. բնականագոյն. գիպօղագոյն. *Եւ երկրորդ օրէնս դնէ բնաւորագոյն (կամ բնաւորականագոյն)։ Մի գուցէ և այս բնաւորականագոյն՝ այլաբանութեան տեսակաւ լուծանի։ Իսկ այլ ումն բնաւորականագոյն հաստուցեալ զպատասխանի ձառիս։ Բնաւորագոյն ասացեալ է. Փիլ։

ԲՆԱՒՈՐԱԿԱՆԱՊԷՍ. Տ. ԲՆԱՒՈՐԱՊԷՍ. *Յոյժ փութայ բնաւորականապէս կատարել. Պիտ։

ԲՆԱՒՈՐԱԿԻՑ. Տ. ԲՆԱԿԻՑ. *Բնաւորակից (յն. հարազատ) որդի անձառելի. Կիւրղ. գնձ։ *Բնաւորակից ունի զօրակութիւն (այսինքն անկակից)։ Եղականայս բնաւորակից՝ լինել փոխադրութի և յեղումն. Նիւս. բն։ *Թէպէտ և բնաւորակից ընդ նմա է (հոգին ընդ մարմնոյ), և կամ բնակէ և շրջի, հեռի ուրեմն անջատեալ խորհրդովք. Փիլ. լին։

ԲՆԱՒՈՐԱՊԷՍ. մ. Φυσικῶς. Naturaliter. որ և ԲՆԱՒՈՐԱԲԱՐ. Բնականաբար. էապէս. իսկապէս. Ֆիզիգապէս. *Իցէ նոյն ինքն (ած և մարդ) բնաւորապէս և ճշմարտութբ. Աթ. դ։ *Ոչ յաւելուածով ունի առ հայր զնմանութե, այլ էութբ և բնաւորապէս. Կիւրղ. գնձ։ *Զանհասանելի զբանն ած բնաւորապէս անսերմնաբար կրեցեր ի քում յորովայնի. Շար։ *Աւիթ եղելոյ նախաստեղծիցն մահու ո՛չ բնաւորապէս, այլ պատուիրանին առանցանելով. Շ. Բարսղ։ *Մխաս բնաւորապէս լոյս է։ Ինքն բնաւորապէս է օրէնքն այ ցանկալի. Լմբ. ծղ։ *Սովորութի եղև եկեղեցի անուանել (զատաձարն) յարանունաբար, և ոչ բնաւորապէս. կանոն։

Եւ Προσφυῶς. Apte, concinne. Յարմարաբար. բնական օրինակաւ, կմ օրինօք. 'ի դէպ. *Պարտ է բանիս զոյգ և հաւասար գոլ գործեացն կազմածի. զի բնաւորապէս հնչիցէ առ 'ի բայիցն պէտս. Նիւս. կազմ։ *Որ միշտ վայելչապէս բնաւորապէս փառաբանիս յարարածոց քոց. Մաշտ։

ԲՆԱՒՈՐԵՄ. եցի. ն. } Ἐμφυτεύω.
ԲՆԱՒՈՐԵՑՈՒՑԱՆԵՄ. } Inseruo,
եմ. Ի բնէ կամ 'ի բնութե անկել. տալ բնաւորել. բուսուցանել. արմատացուցանել. պտղաբերել. արտադրել. *Զթոփն տեսակն բնաւորեցին նախ իսկ կակուղ և առանց արեան. Պղտ. փիլ։ *Բնաւորեցին 'ի հարիւրաւորսն՝ վկայական արեամբ. Մխ. դփ։ *Խառնեաց և բնաւորեցոյց 'ի բնութեան. Խոսրովիկ։ *Զբուսականացն և զկենդանականացն տեսակս բնաւորեցոյց զանհատս. Անյ. ստորոգ։ *Առ ամենայն մարմինս, որչափ փոր է, բնաւորեցոյց. Պղտ. փիլ։ *Զպատճառականելին բնաւորեցոյց յինքեան պատկառութի. Պիտ։

ԲՆԱՒՈՐԵԱՑ, եցին. ը. Տ. ԲՆԱՒՈՐԵՑԱՒ. *Զթողութի զգլխումն բնաւորեաց ծնանել. Փիլ. լին. ա. 82։ *Զանազանել բնաւորեաց. Անյ. ստորոգ։ *Կերակուր նմա բուսական մատուցանել բնաւորեաց. Խոր. գ. 63 *Նկրդործել բնաւորեաց առաջնորդականն՝ որ 'ի մեզ միտք. Յհ. խմ. ափ։

ԲՆԱՒՈՐԵՑԱՒ, ցան, եալ է, են. գիմաց. Πέφυκα, πέφυκεν ('ի φύω), εἴωθε. Natus est, innatus est, solet. Սովոր է 'ի բնէ, բնութի է, կամ սեպհական է, կամ ընդաբոյս է նմին. աւանդացեալ է. սովորեալ է. *Բնաւորեցաւ ինն ածանեքն անդէն վաղվաղակի գոլ և մարդասէր։ Միապէս բնաւորեցաւ դէպ լինել։ Որովոգիքն բնաւորեալ են լուանալ. Փիլ։ *Բնաւորեցան գոլ յանհասանն։ Ցանկան կենդանիքն բնաւորեցաւ տեսանել։ Ամենայն սահման բնաւորեցաւ 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութենց լինել։ Տղայքն բնաւորեցան յեօթներորդում ամսեանն հանել ատամունս, և յութն ամին փոփոխել. Սահմ։ *Արբուցանել և ոռոգել բնաւորեցան։ Հրոյն բնաւորեալ է սրբել ըղնիւթս. Շ. իմ եղան. և Բարսղ։ *Որպէս ինչ և 'ի հուր բնաւորեալ է լինել. Նիւս. կազմ։ *Անուսումնութե բնաւորեցաւ չփոթ յարուցանել։ Քաջուսումնութիւն բնաւորեալ ... բնաւորեցելովք. Լմ. Պիտ։ *Սիրոյ սահման և չափ ոչ է, այլ օր ըստ օրէ առ բազմապէս զաճելն է բնաւորեալ. Լմբ. պորփ։ *Ոչ եթէ յանձնէ ունի զբնաւորեալ օգուտ։ Արտաքոյ բնաւորեալ սովորութե. Վրդն. ծն։

ԲՆԱՒՈՐԻՄ, եցայ, եալ եմ. Երբեմն նոյն ընդ վերնոյն. այսինքն Սովորեալ եմ. սովոր եմ. այս բնութի է իմ. 'ի բնէ ունիմ զայս ինչ, կամ զայս բոյս բարուց. *Խայլպութի եմ, և խայլպութիւն շնորհեմ, զի զոր ինչ բնաւորեցայն՝ զայն տաց ձեզ. Ոսկ. նոր կէր։ *Բնաւորեալ եմ ոչ 'ի մարդկան հայել փառս։ Զոր (ըղչունչն) բնաւորեալն եմք արտաքուստ առօգանել. Փիլ։ *Ըստ որում բնաւորեալ է՝ սիրաբար բացատրելով. Պղտ. փիլ։ *Ես բնաւորեալ եմ 'ի խրատուէ ոչ խուսափել։ Ես բնաւորեալ եմ 'ի մանկուէ՝ ոչ զանձեղէն մասանս յաշխարհական բանաստեղծութիւնս բերել. Մագ. ղ. ծա։

Եւ երբեմն՝ Սատանալ զբուն. բուսանիլ. ծնանիլ. գոյանալ. 'ի վեր ելանել. հնարիլ. հասանել. եղանիլ. ծագիլ. գտանիլ. 'ի բնէ կարգիլ. Φύω, φύομαι, (ուստի φύσις. և լտ. fio). Gigno, nascor (ուստի natura.) *Ճանաչես զիմ սերումն. և թէ ուստի բնաւորեցայ. Գրմ. ալէք։ *Ցանկէին 'ի հայրենի գեօղն, ուստի բնաւորեալ էր երանելին. Ճ. Ա։ *Բիծ յետոյ 'ի հիւանդութե բնաւորեալ. Փիլ. ժն։ *Սատուգապէս փոյթ բնաւորեցար կենաց. Անյ. բարձր։ *Ասեն, որ 'ի հօրէ բնութիւն է, նոյն բնաւորեալ է 'ի սուրբ կուսին։ Եթէ յարգանդի կուսին բնաւորեցաւ,

տալ 'ի հօրէ ոչ էր բնաւորեալ. Յհ. Իմ. Իէ. *Առաւել պարտ է զարմանալ հրաշիւք ընդ եղեալ պղանձելեան, որ 'ի քեզ բնաւորեցաւ. Շ. Բարձ. Արուեստք 'ի պէտս մարդկան բնաւորեցան. Յճխ. Է. *Արդարութիւն առանց ողջախոհութեան ոչ բնաւորի. Գլաւ. օրին. Փ. *Ի ձեռն որոյ բնաւորի կեանք և խաղաղութիւն. Մաղխ. *Կայանք կրօնաւորաց յանապատի բնաւորեցան. Մագ. Ճ:

ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ. գ. Յաւակութիւն բնութեան. բոյս բարուց. *Ի կենդանութենէ, 'ի շարժողութենէ, 'ի զգայութենէ, և 'ի բնաւորութենէ: Զգայութեամբ և բնաւորութեամբ գերազանցեմք քան զնոսա. Լմբ. ծղ:

ԲՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ. գ. Քննութիւն բնութեան իմաստասիրաբար. *Բնաբանական մասն իմաստասիրութեան՝ 'ի վերայ է. իւրն բնաքննութեան առնելոյ է. Լծ. ահմ:

ԲՆԴԵՂՈՆ կամ ԲՆԴԻՈՂՆ. գուան, գուանք, գուանց. գ. Κάνθαρος, ρις. Scarabeus, scarabelaphus. Բզէզ աղտեղասէր՝ սևագոյն. և այլ ճճիք նման նմին. Բռնչ. ղօգ պէօճէյի, ղօոյնօղլու պէօճէկ. թռնուղլան. գրի և ՓՆԴԵՂՈՆ, կամ ԲՆԴԵՂՈՆ. *Նոյն իսկ եթէ բնդուան առաջի դնիցի, բնդիւն առաքանի: Զօրէն բնդուան յանուշահոտութենէն 'ի բաց փախչէր. Նիւս. երգ: *Ի միջնքերուէ մինչև ցբնդեան. Մագ. ճէ: *Ուանն... նապաստակք զբնդուանս. Վրդն. ծն: *Ի գարշելի ժահահոտութիւս զօրէն բնդուան բերայ ցանկութք. Սիւն. աղ: *Փնդուանք 'ի գունդս աղբոյն զինքեանս թաքուցանեն. Եղիշ. Դ յոբ. Ձա: *Խոզն 'ի տղմ, և բնդերն 'ի յաղբի հեշտանան. Արձ. մոյ:

Ի ԲՆԷ. Տես 'ի բառն ԲՈՒՆ:

ԲՆԻ, բնւոյ. ա. Γνήσιος, αὐτός. Genuinus, ipse. Որպէս ԲՆԻԿ. բուն. հարազատ. նոյն ինքն. *Ոչ զմարգարէից ասէ, ոչ զհրեշտակաց, այլ զնորուն զբնի տեառն (տեառնէ) զԹագաւորէն ասէ, և զնորուն զբնի զմիածին մանկանեն: Զնորուն զբնի զտեառն ամենեցուն մեր՝ տեառն ասէ զփառս նորա. Ոսկ. յհ. ա. 11:

ԲՆԻԿ, բնկի. ա. Ἴδιος. Proprius, են. որ և ԲՆԻ. Բուն. բնաւոր. հարազատ. սեպհական. հայրենի. վաղեմի. öz, զէմ. *Զմեր բնիկ նախարարութիւնս: Ի վերայ դարձելով զբնիկ անունն արարող: Ցիւր բնիկ աշխարհն. Խոր. ա. 8: բ. 49. 64: *Բնիկ Թագաւորացն: Ըստ բնիկ կարգին: Թողուլ զբնիկ տեղիս, կամ զժառանգութիւն: Բնիկ սեպհական կալուած: Տաճար 'ի բնիկ գիւղն: Զբնիկ տեարքն մի կորուսանել ջանայք. Փարպ:

Եւ Նախնի նահապետ՝ որպէս բուն և արմատ ազգի. *Յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ: Մերում իսկ բնկի նախնւոյն: Կեցեալ բնիկք պատւոր ազք. Խոր. ա. 11. 20. 21:

Եւ Բնաշխարհիկ. բուն բնակ, կամ ծագեալ հայրենեօք. Երլիլը, Ֆէղլօյի. *Իսկ նա զի բնիկ 'ի յաշխարհէն է, զամենեսեան 'ի յականէ ճանաչէ. Փարպ:

ԲՆԻԿ. Բառ ռամկական՝ իբր Բնաւ. բնաւին. *Երկու փիլիսոփայք՝ բնիկ մերկ ելեին. զի ամենայն ինչ ընդ գիտութեան երկ է առաջի մեր՝ ասէին. Մորբեն:

ԲՆԻՈՆ, ի, ից. գ. Λεπτόν. Minutus nummus. Մանրադրամն 'ի դրամս. լուման. ակճա աքչէ. *Ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին բնիոնն. Այ. ծէ. 59: *Եւ դու զիմդ կամիս, որ բնիոն փայլեալ կամ կապարեայ գոտանել, եթէ մի մարգարիտ պատուական. Ոսկ. Եօ: *Բնիոնն այն է, որ զկէսն շարժել կարէ. կէս դարւոյ կչռօրդն. Վրդն. աւետար:

ԲՆՈՒԹԵՆԱԿԻՐ. ա. Կրող՝ այսինքն ունող զբնութիւն այլոց. *Բնութենակիր բաղկացութեանց սեռին. Մագ. իդ:

ԲՆՈՒԹԵՆԱԿԻՑ. Տ. ԲՆՈՒԹԻՒՆԱԿԻՑ. *Բնութենակից զինքն հօր քարոզէ. Երզն. մթ: Ն խոսր:

ԲՆՈՒԹԻՒՆ. գ. Φύσις (լծ. հյ. բոյս). Natura (իբրու ծնունդ). Նախնին բուն և արմատն էակի, կամ բուն իսկն էակի. էութիւն. գոյացութիւն. իսկութիւն. զինչ էն. ղաթ, նէհադ, ղաբիաթ, փօղօղ, էարադըլըշ դէբէմ. *Անուն և սահման զբնութիւն ենթակայ իրի յայտնեն: Զբնութիւն էիցն գիտէ: Մատունքն զնոյն բնութիւն բոլորին ունին: Անմարմին բնութիւնն գայ 'ի գիտութիւն: Զի ցուցցէ կցորդակից զնոյ բնութիւն, և զիմաստասիրին. Սահմ: *Զի նոքիմբք ածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք. բ. պետ. ա. 4: *Եւ ոչ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ. ա. կոր. ժա. 14: *Ի մերում միջի Թէպէտև կոչեսցին աստուածք, պիտակսանութեամբ կոչին. իսկ այս բնութեամբ է տէրն անուն. Ոսկ. Եօ: *Եւ այլք ևս յարարածոցն ըստ իւրաքանչիւր բնութեանց շարժելով. Եզնիկ: *Երեք անձինք, և մի բնութիւն, մի աստուածութիւն: Էական բնութիւն բանին (աստուածութիւնն) խառնեալ անշփոթ 'ի մեր բնութիւն ('ի մարդկութիւն). Շար: *Մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյ, և ոչ ասաց եթէ յանուն հօր և յանուն որդւոյ և յանուն հոգւոյ. զի յայտ արասցէ եթէ մի բնութիւն են նոքա. Եփր. համաբ: *Նոյն է աստուած և մարդ ասել, և երկու բնութիւն. Լմբ. ապ: *Երկուց բնութեանց քնի, աստուածոյն և մարդկայնոյն. Յհ. Իմ. Իբե: *Ըստ միաւորութեան բնութեանցն յորովայնէ ունէր զմեծութիւն. Կիւրղ. ղկ: *Կերպարան ծառայի՝ մարդոյ բնութիւն խոստովանեսցի. Աթ. ա. Ք: *Ոչ փոխարկումն և ոչ 'ի բաց բարձումն արար աստուածային և մարդկային բնութեանցն, այլ միացոյց զբնութիւնսն. Խոսր. պարգ:

ԲՆՈՒԹԻՒՆ. իբր Թանձրացեալ. Էակ. էակք. արարածք. իր. իրք. *Ամենայն բնութիւն գազանաց... հնազանդեալ է և հնազանդի մարդկեղէն բնութեան». այսինքն գազանք՝ մարդոյ. Յկ. գ. 7: *Զոր ոչ բնութիւնք արարածոց զած տանիցին. Շար: *Խաւարն առանց էր է արարեալ, և ոչ բնութիւն ինչ. Յճխ:

ԲՆՈՒԹԻՒՆ. Στοιχεῖον. Elementum. Տարր. տարերք. սկզբունք զգալի էակաց. Եանասիր, էնասըր. *Գիտել զհաստատութիւն աշխարհի, և զազդեցութիւն բնութեանց: Բնութիւնք կիզեալ լուծցին... և բնութիւնք հրդեհեալ հալեսցին. Իմ. է. 17: բ. պետ. գ. 10:

ԲՆՈՒԹԻՒՆ. Φύσις. որպէս լծ. Indoles, ingenium. և ἦθος, mos. Բնաւորութիւն. յատկութիւն և հանգամանք բնութեան. բարք. բոյս բարուց. յօժարութիւն. սովորութիւն, որ կոչի և երկրորդ բնութիւն. թապիէթ, որպէս ճնշէօ, խուդ, ադէթ. *Անփոխանել կամ փոխել զբնութիւն արդարոյն. Սահմ. ժա: *Բնութիւն հոգւոյ է ցնծութիւն, ուրախութիւն, սէր, և զուարճութիւն. Լմբ. ող: *Բնութիւն արարին նման զմեղօն. Սարգ. յկ. գ: *Յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ. Եղիշ. ա: *Կերակրէ զիւրաքանչիւր անգամս ըստ իւրաքանչիւր բնութեան և ձևոյ. Մագ. ծէ:

Եւ Որոշումն սեռի. յատկութիւն արուի և իգի. անձնութիւնք. *Ունել բնութիւնս արուականս և իգականս. Եւս. քր. ա: *Պատկառանացն բնութիւն. Գլաւ. փիմ:

Եւ Որոշումն կամ հանգամանք որ և է իրաց. *Բնութիւն Թուականին, կամ Թուոց բժշկականին կամ բժշկութեան, ևն. Սահմ: *Տարաբնութիւն երկար կամ սուղ. Սահմ. ն. քեր:

ԲՆՈՒԹԻՒՆ. Γνώμη. Sententia. σκοπός, intentio. Որոշումն մտաց. հանճար. միտք. իմաստ կամ զօրութիւն բանի. դիտաւորութիւն. նշանակ. խէւ. նիէթ, ֆիքիր, էշուրէթ. *Զինչ ասաց այրն ('ի ծնէ կոյրն). միթէ յիւրմէ բնութենէ եդ զբանն, ո՞չ ընդհատարակաց դատաստանս քննեաց. Ոսկ. յհ. բ. 17: *Եւ զինչ իմանամք զբնութիւն ապացուցիս. Լմբ. ող: *Աղն և պատուհասի նշանակ, և անմնացութեան իմացմունք, և յարութեան բնութիւնք». այսինքն նշանակ անապականութեան. Եղիշ. յես:

ԲՆՈՒԹԻՒՆ. Ὑπόστασις. Hypostasis, subsistentia. πρόσωπον, persona. Ենթակայութիւն. ինքնութիւն. անձնաւորութիւն, անձն, դէմ. *Է՛ և 'ի տեղիս տեղիս ասացեալ 'ի հարցն մի բնութիւն՝ փոխանակ միոյ անձին. Ժղ. Շիրակ: *Մի բնութիւն, և մի դէմ քնի՝ եթէ պարտ է համառօտագոյնս ասել, ո՛չ է ըստ նոյնութեան բնութեան, այլ՝ է ըստ անճառ միաւորութեան բանին ընդ իւրում մարմնի. Յհ. Իմ. Երև: *Ո՛չ ըստ չարափառացն կարծեաց մի ասելով բնութիւն, այլ՝ փոխանակ մի անձնաւորութեան. Շ. Բղբ: *Ոչ ասեմք զմի բնութիւն՝ զյատկութիւն էութեանցն շփոթելով, այլ ըստ անճառ միաւորութեան երկուցն 'ի մի անձնաւորութիւն. Լմբ. ապէն: *Սարգիս վարդապետ վասն մի անձն ասելոյ զքնի՝ մի բնութիւն ասէ. Մխ. այար: Ըստ սմին և ամենայն առլատին ածաբանս նշանակեն. զի Գեաւլիոն գրէ. *Բազում անգամ կիւրեղ զանուն ֆիւսիս պիսակաբար վարէ որպէս իբրսդասիս»: և Տուռնել. *Մի գոլ 'ի քնի ֆիւսիս, իմա՛ զմի անձն»:

ԳԵՐ. նխ. հյց. խնդրով. Ὑπέρ. Super, supra. Ի վեր քան. գեր քան. գերագոյն. քան. առաւել քան. Վեր, առելի քան. գէլ . (պ. պեր. յն. իբեր. լտ. սուբեր, սուբրա.) *Գեր զմարդիկ։ Գեր զբնաւ։ Աղխտագոյն գեր զմահուն վտանգըս։ Աւելի գեր զասացեալս։ Գեր զբազումս, ևն. Պիտ։ *Գեր զասացեալս վատթարագոյն. Յհ. իմ. ապ. ես պատ։ *Գեր զոր 'ի մէասին զգառնահոսան ջրոցն ծորումն. Անան. եկեղ։ *Գեր զոր ոչ ինչ եղիցի այլ վերանցեալ սէր. Գործ։ *Ցաւէտ գեր զնա գեղեցկակերտեալ. Խոսրովիկ։ *Կենաց փայտ, և գեր ամբարձեալ զմայրոն լիբանանու. Հանձ. առակ։

Սեռ. խնդրով. *Գեր օրինացն անցանել։ Գեր մարդկան գասն սովաւ զօրացեալ. Լմբ. եկեղ։ *Որով զմարդիկ գեր գասեցեր վերնոցն. Գնձ։

Այլ և խնդրովք. որպէս Քան. *Ո՞րմ այլ ումեք իրաւացի առաւել՝ գեր զմա չափել հառուցումն. Պիտ։

Անխնդիր. Մ. ա. որպէս Գերագոյն. աւագ. *Գեր ելոց, և նուաստից։ Գեր 'ի վերնայինսն զնոր ժողովուրդ առ քեզ մատուցես. Նար. Փ. և գանձ իւղ։

ԳԵՐԱԲՂԽԵՄ, եցի. ն. Ὑπερβλύζω. Redundo, exubero. Առաւելութեամբ բղխել, յորդել, վեղուլ. *Ոչ նուազին հաւրդութք (պարգևքն այ), այլև յաւէտ գերաբղխել զմեծութիս զայս. Դիոն. ծծայ։

ԳԵՐԱԲՆԱԳՈՅՆ. գունի, ից. ա. Ὑπερφυέστατος. Omnino excedens naturae modum. Ամենևին գերաբուն. վերագոյն յոյժ քան զբնութիւն սովորայնոցս. *Արեգական և լուսին բառ զօրութեան և կայից գերաբնագունից։ Այսքան գերազանցեալ գերաբնագունիւք ընդդէմ պարագայութեամբք. Դիոն. Եղբ։

ԳԵՐԱԲՆԱԿԱՊԷՍ. մ. Գերագոյն բնակութք կամ բնութք. *Այլ նոյն ինքն գերաբնակապէս բանն հօր . . . զառ 'ի սորայս միջա ծոխացուցանելով հրաշացուցանէ . . . բնակութի. Անան. եկեղ։

ԳԵՐԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ. գ. Երկնային օթևանք. *Գնայր յերկինս՝ յառաջանալով 'ի գերաբնակութին (կամ գերաբնաբնակութի) յանմատնելիսն. Ճ. Թ։

ԳԵՐԱԲՆԱՊԷՍ. մ. որ և ԳԵՐԲՆԱՊԷՍ. Ὑπερφυῶς. Supernaturaliter, excedendo consuetum naturae modum, eximie, mirifice. Ի վեր քան զբնութիւն հասարակաց. *Գերագոյն քան զէութիւն գերաբնապէս ունի զգերաբնութիւն։ Գերաբնապէս ամենայն բարեզարդութեան՝ յայտնէ։ Գերագոյն քան զմարդ ներգործէ զմարդոյ. և՞ յայտնէ զայս՝ կոյս գերաբնապէս ծնեալ. Դիոն։ *Գերաբնապէս նախապզեկուցեր. Նար. դֆ։ *Բան մարմին եղեալ գերաբնապէս 'ի բնաւորականսն մարդկութե երևեալ՝ գոտու հանգիստ հոգւոյն ոգւ. Վրդն. եբր։

ԳԵՐԱԲՆՈՒԹԻՒՆ. գ. τὸ Ὑπερφυές. Supernaturalitas. Գերագոյն բնութի. գերազանցութի քան զբնութի. *Գերաբնապէս ունի զգերաբնութիւն։ Այսորքիւք ունի զգերաբնութեանն գերագոյնութիւն. Դիոն։ *Որ ամենայնի գերաբնութեամբն յաղթէ. Սկևռ. լմբ։

ԳԵՐԱԲՈՒՂԽ, կամ ԳԵՐԱԲՈՒԽ. ա. Գերօրինակ բղխող կմ բղխեալ. յորդաբուխ. յորդառատ. *Գերաբուխ մարդասիրութք. Դիոն։ Երդն. մփբ։

ԳԵՐԱԲՈՒՆ, բնի, ից. ա. Ὑπερούσιος. Supernaturalis, naturae modum excedens, ևն. Գերագոյն քան զբնութի հասարակաց. գեր 'ի վերայ բնութեամբ կամ 'ի բնէ. չնաշխարհիկ. գերահրաշ. գերբնական իրք, կմ գերաստեղծան ոք. դաղթափէն խարիճ, ածանգ. *Ընդ գերաբունն լուսոյ անեղի. Ը. հրէշ։ *Ամենայն մեծամեծք են և գերաբունք որ 'ի հայր. Կիւրղ. գանձ։ *Հաւատալ զմեծ հայր՝ էութի ճշմարիտ, գերաբուն. Գր. հր։ *Որպէս զմիութի և միակ վտան պարզութեն և միուն գերաբուն անքաժանութեան։ Գերաբնից պարգևաց։ Գերաբնիցն աեսութի։ Գերաբնիւ զօրութք. Դիոն։ *Զգերաբունան ամայն նշանս. Գէրմ։ *Ցերևելիացս գերաբուն զարդուց։ Գերաբուն և ինքնակալ կայսր հաստոյեցուց. Յհ. կբ։ *Եղեւ յիմաստս գերաբունս. Ը. այբուբ. Փ։ *Այսօր ծնաւ յայտակիոք գերաբուն չքեղութիւ. Լմբ. աղ։ *Ընդ ամէն գերաբունն փառաց նովին մարմնով. Ճ. Գ։ *Ցերևաց գերաբուն ճշմարտութեանն. Հանձ. առակ։

ԳԵՐԱԳԱՀՈՒԹԻՒՆ. գ. Բարձրութիւն գահի, աթոռոյ, պատուոյ. վեհմութիւն. *Նաև զայս ոչ անգիտանայ քոյին գերագահութիդ. Վրդ. առկ։

ԳԵՐԱԳԳՈՒԵՄ, եցի. ն. Գերօրինակ գգուել. *Զանհայրն մանուկ մայրդ որդեպէս գերագգուեցեր. Նար. կաա։

ԳԵՐԱԳԼՈՒԽ. գ. Գերագոյն գլուխ բոլորից՝ քս. *Հասոյ զաս անպարտութք 'ի գերագլուխդ՝ որ կայ ընդ աջմէ այ. Ճ. Ա։

ԳԵՐԱԳՈՅ, ի, իւ. ա. Ὑπερούσιος. Superessentialis. Գերագոյն էութք, գոյութք, գոյացութք քան զամենայն գոյս. գերագոյն խնկութք 'ի բնէ. *Ի գերագոյէն և յամենապատճառ ածութեէն բղխեալ։ Ամենեցուն պատճառին, և գերագոյն բարերարութէն։ Գերագոյ անստհմանութիւն. Դիոն։ *Գերագոյ է ած որպէս 'ի վեր քան զամենայն էութի. Մագս. Դ. տիոն։ *Գոյ կատարեալ, անեղ, գերաբուն, գերագոյ։ Ինքնագոյ և գերագոյ. Գր. հր։ Սկևռ. աղ։ *Ամենամեծին փոքրկութիւն, նուաստութիւնն գերագոյն. Սարկ. աղ։

ԳԵՐԱԳՈՅ. բայ. Գերագոյն է. գերազանցէ. *Քան զամենայն գերագոյ ած. Կիւրղ. գանձ. ճա։

ԳԵՐԱԳՈՅԱԲԱՐ. Տ. ԳԵՐԱԳՈՅԱՊԷՍ. *Ցամենեցունց համանգամայն գերագոյաբար սկզբանէն, և պատճառաւոր գոյացուցչէ. Դիոն։

ԳԵՐԱԳՈՅԱԿ. և } ա. Գերագոյ. և
ԳԵՐԱԳՈՅԱԿԱՆ. } Սեպհական կմ հաղորդ գերագոյին. *Ի գերագոյակն երրորդութիւն ունին զհայեցուածս անլոյծ անդութք. Յհ. իմ. էկ։ *Առեալ սոցա զինչխանութի փառաց 'ի գերագոյակն իշխանութէ. Ը. հրէշ։ *Գերագոյակ պատուոյ արժանացաւ կոյսն քան զամենեսեան իւրով մաքրութք. Ճ. Փ։ *Գերագոյական ծայրութի. Մագ. ծբ։ *Գերագոյական պետութի, տէրութիւն (այ)։ Գերագոյական զօրութք (երկնից). Բենիկ։ *Գերագոյականն էի (այ). Մագս. եկեղ։

ԳԵՐԱԳՈՅԱՊԷՍ. մ. Ὑπερουσίως. Superessentialiter. Որպէս գերագոյ. գերօրինակ խնկութք. անճառ և գերաբնական օրինակաւ. *Ամենեցունց գերագոյապէս անքաւութք միահամուռ ընքունօղ։ Քան զամենայն գերագոյապէս արտաքս որոշեալ։ Ամենայն էքս յաղթուէ և 'ի բարույն են, և ամենայն ոչ էքն գերագոյապէս 'ի յաղթուի և 'ի բարույն են (այսինքն գերազանցապէս փակին). ևն. Դիոն։ *Ցանճառն խնկութե և 'ի փառս գերագոյապէս հաստատեալ. Լմբ. պորգ։ *Անեղին եղանիլ . . . և մնալ՝ բառ որում էրն՝ գերագոյապէս յանհասութե. Սկևռ. Ես։

ԳԵՐԱԳՈՅՆ. գունի, ից. ա. Ὑπέρτερος, ὑπέρτατος. Superior, praestantior, summus, supremus, praestantissimus. Վերագոյն. վեհագոյն, ծայրագոյն. առաւելագոյն. գերազանց. գեր քան. ապմ, ալա, ուլա, էփլէր. *Գերագոյն լոյս, մաքրութի։ Ի գերագունեն էութք։ Գերագունիցն զօրութեց. ևն. Դիոն։ *Քան զամենայն գերագունին այ։ Ի գերագոյն քան զզօրութե հայեցուք լան. Կիւրղ. գնձ։ *Գերագոյն մխատակարութիւն, պարտաւանք, առաքանք. Պիտ։ Մագ. ծգ։ *Գերագոյն փառօք։ Գերագոյն քան զբնութե չարչարանօք. Շար։ *Քան զչափ կշռութեան բանի գերագոյնք։ Գերագունիցն կայից. Նար։

Սեռ. խնդրով, իբր գերազրական բառ. լտ. և լտ. *Գերագոյն երկնայնոցն, կամ երկնիցն։ Որդւոց գերագոյն. Անյաղթ. բորձր։ *Մարդարէից գերագոյն։ Գերագոյն ընտրելոց։ Գերագոյն քերովբէից, երկնից, ևն. Շար։

Իբր մ. նաև հանդերձ խնդրով. *Անճառնմանութիւնն՝ գերագոյն պարգևի (վերին զուարթնոց). Դիոն։ *Գերագոյն քերովբէից վերամբարձեալ 'ի յերրորդ խորանս երկնից։ Գերագոյն քան զբնաւ անճառելոյն հասիք երանութե. Շար։ *Գերագոյն քան զերիզովբէն փառն եզեքելայ՝ ըստ բանաւոր բելիարայ ասելոյ հարթեալ պատալեցեր։ Համբարձեալ վերագրեաց գերագոյն գրան. Նար. ղբ. և խչ։ *Ջերմն սիրոյն՝ զոր գերագոյն ընկերակցացն ունէր առ վարդապետն. Սկևռ. յոբ։

ԳԵՐԱԳՈՅՆՈՒԹԻՒՆ. փոխանակ գըրելոյ ԳԵՐԱԳՈՒՆՈՒԹԻՒՆ, զոր տեսցես։ Կիւրղ. գնձ։

ԳԵՐԱԳՈՅՈՒԹԻՒՆ. գ. Ὑπερουσιότης, τὸ ὑπερούσιον, τὸ ὑπερέχον. Summa essentia, supersubstantialitas. Գերագոյն խնկութե 'ի վեր քան զամենայն գոյացութի. գերունակութե. *Գերագոյութե աստուածական։ Գերագոյապէս ունի զգերագոյութի։ Զգերաբնութեն գերագոյութի։ Քան զամենայն որքաղան բառ գերագոյութե արտաքս համբարձեալ. Դիոն։ *Զի որքան գոս զմեծութիւն էութեանց անհասս գերագոյութեամբք ամփոփեցեր, այսքան ներգործութք տեսանելի մեզ արարեր. Պիտոյ։

ԳԵՐԱԳՈՎ. ա. Գովեալ յոյժ յոյժ. *Գերագով կուսին՝ այլ ամենախաւին. Գնձ։

ԳԵՐԱԳՈՒՆԱԿ. ա. Իբր Գերագոյն. գերազանց. *Քան զամենայն է գերագունակ. Կիւրղ. գնձ։

ԳԵՐԱԳՈՒՆԱԿԱՆ. Նոյն ընդ վ. *Գերագունական է այս կուսածին բոլոր բանս. Մագ. ւ։

ԳԵՐԱԳՈՒՆԱԿԱՊԷՍ. Տ. ԳԵՐԱ-

ՀԱՆՑԱԳԷՍ. *Զգերագոյնութիւն զմեծամտական... յամենայնէ որքան ինչ էքս են, գերագունականապէս 'ի բաց որոշել. Դիոն.։

ԳԵՐԱԳՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. } Ὑπεροχή. Ex-
ԳԵՐԱԳՈՒՆՈՒԹԻՒՆ. գ. } cellentia, praestantia, եւն. Գերագոյն գոլն. գերակայութիւն. գերագոյնութիւն. գերազանցութիւն. *Անձայնոյն բնութեան գերագունականութիւն։ Գերագունականութիւն քան զհրեշտակաց։ Ոչ որդի է միածին վասն գերագունականութեան առ որ աստուածն, այլ վասն առ 'ի հօրէ ծննդեանն. Կիւրղ. գնձ։ *Ըստ գերագունութեանն 'ի հրեշտակս հանճարոյ. Դիոն.։ *Հրեշտակք ըստ բանի բնութեան եւ առ ած բարեպաշտութեան ունին զգերագունութիւնն (քան զմեզ, եւ քան զմիմեանս)։ Որդին զածայնոյ եւ հայրական էութեան ունի յինքեան զիւրաք գերագունութիւն. Կիւրղ. գնձ։

ԳԵՐԱԴԱՍԵՄ, եցի. ն. ր. Վերադասել. նախապատուել. կ. վերագոյն գըտանիլ. *Հանդերձեալ դատաստանին երկիւղի գերադասել զասփանացն մեծանձնութեան. Ը. թ. յհ. հէ։ *Վերոյ այսոցիկ գերադասի։ Սակայն Ճշմարտութիւն անբաւութեք գերադասի. Լմբ. սղ. ճ. պտրգ։

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ. ի, աց. ա. Ὑπερθετικός. Superlativus, excellens. Գեր 'ի վերոյ եդեալ. գերաստիճան. վսեմ. վերին. գերապանծ. եւ Ցայտարար գերազանցութեան. *Առաջաստ գերադրական. փմ։ (Իսկ որ յարի. *Դու խորանեին գերադրականն, ըստ հ. այսինքն վերնոյ. անհիւթական։) *Գերադրական տունկ (խաչն). Թէոդոր. խչ։ *Ցայտ տանէ զիւր գերադրական փառսն, որ է խաչն. Տօնակ։ *Ի գերադրական փառս ելանել (որդին). Ճ. փ։ *Զմեծութիւն քո, զխնամանալին եւ զանպատմութիւն զգերադրական շնորհն. Հանմ. առաջ։ *Գերադրական անմահից ածոցն. Ճ. Ա։

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԶԱՅՆ ասի Կրկնութիւն բառի 'ի խտականն. զոր օրինակ, սրբն սրբց, տրռն տրռց, երգ երգոց։ Նխու. Եբգ։

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ ասի առ քերականս ըստ յն. տատօս կամ օտօս, եւ ըստ լտ. իսիմուս կամ իմուս, յանգ ածականաց. որ չէք 'ի մեզ, այլ վարեմք զգաղղիաականն, գոյն, կմ յառաջոյ գնեմք. եւս, ամենա". գեր". եւն. (ամկ. էն ձէնծը, էն պզտիկը.) Թր. ֆէր։

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ. իբր Ցարանուն՝ ըստ Թարգմանութեան բազմարատոյ ուրումն 'ի գործս գամանակացոյն. *Ածին գերադրական. որպէս 'ի քերականութէ քերական. եւն։

ԳԵՐԱԴՐԱԲԷՍ. մ. Գերաստիճանաբար. եգերաբնապէս. *Գերադրապէս պատուեալ պանծացան. Գնձ։ *Որք յամենութիւնն բնութարար եւ գերադրաբար են միաւորեալ. Դիոն.։ *Գերադրապէս փայլեալ անեղակք. Հ. կՍւ։

ԳԵՐԱԴՐԵՄ, եցի. ն. Ի վեր դնել. վերակարգել. եւ Ի վերոյ դնել. *Ի խորոց մեղաց 'ի վեր հանեալ՝ խիկապէս առ ինքն գերադրէ. Վրք հց. ա։ *Ասիմ կենդանի (ըստ սերմն), եւ գերադրիմ 'ի վերինսն (որպէս բանական ըստ անասնոյն). Համմ. Ի ծէր. Երզն։ *Քերականն 'ի քերականութէ գերադրէ (յարանուանաբար), եւ երաժիշտն յերաժշտականէն. Դամաշ. ըստ Բոֆոր։

ԳԵՐԱԴՐՈՒԹԻՒՆ. գ. Ὑπέρθεσις, Transpositio, abundantia, excellentia. Վերադրութիւն. յաւելուած, առաւելութիւն. յարադրութիւն. եւ Գերազանցութիւն. Փիլ. իմաստ։ Ան. Մէկն. տրբոց։ *Ոչ բաւականացուաւ գնելովն՝ յամենայն ժամ, այլ գերադրութեան առնէ ատացելոցն յաւելեալ. Լմբ. սղ։ *Կամ 'ի հաւատարութեան, եւ կամ 'ի գերադրութեան ձգտիլ յօժարէր. Սհկ. ղմբ։ *Գերադրականքն ունին զերկուս գերադրութիւն, որպէս քերականն զքերականութիւն, եւ արդարն զարդարութիւն. Դամաշ. ըստ Բոփոր։

ԳԵՐԱԶԱՆ. ա. Հրաշազան. աննման. *Ցերկնաւոր հարսանիս գերազան փեսայիդ. Բենիկ։

ԳԵՐԱԶԱՆՑ. ա. Ὑπερέχων, διαφόρος. Excellens, praestans, eximius. Գեր 'ի վեր զանցեալ. բարձրագոյն. վերագոյն. գերագոյն. վեհագոյն. վսեմագոյն, առաւելեալ. 'ի վեր քան. *Խոշոր (ասի), վասն ումեմն ('ի մասանցն) գերազանցն լինելոյն, եւ ումեմն՝ որ պակաս. Արիստ. որոշ։ *(Ծառ) գերազանց առ ամենեքումբք պտղաբերօքն. Պիտ։ *Գերազանց քան զզանազան սրբութեան. Նար։ *Զօրութիւն եւ խորհուրդ սորա գերազանց եղեւ քան զկամարն երկնից. Ը. Բուզնդ։ *Քան զամենայն միտս գերազանց։ Եւ մահու եղեն գերազանց. Շար։ *Գերազանց սահմանի, կամ չափոյ, գովութեան։ Երկրպագին հնարից գերազանց։ Աշակերտք գերազանցք օրինացն մովսէսի. Նար։ *Գերազանց յուսոյ՝ շնորհ։ Գերազանց եղանեմք երկիւղին. Լմբ։ *Գերազանց բանի՝ պարգեւ։ Ընդ առնօրէնս համարելն գերազանց է քան զչարչարելն եւ մեռանել. Սհկ։

ԳԵՐԱԶԱՆՑ. մ. } Գերազանց օ-
ԳԵՐԱԶԱՆՑԱԲԱՐ. } րինակաւ, առաւելութեամբ. *Աշանակերտ զերկուս բնութիւնս՝ գերազանց միաւորեալս 'ի վեր քան զմիտս եւ զբանս. Ձեռ. կը։ *Մարմնով գերազանց նմին բարձրացաւ. Նար. խոսս։ *Կարէ քան զասացեալս 'ի սոյն գերազանցաբար իմաստասիրել. Լմբ. սղ։

ԳԵՐԱԶԱՆՑԱԳՈՅՆ, գունի, ից. ա. Առաւել եւ յոյժ գերազանց. գերագոյն, եւ Ազնիւ. *Ցառ գերազանցագոյնն սոցա ումեք վերանալ. Ցհ. իմ. ատ։ *Այսպիսում պատուոյ՝ գերազանցագունի մնաց եւ բանի. Սոփ. աղ։ *Զգերազանցագոյնն ցանկայ, եւ անհնարիցն ըղձայ. Մխ. երեմ։ *Գերազանցագոյն է քան զհրեշտակս... Այնքան գերազանցագոյն համբարձեալ, որքան մեկնեալ է յեղականացս ած ըստ էութեան բանի. Կիւրղ. գնձ։

ԳԵՐԱԶԱՆՑԵՄ, եցի. ւ. Ὑπερβάλλω, ὑπερβαίνω, ὑπερέχω. Excello, excedo, supero, transcendo. Գերազանց լինել քան զայլս. յառաջել անցանել. առաւելուլ. եւ Զանցանել ըստ չափ. *Ցեր. կարանչիւրումն գերազանցէ ըստ լաւին։ Ըստ բազմութեան թուոց գերազանցեացէ. Փիլ։ *Գերազանցէ զմտօքն զիտութեամբ։ Քան զօրինակիս զօրութեան գերազանցելով. Կիւրղ. գնձ։ *Գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքելոց. Խոր. գ. 67։ *Զբոլորիւքն գերազանցեաց։ Բարեբախտութեամբ եւ շինութեամբ քաղ 'ի բաց գերազանցեացին զմիջերկրեայ զհիւսիսականաւր քաղաքօքն. Պիտ։ *Զախտ. ասար ախտս, եւ ոչ գերազանցեալ. Նիւս։ *Գերազանցէ քան զչնեղեղին յորդուժն։ Անդր քան զօրինակն գերազանցեաց Ճշմարտութիւնն 'ի նշանս, եւն։ Հօրն կրկին գերազանցեաց։ Անձառ եւ բանից, եւ գերազանցեալ քննութեանց. Նար։ *Աքանչելի է խորհուրդ փրկագործութեանն՝ ամենայն մտաց եւ բանի գերազանցեալ. (կամ գերազանցեաց). Սհկ. եւ։

ԳԵՐԱԶԱՆՑԻԿ. ա. Գերազանց, գերազանցեալ. *Զգերազանցիկ լուսոյն ըղձառապայծառ ծաւալեալ. Անան. եկեղ։ *Քան զձիու գերազանցիկ լինիցի։ Աշակերտքն քան զվարդապետն գերազանցիկ եղեն. Ոսկ. յհ. ա. 26. 34։

ԳԵՐԱԶԱՆՑԻՄ, եցայ. կամ անցայ. ձ. Տ. ԳԵՐԱԶԱՆՑԵՄ. *Ոչ կշռեցաւ ընկերին չափով, այլ հոգւոպէս գերազանցեցաւ. Նար. ղէ։ *Անթիւ հրաշից գործող ցուցար, մարմնաւորաց գերազանցեցար. Գնձ։

ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ. գ. Ὑπερβολή, ὑπερβολία, ὑπεροχή. Exsuperatio, excessus, excellentia. Անցումն զանցումն. գերագունութիւն. առաւելութիւն. մեծութիւն. անչափութիւն, կամ անցանելն ըստ չափ. *Ըստ մարմնոյ իշխանութեան եւ գերազանցութեան. Մագ. ա։ *Սրբութիւն սրբց զգերազանցութիւն փառաց խաչին կոչէ. Ը. Բուզնդ։ *Վասն գերազանցութեան մարդասիրութեան. Բրս. ծն։ *Բնութեան գերազանցութեան. Կիւրղ. գնձ։ *Որպէս գերազանցութեան ասացեալ, կենաց կեանս. Վրդն. ծն։ *Գերազանցութիւն եւ պակասութիւն։ Գերազանցութիւնք եւ նուաղութիւնք։ Ցաւէան կամ մեծն առաւելութիւն է եւ գերազանցութիւն. Փիլ։ Ար. որս։ Կիւրղ. գնձ։ *Գերազանցութիւն աստուածաստ չարեաց, կմ սնոտութեան, մեղանաց. եւն. Ոսկ. յհ։ Լմբ. սղ։ *Զախաւորութիւն, եւ գերազանցութիւն. Անյաղթ. հակ։ *Գերազանցութիւն ձայնից եւ կամ կերակրոց զլսելիս մտօքն կմ զմարմինս. Ար. որս. ա։

ԳԵՐԱԶԱՆՑՈՒՑԱՆԵԼ. Իբր Գերազանցել. *Սրբ կոյսն եւ զհայրապետական կատարելութիւն գերազանցեցոյց. Ճ. Գ։

ԳԵՐԱԶԱՆՑՕՐԷՆ. մ. Գերազանց օրինակաւ. եւ Ինքնիշխանաբար՝ զանցանելով ըստ օրէնս. *Մի կարասցէ գերազանցօրէն փոփոխել ըստ կամաց իւրեանց. Խոր. գ. 65։

ԳԵՐԱԶԱՐԴ. ի, ից. ա. Ὑπερκόσμιος. Supermundanus, supermundialis. Առաւելեալ զարդուք. եւ վայելչազարդ, շքեղ. պանծալի. գերագոյն կարգաւ. մանաւանդ Գերաշխարհիկ, եւ չնաշխարհիկ. ըստ համաձայնութեան յունին, զի աշխարհ եւ զարդ՝ մի է ըստ յն. *Գերազարդ միտ, նմանութիւն։ Գերազարդից առ փեմանց գիտութիւնք։ Խորհրդոց գերազարդից Թագաւորութեան տեսութիւն. Դիոն. ուր Մաքսիմոս միշտ մեկնէ գերակարգ, եւ գերաշխարհիկ։ *Կամեցաւ զաթոռ իւր արկանել 'ի վերոյ գերազարդ ամպոցն. Նար. յովէբ։ *Ի տեղիս վեհիցն եւ գերազարդ քահանայապետութեանցն. Սհկ. ըմբ։ *Գերազարդիցդ հանդիսարանն". այսինքն իմանալեաց աշխարհ. Բենիկ։ *Բարձրագոյն քան զաւաջինն, եւ գերազարդ վայելչութեամբ. Շար։ *Մեծացուցանէ ('ի նոր օրէնս) գերազարդ պատուով եւ իշխանութեամբ զքահանայութեան խորհուրդ. Սարգ. ժհ։

ԳԵՐԱԶԱՐԴԱԲԱՐ. } մ. Ὑπερκοσμί-
ԳԵՐԱԶԱՐԴԱԳԷՍ. } ως. Supermundialiter. Գերագոյն վայելչութեամբ. շքեղագոյնս. փառօք. մանաւանդ Չնաշխարհիկ եւ գերաշխարհիկ կարգաւ, կամ օրինակաւ վերին զուարթնոց. *Եւ որքան այլ ինչ երկնայնոցն էութեանց է, գերազարդաբար մեզ օրինակաւ աւանդեցաւ։ Առ ածապետական նմանումն գերազարդաբար հասել. Դիոն.։ *Բարուք երեր 'ի վերոյ զգերազարդաբարն, այսինքն անմարմնապէս եւ աննիւթաբար. Մաքս. *Ի բարձրոյն կոյս գերազարդաբար վերաբերիլ. Ը.

հրէշտ ։ *Գերազարդապէս 'ի բարձրագոյն իմաստութիւն յառեալ. Լմբ. ող ։ *Անճառանքն է ինչ որ կենցաղապէս և օրինօք ստասանեն, և է ինչ որ գերազարդապէս և գիտողաբար. Դիոն ։

ԳԵՐԱԶԱՐԴԵԱԼ. Գերազարդ. գերաշխարհիկ. *Գերազարդեալ գեղեցկագունուք քան զադենական զրախտին զայն զծաղկափթիթ տնկոցն զարդարանս. Անան. Եկեղ ։ *Օրհնեալ ես փառօք գերազարդեալ ։ Գերազարդեալ տօն. Ճ. օգ. Քարոզ. և հրէշտ ։ *Գերազարդեալ փառօք պայծառացաւ սա եկեղեցի. Ճառ ։ *Գերազարդեալ փառօք մուծանէ 'ի լոյսն անստուեր. Վրք հց. ա ։

ԳԵՐԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ. գ. Հրաշազարդ վայելչութիւն. գերաշխարհիկ զարդ. *Անդր ևս քան զբնաւս գերազանցեալ եծային շնորհացն գերազարդութեամբ. Անան. Եկեղ ։

ԳԵՐԱԶՕՐ. ա. Ὑπερδύναμος, ὑπερδυναμῶν. Praepotens, praevalens. Գեր 'ի վերոյ զօրութբ. մեծազօր. կարող ամենայնիւ. *Զգերազօրն ած օրհնաբանեմք որպէս ամենազօր. որպէս զերանելի և միայն հզօր. Դիոն ։ *Արդարութեն շնորհ որ և գերազօրն է 'ի վերայ մեղաց. Պաքամ. ժէ ։

ԳԵՐԱԹՌՉԻՄ. թռեայ. չ. Վերաթռիչ լինել. թռչել 'ի բարձունս. *Իբր գերաթռեար մտացաթև հանճարով. Թէոդոր. մայրագ ։

ԳԵՐԱԼԻՐ. լրի. ա. Ὑπερπλήρης. Superque plenus, copiosissimus, exuberans. Լի՝ գեր քան զամենայն. լիազեղուն. *Լի 'ի կարօտսն, գերալիր 'ի լիս ։ Գերալիր լուսով ։ Վասն գերալրին և գերագոյն քան զմիտս բարեկենդանութեն. Դիոն ։

ԳԵՐԱԼՈՅՍ. ա. Ὑπέρφωτος. Praelucidus. Որ 'ի վեր է քան զլոյս. ծայրագոյն պայծառութբ. *Անեղ, գերաբուն, գերալոյս. Գր. հր ։ *Լոյս լուսաւորիչ գերալոյս. Սլկու. աղ ։

ԳԵՐԱԼՈՒՍՈՒԹԻՒՆ. գ. τὸ Ὑπέρφωτον. Ծայրագոյն լուսաւորութիւն. լոյս գերազանց. *Ըստ գերալուսութեն . . . 'ի խաւարչոտ զգերերևակութիւնն վերափայլեալ. Դիոն ։

ԳԵՐԱԼՐԱԿԱՆ. ա. Գերալիր. լի և աննիաղ. *Գերալրական ակրութիւն (ածութեան). Բենէդ ։

ԳԵՐԱԼՐԱՊԷՍ. մ. Ծայրագոյն լրութբ. և Անթերի ճոխութբ. *Զերկնայինսն իմանամք խորհրդապէս քահանայապետութիս, յորս իջանէ ածականն լոյս գերալրապէս. Յհ. իմ. եկ ։ *Գերալրապէս թագաւորէն պճնութեամբ ։ Անդր քան զուշ խորհրդոյ իմաստից գերալրապէս բազմեցար. Նար. խչ ։

ԳԵՐԱԼՐՈՒԹԻՒՆ. գ. τὸ Ὑπερπληρὲς. Exuberans pleuitudo. Ծայրագոյն լրութիւն. լիազեղունն գոլ. գերագոյն կատարելութիւն, մեծութիւն. *Ոչինչ կրելով 'ի գերալրութեն իւր առ 'ի յանբարբառելոյն թափմանէ ։ Ըստ գերալրութեանն և ազբիւրեղէն պարգևաց նորա՝ զնոյն ունելին գերալրութիւ, և ոչ նուազին հաղորդութեն (հաղորդելով այլոց). Դիոն ։ *Գերալրութիւնն էութեն ած և 'ի սորինս կոյս ծանուցաւ. Նար. խչ ։ *Նկատեսցէ զանհաս մեծութեն գերալրութիւ. Բենէդ ։

ԳԵՐԱԽԱՆՁ. ա. Ὑπέρογκος. Supra modum tumidus, turgidus, valde fastosus. Կարի խանձեալ. փքացուցոյ. յախուռն. խրոխտ. մեծամիտ. ամբարտաւան, և ամբարտաւանական. *Զթագաւորացն զմեծամեծ և զգերախանձ բարեբախտութիւն ։ Իբրու թէ մեծ և գերախանձ ստացեալ իցէ բարի. Փիլ. ժ. բան ։ և Լին. 4. 25 ։ *Ի վերայ ամպոյ նստեալ 'ի գերախանձ հպարտութիւն՝ ինքնահաճոյ մարք. Վանակ. յոբ ։

ԳԵՐԱԾ. ա. Իբր Գերեալ կամ գերի ածեալ. Գերեալ. *Գերեաց զգերուն . . . և ընդէր սաէ, գերեալք և գերածք. քանզի սատանայ պատրանօք գերեաց. Լմբ. ող ։

ԳԵՐԱԾԱՒԱԼ. ա. Յոյժ ծաւալեալ. ճապաղեալ ընդ. ամենայն կողմն. *Գերօք հանդարտահեղք, գերածաւալք. Նար. առաք ։

ԳԵՐԱԿԱՅ, ի,ից. ա. Ὑπερκείμενος, προέχων, ὑπέροχος. Superjacens, supremus, emineus, praestans, praestantissimus. Որ կայ գեր 'ի վեր. կայանիւք կամ աստիճանաւ բարձր. ծայրագոյն. և Գերագոյն. գերազանց. *Ընդ գերակայ ծայրըս ծառոց ։ Գերակայ բարձրութբ ։ Զգերակայ անիրաւութեն տանի մրցանակս. Պիտ ։ *Ըստ գերակայ իւրում ճոխութեն ։ Զրկեալ 'ի գերակայ բարեացն. Յհ. իմ. օփ. և եկ ։ *Ի փափագումն ածէ տեսութե գերակայիցն բարեաց. Նիւս. Երգ ։ *Վայելչաբար մեկուսեալ և 'ի գերակայ մասին եդեալ զընտրեալսն 'ի քահանայագործութիւն. Մեկն. ղևտ ։ *Հանէ յիմաստս գերակայ. Ճ. այբուբ ։ *Խոնարհ են ճառքն, այլ գերակայք են առանդութիւնքն. Եփր. ածէպ ։

Հանդերձ խնդրով. *Քան զամենայն գոյութիւն գերակայ է ած. Դիոն ։ *Այնչափ քան զեզականացս բնութիւն՝ գերակայ ։ Եւ ոչ ըստ միոյ յեզանակի եղիցի գերակայ հայր քան զորդի, զնոյն ունելով էութիւն. Կիւրղ. գնձ ։ *Քան զայլսն ամենեսին յարուցեալ և գերակայ գոլք ով քաջասէրքդ թագաւորք. Պրպմ. լէ ։ *Գերակայ ապականութեն յայտնեցաւ ։ Գերակայ փորձութեանց գտեալ. Նար. ծբ ։ *Այժմ որ յոգունց գոլ գերակայ՝ նախ նստելոց յաթոռ նորայ. Յճ. օրբի ։

ԳԵՐԱԿԱՅՔ. գ. Վերինք. երկնայինք. ատեղք. զուարթունք. *Ի գերակայիցս զնոյս յանդիմանել զանզգամսն. Ածան. ծբ ։ *Ամփոփեալ 'ի տեղի գերակայիցն ։ Բարձրացուցեր 'ի սորայնոցս գերակայիցն կայանս. Ճառ ։ *Անդանօր հրաշապէս և ևս քան զէան գերակայից և որդիքն լուսոյ գաւանին. Նար. մծբ ։ Իսկ Նիւս. Երգ. *Վերնատունկ իմն է առաքինութիւն, և 'ի գերակայսն հայի ». իմա ըստ յն. 'ի գեր 'ի վերոյսն ։ Այլ Ճ. Եղեւ. *Եւ այս 'ի յամն էր ոչ սակաւ, այլ քառասուն՝ և գերակայ ». այսինքն աւելի, զանցեալ ։

ԳԵՐԱԿԱՅԱԲԱՐ. մ. Գերակայ լինելով. գերազանցաբար. Նախապատիւ աստիճանաւ. *Նախ քան զայս գերակայաբար կարգեն զհրեշտակապետականն զարգան ։ Բազում ինչ և յածայնոցն գերակայաբար գիտացեալ. Դիոն ։ *Յամենայն խոնարհ նուաստաւ ազատ համբարձեալ. . գերակայաբար կալով. Ճ. հրէշտ ։

ԳԵՐԱԿԱՅԱՑԵԱԼ. } Գերակայ եղեալ. գերազանց գտեալ. գերաստիճան. *Յառաջագոյն գերակայացեալք մտածութիւ. Մագ.
ԳԵՐԱԿԱՅԵԱԼ. }
իմ ։ *Ոչ բնական տեղակալութբ 'ի նմա գերակայեալ. Անան. Եկեղ ։ *Այնչափ առաւելութբ գերակայեալ ես քան զամենայն գոյս. Խոսր ։ *Գերակայեալն աշխարհիս մատանց. Նար. ծբ ։

ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ. գ. Ὑπεροχή, ἐξοχή, προσοχή. Praestantia, eminentia, excellentia, summitas. Բարձրութիւն. գերազանցութիւն. պատիւ. *Յետինքն ոչ են հաղորդ նոցա գերակայութեն. Դիոն ։ *Մշտապայծառ փառաց գերակայութիւն. Խոր. Հռեմ ։ *Անճառելեաւ յիս յանբաւ գերակայութէգ քումմէ. Ճ. Ա ։ *Գերակայութիւն սիրոյ, կամ քահանայութե. Խոսր ։ *Ի լոյսն վերին անմատոյց գերակայութե անհասանելեացդ. Նար. դք ։ *Գեղեցկապէս 'ի նմանէն գահընկալեալ, վայելչապէս գերակայութբ. Յհ. կբ ։

ԳԵՐԱԿԱՆ. ա. մ. Վերագոյն. 'ի վեր. գեր. *Բայց փափագումն ոգւոյս բնական, սակայնեաց քան զդժըլս գերական. Ճ. խոսփ ։

ԳԵՐԱԿԱՏԱՐ. ա. Ὑπερτέλειος, ὑπερτέλεος, ὑpερτελής. Plusquam perfectus. Ամենայնիւ կատարեալ. գերազանց. գերածայրեալ. ծայրագոյն. և Վերամբարձ. *Գերակատար է և կատարողապէս որդի, որպէս պետ ամենայն կատարելութեան ։ Զայն զմեր ած և փրկիչ, զմիշտ կատարեալ և գերակատար. Մագ ։ *Գերակատար երիցս անձին. կատարողն արարածին. Յճ. օրբի ։ *Գերակատար փառք, կամ մատածութիւն, կամ իմաստութիւնք. Անան. յոհ ։ Մագ. ժէ ։ Ճ. օփ ։ *Յարուցին զնա գերակատար փառօք. Մխ. ապար ։ *Գերակատար կործանումն ». իբր ծայրագոյն, յետին. Մագ. ժե ։ *Գերակատար հունձք ». իմաստ հասունացեալք. Երգ. փէր ։ *Գերակատար գագաթն, կամ գերանց ». իբր բարձրակատար. Մագ. ժա ։ *Գերակատար ըստ փոփոխեցւոյն ». այսինքն փքացեալ, բարձրամիտ. Բրս. հց ։

ԳԵՐԱԿԱՏԱՐ (հանդերձ խնդրով). Իբր Վերագոյն քան. առաւել քան. յաղթող. *(Երկրատասանն) գերակատար առաւելութիւ առ քան զայլսն ցուցանի թիւս. Յհ. իմ. եկ ։ *Արութեն գերակատար բարձրանայ. Պիտ ։ *Գերակատար գոյից ։ Գերակատարդ իմաստից (կամ իմաստնոց) ։ Սրբազանդ և գերակատար բոլոր ճեմարանի ։ Երկնայինն գասու և զօրութեց գերակատար գտեալք. Մագ ։

ԳԵՐԱԿԱՏԱՐ ժամանակ բայից ըստ քերականաց՝ է Անցեալ կատարեալն որդէն իւրև 'ի վաղուց. զոր օրինակ, գործեալ էր իմ. որ ըստ յն. Ὑπερσυντελικός. Praeteritum plusquam perfectum. բայց մեկնիչք հյ. ոճով վերածեն 'ի պարզ կատարեալ. գործեցի, կոփեցի, կամ 'ի նորահնար ձևն անպէտ, էգործեցի, էկոփեցի ։ Թր. փէր և Քենէկ նորա ։

ԳԵՐԱԿԱՏԱՐԵՄ, եցի. ն. Գերօրինակ կամ առաւելապէս կատարել. *Եւ ինքն թէպէտև նահանջի, սակայն զզօրութիւն իւր գերակատարէ. Մագ. ււ ։

ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ. գ. Իբր Սրբազան կարգաւորութիւն. կատարողականութիւն. *Ցերիս չորս, և 'ի չորս երիս (այսինքն յինն) գերակատարութիւ զերկնայինսն իմանամք խորհրդապէս քահանայապետութիւնս. Յհ. իմ. եկ ։

ԳԵՐԱԿԱՐԳԵԱԼ. Որ է 'ի գերագոյն կամ 'ի ծայրագոյն կարգի. ըստ յն. գերաձգեալ. Ὑπερτετάμενος. *Այս է գերունակութիւնն ըստ արձակ և գերակարգեալ անպարունակ մեծութեն. Դիոն. ածոյ ։

ԳԵՐԱԿԱՑԵԱԼ ԱՆԴԱՄ. Այսինքն Գլուխ. *Զողխեցուցեալ զվեհագոյն և ըզգերակացեալն 'ի նոսա չարապաշտութեն անդամ. Յհ. իմ. պաւլ ։

ԳԵՐԱԿԵՆԴԱՆ. ա. Գեր 'ի վերոյ քան զամենայն կենդանութիւն. անմահ բուն էութեան. *Կեանք կենդանարար գերակենդան. Սէնե. աղ։

ԳԵՐԱԿՇԻՌ. ա. Գերագոյն քան զամենայն կշռութիւն. անչափ. անհամեմատ. *Անկշիռ կշռիչ գերակշիռ. Սէնե. աղ։

ԳԵՐԱԿՈԽԵԼ. ն. Ἐκβαίνω. Aggredior. Ի վերայ հասանել և կոխել. *Ոչ կարացէ յանձանց 'ի վեր ելանել, և զանձինս գերակոխել. Պղատ. փիլ։

ԳԵՐԱՀԵՂԵԱԼ. ա. Ὑπερχεόμενος. Superfusus. Զեղեալ յորդութեամբ. առատացեալ. *Քան զամենայն մեծութիւն առաւելոյ գերահեղեալ. Դիոն. ածայ։

ԳԵՐԱՀՆՉԵԱԼ. Համբաւեալ յոյժ. *Լուսցէ ամենայն զօրութիւն գերահնչեալ յաշխարհս. Անյաղթ. Բարչը։

ԳԵՐԱՀՌՉԱԿ. ա. Ὑπερεύφημος. Supercelebratus. Հռչակեալ յոյժ, մեծահամբաւ. *Զարմանալի և զգերահռչակ և ամենահռչակ ածպետութիւն. Դիոն. Եբր։ *Գերահռչակ առաքինութիւն, կամ գլուխ անուց. ՃՃ։ *Գերահռչակ ուխտ (այսինքն վանք), կամ քաղաք հռոմայեցւոց. Ղ. Բղ։ ՃՃ։ *Այսպէս գերահռչակ հրձուանօք անցեալ գայր յաշխարհն իւր. Կաղ. խոփ։

ԳԵՐԱՀՌՉԱԿԵՄ, եցի. ն. Բարեհամբաւել յոյժ հռչակաւ մեծաւ. Ներբողել. գովել. քարոզել. *Զանհասանելի զքո մեծութիւնդ, կամ զարժանապատիւ ձեր տէրութիւնդ գերահռչակել։ Գերահռչակեալ ես։ Չքնաղապէս գերահռչակելի. Նար. խոս. և առակ։ *Խնամատութիւն 'ի քաղաքաց աշխարհակս և 'ի գրոցն գերահռչակելի. Լմբ. առ։

ԳԵՐԱՀՐԱՇ, ի, ից. ա. Յոյժ հրաշալի. սքանչելի. հրաշափառագոյն. *Գերահրաշ զօրութեամբ։ Ո՛վ գերահրաշ ծաղիկ. Շար։ *Գերահրաշ բարունակք յէէն զարդարեալք և ծաղկեալք. Նար. գնձ տաղ. և մրգ։ *Ի միում գերահրաշ գահոյսի. Ագաթ։ Իսկ Մագ. ԻԷ. *Աքանչելեաց մակաստար, զարմանեաց գերահրաշ»։ Իբր գերագոյն և 'ի վեր քան ըղձ հրաշս։ Ալ. Ճ. Ա. *Պօղոս գերահրաշիւք յափշտակեալ»։ Իբր գերագոյն հրաշիւք, կամ 'ի հիացման մտաց։

ԳԵՐԱՀՐԱՇԱԳՈՅՆ. մ. գերահրաշ օրինակաւ. 'ի վեր քան զհրաշս. *(Հոյակապ չենուածք պէսպէս) մի քան զմի գերահրաշապէս փայլեն. Աւծբ. Է. 7։

ԳԵՐԱՀՐԱՇԱՑԵԱԼ. } Գերահրաշ
ԳԵՐԱՀՐԱՇԵԱԼ. } գանեալ. առաւել հրաշալի երեւեալ. *Հայրապետաց գերագոյն գանեալ, վարդապետաց գերահրաշացեալ. Գնձ։ *Ի ծոցն հօր, և 'ի ծոց կուսին, ոչ գերահրաշացեալ փառաց, և ոչ նուազեալ. Ճ. Գ։

ԳԵՐԱՃԱՃԱՆՉ. ա. Կարի ճաճանչեղ. լուսափայլ յոյժ յոյժ. *Գերաճաճանչ ճառագայթք. Գերաճաճանչ գագաթն. Դիոն։

ԳԵՐԱՃՈՒՄՆ. գ. Ὑπεραύξησις. Excessus, superlatio. Աճումն եւս քան զեւս. զարգացումն յոյժ. յաւելումն. *Զինչ է գերաճումն կրօնաւորի. ասէ ծերն. յաւելումն մտօք 'ի բարիս՝ խոնարհութեամբ է. Վրք հց. ճղ։

ԳԵՐԱՄԱՔՈՒՐ. ա. Ամենամաքուր. ամենասուրբ. *Գերամաքուրն յոյն, կամ սրբարարն ամենայնի. Կրլ. ոփ։ Սէնե. աղ։ *Սրբազան և գերամաքուր քո յարկի. Ա. նձ. Ժէ։ *Օրհնեալն 'ի կանայս մարիամ այց արար նոցա՝ կոչելով 'ի գերամաքուր չնորհս կուսութեան. Ճ. Ժ։

ԳԵՐԱՄԲԱՌՆԱՄ, բարձի, ձայ. ն. չ. Գեր 'ի վերոյ ամբառնալ. բարձրացուցանել կամ բարձրանալ գեր 'ի վեր. գերազանցել. *Որ ինքն զինքն գերամբառնայ. Երզն. քեր։ *Գերամբառնայ քան զմիտս և զբան. Սէնե. աղ։ *Գերամբարձեալ պարգև, կամ տօն. Նիսս. բն։ Զքր. կի։ *Խորհուրդ գերամբարձեալ. Սրկ. քհ։ *Ցիմանալիսն գերամբարձեալ. Նար. խչ։ *Գերամբարձեալն մարմնոյն տրամադրութեամբ»։ այսինքն բարձրահասակ. Յհ. կմ. պտւղ։

ԳԵՐԱՄԲԱՐՁ. ա. Իբր Գերամբարձեալ. բարձր յոյժ. գերակայ. գերագոյն. *Ի գերամբարձ լեառն Թաբոր. Մագ. ոփ։ *Գերամբարձ կոչարան. Անան. եկեղ։ *Գունակ գերամբարձ գնդին (գնտոյ երկնից). Առաք. Գ. 47։ *Խորհրդածութեան բան գերամբարձ իմն տեսանի։ Յոյժ գերամբարձք են և երկնայինք. Սարկ։ Սարգ։ *Գլուխ գերամբարձ մերոյ ազգիս (յկ. մծբ). Գնձ. (Իբր 'ի վեր ամբարձօղ)։

ԳԵՐԱՄԲԱՐՁԱԳՈՅՆ. ա. Առաւել կամ յոյժ գերամբարձ. *Գերամբարձագոյն շարժութիւն մտաց՝ առ ած սէրն է. Մագ։

ԳԵՐԱՄԲԱՐՁՈՒԹԻՒՆ. գ. Ծայրագոյն բարձրութիւն. գերազանցութիւն. *Աճելով 'ի գրոց՝ կերպարանս ած և գէմս և տեսակ, գերամբարձութիւն է 'ի վեր քան զմարմինս արժանապէս ած իմն. Մագ։ *Ի վերայ սոցունց կարի անչափ է գերամբարձութիւն. Խոսր. պտրգ։ *Առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ. Նար. Ղ։

ԳԵՐԱՄԲԱՐՁՈՒՄՆ, ձման. գ. Ամբառնալն 'ի վեր եւս քան զեւս. *Ոչ գոյ տեղի ընդդիմակայ գերամբարձման. Երզն. ոփ. երկն։

ԳԵՐԱՄԵԾԱՐ. ա. Յոյժ մեծարոյ. պատուական, պատկառելի. *Այր ամե լուսաւոր, և գերամեծար. Ճ. Ա։

ԳԵՐԱՅԱՅՏԵԼ. ն. Վերայայտնել. արտայայտել. կամ Նշանակել. *Զածեանն զկամս և զխորհուրդ գերայայտել ասէր. Մագ. եկեղ։

ԳԵՐԱՅԱՐՁԱԿԵԱԼ. ա. Ὑπερεκτεινόμενος. Supra expansus, supra omnia extensus. Իբր Գերածաւալ, ձգեալ անդր քան զամենայն տարածութիւն. *Երկայնութիւն (իմն) զգերայարձակեալ զօրութիւնն 'ի բոլորս։ Մեծ սուր ած... քան զամենայն մեծութիւն արտաքոյ գերահեղեալ և գերայարձակեալ. Դիոն. ածայ։

ԳԵՐԱՆ, ի, աւ կամ իւ, աց, օք կամ ովք. գ. Δοκός. Trabs, tignum. Հեծան. մարդակ. սասուար ձողք առաստաղաց. տաճկ. փիրէսի, ճէրտէկ, ֆրնկ. թի. րէր. եբր. գօրա. *Ընդ յարկաւ գերանաց իմոց։ Գերանք տանց մերոց մայրք։ Ի յատակէ տանն մինչև ցորմն և մինչև ցգերանսն։ Գնել քարինս, և փայտս 'ի գերանս։ Ի քում տեսանդ գերան կայ. Լն։ *Դու գերանիւք կուրացեալ ես. Երզն. մթթ։ *Իբրև զգերան հրեղէն. Վրդն. եւ։

ԳԵՐԱՆԱԼԻՑ կմ ԳԵՐԱՆԱԼԻՐ. ա. Գերանաւ լցեալ (աչք կեղծաւորի). *Գերանալից (կամ գերանալիր) աչօք եղեալ. Ղ. ընդհանր։

ԳԵՐԱՆԱԿԻՐ. ա. Որ կրէ յինքեան զգերան (աչք կեղծաւորի). *Գերանակիր ակնս թշուառացեալ. Նար. ԻԷ։ յոր. մէ և Լմբ։

ԳԵՐԱՆԱՁԵՒ. ա. } Ունօղ զձև կմ
ԳԵՐԱՆԱՑԵԱԼ. } զչափ գերանի. մեծացեալ իբրև զգերան. *Նկատեա՛ ճշգրիտ զգերանաձև մեղսդ 'ի քում ականդ։ Զանձին գերանացեալ մեղս ոչ տայ տեսանել. Խոսր. ժմ. և պտրգ։

ԳԵՐԱՆԱՒԵԼ. չ. Նաւել յաղթելով ալեաց, զանցեալ զկոհակօք. *Գերանաւեալ ընդ յորձանուս կոհակս կենցաղոյս. Անան. եկեղ։

ԳԵՐԱՆԲԱՒ. ա. Գեր 'ի վերոյ քան զամենայն անբաւութիւն. *Ոչ երբէք լինել կարողութիւն անբաւիցն և մականբաւիցն եկելոց յառաջ զօրութեանց բլչացուցանել ըզգերանբաւ զօրութիւն նորա ամենազօր զօրութեանն. Դիոն։

ԳԵՐԱՆԴԻԱԲԵՐ. ա. Δρεπανηφόρος. Տ. ԳԵՐԱՆԴԱՁԻՆ. *Ցարձակեցաւ կառօքն գերանդաբեր 'ի թշնամիսն սպառնալով. Պտմ. աղէք։

ԳԵՐԱՆԴԱՁԻՆ. ա. որ և ըստ յն. Գերանդաբեր կամ գերանդակիր. Δρεπανηφόρος. Falcifer, falcatus. Զինեալ գերանդեօք կամ մանգաղօք 'ի հնձել զզինապատահեալս. տըրէփանը. *Երեք հարիւր գերանդաձեն կառօք. Բ. Մ. ճԳ. 2։ *Գերանդաձէն կառքն՝ սուր ունէր 'ի նմանութիւն գերանդւոյ, մի յայս կողմ կառացն, և մի յայն... և յերկուս կողմանսն զզօրսն իբրև զորայն հնձէր. Կէղու. աղէք։

ԳԵՐԱՆԴԻ, դւոյ, դեաց. գ. Δρέπανον. Falx. Մանգաղ մեծ՝ երկայն մեղեխաւ, որ է իբրև զգերան ինչ, 'ի հնձել զխոտ. տըրփան. եբր. փէրդան. վարի և իբր փոքր մանգաղ հնձելոյ զցորեան, կմ կթելոյ զխաղող. օրագ, պաղ, փէոտգուէ. եբր. մաղէլ. տես. ա. Բգ. ճԳ. 20։ Յովէլ. Գ. 10։ Յայտ. ճԴ. 14=19։ Իսկ Զաք. Է. 1. և 2. *Գերանդի թռուցեալ», ոմանք ընթեռնուն յերր. մէկիլա, որ է մագաղաթ, մատեան։ *Վասն մեր (բուսոցս գաշտի) սուրք արին գերանդեաց. Մխ. առակ. ԼԳ։ *Ժիր մշակք քաղ սուր մանգաղաւ և գերանդեաւ զխոտ հարկանիցեն. Փարպ։ *Զարտորայս տարածամ հնձեալ գերանդիւք (կմ գեղք, որ գերանդեօք). Ցհ. կի։

ԳԵՐԱՆԾԱՆՕԹ. ա. Ὑπεράγνωστος. Plusquam incognitus. Ամենայնիւ անծանօթ. անհասելի մտօք. *Ուղղեա՛ զմեզ 'ի խորհրդականաց առացելոց գերանծանօթ և գերաճաճանչ և ծայրագոյն գագաթն. Դիոն։

ԳԵՐԱՆՁՆԱԿԱՆ. ա. Մեծանձնական. արիական. վսեմական. *Գերանձնական իմն զօրութիւն կատարելութեան. Վանակ. յոբ։

ԳԵՐԱՆՃԱՌ. ա. Անճառելի ամենայնիւ. *Էութիւն ճշմարիտ, գերալոյս, գերանճառ. Գր. հր։

ԳԵՐԱՆՄԱՀ. ա. Գերագոյն անմահութեամբ. Էապէս կենդանի՝ որպէս կեանք կենսատու. *Անմահ, անմահարար, գերանմահ. Սէնե. աղ։

ԳԵՐԱՆՈՒՆ. ա. Ὑπερώνυμος. Omne nomen superans. Որ 'ի վեր է քան զամենայն անուն կամ յորջորջումն. *Գերանուն բարերարութիւն. Դիոն. ածայ։

ԳԵՐԱՇԱՐԺ. ա. Գեր 'ի վերոյ քան զամենայն շարժումն. շարժօղ անշարժ. *Ինքնաշարժ յաւէտաշարժ. անշարժ, շարժօղ, գերաշարժ. Սէնե. աղ։

ԳԵՐԱՇԽԱՐՀԱՆ. ա. Ուր կայ աշխարհութիւն մեծ յոյժ. *Նիւթեղէն ներկայիս հայցմունք... 'ի գերաշխարհան առաքելին տեղեաց. Նար. ԽԷ։

ԳԵՐԱՇԽԱՐՀ, ի, ից. ա. } Որ ոք կամ
ԳԵՐԱՇԽԱՐՀԱԳՈՅՆ. } որ ինչ գեր
ԳԵՐԱՇԽԱՐՀԱԿԱՆ. } 'ի վերոյ է
ԳԵՐԱՇԽԱՐՀԱՅԻՆ. } քան զաշխարհ. աշխարհի և աշխարհականաց. և գերաշխարհիկ. չնաշխարհիկ. գերազարդ. *Զաշխարհայնոցն դիցուք օրէնս, և ոչ զգերաշխարհիցն (Հռմէոջոհ կրօնաւորաց). Ը. Ծրծ. *Միւսն առաւել գերաշխարհական (կամ գերաշխարհական). Վրդ. Հց. *Բա գերաշխարհայնոցն (վերնոց) սիրոյ տարփման: Պատարուսն զօրովինմաստութեան աշխարհայնով և գերաշխարհայնով. Ը. Եղբ. Ն. Եր.

ԳԵՐԱՇԽԱՐՀԱԲԱՐ. մ. Ὑπερκοσμίως. Supra mundum. Որպէս գեր 'ի վերոյ քան զաշխարհ և զաշխարհայինս. *Փոխադրեալ եղև մարմինն մեր (կուսին) գերաշխարհապէս 'ի տեղի մեծարգի և լուսապայծառ փառաց. Դիոն. Եղբ. Ճ. Ա. Տօնակ.

ԳԵՐԱՇԽԱՐՀԻԿ. ա. Ὑπερκόσμιος. Supermundanus, mundo sublimior, caelestis. որ և ԳԵՐԱՇԽԱՐՀ, ԳԵՐԱՇԽԱՐՀԱՅԻՆ. Որ գեր 'ի վերոյ է քան զաշխարհ. գերազարդ. երկնային. վերին. աստուածային. հրեշտակային. *Երրորդութեն Թագաւորական, փառաւորիչ, գերաշխարհիկ. Ածոց. *Որ ամենայն գերաշխարհիկ զօրութեանց է պատճառ: Ընդ ամենայն գերաշխարհիկ բնութեան. Նիւս. Երաժ. Ն. Եփ. *Գերաշխարհիկ զինուորութեանց. Սրգ. *Եւ Թէ 'ի հօրն գերաշխարհիկ մեծութիւն ամփոփ էաս, 'ի չափոն կալ զերգ. Համմ. *Այն կալեալ միայն գերաշխարհիկքն ամենայն (զուարթունք): Խառնիլն 'ի զաստ սեփականցն առ գերաշխարհիկ առնել. Տօ-նակ. *Գերաշխարհիկ քաղաքավարութեան, բարի. պղղոտոյ, ևն. Պիտ. *Գերաշխարհիկ խաղաղութեն, իշխանութեն. Ցհ. եւ. Սրգ. *Գերաշխարհիկ վարուք. Ը. Ըրծ. *Զխորհուրդն անպատմելի և գերաշխարհիկ զիրկութեան մերոյ գրաւական. Սարգ. *Եւ առղունք և Ներքոյ անկեալս, առ սերովբէս և գերաշխարհիկս (ազատս, կամ ազնուականս աշխարհի). Նար.

մ. Իբր գերաշխարհապէս. 'ի վեր քան զաշխարհ. *Մի երկրաւորօրէն (ասելն), այլ գերաշխարհիկ. Ածոթ. Ծն. *Ի սոսա ոչ պատուէին միայն գերաշխարհիկ ամբարձեալք. Ը. ա. Տ. հ.

ԳԵՐԱՉԱՐ. ա. Կարի չար. անօրէն. անզգամ. *Պատասխանի եսուն գերաչար անձինքն, և ասեն. 'ի վերայ գլխոց մերոց եղիցին պատուհասքն այն. Վրդ. ոսկ.

ԳԵՐԱՉԱՓ. ա. Զանազանց. անկարգ. *Թերևս մեկեալ կամ կենդանութեն, և կամ գերազանց ժրութ ըմբռնեալ. Պղատ. Փոք.

ԳԵՐԱՊԱՃՈՅՃ. ա. Գերօրինակ պաճուճեալ. գեղապանծ. *Ի վարդագոյն երկրաց Նորա գունագեղեալ և գերապաճոյճ. Զգր. իր. Ննջ. կոաս.

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ. ա. Ὑπέρλαμπρος. Valde splendidus, praeclarus. Առաւել պայծառութեն. շքեղ. շքնաղ. երևելի յոյժ. *Գերապայծառ լոյս աստուածութեան, կամ Ճոխութեն, կերպարանք, ծնունդք, տօն, մայր քաղաքաց, երեկեալ. Ըոռ: ՃՃ. Խոր. Բ. 85. Ն. Հովհ. Ը. Եղբ. Վրդ. Հց. ա.

ԳԵՐԱՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ. գ. Լուսափայլութեն. շքեղութեն. *Այսպէս երկնային մարմինքն յետ գերապայծառութեն յաղջիկին. Ը. Բ. Գ. Ծն. *Զգաստասիրին գերապայծառութեն, և ոչ առաւելութեամբ յորդորելոյն. Սարգ. Լ. Ն. Գ. Ա. *Բնաւորական է (նմ) փառաւոր և պատուով գերապայծառութեն, և ոչ արտաքուստ յարկելոյն. Սրգ. հմն.

ԳԵՐԱՊԱՆԾ, ի, ից. ա. գրի և ԳԵՐԱՊԱՇԾ. Կարի պանծալի. փառաւոր. շքեղ. *Գերապանծ իշխանութե. Ըոռ. *Ի գերապանծ կրօնից քնքշաց. Ցհ. Խմ. պղ. *Երկրպագեմք գերապանծ և անճառ մեծամեծ եղելոյ. Մագ. Ծբ. Խոր. Բ. 67. *Գերապանծին պաշտամանութիւն առաքծոյն», մարմնի նշանակելով Նաև քաջին պանծացեալ:

ԳԵՐԱՊԱՆԾՈՒԹԻՒՆ. գ. Ցոյժ պանծալի կամ պանծացօղն գոլ. *Զերկրպագելի ցուցեալ զերգերգօղն գերապանծութեան բարձրութիւն. Փիլ. Բագն.

ԳԵՐԱՊԱՏԻՒ. ա. Ὑπερτίμιος. Honoratissimus, magni pretii. Գերագոյն պատուոյ արժանի. նախապատիւ. յարգի. պատուականագոյն. մեծագին. *Ով գերապատիւ սիրելի. Վրդ. Հց. Է. *Գերապատիւ եղեալ 'ի փառս հրաշակերտ. Ըոռ. Եէէ. *Պանծային զգերապատիւն առնուլ ձիրս. Պիտ. *Գերապատիւ լինելոյ քան ըղ-սուրս անգղամաց. Լմբ. Ճաշ.

ԳԵՐԱՊԱՏՃԱՌ. ա. գ. Գերագոյն պատճառ. *Առաջին պատճառ երկնային տարփման ած է, որպէս հանգարձեալ և գերապատճառ. Մագ.

ԳԵՐԱՊԱՏՈՒԵԱԼ. Վերապատուեալ. մեծապէս մեծարեալ. մեծարոյ քան զայլս. *Գերապատուեալ կոմսութեն իշխանութ. Ճ. Ա. *Գերապատուեալ քան զքնաւս. Սաղ. ա. 1: *Գերապատուելոյ բնութե բառ գերազարդիցն վայելչութե: Պետութեք գերապատուեալք. Ը. Եղբ.

ԳԵՐԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ. գ. Առաւելութե պատուոյ. ստոյգ գերազանցութե. *Պարունակող գերապատուութե ընդհանուր Թագաւորութեց. Ը. Եղբ. *Գօտիս (ունելն) սուրբ նա վասն բնական փառաւորութեն և գերապատուութեն. Լմբ. յայտ.

ԳԵՐԱՊԱՐԶ, ի. և } Ὑπερηπλώμενος.
ԳԵՐԱՊԱՐԶԵԱԼ } Simplicissimus. Ամենապարզ. գերագոյն պարզութե. գերամաքուր. *Տեսակքն իմացուածք գոլով պարզք գերապարզի և միոյն այ. Մագ. *Քան զամենայն պարզութե է գերապարզեալ ածային քան. Դիոն.

ԳԵՐԱՊԱՐԾ. ա. և } Կարի պարծելի'
ԳԵՐԱՊԱՐԾԵԼԻ } մեծաւանդ. Պարծեցօղ, պարծեցեալ. *Ծաղկազարդ երանգօքն պաճուճանաց, և գերապարծ հրճուանօք. Պիտ. *Գերապարծ ամբարհաւաճութե. Փիլ. Եւ. *Գերապարծեալ պատուով Թագաւորութեան. Նչ. Եղբ.

ԳԵՐԱՊԵՏԱԳՈՅՆ. ա. Վեհագոյն պետութե. գերիշխանական. *Գերապետագոյնն ծայրութե 'ի մէջ գերագունիցն զօրութեց գերագոյն հաստատեալ (գաս սերովբէից). Դիոն.

ԳԵՐԱՊԻՍ. մ. Գերագոյն օրինակաւ. *Զանձառելիսն գերապէս Նմա վարդապետեր. Ոսկ. Գծ.

ԳԵՐԱՌԱՒԵԼ. ա. և } Առաւելեալ
ԳԵՐԱՌԱՒԵԼԵԱԼ } յոյժ. կարի մեծ. յոյժ սաստիկ. *Մարտիրոսին լուծելոյ 'ի գերառաւել ասպնջակացն. Ճ. Ա. *Ցաղագս գերառաւելեալ խոնարհութե որդւոյ. Պրոկ. յայտն.

ԳԵՐԱՍԱՀՄԱՆ. ա. Ὑπερόριος. Ultra fines. Անցեալ քան զսահման. արտաքոյ սահմանաց. և Անչափ. *Հանգիստաւոր

գործք, գերասահման պատուհասք, խաղաղութե. Ածոց. Ճ. *Անսահման սահմանիչ գերասահման. Սխոլ. ոս.

ԳԵՐԱՍԵՐՏԻՄ. չեզոք. ա. Ὑπερβρύσθαι. Կարի սերտ լինել. միապէս միանալ կամ հաստատել. *Զգերագոյ միութեն գերասերտեալ ասէ մբ: Պատմածքն 'ի պատճառ ատուրեալս արտաքս հանգածանայ, և գերասերտ ի՛ եւրոյին նկարն բանի. Դիոն. *Անփոփոխանելի են գերասերտեալ. Ըէ.

ԳԵՐԱՍԿԶԲՆԱԳՈՅՆ. ա. Ὑπεράρχιος. Superoriginalis. Գեր 'ի վերոյ քան զամենայն սկիզբն. *Քան զամենայն սկիզբն գերագոյնապէս գերասկզբնագոյն սկիզբն: Ամենայն գոյութեն գերասկզբնագոյն սկիզբն և պատճառ: Ամենայն բարեզարդութեան գերասկզբնագոյն սկիզբն է բովանդակութեան. Դիոն.

ԳԵՐԱՍՏԻՃԱՆ. ա. մ. Որ ինչ է 'ի գերագոյն աստիճանի. և Բարձրագոյն. *Հանեա 'ի վեր գերաստիճան. Ժմ.

ԳԵՐԱՍՏԻՃԱՆԵԱԼ. Ամբարձեալ 'ի գերագոյն աստիճան. *Ցեսոյ սաս իւրն զմեհեագոյն գերաստիճանեալն 'ի նոցանէ եպիսկոպոսն. Ցհ. Խմ. ոս.

ԳԵՐԱՍՏՈՒԱԾ. ա. Ὑπέρθεος. Supraquam divinus, eminenter Deus. Իբր գերածային. ծայրագոյն յածեղէն կարգի. ած բարձրեալ. *Ուստի նախ սկիզբն ածն և գերածն' գերագոյապէս մի ած: Գերած ածութե, կամ ածութ. Դիոն.

ԳԵՐԱՍՔԱՆՉԵԼԻ. ա. Սքանչելի յոյժ. կարի հիանալի. գերահրաշ. *Գերասքանչելի քաղաքավարութե. Ճ. Ա.

ԳԵՐԱՎԱԽՃԱՆ. ա. Ὑπερτελής. Supraquam perfectus. Գերագոյն 'ի կարգի վախճանի. գերակատար. *Եւ է ամենայնի սկիզբն և բովանդակութե, գերակիզբն, և գերավախճան. Դիոն.

ԳԵՐԱՏԱՐԱԾ. ա. Ὑπερηπλώμενος. Supra extensus. Գերածաւալ. հանճարած. *Արեգակն ... գերատարած ունի զլոյսն յամենայն երկրի զարդ (այսինքն աշխարհ). Դիոն.

ԳԵՐԱՏԵՍԱԿ. ա. Ὑπὲρ εἶδος, կամ ὑπερειδής. Գերագոյն քան զամենայն տեսակ. և Գերահրաշ տեսլեամբ. *Անտեսակ 'ի տեսակս որպէս գերատեսակ. Դիոն. *Երիցս երանելւոյն զերգօրինա գերատեսակ փառօք զարդարեալ. Ոսկէբ.

ԳԵՐԱՏՐՈՀ. ա. Կարի տրտմեալ. Տեղացեալ ամենայնիւ. *Գերատրոհ ծով տառապանաց», այսինքն 'ի տառապանս. Նար. Ժբ.

ԳԵՐԱՐԺԱՆԻ. ա. Կարի արժանաւոր. գերյարգոյ. *Ցեա ծածկանելոյ սպասել հանդերձանք որպէս գերարժանի ընդ եղբարսն ժողովել. Կլեմէ.

ԳԵՐԱՐՏՕՍՐ. գ. Սաստիկ արտասուք. *Ընդ գերարտօսր արժանելով յաջաքեն իւրեանց յաղթանակաց հասելին. Եղիշ. Է.

ԳԵՐԱՐՏՕՍՐԱԼԻՑ. ա. Πανόδυρτος. Omnino flebilis, lamentabilis. Սաստիկ արտասուօք լի. յոյժ արտօսրալից. *Գերարտօսրալից զուամիս. Ք. Դ. Ը. ա.

ԳԵՐԱՐՓ, ի, ից. Տ. ԳԵՐԱՐՓԻ.

ԳԵՐԱՐՓԻ, փայլ. ա. Ὑπεραιθέριος, ὑπερουράνιος, ևն. Գերագոյն քան զարփի, այսինքն քան զեթեր, զերկինս, և զարեգակն. գերերկնային. գերափայլ. գերապայծառ. լուսեղէն. երկնաւոր. *Ածային ... վերացեալ որպէս փայլակն 'ի գերարփի յաւիտենականաց փառս վերին երանութեանն. Դիոն. Եղբ. *Որպէս գեր-

տրքին փայլեալ ։ Արեգակք գերարփիին. Ղուկ ։ *Գերարփիից նմանեալ, և ընդ. քնի թագաւորեալ. Սարգ. ա. պ. ծէ ։ *Վանական գովութիւ, գերարփի շնորհիւ. վեհագոյն գովով (եալխակապատ). Նար. խւ ։ *Գերարփի քան զծագն առաւեկայ. Ճ. Ջ ։

ԳԵՐԱՓԱՅԼ. ա. Ὑπερλάμπος, ὑπερλάμπρος. Praefulgens. Տ. ԳԵՐԱԳԱՑԾԱՌ. *Ի բարձր ընտրականութիւն գերափայլ յաճախ գիտութիւ. Նար. յա ։

ԳԵՐԱՓԱՅԼԵՄ. եալ. չ. Ὑπερλάμπω. Fulgore supero. Գեր 'ի վերոյ քան զայլս փայլել, պայծառանալ. *Հանապազ գերափայլէն 'ի յարկ նոր սիոնի ։ Յաւէտ գերափայլեալ քան զամենայն գերածառ նառագայթս արեգականն. Անան. եկեղ ։ *Աքանչելիք և գերափայլեալք 'ի վկայս ։. յն. գերափայլ. Նիւս. Բնութ ։ *Գերափայլեալ զատու 'ի գատս արդարոց. Սիօն ։

ԳԵՐԱՓԱՌ. ա. Փառաւոր կամ փառացն յոյժ. վեհափառ. հրաշափառ. գերապանծ. *Խորան լուսաւոր գերափառ՝ յաղթող մեռեալ ։ Նիւթից գերափառ ։ Գերափառ խաղ. Նար. ծբ. և ղա ։ *Գերափառ տաճարաց. Լաստ. իբ ։

ԳԵՐԱՓԱՌԱԳՈՅՆ. ա. Առաւել գերափառ. գերաղանց. *Տէրունեան աւնից գերափառագոյն. Յհ. կթ. արձան ։

ԳԵՐԱՓԱՌԻՄ. եցայ. չ. Բարձրանալ 'ի փառս. փառաւոր գտանիլ յոյժ. *Ոմանք մարմնով գերափառեալքն, և այլք բաշխող հոգւոյն. Յհ. որդի ։

ԳԵՐԱՔԱՆՆԱԿ. ա. Ի վեր քան զքանակ և զչափ. *Անքանակ քանակիչ գերաքանակ. Սիս. աղ ։

ԳԵՐԲՆ. գ. Որպէս ջնջան. սրբիչ. ջնջոց. տուրձ. ֆուշարխա. *Կատուն եղև գերբն, և անկաւ 'ի յաղիւր տուն. գան մկուկքն, և ասեն. ով դու չար, քո հաւատովդ, (ոչ հաւատալք, թէ) դու գերբն ես. Վրդն. առակ ։

ԳԵՐԲՆԱԲԱՐ. մ. Գերբնապէս. 'ի վեր քան զբնութիւ. արտաքոյ բնութեան, կամ նիւթոյ, և բնական օրինի. մաթեմաթիգապէս. *Գերբնաբար (կամ գերբնաբար) ծնան ծանուցեալ ։ Զաս (զաստուածութիւն) ոչ 'ի գծէ գերբնաբար, այլ միութիւնն մակագրեն ։ Գերբնաբար 'ի գոյէ բնաւորեալ. Մագ. իը. ւ ։

ԳԵՐԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ. գ. Վիճակ վերագոյն քան զբնական ակարութեան. *Վերարկն արծարծեալ ('ի լաւ անգղ փոխելով զոմն) 'ի գերբնականութիւն հասուցին յաքնաքաղաքն հանգիստն. Մագ. ղ ։ (այլ ձ. գերբնականութիւն, իբր երկնային քաղաքավարութիւն) ։

ԳԵՐԲՆԱԳԻՏ. Տ. ԳԵՐԲՆԱԲԱՐ. *Ցեն ակայք ունել ընդունելութիւն բազկացութեան գերբնապէս. Մագ. հգ ։

ԳԵՐԳՈՎԵԼԻ. Յոյժ կամ առաւել գովելի. *Անմարմնական զատուն վեհին մարմնով եղեր գերգովելի. Գնձ ։

ԳԵՐԴԱՍՏԱՆ. ի, աց. գ. Οἶκος, οἰκία, θεραπεία, ἀνδράποδα. Familia, famulatus, ministerium, comitatus. Որպէս ընտանեաց, այսինքն բնակարան հանդերձ բնակչօք և ամենայն ստացուածովք. Տուն, ըստ որում Տան ծառայք. ընդոծինք. կարգ պաշտօնէից. էնդուրք, այալ, էհլի պէյթ. *Տնեն... զոր կացոյց տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ 'ի ժամու զկերակուր. Ղկ. ծբ. 42 ։ *Տնտեսք տիրական, որ զզոյգ գերդաստան կերակրեն 'ի ժամու. Գնձ ։ *Գեօղս զնիցէ, և գերդաստանս ժողովիցէ ։ Գերդաստանացն բազմանալքն. Ոսկ. մ. ա. 23. և 20 ։ և Եփես. ի ։

Կամ Χρῆμα. Ինչք. մալ միւլք. *Տէր բերդից և գանձից և գերդաստանաց. Կոչ. է ։

Եւ կալուածք անդաստանաց. Միւք, ԲԷուրքուֆ. *Զշինանիստ շինուածս քաղաքաց և գաւառաց, գեօղից և գերդաստանաց ։ Շինեալ անդ գեօղս և գերդաստանս. Յհ. կթ ։ *Բռնիկս նոցա կարգեալ 'ի գեղից և 'ի գերդաստանաց ։ Գանձս և գերդաստանս առաջի մատուցանէին. Յհ. կթ ։

ԳԵՐԴԱՍՏԱԿԱՆ, ի, աց.
ԳԵՐԴԱՍՏԱՆԻԿ, նկի, կաց. } գ. Ընտանի, կամ աղախին տանուտեառն. խըզմէթքեար, ճարիյէ. *Ցիշեցուցանէ նմա զիւր աղնուականութիւն, որպէս զատեր միում թագաւորաց, որ յիւրոց գերդաստականացն երկնչիցի. Ոսկ. եւ ։ *Աղախին է, և ևս չար քան զգերդաստանիկսն. Ոսկ. եբր. իէ ։ *Աղախինն գարձեալ նոյնպէս 'ի մէջ գերդաստանկացն. Ոսկ. մ. գ. 4 ։ (զբածն, գերդաստանակցացն. իբր ծառայակցաց. բայց յն. δούλων, ծառայից) ։

ԳԵՐԵԱԿ. Իբր՝ Ո՞վ գերի ։ Վրք հց. յ ։

ԳԵՐԵԴԱՐՁ. գ. Դարձ գերեաց կամ գերութեան. ըստ յն. արձակումն, դարձ, եւն. *Գերեաց գերեդարձ ոչ արար. Ես. ծդ. 17 ։ *Գերեդարձ առնէին քաղաքին և տաճարին. Բ. Ա. Ճ. 1 ։ *Եւ այն արար նոցա գերեդարձ մնաց ։. ի զգօնացոյց զնոսա. Վրդն. ծն ։ *Գերեդարձ լիցի մեզ անդրէն 'ի հայրենի երկիրն մեր. Եղիշ. է ։

ԳԵՐԵԴԱՐՁ. ա. Դարձուցիչ գերեաց կամ գերութեան. *Գերեդարձն զմեզ յերկնից քաղաքն ածեալ ամրացոյց ։ Եղեն մեզ գերեդարձք և առաջնորդք. Լմբ. համբարձ. և այլն ։

ԳԵՐԵԶՄԱՆ. ի, աց. գ. Τάφος, μνῆμα, μνημεῖον. Sepulchrum, monumentum. Տեղի թաղման. շիրիմ. տապան. դիր հանգստեան. Միզար, քպր, քէօրխանէ, բեշէմ, գօռր, Բուրդէ. *Սատակեալ գերեզմանի ։ Թաղեսցեն զնա 'ի գերեզմանի նոցա ։ Ճշէին առ գերեզմանօք մեռելոցն ։ Նման էք գերեզմանաց բռնելոյ ։ Եղիցի ինձ քաղաքն իմ գերեզման ։ Լինէր ինձ մայրն իմ գերեզման. եւն ։ *Գազանք վայրի և ընտանի՝ եղեն գերեզման գիականցն. Լաստ. իբ ։ *Ցեռ մահուն անուն գերեզմանաւն յիշատակի. Լմբ. ծղ ։ Տես և ՏԻՐԱՍՏԱԿԱՆՈՑ ։ *Լցցէ ինձ և երեմիաս զ'ի վերայ գերեզմանին բանն ։. յն. Ἐπιτάφιον, զգերեզմանականն. Ածաբ. մակաբ ։ *Այն որ պաշտեալ զյուղիան 'ի փոր ձկանն՝ գերեզման 'ի մէջ գերեզմանի (ծովու). Եփր. ծն ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԲԱՑ. ա. Բացող զգերեզմանս. գերեզմանակրկիտ. *Զգերեզմանաբացն ոչ թաղել. Ոսկեփոր ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ. գ. Բնակելն 'ի գերեզմանս. *Արբեցութիւն է գերեզմանաբնակութիւն, զնդան մեղաց. Կիւր. խր ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԲՐՈՒԹԻՒՆ. գ. Բրելն զգերեզմանս իբրև գերեզմանակրկիտ. *Զանազանութիւն գիտապատութեանն՝ գերեզմանաբրութն պատճառ լինի. Ոսկ. յհ. բ. 38 ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ. ի, աց. ա. Τάφιος, ταφήϊος, ἐπιτάφιος. Sepulchralis, funebris, funeralis. Որ ինչ անկ է գերեզմանի և թաղման, կամ առ 'ի վերայ գերեզմանի իբրև ձառ թաղման՝ ողբական և ներբողական. որ և ԱՐՁԱՆԱԿԱՆ. *Համբէս գերեզմանական արար (դարեհի) գերեզման դիւցազնական. Գրգ. աղէք ։ *Համբերձ հարանեացն եղև գերեզմանական պատանս. Ոսկեփոր ։ *Գերեզմանականն անշնչութեն ։. այսինքն մեռելութիւ. Մագ. ։ *Գերեզմանական ձայն, կամ բանաստեղծութիւ, ողբ, ձառ, բան. Ոսկ. գծ ։ և Ածաբ. իէ ։ Մագ ։ Բրս. մրչ ։ Լմբ. եկեղ ։ Վրք ածաբ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆՔ. Եղեալքն 'ի գերեզմանս. մեռեալք. *Զգերեզմանականացն լմբոշխնելով կերպս. Սհկ. գալուս ։ *Ոչ ընդ կենդանեացն 'ի լոյս՝ քան թէ ընդ գերեզմանականսն 'ի խաւար. Նար. ւ ։ *Զօգս բարեխօսն վասն գերեզմանականացն մաղթեցեր ։ (կենդանեացն է) գերեզմանականացն՝ անյոյս. Լփ. պօրգ. և այլ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԿԻՑ. ա. Σύνταφος. Sepulchrum commune habens. Ի միասին թաղեալ 'ի գերեզմանի. թաղակից. *Արմ քեզ գերեզմանակից. Կեչառ. աղէքս ։ *Զաղչարակից լինել, խաչակից, գերեզմանակից. Կոմրղ ։ *Որք մահակիցք և գերեզմանակիցք եղեն նորա. Երզն. մթ ։ *Ի նորքս մկրտեալ՝ առաքինութեան գերեզմանակից լինել. Լծ. մծաբ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԿՈՒՐ. ա. Կոյր եղեալ գերեզմանի, կամ կլեալ 'ի նմանէ. թաղեալ և հողացեալ. *Զգերեզմանակուր հողս մասն յերկնից բնութիւ հատատեաց. Սեբեր. գ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱԿՐԿԻՏ, կրկտի, տաց. ա. Τυμβωρύχος. Busta eruens, spoliator mortuorum, vespillator. Որ կրկտէ և բրէ կամ բանայ զգերեզմանս 'ի կողոպտել զզարդս մեռելոց, որպէս գողն. կամ վասն ունելոյ զգէշս, որպէս բորենի. *Լեռնախոյզք, գերեզմանակրկիտք. Փարպ ։ *Գերեզմանակրկիտք, գանձահատք. Ոսկ. յհ ։ *Մարդասպանաց, և գերեզմանակրկտաց. Ոսկ. մթ. և Սիս. աղ ։ *Գերեզմանակրկիտ բորէ. Մագ. ծէ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱՀԱՏ. Նոյն ընդ վ. *Դիեցուք՝ թէ ոչ գերեզմանահատք, և ոչ որդունք վասնեն զնա. Ոսկ. յհ. բ. 39 ։

ԳԵՐԵԶՄԱՆԱՄԵԾԱՐ. ա. Մեծարող գերեզմանին (յնի). *Կային և այլ կանայք այլով անուամբ գերեզմանամեծարք. Վրդն. խաղաղ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱՆԱՄ, ացայ. չ. Իբրու գերեզման լինել, կամ թաղել ընդ փոխանակօք. *Նորայքն ոմանք 'ի նմին շարժմանէ գերեզմանացան 'ի նմին. Ածբ. ջ. 4 ։

ԳԵՐԵԶՄԱՆԱՊԱՏԻՒ. ա. Պատուող գերեզմանին (յնի). *Գրել զանուանս ինկարկու կանանցն գերեզմանապատիւ. Վրդն. խաղաղ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱՍԷՐ. ա. Սիրող գերեզմանաց. փոյթ յայց առնել և 'ի զարդարել զշիրիմս. *Հանապազ գերեզմանասէրք էին. Մագ ։

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԻ, ղւոյ.
ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ, տան. } գ. Տեղի գերեզմանի. գամբարան. շիրիմ. գերեզմանք. Գէրեզման, Բաղման փեր, Գէրեզմանոց. Միզարլըք. *Ի գերեզմանատեղւոջն յիրաւի կոչին մանկունն որդիք հաւաքելոյ. Ոսկ. մ. ա. 9 ։ *Օրհնութիւն գամբարանաց կամ շիրմաց, որ է գերեզմանատեղիք. այսինքն հողմայրք. Մաշտ. ՉՀկ ։ *Կոչեցաւ վանքն այն գերեզմանատուն նոր վարդապետաց. Ոսկ ։ *Հաստատեցի 'ի սահմանս սուրբ ածանիս, որ էր գերեզմանատուն նախնեաց մերոց, զոր կալթողիկէքս սահմանոյ 'ի ծնողաց իմոց գերեզմանատունս բազրատունեաց. Ցիրաւ ։

ԳԵՐԵԶՄԱՆԵՄ, եցի. ն. Թաղել 'ի գերեզմանի. *Անհոգ անցեալ էիր, հոգաց մահէ զքեզ. մինչև գայ օրն մահու՝ գե-

ըեղմանէ զգեզ. Գնձ.։

ԳԵՐԵԹԱՓ. ա. Որ թափէ զգերիս 'ի ձեռանէ թշնամեաց. *Գերեթափ, և ազատարար ամենեցուն. Որբէլ։

ԳԵՐԵԹԱՓ ԼԻՆԵԼ. Թափել զգերիս 'ի ձեռաց գերչաց. *Թէպէտ գուն գործեալ բազում ջանացին գերեթափ լինել, ոչ կարացին. Ուռհ.։

ԳԵՐԵԿԻՑ, կցի, ցաց. ա. Συναιχμάλωτος. Concaptivus. Ընկեր գերութեան, և վշտաց. չարչարակից. *Ազգականաց իմոց, և գերեկցաց. Հռ. ժզ. 7։ *Լինէլով նոցին գերեկից. Ոսկ. ա. փիլ. ժդ։ *Գերեկից իւր լեալ բարսումայի ուրումն. Խոր. բ. 67։

ԳԵՐԵՀԱՆ. ա. Որ հանէ զայլս 'ի գերութենէ. ազատարար գերեաց. գերեթափ. *Սբդ. սարգիս գերեաց գերեհան. Ճառ.։

ԳԵՐԵՄ, եցի. ն. Αἰχμαλωτεύω, αἰχμαλωτίζω, ἀποικίζω. Captivo, captivum duco, in servitutem abduco, deporto. Գերի կամ 'ի գերութիւն վարել. ըմբռնել կալանաւորել 'ի պատերազմի. վտարել յօտարութիւն. բռնի ձգել 'ի ծառայութիւն. Եէսիրլէմէք կամ եէսիր էթմէք. թուրք. *Աւար առին զքաղաքն, և զկանայս նոցա գերեցին։ Ո՛չ սպանին զայր և զկին, այլ գերեցին։ Եւ երկոքին կանայքն դաւթի գերեցան։ Գերեցաւ յուդայ յերկրէ իւրմէ. ևն։ *Գերեցաւ յուդայ զվախճանեալ գերութիւն զկատարեալն հատուցմանց ". այսինքն յետին գերութբ լնալով. Երեմ. ժգ. 19։ *Հարին զյուդա, և գերեցին գերութիւն ". այսինքն զբազում գերիս. բ. մն. իը. 17։ *Գերեսցես զգերութիւն քո։ Գերեաց զգերութիւն ". խմմ գարձուցանել զգերեալս. Դատ. ե. 12. Սղ. կէ. 19։

Նմանութբ ասի. *Գերեալ զիս օրինօքն մեղաց։ Գերեմք զամենայն միտս 'ի հնազանդութիւն քնի. Հռ. է. 23։ բ. կոր. ժ. 5։ *Լսելեօք մարդիկ գերին 'ի լկտի երգս ձայնից. Եղիշ. խրատ։ *Գերեն զվաստակ և զքաղաքս նոցա (զմեղուաց). Վրդ. հց. է։

ԳԵՐԵՎԱՐ, ի, աց. գ. որ և ԳԵՐԻՎԱՐ, ԳԵՐԻՎԱՐ. Αἰχμαλωτεύων, αἰχμαλωτεύσας. *Վարող 'ի գերութիւն. գերիչ. գերող. Եէսիր էթիճի. *Եկին գերեվարք, և գերեցին զնոսա. Յոբ. ա. 15։ *Եւ եղիցին գերիք գերեվարք նոցա. Ես. ժդ. 2։ *Եղեն 'ի հպարտութիւն գերեվարաց պատերազմողաց. բ. մկ. ժը. 25. (յն. իբր գերեվարութեանց)։ *Զգերելոցն և զգերեվարացն. Վրդն. ծն։

ԳԵՐԵՎԱՐ ԼԻՆԵԼ. } Ի գերութիւն

ԳԵՐԵՎԱՐԻԼ. } վարիլ. գերիլ. *Որք գերեվարք լինին յանօրինաց. կանոն։ *Տեսեալ զանամօթ և զլրբենի բարս մատնչին գերեվար եղեալ 'ի սէր ընդ արծաթոյն. Ջրբ. կբ։ *Գերեվարեալ էին 'ի թշնամւոյն բազումք. Գէ. եռ։

ԳԵՐԵՐԻ. գ. Պտուղ ինչ, և ծառն. *Սիմնեք ... լինի 'ի նման գերերի (կամ գերերի) և նուռն. Խոր. Ճշ։

ԳԵՐԵՐԵՒԱԿ, ի, ագ. ա. Ὑπερφανής, ὑπερφαής. Superfulgens, lucidissimus. Երևելի յոյժ. գերապայծառ. լուսափայլ. *Գերերևակ ճառագայթք, կամ բարերարութիւն. Դիոն։ *Գերերևակ, և 'ի վեր քան զամենայն փառաւորութ. Պրպմ. լէ։

ԳԵՐԵՐԵՒԱԿՈՒԹԻՒՆ. գ. Գերապայծառութիւն. լուսափայլութիւն. *Ի խաւարչուտ զգերերևակութիւն վերափայլեալ. Դիոն։

ԳԵՐԵՐԵՒԻՄ. եցայ. չ. Գերագոյն կամ վերագոյն երևիլ. *Զայլ մեծն և զգեր-երևելն. Մագ. էնէղ։

ԳԵՐԵՐՋԱՆԻԿ. ա. Երջանիկ յոյժ յոյժ. բարեբախտ ամենայնիւ. *Բազմածնունդ, և գերերջանիկ. Լամբ. ժէ։

ԳԵՐԸՆԴԱՐՁԱԿ. ա. Ὑπερευρεῖος. Latisssimus. Կարի յոյժ ընդարձակ. լայնածաւալ. *Լայնութիւն ածայլին ասելի է զգերընդարձակ յառաջձանապարհն ոյ 'ի վերայ ամենայնի. Դիոն։

ԳԵՐԻ, րւոյ, րեաց. ա. Αἰχμάλωτος. Captivus. Կալանաւոր վտարանդեալ յօտարութիւն, կամ յափշտակեալ 'ի սարկութիւն. որպէս և անասուն, և ինչք անկեալ 'ի ձեռս թշնամեաց, և մատնեալն 'ի ստրկութիւն. Եէսիր, Եասըր, Եսիր, Կոլտորմ, Ֆէօլէ. եբր. Կօլա, Խոլա, Շէպի. *Գերի վարեցաւ եղբայրն իւր զոմա։ Մինչև յանդրանիկ գերւոյն (իգական)։ Որ էր գերի եկեալ յերուսաղէմէ։ Գերի գայցէ։ Քարոզել գերեաց զթողութիւն։ Զամենայն ազատ ցանկալիս նոցա զոսկւոյ և զարծաթոյ գերի առեալ բերիցէ յեգիպտոս. ևն։

Նմանութբ. *Լո՛յծ զկապ պարանոցի քոյ գերիդ դուստր սիոնի. Ես. ծբ. 2։ *Մի՛ լար գերի՝ բազմաց ողբալի։ Չարեացս գերի։ Առ չարութիւն գերւոյս՝ բարութիւն քո։ Առ 'ի քաւութիւն գերւոյս. Նար։ *Գերի վարէ զբանն. Վրդն. ել։

ԳԵՐԻ. գ. Խումբ գերեաց. որ և ԳԵՐՈՒԹԻՒՆ ասի. և Գաղթականութիւն. ἀποικία, demigratio. *Դարձուցանել զամենայն գերին 'ի բաբելոնէ 'ի տեղիս յայս։ Թուղթ 'ի բաբելոն առ գերին. Երեմ. իը. 6. իթ. 1։ *Նստուցանել զգերին հրէից 'ի քաղաքին շամիրամայ։ Առաւել քան զարդողեան գերին ածէ 'ի հայս. Խոր. բ. 18. 50։

ԳԵՐԻ ԱՌՆՈՒԼ, ՎԱՐԵԼ, ՏԱՆԵԼ. ևն. Տ. ԳԵՐԵԼ. որ և Ի ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԵԼ։

ԳԵՐԻՄԱՍՏ, ի, ից. ա. Ὑπέρσοφος. Supraquam sapiens. Գերագոյն իմաստութբ. ամենայն հանճարով լի. *Գերիմաստ և ամենիմաստ պատճառն (այծ)։ Ուսանել զգերիմաստ զճշմարտութիւն աստուածութեան մերոյ. Դիոն։ *Գերիմաստից բանաւորաց. Ճ. հրէշտ։ *Զգերիմաստ զմայրն իշխանին սիւնեաց. Յհ. կբ։ *Գերիմաստ հանճար. Մագ. կդ։

ԳԵՐԻՄԱՑ. ա. Ὁ ὑπὲρ νόησιν. Intelligentia superior. Գեր 'ի վերոյ քան զիմացումն. և Գերիմաստ. *Եշանեն 'ի ձեռն աննիւթի և անքածանելւոյ իմացման 'ի գերիմացն միութիւն. Դիոն։

ԳԵՐԻՄԱՑԱԿԱՆ. ա. Գերագոյն յիմացական և յիմանալի կարգի. *Գերիմացական քահանայապետութիւն. Ճ. հրէշտ։

ԳԵՐԻՄԱՑԵԱԼ. Գերիմաց. իբր 'ի վեր քան զմիտս. յն. գերամբարձ. Ὑπεραίρουσα. Sublimis. *Զգիրս զայս (յուսեթէոսի) որպէս գերիմացեալ անդրէն առաքեցեր. Դիոն։

ԳԵՐԻՇԽԱՆԱԿԱՆ. ա. Ὑπεράρχιος. Superprincipalis. Ի վեր քան զամենայն կարգ իշխանական. ամենիշխան. *Զիշխանականն և գերիշխանական ածպետութեան հօր լուսաւորութիւն. Դիոն։

ԳԵՐԻՉ, րչի, չաց. ա. Αἰχμαλωτίζων, αἰχμαλωτίσας. Captivator. Գերող. գերեվար. տես գ. թգ. 46. 50։ Սղ. ճէ. 46։ Նէեմ. դ. 4։ *Բանութիւն ոչ կարաց յայս գերչէս զերծանել զնա. Լմբ. ծղ։ *Յայամ կողմանէ գալոց էին գերիչքն. Մխ. երեմ։ *Այս է գերի գերիչ գերեվարաց իւրոց. Եփր. համաբ։

ԳԵՐԻՍ. գ. Թուփ կարոս. ֆէրէնկ.

*Աղխմոյ թարգմանեցին, և կէսք գերիսն (կամ գերիոն). և է սա բանջար աղէհամ, որ յուտելն լուծանէ զանգի հացի. Վստ. Նախ. յոբ։

ԳԵՐ 'Ի ՎԵՐՈՅ. նխ. սեռ. խնդրով. Ὑπέρ. Supra, prae, ևն. Վերագոյն. 'ի վեր քան. առաւել քան. Իւսթիւն, ըլիւ-փէ. *Սովորութիւն եղև ասել, որ գեր 'ի վերոյ գլխոյս է, 'ի վեր։ Ամենայն զօրութեան գեր 'ի վերոյ ածութիւն է. Փիլ. ձ. բան։ և եւ. բ. 68։ *Հոգեւորն՝ սորա գեր 'ի վերոյ է. Նիւս. կազմ. ը։ *Գեր 'ի վերոյ լինիցին ախոյանին. Եզնիկ։ *Գեր 'ի վերոյ մարդկայնոյս համբառնայցին բնութեան. Յհ. իմ. պաւլ։ *Զայս համապատ և միշտ խոկամք, զի ընկերին գեր 'ի վերոյ լինիցիմք. Խոսր. պտրգ։ *Որք կոյսք իցեն վասն այ, և գեր 'ի վերոյ գայցեն ամուսնացելոց, և ամ բարեհաւանիցեն. կանոն։ *Գեր 'ի վերոյ ծայրից լերանց, կամ ամ ծյն գոդգոթայ, ամենայն երկնի, կամ ալեաց ցանկութեան, քննուն, երկիւղի, ևն. Անան. եկեղ։ Ճառ։ Նար։ Մաշտ։ Լմբ։

Բացաւ. խնդրով իբր ածկ. *Ի զանգիտելոյ և 'ի պատկառանաց գեր 'ի վերոյ լինել. Ոսկ. եբր։

Տ. ա. *Գեր 'ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ. Ճառ։ *Գեր 'ի վերոյ զօրութիւք. Սարգ. յկ. դ։ *Ի գեր 'ի վերոյն կացուցանել զնա. Մաշտ։ *Զգեր 'ի վերոյն է առ գովութեան մրցանակս. Պիտ։

ԳԵՐ Ի ՎԵՐՈՅ ՔԱՆ. նխ. Գեր, գեր քան. *Ճոխանամք նոքօք գեր 'ի վերոյ քան զարժանն. Ճառ։ *Գեր 'ի վերոյ եմք քան զյոլովս. Վրդն. ծն։ *Գեր 'ի վերոյ քան զբան սպասաւորութեան անօրինական գործոց. Սկեւռ. աղ։ *Ի գեր 'ի վերոյն քան զկարն իւր յանդգնիլ ձեռնարկել. Սրգ. յկ. յոշբ։

ԳԵՐԾԱՆԵՄ, ծի. } ն. Ξυράω, ξυρέω.

ԳԵՐԾԵՄ, ծեցի. } Rado, tondeo,

